

ՎԱԶԳԻՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ


# ՀԱԶԱՐԻԱՊԱՏՈՒՄ

ՀԱՏՈՐ Բ.

Վէպ՝ ԱՆՍԿԻԶԻ ԵՒ ԱՆՎԱԽՉԱՆ

Զմբուլստ մեծ մօրս յիշատակին  
Անապատի մէջ հիւժած

ՊԵՅՐՈՒԹ  
1984



# Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Թէպէտ թռչնիկն ու հովն Հայոց,  
Աւերակաց թռչին վերայ,  
Թէպէտ պղտոր վտակն Հայոց,  
Նոճիներուն մէջ կը սողայ,  
Նոքա հառաչք են հայրենեաց,  
Նոքա չերթան սրտէս ի բաց:

Մ. ՊԵՇԻԿՔԱՇԼԵԱՆ

Արդարեւ, տարիներու հոլովոյթին հետ, փոխանակ մոռացութեամբ մեղմանալու, անոնց թիւին առընթեր անող չափանիշով մը, կը բավմայատկուի այն կսկիծը՝ զոր կրած են, ինծի այնքա՛ն սիրելի եւ նոյնքան մտերմիկ գիւղ մը, մօտէն ծանօթ գաւառ մը, հայրենիք մը իր կենդանական համայն աշխարհով, բուսականութեամբ, բնութեան գեղեցկութիւններով՝ մթազնած ու անհետ կորսուած ըլլալուն հետեւանքով:

Ահա ինչո՛ւ, այս նոր հատորը դեռ լոյս չտեսած, արդէն թոյլ եւ տժգոյն կը թուին մեզի, այն խոր վշտին արտայայտութիւնները, որ պատկերացուած են նախորդին մէջ:

Կան տակաւին դառն խոհեր, այդ նոյն տարիներուն շարանէն անբաժան, անոնց տեսողութենէն առիւծի բաժին խլած, որ մեզ շարունակ դեմ-յանդիման դրած են առեղծուածի մը՝ իր լուծումին կարօտ:

Կարելի՞ է ինքզինք երջանիկ սեպել, մեր նախնեաց ոստանները, ինչքա՛ն ալ համեստ, իրենց յարաբերաբար կենսունակ վիճակին մէջ տեսած ըլլալով միայն:

Ունենալ գիտակցութիւնը անփոխարինելի կորուստի մը, մշտըն-ջենական դժբախտութիւն մը չէ՞, երբ անմեղ, վառվռուն պատանի մը, իբր ժառանգորդ, այդ դարաւոր ազգային հողերուն, անոնց վերելքին երապովն է սնուած:

Ո՞վ պիտի կրնայ, եւ ինչպէ՞ս կարելի է մոռացութեան տալ անօրինակ աղէտը, որ եղաւ համատարած, աւերներն ու չարչարալից մահերը, որոնք եղան ընդհանուր, որոնք կատարուեցան ստոր հաշիւներէ մղուած, ու գործադրուած գազանային վայրագութեամբ:

Հանգրուանէ հանգրուան մեր գողգոթային ճամբուն ճիւղաւորումները եղան անթիւ, չարչարանք եւ մահացում ստացան հրէշային կերպարանք, իսկ փոքրաթիւ վերապրողներուն օրերն ու կեանքը նոյնպէս տարբեր-տարբեր՝ տառապալից եղան:


Ինչ որ կը նկարագրուի սոյն հատորին մէջ, աղէտէն խոյս տուողներէն մասնակի խմբակի մը դեգերումներն են, անոնցմէ ամենէն բախտաւորեալներուն վերաբերեալ վկայութիւն մը անտարակոյս, որ նոյնպէս պէտք է իր տեղն ունենայ մեր ազգային պատմութեան էջերուն մէջ:


Մանաւանդ անհրաժեշտ է, որ յիշատակուին այդ առանձնաշնորհեալներուն կողմէ, դարերով դրացի, մասնաւորապէս **Տերսիմի** քիւրտ համայնքներուն վերաբերմունքը: Անոնք թեւ մշտնջենապէս պատուհասած են հայ շինականին տնտեսութիւնը, իրենց անդադրում յափըշտակութիւններով, սակայն մեր ահաւոր աղէտի մատնուած օրերուն փախստականներ ընդունեցին եղբայրօրէն իրենց ծոցին մէջ եւ ցոյց տուին ասպնջական եւ ասպետական ոգի:

Մեր երէկի **Տերսիմը** այսօր նոյնպէս աւեր է: Իր բնակիչները ջարդուած ու ցիրուցան:

Անոր վերապրող բեկորները այս հատորին մէջ կը գտնեն երախտագիտական զգացումներ իրենց երեցներուն հանդէպ:

Այդ առթիւ, մեր խանդաղատալից մտածումները կ'երթան մանաւանդ անոնցմէ ամենէն խոհուն եւ զգաստ զոհին, իր ազգին նուիրեալ զաւակին՝ **Սէիտ Աղային**, որ հայ եւ քիւրտ համակեցութեան, համագործակցութեան բանբերն եղաւ, կանխելու համար աղէտը ե՛լ մեր, ե՛լ իր ժողովուրդին վիճակուած, ու իր այդ ազնիւ առաքելութեան ճամբուն վրայ ինկաւ դաւադրաբար՝ նոյն թշնամիին գնդակով:





## ՆԱԽՆԵԱՑ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ ԼՔԵԼՈՎ

Նախճիրի ուղիներուն վրայ ի գործ դրուած սարսափներէն ճողպրած, մարդ զազաններու կիրքերէն զերծ մնացած «բաղդաւորներու» համար դառնութիւնները անպակաս էին անշուշտ:

Ահա զերագոյն պահը:

Մօտ տարի մը զրկանքի ճիրաններուն մէջ, վերադարձի ու նոր կեանքի մը ի խնդիր մեր երազները ո՞ւր յանդած էին: Վերջնական լքումի իրողութեան հետ հաշտուելուն:

Կեանքին նկատմամբ համ ու իմաստ ի սկզբանէ խտացած կը մնան, արեւուն խայտացող պատանեակի մը տպաւորութիւններուն մէջ:

Անոր համը, ան կը ծծէ մօրը կաթին հետ, իր մեծ ծնողաց հրպարտ ու երջանիկ աչքերէն իրեն վրայ ինկած շողերուն հետ, իր հարազատներու սաստերուն եւ գուրգուրանքին հետ, զինքը չըջապատող իւրաքանչիւր կենդանի եւ անկենդան երեւոյթներուն ճանաչողութեան հետ: Պատանեակը կեանքի իմաստին կը սկսի թափանցել ի տես հաւաքական ճիգին եւ նուիրումին, իր իսկ կողմէ, նախ համեստ ու ապա հետզհետէ աճեցող բաժինը տալով: Բաժին մը, որ իւրաքանչիւր սերունդ արդասաւորելու, զարգացնելու սրբազան պարտականութիւնը ունի, յանուն բարեկեցութեան, վասն «երջանկութեան»:

Տղեկ մը արդէն դիտակից է նախապէս թափուած աշխատանքին եւ քրտինքին, որուն կենդանի խորհրդանշաններն են իր մեծ ծրնողըրը, ու քիչ հեռուն գերեզմանաքարերու տակ դրուած թանկագին մասունքներ:

Օրօրոցէն մինչեւ հոն սահող ժամանակամիջոցին մէջ, կեանքին համն ու իմաստը բնորոշող պատկերները անհամար են:

Մեր խախտած ու տարուբեր էութեան մէջ վերջնական բեկումն մը տեղի կ'ունենար, երբ հայրենի տուն վերադարձի ամէն նշոյլ մարած, այժմ մերկ ու բոպիկ, մարդկային մնացորդներս անվերադարձ պարտաւոր էինք հեռանալ, լքելով մեր նախահայրերուն քրտինքովը արդասաւորուած արժէքները, եւ անոնց մատուցները՝ որբացած:

Հոն ուր կը տուայտինք տարիէ մը ի վեր, իրաւ է, նախնեաց տուններէն դուրս, անոնց մօտակայ քրտարնակ Ագրակ գիւղը, մեր

Շնչառաջադրին գլխաւոր յատկանիշներն ունի, հոն է ընտանիքս իր ամբողջական կազմով, ու կը բաւէ, անկէ քիչ հեռու, որեւէ բլուր բարձրանալ, ապրիլ երէկը, Հազարին՝ մեր գիւղը տեսնել, վերադարձ երազել:

Հովուութենէ փախուստով վերադարձիս պարագան կը տանջէ զիս, յանցաւորի վիճակին մէջ կը փապլտկիմ, լուռ յանդիմանութիւն մը կ'ողողէ զիս, միայնակ կը զգամ նոյնիսկ հարազատներու մէջ: Ամայութեան մը մէջ եմ, աւելի քան երբ լեռնահովիտներուն մէջ, ու լիկներու ու գառնուկներու հետ էի, հոն շարժում կար, այժմ կենդանութեան նշոյլ իսկ չեմ տեսներ, միմիայն ահազդու խժոտուք մը, ուչքս ամէն կողմ է, անբացատրելի այդ վիճակիս մէջ, մօտաւոր գալիքի մասին ինձ տեղեկութիւն տուողը ներքին բնազդս է, այլեւայլ բաներ կը մրմնջէ, ոչինչ կը բացատրէ:

Պատահարներէ զիս անհաղորդ պահելու որոշակի միտում մը կը նշմարեմ ծնողացս վերաբերմունքին մէջ: Մեր փոքրիկ աշխարհէն դուրս բաներ մը պատահած են, նոյնիսկ մօտակայ տակաւին ձիւնածածկ լեռներէն ոչ հեռու:

Քաղաքին շուրջը, հիւսիսային կողմի Հայոց ամայի գիւղերուն մէջ տուն-տեղ եղած Քիւրտեր, իրենց լեռնային որջերը կը վերադառնան, երբ եկողը ամառն է ու աշունը: Մինչդեռ նոյն դարնան, ձիւնհալքին անհամբեր սպասող հայ բեկորները կը յանդգնին իրենց երբեմնի շէները այցելել, մուրալ՝ նոյնիսկ թրքարնակ գիւղերու մէջ, ու վերադառնալ անվտանգ, ոչ բոլորովին ձեռնունայն:

Բերնէ բերան կը չըջին թուրք մեծամեծներու կողմէ զրկուած «հրաւէրներ», որպէսզի տարի մը առաջ իրենց սպաննել չկրցած հայ արհեստաւորներ, անվախ, երթան իրենց մօտ աշխատելու, ի հարկին բնակելու, ու իրենց վաստակովը վերադառնալու երաշխաւորութեամբ:

Գիտէի նոյնպէս, որ շատ մը արհեստներու մէջ վարպետ հայրըս, քանիցս արհամարհած էր թուրք «բարեկամներու» սրտազին կանչը քաղաք իջնել ազատ ու անվախ, հոն աշխատիլ: Անոնք նոյնիսկ իր կեանքին ապահովութիւնը կը դնէին մեր քիւրտ բարեկամներու երաշխաւորութեան տակ:

Ինչո՞ւ ուրեմն բոլորին ականջը դետին կպած, հիւսիսէն լուռ-լիք թնդանթի ձայներուն էին կարօտ, անվերադարձ փախուստ թելադրող տարբեր ձայնի մը հլու՝ բնազդի ձայնին, փախչիլ պիղծ ու անարգ մարդոցմէ, այլուր դիմադրաւելիք նոր թշուառութիւնները համեմել ազատութեան շունչով:

Պահը ուրեմն եկած-հասած էր, որ բաժնուէինք մեր քիւրտ բարեկամներէն, թերեւս ուրիշներ փոխանակ «ուրեմն» բառը գործա-



ծելու պիտի ըսէին «վերջապէս»: Անոնք փրկած էին շատ մը հայ ընտանիքներու կեանքը:

Մերինը ամբողջութեամբ եւ դեռ աւելիով: Մանաւանդ մեր ընտանիքի հօր խնայած էին շատ մը ա՛յլ դառնութիւններ, անլուր չբաւորութեան մէջ անգամ ան պիտի պահէր իր հպարտութիւնը:

Ան թերեւս կ'ապրէր այդ պահուն իր կեանքին ամենէն ընկճուած օրերը, ծանր բեռէ մը կը թեթեւնար՝ առնելու համար ասուոր պատասխանատուութիւն մը: Իրաւ է շատոնց ան կորսնցուցած էր ծիծաղ, ժպիտ, առողջութիւն: Զինքը երբեմն վերակենդանացած կը տեսնէի իր մեծ բարեկամին՝ Տիապ Աղայի ներկայութեան, անոր տան մէջ դտած ջերմ ընդունելութեան շնորհիւ, ինչպէս երբեմն, ինքնամոռացութեան պահեր կ'ունենար հոն, կը դառնար վաղեմի գուարթ խօսակիցը, իբր թէ ոչինչ պատահած ըլլար: Միթէ՞ միշտ նոյն անունով չէ որ կ'ընդունէին զինքը՝ Ալիքսան Աղան էր ան միշտ, իրենց քիրվան: Աստու՛ս, բացա՛ռաբար միայն կրնայի վայելել այդ մտերմութիւնը՝ աղային եւ հօրս միջեւ փոխանակուած: Աղայի գաւազներն անգամ, ամուսնացած, որդիներու տէր՝ կը կանչուէին անոր մօտ, իրենց վերաբերեալ թելադրանքներն ու հրահանգները ընդունելու, եւ կը հեռանային անմիջապէս յետոյ:

— Շէնլիքէն շատ չհեռանաս, հօրդ հետ աղային պիտի երթաք:

Առաջին անգամն էր որ նման պատիւի մը կ'արժանանայի: Աղային կողմէ անձնապէս իրեն ներկայանալու հրաւէր: Ատոր ինչուն հասկնալու բոլոր փորձերուս մայրս կու տայ նոյն պատասխանը՝ տխուր շեշտով:

— Ես ի՛նչ դիտնամ: «Հէլպէթ» ըսելիք մը ունի, կ'երթաս, կ'իմանաս:

— Ամէն օր հոն եմ: Այս առտու ձեռքը համբուրեցի, բան մը չըսաւ ինծի: Ըսէ՛, յանցա՞նք մը գործեր եմ:

Մտածեցի որ, իր մօտէն փախած ըլլալուս առթիւ, Սէիտ Իպրահիմը դանդատ յայտնած է, զիս կը պահանջէ: Հաւանաբար անձամբ եկած է զիս ամբաստանելու: Այդ բարի մա՞րդը: Անկարելի է: Ես իրենց վրաններէն ոչի՛նչ վերցուցեր եմ: Ո՛չ իսկ այն երկու պարկերը, որոնցմէ մին ոտքերէս անցուցած, միւսը՝ գլխէս, պարապ մէկ անկիւնը կ'երկնայի գիշերելու:

Մինչեւ «խոնախ», հայրիկիս հետ մեր կտրելիք ճամբան երկու հարիւր քայլէն աւելի չէր: Լուռ էինք, սեփական մտածումներու անձնատուր: Իմ մտատանջութիւններս ապարանքի դռնէն ներս չանցան: Տիապ Աղայի «առանձնարանին մէջ ուշադրութիւնս միշտ կ'երթար իր վեհաշուք կերպարանքին: Ան ցարդ՝ միշտ բարի եւ հայրական եղած էր ինձ հանդէպ: Հանդարտութիւնս դտած էի:

Ծալապատիկ նստած էր իրե՛ն միայն յատուկ գորգածածկ հանգստանոցին մէջ: Նարդիլէին փողը վար առաւ շրթներէն, հոն տա-  
րաւ աջ ձեռքին մատները, եւ ողջունեց մեզ: Երբ հայրիկս աղային  
աջ ուսին համբոյր դետեղելէ կը քաշուէր, ես, արդէն խաթունն ու  
Հասան Աղան բարեւած, մօտեցայ համբուրելու դէպի ինձ երկարող  
ձեռքը:

— Քիրվա՛, սկսաւ խաթունը, Աստուած չար աչքերէ պահէ,  
այս վերջին քանի մը ամսուան բացակայութենէն վերադարձին, պղզ-  
տիկ քիրվան շատ մեծցած կը գտնեմ, եւ սիրունցած:

— Աստուա՛ծ պահէ, Աստուա՛ծ պահէ, կրկնեց աղան, ու այս-  
պէս, պահ մը ամէնքը լուռ, կը լսուէին մի՛միայն նարդիլէին պղպը-  
ջակներուն ոստոստումները:

Աղային աչքերը միշտ վրաս կը դրայի սակայն:

— Ըսելիքներս յատկապէս քեզի կը վերաբերին: Վերադար-  
ձէդ յետոյ առիթի մը կը սպասէի, շնորհաւորելու զոհարերող ողիդ  
եւ ցոյց տուած քաջութիւնդ:

Ես ուրիշ բանի կը սպասէի:

— Դուն պարտաւոր չէիր օտարին դուռը հովիւ ըլլալ, երբ  
հայրդ իր հացը շատերուն կը բաժնէ, սակայն ցոյց տուիր որ իր ար-  
ժանի դաւախն ես: Հիմա վստահ եմ որ շատ լաւ պիտի ըմբռնես թէ  
ինչո՛ւ համար ծնողքէդ կրկին պիտի բաժնուիս:

Գովեստէն խուսափելու փորձերուս ատեն աչքիս ծայրովը կը  
դիտէի խաթունը, որ ձեռքը մէկ աչքէն միւսը արցունքի կաթիլներ  
կը դրուէր:

— Այո՛, մեծ զոհողութիւն է քեզմէ խնդրուածը, մէջ ինկաւ  
Հաւան Աղան: Գիտես որ առանց մշտատեւ եւ կանոնաւոր աշխատան-  
քի, մեզ մօտ ապաստան դտած Հայերը ապրուստի միջոց չունին, եւ  
մենք այդ ուղղութեամբ իրենց օգնելու հնարաւորութիւններէն զուրկ  
ենք: Ռուսական բանակը արդէն դրաւ ինչ է Երզնկան, եւ, ձիւներէն  
առաջ, Հայերը պէտք է հոն անցնին, մեզ մօտ երկրորդ ձմեռ մը  
իրենց համար ստոյգ մահ է:

Ատենէ մը ի վեր հեռուներէն եկող թնդանօթի խուլ ձայները  
ուրեմն երեւակայական չէին:

— Մենք կը փափաքինք սակայն, որ Ալիքսան Աղան մեզ մօտ  
մնայ: Իբրեւ իմ տան հարազատ մէկ անդամը ան ապրուստի եւ պաշտ-  
պանութեան հոգերէ զուրկ է, շեշտեց Տիապ Աղան: Ինքը համաձայն  
է, որովհետեւ եթէ դէպքերը այսպէս ընթանան, մե՛նք է որ ընդհա-  
կառակը իր բարեխօսութեան եւ պաշտպանութեան կարիքը պիտի  
ունենանք Ռուսերուն մօտ, որոնց բանակը անաջնորդողներն են Հա-  
յերը:

Խօսքը դա՛րձեալ Հասան Աղայինն է, խաթուն ալլես ուրիշ լըսելիք չունի, կ'օգտուի անոր մեկնումէն :

— Ըիչդ է : Ալիքսան Աղա համաձայն է մնալու, սակայն քու եւ քրոջը ապագան չ'ուզեր խորտակել, եւ այդ տեսակէտով խիստ արդարացի է իր պատճառաբանութիւնը : Հայրիկդ չ'ուզեր երիտասարդ աղջիկ մը հոս պահել, չի կրնար դայն մինակը դրկել, ուստի անհրաժեշտ է որ ընկերանաս իրեն :

Երբ կը հետեւիմ ինձ ուղղուած խօսքերուն, ակնարկս փախուստ կու տայ խորտակուած հօրս վրայ : Իր կեանքին ամենէն դըժնդակ որոշումը տալու հարկին մէջ ձգուած է : Ան որ երբեք իր ընտանիքը չէ լքած, ոսկիի եւ ա՛յլ պերճանքի կանչերէն խուլ՝ մերժած է պանդխտութիւնը : Այժմ պիտի թոյլ տայ որ իրմէն հեռանան մայր, եղբայր, եւ իր սեփական գաւազները :

Եւ ինձ կը թուի թէ իրեն ընելիք ամենէն թանկագին նուէրն է որ ըրած եմ այդ օր, իր եւ իր բարեկամներուն ներկայութեամբ ընդունելով իրենց որոշումին ուղիղ եւ բարեբաստիկ ըլլալը :

— Ապրի՛ս, չա՛տ ապրիս, տղա՛ս, քո՛վս եկուր :

Աղան համբուրեց զիս երկար, կրկնակի, ջերմօրէն :

— Հայրդ չէր կրնար, առանց իր գաւազներէն բաժնուելու, իր գլխուն հաւաքած անդամները ցրուել. եթէ անոնք մնան, ձմեռը ուսելիք եւ բնակարան չունին, Ռուսերը մինչեւ յառաջիկայ դարուն այս կողմերը չեն կրնար դալ, որ զանոնք իրենց աւեր տուները վերադարձնեն : Գացէ՛ք առայժմ իրենց մօտ, անոնց հետ կը վերադառնաք : Ծնողքդ մեզ մօտ ապահով են :

Ե՞րբ վերջ դռներու է այս խրատականը : Քանիցս աղային ձեռքը համբուրելով անոր վերջ տուած ըլլալ կը կարծեմ, ի՛նքն է որ իմինս սղմած՝ տակաւին ըսելիքներ կը դռնէ :

Մեծ դրան առջեւն եմ վերջապէս : Իմացս, անծայր իրար կըսած տանիքներուն սկիզբը Աղայէն, Մամբզէն եւ իր ընկերները քարացած, ինձ կը սպասեն : Գամբուր եւ երկու փոքրիկ լակոտներ պոչերնին թօթուելով վրաս կը նետուին : Տարօրինակ անակնկալ մը մանաւանդ գամբուրին վերաբերմունքը. կը ցատկէ մէ՛կ աջ, մէ՛կ ձախ ուսերուս վրայ, կը մխուի սրունքներուս մէջ, ու զիս վեր կը նետէ : Ինքզինքս հագիւ մէկ ոտքի վրայ պահել կը յաջողիմ : Կը կադկանձէ, կ'ուզէ խօսիլ, կարծես զի՛նքն է որ կը լսեմ, երբ Մամբզէ՛ն, «պիտի մնա՛ս», «կեցի՛ր» ըսելով մօտս է արդէն :

Պատասխան չեմ տար : Այդ պահուն գամբուն ու չնիկներն են միայն, որ կրցած են իրականութեան թափանցել : Ինչպէ՛ս կրնամ առանց հարցումներուն դէմ դնել, երբ սիրտս վշտով լեցուն է, աչքերս ահա կ'ուռենան, ու չեմ հանդուրժեր որ անոնք պայթին հրապարակաւ :

— Ո՛ր կ'երթաս, քեզի կը սպասէինք «օյինը» սկսելու համար :  
Կը ձայնակցին խմբովին :

Զիս շրջապատող քիւրտ ընկերներս, աւելի ճիշդ է ըսել տա-  
րեկիցներս, ա՛յնքան ազնիւ, բարի, ջերմ, ի՛նչ դիտնան որ ես ուրիշ  
խաղի մը, նոր խաղի մը կը պատրաստեմ ինքզինքս :

Հայրս ալ, իր կարգին, դուրս կու դայ խոնախի դռնէն, մեզ նըշ-  
մարած կը փոխէ ճամբան, աւելի երկար, պարտէզներուն եզերքը քե-  
րող արահետէն, փշատիներուն վրայ թափելու համար թերեւս իր  
ներքին խոռվքը, կամ ա՛լ աւելի վարերը, դէպի ջաղացք, որ տուն  
դարձը ուշանայ :

Մեր աջին, բլուրի կողերուն վրայ, կը լսուի Վէլի Աղայի ա-  
ռոյգ բացականչութիւնները, որոնք այսօր զիս կը խոցոտեն, ամէնօ-  
րեայ նշանառութիւններու պահն է : Մամբգէն միշտ քովիկս, թեւէս  
դէպի անոնց կը քաշէ, կը հետեւիմ մեքենաբար, ուրիշ ի՞նչ ունիմ ը-  
նեիք, վաղուընէ սկսեալ այլեւս անոնց հրճուանքն ու հրացաններուն  
ձայներն իսկ, խեղդող պարծենկոտ պոռչտուքները չպիտի լսեմ : Պի-  
տի կարօտնամ շատ բաներ, մանաւանդ Մամբգէն, զոր կը սիրեմ,  
ինչպէս Վարդգէսն ու միւս հարազատներս :

Պիտի կարօտնամ ուրիշ մը նաեւ, Միմասեց Յարութիւնը,  
տարեկից իսկական ընկերս՝ Հայ : Ելած է բլուր, տունէն զրկուած՝  
զիս ձայնելու ընտանեկան վերջին համեստ ընթրիքին, զոր մութը չը-  
կոխած պէտք է աւարտել : Կը վերադառնայ սրտաբեկ, իմ «անօթի  
չեմ» պատասխանն առած՝ իր տան գործերուն : Ան պիտի մնայ ի  
հարկէ, իր ընտանիքը աղայի «մարապա»ներէն է, ազատ չէ, չի կըր-  
նար հեռանալ, ու թերես ինծի երանի կու տայ, ո՛վ դիտէ :

Յարութիւն «Հազարիի» մեր դպրոցը զրկուած առանձնաշնոր-  
հեղներէն էր : Տերսիմի ցիրուցան քրտաբնակ գիւղերուն մէկ կամ առ  
առաւելն վեցեակ մը հայ ընտանիքի զաւակները, մինչեւ մեր օրերը  
բոլորովին զրկուած էին հայ դպրոցէ, եւ մեր ցեղին յատուկ յամառ  
առաքինութեան մէկ ապացոյցն է անոնց տարեց անդամներուն մէջ  
հայերէն կարդացողներ տեսնելը :

Կոտորածէն փախուստի օրերուն, Յարութիւնի հօր եւ հօր-  
եղբօր ընտանիքներուն ցոյց տուած ասպնջականութիւնը ամէն դո-  
վեստէ վեր եղաւ, ու այդ պահուն, իրենց մասունքները վերջնակա-  
նապէս լքելու ճամբուն վրայ, անոնց տան ամէն մէկ անկիւնը եւ տա-  
նիքները լեցուն են կրկին, նոր փախուստի դիմողներուն առջեւ :

Ինչպէս մօտ տարի մը առաջ, անոնց տունները կը լեցուէին ու  
կը պարպուէին արշալոյսին հետ : Այդպէս էր օրերէ ի վեր :

Երբ տուն մտայ, ամէնքը իրենց տեղերն էին, մեծ մայրիկն  
անգամ աչքին մէկը բաց՝ լուռ մնաց : Տարի մը ամբողջ այդ փոռը

մեր «պալատն» էր : Երբ ամէն ոք ներսն էր , բոլորն ալ ստիպուած էին երկննալ՝ գլուխնին ծածկել : Տեղւոյն վրայ նստած մէկը կ'ամ չնար իր վրայ թառած ակնարկներէն : Վերջին մտնողին համար , սովորաբար միշտ ես , մութին մէջէն , գետին փռուած մարմիններուն վրայէն իր տեղը իյնալը մեծ ճարտարութիւն կը պահանջէր :

Առաջին անգամն էր որ շփոթութեան կը մատնուէի , ոտքերս չէին կրնար սխալած ըլլալ : Վերէն վար չափածս մարմինը Վարդգէսինն էր : Ծոռեցայ՝ անոր քովինը շօշափելու , անկասկած հայրիկն էր :

Տեղերնիս փոխուած էր , դեռ կը զարմանայի , երբ մայրիկս սկսաւ փսփսալ :

— Անթի չե՞ս , ո՞ւր կերար : Աղային տո՞ւնը :

Հագիւ «այո՛» մը կրցայ մրմնջել : Սուտ :

Բարձրացած էի վերի աղբիւրին կոնակը՝ բլուրին վրայ , ուրկէ հեռացայ , երբ դէպի արեւմուտք՝ Հագարիի բլուրները սեւցան , ու առջիս փռուած Ագրակի տուններէն , շունի ձայններն անգամ վերջնականապէս մարեցան :

Գիւղը ունէր ընդամէնը մէկուկէս փողոց , առանց տանիքները հաշուելու : Մինասեմց դրան առջեւն եմ , հո՛ն միայն կենդանութիւն կայ , կը բարձրանամ փնտռելու Յարութիւնը : Հո՛ն չէ : Տանիքը լեփլեցուն է նոր ժամանող անծանօթներով , վաղ առաւօտեան դէպի հիւսիս մեկնողներ : Նստած են մէյմէկ տոպրակ կողքերնին , քուններնին չի գար , խօսակցութիւննին տրտունջ է : Կու գան քաղաքէն , հեռաւոր գիւղերէ :

— «Շան ցըյնածին» ինչքա՛ն համոզեցի՝ օգուտ չըրաւ : Մէ՛կ բառ հայերէն չուղեց խօսալ : Տարուան մը մէջ լեզու կը մոռցուի՞ :

— Մի՛ մեղդըրեր , աղջի՛ : Ո՞վ գիտէ ի՛նչքան վախ տուեր են :

— Ես Տաճիկ եմ , չըսէ՞ : Սիրտս դանակ խոթեց : Մօ՛րը կաթը...

— Մեղք մի՛ գործեր : Թող ողջ մնայ : Ետ կը դառնանք Աստուծով , ե...

Գիրկ գրկի սկսան լուռ արտասուել : Շտապեցի հեռանալ :

Տխուր էի , երբ ներս ինկայ , ու երբ մայրիկս զիս փաթթեց իր թեւերուն մէջ , կ'ուզէի կրկին դուրս թռչիլ , վազել , վազել՝ դէպի սարերը , ուր տակաւին տուն չվերադարձած վրանաբնակ գրացի Գիւրտեր կային , ու հոն խառնուիլ տարեկից ընկերներուն :

Այդ գիշեր մայրիկիս «խաս» տղան էի : Ան լուռ էր , գիտեմ՝ ինչու համար : Իր ցաւերը կը զգայի մագերոսս մէջ , բոլոր ոյժերովս կը դիմադրէի դէմքս իր շրթունքներուն դարձնելու ճիգերուն :

— Թող ե՛ս լամ : Դուն մի՛ լար :

Գիշերը անգուն , կը տրտնջար մէջս : Երբ մայրս դադրէր զիս սեղմելէ , ես կը պլլուէի իրեն : Յոգնութիւնը ի վերջոյ յաղթած էր յուզումներս : Ո՛րքան քնանալս յայտնի չեղաւ : Աղմուկի մէջ թաւա-

լած, երբ աչքերս բացի, շուրջս դատարկուած էր գրեթէ, գլխուս վըրան Արտաշն ու Աշտուր անհամբեր՝

— Մե՛ծ եղբայր, դուն չգաս, մե՛նք ալ չենք երթար :

Քանի՛ օրեր, որոշում մը կը ծամճմէի, մանաւանդ այդ անցնող գիշերը: Դա՛րձեալ անոր գիւրկը կը նեռէին զարմիկներս, երբ մինչ այդ տրամարանութիւն, խրատականներ պակասած չէին մեկնելու անհրաժեշտութիւնը շեշտող :

Անոնց ալ անպատասխան ձգած հարցումէն յետոյ, պահ մը վերջ երբ երկուքը միասնաբար իրենց ձեռքերով սկսան գլուխ շոյել, դէմքս իրենց զարձնել, որոշումս աչքերէս թուաւ անոնց տխրամած դէմքերուն վրայ :

— Շատ մի՛ խօսիք, «էվէլ» պակաս : Մայրս էր, որ ներս կը մտնէր, տեղէ մը կաթ ճարած :

Շատ մեծ տաղնապի մէջ էր, ցոյց կու տար սրտնեղութիւն մը, որ անկէ շատ ամիսներ առաջ իսկ յաջողած էր պահել, ա՛յն ատեն, երբ տուն եւ գիւղ մոխիրի վրայ կը նստէին :

Ձէք գլտեր որքա՞ն բարի էր : Չգաստացաւ շուտով, չձգեց որ հեռանան :

— Ամենուգ ալ մէյմէկ պուտ կ'ելլայ, ըսաւ լացակումած, բացուելը այտերուն սղմած :

Մեր վերջին պուտ անարատ կաթն էր, հայրենի բոյսերէն քրմուած, զոր այլեւ բնաւ, երբեք պիտի չլմէինք : Բայց զարմիկներս կաթին համար չկեցան, այլ հնչուն պատասխանիս :

— Անհո՛գ եղէք, իրարմէ չենք բաժնուիր :

Օճախէն ժայթքող բոցերը փայլ կու տային խօսքերուս : Սանը վրայէն հանած, իր երկու ձեռքերուն մէջ, կաթին փրփուրը փչելով, մայրս անկէ կը հեռանար :

Կը պատրաստուիմ հարցնելու հայրիկիս ու վարդգէսի մասին, երբ մեր «տուն-ախոռ» կը խուժեն անոնք՝ Հասան Աղային ընկերակցութեամբ, որ մեզ սղջունելով մայրիկիս կու տայ խաբունի կողմէ պատրաստուած ճամբու ուտելիքներ՝ «յատկապէս ինձ համար» :

Հասան Աղան «եայլայ»էն եկած էր, բարի ճանապարհ մաղթելու իր քիւրվաներուն, թերեւս անձամբ հսկելու որ արտասովոր այս մեկնումի առիթով անախորժութիւններ չպատահին :

Ի՞նչ էր ակնկալուածը : Տխրութիւն, եւ լուռ վիշտերէ կաթիլը-թող արցունք :

Տունէն դուրս ենք : Պղտորած աչքերուս առջեւ կը դժուէր վերի ազրիւրէն փրթած մարդկային խայտարդէտ ու անկանոն շղթայ մը, որուն ծայրը արդէն փակած էր Պօզան քրտական գիւղակը տանող հորիզոնին, ու կը թուէր անշարժ, մինչ մենք վերջիններս, քրոջս եւ

հօրեղբորս հետ պիտի հրէինք զայն դէպի նոր, սակայն մօտաւոր վախճան մը, որուն անունն էր Երզնկա :

Այդ անունը գրուած չէր մեր կոնակներուն կապուած լաթերուն եւ վախտ պաշարներու տոպրակներուն վրայ, այլ, անոնց պարունակութեան չափերուն հետ զուգորդուած, մանաւանդ մեր ոտքերուն մերկութիւնը հազիւ ծածկող տրեխներուն կամ առանձնաշորհեալներէն ոմանց մաշած ոտնամաններուն տակ :

Աղբիւրի ծառին կռթնած, Հասան Աղա ուշի ուշով կը գննէր մեզ : Ան ալ յուզուած էր, տարիէն աւելի մեր մտերմութեան մէջ անքակտելի կապեր հիւսուած էին, եւ անշուշտ իր ներկայութիւնը ունէր կրկնակի հանգամանք : Խրախոյս էր մեկնողներուս համար, մնացող սիրելիներուն ապահովութիւնը երաշխաւորող : Իր ծանր շուքով ան կը սանձէր բաժանումի խռովք եւ ա՛յլ յուզմունք, զանոնք յապաւելլու ու ապա աւելի մտերմիկ եւ ուժգին դարձնելու գնով :

Ոչ մէկ հաւաստիք ապագայի նկատմամբ : Բաղձա՞նք, խոստո՞ւմ :

«Տէրը հետերնիդ», այսպէս բաժնուեցան նահապետական մեծ ընտանիքէ մը մնացած երկու եղբայրներ :

«Գնա՛, մա՛րդ եղիր» էին հօր մը վերջին բառերը՝ իրմէ անբոստոյգ ժամանակով բաժնուող զակին :

Մայրս, քրոջս փաթթուած, լուռ էր, աչքերը վրաս պաղած :

Վարդգէս՝ քիրվային դիրկը իրարու ժպտիլ կը փորձէին :

Ճամբէն ետ դարձած, Արտաշէս եւ Աշոտ, եկած էին զիս բաժնել, որ իրենցմէ չբաժնուիմ :

Մեծ մայրիկս հեռուն կանգնած էր՝ աչքերը դէպի Հագարիին՝ Սուրբ Վարվառայ դարաւոր կաղնիին՝ որուն տակ կը հանգչէր մեծ հայրիկս, եւ ա՛յլ սրբազան մասունքներ, զորս կը լքէինք, անդարձ :

Սկսայ մտահոգուիլ Վարդանոյշով : Լուռ կը քալէր, գլուխը կախ, վերմակ մը կոնակին կապած, մէջը թերեւս լաթի կտորներ, ինչ որ ունէր : Ուրախ շեշտ մը կեղծելով մօտեցայ :

— Դուք գացէ՛ք, ըսի, երթաք բարով, իմ ճամբաս ահա կը գատուի :

Հասած էինք ճիւղաւորումի մը, նոյնքան ոտնակոխ, թերեւս աւելի լայն : Այդ իմ ու Բարնակի իշուն ճամբան էր, դէպի անտառ, ուրկէ մէկ քանի օր առաջ անցուղարձ կ'երազէի ձմրան՝ երկրորդ ձմրան մը փայտի պաշարին համար :

Սիրական վայրս էր : Հոնկէ, Թաղար գետակին ձախ բարձունքներէն կը դիտէի Հագարիին, ու եթէ չըլլար ահաւոր խորխորատը, ձեռքս երկարելով ինձ կը թուէր թէ պիտի կրնայի դպչիլ, աջ եղբրքին վրայ թառած մեր գիւղի համայնական անտառին՝ Անգուտի կաղնիներուն, ամբողջ շրջանին մէջ հռչակ հանած իր անունով : Եթէ

ուղէին մէկը «ձեռք առնել», զայն կ'անուանէին Անգուտի համայնա-  
րանէն վկայեալ: Եթէ օտար մը, սովորականէն աւելի համարձակ,  
ճարտասան գիւղացիի մը հանդէպ իր զարմանահար հիացումը յայտ-  
նէր, կը պատասխանուէր որ ան Անգուտէն շրջանաւարտ է, ու ան-  
ծանօթին շփոթութիւնը կը բազմապատկուէր:

Քայլերս նոյնպէս բազմապատկած յառաջացած էի այդ ճամ-  
բէն, երբ քոյրս աղէկատուր սկսաւ ձայնել:

— Նորէ՞ն խենթութիւնդ բռնեց: Ի՞նչ ալ քէյֆդ տեղն է:

Ի՞նչ քէյֆ, ի՞նչ տեղ:

Ագրակ գիւղը, յաւէտ յիշատակելի, մնաց բլուրի ետին:

Քովնտի, արեւմուտք նայող սարալանջի կիսուն վրաններ:  
Խօֆա Ուշաղի տոհմին պատկանող Քիւրտերն էին, իրենց պետին Ի-  
տարէի ներկայութեամբ: Անոնց շուները այլեւս լուռ էին, մեզմէ ա-  
ռաջ անցնողներուն վրայ հաջելէն յոգնած, պոչերին շարժելով մերթ  
կը մօտենային մեզի, ու դա՛րձեալ կը մազլցէին դէպի վրանները:

Հոն, համեստ վրանի մը առջեւ կանգնած կը մնար մէկը՝ Ի-  
տարէի մտերիմ բարեկամ Հայ մը միայն, քաղաքացի Պօղոս Մէն-  
կիւշեան(\*): Ան մերժած էր փախչող կարաւանին շարքերուն մէջ  
մտնել, ու հեռուէն, վերջին օղակին բարեւ տալու համար, դա՛ր-  
ձեալ վեր կ'առնէր իր յոգնած թեւը:

Մեր ճամբու երկայնքին, Տերսիմի ձոր ու դարաստաններուն  
մէջ կը մնային անշարժ դիտողներ, հողին խառնուած սիրելիներ, ու  
իրենք էին կարօտ՝ մեր հապճեպ բարեւներուն:

Թաղար գետակը, դարերով իր փորած ձորերուն մէջ անտեսա-  
նելի, մեզի կը հետեւէր ձախէն, Հազարիի դրացի Կոչոյի՝ թրքական  
հինդ-վեց տուներով գիւղին առջեւէն, հիւսիսին հետ քէնտտած, կը  
դառնար դէպի արեւելք: Բլուրի գագաթէն մեր ճամբան կը թաւա-  
լէր դէպի գետակ, ու հեռուն կ'երեւէր Պօզանի տէր՝ Հիւսէին Ա-  
ղայի ապարանքը, միակը, ցածիկ խրճիթներով շրջապատուած, ո-  
րոնցմէ մին էր մեր երջանկայիշատակ Խաչոյի կնոջ ու միակ զաւկին  
խեղճուկ հիւղակը՝ ծանօթ աստուածակը:

Հասան Աղա եւ հայրս, բաւական ճամբայ դանդաղ քայլերով  
ընկերացած էին հօրեղբօրս՝ որ կարաւանին վերջինն էր: Խօսողը ին-  
քը չէր, ինչպէս միշտ, լռելեայն մտիկ կ'ընէր, ու հաշուով քայլ կը  
փոխէր, մանաւանդ ծանր էր իր շալկին բեռը: Ընտանիքին կէսը գրե-

(\*) Պօղոս Մէնկիւշեան պիտի մնար Տէրսիմ: Քիչ անց, երբ Հայոց կողմաւու-  
նեղէն ամբարձ պաշարը վերջ գտած էր, Քիւրտերը կը վերսկսին իրենց աս-  
պատակութիւնները՝ այս անգամ թուրք գիւղերու վրայ: Պօղոս արօր մեծագոյն  
երջանկութեան օրերն էին: Անոնց հետ միասին եւ անձամբ ալ ան ձեռնարկած է ա-  
ւելի յանդուգն արշաւներու, ու այդ ճամբուն վրայ գտած է իր վախճանը՝ կորիճի  
մահով:



Թէ մանուկներ էին, ու այժմ, առաջին անգամ անոր պատասխանատուն ըլլալու աւելի ծանր բեռ մը կը դնէր իր եղբայրը՝ իբր վերջին խօսք բաժանումի:

Գալիք նոր հոգերուն վախը կ'ապրէր, նման պայմաններու մէջ իր եղբորմէն բաժանումի կսկիծը կը ծամծամէր: Եղբայր մը՝ որ տարիներէ ի վեր տան սիւնն էր, նոյնիսկ հողմացրիւ, միշտ անոր հօր ապաւէնը:

Ի տես այդ իրողութեան, իմ մէջս ալ նոր պատասխանատուութիւն մը կ'արթննար: Ճամբուն վրայ թափած քրտինքներու հետ կարգ մը վիշտեր թափած, ինքզինքս թեթեւցած կը զգայի, ու թէեւ ոչ ուրախ, բայց մասամբ գուարթ քայլեր փոխող՝ ընտանեկան խումբին շուրջը, քիչ մը մեկուտի, մերթ առաջ, մերթ քովնտի կը հետեւէի նոր մտածումներու անձնատուր:

Սարալանջին վրայ արածող հօտին հսկող շնիկ մը, մեղմիկ պոչը շարժելով բարեկամական երեւոյթով եկաւ քսուելու սրունքներու: Հակառակ շալկիս բեռան, ծռեցայ շոյելու գինքը: Կը մօտենայինք շէնլիքի մը: Հօրեղբայրս կը մօտենար, կանգ առի, նաեւ հեռուներու պատկերը զետեղելու համար մտքիս մէջ: Ահա երկու հոգի կանգնած մեզ կը դիտեն, մարդ մը, պատանի մը:

— Սէզ ամուլի գերեզմանին կը մօտենանք, ըսի հօրեղբորս, Տիգրան հօրեղբայրն ու Պետրոսը մեզ կը սպասեն:

Ինքզինքի՞ս կը խօսէի, թէ ան էր որ խօսքերս խառնեց ճամբու խիճերուն խժռուքին: Կրկնեցի:

— Թող մայրս եւ կիները հեռանան, կամացցի՛ր: Նորէն սուգ ու շիւան պիտի փրցնեն:

Բարեբախտաբար նոյնը մտածեր է նաեւ Տիգրան հօրեղբայրը, թելադրած է որ շարունակեն, ու ինչպէս թաղման օրը՝ հազիւ քանի մը ամիս առաջ, դա՛րձեալ չորսերնիս կու տայինք մեր վերջին հրաժեշտը՝ արդէն անհետանալու վրայ եզոզ իր հողակոյտին:

«Որ յանէիք»ը սկսայ ցած, ու երբ կարգը եկաւ «ի վերին Նրուսադէմ»ին, լացն խեղդելու համար անդգալաբար սկսայ պոռալ: Տիգրան հօրեղբայր, երբեմնի փնտռուած դպիրն ու սարկաւազը՝ ծունկի եկած էր հօր գերեզմանին առջեւ, գլուխը կախ, Պետրոս կ'աբաստուէր հօրեղբորս թեւերուն մէջ, մինչդեռ ան մարմարի պէս քարացած Պետրոսի գլուխը միայն կը շոյէր:

Նշմարեցի որ հօրեղբայրս կը խաչակնքէ, մեկնելու ազդանշանն էր: Մօտեցաւ Տիգրանը վեր հանելու, Պետրոս վազեց ինձ փաթթուելու, իրմէ վարակուած խրախոյսի ոչ մէկ խօսք կրնայի հեգել, այլ մի՛այն լալ:

Մօտակայ Պօզան շէնլիքը, շալակը վար չառնելու համար քարերու վրայ պզզած բազմութիւնը գիտած էր տեսարանը, մեզ ընկե-

րակցած իրենց արցունքներով, իւրաքանչիւրը մէկէն աւելի սիրելիներ վերջիչելով:

— Ինչքա՛ն ալ պոռաս, զաւա՛կս, օդուտ չունի, Աստուած խըլացեր է:

Աննէս էր, տեղէն ելաւ տքալէն, ճակատս համբուրեց.

— Զայնի՛դ մատաղ: Մեծ հայրի՛կդ...

Այդ պահուն, անակնկալօրէն բուսած, հասակը ցցած, իր ահեղ ձայնով կը հրամայէր շարժիլ: Ստեփան հօրեղբայրն էր՝ աղջիկն ու թոռը հետը, իր Գեորգը գրկին: Իր Գեօնն:

Շրջակայ շէնլիքներէն նորեր եկած էին միանալու, ու այդ կարճ դադար-հանգիստի պահուն լուծած էին առաջնորդի կարեւոր հարցը՝ ի նպաստ Ստեփան հօրեղբոր, Տեփան արօր:

Արդարեւ հայրիկիս մեծ հօրեղբօր տղան՝ միակ թեկնածուն էր: Երկար տարիներ չիւս. Ամերիկա բնակած ըլլալը ամենուն քաջածանօթ էր, սակայն Տերսիմի աշխարհագրութեան ուսուցիչը ըլլալու հաւաստի նշաններ երբեք ցուցարեբած չէր: Երբ այս որոշումին տեղեկացաւ մեծ մայրիկս, որ վիշտ փարատելու եւ խնդացնելու դադանիքն ունէր, յայտարարեց:

— «Պօյը երկան» է, հեռուն կը տեսնէ:

Այս կարգադրութեան դիւրաւ համակերպողները սակայն, վստահ էին որ Տերսիմի խորերը մտած ատեն, ռազմաճակատի մօտերը, պիտի կրնային քիւրտ առաջնորդ մը ճարել, որ մարդասիրարար իր բարի կամեցողութիւնը պիտի շնորհէր առանց վարձատրութեան՝ քանի որ նման առատաձեռնութիւն ակնկալել այդ ատեն անկարելի էր, թէեւ կարաւանը պիտի անցնէր թրքական ոյժերու շղթային մէջէն:

Այդ օր, մինչեւ Թաղար գետակի նոր արմուկին իջնալը, աջ ու ահեակ խմբակներ կանգ կ'առնէին ու կը քակուէին: Անոնցմէ կը լըսուէր աղօթքի մրմունջներ, Տերսիմ իրենց վերջին հանգիստը գրտած մերձաւորներու հոգիներուն համար, ու գալիք փորձութիւններուն բնազդօրէն թափանցողներուն կողմէ նաեւ «Երանի»ներ, մարմնական տանջանքէ ազատուածներուն համար՝ նոյներու հասցէին:

Մեր առաջնորդը գոհ չէր՝ «մեռածները» կը դանդաղեցնէին երթը: Անոնց թիւը արդարեւ ինձ ապշութիւն կը պատճառէր: Տարի մը ամբողջ Ագրակի գիւղին մէջ մէ՛կ Հայու մահ չէր պատահած: Կը վախնային մեռնելէ, «հոգու հաց» տալու միջոցէ գորկի էին:

Այդ առաջին օրը կը թուէր անվերջանալի իր նորութիւններով, տխուր լուրերով մանաւանդ: Երբ արեւը յանկարծուտ ծածկուեցաւ մեր կռնակի բլուրներուն ետին, առջեւնիս մէկէն ցցուած տեսանք անթափանց վարագոյր մը, սեւ, մինչեւ երկինք բարձրացող: Հասած էինք եզրը Տերսիմի անտառածածկ լեռնալանջերուն ստորոտը, ձորե-

րու մէջ, որոնք յաճախ եւ պարբերաբար գերեզման դարձած էին Քիւրտերուն վրայ արչաւող թրքական հազարաւոր թիւով բանակներուն: Այդ տեղերուն ամէն մէկ անկիւնը երգուած է դարերէ ի վեր: Սարսուռ ազդող տողեր նուիրուած էին անոնց անունը յաւերժացնող եւ յանուն ազատութեան հոն ինկած քիւրտ զոհերուն հերոսական արարքներուն:

Մեր գիւղը մուրալու եկող Քիւրտերէն լսած էինք հոչակ հանած այդ անգիր երգերէն, ու այժմ անձամբ եկած ենք նոյն կիրճերէն անցնելու, բարեկամ Քիւրտերու կարեկցող նայուածքներէն ալ ընկճուած, թէեւ անոնք այդ պահուն նոյնքան հեզ են եւ խոնարհ մեզի հանդէպ, ինչպէս տարիներ առաջ, իրենց նուաստ օրերուն:

Այդ արտասովոր փոփոխութիւնը մեկնաբանելու տուեալներ իրապէս կը պահպէին: Ոտքերնին միշտ բոպիկ, պատուած հագուստներով չարածճի լամուկներ զիրար հրմշտկելով կը դիտէին մեր անցքը, ու հռուռ, խեղճուկ հիւզակներու սեմին, տեղ-տեղ ծերունի Քրտուհիներ կարծես աղօթքի խօսքեր կը մրմնջէին: Այդ խորշերուն մէջ, հազիւ երկու տասնեակ քիւրտեր մեր քաղաքէն հռուռ, բացի հասակաւոր մէկ քանի քիւրտ տղամարդերէ, ոչ մէկ հնարաւորութիւն ունէինք մեզ քաղաքականապէս տիրողներուն անարգ լեզուովը հարդակցելու:

— Ի՞նչ կը տնտնաք, հարսանիքի՞ կ'երթաք, սկսաւ զոռոտուալ առաջնորդը:

Տաժանակիր այդ օրը կը վերջանար: Առաջիններուն հրահանգեց գիշերելու համար կանգ առնել Խաչիլի գիւղը, նախապէս զուտ հայաբնակ Խաչիլի անունը կրող, ուր պէտք էր համախմբուիլ եւ մարդահամար կազմել:

Այդ օր Ստեփան հօրեղբօր մասին ունեցած համարումս բոլորովին կը փոխուէր: Իր միակ շնորհքը ուրեմն Ամերիկաներ աշխատած եւ ոսկի դիզած ըլլալու մէջ չէր կայանար: Իր շարժումները, հրահանգելու կերպերը թէեւ թատերական, ցոյց կու տային փորձառու եւ մանաւանդ իր նոր պաշտօնին գիտակցութիւնը ունեցող առաջնորդ մը ըլլալը:

Երբ հասանք Խաչիլիի աւերակներուն, Ստեփան հօրեղբայր ցոյց կու տար ամէն խումբի, ամէն ընտանիքի իրեն յարմար վայր, տարեց կիներն ու տղամարդիկը կը գետեղէր բանակավայրին շուրջը:

Մինչեւ Խաչիլի ճամբան ինծի ծանօթ էր: Անցեալ աշնան վերջերը մեր գիւղի Տէր Յովհաննէս Քահանայի վախճանումին առիթով: Լուր տրուած էր Տերսիմ ապաստանած մեր գիւղացիներուն, ներկայ ըլլալ թաղման արարողութեան, ու թէեւ առանց կրօնաւորի, անոր գերեզմանին օծումը կատարելու համար՝ պատշաճ հանդիսաւորութեամբ, երկնային շնորհքէն մեծագոյն բաժինը ակնկալելով իր ձեռ-

քով պսակած, մկրտած բազմութենէն: Հայրիկիս ծանր հիւանդութեան պատճառաւ հօրեղբօրս հետ ներկայ էինք: Քահանան իր ընտանիքէն ազատուածներուն հետ Խաչելի չէր բնակեր, սակայն հոն Հայոց Հին գերեզմանատուն կար, յուշարձաններ, նաեւ խարխուլ սրբավայր մը՝ յարգուած շրջանի բոլոր Քիւրտերէն: Անոր ուղղակի կողքին փորուած էր մեր բարի տէրհօր գերեզմանը, որուն շուրջ այդ օր իրենց վերջին գիշերը պիտի անցընէին իր զաւակներն ու թոռները, աստեղագարդ պայծառ ու տաք երկինքին տակ, ու անկէ պիտի բաժնուէին հրաժեշտի արցունքներով:

Բնականաբար բովանդակ Հագարին, շալակներէն թեթեւցած, հաւաքուեցան Սերոբ արօր շուրջը, քահանայի բազմանդամ ընտանիքին մեծ որդուն, շրջապատուած ապա նաեւ քիւրտ մանուկներէ եւ կիներէ, որոնցմէ շատեր խորապէս երկիւղած՝ կ'արտասուէին:

Մեր առաջնորդին այդ պատմական օրուան վերջին կարգադրութիւնն եղաւ համոզկեր խօսքերով ցրուել բազմութիւնը:

— Գացէ՛ք հանդէսելու, մեր խաչելութեան ճամբան շատ երկար է, Աստուած օգնական ձեզի...:

Ստեփան հօրեղբայրը չվերջացուց իր ճառը, ձեռքը հագիւ Սերոբ արօր ուսէն վար առած՝ աճապարեց հեռանալ:

Իսկ իմ սիրտս կ'ալեկոծէր աններելի թերացում մը:

Մեր կարաւանը կ'անցնէր Կէօգէրիկի մօտէն, աջին բլուրի մը ետին, հագիւ երեք քիլոմէրը հեռու, ու ես քաջութիւնը չէի ունեցած թռչիլ հոն, համբուրելու թանկագին բարեկամներս, Մէհմէտ Աղան, իր խաթունը, զաւակները, որոնք զիս հարազատի մը պէս ընդունած, հիւրասիրած, եւ խնամած էին:

Առաջնորդը ի զուր կը կրկնէր իր հրահանգները: Բազմութիւնը աննպատակ կը դեգերէր գերեզմանաքարերու ընդմէջէն, յանցաւորներ ըլլային կարծես: Ո՛չ յոգնածութիւն կը զգային, ո՛չ անօթութիւն: Ո՛ւր կրնային ընտրել իրենց գիշերելու վայրը, որմէ՞ կրնային պահանջել այն պատառ մը հացը, որուն գոյութիւնը երաշխիքն էր մէկ քանի անձանօթ օրերու: Ո՛չ ոք կը համարձակէր կռնակէն վար առնել իրեն վստահուած սնունդի պաշարը, զայն բանալ, ու անկէ չնչին մաս մը իսկ վերցնել՝ չփորձուելու համար:

Խոչելիի աւերակներուն մէջ կը պարզուէր օրեր առաջ մեր մեծ մայրիկին սաստերն ու տրտունջները, երբ փոքրերէն սկսելով երկուսական կարկանդակ կը թխմէր անոնց ձեռքը, ու կը զրկէր որ կողք-կողքի երթան երկնան, քնանան:

Ան որ տարիէ մը ի վեր մեր առժամեայ տունն եղած էր, հոն գտնուած ամբողջ կենսամթերքը եւ հայրիկիս, որ նոր ջաղացպանն էր նշանակուած Ագրալի, բերած ալիւրի հսկայ պարկը, դրուած էր մեծ մայրիկի տրամադրութեան ներքեւ, ու ան օրեր տեւող քրտինքի

եւ արցունքի կաթիլներ ջրին խառնած, շաղեր էր ու պատրաստեր պանդուխտ դացողներուն յատուկ կարկանդակներ :

Չարմիկներուս հետ, դալիքին անտեղեակ, մանկական լաւատեսութեամբ անհոգ, երբ կը փորձէինք անոնցմէ թոցնել, Անան, արցունքը սրբելով երբեմն մեղմ, յաճախ իրապէս վրդովուած կը սաստէր :

— Ծօ՛, շա՛ն գաւկըտիք, մեղք կը դործէք, խուրպան ձըզի, համբերեցէք, նորէն դո՛ւք տ՛ուտէք :

Անան այդ գիշեր կը բաժնէր անուններ տալով, թէեւ միշտ սխալ :

Երբ կարգը ինձի եկաւ, նո՛ր միայն գլուխը վեր բարձրացուց : Երեւոյթը մինչ այդ խիստ, դառնութեան ճառագայթներով պրկւած, ստացաւ իր ամենէն անուշ արտայայտութիւնը : Երկու հատը տալէն վերջ, փոքր դադար մը, ու ապա, փսփսալով հատ մը եւս խոթեց ափիս մէջ :

Օրուան որբն էի : Այդ էր իր խանդաղատանքին նշանակութիւնը : Կը պատրաստուէի մերժել, Արտաշէս կանխեց :

— Մե՛ծ եղբայր, դուն այսօր ամենէն շատ յոգնեցար, ա՛ռ, դուն շալակ ունիս, մենք ոչ :

Միւսները հեռացած էին, կէսը իրեն տուի, երբ կը հեռանայինք խումբէն քրտական աղեխարշ մեղեդիի մը ուղղութեամբ :

Այր ու կին մը : Մեր՝ պատանիներուս համար ծեր հոշակուելու տարիքով, կռնակ կռնակի կիտուած դերեզմանաքարի մը վրայ : Երգողը այրն էր, գլուխը ձեռքերուն մէջ, ուսերուն վրայ ուղիղ ցցած, միմիայն բերնին շարժումները կը տեսնուէին :

Արձան մը, յաղթանդամ եւ հուժկու երեւոյթով, պատշաճօրէն հագուած, անպայման շնորհիւ հայկական թաւանին, իրմէ ժայթքող թրթռացումները կը նկարագրէին հերոսի մը կեանքն ու դժբախտութիւնը, մօտաւոր անցեալի քիւրտ-թուրք բաղխումներուն բերմամբ :

Կինը, նոյնպէս անշարժ մարմնով, մերթ ընդ մերթ երգին ելուէջները կը շեշտէր, միմիայն գլուխը շարժելով՝ վեր ու վար :

Արտաշէսին ձեռքէն բռնած կը տանիմ՝ քարերուն զարնուելով : Քանի՛ զոյգին կը մօտենանք, ա՛յնքան կը մեծնայ անոր ձեռքին ընդդիմութիւնը :

— Անան հիմա մեզ կը փնտռէ :

Յուզուած է : Ամէն դի արցունք կը յորդի : «Շէրին» ազդեցութեա՞ն ենթակայ, թէ իրենց դժբախտութեան :

Կը սպասեմ որ երգը դադրի : Չի դադրի : Երգիչին դէմքը կ'ուզեմ տեսնել, որքա՛ն զեղեցիկ պէտք է ըլլայ, իր ողբացած հերոսին պէս, իր արտաքին կերպարանքին համապատասխան :

Միանուագ, եւ նոյնքան ահաւոր ճիչի մը մէջ կը խեղդուին մեր երկուքին ալ սոսկումի աղաղակները, ու կ'ընկրկինք այլանդակուած մարդկային դիմադժի մը առջեւ:

Գողաւորած իր ձեռքերը երբ վար կ'իյնան, ձախ ափին տեղը, աչք, այտ, ազանջ գոյութիւն չունին, ահօսուած, կարկտնուած մըսակոյտ մը միայն:

Արտաշէս քովս չէր, անպայման մեծ մայրիկին ծոցին մէջ, իսկ ես չճամած ու ցաւով կը մտածէի ո'չ թէ մարդուն դժբախտութեան վրայ, այլ, «Հապա եթէ ինծի պատահի նմանը»...: Բնաւ չէի փափաքեր հաշմանդամ էակի մը հանդիպիլ: Անշուշտ կը մեղքնայի անոր վիճակին վրայ, եւ նոյն փորձանքին ենթարկուելու վախը արդէն զիս դժբախտ կ'ընէր, ու երկար ժամանակ:

Տեղս քարացած մնացեր էի: Խօսակցութիւն մը սթափեցուց զիս:

— Գիտե՞ս, այդ «չէրը» իրեն վրայ հանուած է: Կինն է պատմողը, որ շատ սահուն հայերէն կը խօսի:

Անգիր, բերնէ բերան փոխանցուող այդ դիւցազներգութիւններուն մեր շրջանի Գիւրտերէն տրուած անունն էր՝ Լաուգ:

Անկախ ապրելու մէջ յամառող, գէթ իրենց նեղ շրջափակին ու երկնքին տակ, տերսիւմի լեռնականներուն ընդհարումները ա'յնքան յաճախակի էին գիրենք ընկճել ուզող աշխարհակալներուն հետ, որ ամէն սերունդի մէջ, այդ Լաուգներուն արժանի հերոսներ կային, մանաւանդ իշխանազուներ, աւատապետներ, եւ երբե'մն միայն համեստ էակ մը, ու կը բաւէր մի'միայն անուններ փոխել, պարունակութեան մէջ չնչին յաւելումներով:

Մեզ հիւրընկալող՝ Ֆէրիատանցիներու Տոհմին մեր օրերու հերոսն էր Գեղազկի Աղան, հօրս մօտիկ բարեկամներէն: Անոր նուիրուած դովաբանութիւններուն մէջ մեծ բաժին ունէր իր ճերմակ ձին (խրոս աթ), որ պատանեկութեան կողմէ կը տրուէր իրենց փայտէ ձիերուն՝ մեծ յոխորտանքով:

Երգիչը ունէր անսպառ շունչ: Ո'չ ոք կը համարձակէր զինքը լռեցնել որեւէ ձեւով, հիւրընկալ հողերու մէջ էինք: Մեր «փառքի» օրերուն, մեր տան դռներուն առջեւ երգողը կարելի էր ընդհատել անոր տողակը լեցնելու պատրուակով: Այդ պահուն տարբեր էր, ան կարօտն ունէր մի'միայն ունկնդիրներու: Հայը իր ամբարները, նոյնիսկ մասունքները լքած՝ կը փախչէր:

Անային պատգամաբերները վերադարձան՝ Արտաշ եւ Աշոտ: Սկսան իրենց վախով ճնշել երկու ուսերուս՝ որ առանց ինծի՝ չեն կրնար քնանալ, բնութիւն կոչուած հիւրանոցը՝ խորտուրորդ գետին, քարէ բարձեր միայն ունի, թէեւ ընտրութիւն կատարելու ազատութիւն ունին, որ նոյնպէս իմ հաւանութեանս կը կարօտի: Իրենց

ցանկութիւնը յայտնելու համար խօսիլ անհրաժեշտ չէ, միայն թէ, ինչպէ՞ս կրնամ քուն բերել չոր գետնին վրայ առանց քիւրտ հերոսին պատմութիւնը լսելու :

Ի մեծ ուրախութիւն զարմիկներուս, ոտքի եմ : Սակայն կը դիմեմ հերոսի կնոջ կողմը : Զեռքերէս պինդ քաշողները տրտնջալով կ'ընկրկին :

Շունը դիրկը առաւ ու իրեն փաթթեց եւ հարազատի մը պէս իր քովը տեղ բացաւ : Տարիներ Հայու տան մէջ ծառայող քիւրտ կիներ իր այդ վարուելակերպին մէջ ոչինչով կը տարբերէր մեր մայրերէն, ու յանկարծ՝ նոյնքան լեզուանի : Հայերէն խօսելու կարօտն ունէր :

«Ձարարաստիկ այդ օրը, մեր աղան, ինչպէս դուք պիտի ըսէիք, մեր հրամանատարը, չորսական հոգինոց երեք խմբակի պէտք ունէր, քուրք փաշային վրանի մօտերը սողոսկելու համար, հոն գտնուող քնդանօքը ոչնչացնելու պաշտօնով : Այն խումբը որ բռնուի, պիտի ըսէ որ եկած եմք յանձնուելու, ու իր աղաչանքին հետ մեծ վայնասուն պիտի փրցնէ, պիտի պնդէ որ զիրեմք փաշային մօտ տանին, Տանիկները պիտի գրադեցնէ, միւս խումբերուն լուր տալով՝ անոնց գործելու դիւրութիւն ընծայելու համար : Ամէն խումբին մէջ տեղաւոյն քաջ ծանօթ մէկը կար, իմին մասնակցութիւնս նոյնպէս կամաւոր՝ երրորդին համար յարմար անձի չգոյութեան պատճառաւ : Բոլորս ալ անգէն էինք : Մեր Մատոյին խումբը, ձեռքը երկարելով իր հերոս ամուսնուն կողմը, առանց նշմարուելու քնդանօքին հասաւ, ու ցուրտէն շմամ պահակը խեղդելէ վերջ՝ յաջողեցաւ քնդանօքը դէպի ձորը գլորել, ձոր մը, որ մեր զինեալ ուժերուն հասողութեան ներքեւ էր, ուր ասկեարները օրերով չէին յաջողած անոր բարձունքներուն տիրել : Մինչ երեք հոգի այդ գործով կը գրադուին, Մատոն զիրեմք պաշտպանելու հսկողութիւնը յանձն կ'առնէ :

«Թնդանօքի գլորուելու աղմուկէն, քովի վրանին մէջ քնացող տանիկ զինուորները կ'արթնան, գէնք, սուր մերկացուցած կը յարձակին :

«Մատոյ, գործին յաջողութենէն անտեղեակ, փախուստի մէջ կրկնակի վտանգ կը գգայ, խելայեղ կը խուժէ քուրք մերկացուցած սպային վրայ, ձախ այսր անոր շեղքին դէմ, ու ճշալով գետին կը փռուի : Զորին հանդիպակաց կողերէն ոչինչ չէր նշմարուած մինչեւ Տանիկներուն համագարկերը, որոնց գոհ կ'երթան քնդանօքը արդէն իսկ ձոր գլորած մեր երեք Փէտայիները :»

Ուշքս բովանդակ իր պատմութեան, քիւրտ կիներ իր վաղ օրերու յուշերուն, մեր դուրսները եկած յենած էին անոնց պերճ ու խիտ մազերու կրկնակ խուրճերուն, ու շնիկն անգամ կորսնցուցած էր իր աչքերուն չար խարխարանքը դէպի ինձ, եւ իր մարմնոյն միակ ազատ անդամով կը մտրակէր մարմինս, մերթ կը շոյէր նաեւ դէմքս :

Լուսծ էր Մստոն: Իր հին ցաւը արձագանդ գտած էր շուրջերնիս, իրենց գլխուն քար փնտռող թափառական մարդոց մէջ, որոնցմէ կին մը՝ ամենակորուստ, կ'ողբար անպայման անոնցմէ ամենէն թանկագինը՝ իր անյայտ որդին, «էկին հաւասիթ» ուրորտներ սփռելով:

Մեր պատմութեան թեւն ալ անյայտացաւ այդ ողբին համակած լուսթեան մէջ, ու անոր ընդմէջէն ես տակաւին կը լսեմ բազում թարթիչներէ գետին թաւալող արցունքի կաթիլներուն մորմորն ու նաեւ խրախուսանքը:

Ինծմէ աւելի անհամբեր՝ Քրդուհին մեզ անջատեց այդ նոր ցաւերու խեղդող յորձանուտներէն:

«Մեր երկու խումբերը, իրարմէ քիչ հեռու, կրցած էինք նըշմարել քարեր ու ծառի միւղեր գրկած քնդանօթին դէպի ձոր գահավիժումը, ասկեարներու համագարկին պատասխան կու տային մեր ուժերը, մէյմէկ ժայռի կտոր գրկած, մենք եւս ինքզինքնիս ձորը գտանք: Ուք հոգի էինք, ու հեւալով հասանք մեր դիրքերը:

«Երկու կողմի կրակը դադար առնելէ յետոյ, Տանիկները Մըստոյիս արիւնաքաթաթի «դիակը» նողկանքով իրենցմէ հեռացնելու մտօք դէպի ձոր կը գլորեն: Ապառաժի մը կողքին, ծառի բունին, անոր մարմինը կ'անշարժանայ, միշդ մեր յառաջապահ դիրքերուն դիմաց, Տանիկներէն անտեսանելի:»

*Քրդուհին լռեց, սկսաւ շունին գլուխը շոյել, ու կու լար:*

— Յետո՞յ, յետո՞յ: Յուզումէս, վախէս, շունը մէկդէր հրած՝ կը գրկեմ Քրդուհին, անոր մէջ քիչ առա՛ջ միայն ինձմէ բաժնուած մայրիկիս պատմելու շնորհը կը հոսէր, նոյն քնքուլթեամբ, մանաւանդ՝ նոյն լեզուով:

Նոյնքան յուզուած, արիասիրտ, առաքինի կնոջ աջ թեւը երբ զիս իրեն կը սեղմէ, շունը աննախանձ կը չափչփէ կռնակս, իբրեւ բարեկամ, իբրեւ հրաւէր համբերութեան:

«Ամէն Քիւրտ, տղա՛ս, դուն այդ բոլորը անշուշտ գիտես, գիտուոր կը ծնի, ու երբ, ուշ կամ կանուխ, ըստ իր ընկերային ու միւթական դիրքին, առաջին սեփական հրացանը ձեռք կը ձգէ, այդ պահէն սկսեալ ան պարտաւոր է իր «գէնփի եղբայրը» ընտրել, ու երկար փնտռումաւի պէտք չունի: Այդ «եղբօր» հետ գերագոյն ուխտն է, միասնական կռուի ատեն մէկգմէկու դիակ քշնամու ձեռք չբողով:

«Մեր սպանուած չորս հերոսները ունէին ուրեմն իրենց «եղբայր»ները, ոմանք նոյն կռուի պահուն ընտրուած: Նման եղբայրակցութեան մէջ դասակարգի խտրութիւն չկայ, «սրտերն են զիրար քաշողը», կ'ընտրեն փոխադարձ հիացումի զգացումէ տարուած, ու բազմաթիւ օրինակներ կան որ փիւրտ աղա մը, աղայագուն երիտասարդ մը, իբրեւ գէնփի եղբայր ունեցեր է համեստ, ազատիկ Քիւրտ մը,



նոյնիսկ իր տոհմէն դուրս, որուն մէջ տեսած է ազնիւ եւ կտրին մարդու արժանիք:»

— *Ըսէ՛, պաճի՛ (քոյրիկ), ինչպէ՞ս ազատեցիք այդ «դիակը»:*

*Արցունք կար աչքերուս մէջ, որոնք շուրջիս մուժին պատճառաւ ա՛լ աւելի սղոտոր էին, ձայնս կը թրթռար կամքիս դէմ ըմբոստ: Զգացի կնոջ համբոյրներուն ջերմութիւնը ու բուրբոյլին տարբեր, գերազանցապէս մայրական ձայն մըն էր որ կը ջանար իր խօսքերուն թեւը չփակցնել:*

«Դժուարին ձեռնարկ մը արդարեւ: Թշնամին ծանօթ էր մեր այդ անտեղիտալի սովորութեան, աշալուրջ հսկողութեան տակ էին դիակներէն երեքը մահաւանդ, ու կը սպասէր նոր գոհեր խլելու; որոնց համար մէկ-քանի փորձեր անյաջող անցան՝ երկու կտրիներու կամաւոր մահով:

— *Մակայն Մստօն, քու Մստօն, ինչպէ՞ս կըցաւ ողջ մնալ:*

«Անոր «դիակը» բարեբախտաբար քշնամիէն ծածկուած էր, յաջորդ օ՛րը միայն կրցանք հշդել անոր տեղը, երբ ծառի բունին մօտ շարժում մը նշմարեցին մեր դէտերը, եւ իր ինքնութիւնը բնականաբար մեզի յայտնի չէր: Ինքզինք տեղափոխելու յանախակի դժուար փորձեր էին այդ շարժումները, ուրեմն ողջ էր, եւ գայն փրկելը կը դառնար անմիջական: Երկու հոգի յառաջ սլացան, անոնց միացայ նաեւ ես, այն մեծ յոյսով, որ ողջը *Մստօն* էր, գեղեցիկ եւ կըտրին երիտասարդ մը, որուն սիրահարուած էի կռիւներու առաջին օրերէն ի վեր»:

«Արդարեւ *Մստօն* էր, գլխուն «ֆաշալը» հատուած այտին ու սկանջին փակած, շրթունքներուն կէտը կախ՝ արնաթաթախ, կրած հարուածէն եւ կորսնցուցած արիւնէն ուշաթափ, մեռելացած վիճակը տեսնելով՝ զինքը քաւալած էին դէպի անդունդ: Երբ իրեն հասանք, դա՛րձնալ անշարժացած էր, քերեսս իրեն մօտեցող ոտքի ձայներու վախէն: Մեր լեզուով իր անունը ֆանիցս կրկնելէ յետոյ միայն շարժում փորձեց, մրմուռ մը միայն կրցանք իմանալ: Բերանը արեան շերտով ծածկուած էր: Վստահ էինք որ մեր ինքնութիւնը ճշդ դած էր: Ամբողջ գիշեր մը հարկ եղաւ՝ մինչեւ ձոր իջեցնելը, ուր ապահով էինք, որմէ յետոյ փութացի մագլցիլ մեր դիրքերը՝ պատգարակ եւ օգնականներ բերելու համար: Ահա՛, իմ անո՛ւշ պարոնս, իմ *Մստօի* պատմութիւնը:»

*Մստօն, որ պահ մը լռած էր, վերսկսաւ իր «լաուզը» աւելի մեղմ: Քրդուհէն զիս կրկին համբուրելով՝ խրատեց որ չուսով միանամ իմիններուս:*

— *Աստուած ձեզի օգնական: Գնա՛, աղուո՛ր մանչուկ, դնա հանդէ՛, փորձէ՛ քնանալ, դեռ շատ յոգնութիւններու կը կարօտի ձեր ազատուիլը:*

— Կտրիճ մըն է քու Մստօն, իսկ դուն՝ նո՛յնպէս, որ զինքը չես լքեր :

— Իսկ դուն՝ բարի տղեկ մը, Աստուած քեզ ու քու կիներդ աղէտներէ զերծ պահէ :

— Մստօն ալ հայերէն կը խօսի՞ :

Չէր զիտեր թէ եւ, բայց ան ինծի սոսկում չէր պատճառեր այլեւս, խոր համակրանքս կը պատկերացնէր իր երբեմնի սիրուն դէմքն ու կերպարանքը, ա՛յնքան գեղեցիկ ու վայելուչ, որքան ա՛յն օրը, երբ երիտասարդ Քրդուհիին սիրտը գողցած էր :

Այդ շրջանի կռիւններուն տաճիկ բանակը չէր կրցած աւելի խորերը յառաջանալ : Չորս զոհի զնով թնդանօթ մը խորտակելով՝ Քիւրտերը անգամ մըն ալ ցոյց տուած էին իրենց ազատ ապրելու կամքը, ապաւինած ամեհի բնութեան մը, այդ լեռներուն, ձորերուն ու անտառներուն, որոնց մէջէն անցնելու թոյլտուութիւն ունէր մեր կարաւանը, ուր ամէն նորածին արծիւ, իր առաջին թռիչքին սոսկումը կը պահէր վերերէն զիտելով :

Այդ անգամ ալ թշնամին զիրենք խիստ ձմեռուան աւերներուն յանձնած էր ամիսներով, նոր կորուստ, դաս մը եւս տուած ըլլալու դոհունակութեամբ, աւերներ սփռելով՝ ետ քաշուած :

Երբ հերոսս զոյգէն բաժնուելու յարմար խօսք ու առիթ կը փնտռէի, ո՛վ հեզնանք, միտքս ողողեցին տակաւին հաղիւ տարի մը առաջ երգած հայ յեղափոխական երգերը, ու ամօթը խոռոկց էութիւնս :

Մօտեցայ Մստոյին : Ձեռքը փնտռեցի : Ինքն էր որ կը համբուրէր զիս, իր ծոմուկուն շրթունքները, թաւ պեխերուն մէջ թաղուած, կը սրբէին թրջուած այտերս :

— Մնաս բարով, կտրիճ Մստօ :

Ճամբու իյնալու աղմուկը շատոնց կը տիրապետէր շուրջս, հրմշտուքով արթնցնել կը փորձէին զիս : Ընդարմացումս տենդոտ գիշերուան մը շարունակութիւնն էր : Ապրեր էի այլեւայլ հերոսական գիմադրութիւններու ահագու, արտաոց դրուագներ : Մի՞թէ նոր յոյգերուս եւ յոգնութիւններուս դառն պտուղ :

— Մե՛ծ եղբայր, արթնցի՛ր, ելի՛ր, քեզ կը փնտռեն :

— Քրտու լակոտ մը, հոն կեցեր քեզի կը սպասէ, հայրը զրկած է :

— Դո՞ւն ես Հագարցի Ալիքսան Աղայի տղան :

Վարդանոյշ եւ Արտաշէս ընկերացան, «հայրը» հօրս բարեկամներէն է, հարցուփորձերով լսեր է որ մեկնողներու մէջ Հագարցիներ կան :

— Ես հօրդ բարիքը շատ եմ վայելեր : Լսեցի իր զաւկին հոս

ըլլալը, կը փափաքիմ իմ համեստ հիւրասիրութիւնս ընել ձեզի, ի յիշատակ այդ ազնիւ մարդուն: Ասոնք ո՞վ են:

Համեստ խրճիթի մը օճախին առջեւ, դետինը, երկու դաւաթ եւս աւելցուց տան տիկինը, քրոջս եւ հօրեղբորս տղուն համար: Ու մինչ երեքով, առատ մեղր, կարագ, անարատ կաթ (վերջինը) կը լափէինք, տան գլխաւորը, դաւազան մը ձեռքին, կոճղի մը վրայ նստած, աչքերը մեր վրայ անհուն խանդաղատանքով, ամչկոտ, մեր պատաններուն հետ ընդհատելով կը պատմէ հօրս հետ իր հանդիպումները, մեր տան մէջ յաճախ կշտացած ըլլալու առիթները: Մեզ կը քաջալերէ ուտել՝ իր երախտագիտութիւնը յայտնելով: Կը մխիթարէ գալիք լաւ օրերու յոյսով:

Բայց պէտք է մեկնիլ: Մստոյի կիներ է դրան առջեւ իր մտերմիկ հայերէնով մեզ բարեւոյդը, նաեւ այս հանդիպումը հրահրողը, որ կապոց մը կը զետեղէ անութիս տակ, համբոյր մը ճակտիս:

Մեր արքայական նախաճաշէն, առ ի քաղաքավարութիւն թողածները հիւրընկալ Քրդուհին թաշկինակի մը մէջ ամփոփած՝ Վարդանոյշին ձեռքէն երբ Անային անցաւ, ան դժգոհ մնաց:

— Ինծի ինչո՞ւ հետերնիդ չտարիք, մե՞ղքը կը մտնայիք: Իմ հացս կերած է այդ մարդը: Անան մտածող չկայ:

Ինչպէս միշտ, Անան ինքզինքը մտածող չէր նմանապէս, անոր դանդատները չրթունքի շարժումներ էին, իր սիրտը աւելի խոր ցաւեր ունէր: Ես այդ քաջ դիտէի, չէ՞ որ ինքս այդ պահուն նոր բաժանումի կսկիծը կ'առթէի:

Հինաւուրց Խոչեփի սրբատաշ քարերը, մեր նախնիքներու սրբազան մատուցներուն այդ վկաները, թիչ անդին առանց յուշաքարի՝ մեր դիւզի երէցին գերեզմանը, անոր շուրջ վերջին աղօթք մրմնջողներուն շարժուն բուրբը, շուրջի ժայռեղէն քակուելով կը դիմէր դէպի վերջնական փախուստի աննկատելի արահետը, Մստոն եւ իր կինը, նոր յայտնուող հօրս երախտաւորեալ Քիւրտին ընտանիքը, այս ամէնքը, ամէնքը պէտք է լքել:

Հազիւ քանի մը քայլ, այս բոլորը կը պատկանին անցեալին, քանի մը հիւզակ, ցիրուցան քարեր, իմ սիրտս էր զանոնք մեծցուցած, մինչ արահետի փոքրիկ շեղում մը՝ ահա անոնք դադրած էին տեսողութենէս:

Երբեք չէի փափաքեր որ կարաւանը կանդ առնէ, ի՞նչ փոյթ թէ մանուկներ եւ բազում տասնեակ տարի տառապած ծերունիներ կային: Այդ դադարներն էին դիս ամենէն աւելի յոգնեցնողը, ի՞նչպէս անցընել այդ կարճատեւ պահերը: Հանգչի՛լ: Ինչպէ՞ս: Համատարած տրտունջի մէջ, խօսակցութիւնները անտանելիօրէն ճնշող՝ դադարի անխուսափելի հետեւանք:

Օտար, անձանթ ու հեռաւոր ճամբաներ անցնելու անձկութիւնը, վախը, տաղտուկները, անճանաչ մարդոց ընկերութեան առթած վերապահութիւնը մինչ այդ զսպած էր ցաւերնին, բովանդակ զօրութիւննին հաւաքած, ինքզինքնուն լռել պարտադրած էին: Կարձատեւ պահերը երկու օրուան քով-քովի ապրումներուն մէջ, իրենց սրտերէն վիշտ կը քաղէին, ծանր բեռներ կը թեթեւցնէին, նոր մտերիմներուն զանոնք ցրուելու յոյսով:

Տարի մը վերջ, տակաւին նոր կորուստներ՝ ուստի յաւելեալ ցաւեր ունէին անոնցմէ շատերը՝ հիները անթեղող:

— Շաքաթ մը քովը կեցայ, աղի արցունք քափելով, օր ու գիշեր շարքը դարձայ, լեզու, աղօթք, անէծք խառնեցի, որ մեղքնայ ինձի: Չեղաւ:

Աղջկան համար է: Անիծեալ օրը թուրք մը յափշտակած տարած է իր կանանոցը, ունի նորածին մը: Թուրքին երկրորդ կինն է:

Իդուր հեռացայ: Ահա ուրիշ մը:

— Գացի բէկին խոնախը: Թոյլ տուին որ տեսնեմ գինքը, գիս հիւրընկալող տունը տարի գիշեր մը: Եկաւ: Ի՛նչ ըրի, չկրցայ համոզել որ մեր հետ գայ, դառնայ ազգին գիրկը: Թրքացուցեր էին, ու այնքան վախ ներշնչած, որ հետս բառ մը հայերէն չուզեց խօսիլ: Յա՛մկարծ փախուստ տուաւ:

Քրոջը միակ զաւակն է:

Ինչպէ՞ս դիմանալ իր ողբին, կու լար: Հեռացայ՝ ինքզինքս զսպելու:

— Հի՛մա, հի՛մա, սա դիմացի լեռնէն կու գամ: Երէկ գիշեր գատուեցայ խուսբէն, տեղը գիտէի: Քիւրտ բարի աղա մըն է, խաթունը նոյնքան ազնիւ: Կերցուցին-խմցուցին, իրենք ալ ինձի հետ սկսան համոզել որ հետս գայ, թէեւ կը սիրէին գինքը, եւ պահած էին գաւկի պէս՝ առանց կրօնափոխութեան: Շան ցըյնածը չուզեց: Մէկ տարուան մէջ հայերէնն ալ մոռցած էր: Մինչեւ հետս փաշկոտելով բերի, հոգիս բերանս եկաւ:

Հօրաքոյրն էր, աչք, ունք, անէծք կտրած՝ քիչ հեռուն մոութը կախ 12 տարեկան սղուն վրայ, տարի մը առաջ իր գիւղի դասարանին Ա. աշակերտը, հայրը՝ Ամերիկա, մայրը՝ արսորի ճամբաներուն վրայ:

Դեռ կային ուրիշներ: Ո՞վ ողջ մնացող հարազատ մը ետին չէր ձգած:

— Հասանք դրան առջեւ, հագիւ բերան բանալու վրայ էինք, մեր աղջիկը տեսնալու խնդրանք տալու, մարդը (Թուրքը) հրացանը առած վրանիս քուս: «Չե՛մ երթար, չե՛մ երթար» պռռալով, գաւակս Տանկին ոտքերուն փաթթուելով սկսաւ համբուրել: Գազանը մեղմացաւ՝ որդիս ինքզինքը գոհեց: Քա՛ր ըլլայ սրտերնիս, չի դիմանար:

— Հայպա մե՞նք: Մա՛ց մնաց շուները բզիկ-բզիկ ընէին մեզ: Տղաս պատուհանէն կու լար-կ'ողբար, որ հետերնիս գայ: Անգգամ Տանկը իբր քէ շուներէն ազատելու գար, փայտեր կոտրուեց վրաս: Տեսէ՛ք վիմակա: «Հիմա, դո՛ւն ըսէ, պարո՛ն Ստեփան, Աստուած քու գաւակներուդ արեւը պայծառ պահէ, ինչպէ՞ս կ'ուզես որ ոտքերս առաջ նետեմ, ամէն ֆայլափոխի ետ կը դառնամ, ձայնը ականջիս մէջ է, ինձ կու գայ որ ետեւէս կը վազէ:»

*Ո՛չ ոք այլեւս քայլ կը նետէր, ո՛չ իսկ յողնատանջ եւ մտածկոտ առաջնորդը, որ փայտին ծայրովը արահետը մաքրելու անհրաժեշտութիւնը կը զգար, երբ կինը վերսկսաւ.*

— Մի՛ մեղադրէ՛ք զիս, որ հոգերովս ձերինները վառ կը պահեմ: Աստուած քշմամբիս անգամ քոդ խնայէ նման փորձութիւն: «Ո՛տք վերցուցէ՛ք, մի՛ տնտնա՛ք», ներո՛ղ եղիր, պարո՛ն Ստեփան, ըսէ՛, «իմտո՞ք եմիմ»:

*Արդարեւ Տեփան Աբոր լեռ ու ժայռ թրթռացնող ձայնը կրկին ու կրկին կը տիրապետէ.*

*—Ո՛տք վերցուցէ՛ք, օր մը ուշացանք, պաշարնիս անհատնում չէ, գոնէ ատիկա դուք ինձմէ աւելի լաւ գիտէք:*

*Դադարը, այո՛, որուն անհամբեր կը սպասէին շատեր, կը ստանային յաճախակի բողոքներով, տաժանք էր ինձ համար, անձիս հանդէ՛պ իսկ անհոգ,եւ ա՛յլ պատասխանատուութենէ զուրկ: Կաշարը չէր զիս մտահոգողը, անբնականոն վիճակը մեր՝ կը կրծէր ներսիդիս, հանգիստ չունէի, իմ ալ աչքս ետիս էր, չէի համակերպեր ծնողքէս բաժնուելու անհրաժեշտութեան: Մանաւանդ կը կրկնեմ, այդ դադարներու ընթացքին է որ մարդկային այլազան խեղճութիւնները կը պարզուէին: Որքան ալ բազմութենէն, շարքէն հեռու քալէի, երբեմն առաջ վազելով, ետ մնալով, ականջս, աչքերս կպած կը մնային կարաւանի կեանքին, սիրտս կը մղկտար, հետաքրքրութիւնս յագեցնել կեղծելով, կը չափչփեմ ճամբան, անոր շրջակայքը, ու ամէն հանդրուանի ընթացքին կրկնակի ճամբայ կը կտրէի, սրտնեղութիւն պատճառելով ե՛ւ քրոջս, ե՛ւ զարմիկներուս, որոնց համար իմ ներկայութիւնս մխիթարանք եւ ոյժ կը ներշնչէր:*

*Պահ մը դիւթուած բնութեան գեղեցկութենէն, կը պզգիմ բըլուրի մը, ճամբուն մօտիկ ժայռի մը դադաթը, աչքս պտրտելով կ'իյնայ մեր գիւղացի Բարունկանց Եղսա հարսային հորթին վրայ: Մարդոցմէ աւելի սկսա՞ք այդ հորթուն մեղքնալ: Իր ճաշելու պահերը համահաւասար էին մեր դադարներուն, որոնց տեւողութիւնը շարունակ կարճեցնել կը ձգտէր Տեփան արար, ոչ միայն իր ահեղ ու չոր ձայնով, այլ սարսափ ձգող իր բառերով՝ քանի կը մօտենայինք Մնձաւրի հովիտին, որուն կեղրոնը կ'իշխեն թրքական զօրանոցները, արեւուն տակ ճեփ-ճերմակ պսպղացող, ու անկէ քիչ հիւ-*

սիս, լեռներուն ծայրն ու կողերուն վրայ տեղ մը դանուռղ, պատե-  
րազմական դօտին, որ պատանիներուս ծանօթ էր՝ գրքերու մէջ,  
որոնց մասին վիպական գաղափար միայն ունէի:

Ինծի պէս ճամբէն դուրս խուժող արարած մըն էր Եղսայիմ  
հորթը, այդ անմեղ կենդանին: Եղսայիմ ամբողջ ինչքը կռնակին փա-  
կած, դունչը գետնին, կը վազվզէ խոտի ծիւրերուն ետեւէն, եւ կերածը  
Եղսային փայտի հարուածներն էին, զինքը ճամբու հրաւիրող: Կա-  
րաւանին ամենէն խղճալին էր Բարունկանց հորթը, որուն կարծ կա-  
պը Եղսան մէջքին կապած գինովի պէս խարխուլ կը յառաջանար  
ցերեկը, գիշերը մանաւանդ, որպէսզի չփախի, չգողնան: Եղսա հար-  
սամ անզգամ կին չէր, մինչեւ խաւարը չկոխէր, անոր հետ կը շրջա-  
գայէր: Հորթուն մտութիւնը գետնին վրայ կը սահէր, իսկ իրենը երկ-  
նակամարին տնկած՝ մերթ ընդ մերթ անէծք կը թափէր:

Ո՛վ Ամենակալ Տէր, սըւոր մե՞ղքն ինչ է: ... Այս ի՞նչ օրե-  
րու ձգեցիր մեզ:

Ճամբայ որակումս գիտեմ որ մտքերու մէջ չփոթութիւն կը  
ստեղծէ: Երկրաճափական գիծ մըն է, վերջ չես տեսներ, իսկ ամենէն  
վհատեցուցիչ պարազաներէն մին, գլխաւոր յատկանիչն այն է որ՝  
անոր եզերքներուն մարդկային բնակութեան հետք չկայ, այծեամի,  
նապաստակի, կաքաւի փախուստ եւ թռիչք նոյնպէս, խրճիթ, հիւ-  
ղակ, տուն կամ պալատ տեսողութենէ հեռու, եթէ կան:

— Լեռ, ձոր չափչփելուդ՝ գնա՛, տեղէ մը գաւաթ մը կաթ  
ձարէ:

Վարսեմիկը գիրկը, Անան այս հրաւէրը կը կարդայ, կէս սուտ,  
կէս իրաւ: «Ուրկէ՞ ձարեմ», կը պոռամ, ու չորս կողմս կը գիտեմ  
կրկին:

— Ամէն բան գետնին տակ չանցաւ, Տէրսիմի մէջ Քիւրտի շէն-  
լի՞ք կը պակսի:

Գետինը չանցան. իրաւ է: Բայց ո՞ւր են: Պատերազմի այդ  
բախտաւորները ո՛չ գինուոր տուին, ո՛չ տուրք, ազատ-համարձակ,  
թալանով առ այժմ աւելի բարեկեցիկ են, քան երբեւիցէ:

Բայց ո՞ւր են:

Ա՛յն պատճառները, որ մեզ ճամբաները ձգեցին, զիրենք երկրի  
երեսէն ծածկեցին: Շարաթներ առաջ լսեցին թնդանօթի գոռոցներ,  
Մնձուրի հովիտը Երզնկայէն բաժնող լեռներուն վրայ շարժուն  
ստուերներ նկատեցին, հովիտին երկու կողմերը եռուզեռ, իրենք ի՞նչ  
հաշիւ ունին կատարուածին մէջ, եթէ ոչ կծկուել իրենց որջերուն  
մէջ ու սպասել:

— Ինչէ՞ն գիտես որ չուրջերնիս մեր շարժումները նկատող  
պահակներ չկան:

Փորձառու մարդ մը կ'երեւէր ըսողը, մեր գիւղէն հիւսիս,

Արտկա գիւղէն էր, յիսսուննոց, իր ընտանիքը ամբողջովին տեղա-  
հանուած :

Ճիշդը խոստովանելու համար, մէկու մը հանդիպել չպիտի  
փափաքէի: Եթէ «չէնլիք»ի մը ուղղութիւն ցոյց տայ, ու ըսէ ահա  
հո՛ւն է, հո՛ն, հեռու չէ, բայց տեսածդ բլուր մըն է, անտառի կտոր  
մը: Գնա՛, գնա՛, չէ՛ս հասնիր: Քանիցս փորձուած է այդ խաղը:  
Ես ալ անձնապէս: Այս մարդոց համար ժամանակն ու տարածու-  
թիւնը կարեւորութենէ զուրկ են:

Անան ինքնիրենը խօսելէ չի դադարիր: Իր խիղճը հանգստացած  
կը գզայ: Փափաքեցաւ եւ ուզեց որ կաթ գտնեն: Ինքը ուզեց, բերող  
չեղաւ: Ու դառնալով վարսեցիկիմ, կը շոյէ, կը գգուէ:

— Չկա՛յ, գառնո՛ւկս, չկա՛յ: Ան իմ մէկ խօսքս երկուք ընել  
տալ տուողը չէ: Ուրկէ՞ պիտի ճարէ:

— Ա՛խ ու վա՛խի ժամանակը չէ, Սառա՛, կ'ըսէ առաջնորդը,  
(որուն առջինեկ երկու աղջիկները, իրենց մօր մահէն յետոյ, նոյն  
Սառան իր գաւակներուն հետ մեծցուցած ու կարգած է), երախան  
մօ՛րը տուր, ճամբա՛յ ելիր:

Մեծուրի՛ հովիտին տեսանելի պզտիկ կտորը նորէն անյայտա-  
ցաւ: Խոմբին առջեւէն վազելով կը դիմեմ տարբեր հորիզոնի մը:  
Լեռնային փոքր կոչուած բլրուն վրայ կը նստիմ՝ դիտելու այդ եր-  
րորդ առաւօտեան մեր անցած վայրերը, որոնք շատ հեռու չեն՝ ըստ  
Քիւրտերու կարծիքին: Լեռնային խուցի մը մէջ փակուած կը գզամ  
ինքզինքս, վախի ցնցում մը, երբ զիս կ'երեւակայեմ միս-մինակ:  
Գլխուս վրայ պայծառ կապոյտ երկնքի հսկայ կափարիչ մը դրուած,  
անոր մէկ ծայրին արեւը կը խաղայ, անփոխարինելի միակ բարե-  
կամս, որ իր լոյսովն ու շողերովը ամպերու տակէն ամէն օր պա-  
հուրտուք կը խաղայ, անձանձրոյթ, այդ նոյն վայրերուն վրայ, ու  
վախս կը մեծնայ, զի գիտեմ որ շուտով պիտի լքէ զիս հիւրընկալող  
ապառաժը:

Բայց ահա գօտեպնդող ձայն մը: Ստեփան հօրեղբոր մականին  
հանդիսաւոր հարուածները, որոնք քովէս կու գան ու շատ չանցած  
երբ դադարին, զանոնք փոխարինողը պիտի ըլլայ՝ «քե՛զ նայիմ, կըտ-  
րի՛ճ տղաս, քա՛յլ նետէ»:

Ան, առաջի օրերու իր խրոխտ, հպարտ առաջնորդի թափը  
կորսնցուցած է, գալիք ու յաջորդող օրերու վտանգները կ'ապրի,  
բոլորիս համար, հետը չի խօսուիր, առաւօտէն վաղ, մինչեւ կէս  
գիշեր ոտքի, իր կամքը փշրողը հարցումներ են՝ «Շատ մնա՞ց»,  
«Ե՞րբ տի հասնինք»:

— «Երբ տի հասնի՞նք, երբ տի հասնի՞նք»: Ի՞նչ է, հարսնըւո՞ր  
ես: Խնամիներդ տաւուլ զուռնայով քեզի՞ կը սպասեն:

— Էս մարդուն ըլ բան չես կրնար հարցնէր : Մե՞ղք զործեցի : Մեր ցաւը մեզի հերիք չէ՞ :

— Մօ՛, Տեփա՛ն, կը միջամտէր յաճախ Անաս, հետերնին հերսով մի՛ խօսիր : Սրտերնուն մէջ վախը շատ է, հէ՛մ պաշարնին կը հասնի, հէ՛մ ըլ Տաճկի զօրքին գիծերէն «չոլուխ—չոխուխը» անվնաս դուրս բերելու հոգը :

Ինձ կը թուէր թէ այդ երկու հոգերն ու վախերը ինծի չէին պատկաներ . բոլորովին լաւատես դալիք փորձանքներէն դուրս դալու հարցին նկատմամբ, կ'ուզէի որ այս երթը վերջ չունենար : Անդադար շարժում, նո՛ր լեռներ, դաշտ ու ձոր :

Ահա կը քալենք, միալար, սողոսկելով մութ անտառի մը մէջէն, լեռան մը կողերուն շուրջ, երբ ինքզինքնիս կը դանենք նոյն բացատին մէջ, ուր դադարի հրաման տրուած էր երկու ժամ առաջ :

— Աստուած հոգի՛դ չառնէ, Տեփա՛ն արար : ... վրանիս դարձուցիր մեզ : Մեղա՛յ, մեղա՛յ, ա՛յս էր պահաս :

— Ալ ի՞նչ կ'ուզէք, պաղօշկեցէ՛ք, շնթուկեցէ՛ք, կը պոռայ Ստեփան հօրեղբայր, եւ իր արբանեակներով, որոնց կը միանամ, կը բռնէ նոյն ճամբան : Քիչ անդին կը նշմարուի ահեղ վայրէջքով արահետ մը, զոր իրաւամբ անտեսած էինք :

— Ճամբու երկայնքին ասկէ զատ ուրիշ բաժանում չտեսայ, կը համարձակիմ նետել, երբ միւսները՝ կանգնած, դեռ լուռ կը մնան :

— Ասիկա մեզի խորխորատ կը տանի, «եա՛ւրուս» : Մինչդեռ առջեւնիս շիտակ ճամբայ ցոյց կու տայ :

— Դուք քիչ մը նստեցէք հոս :

Առաջնորդը միայնակ վար կը թռչի, ձեռքով կ'արգիլէ ինձ որ չհետեւիմ :

Գլխիկոր ետ դարձած վահան հօրեղբորս քով կանգնած՝ կը սպասենք իրեն :

— Հո՛ս է ճամբան, դացէք լո՛ւր տուէք, կը լսուի իր հզօր կանչը, բայց զինք չենք տեսներ :

Յաջորդ օրը երբ փոխվրէժի, կատակելու կամ զուարճանալու մտօք, այդ յաւելեալ պտոյտի խօսքը կ'ըլլայ, կարաւանին նոր միացող Հայեր, տեղւոյն մօտակայ Քիւրտերուն մօտ ապաստանած, ծանօթ էին այդ «ուազմագիտական» արահետին, խաղ մը, որ ատենօք Քիւրտերը պատրաստած են իրենց վրայ արշաւող թրքական բանակի մը, ու տակաւին սովորութիւն է բուն ճամբուն մէկ մասը ծածկել :

Գիշերելու պահը մօտենալուն, մեծ հօրեղբայրը կ'աճապարէր առաջ անցնիլ, յարմար տեղը ընտրած, հասակը կը ցցէր արահետին կեդրոնը, ըստ ընտրութեան աջ կամ ձախ թեւը անոր ուղղահայեաց տարածած : Անկէ քանի մը հարիւր մեդրի վրայ կը փուռէր կարաւա-



նին իջեան-թաքստոցը: Հօրեղբայրը չէր անտեսեր ամէն իր մօտ հասնողներուն կրկնել, այդ չորրորդ երեկոյին, «Այս գիշեր ո՛չ մէկ կրակ, կատարեա՛լ լռութիւն»:

Մննուր գետի ձախակողմեան վերջին զառիթափներուն վրայ ենք: Համանուն հովիտը շրջապատող հիւսիսային լեռնաշղթային մէկ մասը մեր առջեւն է, հօն են ե՛ւ մեր ազատարար բանակները, ե՛ւ հայակուլ տաճկական հրէշները: Անշուշտ կենդանութեան ո՛չ մէկ նշան: Մինչեւ կէսօր քրտական մարզերուն մէջ ենք, կէսօրէ վերջ՝ պահուրտուք եւ հանգիստ, երթը այլեւս տեղի պիտի ունենայ գիշերով, եթէ յաջողինք Մննուրէն անցք մը գտնել, ճամբայէ՝ ուրեմն կամուրջէ հեռու վայրէ մը:

Առաջնորդը գոհ էր երէկի իր տուած հրահանգը կատարելապէս գործադրուած ըլլալուն: Ըստ սովորութեանս երբ սկսայ գաղտագողի շրջագայիլ, հարիւրէ աւելի բազմութիւնը չքացած էր, ամենախիտ հաւաքաւայրին մէջէն սուր ականջ ունեցողները մի՛միայն ձիւթ ծամողներուն չաթ-չաթերուն ձայնը պիտի կրնային լսել:

«Մահ կամ ազատութիւն», ահա՛ բառերը, զոր ակամայ կը ծամծմեմ առանց մտածումներէս հեռացնել կարենալու ծնողքիս եւ եղբորս պատկերները, ու ապա ուշադրութիւնս կը գրաւեն շրթունքնին շարժող մայրեր, որոնք ծունկի եկած, աղօթք կը մըմնջեն: Միթէ այդ ձեռով չե՞ս աղօթեր յաջորդ արշալոյսին թշնամու վրայ գրոհի հաւանական հրամանի սպասող զինուորները, ու մտքով կը թռչիմ Աւարայրի դաշտին ա՛յն գիշերուան, ուր բանակատեղին նաեւ աղօթաւայր մըն էր:

Պայծառ գիշեր, ամառ, համայն Տերսիմի երկրամաւին վրայ վաղ առաւօտեան ցօղը հազուադէպ երեկոյթ է. ո՛հ, ի՛նչ մեծ բարեբախտութիւն:

Խոշոր աղի կտորներ ցանուած երկնակամարին տակ, մեր աշխարհի դարւորները առանց վրանի կը գիշերէին չոր ու մաքուր օդ շնչելով, եւ «եայլա»ներու մէջ ալ շատեր չհանդուրժելով վրաններու տաքին՝ դուրսը կը ննջէին. վրան, հիւղ անհրաժեշտ են՝ հետաքրքիր աչքերու դէմ իբրեւ պատուար, նաեւ անբաղձալի տարրերու աւերներուն դէմ: Ամառները, հարթ-տափարակ տանիքներու վրայ, լուսնակը իրենց պահապան դրած, հայ գիւղի կնոջական առաջին եւ վերջօրեայ գործն էր հօն անկողին յարզարել՝ իրենց ծունկերուն վրայ բեռնաւորուած տղոց համար:

Այս պահուս, այս բաց երկնքին տակ, խորտուրորտ տեղերու վրայ, ոչ իսկ թեթեւ ծածկոց ունին հօն իրենց մարմինը կծիկի վերածած էակները: Չեն գանգատիր, ամէն բոպէ դէպի վտանդ յառաջանալու անդիմադրելի հրամանի մը սպասող տարրեր են, որոնց ա-

ղօթք-փսիսուքը «Բարեխնամ Սուլթանի մը» սեւ հողիներուն չհան-  
դելուիլը կը հայցէ :

Այդպէս, մեր ծննդավայրին ամառնային ամիսներու կլիմա՞ն  
բարեխիղճ էր, թէ մարդ արարածին ապրելու տոկունութիւնը : Դեռ  
չատ առիթներ պիտի ունենամ այս հարցումները տալու :

Անվե՛րջ հարցումներ :

— Տեփա՛ն Աբար, տակաւին շատ մնա՞ց : Ոտքերնիս «ճմուռ»  
դարձան :

Երբեմն չէր կրնար զսպել իր զայրոյթը, մտովի հայհոյելով կը  
փախչէր՝ գլուխ օրօրելով, Գէորգը գրկին՝ իրեն վերագրուած ոսկի-  
ներու թաղուած դանձէն միակը՝ իր Գեւոն :

Իսկ ես հետաքրքիր, անոր հասցէին ուղղուած չարութիւնները  
քաղելու հօր տենչէ մը բռնուած կը մնայի :

— Ո՛ւր որ երթաս Հազարցի մը գլխուղ կը տնկուի :

— Իրե՛նք գիտեն, իրե՛նք են ազգին մեծերը, կը շարունակէ ու-  
րիչ մը :

— Հասակը երկար, խելքը կարճ, մեզ կրակին բերանը կը տա-  
նի :

Յրուած, կէս պահուրտած, կը սպասենք գիշերային երթին,  
լուսնի ծագումէն առաջ ճամբայ կտրելու,

Ուրկէ՛ ո՛ւր, Քիւրտ մը կը բուսնի : Այդպէս է լեռներուն մէջ,  
ուրուականի պէս կը ցցուին, տարիքոտ՝ բայց առոյգ մէկը, արեւը  
արդէն լեռներու ետին է :

Անակնկալի եկած է ա՛ն ալ, կանգ կ'առնէ, անվախութիւնը  
ցոյց տալու ձեւ մը կ'առնէ՝ քրտինք սրբելով : Թէեւ դժուար չէ իրեն  
համար մեր ինքնութիւնը կռահել, գաւազանի մը կոթնած մարդիկ,  
մեր հարցումին կը պատասխանէ կոտրած, թափթփած տաճկերէնով,  
առանց նախաբանի :

— Դուք խենթեցե՞ր էք : Ո՛ւր կ'երթաք այսպէս : Քանի օր է  
ձոր ու հովիտ ասկեարներուն մնացեր է, «Մուզուր Սու»ի վրայի մի-  
ակ կամուրջը քանդեցին :

Իր հանդիստ առնելուն կը հետեւին աւելի մխիթարական տե-  
ղեկութիւններ :

«Մուզուր Սուիէն անդին, լեռնալանջերուն վրայ, ամէն օր  
վեր-վար ձիւղերնք կ'երեւին ու կ'անհետին, հովիտին մէջ գիբեմֆ  
տեսնող չէ եղած, բայց կ'ըսեն թէ Մոսքովի Սազախներն են : Հովի-  
տին մէջ կը վխտան թուրքերը, զօրանցներուն շուրջ մեծ եռուզեռ :  
Ազաս ամէն օր մարդ կը դրկէ լուրի : Ես Մուզուրի ձախ եգերքի շէնի-  
քէ մը կու գամ, երկար գննեցի, այս կողմ դիմող «նին, ֆանավար»  
չտեսայ : Շարաք մըն է որ քնդանօթի ձայները բոլորովին դադարած  
են, չենք գիտեր ի՞նչ կ'անցնի-կը դառնայ» :

Լեոնային կածաններու մէջ, մանաւանդ բնիկ մը, շուտ կ'անհետի, ատոր չսպասած, լուռ ու մունջերու լեզուն կը քակուի:

— Տեփա՛ն, դուրպա՛ն քըղի, ե՛տ դառնանք: Մեռնինք քրտան մէջ մեռնինք, անօթի մեռնինք, ո՛չ Տաճկին սուրովը: Տարի մը մեզ պահեցին, Աստուած մեճ է, նո՛րէն կ'որորմի, գէշ-աղէկ կ'ապրինք, մինչեւ Ռուսը էս կողմն անցնի:

Տիգրան եւ Վահան հօրեղբայրներս կ'ուզեն կանխել Տեփան Աբոր հողիին մէջ ծնող փոթորիկը, ի գո՛ւր:

— Զեզ ո՞վ աղահեց, պաղատեցաւ, որ տեղերնուդ շարժիք: Կարմիր խնձո՞ր դրկեցինք ետեւնուդ:

Մուտուք, փսփսուք վերջապէս կը դադրին:

Մութը կը յառաջանայ հսկայաքայլ, անտեսանելի «եայլա»նէրէն իրարու բարեւ դրկող շուներ ապահովութեան շունչ կը ցանցնեն, տակաւին անվտանգ է շուրջերնիս, յառաջ կամ ետ դարձի որոշումը կը յետաձգուի, խռովքը կը դադրի:

Ամէն ինչ կը յետաձգուի, ե՛ւ ախորժակ, ե՛ւ յոգնութեան ըսպեղանին՝ քունը: Երբեմն-երբեմն մեզ շրջապատող անտառներու ճեղքերէն կը յայտնուին ու կ'անհետին բոցի նշույլներ, քուն փախցնող աւելորդ խաղ մը:

Խօնա Ուշադի տոհմին հողերուն վրայ ենք, առաջնորդող խորհուրդը կ'որոշէ այցելել անոր պետին, մեր գիւղի պաշտպաններէն Սէյտըիսան Աղայիմ, անոր հետ խորհրդակցել, ցուցմունքներ խնդրելու, ի հարկին պաշտպանութիւն:

Տարիներ առաջ տեսած էի այդ առաքելատիպ, ճերմակ ու պերճ մօրուքով աղան, երբ մեր պատկից Աղաջան հօրեղբոր հիւր էր եկած, եւ անոնց պաշտպան եղած էր մասնաւորապէս:

Մեր վերադարձը բնականաբար անկարելի էր, ո՞ւր պիտի դառնար մեծամասնութիւնը, ո՞վ այլեւս երես կու տար իրենց: Աղան մերժեց քիւրտ առաջնորդ մը ընկերացնելու խնդրանքը, որուն դրամական ոչ մէկ խօսք կրնայինք ընկերացնել մեր այդ հիւժած վիճակին բերմամբ: Ա՛յդ էր նշանակութիւնը «Նս ոչ ոքի կեանքին պատճառ չեմ ուզեր ըլլալ, անցեալ օր լուր եկաւ որ դիմացը անցնող մերիններէն մէկը Տաճիկները իրր ռո՛ւս լրտես տեղնուտեղը սպաններ են, էթէ կամաւոր մը գտնէք, ըսելիք չունիմ» խօսքերուն:

Յոյց տուին Մնձուրը անցնելիք սպահով կարծուած տեղ մը, ուր գերան մը պիտի գտնէինք իրրեւ կամուրջ, եթէ այդ վայրը Թուրքերուն արցելութիւնը չէ վայելած: Անկէ անցնելէ անմիջապէս յետոյ, պէտք է որ մագլցէինք ցիրուցան, քարակոյտերու մէջ պահուրտելով, դիմացի լեռները, ուր ո՛չ արահետ կայ, ո՛չ ալ մեզ ծածկող անտառ, մինչեւ որ անոնց գազաթի մօտերը, ըստ բախտի, հանդիպինք Մոսկովի յառաջապահներուն, որոնց հոն ամէնօրեայ ներկա-

յուլթիւնը բոլորովին ստոյգ է, ինչպէս ստոյգ է Երզնկայի գրաւումը :

Մտահոգ անշուշտ, աղայի սառն ընդունելութենէն յետոյ սակայն, յառաջանալու յամառ որոշումը սկսանք ի գործ դնել : Հաւաքի պահը երկար տեւեց, քանի որ կարաւանին համրանքը պակաս էր : Մաս մը ինքզինքը պահած էր, անշուշտ լաւ օրերու յոյսով :

Տաժանելի վայրէջք մը, իցիւ թէ կարենայինք գտնել ցոյց տըրուած անցքը : Գիշերը կարելի չէր : Արեւուն հետ կը բացուէր Մնձուրի հովիտին արեւմտեան ծայրը, ուրկէ դէպի արեւ կ'երթար համանուն գետին պսպղացող երկար ժապաւէնը : Արեւ, թշնամի, բայց արեւ բարերար մեր չորցած ու անօթի ոսկորներուն :

— Ծօ՛, սա Բարունկանց երինջին ըսէք որ քար չգլորէ :

Տեհիան Արօր շեշտը մեղմ է, բայց չես գիտեր, ծիծա՞ղ է թէ բարկութիւն : Վեր-վար, հոս-հոն կ'օգնէ իջնողներուն : Ծծկերները կոնակնուն կապած մայրեր՝ չորքոտանի, վար կը սահին : Անաս, իրեններէն չըջապատուած, իմ վերին հսկողութեանս տակ, տրտնջալով թումբէ թումբ ձեռք նետելով կը շարժի : Արտաշէս, Աշոտ եւ Անդրանիկ այժմամներու պէս կը թռչկոտին : Վարսեցիկը հօրեղբօրս կոնակէն հարսիկիս կոնակը կը թաօի : Ե՛ս ալ հսկող ունիմ՝ անմման քոյրիկս :

Բնութեան գեղեցկութի՞ւնը դիտեմ, թէ վար գլորուողներուն ճիշ ու կանչերուն արձագանդ հանդիսանամ, օգնեմ :

— Հասէ՛ք, շո՛ւտ հասէք, հո՛րթս, հո՛րթս, կը պոռպոռայ Եղսա հարսան : Անոր սանձակապը երկու ձեռքով բռնած, ոտքերը ապառաժի մը, հորթը զառիվարի վրայ պառկած՝ լեզուն դուրս պիտի խեղդուի :

Երէկ, մինչ մեր առաջնորդները Սէյարխան Աղային մօտ էին, բազմութեան հոտը առած Քրդեր պաշարեցին մեզ, սոված գայլի երեւոյթով, ինչպէս ի ծնէ : Աչքերնին ինկաւ Եղսայի հորթիմ վրայ, երինջին, ինչպէս կը կոչեն ոմանք :

— Աստուած հոգի՛դ չառնէ՛, Եղսա՛, ինչո՞ւ չտուիր :

Առաջարկած էին իւղ, պանիր, ցորեն : Եղսան ի՞նչ ընէ ատոնք . կա՛մ պիտի շալկէ, կա՛մ ասոր-անոր պիտի տայ : Քիւրտը դրա՞մ ունի որ գնէ : Վերջին գինն էր արծաթեայ մէկ «մէճիտ», անշուշտ Հայ մը գողցուած, կամ բռնի առնուած : Զուգեց տալ, անոր կոնակինը իրենին չկապելու խելօք մտադրութեամբ :

Երինջ եւ Եղսա, խելքի ու զառիվարի վրայ ինկած, կ'իջնեն՝ քար գլտորելով : Հետզհետէ աւելի ուժգին կը լսուի Մնձուրիի ջրերուն խմբերդը, իր հունին մէջ քշուած ու քշուող կրս-կրոր դարձած քարերու ընկերակցութեամբ, շուտով կը տեսնուին օդ թռչող ջրի գնդիկներ, եւ փրփուրի մէջէն գլուխ ցցող ապառաժներ, որոնք հե-

ռուէն այնքա՛ն մօտիկ կը թուին իրարու, որ ինձ կը թուի թէ անոնց վրայէն ոստոստելով անցնիլը տղայական խաղի մը չափ դիւրին պիտի ըլլար, գէթ ինձ համար: Ու ահա կը կարօտնամ մեր Ալկոլա ձորը, անոր հեղեղները՝ աշխարհ դղրդացնող, իրենց հետ բերած ժայռերը, կողերէն արմատախիլ քաշած-գլորած հսկայ ծառերու բունները: Անոր ամառուան ամիսներուն մեզի մատուցած թանկագին ժամերը իր պող ջրերուն մէջ, անոր ամէն հասակի տղոց յատուկ աւազաններուն շինութիւնը:

«Ես քեզի կ'ըսեմ որ անցեալ տարի հո՛ս էր մեր «կօլ»ը, կը փութափսայ ահանջիս մեր Սեդօն՝ Սեդրակ Շուշանեանը, մեր տոհմէն:

Այսպէս երազելով Մննուրիի ասիին եմ, գլուխնին շոյուած, յղկուած այդ ապառաժները իրարմէ հեռու են: Ո՞վ կրնար համարձակիլ անոնց վրայ ոստոստել: Յանգած ենք դետին ամենէն նեղ ու արագահոս մէկ կէտին վրայ, ուրկէ անցնիլ անկարելի էր. անհրաժեշտ եղաւ վերուվար հետախուզել՝ կամուրջ ծառայող գերանին ի խնդիր: Այո՛, կար:

Ազատարար գերանին մօտ, ինքզինքնին լեղապատառ հռչակողներուն հաշիւը չկայ: Մէկ չէ, քանի մը գերան պոչ բռնած, ապառաժէ ապառաժ, կաղնիի հսկայ բուններ, ամենաերկարը հազիւ չորս մեզըր: Ասոնց տակէն՝ ջուր ու փրփուր, սարսափազդու:

Անցքին փնտոտուքը երկար տեւեց, նոյնքան զայն յաղթահարելու լաւագոյն կերպը: Այլեւս ուրիշ, կամ դալիք վտանգի մասին խորհող չէր մնացած: Շալակաւորներու եւ մանուկներու պարագան էր մտահոգիչ կէտը: Այս խորհուրդներուն «դէմ կը բռնէին» մեծ մայրիկներուն թափած հազարաւոր անէծքները, զանոնք ծնողներու գլխին, առանց մոռնալու իրենք-գիրենք:

Բաւական երկար ձողեր գտնելը ժամանակ խլեց: Կէսօրը կ'անցնէր, արեւը մեր գլխուն՝ կ'աճապարէր նոյնպէս: Երեք հոգի, անցքի երկայնքին, երկուքէն երեք մեզը երկայնութեամբ ձողեր բռնած, պիտի հետեւէին անցնողին:

Կարգը իմս էր, առջեւն էի, ինծի կը հետեւէր Բարունկանց Եղսա հարսան, երինջի սանձը ձեռքը, երրորդ՝ իր ազգական՝ Տիգրանը: Երինջը գերանին վրայէն անցնելու վարժուած չէր, պիտի հետեւէր գետին մէջէն:

Ձեռքիս ցնցումին հետ հզօր ճիչ մը: Երինջը կը դլտորէր ջրերուն մէջ՝ Եղսա հարսան իրեն քաշելով: Երբ ջուրը նետուեցայ, ճիչերը կը խեղդէին ամէն աղմուկ, քոյրս, մեծ մայրս ու զարմիկներս ահաբեկած: Եղսա հարսային ձեռքը յաջողեցայ բռնել, որ տակաւին սանձը բռնած՝ ջուրին մէջ կ'անհետանար ու կը ցցուէր: Միասին էինք, գրեթէ գիրար գրկած՝ երկու ապառաժի մէջ սեղմուած:

Յաջողած էի բռնել մեզի երկարող ձողերէն մին: Հազիւ կրցայ

Համոզել այդ վիճակին մէջ, որ Եղսա Հարսան թոյլ տայ, որ ես ապա-  
ուսութիւն վրայ մագլցիմ, ու ապա իրեն օգնեմ :

Երբ ափ Հասայ, ամբողջ մարմինս սառած էր, սրունքներս մէյ-  
մէկ փայտի կտոր : Մնձուրիի ջրերուն այդ յիշատակը մնացեր է ան-  
ջնջելի :

Հին ազգերը կենդանիներ կը զոհէին իրենց ձեռնարկներուն յա-  
ջող ելքին ի խնդիր : Անոնց ընդերքներէն գուշակութիւններ կը կա-  
տարուէին, արկածախնդիր գործեր սկսելէ առաջ :

Հայաստանեայց Եկեղեցին անոնցմէ պահած է մատաղի ծիսա-  
կատարութիւնը, զոր Համայնք կամ ընտանիքներ կ'ընէին տարին ան-  
գամ մը, կամ պարբերաբար : Այսօ՛ր նոյնպէս :

Տարին շատոնց անցած էր, մեր գլուղացիք, իրենց եկեղեցիէն,  
սրբավայրերէն, գերեզմաններէն հեռու, ո՛չ մատաղ ըրած էին, ո՛չ  
հողեհանդատեան միասնական ճաշ : Խեղդուելէ ազատուած Եղսա  
Հարսան, վրան-գլուխը հաղիւ կարգի դրած, չորցուցած, այլեւայլ  
բեռներէ նոյնպէս թեթեցած, ուրախ-զուարթ կը շրջէր, կը շրջէր ու  
կը կրկնէր՝

— Ա՛լ մի՛ վախնաք, Հագարցիք, հորթս ձեզի մատաղ ըրի, ան-  
մե՛ղ հորթուկս :

— Եղսան խենթեցեր է : Անողոք այս վճիռին սակայն ընկերա-  
ցան ծիծաղ, խնդուք, նաեւ «Հագար ողորմի՛»ներ, աղօթք, ու ի վեր-  
ջոյ «ամէն», «ամէն»՝ միանուադ :

— Աստուած մեղմէ հեռացեր է : Ի՞նչ կը խնդաք : Ա՛լ մեղ չի՛  
լսեր : «Պէլքի» հորթուն ողորմի : Աղջի՛, Ե՛ղսա, հոգի՛դ ողջ  
ըլլայ :

— Ա՛նամ, ուխտդ կառա՛ր ըլլի, կը ձայնէ ուրիշ մը :

— Ի՞նչ չխնդանք, Սառա՛ մամա : Խնդալիք չենք, ի՞նչ ենք :

— Անանկ է նէ՛!, ա՛լ այս քարքարուտներուն մէջ «միս օսկոր»  
իրար չչաղենք, իջնանք շիտակ ճամբան :

Առաջին փորձութիւնը անցած էր, կատակները շատցան :

Շիտակ ճամբան արդարեւ տեղոց տեղ կ'երեւէր :

Սուր աչքերէն նոյնիսկ չեն վրիպիր շարժող ստուերներ : Պայ-  
ծառօրէն կը յայտնուի հանդարտաբայլ ծանրաբեռնուած էջ մը, իր  
յետոյքը մերթընդմերթ հարուածողին հետ, մարդուն ուսերը մերկ՝  
ուրեմն անդէն :

Հրահանդ ստացանք Տրդատին հետ աւելի մօտէն գննել : Անրս-  
պասելի պատեհութիւն մըն էր : Մարդը իրապէս ապշեցաւ մեզ տես-  
նելուն : Ինք մէկ, մենք՝ երկու, ձեռքերնիս՝ մական :

Երկու կողմէ տրուած միաբերան «ո՞վ ես»ները Համոզելին որ  
թշնամութիւն փնտռողներ չենք :

«Օվանուդ»էն կու գար: Թուրքի հետք՝ ո՛չ մէկ տեղ: Մեր նը-  
շանին վրայ մեծերը հասան:

Մէյոյըխան Աղայի կողմէ լրտեսելու զրկուած Գիւրտ մըն էր,  
անդէն:

Բերնէն մեղր կը վազէր, այնքան հաճելի էին իր տուած լուրե-  
րը, երբ էչն ու ինք դադար առին:

«Քանի մը օրեր առաջ, դաշտին մէջ ամէն ուղղութեամբ, հե-  
տեւակ թէ՛ ճիւղեր տանիկ զինուորներու իրարանցում մը կար, մա՛նա-  
ւանդ «դշլայի» շուրջ: Բայց երէկ առաւօտէն սկսեալ կենդանութեան  
ո՛չ մէկ նշան. շան հաջոց, եւ տեղ-տեղ արածող կենդանիներ, որոնց-  
մէ էր այս աւանակը (զոր ցոյց կու տար իր մականով): Արեւը բաւա-  
կան բարձրացած էր, դա՛րձեալ տեսարանը անփոփոխ: Չորս ծխնե-  
լոյզներէն բարձրացող ծուխի փուխներուն քափը հետզհետէ մեղմա-  
նալով կը մարէր, կը մօտանար: Սկսայ աւելի մօտեմալ: Աջիս մէկը  
տնկուեցաւ, քիչ յետոյ ուրիշներ, նոյն պաշտօնով հոն զրկուած:  
Միասին սկսանք յառաջանալ, զիրար կը համոզէինք որ թուրք բանակը  
այդ գիշեր իսկ չփախեր է, ծխնելոյզները առատ փայտ թխելէ եւ ի-  
րենց անպէտք կենդանիները ցրուելէ վերջ»:

«Մեր ենթադրութիւնը միշտ ելաւ, մահանջեր էին դէպի հա-  
րաւ, *Խօզաթի* ուղղութեամբ հաւանաբար»:

«Կէսօր չեղած հովիտի եզերքներէն գրոհ մը գորանցներու  
քալանին: Երեկոյեան մօտ *խօզաթի*ներ բաւական վար իջան Երզնկա-  
յի լեռներէն: Վախցանք որ կու գան «դշլաները» գրաւելու: Թալաննի-  
ները փախուստ տուին պահ մը, սակայն *Մոսկոֆի* զօրքերը ետ ֆա-  
շուեցան մութին հետ»:

«Երէկ, ամբողջ գիշերը գորանցներուն մէջ կոտորուփի, փըն-  
տոտուփի ազմուկ միայն կը լսուէր»:

*Բարեկամ Գիւրտը*, որ քանիցս կրկնած էր Հագարին այցելած  
ըլլալը, իր պատմութեան վերջ տուաւ, հաւաստելով որ այլեւս Օվա-  
նուդի, Մնձուրի հովիտին մէջ ո՛չ մէկ թուրք կայ, եւ մեր ու Մոս-  
կոֆներու միջեւ նոյնպէս:

Անկարելին փորձել յիմարութիւն է, խանդավառութիւնը նը-  
կարագրելու մասին է խօսքս: Քարակոյտերուն վերջին բարձունքին  
հասած տեղէ մը, իր մնացած հեւքը կը մարէր երիտասարդ մը՝ ծանր  
չալակաւոր: Թալանէ դարձող Գիւրտ մը:

«Դա՛րձեալ փայլեց, Սասնոյ գլխին, ազատութեա՛ն դրօշակ»:

*Ազատութի՛ւն*, *Թչնամին անհետ*, եկող զիշերուան համար օ-  
թեւան, առատ պարենաւորումի յոյս եւ թալան: Քայլ առա՛ջ, օ՛ն:

Տեփան արար լեզուն կլլած էր:

Մեծ մայրիկս ընդօրինակելով, տարեց կիներ, իրենց թոռնե-  
րուն օձիքը թողած, գետին ինկած ծնրադրելով կ'աղօթեն:

«Տէ՛ր Աստուած . . . Ամենակալ . . . ողորմութեա՛նդ մեռնիմ» :

Եւ ի՛նչ լաց :

«Օվաճուղ»ը Մննուրի հովիտն է, մեր Թաղար գետի սիրունիկ հովիտէն տասնապատիկ աւելի ընդարձակ՝ հարթ, տափարակ, շուրջը անխուսափելիօրէն լեռներ ձիւնածածկ, ամառները ձիւնի խորշերով՝ ծմակներով բազմաթիւ: Հիւսիսէն Հայկական Պար շղթային արեւմտեան վերջին մասերը, որոնք ծռելով հարաւ-արեւմուտք՝ կը վերջանան Եփրատի եւ Արածանիի միացման կէտին: Երկու գետերուն տարածութեան միջեւ կը զգուցին անհաւասար բարձրութեամբ Տեր-սիմի եւ Պիմկետի լեռները, Մննուրի հովիտին հարաւ-արեւմուտքին ծայրը կը բարձրանան Հալուրի Հայոց հինաւուրց վանքին կալուածները, շրջապատուած հայ Միրափեան տոհմի աղատասէր եւ կիսանկախ բնակչութենէն, եւ ա՛յլ քիւրտ ցեղերէ:

Զօրանոցը շինուած էր գրեթէ դաշտին կեդրոնը՝ ծանօթ Օվաճուղ անունով: Մարալանջէն շատ մօտիկ երեւցող այդ ճեփ-ճեթմակ շէնքերը երթալով կը հեռանային մեր խանդավառ եւ կորով վերըստացած վազքին առաջ:

Ի՛նչ մեծ յոյսեր կապուած էին անոր մառաններուն հետ մանաւանդ՝ հող չէ թէ առաջին կամ երկրորդ թալանի մը դո՛ս:

Արդարեւ, այլերի մէկ քանի պատռուած պարկեր, տեղ-տեղ ցորենի եւ դարիի ցանցնուք՝ բաւական խոր շերտերով, աղտոտ գետնամածի մը վրայ:

Անոնք սակայն այդ գիշերուան նախախնամութիւնն եղան: Օճախները անյապաղ սկսան մխալ հայ սքանչելի մայրերու անհատնում կամքովը:

Զօրանոցի օճախներուն վրայ մեծ ու պզտիկ կաթսաներու մէջ ցորենխաչի տենդազին գործունէութիւն՝ փոքրիկներով շրջապատուած, ու ապա այդ օճախներուն տաք քարերուն վրայ առանց թրթիւմորի պատրաստուած նոր հացի սկաւառակներ:

Միշտ հետաքրքիր, գործս շէնքը զննելն էր: Նման հսկայ եւ ամրակուռ շէնք նոր կը տեսնէի, գեղեցիկ կոչուելու արժանի սենեակներ Բ. յարկին վրայ, եթէ թալանը անցած չըլլար անոնց մէջէն, անպայման սպաներու յատուկ: Երրորդ յարկը քանի մը մեծ ընդարձակ սրահներ, կտորտած փայտերով լեցուած, անտարակոյս հաւաքական ննջարանին անկողիններէն: Ոմանց գետինները յարգերով ծածկուած:

Քառակուսի շէնք, չորս մուտքով: Առջեւը՝ հարուստ ընդարձակ դաշտ մը խաղի եւ զինավարժութեան, շուրջը, բաւական հեռու՝ ախոռներ, շտեմարաններ:

— Եւրոպացիի յղացում է, կ'ըսէ հօրեղբայրս, Գերմանացուց ակնարկելով:



Անոնց մէջ կորսուելու վախ մը ունեցայ. հապա եթէ Թուրք մը պահուերտած ըլլար, կամ «սատակ»ի մը հանդիպէի, որ ինծի աւելի մեծ սոսկում պիտի պատճառէր :

Պաշած ցորեն, անաճ հաց, խոտերու եւ յարգերու մէջ կակուղ անկողին, եթէ «խեղացի» մէկը անոնց մէջ Տաֆլի ոջիլ լեցուն ըլլալու անհամ կատակը ըրած չըլլար : Մէկ տարուան չքաւորութեան մէջ անդամ կրցած էինք մեր չոր մարմինները աւելորդ մակաբոյծներէ զերծ պահել, առանց օճառի, կաւով ու քթթուելով :

Նախընտրեցի չոր տախտակը սպայի մը սենեակին, մերժեցի հացը՝ դստնուած ալիւրին տեսքը հրապուրիչ չէր : Այս դժուարահաճութեան հետեւեցաւ մեծ մայրիկիս պատրաստ մաղթանքը «Աստուած քեզ ասանկ բաներ ուտելու չձգէ», թաշկինակիս մէջ տաք խաշած ցորենը այնքա՛ն համով եկաւ, ինչպէս եկող զիշերը այդ զօրանոցին մէջ՝ վերջին օրերուն ամենէն հանդստաւէտը :

Մեծկակ պատուհաններէն լոյսը շատոնց ողողած էր, անոր ջերմութեան մէջ մեր ջարդուած մարմինները կը ծուլանային բերկրանքով, կը լսէի կէս-քուն, կէս-արթուն երախաներու երթեւեկն ու տարեցներուն կողմէ իրենց զանազան ցաւերուն թուումը : Աճապարող չկար :

Գիշերուան պատահարներու մասին էր խօսքը : Ուշացած թալանողներ փորձեր են ներս խուժել, մեր պահակները՝ զիրենք առաջնորդելով՝ կրցած են համոզել որ բան չէ մնացեր :

Մեկներ էին զլխիկոր, ո՛հ, որքա՛ն յարգալից : Հայը արժէք կը ստանար :

Կարծեր են որ ոռու յաղթական բանակին ընկերացող եւ տուն վերադարձող Հայեր ենք : Որ իրենք Հայոց բարեկամներ են, լրջօրէն խնդրած որ այժմ կարգը Հայերունն է՝ զիրենք պաշտպանելու համար : Ուրեմն Տիպա Աղա նոյնպէս կը հաւատար որ արշաւող ոռու բանակը Հայոց աղէտին վրէժխնդիր է, եւ նոր կարգեր պիտի մտցնէ, ու իր դիրքը պահելու մտօ՛ք է որ տեղւոյն հեղինակաւոր անձերէն, մանաւանդ իր բարեկամը՝ հայրս ստիպողաբար վար դբաւ :

Այս միտքը իրապէս զիս մխիթարեց ու յուսադրեց :

Շունչս առի քովի «կանանոցը», Վարդանոյշին մօտ, որ շալկին իրերը կը պատրաստէր :

— Գիտե՞ս, կ'ըսեն որ Ռուսերը շուտով Տերսիմ կը մտնեն : Այս զիշեր եկող Քիւրտերը ըսեր են : Ետ դառնա՞նք :

Միամիտը միայն ես չէի : Ճամբու պատրաստուող կարաւանը նոյնպէս տատամսումի, երկընտրանքի էր : Քիւրտերը հաւաստեր են Թուրք բանակին ջարդուփչուր եղած ըլլալը :

— Որ էդպէս է, տուն-տեղ ձգեր ո՞ւր կ'երթանք : Նայինք Ռուսը մեզի բարի էք եկեր կ'ըսէ՞ : Ակներեւ է որ ամէն խումբ կը տարուբերէր յատուկ մտահոգութիւններով :

— Աստուած խելքերնիդ առա՞ւ մէկէն: Աւեր ու ամայի են տեղ ըսածնիդ: Շուն թուրքին երե՞սը կարօտցաք:

— Քանի մինչեւ հոս եկեր ենք, շատ չէ մնացեր կ'ըսէք: Երթանք սա Մոսկոֆ ըսուածն ալ տեսնենք:

— Իրաւ է: Նո՛րէն ետ կը դառնանք, անո՛նց հետ:

Այսպէս, անհետացող վտանգին հետ կարաւանը կորսնցուցած էր իր վերջին դիմադրականութիւնը: «Երթալ Ռուսն ալ տեսնելու» առաջարկը փրկեց, թէեւ ոտք առաջ տանելու ոյժ չէր մնացած, աչքերնին դէպի հիւսիս, իրենց դէմ ցցուած լեռան կողերուն, անոնց նայուածքը կը խեղդուէր յուսահատութեան մէջ:

Վարդանոյշին հետ առանձնացած, գաղտագողի, երկար ու լուռ մտիկ կ'ընէի մեր ետ դառնալու արգելքներուն, իրեն ցոյց տուած պատճառներուն, որմէ կախում ունէր իմ դիրքս:

Մեզ փնտուող Աշոտն էր, լաթի մը մէջ, այդ առաւօ՛տ իսկ խաշուած ցորենը ձեռքին: Բաժինս, այդ առաւօտեան նախաճաշս: Անան, այդ գիշեր ալ գլուխը «քարի չէր դրած»:

Կը կարենք հովիտը դէպի լեռան կողերը, որուն ստորոտէն կ'անցնի Օվանուղէն Երզնկա տանող ճամբան, որ դէպի արեւելք բաւական հեռու էր:

Արդէն ճամբան ենք: Ինծի կը սպասէին նորութիւններ, նոյնպէս մեծամասնութեան: Քիւրտեր ինքզինքնին ապահով զգալով սկըսած էին դաշտային աշխատանքի, անպայման Օվանուղի աղային կամ պէկերուն մարդիկը: Հաւանաբար տուն կը կրէին շաբաթներ առաջ հնձուած դարիի կամ ցորենի խուրձեր, եւ ո՛վ զարմանալի, ո՛չ թէ ջորիի կոնակը զիջուած, այլ խոշոր անիւատոր սայլի մէջ՝ առջեւնին գոմէջ: Մեր եղներէն աւելի հզօր կենդանի մը, զոր առաջին անգամ կը տեսնէի, նաեւ սայլ, որուն անիւները ինձ կը թուէր թէ հաստաբետ կաղնիի բունէն սղոցուած շերտեր են:

Ապշած, կը դիտեմ, ուրեմն մեզմէ հազիւ 80 քիլոմեդր հեռու այդ հովիտին մէջ արդէն քաղաքակիրթ աշխարհը մուտ գործած էր: Իրաւ է որ մեր լեռնաշխարհին մէջ տափարակ ըսուած տեղ գոյութիւն չունէր:

Երգնկա բարձրացող «պաշտօնական պողոտային» ստորոտն ենք: Քարքարոտ, լայն ժապաւէն մը, որ մեզմ շեղութեամբ նախ, անշեղ վեր քաշած են մինչեւ մօտակայ հորիզոնը, որ արեւելք-արեւմուտք քաշուած զիծ մըն է երկինքին մէջ, եւ որուն մօտերը պիտի հանդիպէինք ռաւս հետախոյզներու եւ զինուորներու:

Բոլորովին լերկ, անջրդի այդ սարալանջին վրայ, առաւօտէն մինչեւ երեկոյ պիտի տեսէ այդ դանդաղ եւ ուժասպառ վերելքը, խաշող արեւուն տակ, որ մինչեւ մայրամուտ մեր կոնակէն վար չիջաւ,

որ միշտ նոյն տեղն էր, մեզի հետ կը բարձրանար, եւ մեզ կը տանջէր նաեւ՝ այդ բարի արեգակը :

Տարեկից ընկերներով շնչասպառ կը մագլցիմք ու կանգ կ'առնենք : Մեզմէ ո՞վ պիտի նշմարէ առաջին Ռուսը : Կարաւանին վերջինը մեզմէ ժամ մը հետո՝ վարն է : Հազիւ թեւերով քրտինք սրբած, մրցումը կը վերսկսի :

Ինչքա՞ն սուր բացականչութիւններ, զորս փորձելէ յոգնած, փռուած էինք ծմակի մը եզերքը, երեսնիս պաղ գետինին, մեզ շրջապատող աչքերու հովանիին տակ, երբ ոմանք ծմակին ձիւնի երեսը կը քերէին, տակէն մաքուր շերտի մը ի խնդիր :

«Խաղախներ», ձիերնուն սանձը ձեռքերնուն, կը հիանա՞ն մեր վրայ : Ունին զարմացական շարժումներ, կարճ հրացան, սեւ փափախ, մութ համազգեստ, մէջքերնուն դաշոյն : Մէ'կը միայն անգէն, կուրծքին, վերէն վար շեղակի երկար «փամփուշտներ» խրած, ուսերուն վրայ պսպղուն լաթի կտոր մը՝ հովէն տատանող :

Իրե՛նք մեզ գտան : Մեր շփոթութիւնն ու վախը կու դար ձիու մը խրխինջէն, որմէ սթափած՝ գլուխ ցցած էինք :

Մեզ կ'ապահովցնեն խօսքի ընկերացող բարեկամական շարժումներով, մինչ մեզմէ ոմանք «խաչ հանել» կը սկսին, «քրիստիան» բառը կը կրկնեն, զոր վերապահեր ենք այս հանդիսաւոր հանդիպումին համար :

Ունէին կուրծքերնուն վրայ հեռագիտակներ, հետեւած էին մեր վերելքին : Յոյց տուինք դէպի մեզ տուայտող բազմութիւնը, ձեռքով մերթ անոնց ուղղութիւնը բռնած, մերթ մեր կուրծքը : Կը փորձենք հասկցնել որ եկողները մեզմէ են :

— «Տա', տա'», «խարաչօ'» : Հասկցած են : Կը ժպտին :

Ահեղ կանչերով անմիջապէս լեռը կը թնդացնենք, մերոնց հաղորդելու համար ազատարար բանակին հասած ըլլալու ցանկալի լուրը :

Կը խօսինք հիացական աչքերով, անոնց «Տա', տա'»ներն ու ժպտախառն կրկնուած «խարաչօ'»ները կը կլլենք անյադ :

Արեւը, որմէ այնքան դժգոհ էինք վերելքի պահուն, դա՛րձեալ հեռու չէր, սակայն արդէն ցուրտ էին իր ճառագայթները, քրտինք սառեցնող : Տաքուկ հագուած ղինուորները կ'անդադառնան մեր խեղճ վիճակին, զոր ամոքել կը ձգտին : Գրպաններն քրքրելով մեզի շաքարեղէն եւ չոր, նշխարի ձեւով հացի բարակ պատառիկներ կը հրամցնեն, ու չեն դադրիր խօսելէ, ա'լ աւելի արժեքնելու համար իրենց հոգածութիւնը : Անոնցմէ բան չենք հասկնար, ափսո՞ս : Այնուհետեւ ուրախութիւննիս կը կրկնենք ու ձայնակցինք հետզհետէ հասնող մերիններուն վերջին հեւքէն թռած զուարթ կանչերուն :

Վերջապէ՛ս :

— «Աստուած ձեր մայրերը ցաւէ, վշտէ գե'րծ պահէ», կը դո՛ւայ կի'ն մը :

Զինուորներուն ձեռքերը կը քաշկուտեն, կ'օրհնեն ու կ'արտասուեն, եւ յոգնաբեկ գետին կը փռուին, անոնց կարեկցող աչքերուն առջեւ :

Մե՞նք ենք աւելի բարձր, թէ այն լեռը, որուն կատարէն պէտք է տեսնուի հարաւ շրջող Յփրատի արմուկը, որ ահա արեւը մեզմէ խլեց : Յա'նկարծակի մութ :

Տեխան արար, աջ ձեռքով «խաղախ»ի մը թեւը սեղմած, ձախին վրայ գլուխը ծռած՝ գիշերուան հանդրուանի տեղ կը հարցնէ անպայման :

Զինուորը, «խարաչօ»ն բերնին, ի'նք է որ ահա մեր հօրեղբոր ձեռքէն բռներ, միւս թեւը ծմակի եղերքներուն ընկողմանած մերիններուն երկարած՝ կը հրաւիրէ իրեն հետեւիլ :

Կէս ժամ չանցած, հովերէն պատսպարուած ընդարձակ փոսի մը մէջն ենք, կանաչազարդ, ուր կը գտնենք ջորիներու վրայ բեռնաւորուած փայտէ ու ձեղունէ շինուած սնտուկներ, մէջը «սոմուն»ով, պանիրի գունտերով լիքը : «Սոմուն»ը թուրք բանակին հացերուն անունն էր : Ռուսերունը յար եւ նման են անոնց, հսկայ կիսագունդեր, զորս ցոյց կու տար մեզի ջորի բռնող զինուոր մը «խլիէպ» բառով :

Խաչած ցորենի մնացորդը չթափեցինք, բայց անտեսուած էր այլեւս : Փորերնիս երբեք այնքան ծանր կըլուած չէր : Յոգնածութիւնը մեզ կը նետէ կակուղ կանաչներու վրայ :

Կ'արթննամ, ձեռքերովս մարմինս կը շօշափեմ : Թափ-թաց է եղեր մեզ հիւրընկալող մարդը : Ախուվախերով մէկզմէկու կ'ծկուած՝ հարկ է սպասել կենսատու արեւին : Շուրջերնիս ամայի է, պահակի ո'չ մէկ շունչ : Բայց երէկի մեր հոգածուները շուտով կը յայտնուին որ իրենք ալ ստոած են : Աչք ու քի'թ միայն մազակոյտէ գերծ : Յոյց կու տան ճանապարհը :

Մեր դէմ, հիւսիս, դա'րձեալ լեռներ, որոնք աւելի ցած կը թըւին : Դաշտը, ուր պիտի իջնենք, տակաւին ծածկուած է, մանաւանդ մշուշի մէջ : Երկու լեռնաշղթաներու մէջ ձգուած սաւան մը :

Կ'անցնինք իրարու գուգահեռ լեռնաշղթաներ, անխուսափելի ելեւէջներով, իրարմէ քիչ հեռու, ու արեւը մեր գլխուն չտնկուած, կը պարզուի երազային տեսարան մը : Լայն խորշի մը երկայնքին, դրեթէ նեղ ու երկար լեռնահովիտ մը ու վրաններ, անհամար վրաններ :

Ահա', ահա' ոռւս բանակը :

Անմոռանալի տեսարան մը, հոգեպարար եւ հազարու :

Մեր լեռներուն մէջ, հրացան մը ուսին, ամէն մարդ իրարու հաւասար արժէք ունէր : Վերէն դիտածս այս տեսարանը կ'ընկճէ զիս,

անոր բազմութիւնը, հոն թափուած վրաններուն, շուրջը ծածկուած թնդանօթներուն, եւ ա՛յլ բազմաթիւ կենդանիներու տեսքը, զիս անէացնող, փոշիացնող հանդամանք մ'ունի: Տխրութիւն մը կը պատէ հողիս, աչքերս փակած, միտքս չափ մտածումներու վրայ արձանացած:

Մենք ո՞վ ենք: Ո՞ւր կ'երթանք: Ինչո՞ւ: Մինչեւ ե՞րբ:

— Կեցցե՛ն խաղախները, կեցցե՛՛ Ռուսաստանը:

— Կեցցե՛՛, ապրի՛ մեր Տային:

— Կեցցե՛՛ Անդրանիկ:

Անոնց արձագանգն է փողի մը հնչականութիւնը, զիլ, երկար: Բանակին կէսօրուան ճաշի պահն է:

Մեր կեցցէներուն վայել ընդունելութիւն: Ոսկեթել հիւսուածքով ուննոցներ կրող, մեծ հրամանատար մը ընդառաջ կու դայ: Աջ ձեռքը գլխարկի ծայրին՝ կը բարեւէ խոնիրխոն յառաջացող մեր խումբը, որ գինուորէ մը կ'առաջնորդուէր:

Խոշոր վրան-մառանի մը առջեւ տեղ յարդարուած է: Առատ հաց ու պանիր, թէ՛ շաքարով, զինուորական խոշոր գաւաթներու մէջ: Ո՛րքան կրնաս՝ խմէ՛: Փոքրիկներո՞ւն՝ չտեսնուած բան մը, պատեղի գոյնով հաստկեկ, ափէն աւելի խոշոր կտորներ, որոնց շոքոլաք՝ անունը տուին, որոնցմէ տարեց ու փոքր չհամտեսող չեղաւ:

Քանի մը վրաններու առջեւ սկսայ դեգերիլ: Ներսը լեռնակուտակ «սոմուն» դիզեր են, ուրիշներ՝ մինչեւ կատարը հասնող սնտուկներով լեփ-լեցուն են: Աչքս ցանցի մը մէջ առնուած թնդանօթին վրայ է: Հօրեղբայրս յայտնե՛ց անոր ինքնութիւնը: Զողաւոր յենարաններու վրայի գէնքերը «միթրալիօզ» են ըսաւ: «Երբ սկսին կրակել, փամփշտակալը մինչեւ չհատնի, չի կենար, իրարու վրայ կը կը կրակէ»:

Անօրինակ կենդանութիւն կար բանակավայրին մէջ, անընդհատ երթեւեկ, հետիոտն, ձիաւոր:

Այս աշխոյժը վերակենդանացուց զիս, հեռացուց մռայլ մտածումներս, ամենուն պէս ոգեւոր, սկսանք վերջին վայրէջքը, որուն ծայրը կը տեսնուէր Երզնկայի հովիտը, եւ մեր ստորտը՝ տեղոց տեղ նազելասահ Հայոց Եփրատ գետը:

Կեանքիս ընթացքին տեսած հովիտներէս ամենէն չքեղը:

Գետէն դեռ բաւական բարձր էինք, երբ ծայրը հասանք մեզի այնքան մտերիմ արգելքներուն՝ փշոտ ցանկապատերու, որոնք ապացոյց են քաղցրահամ պտղաստաններու: Ծառ մը տեղեր, ճեղքուած ու քանդուած, մեզ կը հրաւիրեն նե՛րս խուժել: Ամէնուրեք ամայութիւն: Ծառերը կը չօքին՝ պտուղներով լիքը: Ազահօրէն եւ անխորհուրդ կը կախուինք անոնց ճիւղերէն: Ահա խաղողի անծայրածիր որթատունկեր, որոնց սեւ ու ճերմակ ողկոյցները դուրս են ժայթ-

քեր տերեւներէն : Ի՞նչ փոյթ թէ տակաւին ազոխ են : Կը թափենք սաւորները : Բայ խաղողին համար ա՛լ տեղ չունինք : Կը լափենք ու կը թափենք :

— Ծօ՛ւ, շո՛ւտ վար իջէք, հոս աւելի հասուն են եւ համով :

Յոգնեցանք անցնելով ցանկապատէ ցանկապատ, ուտելով, թափելով : Աւաղելով :

— Դրա՛խտ ենք մտեր :

Որո՞ւ կը պատկանին : Ա՛նպայման Հայերու : Թուրքեր, պարտուած, թաքստոցէ դուրս գալ չեն յանդգնիր : Առժամեայ տէրերն են անշուշտ :

Ապացո՞յց : Ահա եզերքն ենք արուեստական ջրառատ առուի մը, վարէն կառքեր կը սուրան, լայն պողոտայի մը վրայէն, մէջը ռուս սպաներ : Քիչ հեռուն գիւղ մը, եկեղեցի՞ն դեռ կանգուն, աւեր ու ախոռ :

Հայոց Ագրակ գիւղն է : Հինաւուրց իշխանի մը ազարակը անշուշտ :

Կը թափուինք գիւղամէջ : Ոչ մէկ կենդանութիւն : Ծուն մը կը տանի մեզ իր դրան առջեւ, ներսէն ծերունի Թուրք մը կը յայտնուի : Համառօտ պատմութիւն մը, որուն մենք լաւ ծանօթ ենք :

Մեր կարաւանը արդէն սկսած էր քակուիլ պարտէզներու մուտքի պահէն սկսեալ : Ո՛վ գիտէ ո՛ւր են : Հաղարցիք տակաւին Ագրակի մօտերը զիրար չէին լքած, ու ահա գիւղի այցելութենէն վերադարձիս՝ կը գտնեմ մի՛միայն մերիները հաւաքուած՝ Անդրէասեանները իրենց խնամիներով, առուին եզերքը, թումբին վրայ, սքանչելի մըրդաստանի մը ծայրը, որ թատունկերու բաժինով : Հո՛ն է մեր կէսօրուան հանգստավայրը, զոր պիտի վայելենք մինչեւ յաջորդ առաւօտ, տասնեակէ մը աւելի քիլոմետր Երզնկայէն հեռու :

Թումբին վրայ թառած՝ կը տիրապետենք ճամբուն : Ինձի համար շատ մը զարմանք յայտնելու առիթ : Հետաքրքրութիւնս կը դոհացնէ վախան հօրեղբայրս : Կառք բնաւ չէի տեսած : Այժմ անոնցմէ կ'անցնին տեսակ-տեսակ : Միաձի, մէջը սպաներ : Երկու ձիով : Քառաձի, որոնք տուն մը ետեւնին կապած՝ կը վազեն փոշու ամպի մէջ : Ահա սրբնթաց ահեղ վաղբով բան մը՝ վրան մարդ մը նստած, առջեւը ձի չունի :

— Ի՞նչ է, հօ՛րեղբայր : Ան երեք տարի Ամերիկա պանդուխտ ապրած էր :

— Ատոր մօթոսայքը կ'ըսեն :

Ահա ուրիշ մը, քովը անտուկ մը կապած, նո՛յնպէս անձի : Եւ ի՞նչ կը վազէ :

— Պայտիքը : Անունը կարեւոր չէ : Կ'անցնի ուրիշ հրէշ մը, որ տուն մըն է, առջեւ, ետեւ, զոյգ-զոյգ, մարդիկ նստած՝ կը չուէ :

— Այդ ալ օթոմոպիլ ըսուածն է : Ա'լ ամէն բան տեսար :

Փոքրիկ չունեցողները նախընտրեցին նոյն երեկոյ Երզնկա գիւղերել : Մեր կոնակէն արեւը տակաւին կը վառէր Եփրատի հովիտին հիւսիսային մասը, անկէ բարձրացող տարբեր լեռնաշղթայ մը եւ անոնց սկզբնաւորութեան նաեւ շարք մը սպիտակ շինութիւններ՝ առանձնացած, Օվաքուղի գորանոցը յիշեցնող : Արզարեւ կեդրոնատեղին էր օամանեան գլխաւոր գորարանակին՝ կովկասեան ճակատին վըրայ :

Տաք բան ճարելը մեր մեծ մայրիկին առօրեայ հոգերէն մեծագոյնն էր . ինչքա՛ն տարբեր-տարբեր խոտեղէններ կը խաչէր Տերսիմի օրերուն : Ան վարժ էր առաւօտէն մինչեւ ուշ գիշեր մեր հայրենի տան երկու օճախներուն եւ թոնիրին առջեւ տաղել իր անուշ դէմքը՝ խնձորի պէս լեցուն ու կարմիր, եւ անոնց կարօտն ունէր միշտ, իր տան առատութեան խորհրդանիշները :

Մեծերս, հինգ հոգիով, կրկին վեհերոտ, կը յառաջանանք՝ այդ նոր Ագրակի տուները մօտէն դնելու : Ռուսերը ամենէն առաջ գրաւած էին գայն, եւ մենք այդ հայ գիւղը վերապրողներ գտնելու ցանկութիւնը ունէինք :

Ապարգիւն յոյս : Լքուած գիւղի մը պատկերը գտանք . փողոցները կեղտոտ, ամայի, եկեղեցւոյն չըջանն ըրինք, գոմի էր վերածուած : Գեղեցիկ արտաքինով տուներ չէին պակսեր, ոմանց պատուհանները կտոր-կտոր, բոլորին մուտքի դռները ամրապէս փակ : Ուզածիդ չափ թակէ, բացող չեղաւ : Չէինք համարձակեր գանոնք կոտորտելով հետաքրքրութիւննիս գոհացնել, կայսգոր չկար, տակաւին վախ կար մէջերնիս : Անկարելի չէր որ անոնք թուրքերով բնակուած ըլլային : Խեղճուկ տնակներու առջեւ՝ երկու քիւրտ ընտանիքնէ՛ր միայն, դէթ այդ անունով երգում ըրին :

Ինչպէս մեր չըջանի գիւղերուն մէջ, Երզնկայի Ագրակին մէջ ալ, շա՛տ աւելի հարուստ չըջապատով, բազմաթիւ շէնքերով, բոլորն ալ կանգուն, խանութի ո՛չ մէկ հետք :

Աւերակ, լքուած հայ գիւղ մը : Միակն էր որ կը տեսնէի մեր փախուստէն ի վեր : Բովանդակ Արեւմտեան Հայաստանի մէջ քաղաքներէ դուրս ո՛չ մէկ գիւղ պիտի տեսնէի այդ վիճակին մատնուած :

Գիտէի որ մեր Հագարիին պատկերը տարբեր չէր, որ մեր սեփական տունը հրոյ ճարակ եղած էր, զոր լսած էի ամիսներ յետոյ, հոն այցելող մեր գիւղացիներէն, բայց հայրս արգիլած էր մեզի՝ մէջն ըլլալով իր եղբայրը, հոն ոտք կոխել, պահելու համար անոր շէն օրերու յիշատակը միայն :

Ի՞նչ իմաստուն որոշում : Իցիւ թէ այցելած չըլլայի նաեւ այս Ագրակ գիւղը :

Մութնուլուսուն, Երզնկա տանող պողոտային վրայ ենք, լայն ճամբայ, ո՛հ, սակայն, ինչքա՛ն փոշոտ : Կը քալենք տաքնայու համար, կ'աճապարենք փրկութեան նաւահանգիստ հասնողներու հաւատքով :

Կարճ հանգրուան մը՝ Եփրատի կամուրջին գլուխը : Ձիս եւ շատեր ապշեցնող նոր կառոյց մը, լայն, բարձր կամարներով, ամրակուռ, քարաշէն :

Մտածումներս դա՛րձեալ հեռուները կը ճախրեն : Մեր Թաղար գետին, Չմշկածաղ քաղաքի վերի եւ վարի կամուրջները իրաւ է որ կը դիմանային անոր յորդումներուն, բայց մէ՛կ կամարով էին, անշուք շինութիւններ այս կամուրջին բաղդատմամբ, որուն տակէն անցնող ջրերուն քանակը, անոր հեղ ընթացքը, լայնութիւնը, սոսկումի եւ սքանչացումի աղաղակ կը խլեն : Այս որքա՛ն ջուր :

Կո՛ւր եւ Արաբս, Եփրա՛տ ու Տիգրիս :

Ու այդ պահուն տակաւին շատուշատ անհաղորդ էինք անոնց բարիքներուն, մանաւանդ ա՛յլապէս ահաւոր չարիքներուն, գործը տիեզերքի ամենէն ոճրագործ թուրք պետութեան :

Իրարու հետեւելով, մեզ փոշիի մէջ խեղդող ամէն տեսակի կառքեր կը սուրան, մեր դիմացէն եկող, որոնց վազքէն ահաբեկած կողմէ կողմ կը նետուինք, ու մեր այդ ճամբան, թէեւ հարթ ու ողորկ, տարբեր տեսակի արկածներով լի, կ'երկարի ու կ'երկարի :

Այն որ Երզնկա կը կոչուի, անոր ցած տուները կորսուած են տակաւին ծառերու մէջ, ցոյց տրուած տեղւոյն վրայ խտացած : Հեծեւազորաց գունդ մը, կամուրջէն փրթած, մեր վրայ կ'արշաւէ : Ափսոս չէր մեր ծննդավայրը, ուր ո՛չ նման ճանապարհ կար, ո՛չ այդ փոշին : Երբ հետեւակ զորաց վաշտ մըն ալ կ'անցնի, անկէ յետոյ մենք զմեզ կը փնտռենք, իւրաքանչիւրս ծպտուած ջաղացպաններ դարձած ենք :

— Հա՛, հա՛, կո՛ւշտ խնդացէք : Խնդալիք եղանք :

Երէկէն այսօր, մեր լեռներէն հազիւ ջոկուած, տարբեր աշխարհի մէջ ենք :

Եփրատի կամուրջէն տասնեակ մը քիլոմետր, մեր կառուղին կը վերջանայ քաղաքին արեւելքը, Երզնկա-էրզրում աւելի մեծ կարեւորութիւն ունեցող պողոտային վրայ : Հոն կը հանդիպինք շալա-կաւոր Հայերու, որոնք շրջակայ գիւղերէն կը վերադառնան, քթոցնին պտուղ ու խաղող լեցուն :

— Բարե՛ւ : Աստուծու բարի՛ն : Հա՞յ էք : Նո՞ր կու գաք, ո՞ր տեղացի էք :

— Հայ ենք, Հա՛յ : Չըլլայի՛նք բարով : Դո՞ւք ով էք :

— Երէ՛կ փախստական, այսօ՛ր գաղթական, վա՛ղը՝ չե՛նք դիտեր :



— Երզնկան դեռ շատ հեռո՞ւ է :

Հարցումները կը դադրին, տխուր պատասխաններ :

— Եկէ՛ք մեր հտեւէն, հետերնիս, ա՛լ մօտ է, նո՛յն տեղը կ'երթանք :

Յատկանշական ոչինչ ունի Երզնկա մուտքը : Գաղթականի առջեւն ենք, արեւելեան իջեւանի նմանող ցածլիկ շէնք մը, մեծ դրան երկու դռնակները բաց : Առջին երթեւեկ ու բազմութիւն, կին, այր, երախայ, խումբ-խումբ, մէջտեղերը ուսս զինուորներ՝ այս ու այն կողմ շրջազայող :

— Նո՞ր կու գաք : Ուրկէ՞ :

— Այո՛ : Տերսիմէն :

— Նե՛րս անցէք, տե՛ղ գտէք, ու եկէ՛ք արձանագրուելու : Երէկ գիշեր ուշ ատեն հասնաբերէ՛ն իմացանք ձեր գալը :

— Դո՞ւն ով ես, պարո՞ն :

— Այս կայաններուն բժիշկը՝ Տոբօ . Արշակ Պողոսեան : Ձեր հտեւէն ուրիշ եկողներ կա՞ն :

— Ձե՛նք գիտեր . Եփրատ չհասած, պարտէզներուն մէջ իրար կորսնցուցինք :

— Դո՞ւք ալ Չմշկածագցի էք :

— Այո՛ : Քաղաքէն կա՛ն : Բայց մեծ մասը գիւղերէն է :

— Կոկիկ հագուած, զունտուկլոր, կարճահասակ, հօրեղբորս տարիքը երիտասարդ մըն էր բժիշկը, խիստ բարի եւ հոգածու վերաբերմունք : Իրեն մօտեցող մէկու մը հրահանգեց մեզ տեղաւորել, ընտանեկան կազմերը կարելի չափով պահպանելու պայմանաւ :

Իր այդ «բարեւոնական» վիճակին մէջ մտքիս մէջ միշտ անորոշ մնաց թէ արեւելեան խոնա՞խ մըն էր, շորեպան եւ ճամբորդ պատասպարող, թէ հայկական կամ թրքական զպրոց մը : Ունէր խոնախի պէս ընդարձակ բակ մը, շուրջը մեծ ու փոքր բազմաթիւ սենեակներ, ամէնքը լեփ-լեցուն գաղթական. սենեակներուն եւ բակին միջեւ կար շրջանակաձեւ ճեմելիք մը, փայտեայ ցած ցանկապատով զատուած :

Կ'ապրիմ «ազատ ու ապահով» միջավայրիս ամենէն դժբախտ պահերը :

Տերսիմի մեր Ագրակէն բաժնուելէս օր չանցած, հոգեկան խրոնովքիս, կամ նստիլ, հանդէլի չկարենալուս բացատրութիւնը դտած ըլլալ կը կարծէի մի՛միայն ծնողքէս հեռացած ըլլալուս մէջ : Ատով սակայն անձկութիւնս չէր մեղմանար, զայն արդարացի, բանաւոր կը գտնէի, առանց միտիթարութեան հեշտանքը վայելելու : Հոգերու նախապատուութեան մէջ երբեմն անկարեւորներ առաջին դժի վրայ կը բարձրանան : Արդարեւ մեծ բաժանումի առաջին օրուան արեւը կը հեռանար, մեր հինաւուրց ընտանեկան շրջապատին մէջ յաւելեալ ցրտութիւն մը սփռելով, զոր չէի կրնար հիմնաւորել ս'րեւէ կերպով :

Տեղական եւ տոհմային սովորոյթներու մէջ անած ու մեծցած, ես զանոնք ըմբռնելու եւ մեկնաբանելու տարիքն ունէի: Գիտէի որ՝ ընտանիքի մը աղջիկ զաւակը հարս դացած օրէն, կը պատկանի ուրիշ ընտանիքի մը: Սակայն ա՛յնքան մօտ էր, թարմ էր ամէն անցուդարձ, երբ դեռ քոյրս մեր տան անբաժան մասնիկն էր, փնտռուած, չոյուած, իրար յաջորդող մանչերու մէջ միակ աղջիկը, «գիւղին զարդը»: Ու ահա, անպատում չարիքի բերամբը, աւելի հեռաւոր տարրերով շատցած, տարիէ մը աւելի ան դա՛րձեալ, հօրենական նոր օճախին անբաժան անդամն էր, հոն ունէր բացառիկ հանդամանք մը, եղեռնին զոհ դացած իր դեռատի ամուսնուն կսկիծը սրտին:

Ու այդ նոր կայանին առաջին օրը դարձեալ միասին չե՞նք: Կը քալենք կողք կողքի, կը դիչերենք նո՛յն վայրին մէջ, միշտ համախումբ, կը սնանինք Ադրակէն շալիած նո՛յն չոր ու ցամաք պատաներէն, որոնք, իրաւ է, զգալաբար պիտի պակսէին, առանց նորոգուելու: Ա՞յդ էր որ յանկարծուստ իր հետ կը տանէր զոհաբերութեան ոգին, քակելով արեան կապեր:

«Փորս մօտ է, քրնձ քօրս»:

Ուրիշ ի՛նչ բացատրութիւն կրնայի գտնել:

Յարմար առիթներով յաճախ արտասանուած ասութիւն մը, որուն դէմ պատանեկան օրերու մէջ ամէն դեռատի անձ ըմբոստութեան պահեր կ'ունենայ, ու անգօր, կամ իրեն համար անժամանակ պարտադրանք՝ զայն կը յանձնէ մոռացութեան:

Քրոջս եւ մեր խնամիներուն հետ բաժանումը կատարուած իրողութիւն մըն էր, «լուռութեան» կնիքը կրող: Միայն ի՛նքս կը մնայի անհաշտ, կոյր, ծննդավայրէս թէեւ ոչ շատ հեռու, բայց անվերադարձ համոզումով այնքա՛ն հեռաւոր՝ Երզնկայի մէջ, անձկութեան նոր վերքէ մը խոցուած, երկու ընտանիքներու միջեւ տարուբեր՝ աննիւթական կապով մը:

Երերո՞ւն: Ո՛չ: Այլ ամէն անցնող պահ միշտ ամենուն հետ, մերթ մէկ, մերթ միւս խմբակին հետ, ու հարկադրաբար հետզհետէ աւելի ու առաւել քոյրիկիս հետ, որ այնուհետեւ շարունակ, ամէն ճգնաժամի ինձմէ հեռու պիտի պահէր սեւ մտքեր, նոյնիսկ իրմէ մղոններ հեռու ապրած միջոցիս:

Մանաւանդ անդառաղ, Երզնկա ոտք կոխած առաջին պահերէն յուսախար, այդ «անցնող վայրկեանները», զորս ոմանք սկսած էին նաեւ րոպէ կոչել, քաշէ՛, քաշէ՛, վերջը չէր դար: Ո՛ւր դառնաս: զոյդ-զոյդ, երբեմն աւելի թուով խումբեր, ոտքի վրայ, աննպատակ, լուռ, կը դիտեն անցուդարձը: Տարեկիցներ չեն պակսիր, գաղտագողի ակնարկներ գիրար կը խաչաձեւեն, համարձակութիւննին թմրած: Խաղ առաջարկէ՛լ: Ի՞նչ խաղ, եւ ո՞ւր: Ամէն անկիւնէ արձագանգող եղերամայրերու ողբերուն մէջ սի՞րտ կը մնայ:

Անդադար տեղափոխութիւն: Անհատ-անհատ, խմբակներով,  
ընտանիքով:

Դարպասի մեծ դրան մօտիկ անկիւն մը ունիմ իրը դիտարան,  
պահակի պէս անշարժ, յաճախ էութեամբ բացակայ:

«Մամբղէն եկած է զիս կանչելու: Արեւը Երզնկայի դաշտին  
ծայրը հասած է, մեր ամէնօրեայ խաղին պահն է: Մեր դոմին վրայի  
տանիքն է խաղալայրը, բաւական մեծկակ. ան հարթ-հաւասար կը  
ծածկէ իրար կպած մէկ քանի դոմերը: Յոգնեցնող եւ վտանգաւոր  
խաղ մըն է Չրճուրը: Հակառակորդ խումբերը մէկգմէկու բերդը պի-  
տի գրաւեն: Անցնողը արգիլելու համար դայն պէտք է հարուածել  
ոտքով միայն: Ճի'չդ այս պահուն, մայրիկս դուրս թռած, սիրտը  
դող, խաղացողներուն մէջ զիս կը փնտռէ: Չի գտներ, կը սկսի դող-  
դղալ, կը վազէ դէպի փողոց, հոն ցուրիքէն վար նետուած մարմինս  
տեսնելու: Կը ճչայ:»

Վերադարձ աննշմար ջանքնիր:

— Տղա՛ս, ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ:

Քովէս անցնողի մը վրայ խոյացեր եմ, «մի՛ վախնար, հո՛ս եմ»  
գոռացեր:

Գիշերները նաեւ միայնակութեան թուիչքներուս մէջ, մեր վեր-  
ջին տարուան կեանքի դրուագները կը «մշտուկեն» զիս: Երբեք, երբեք  
Հագարին չեմ երազեր, ո՛չ իսկ դպրոցական օրերուս երջանիկ պատ-  
կերները: Շատ մը սիրելի ընկերներու կորուստին կսկի՞ծը կ'ուզէ  
խնայել ինձ երազ հրահրող բարի ողին:

Մեր իջեւանին մէջ եւ դուրսը իրարանցում մը: Անպատում եւ  
միօրինակ ժխորը յանկարծ դադրած է մեր նոր «պանդոկին» մէջ, զոր  
ամէն ոք «հանրակացարան» կոչելու կ'ընտելացնէ ինքզինքը, ազդին  
մեծերուն այցելութեան պահն է, սովորաբար Սերաստացի Մուրատ,  
եւ իրմէ անբաժան, իր հայրենակից՝ Բժիշկ Արշակ Պօղոսեան, դադ-  
թականներու «չարժուն» լացի եւ տրտունջի պատեր»:

Մեր կարաւանին յայտնութիւնը ազդին վրայ հրամայական հոդ  
մը աւելցուցեր է, արտակարգ եռուզեռի մատնած է «ազդային շրջա-  
նակը»: Մեր անսպասելի ժամանումը, մեր թիւին մեծութիւնը, անոր  
անդամներուն Ֆիզիքական բարւոք վիճակն ու յարաբերաբար հա-  
զուստ-կապուստի որակը, արհաւիրքէ, խոշտանգումէ զերժ մնացած  
մարդոց արժանապատիւ կեցուածքն է պատճառը անոնց հետաքրք-  
րութեան:

Անակնկալ մը արդարեւ, Տերսիմի մէջ խաղաղ ապաստան գը-  
տած հոծ հայութեան մը գոյութեան փաստը, եւ Տերսիմցի Քիւրտին  
բարեկամական վերաբերմունքը, որ դազրելի կայսրութեան մը ըն-  
դարձակ հողամասին մէջ մարդկայնութեան ոլիստիս մը եղած է:

Մեր առաջնորդները օրուան հերոսներն են: Ստեփան հօրեղբոր

բարձր հասակը, նիհար, չոր մարմինը, իր համարձակ արտայայտութիւնները, մանաւանդ այժմ ամէն վտանգէ հեռու, կը տպււորէր անդամ ազգին վաւերական հերոսները, տասնեակ տարիներով երգուած, որոնք գէնքը վար դնելու պարտաւորուած՝ փութացեր էին ռազմաճակատի մերձաւոր վայրերը, նուիրուելու ազգայինամ գործին, ու ահա իրենց առջեւ կը բացուէր ազգախաւաքեան բեղմնաւոր գործունէութիւն մը, որ մեր երեւումով ծնունդ կ'առնէր, ու կը մկրտուէր՝ մէ'կ Հայ, մէ'կ ոսկի համեստ որակումով:

Այլուր, անխտիր, քիւրտ տարրերուն Հայոց հանդէպ անհաշիւ վայրագութեամբ ցոյց տուած վերաբերմունքն է բոլորին զարմացումին պատճառը:

Տերախմբի Քիւրտին այդ մարդասիրական ժեստին մէջ ե'ւ Հայ մեծերը, ե'ւ ռուս զինուորական իշխանութիւնը իրենց նպաստաւոր տարր, եւ ի հարկին իրենց նեցուկ կը տեսնէին: Ճանապարհը, որմէ անցած էր մեր կարաւանը, ահով ու վախով, դարձաւ շուտով ապահով երթուղարձի ուղի, ու եթէ ի սկզբան Քիւրտերը Հայերու ընկերակցութիւնը կը փնտռէին գրաւեալ շրջանն անցնելու համար, ապա սեփական նախաձեռնութեամբ յաճախակի այցելութեանց սկսան, ու հոն արժանացան զրկաբաց ընդունելութեան, լիացան ամէն տեսակ նուէրներով. մեծամեծները ստացան ձի եւ գէնք, ու ամէն ոք հնչուն ոսկիներ:

«Մէ'կ Հայ, մէ'կ ոսկի» ի առեւտրական ճամբան բաց էր Երզրնկայէն մինչեւ Արածանիի ափերը:

Հայկական Պարի գաղաթիւներէն հազի'ւ Երզրնկայի կողմը շարժած, այլեւս ո'չ մէկ հրացանի ձայն լսած էինք. կատարեալ խաղաղութիւն. մէկ քանի զինուորական շարժումներ, աւելի շատ փոքր խմբական տեղափոխութիւններ:

Մինչդեռ մենք կը սպասէինք ռուս բանակի յառաջացումին: Կ'ակնկալէինք տեսնել հայ կամաւորական գունդերէն մին: Մեզ կը ջանային համոզել որ Ռուս-Թուրք ձակատին վրայ զինադադար էր, որուն ո'չ նպատակը յայտնի էր, ո'չ ալ տեւողութեան կրնայինք խելք հասցնել:

Ի'նչ զարմանալի կարգադրութիւն, պատանիի մը համար: Ահա բանակ մը, ջարդ ու փշուր, անդադար փախուստ կու տայ, իսկ յաղթական կողմը շնորհ կ'ընծայէ թշնամիին՝ իր ոյժերը ամփոփել, իր վէրքերուն սպեղանի դնել: Ի'նչ տարօրինակ հրաւէր՝ վերստին իր վերայ յարձակելու:

Հայը, առնուազն երկու դար, ռուս բանակներու յաջողութեան աղօթող, կրնա՞յ երբեւիցէ բացատրել նման շնորհ:

«Հանրակացարան»ը, մեր Անային համար, «փողոց» մըն էր:

Ինչպէս միշտ, իր դատաստանը դա՛րձեալ տեղին էր: Բայց ո՞ւր, եւ ի՞նչ ընել:

— Քիւրտերուն մէջ մնայինք աղէկ չէ՞ր: Ռո՛ւս, ուռո՛ւս, մեր հօրէհօրքուր, մօրէմօրքուրը չէ՛: Պատճառ եղողին Տէրը հողի՛ն առնէ:

Իրաւ ալ, սենեակ կոչուածներուն մէջ, չոփ-չոր դետին ու պատ, ոտք դնելիք տեղ չկայ: Ամէն կողմերէ ամէն տեսակ մարդիկ, անկիւն մը, մէջտեղերը «չուլ» մը փռած՝ տուն-տեղ եղած են:

Անան ինքզինքը մխիթարելու ուրիշ միջոց չէր ունեցած երբեւիցէ, թէեւ փորձով դիտէր որ Աստուած օգնութեան կանչելը աւելորդ պերճանք մըն է. երբեմնի պայմաններուն մէջ, նման բողոքներով, «նազ»ը վերցնող մը ունէր: «Ներսիդին» պարպելու համար իրենները կանչելով իսկ կը հանդատանար: Նեցուկ ունէր: «Մեծ տիկինն» էր:

«— Ծօ՛ Ալիքա՛ն... կը սկսէր բացակային անունով միշտ, կ'անդրադառնար սխալին, ու դա՛րձեալ կը շարունակէր աւանդական ձեւով:»

— Վահա՛ն, Ստեփա՛ն: Ո՞ւր կորսուեցաք: Մեզ փողոց նետեցին, ու թռան:

Կը մօտենամ, միշտ կը խաբուիմ որ կարեւոր ըսելիք կ'ունենայ: Մէկը թեւս կը սեղմէ:

— Պարոն Ստեփան Անդրէասեանը կը փնտռեմ: Մուրատ Փաշան կը խնդրէ որ եղբայրներուն հետ իրեն մօտ երթայ անյապաղ:

Գլխին «փափախ», քիչ մը ծուռ, շապիկով (պլուզ), մէջքը լայն դօտի, «ճըզմէ»ներուն փողերը մինչեւ ծունկերուն, անպէխ, համարձակ երիտասարդ մը, մեր հիացիկ աչքերով ա՛լ աւելի զարդարուն:

Տերսիմ վերադառնալու եւ հոնկէ Հայեր ժողուելով Երզնկա բերելու առաքելութիւնը մերժած էին մեր հօրեղբայրները: Տեփան արար ունէր իր Գեւոն, որ ամենաապահով տեղւոյ ու ժամու ընթացքին դրկէն վար չէր ձգեր: Տիգրան արար ունէր բազմաթիւ ընտանիքէն մէկ պատանի, իր եղբօր գաւակը՝ Պետրոս: Որո՞ւն կրնար վստահիլ: Վահան հօրեղբայրս ի՛սկապէս մեծ ընտանիքի տէր էր, չորս փոքրիկներով, կին, մայր, նոյնիսկ զանց առնելով զիս եւ քոյրս, ինչ որ արդէն կատարուած իրողութիւն էր:

— Նորէն ի՞նչ կայ, տղա՛ս:

Հարցնողները սկսան շատնալ: Երիտասարդը, զինքը չըջապատողներէն հեռանալու ակներեւ աճապարանքով, կը պատասխանէր, թէեւ քաղցր ժպիտով, տարեկիցներս իր պոչին:

Տեղւոյն վրայ ապաստանի եւ պարէնի դժուարութիւնները, նաեւ ոռու զինուորական իշխանութիւնը կը ստիպէին դաղթականները հեռացնել ռազմաճակատէն:

Փողովի հրակէր մըն էր, ուղղուած բոլոր ներկայ հասակաւոր եւ ընտանիք ունեցող մարդկանց, այդ որոշումը հաղորդելու, եւ «նոր դաղթը» կազմակերպելու :

Շշուկները չէին պակսեր . վա՛յ անոնց, որ բարի լուր կը ցանկային : Շատ մը ընտանիքներ «հանրակացարաններէն» աճապարանօք հեռանալուն մէջ կը փնտռէին այդ կոչին իմաստը, «նոր դաղթէն» գերծ մնալու համար, անշուշտ խիստ աննպաստ պայմաններու տակ :

Շատեր փոքր կրպակներու մէջ տեղաւորուած, հնարաւոր չափով իրենց արհեստներն սկսան ի գործ դնել : Հնակարկատներէն ըսկսելով, օրը նոր, կը յայտնուէին սափրիչի, դերձակի, կօշկակարի, մանրավաճառի խանութներ, որոնք թէեւ անգոհացուցիչ, սակայն հեռուները քշուելու ընդդիմութեան կը ծառայէին :

Աշխատանք գտնել, ինքնաբաւ ըլլալ, ազդին բեռ չըլլալ, ընդհանուրին սրտադին ցանկութիւնն էր, մուրացկանի վիճակէն ճողոպրելու համար : Այդ մերկ ու բոպիկ, անտուն-անտէր փողովուրդի խրլեակները հարուստ էին՝ դէթ այդ օրերուն անտարակոյս, բարձր արժանապատուութեամբ :

Հո՛գեւէին կը ցանկային մնալ իրենց ծննդավայրերուն մօտիկ, շուտով հոն վերադառնալու քաղցը երազով օրօրուն : Կատարուած դրաւումները իրենց համար վերջնական էին, ունէին խոր համոզում նոր յառաջացման : Իրենց տեսածը ուրի՛շ բանակ էր . թուրք թափթըփած «ասկեար»ներուն հետ բաղդատութեան եզր չկար, եւ բազում էր ոռուս բանակը, եւ հօր :

Աշունը դեռ նոր կը սկսէր, տակաւին կրնային ձմեռէն առաջ հասնիլ Խարբերդ, Սերաստիա : Ինչո՞ւ կեցեր են : Թող գոռգոռան ոռու թնդանօթները, փարատեն թուրքը եւ իրենց սրտին կսկիծը :

Ինչո՞ւ ազդին մեծերը կ'ուզեն զիրենք ցրուել, կորսնցնել, մինչ իրենք անհամբեր կ'ուզեն հասնիլ 1917-ի դարնան արշալոյսին :

Նոր տաղնասլը սակայն, տեղափոխումը, աւերներ կը դործէր : Սկսելով մերինէն, ընտանիքներ կը քայքայուէին : Հօրեղբօրս երեք մանչերը արդէն ոռու-թուրք հին սահմանը անցեր էին՝ դէպի Ալեքսանդրապօլի որբանոցները : Անոնց մօտենալու համար, ծնողքը եւ մեծ մայրիկը արձանադրուեր էին կամովին ու մեկնած : Քոյրիկէս բաժնելու ի խնդիր իրենց թախանձանքներուն անշուշտ խուլ մնացել էի, եւ ամբողջ օր մը տունէն հեռացեր էի, անոնց մեկնումին ներկայ չըլլալու, Անային լացը չզիտելու համար :

Տան վերջին փշրանքին անկոչ պատասխանատուն էի այլեւս, անհրաժեշտ էր մասամբ ինքնաբաւ դառնալու փորձ կատարել, մանաւանդ երբ կիսով պարպուած «հանրակացարանին» մէջ մեկուսի անկիւն մը ունենալու բախտը ժպտեցաւ, քանի որ ընտանիքին վեր-

ջին մնացորդացը կը բաղկանար տակաւին քսանը շանցած պարմանուհիներէ : Զանոնք, զինուորներու քնքուչ հալածանքներէն զերծ պահելու ցաւազին հարկադրանքը կար :

Կը ցրուէին, եւ յա՛նկարծ կ'անհետանային մեր զիւղացիները, նաեւ մեր նոր ծանօթները :

Ստեփան հօրեղբայրը, Գեւոն գիրկը, աղջիկներն ու թոռները առջեւը ձգած կ'երթար պարապ ետ դարձող զինուորական կառքերուն կայանը :

Կը մնար մի'այն Տիգրան հօրեղբայրը, Պետրոս եղբորորդուն հետ՝ իր զոքանչին փեշերէն կախուած, սրտաբեկ, տարագրուած իր կնոջ եւ դաւակներուն կսկիծը բաժնելու համար անոր հետ, նոր յառաջխաղացման մէջ միւթարուծիւն գտնելու յոյսով : Մեր չըջապատէն հեռու տեղ մը, հակառակ Պետրոսի թախանձանքներուն, որ չըբաժնուի ինձմէ, քանի որ եղեռնի օրերուն, մօրմէն, եղբայր-քոյրերէն բաժնուելէ յետոյ եղած էի իր նեցուկը, շաբաթներով :

Մեր զիւղացիներուն, նաեւ Տերսիմէն մեզի հետ փախչողներուն կէսը արդէն մեկնած էր՝ Կարին եւ այլուր, մնացեալները կը յամառէին մնալ վերադարձի վառ հաւատքով :

«Լինել չլինելու» ողբերգական նոր վարազոյր մը կը պատուէր որբեւայրի, դեռատի հարսերուն, որդեկորոյս մայրերուն առջեւ, որոնց համար անհնարին էր ընդունիլ դաժան եղելութիւնը, իրենց սիրեցեալներէն առյաւէտ բաժնուելու իրականութիւնը :

Կը տեսնէի թէ ի՛նչպէս անոնցմէ իւրաքանչիւրը, կամ տասնեակներով, անչարժացած, հեռուներէն եկող ճամբաներուն դէմ-յանդիման, կը խուժէին ամէ՛ն նորեկի վրայ, յուսադրիչ խօսք մը լըսելու համար, պատրաստ իրաւին՝ մանաւանդ սուտին : Կը հաւատային որ ամէն անձանօթ նոյն վայրէն կու գայ, որ անպայման տեսած, լսած է իրենները : Այլեւս բոլորն ալ նո՛յն ընտանիքին անդամներն էին, նո՛յն գեհնէն պրծած :

— Ինչպէ՞ս չես ճանչնար :

Կ'ուզէին, կը պաղատէին որ ճշմարտութիւնը ըսուի : Պատրաստ են ամէն ցաւի դիմանալ, միայն թէ գիտնան : Թող մէկը դէթ տեսած ըլլայ իրեններէն մին :

— Ղուրպան քրդի, ինտո՞ր չես ճանչնար :

Ու արցունքներու հետ կաթիլ-կաթիլ կը քամուէր իրենց յոյսը՝ պահ մը դայն շոյելով վերացած ու երազային, յա՛նկարծ մարմին առած, դա՛րձեալ հոն են, հանրակացարանի մթնոլորտին մէջ :

Ներսը քաղցր յիշատակներ իրենց հօգին կը կրծէին, իսկ դո՞ւրսը : Դուրսը, դարանակալ ոռու զինուորները, կը հայցէին իրենց մարմինը կրծել :

## «ՊՕ՝ՅԴ» ՍԻՐԵՍ (\*)

— Պօ՛յդ սիրեմ, դուն ալ մեծցար, բայց ոսկորներդ դեռ մատ-  
ղաչ են, բեռդ շատ ծանր մի՛ ըներ :

Մէկ քանի օր է, Երզնկա ենք :

Ճիւղի կոչուած գիւղէն, քաղաքէն հիւսիս-արեւելք, հարթ ու  
կանաչաւուն դաշտին մէջ, «տուն» կը վերադառնանք, հանրակացա-  
րանի մը անկիւնը՝ մեր շալկած քթոցներուն մէջ շարք-շարք պտուղ :

Ա՛լ աւելի հիւսիս, Երզնկան շրջապատող լեռնաշղթայի փէշերը  
յետ միջօրէի արեւուն տակ կը փայլին, հեռուէն իսկ հսկայ երեւոյթ  
ցոյց տուող շինութիւններու կոյտեր, ճեփ-ճերմակ, թրքական գլխա-  
ւոր բանակի զօրանոցները, որոնք այլևս դադրած են Հայուն վախ  
ազդելէ, գրաւուած ուսական բանակէն :

Հայէն յափշտակուած, ու իր կարգին լքուած՝ թուրք գիւղա-  
ցիներէն, որոնք թերեւս զաղտագողի մեզ կը դիտէին իրենց պա-  
տեաններուն մէջ կծկուած, գիրար գերազանցող այգիներէն արտո-  
րանքով ու ազահութեամբ քաղուած սեպտեմբերեան մեղրահամ պը-  
տուղներ, խաղողի ողկոյցներ են մեր թանկագին բեռները, որոնց ան-  
պայման անհամբեր կը սպասեն վերապրող ու ինքզինքնին վերջա-  
պէս ապահով զգացող մեր սիրելիները :

Նստած կը հանգչինք, ծառի բունին եւ մեր կռնակի քթոցին  
թեթեւօրէն հպած :

— Ապրի՛ս, շա՛տ ապրի՛ս, հիմակուրնէ ընտանիքիդ նեցուկ  
եղար :

Իր խրատականն է որ կը շարունակէ, յոգնութիւն չճանչցող  
Մկր ամուն :

Մկր ամուն, եօթը տասնեակը համրած մարդ, «չոր գլուխ» անձ  
մը, չճուգեր մէկու մը բեռ ըլլալ, ո՛չ ոք ունի կերակրելիք, ու կրնայ  
«ազգին տուածովը» լիուլի գոհանալ :

Խմրով ենք, շատեր մեր գիւղացի եւ հանրակացարանի «պատ-  
կից»ներ :

Նոր բառ մըն էր «հանրակացարանը» մեր բառարանէն դուրս,  
որ երկար ատեն խորթ պիտի հնչէր, «բարբարոս» բառ մը :

Կրնկակոխ կը հետեւիմ մեր գիւղացի Մկրտիչ Բարնակեանի՝  
Մկր ամուլի կողքին ու անոր շուքին մէջ, մանկութենէ ինձ ծանօթ,

(\*) Պօյ = Հասակ, տանկերէն :



Թէեւ անոր հետ դեռ վերջին օրերո՛ւն է որ քանի մը բառ փոխանա-  
կած եմ, իր նախածեռնութեամբ:

Գիւղի փողոցներուն մէջ անտնացող ծերունիներէն չէր ան, ո՛չ  
ոք զինքը կը տեսնէր դրան մը քարէ նստարանին վրայ, երբեք վարի  
աղբիւրէն պաղ ջուր բերողներուն փարջերը անոնց ուսերէն վար առ-  
նող չէր, ինչպէս անխուսափելիօրէն կ'ընէին ճամբու երկայնքին մը-  
րափող շողուքաւոր իրեն տարեկիցները: Ու կարգով կը յիշէի զա-  
նոնք, կարծես կոնակս բեռ չունէի, այդ քաղցր մտածումները թե-  
թեւցուցած էին զայն, մոռցնելու աստիճան:

— Նորէն քիչ մը նստինք, ու ցոյց տալով աճապարողները,  
Մկր ամուն կը խրախուսէր զիս, թող անոնք մեզմէ անցնին:

Վստահ էի սակայն որ ինքը չէր յոգնած, մինչ անմիջապէս կը  
նստէր, առանց սպասելու իմ կեղծ հաւաստիքներուս, կամ բողբոխ,  
կօշիկները կը հանէր, դուլպաները նոյնպէս, ու զանոնք թօթուելով  
վերստին կը հագնէր, եւ կը թելադրէր որ հետեւիմ իր օրինակին:

Անպայտան սկսած էի համակրիլ՝ տակաւին ամիսներ առաջ  
«վայրենի» տխրողաւորին: Բացակայ հօրս հոգածութի՞ւնը կ'ուզէր  
ցոյց տալ ինձ, թէ ես այդպէ՛ս դատելու վիճակին մասնուած էի:

— Կու լա՞ս, թէ քրտինքդ է որ աչքերէդ կը հոսի:

Այդ կ'ըսէր կատակելու անուշ շեշտով մը, ու միմիայն լռու-  
թիւնը չէ որ կը փարատէր Մկր ամուն, այլ մեր անցած լեռներուն ե-  
տին ձգած ծնողացս եւ դեռատի եղբօրս պատկերները դգուող տխուր  
մտածումները:

Երբեք չէի կրնար երեւակայել որ ան կրնայ մարդու հետ խօ-  
սելու շնորհն ունեցած ըլլալ, չէի տեսած, չէի հանդիպած այդ տե-  
սարանին: Ու որքա՛ն քնքուշ էր իր ձայնը ու շեշտն հայրական:

Արդարեւ, իր քթոցին ետեւ անցած, դուլխս իմինիս ծանրու-  
թեան ներքեւ, անձայն, սիրտս ու հոգիս աչքերէս կը քամուէր գետ-  
նի փոշիներուն մէջ:

— Յոգնեցա՞ր, քիչ մը եւս նստի՞նք: Արդէն քաղաքին առաջին  
տուները կ'երեւան, արեւը դեռ հեռու է մարը մտնելէն:

Քանի՛ կը մօտենայինք քաղաքին, ա՛յնքան կը մեծնար դանդա-  
ղելու տենչս, պիտի ուզէի որ բնա՛ւ չհասնինք հոն:

Քանի՛ կը մօտենայինք քաղաքին, ա՛յնքան կը մեծնար դան-  
դաղելու տենչս, պիտի ուզէի որ բնա՛ւ չհասնինք հոն:

Թեթեւաշարժ, Մկր ամուն, խօսելով ճամբուն մէկ եղբրքէն  
միւսը կ'անցնէր, աջ, ձախ, ետին դառնալով կը զննէր Երզնկայի  
դաշտը եւ զայն շրջապատող մօտակայ լեռները:

— Երկի՛ր, ասոր կ'ըսեն: Ըսէ՛, Երզնկա՞ն աղուոր է, թէ մեր  
չազարին:

Լռութիւնը խզել չեմ համարձակիր, չեմ ալ կրնար, բնաւ չեմ

խորհած նման բաղդատութեան մասին, ինքզինքս կը զսպեմ որ չփրկիմ: Անշուշտ նախապատուութիւնս մեր Հազարիին կ'երթայ, այդքան շո՛ւտ պիտի ուրանայի զայն: Հոն տափարակ ոչինչ կար. խոփը աւելի յաճախ քարերու կը հանդիպէր, բերքը, իրաւ է, նուազ հասութեաբեր, պտուղները ոչ շատ առատ, թէեւ նոյնքան համեղ, ու իր ծաղիկներէն քաղուած մեղրը անզուգական:

Հապա մարդի՞կը: Այո՛, մարդի՛կը:

Այս մտորումները վիշտիս հետ խեղդած, կը քալեմ:

Անոնք սակայն չեն խեղդուիր. հրմշտկելով իրարու յաջորդող տխուր տպաւորութիւններու գերին եմ:

Կեանքիս ամենաթախծոտ ապրումներէս է Երզնկա քաղաքին մէջ անցուցած քանի մը շաբաթներս, հանրակացարան կոչուած խառնարանին մուտքին, եւ անկէ ներս տիրող տեսարանները մարդ կոչուած արարածը նսեմացնող տիպարներ դրոշմած են հոգւոյս խորը:

Ու մոռցուած վախ մը սկսեք էր ներսս ճանկուտել: Հապա եթէ հանրակացարանին բոլորտիքը վխտացող զինուորները քոյրս փախցուցա՞ծ ըլլան: Այլայլած երեւոյթով քայլերս արագացան: Տերսիմի մէջ այդ վախը դէթ չունեցանք: Մկր ամուռն նշմարեց, տարիներով կըլպած իր շրթունքներուն կապերը քակած՝ յորդոր կը տեղար:

— Մի՛ վազեր, եաւրո՛ւս, կը յոգնիս, կը քրտնիս, կը հիւանդանաս, սեփական տունէ՛-տեղէ՛ հեռու ենք, պէտք չէ՛ հիւանդանաս: Կ'որոշեմ՝ հակազդել, զինքը լուցնել, ու յա՛նկարծ՝

— Մկր ամո՛ւս, դուն ինչո՞ւ զաւակ չես ունեցեր:

Անգութ հարուածէս չճմած, խեղճ ամուռն, ձեռնափայտով ճամբուն քարերը սկսաւ շարտել, ետեւէս կը վազէր, արդէն պատասխանի չէի սպասեր:

Գիւղի պատկերներէն, մանկական ամենէն առաջաւոր յուշերս Մկր ամուռի հետ կապուած են:

Երբ, առանց «գրկէ» պահանջը դնելու, քալել կարենալու տարիքին հասած էի, չգիտեմ ե՞րբ, մեծ հօրս հետ, ինչպէս միշտ անբաժան, յայնկոյսի պարտէզներն իջնալու պահուն, շրջապատիս եւ բնութեան այլազան երեւոյթներուն մէջէն զիս ցնցող, ու ապա հմայող արտառոց տեսարանը պիտի ըլլար, կատուի մը, շան մը, ու հետզհետէ մարդու նմանող կոյտի մը, հսկայ ծառի մը բունէն վեր մազլցիլը: Տակաւին կապիկներու դոյութեան անտեղեակ էի, ու զարմացումի ճիչ մըն էր արձակածս, ոչ թէ վախի: Արդարեւ մեծ հայրիկիս ներկայութեան այդ զգացումը անձանութ էր ինձ:

Միայն ի՞մ վախերս: Ան ունէր շատերուն վախը փարատելու շընորհ: Զմեռը, ճամբորդներու խնդրանքին վրայ, լերան դայլերուն բերանները կը կապէր, դարնան, ամպերու գոռոտութիւններու եղանակին, երբ կ'ըսուէր թէ այլեւս օձերուն իրենց թաքստոցներէն դուրս

դալու եղանակը կը սկսէր, ան դիտէր դաղանիքը անոնց իժերը թմբե-  
ցնելու, բերանները կղպելու :

Ի՞նչ երանելի օրեր : Մարդ գայլերու, մարդ իժերու մասին  
անտեղակ, կար միմիայն մէ՛կ վտանգ՝ պէտք չէր որ անցնէի անծա-  
նօթ ձիերու, ջորիներու եւ էշերու հետեւն :

Չարմացող աչքերուս մէջ այդ օր՝ կարծեցեալ շունը կամ կա-  
տուն անա կը ստանան մարդկային կերպարանք, անոր հետ ե՛ս ալ  
շունչս կտրած եւ զգուշաւոր, ծառի բունէն վեր կը բարձրանամ, կը  
հաւասարիմ փողոցի միւս կողմը գտնուող տան երրորդ յարկի բար-  
ձրութեան, կանգ կ'առնեմ կանաչապատ դռնակի մը առջեւ, ու երբ  
ան ներս կը մտնէ առանց դռնակը դոցելու, անձնատուր անզուսպ հե-  
տաքրքրութեանս՝ կը նշմարեմ երկու պատուհան, անշուշտ փոքրիկ,  
մին արեւելք, միւսը հարաւ ուղղութեամբ :

— Պապի՛կ, պապի՛կ, հո՛ն նայէ :

— Հա՛, ձագուկս, աչքէդ բան չի փախիր, ա՛լ ձեռքէդ ազա-  
տում չունիմ, սկսէ շարքդ, ո՞վ է, ի՞նչ է, ի՞նչ ո՞ւր, ի՞նչպէ՞ս :

Ու ածապարանք կը դնէ պապիկս իր քայլերուն մէջ, ձեռքէս  
ուժով քաշելով :

— Ո՞վ է, պապի՛կ : Սպասէ, տեսնեմ ի՞նչպէս դուռը պիտի  
դոցէ :

— Հիմա քալէ՛, վե՛րջը կը պատմեմ, մեր ջրտուքին ժամը ան-  
ցաւ :

— Միայն ըսէ թէ ո՞վ է, կու գամ :

— Բարունկանց Մկր ամուսն է, ամառ-ձմեռ հո՛ն կը բնակի :

Մեր մեծկակ ու լաւագոյն բանջարանոցին ջուր բերող առուի  
թումբին վրայէն կը քայլենք, մինչեւ ջուրին հանդիպիլը : Պապիկս  
զայն մեր կողմը կը դարձնէ ու կը նստի պահ մը, վստահ ըլլալու հա-  
մար որ իր շինած թումբը ջրի հոսանքի ուժգնութենէն պիտի չծակի :

Առիթէն օգտուելով դիրկը կը ցատկեմ :

— Մկր ամուսին տան տանիքը ինչպէ՞ս շինուած է, վրան լող  
կա՞յ, ջուր չ'ա՞նցնիր :

Այդ լող բառը պապիկիս դուռը թ երեւոյթ մը կու տայ : Զիս  
չի վստահ, ու պահ մը մագերս յարդարելէ վերջ, խնդալով կ'ըսէ .

— Անոր տանիքը լողի մը ծանրութիւն չի վերցներ, միմիայն  
տերեւներով ծածկած է, ջուր կ'անցնի՝ բայց քիչ :

— Այն ատեն ձմեռը ցուրտէն կը սառի : Մեր դոց տան մէջ, ուր  
օճախներ ու վառարաններ կան, տակաւին կրակարաններ ալ դնել կը  
ստիպուինք :

— «Ֆէտային» չի՛ մսիր : Մորթէ հազուստ եւ վերմակներ ու-  
նի, որոնցմէ ո՛չ ջուր, ո՛չ հով, եւ ո՛չ ալ ցուրտ կ'անցնի :

— «Ֆետային» ի՞նչ է, ի՞նչ կ'ընէ :

Նոր բառ մը, որուն բացատրութեան համար տարիներ պիտի կրկնէին նոյն յանկերգը, «մեծնաս, կը հասկնաս» :

Ինչպէս այդ օր, երբ ան կը փութար իր շինած թումբը նորոգել, որուն տակէն ջուրը հետզհետէ արագօրէն իր նախկին ուղղութեամբ կը սուզուէր, ու ան դժգոհ, այդ նոյն բառերով զիս կը սաստէր :

«Մեծնա՛լ», ա՛յն է՝ սպասել ու համակերպիլ : «Հասկնա՛լ», ա՛յն է՝ անձնապէս ըմբռնելու եւ դատելու օրը հասնիլ, որ թերեւս անհաս մնայ :

Այժմ, այդ օր, Մկր ամուն ետեւէս կը քալէ՝ ճամբու քարերուն հետ վէճի բռնուած, ես կը կքիմ քթոցիս տակ, անոր ուղղած հարցումիս անպատասխան մնալուս համար նուաստացած, բայց շատ չ'անցնիր, կ'ընկղմիմ մօտաւոր անցեալին մէջ :

Շալակաւորներ, շատեր ծանօթ, մեզ խրախուսելով կ'աճապարեն, ի զուր, միայն մի'տքս է որ կը վերսկսի սաւառնիլ :

Ամառնային գեղեցիկ օր մը կ'ապրի ան : Հնձուորը թաղար գետակի հովիտին մեր արտը կը քաղէ :

Տան աքլորները արթնցնող մեր Անան, դարուորին կէսօրուան ճաշի կաթսաները երկու քթոցներու մէջ դասաւորած՝ ինծի կը սպասէ, տան «մեծ տղուն», որ նախ իրեն օգնեմ՝ զանոնք ջորիին վրայ ամրացնելու համար, եւ անոնց մէջտեղը նստած՝ ժամը ժամին տեղ հասցնեմ :

Ամառնային աշխատանքներդ բազմապիսի են եւ անհատնում : Տունը պիտի «դառնայ» : Այդ շրջանին «մեծ»երը շաբաթներով դարը կ'անցընեն գիշերները, ու քրոջս ամուսնութենէն յետոյ, մեծ մայրիկին աջ ու ձախ բազուկն եմ :

Փրփրացող կաթը ճաշակելէ անմիջապէս յետոյ կը սկսի նախորդ օրուան մածնացած կաթը խնոցի լեցնել, ու զայն հարելու առօրեայ արարողութիւնը : Անոր հանդիպակաց ծայրը երբեմն կը թառի Արտաշէսը, որ ո՛չ միայն «մեծ եղբօր»ը կը հետեւի՝ անոր շուքին հետ, այլ կ'ուզէ Անայիմ կողմէ անոր շուքուած «ղուրպան»ներէն բաժին խլել, յօժարակամ նուիրումով : Ճշմարիտ է որ այն ատեն միմիայն խնոցին ու իր պարունակութիւնը չէ որ կը հարեմ, այլ Արտաշէսն ու իր անվերջանալի խնդուքները : Բայց իր ընկերակցութիւնը անպատում քաջալերանք մ'էր ինձ համար, ոչ թէ աւելորդ բեռ մը : Մարդ ինչպէ՞ս կրնայ միս-մինակ աշխատիլ, երբ ես մինակս ճաշելո՛ւ անգամ խորթակ չէի ունենար : Ու արդարեւ, այդ աշխատութեան աւարտին, երբ Անան խնոցիէն կարագի բիւրեղները հաւաքելէ, քամելէ ու ճղմելէ վերջ բարակ հացի ծալքերուն մէջ թխած, մեզ լիուրի վարձատրած ըլլալու խիստ երեւոյթ մը կու տար իր անուշ արտա-

յայտութեան, մենք անխառն հպարտութեամբ կը ցուցադրէինք մեզ—  
մէ «փոքրերուն», Աշոտին ու Անդրանիկին, ու «մեծ հովեր» առած,  
կը ձայնէինք, «Աշխատողը միայն կ'ուտէ»:

Ըսին, ըսին, մեծցուցին: «Պօ'յդ սիրեմ», քալէ', ահա' իր պա-  
տասխանը, ու կը քալեմ, այո', դէպի երէկը:

«Մեծցած եմ», ջորիով հնձուորին ամբողջ օրուան ճաշերը  
պէտք է տեղ հասնին, այդպէս օրեր շարունակ, տեղոց տեղ՝ շա-  
քաթներով:

Օղնելու հաճոյքէն, պատասխանատու գործի մը առթած հը-  
պարտութեանէն փրուած, զարմիկներէս Գարեգիմի հետ կը վարենք  
դէպի հեռաւոր արտերը, հանդարտ, քնանալու աստիճան մեղմօրօր:

Կէսօրուան մօտերն ենք, ջորիս կը սկսի խրխնջալ, մինչ ետիս,  
Գարեգիմի հսկայ ջորին, ոտքերով դետինը կը փորէ, ու կը մերժէ  
յառաջանալ:

Անպայման օձեր տեսան կ'ըսեմ մտովի, ու աչքերս ճամբուն  
երկու եզերքները կը պեղեն, մօտիկ ժայռերուն վրայ են:

Մենք, փոքրերս, այդ ճամբաներուն վրայ ինքզինքնիս մի'միայն  
զըաստներու վրայ ապահով կը զգայինք:

Բա'ն չեմ տեսներ:

Արգիլուած էր արագ քշելը: Ո՞վ գիտէ քթոցներուն մէջ ի'նչ  
իրարանցում կրնար տեղի ունենալ: Սակայն մեր զըաստները, խօսքը  
մէկ ըրած, աւանակէ մը տարբերութիւն ցոյց չէին տար: Ասպանդա-  
կի, սանձի, պոռչտուքի հրաւերները անօգուտ կը մնային, ու նոյնիսկ  
չէինք անդրադառնար որ հետզհետէ մութը մեզ կը շրջապատէր, երբ,  
յա'նկարծ, սկանջ փորող Գարեգիմի ճիշը զիս կը սթափեցնէ:

— Ի՞նչ ունիս:

— Կը վախնամ, գիշերը ինչո՞ւ շուտ վրայ հասաւ, պիտի կոր-  
սուինք:

Սկսաւ լալ:

Ե'ս եմ մեծը, վեց ամսով: Պէտք է արժեցնեմ այդ հանգաման-  
քը, թէեւ վախը ի'մ մէջս ալ սկսած է խլրտիլ:

— Մի' վախնար, բա'ն չկայ, սանձդ ամո'ւր բռնէ, վար չենք  
իյնար:

Ու յանկարծ միտքս կը պայծառանայ, ուրիշ արեւ է հոն ծա-  
ղած, կը սկսիմ երգել՝ «Ա'րե'ւ ելա'ւ, Ձէյթունցիներ'ը»: Չաւարտած,  
խօսքս կ'ուղղեմ Գարեգիմին, զուարթ եւ ապահով:

— Հոգդ մի' ըներ, արեւու խաւարում է, շատ չի տեւեր, ա-  
մենաչատր ժամ մը:

Միտքս ինկած է «ԳԱՆՁԱՐԱՆ»ին մէջ կարդացած ընթերցա-  
նութիւններէս մին՝ «Արեւու խաւարում»: Գարեգիմին կը պատմեմ,  
որ կենդանիները մարդոցմէ առաջ կը զգան այդ երեւոյթը: Գրաստ-

ները, ինչպէս մեր ջորիները, արդարեւ կը մերժեն շարժիլ ու քալել, կան որ կը պառկին, (այս վերջինը պէտք չէ որ ըսուեր), սողունները իրենց տեղերը կը թմրին, թռչունները սուր կռնչներով օդէն վար կը թաւալին՝ ժայտերու ծերպերուն մէջ ապաստանելու ի խնդիր:

Բարեբախտաբար մեր ջորիները մի'այն ականջնին կախելով դոհացան, մինչ ես դիտութիւնս հեղեղի պէս թափելով՝ ե'ւ գիս, ե'ւ զարմիկս կը մխիթարեմ:

Դանդաղօրէն շուրջերնիս կը պայծառանայ, ընդամէնը թերեւս կէս ժամ հազիւ տեւած էր, երբ մենք աւելի ողեւոր սկսանք մեր ջորիները ասպանդակել:

Ուշացեր էինք անշուշտ, բայց խաւարումին վերաբերմամբ դարուորներուն յոռի մեկնաբանութիւնները կը շարունակուէին: Այս արտասովոր երեւոյթէն շմած՝ անո՛նք եւս դադրեցուցեր էին իրենց աշխատանքը, ու ի մի հաւաքուած, իրենց յոգնած մարմիններուն բեռուցած՝ մտային անձկութիւններու զիրար հրմշտկող ենթադրութիւններ:

— Աստուած բարկացեր է:

Շարաթներ առաջ մորեխներու արշաւանք մը իր աւերներով դիւղացու տարեկան բերքին կէսէն աւելին փճացուցած էր: Նախապաշարումներով սնած բարեմիտ ժողովուրդի մը համար նախախնամութեան կողմէ զրկուած պատիժ մըն էր ասիկա:

Մեզի կը սպասէին մայրերը՝ կրկնակի անձկութեամբ, միւսները իրենց թեւաբեկութեան ու երկար դադարին իմաստ մը տալու անհամբերութեամբ:

— Աստուած բարկացեր է: Մորեխներուն արշաւը, այսօրուան խաւարումը: Ի՞նչ տըլլի մեր վիճակը, Ուսկո՛ւ ապլա, իրա՞ւ աշխարհի վերջն է: «Յղբայրդ»<sup>(\*)</sup> զինուոր տարին, լուր չկայ: Ու կը սկսի լալ:

Գէլօեմց Մարիկն է, նոր հարս, ծծկեր երեխան կէսրօջ խնամքին յանձնած, եկած է իր օրականները փոխարինել պղլուրի ցորենով:

— Աղջի՛, խնկի մ'ը'լլար: Տե՛ս տղան, ինչպէ՛ս ուրախ-զըլարի, բացատրեց «արեւու խաւարման» պատճառները: Գալով մորեխներու գրոհին, ես այնպիսինե՛րը տեսած եմ, որ արեւուն դէմ եւ մեր գլխուն վրայ կարծես սեւ սաւան քաշեր էին:

Ճաշին համար, ծեր ու տարեց, կին կամ տղամարդ խմբակներ կազմած՝ կը սկսին աճապարել:

Դեռ տեսնելիք ունին:

— Ի՞նչ կ'ուզէք, ըսէք, ես այս բնութեան խաղերուն շատ չեմ հաւնիր: Ամէն բան փոխուեր է: Հապա ասոր ի՞նչ կ'ըսէք, որ Մկր ա-

(\*) Իր ամուսինը ըսել կ'ուզէ:

մունն առաջին անգամ ըլլալով իր պարտեզէն դուրս է եկեր, մեզպէսներուն խառնուեր է :

— Տեսէք մանաւանդ, թէ ի՞նչ առոյգ երեւոյթ ունի, թէ ի՞նչպէս արագ—արագ, առանց ցօղուն թափելու խուրձեր կը կապէ :

— Միայն թէ, տակաւին մէկու մը հետ խօսիլը չտեսանք :

— Ամէն մարդ քեզ պէս «Վերտանը Պատօն» չէ<sup>(\*)</sup>, որ երկու թեւ եւ շրթունք միանգամայն, առանց դադարի շարժել գիտնան :

Թուփի մը ափ մը շուքին մէջ փոռած կարպետին վրայ, ոտքերս միայն արեւուն, սուտ քուն եմ մտեր : Հետաքրքիր բնաւորութեանս յագուրդ տալու լաւագոյն կերպը ատոր մէջ գտած եմ, կիներու մերձաւորութեան մէջ սակայն, որոնք պատանին երբեք անհանգիստ չեն ըներ, ինչպէս կ'ընեն տղամարդիկ, որ երազներու աշխարհէն անգամ քեզ հրմշտկելով, իրական քունդ կը փախցնեն, ջուր պահանջելով, մէկը միւսին ետեւէն :

Գարեգիմէն կը բաժնուէի իրեններուն մօտ : Նոյն խանդավառ ցոյցերուն մէջ անակնկալ մըն էր Մկր ամուին ինձ ընդառաջելը : Ու մինչ ջորիէն վար ցատկելով, գիրկէ գիրկ կ'անցնէի՝ խաւարումի մասին տեղացոյց հարցումներուն տարափին տակ, լուռ ու անխօս, Մկր ամուն քթոցներուն պարունակութիւնը խնամքով կը շարէր յատկապէս անկուած ծառերու շուքին մէջ, ու անոնց տեղը փարչեր տեղաւորած, անձայն կը հեռանար դէպի Ակնիք, կարծես նախապէս իրեն տրուած հրահանգի մը վրայ Ալիք պապայէն Թաղարի ափը սուզուող սառ ջրերուն ուղղութեամբ :

Խաւարումի մասին իմ երկրորդ դասախօսութեանս աւարտին՝ հնձուորները կը խուժէին Թաղարի ջրերուն մէջ, որ եզանակին բերմամբ բաւական հեռացած էր մեր արտէն :

Իւրաքանչիւր սեռի յատուկ տեղերը ճշդուած են ու պատրաստ : Կիներու բաժինին ծայրը, երեսի վրայ պառկած, աչք ու բերան դոց, ականջներս լարած, «անուշ քուն»ի մէջ եմ արդէն, այնքան «խոր», որ գլուխս փայփայող մօրս ձեռքերուն հպումն անգամ չեմ զգար :

— Հո՛ն նայեցէք, հո՛ն, ե՛րբ գնաց, ե՛րբ եկաւ, Աստուած իր անբախտ կնկանը հոգին լուսաւորէ : Իր յոգնութիւնը չէր բաւեր, «Քառասուն Մանկան» պաղ ջուր կը խմցնէ մեզի :

Մկր ամուն փարչերը բաժնելէ վերջ կը փութայ դետեղերք :

— Ի՞նչ «Քառասուն Մանուկ», Ակներէն կու դայ, կը ճշդէ մայրս : Համբերեցէք, պաղ թան պատրաստեմ, կեսուրս կարասներով մածուն զրկեր է, դանակ զարնես, չի կտրուիր :

Հոն, Թաղարի ափին, Մկր ամուն, ամէնօրեայ հերոսը, անհոգ

---

(\*) Վերտանեաններու տան մէջ վարձակալ ֆաղաֆացի կիմ մը՝ իր միակ աղջկան հետ : Հոմանիշ շատախօսի :

ու անչարժ ընկողմանած, յամառօրէն կը մերժէ ճաշի կրկնակի հրաւերները, ինչ որ չի վրիպիր կիներու ուշադրութեանէն, ու կը սթափեցնէ նաեւ յարաշարժ պատրաստութեան նուիրուած մայրս :

— Քա՛մ, հո՛ղը գլխուս, ինտո՞ր ըլ մոռցայ : Կեսուրս Մկր ամուին չամիչ, լէպլէպի, չոր թութ ու ծիրան, նուշ ու ընկոյզ զրկեր է, դուք ինծի մի՛ նայիք, ու կը շտապէ գետափ՝ կապոց մը գրկած :

Ամենուն ձեռքերուն պատառները բերաննուն հասած էին, երբ ան վագելով կը վերադառնար դարմանելու խիստ կարեւոր ուրիշ մոռացում մը :

— Զապէ՛լ, խուրպա՛ն, աղուոր ձայնովդ «Հայր մե՛ր» մը ըսէ, հոգ չէ, նստա՛ծ մնացէք, սրտերնուս խաւարն ալ կը պայծառանայ :

— Կ'ըսիմ, Ուսկա՛ն ապլա, ամմա, խո՛ւք տուր որ դուն ըլ Մկր ամուին ու իր կնկան դժբախտութեան գաղտնիքը պիտի յայտնես :

— Աղջի՛, հոգի՛դ սիրեմ, ի՛նչ անցած-գացած բաներ կը քըրքէք, չգիտնաք՝ աւելի՛ լաւ է : Գետի՛նն անցնին մեր գեղին ու տեղին սովորութիւնները : Իրաւ է, լաւերն ըլ կան, գեշե՛րն ըլ, որոնց անմեղ զոհերն եղան էրիկ-կնիկ :

Բայց երբ կը պատրաստուէր իր խոստումը լիուլի յարգել, սեղաններէն յաւելեալները ու զանոնք ուտելու թախանձագին հրաւերներ կ'ուղղէր, կը պայթէր այդ տարուան իրար յաջորդող ե՛րբօրդ աղէտը :

Քաղքէն վերադարձող մեր փեսայ Սրաբիոն, կը բերէր Աւըստրիոյ գահաժառանգին սպանութեան լուրը, ու քրտինքներու մէջ հոգեկան տաղնապէ քայքայուած երեւոյթով գետին կը փոռէր, այդ լուրը նկարագրող թերթը, անծալ, քրքրուած՝ հօրս երկարելով :

— Աստուած ասոր վերջը բարի՛ն ընէ :

Այդ օր նոյնպէս, Մկր ամուի գաղտնիքը մնաց անլոյծ :

Սրապիոն Արօր լուրէն յետոյ, եւ այդ առթիւ փոխանակուած կարծիքները բաւական երկարած սեպելով, ինքը Մկր ամուն «խուլ ու համր» վերսկսած էր խուրձ կապելը : Դարուորը հետեւեցաւ իրեն, մայրս հին ողբերգութիւն մը արծարծելու ակորժակը անշուշտ կորսնցուցած էր, եւ ես, կրկին յուսախար, վարանոտ քայլերով Մկր ամուին մօտեցայ, անոր օգնելու գիտաւորութեամբ : Տեսաւ, ժպտեցաւ ու չարգիլեց :

Ահա այսօր, երկու տարի յետոյ, փարսախներով հեռու Թաղարի ափերէն, ի՛նքն է առջեւէս քալողը՝ Մկր ամուն : Անոր համաչափ քայլերուն կպած աչքերուս եմ յանձնած մարմնոյս ապահովութիւնը : որ կոնակիս քթոցին հետ կը տատանի ապահով, երբ միտքս կը թափառի հեռուները, եւ ա՛ն է որ թեւէս թեթեւ մը գիս եզերք կը քաշէ՝ ճամբան տայու համար ո՞րս գինուորական ջոկատի մը, որ նոյնպէս քաղաք՝ Երզնկա կը փութար՝ փոշի հանելով ու շնչելով, զայն կազ-



մող զինուորներուն ձայնալարերուն դռները լայն բացած, մարտահան խմբերգի մը բառերու թրթռացումներուն :

Եկած էինք ապաւինելու անոնց գէնքերու զօրութեան :

Անտոլոր պահ մը, առաջին զինուորական տողանցքը՝ կարծես յատկապէս ինձ համար ապստրուած, որ կ'ըմբռնէինքմ հակառակ տակաւին անձնատուր տխրամած մտածումներուս :

Ուրեմն անոնց ճամբա՞ն կը հարթէին հազիւ քանի մը վայրկեան առաջ սլացող, օդը կափկափող երկանիւ մեքենաներուն հեծեալները, որոնք չէին խանգարած երազներուս թելերը՝ զանոնք փոշիներու ամպի մը մէջ պարուրելով :

Մինչեւ իսկ անոնց հետեւող երեք ձիաւոր սպաներու մօտեցումը, ու իրենց զինուորներուն թաւ ձայնով այնքա՞ն խրոխտ բայց ախորժալուր խմբերգը պիտի անցնէր աննկատ ու անլուր՝ եթէ Մկրամուն զիս կարգի չհրաւիրէր :

Պարտադրուած դադարը ճաշակեցինք նո՛յն յոյգերով :

— Ոտքի՛, տղա՛ս, մե՛նք ալ հասանք, կ'ըսէ Մկրամուն. շատ յոգնեցա՞ր :

— Ո՞ւր ենք, Մկրամուն :

Սկսաւ գլուխս շոյել : Ես ուրի՛շ տեղ էի, հասկցաւ, ու չպատասխանեց :

Շարաթէ մը յետոյ ա՛լ պիտի չտեսնէի զինքը :

Անտարակոյս կեանքիս ամենէն տխուր յիշատակները կապուած կը մնան Երզնկայի հետ, հակառակ անոր աշխարհագրական դիրքին. գեղեցիկութեան, սքանչելի իր հովիտին, ջրառատ բարեբեր լեռնալանջերուն, գետեզերեայ՝ Եփրատի, աննման այգիներուն ու պտղատուններուն, այդ ամէնքը, չըջապատուած հայկական ներքին եւ հիւսիսային Տաւրոսի լեռնաշղթաներէն, մասնաւորաբար Մնձուրիի եւ Ս. Գրիգորի լեռներով :

Հոն եղած էր մեր նախնեաց գլխաւոր կեդրոններէն մէկը : Հին եւ նոր աստուածներուն ալ հաճոյ : Անահիտի մեհեանին, անոր փշրուած ոսկիէ արձանին յիշատակին հետ յաւէրժօրէն միաձուլուած, պատմիչները մեր պատանեկութիւնը սնուցած են հայ մեծ լուսաւորիչին էութեամբը, Երզնկայի գաւառին տալով անոր մասունքները պահելու պատիւը :

Ի՞նչն էր քանի մը շարաթներ հազիւ տեւողութեամբ Երզնկայի կեանքս դառնացնող երեւոյթը :

Պարտուողականութի՞ւն : Պարտադիր համակեցութեան զգուշութի պատկե՞րը : Ծնողքէս բաժնուած ըլլալու դառնութի՞ւնս, որուն իբրեւ շօշափելի հետեանք ինքզինքս խեղդուած կը զգայի զիս չըջապատող խրեակներուն ապականութիւններուն եւ սպառնալիքներուն մէջ :

Բարեբախտաբար, որպեսզի այդպիսի խառնակութեան մէջ, ամենէն զգուշացնելու մարդոց թշուառութիւնը չէր, այլ անոնց լեզուն, բարբերը, աղտոտութիւններն ու զիրար նիւթապէս եւ հոգեպէս կողոպտելու տիւ եւ դիշեր տեւող նենգ խաղերը: Հոն մարդիկ, հանրակացարանի ներքին ժխորին մէջ, դռներուն եւ պատուհաններու առջեւ լրտեսելով դեբերող զինուորները՝ խաժամուծին մէջ, կ'որսային ու կը վաճառէին ամէն ինչ, կին, պատանի, պատիւ:

Ինձ կը թուէր մանաւանդ, որ կորսնցուցած էի մինչեւ իսկ կապ եւ մտերմութիւն, միակ հարազատիս, թէեւ միշտ իրարմէ անբաժան, պաշտելի քոյրիկիս հետ, ու նոր վախ մը կը կրծէր հոգիս, նոր բաժանումներու աւերը:

Օրեր չանցած, հոն, Երզնկայի մէջ, երկրորդ անգամ փուլ եկած էր Ղաւկաս ամուլին տուներէն մէկը, երբ միւսը բոլորովին ոչընչացած էր: Մեծ մայրս, հօրեղբայրս՝ իր ընտանիքով, նաեւ զարմիկներս, մեզմէ անճիտուած մեկնած էին դէպի գրաւուած հայրենիքին ներսերը, աւելի հեռուն՝ դէպի Կովկաս:

Ինձ համար, ամիսը չանցած, ամէն օր քիչ մը աւելի, աչքս Մնձուրիի լեռնազագագաթներուն վրայ էր, ուրկէ եկած էի, ծնողքս աւիամայ լքելէն յետոյ, ուրկէ կ'ուզէի վերադառնալ, ա՛յնքան յստակ էր անցած ճամբաներու պատկերը:

Ամէն առաւօտ կ'արթննայի քրոջմէս առաջ, հանրակացարանէն դադտագողի դուրս թռչելու իզուր փորձեր կը կատարէի: Աչքս հոն քուն մտնալ չէր կրնար: Ու աչքերուս առջեւ կը ցցուէին պատերուն տակ իրար պլլուած մարմիններ, եւ կը վազէի ներս, սեփական աչքերովս տեսնելու ու համոզուելու որ հոն էր քոյրիկս: Ու երբ վերստին կը դիտէի այդ լեռները, զանոնք կը դտնէի օ՛րրստօրէ՛ աւելի բարձր, աւելի հեռաւոր, անցած ճամբաներս աղօտ, փշոտ ու քարոտ, անոնց ետին Մնձուրի դետին վիհերը աւելի խոր, նոր տեղացող անձրեւներէն անանցանելի հեղեղներ կը ցոլացնէին աչքերուս, ու անոնցմէ անցած օրերուս վախը կը վերածէին սարսափի:

Որոշումներս ու մտածումներս կը խտանային անպատասխանի մնացող հարցումներուս մէջ:

«Հիմա ո՞ւր են եաւրուներս», կ'ըսէր ու կը կրկնէր մայրիկս: «Ինչո՞ւ անոնցմէ հեռացար», կը կրկնէր արձագանդ մը:

Ղրկեցի որ «մարդ» ըլլայ: Հայրիկիս ինքզինք միւթաբոլոկ պատասխանէր էր այս:

Իսկ ո՞ւր են, միթէ՞ ասոնք են այդ «մարդիկը», որոնց պէտք է նմանիմ:

Կը վերադառնայի քոյրիկիս մօտ, զուարթ, աչքերս չոր: Հոն էր՝ իր քսան տարիներու թարմութեամբ, քնքոյշ, դեղեցիկ, աննման,

ու երբ իր ձեռքը կը բռնէի, բարեւ չէր այդ, իրմէ բաժնուելու խենթ մտածումներու թանձրացեալ զղջումն էր:

Երջանկութեանս այդ պահը, ափսո՛ս, կ'ըլլար կարճատեւ, ամէն անկիւնէ խօսք մէկ ըրած կը լսուէին լալազին եղանակներ, որոնք մէկիկ-մէկիկ կը լռէին, ազատ ընթացք տալու համար ամենէն ողբազին ալիքներուն:

Կրկի՛ն դուրսն էի:

Կարգը ի վերջոյ մե՛րն էր:

Երգնկան պարտ էինք լքել: Ա՛յդ էր Հայոց վերին ղեկավարութեան թելադրանքը, հրահանգը, մասնաւորապէս ոռու հրամանատարութեան, հետզհետէ հաւաքուող բազմութիւնները պատասպարելու եւ սնուցանելու դժուարութիւններուն պատճառաւ, ռազմաբեմէն ոչ շատ հեռու՝ առժամեայ զինադադարի մը բերած խաբուսիկ ապահովութենէն օգտուելով:

Սակայն հազիւ Երզնկա ապաստան դտած մեր ժողովուրդը ունէր շատ միամիտ բաղձանք մը: Ան կը սպասէր Վեր-արշալին շարունակութիւնը, որուն պատճառները բազմապիսի էին: Մենք եւս մանաւանդ, քոյրս եւ ես, կ'ուզէինք յաղթական բանակը հասցնել մենչեւ մեր ծնողաց մօտ, որուն անհամբեր կը յուսային անոնք՝ մեղձամբու դրած օրէ՛ն իսկ, կ'ուզէինք վերադառնալ ծննդավայր, նորոգել հրդեհէն քարուքանդ մեր պապենական օճախը, վերսկսիլ ա՛յնքան դաժանօրէն ընդհատուած տքնաջան մեր կեանքը, նաեւ յանձն առնել իսկ մը աւերներու եւ թանկազին բացակայութիւններու առթած դառն բաժակը ըմպել:

Ստոյգը, իրականութիւնը ա՛յն էր, որ հանրակացարանները կը պարպուէին ու կը լեցուէին նորեկներով:

Կարգը մե՛րն էր:

Նեցուկէ զուրկ, մնացեր էինք չորս՝ չափահաս կին մը, երկու դեռատի սիրուն աղջիկներ, պատանի մը: Այդպիսիներուն համար ոռու զինուորականութեան ձեռքով շնորհուած ապահովութիւնը խիստ անբաւական էր: Ռազմաճակատի մօտիկութիւնը, անոր անըմբռնելի խաղերուն դառն փորձառութիւնները անպակաս էին, տակաւին թարմ:

Ուստի նոր յուսաբեկութիւն՝ հեռանալ, վտանգէն աւելի հզօր հրամայական մը, հոգի բզքտող:

Շարունակել փախուստը, միշտ աւելի հեռուները, դէպի խորթ եւ անծանօթ վայրեր: Իրա՛ւ է, հինաւուրց եւ սիրելի ծննդավայրի աւերներուն տեսքը կը ինայտէր այդպիսով, նաեւ անվերադարձ մեկնողներուն կորուստին կսկիծը:

Ի՞նչ փոյթ ուրեմն, թէ Երգնկայի դաշտը եղեմական ա՛յն դը-

րախտն էր, ուր ազատագրուած ընտանիքներ կ'երազէին առժամեայ իրենց կայանը, մօտակայ ապազայի մը ի խնդիր՝ աւելի փայլուն :

Արդարեւ, ինծի մինչ այդ բողոքովին անծանօթ, նկարագրի տխուր ու անճոռնի երեւոյթներուն կողքին, հոն հաւաքուած մնացորդացի մէջէն երեւան կու գային գովեստի արժանի, մեր տոհմային առաքինութիւնները ցուցաբերող տարբեր օրինակներ, որոնք առժամապէս ընկճուած զանգուածը կը հանէին Հայու առհասարական ճանապարհին վրայ, որուն լուսաւոր ջահերն էին՝ արժանապատուութիւնը, աշխատանքն ու վերելքը :

Մօտէն ինծի ծանօթ ընտանիքներ, ծննդավայրէն անճիտուած, Տերսիմ ապաստանելէ յետոյ հոն հասնող տարրերը գլխաւորաբար, հայրեր, չափահաս տղաք, այժմ ապաւինած ոռու ազատարար սուրիններուն, կը մերժէին պարտուողականութիւնը, մուրացկանութիւնը, իրենց համար օտարոտի, խորթ հանրակացարանի մը կեանքը :

Մէկ քանի օրեր, շաբաթներ, հազի'ւ թէ բաւական եղան : Խառնիճազանճ իրենց նոր ընկավայրերուն շուրջը, նոր գրաւուած քաղաքի մը ամենէն ապահով սեպուած շրջապատին մէջ, կը ծլէին հնազարկատներ, սափրիչներ, դերձակի, հիւսնի, ատաղձագործի խանութներ : Մանաւանդ իբրեւ ժամանակաւոր զբաղում՝ մանր առեւտրականներ, պտղավաճառներ, կրպակներու մէջ, շատեր փողոցներու անկիւնները :

Անոնք ունեցեր էին նաեւ հսկողութիւնը, պաշտպանութիւնը հայ վաւերական հերոսի մը, իրենց լեզուն, ցաւերն ու ակնկալութիւնները հասկցող նուիրեալ մը, թէեւ անզօր, որ նոյնպէս Թուրքի ճիրաններէն ինքզինքը հեռու պահելէ ու տարի մը թափառելէ յետոյ, նոյն թուականին, 1916-ի աշնան սկիզբներուն, ռազմաբեմ կը շտապէր, մայր երկրին, տառապեալ հայրենիքին խորերը մխրճուելու բուն ցանկութեամբ, քանզի, ան գիտէր, որ հո'ն, լեռներուն վրայ, կիրճերուն մէջ, իրեն երկարող ձեռներ կային :

Սերաստացի Մուրատն էր :

Իր ներկայութիւնը կու գար հզօր բանակի մը պաշտպանութեան ապահովութիւնը ներշնչել, հայ որդեկորոյս մայրերուն եւ ա'յլ ուղեկորոյս այրերու : Անոր ուշադիր մէկ ակնարկը սպեղանի էր գայն կարդացողներուն համար, իր հանապազօրեայ այցելութիւնները՝ դօտեպնդիչ, իր խօսքը ե'ւ մխիթարութիւն էր, ե'ւ պատգամ : Ժողովուրդին հարազատը, անոր ցանկութիւնները լսելի էին ազգային թէ օտար իշխանութիւններէն :

Իրենց սիրելիները փնտռել գտնելու յոյսով բանակին յառաջապահներուն ոտնկոխ, հակառակ ոռու հրամանատարութեան արգելքներուն, հոն կը փութային հեռաւոր տեղերէ եկած կամաւորները, վաղեմի Փէտայիներ՝ ինչպիսիներ էին Վարդաֆ Շահպազները,

կամաւորական գունդերու մէջ, նոր լուծուած, նոր հերոսի տիտղոսին արժանի վախճան Զեքազներ, հայրենասէր երիտասարդներ, Տօժք Արշակ Պօղոսեան՝ Մուրատի ստուերը:

Երբ Քաջն Մուրատ հանրակացարան կը մտնէր իրմէ անբաժան բժիշկին հետ, չէնքին մէջ յանկարծուստ կը հաստատուէր երկիւղած լուռութիւն մը անսովոր՝ անոր մուտքին յայտարարը: Թրքական ողբազին մէքիներն ու ա՛յլ եղանակներով երգերը կը դադրէին, ինչպէս նաեւ մասնակի ամէն խօսակցութիւն: Մենք պատանիներս, հայ հերոսը չափչփելէ չէինք կշտանար, ինքզինքնիս պահ տալով, հիացումով կը հետեւէինք անոնց ու ապա անհամբեր էինք յաջորդ օրուան՝ նոյն վայելքէն անկուշտ:

Հակառակ օտար հրամանատարութեան կողմէ եղած սահմանափակումներուն, անոնք լաւագոյնը ի գործ դրին տեղաւորելու, խնամելու, սպանդէն ճողոպրած օրէ օր յայտնուող խլեակներ, կազմակերպեցին նաեւ տեսակ մը դրամագլուխ՝ «մէ՛կ Հայ, մէ՛կ ոսկի» անունով գլխաւորաբար Տերսիմ ապաստանած հայութիւնը փնտուել տալու, ապահով զանոնք սահման անցընելու սատարելու միջոց, խիստ գործնական, որ շնորհիւ Տերսիմի բնիկներուն արդէն իսկ բարի կամեցողութեան՝ եղաւ արդիւնաբեր:

Այդ ազգահաւաք շարժումին նուիրեալներէն էր, դպրոցական օրերէս ծանօթ, իւչպէկցի հայրենակիցս՝ քեռայրիս կուսակցական ընկերներէն, վաւերամ Տէր Մանուէլեան, որ մինչեւ 1916-ի վերջերը, երբ Տերսիմի անցքերը ձիւնէն անանցանելի դարձան, բազում անգամներ ինքզինքը վտանգելու գնով, ճամբորդեց այդ լեռներուն մէջ, եւ եղաւ «մէ՛կ Հայ, մէ՛կ ոսկի» Ֆոնտին անգուղական ասպետը:



# ՀԱՅՐԵՆԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

(ՄԱՄԱԽԱՔՈՒՆ)

Աստու մը, բարի Մկր ամուսն կու դայ զիս առնելու պտուղի սո-  
վորական արշաւին համար :

— Պատուիրած են որ հանրակացարանէն չհեռանանք, կը պա-  
տասխանէ քոյրս, մեկնելու կարգը մե'րն է : Ո՛չ օր նշանակած են, եւ  
ո՛չ ժամ, ինչպէս միշտ, Աստուած զիտէ ե՛րբ :

Տնակը եւ կատուն կորսնցնելէ վերջ, Մկր Ամուն իր բովանդակ  
խանդաղատանքը վրաս փոխադրած ըլլար կարծես :

— Վերադարձէս առաջ եթէ մեկնած ըլլաք, բարի ճանապարհ,  
իրարու հո՛գ տարէք, ու մեկնեցաւ :

Տխուր էր, եւ ես հազիւ ինքզինքս կը զսպէի : Այս տեսարանը  
տեւեց մէկ քանի օր : Օր մըն ալ, թերեւս կուահեց որ վերջինն է, երբ  
քոյրս ու Քաղուհի քոյրիկը կը հեռանային մեզմէ, ճակտէս համբու-  
րելով մեկնեցաւ, առաջին անգամն էր՝ նման սիրազեղ վերաբեր-  
մունք :

Երբ կը համբուրէի իր ձեռքը, արցունքի կաթիլներ ողողեցին  
գլուխս, Մկր Ամուն կու լար :

Սպասումի այդ օրերը ա՛յլապէս տաժանելի եղան : Սլքտալ կա-  
յանին բոլորտիքը, ներս, դուրս, անդադրում : Հոն տիրող անտանելի  
ժխորէն ձանձրացած՝ համակերպած էի մեկնելու դադափարին, մինչ-  
դեռ աչքերս ու հոգիս անվերջ կը սաւառնէին հարաւի լեռներէն ան-  
դին :

Բաժակը պիտի յորդէր սակայն շատ դառն պատահարով մը :

«Կրունկներուն» վրայ միշտ բաց, կացարանի դրան առջեւը կը  
դեգերիմ : Երկու զինուոր կը մօտենան, անոնցմէ մին կապոց մը  
կ'երկարէ, ու մաքուր արեւելահայերէնով մը ինձմէ կը խնդրէ որ  
զայն յանձնեմ ներսը, քիչ մը հեռու, իր ցոյց տուած օրիորդին, միա-  
ժամանակ շոքոլայի կտոր մը ինձ համար :

Զինուորներու մուտքը խստիւ արգիլուած էր կայանէն ներս :

Արեւելահայերէնը ինձի խորթ լեզու մը չէր անշուշտ, մանա-  
ւանդ ծայրէ ծայր գրեթէ նոր կարդացած էի Կովկասահայ Գրողնե-  
րու Հատընտիր Ա. Հատորը, որ Պոլսէն ապսպրած էինք 1914-ին, ու  
ամառուան արձակուրդէն յետոյ ստացեր էինք :

Քոյրս կը նշմարէ տեսարանը, եւ ընդոստ ինձ մօտենալով՝  
խստօրէն կը սկսի յանդիմանել արարքս :

— Չտեսնամ ուրիշ անգամ, նման յանձնարարութիւն ընելը :  
Յոյց կու տամ ձեռքիս շոքոլայի կտորը : Այս անգամ ան բոլորովին կատաղած՝ կը խլէ զայն, գետին կը նետէ, ու կը սկսի կոխկըտակել :

Ապտակը, որ ուրիշներ հաւաստեցին կերած ըլլալս, ես զայն տուող ձեռքին ո՛չ շարժումը տեսայ, ո՛չ ալ անոր ցաւը զգացի :

— Շո՛ւտ, շո՛ւտ խօսք տուր, որ ուրիշ անգամ այդպիսի բան մը ընել պիտի յանձն չառնես :

Տուի : Քաշեց տարաւ զիս մեր անկիւնը, գլուխս թեւերուն մէջ :

Լուռ հեկեկալէ դադարած, վերջիչեցի այն բոլոր դժգոհութիւնները, զորս երբեմն կը սարքէինք, որեւէ առիթով : Մեզի համար որքա՛ն մեծ հաճոյք էին անոնք, անմեղ զուարճութիւն : Այդ պահուն սակայն փոխադարձելու ո՛չ մէկ մտածում կ'որոճար ներսիդիս : Այդ օր յանցաւոր մըն էի, ես ալ չէի բոլորովին անդրադառնար թէ ի՞նչ էր ան : Թերեւս բացատրեց, կը խօսէր անդադար, բայց ոչինչ կը լսէի :

Հայ զինուոր մըն էր, կը շարունակէի ինքզինքս արդարացնելու յատուկ մտածումներս, շատ մաքուր կը խօսէր մեր լեզուն, ի՞նչ մեծ մեղք կար անոր տուած կապոցը հայ օրիորդի մը յանձնելուս մէջ :

Ո՛ր վերանելի մանկութիւն : Աշխարհին ու իր մեղքերուն անծանօթ :

Այդպէս է որ այլեւս անհամբեր դարձած էի Երզնկայէն մեկնելու, անոր փողոցներուն փողին ու հոն տիրող ժխորին արձագանգները թօթուելու դնով :

Մեր կարաւանը կը բաղկանար երկու զոյգ ձիերէ քաշուած հըսկայ կառքերէ, թուով տասը : Ասոնց «Փարիօն» անունը կու տային, սենեակի մը մեծութեամբ, չորս բարձր անիւներու վրայ տնակ մը, որուն երկայնքին հաստատուած էր մարդու մը բարձրութենէն վեր կամարածեւ երկաթեայ շարք մը՝ ձողերուն վրայ մոմլաթէ ծածկոցով :

Թուս բանակին առաջաւոր գունդերուն զինամթերք եւ պարէն հասցնող քառաձի հսկայ կառքեր բեռերնին պարպած, արագաշարժ միաձի սայլեր նոյնպէս, անընդհատ կ'երթեկէին Կարիմէն Երզնկա, Եփրատի կիրճերուն մէջէն, վերադարձին դաղթականներով լեցուած, առաջին առթիւ՝ կիներ ու պատանիներ :

Իւրաքանչիւր այդ «տնակ»ներուն մէջ երկվեցեակ մը արձինք, առաւելապէս երիտասարդ կիներ ու աղջիկ, երկու սեռի մէկ կամ երկու պատանիներ, որովհետեւ «որբ» անունին տակ անոնց մեծամասնութիւնը հաւաքուած եւ զրկուած էր հետզհետէ : Իբրեւ բեռ սեփական ոչինչ ունէին ասոնք, իրենց «վրայ-գլխով» էին, թերեւս ոմանք վերմակ մը : Մինչեւ Կարմոյ մէջ ազգային մարմիններուն եւ որբանոցներուն յանձնուելը, պիտի սնանուէին ու գիշերէին ճամբու զինուորական կայաններուն մէջ :

Մեր կարաւանին առաջնորդն էր ռուս ենթասպայ մը, եւ ունէր օգնական մը, երկուքն ալ ձիաւոր, առաջապահ եւ յետասպահ: Կառքերը վարողն ու ձիերը խնամող երկուական զինուոր, որոնք Փուրկոնին առաջակողմը, «տնակ»էն անջատուած նստարան մը ունէին, իսկ կռնակնին յարդի խուրձեր: Մեր կառքին զինուորներէն մէկը Հայ էր, ուստի անոնց մէջտեղը բազմելու պատիւը շնորհեցին անոր բնակիչներէն տասներեք տարուան պատանիին:

Կարաւաններուն կազմութեան ատեն անհրաժեշտ պայման էր որ զինուորներէն զէթ մէկը Հայ ըլլայ եւ հայախօս: Արդարեւ ուրիշ արտառոցութիւն մը այն ատեն մեզի համար՝ իրենց մայրենի լեզուն չիօսող Հայու գոյութիւնը:

Մեր կարաւանը բաղաւոր էր, ունէր երկու հայախօս զինուորներ, ու երբ անոնց ճամբորդող խումբին հետ ծանօթանալու գործողութիւնը բաւարար սեպեց, առաջնորդող սպան հրամայեց տեղաւորումն ու ճամբայ ելանք աշնանային զով առաւօտ մը, մեզի ցոյց տրուած ուղղութեան վրայ: Մշուշը տակաւին կը ծածկէր Երզնկայի դաշտն ու չըջապատող լեռները: Նոյնիսկ ամենապայծառ օդով, դէպի արեւելք, Երզնկայի դաշտը չղթայուած կը տեսնուէր բարձրաբերձ լեռներով, որոնց մէջէն, թէեւ անտեսանելի, ստոյգ էր որ կը սողոսկէր Եփրատը, դաշտէն ցած, հանդարտօրէն:

Քաղաքը բոլորովին գետափին չէր: Պիտի ճամբորդէինք անոր աջ ափէն դէպի ակունք, դաշտի դրեթէ կեդրոնէն անցնող քառուղիէն, հետզհետէ հեռանալով Երզնկան ձախ ափին կապող կամուրջէն, որ նահանջող թուրք բանակէն քանդուած չէր, իմ տեսած առաջին հաստակուռ ձեռակերտը, որ կը ծառայէր մասնաւորաբար Տերսիմի՝ Օվանքգի զինուորական կայաններուն հետ հաղորդակցութեան, ինչպէս նաեւ երկրորդական կարեւորութեամբ, ձախ ափի լեռնալանջերուն փռուած գիւղերուն, ջրառատ եւ մրգառատ պարտէզներուն հետ:

Շատ մը պատճառներով հազուագիւտ էին Եփրատի վրայ ձգուած կամուրջները: Մինչեւ Խարբերդ, հազի՛ւ երկու հատ, որոնցմէ մէկն էր դէպի Ակն ու Արարկիւր ճամբուն վրայ Քեամախի կամուրջը, որ շինուած էր անտարակոյս տեղւոյն աղահանքերուն շահագործման համար, քանզի թուրք պետութիւնը, նախընտրած էր կիսանկախ Տերսիմի դաւառը չէզոքացուած պահել, եւ իր այդ քաղաքականութեան կը նպաստէր դետը, եւ երկարատեւ ձմեռը:

Ափսո՛ս, մենք կը յառաջանայինք դէպի մշուշ, քառամբակ սուրալով փոշի թանձր ամպերուն մէջէն, եւ ես իզուր կը փնտռէի ձախափի լեռներուն դազաթները, զէթ անոնց տալու համար վերջին բարեւ մը, անո՛նց, որ երկար ու բազում տարիներ իրենց ետին պիտի պահէին ծնողքս ու իմ անուշ աղբարիկս:

Մշուշը տակաւին կը տիրապետէր, երբ հասած էինք Եփրատի



աջ ափին, ու զայն քերելով կը մտնէինք ամեհի այն կիրճին մէջ, վատահամբաւ, որ ծանօթ էր Շնագայլի Կիրճ անունով՝ Սաւսար Տէրէսի :

Այդ կիրճը սկսաւ խեղդել մեզ, ինչպէս խեղդած էր Եփրատը : Անոր երկու եզրերով բարձրացող հողակոյտերուն մէջ հսկայ ժայռներ՝ բոլորովին լերկ, առանց որեւէ բուսականութեան : Հակապատկերը մեր Տերսիւմի կիրճերուն, անտառածածկ, թէեւ նո՛յնքան ահագուղու :

Այդ քարերուն ետին, ինչպէս Տերսիւմի կիրճերը ծածկող ծառի բուններուն ետեւ դարանակալ ծածկուած աւազակներ, դարեր շարունակ ինչքա՛ն ոճիրներ դործած են, իրենց աչքերուն եւ գնդակներուն հասու ճանապարհէն անցնողներուն ի վնաս :

Աջակողմիս, հայ գինուորը, որ ձիերուն սանձերը նոր կը յանձնէր իր ընկերոջ, կարծես կռահեց մտածումներս, եւ ինքնաբերաբար սկսաւ պատմել մղուող պատերազմին դրուագներէն : Թէ ի՞նչպէս, իրենց անդիմադրելի բանակին յառաջացումը կասեցնելու յաւակնութիւն ունեցող քիւրտ անկանոն խմբակներ, ընկրկող թուրք բանակի պաշտպանութեան ի խնդիր, եւ անոնց տուած հաստիքներէն զինովցած, հանդիպակաց ժայռերուն ապաւինած փորձեր էին կրակ բանալ եւ ոռուս յառաջապահներու արագահարուածներէն հնձուած էին անողոք :

Արդարեւ մեր կառքերուն դըրդոցներէն ահաբեկած, Եփրատի ձախակողմի, մեր աջակողմեան լանջերէն գիշատիչ թռչուններու պարսեր ծնունդ կ'առնէին հետզհետէ, գիրենք խանդարողներուն ղէմ բողոքի կռիւններ արձակելով :

— Արեւոտ յետմիջօրէի հովերը այդ դիակներուն նեխութեանց բոյրը կը տարածեն մինչեւ Մամախաթուն բարձրացող կառուղիի երկայքին, կը հաւաստէր Սերեօթան, որ երկու օր առաջ պարէն բերած էր Երզնկա, եւ օ՛ր մը միայն ձիերուն հանդիստ տալէ յետոյ կը վերադառնար նոյն ճամբով՝ միւնակը :

Կիրճը կ'անցնինք : Կը բարձրանանք : Կառուղին պիտի լքէր Եփրատը, որ կը թեքուէր ուղղակիօրէն դէպի հիւսիս, դէպի ձախ : Երկնային տարածութեան տեսքը մեծապէս ընդլայնուեցաւ : Մեր առջեւ հորիզոնը փակող լեռները զգալապէս աւելի ցածցած էին, ու անոնց կատարները կը նշմարուէին աւելի հեռու, դէպի հարաւ, մեր աջակողմը : Միշտ լերկ լանջեր, որոնց կողերուն վրայ աչքով կարելի էր հետեւիլ կառուղիի գծուածքին, դառիվեր :

Ճամբուն եզերքը, բլրակի մը վրայ թառած, մեր ձիաւոր ըսպան, աջ ձեռքը վեր, կը հրամայէր կարաւանին կանդ առնել :

Կէսօրուան, թէ կէս ճանապարհի դադարն էր, առաւելաբար ձիերուն շնորհուած, որոնք իրենց լուծերէն արձակուած, ու միշտ

զոյգ-զոյգ, կաշկանդուած գլուխներն թօթուելով ու վրնջելով, կանխայայտ շնորհակալութիւն կը յայտնէին մերձեցող խնջոյքին համար :

Հայ գինուորներուն հետ ի՛նձ ալ պաշտօն տրուեցաւ, անգիր, որ հրաւիրեմ կարաւանի բնակիչները՝ օգտուել ժամէն աւելի տեւող դադարէն, կազդուրուելու, մա՛նաւանդ ջրով՝ Եփրատի ափերը չլքած :

Մի՞թէ վերջին անգամն էր, որ Եփրատը պիտի տեսնէի : Այդպիսի ներքին մղում մը բոլորս ալ կը քշէր անոր ջուրերուն մէջ, որ տարտղնուած էր ամբողջ ձորի կամ կիրճի լայնքին, եւ որ, ժայռերէն փրթած հսկայ քարակոյտերու վրայ սկսայ այժեամել ի հահարեկութիւն խեղճ քոյրիկիս, առանց անսալու անոր «ե՛տ դարձիր» պոռչտուքներուն :

Եւ սակայն դարձայ ետ, ի մեծ դարմանս մերիններուն, այդքան շուտ իրենց պաղատանքին տեղի տալուս համար :

Այդ ժայռերուն մէջ, իրար սերտօրէն պլլուած, հոսող ջրերէն տատանող երկու մարդկային դիակներու գոյութիւնն ու հաւանոր տեսքն էր զիս յետ մղողը :

Ե՛տ դարձայ ընդոստ, փախայ խումբէն հեռու, ինքզինքս դրտայ քարակոյտի մը վրայ, կոնակս Եփրատին : Այլեւս չէի ուզեր զայն տեսնել :

Քոյրս դա՛րձեալ դժգոհ էր, ըրածս հնազանդութիւն չէր արդարեւ, զգացի որ ինձ կը մօտենայ :

— Ծօ, ի՞նչ եղաւ :

Պապանձուած վիճակէս չկրցի թօթափել ինքզինքս, ու զինքը սփոփող միակ ցոյցս եղաւ ընդունիլ կէսօրուան թեթեւ ճաշ ինձ երկարած իր ունեցած լաւագոյն պատառը :

Դիակնե՛ր : Ա՛նպայման դեռ շատ ու շատեր կային այդ Եփրատի ջրերուն մէջ : Հայե՞ր, ոո՞ւս կամ թուրք գինուորներ :

Անոնց գոյութիւնը Եփրատի կարմիր ներկուած ջրերուն մէջ բոլոր խօսակցութիւններու նիւթն էր Երզնկայի կայաններուն մէջ : Այդ պատմութիւնները վերջ չունէին : Մի՞թէ պիտի ունենային օր մը, մեզի՛ վերապրողներուս համար : Հոն այդ կայաններուն մէջ անոնց կը հետեւէին ո՛չ դադար, ո՛չ լռութիւն, այլ ողբերգներու անհատնում շարք մը, մէկ անկիւնէն միւսը արձագանդ տուող, ու լռակեացներուն եւ կիներու գոգերը կը թրջուէին, նաեւ անոնց մէջ մըլխոնուած մանուկներուն գլուխները :

Սերեօժան, ուրախ, «ազգին» նպաստ մը բերողի գոհունակութեամբ հպարտ, երկու ձիերը յազեցուցած՝ դեռէն կը վերադառնայ, ձեռքի շարժումներով դէպի մեր կառքը հրաւէր կ'ուղղէ ինձ : Կը մօտենամ : Զինուորական ջրաման մը, լեփ-լեցուն, ինձի կ'երկարէ :

— Սա կը լինի ճանապարհի ընկեր, մի'միայն քեզ համար, ես ունեմ մի ուրիշը: Ձուրը կը թափեմ: Թ'թուած, կ'ծու արտայայտութիւնս չէի կրցած թաքցնել:

— Պա'հ: Ինչի՞ ես էդպէս անում, մինչեւ Մամախաթուն մենք այլեւս ջրի չենք հանդիպելու:

— Ես դետերէն ջուր երբե'ք չեմ խմած, մի'միայն աղբիւրներէն, կ'ըլլայ չոր պատասխանս, որ կը ջանամ թոյլ ժպիտով մը վերջացնել:

— Տէ'հ, լա'ւ, ինչի՞ ես տխուր, դրա մէջ տխրելու մի ո'րեւէ բան չկայ:

Ու, այս անգամ, զինուորի յատուկ չոր «պաֆսիւնաթ» մը կը հրամցնէ, եւ իր ժեստին հանդիսաւորութիւն տալով, իրանը խոնարհելէ յետոյ երբ կը ցցուի, բացուող ափին մէջ կը տեսնեմ շոքոլաթի կտոր մը:

— Ահսո՛ւ որ թէյ պատրաստելու չափ ժամանակ չէ տրուած, կը շարունակէ, ի տես հաշտարար ընդունելութեանս, պաքսիմաթը քիչ մը կարծր է, բայց համեղ:

Երկու ափերով կազմուած ձաղարի մէջէն, որպէս բարձրախօս, մեր Սերեօժան ապա հօօր կանչով ճամբորդները կը հրաւիրէ իրենց տեղերը դրակելու, ու ձիերուն բաշերը անընդհատ շոյելով, անոնց հետ ոռուերէն բառեր փոխանակելու հովեր առած՝ դանոնք կառքին կը լծէ մինչ իր զինուոր ընկերը կարգի կը սպասէ միւս զոյգն ալ կապելու համար:

Նոր քանդուած ու առժամաբար վերանորոգուած Եփրատի կամուրջն անցնելէ յետոյ, թեթեւ շեղութեամբ կառքերը կը բարձրանան դէպի Մամախաթունի բլուրները: Սկզբնական կատարեալ լուսիւնը խողո՛ ձայներն են սանձերու ճօճումն ու մտրակներու շաչիւնները:

Այս անգամ կառուղին կ'անցնի 1916-ի վերջին կատարի կոիւններու վայրերէն, որ ըստ Սերեօժայի երկու կողմին համար եղած են խիստ կորստաբեր, ու վերջացած թրքական այդ դժի բանակին փախուստովը: Այնուհետեւ կիրճը պահելու եւ ոռոսական բանակը դանդաղեցնելու թեթեւ ընդդիմութիւն մը տեղի ունեցած է, եւ ոռոս յառապահները այլեւս չեն հանդիպած թրքական ոյժերու, մինչեւ Երզնկայի դաշտը շրջապատող արեւմտեան լեռներու ստորոտը եւ Եփրատի յաջորդ կիրճին, Քեաւախի (Հայոց նախկին Դարանաղեաց գաւառին՝ Անի ամրոցը) բերանը:

Մամախաթուն շատ աննշան տեղ մըն էր, յիշատակութեան արժանի ոչ մէկ տպաւորութիւն: Ձառիվարի մը վրայ, ճակատը արեւմուտքին տուած խեղճուկ օթեւան մը, երկու կառուղիներու հանդոյց մը Երզնկայէն կարին, Տրապիզոն-Բարերդ-Կարին ճամբաներուն վրայ, հինաուրց վաճառականական կարաւաններու, ու այդ

պատճառաւ նաեւ զօրաց կայան: Շրջապատը բուսականութենէ վերջին ծայր աղքատ: Մեր ճամբուն գրեթէ կէսին վրայ, որ ընդամէնը հազիւ երկու հարիւր քիլոմեդր երկայնութիւն ունի:

Մեզ դիմաւորեցին Հայոց «Շտապ»ի ծառայողներ: Տեղաւորեցին ի բնէ խարխուլ եւ պատերազմի բովէն անցած տեսակ մը գոմերու մէջ, Թուրքերէն լքուած զօրանոցի մը մէջ, բայց կերակրուեցանք առատօրէն, թէյով, «գինուորական» հաց եւ պանիրով:

Գիշերելու համար տուին մէկ «պաթանիա» երկու հոգիի համար: Պատերուն տակ դիզուած յարդի դէզերը պիտի ծառայէին իբրեւ անկողին:

Մեր խումբին տեղը ընտրելու, նախաձեռնելու պատիւը ինկաւ ինծի, միւսները տակաւին իրենց ջարդուած ոսկորներուն ցաւերը ամոքելու հոգերուն էին: Բոլորս իրարու ծանօթ, ազգականներ էինք, երէցագրակցիներ, բացի քրոջմէս եւ ինձմէ, թէեւ մօր կողմէ համագիւղացիներ էինք եւ քոյրս հոն հարս դացած:

Ունէի նաեւ Սերեօժայի եւ մերոնց միջեւ սուրհանդակի կարեւոր պաշտօն: Երբ հոս-հոն թափառելէ յետոյ վերադարձայ, քոյրս եւ Թագուհին անխնայ հարուածներ տալով «պաթանիա»ները կը թօթուէին, իսկ կայանէն ներս մուտքը անկարելի էր, փոշիի եւ յարդէն թռչող փետուրներու պատճառաւ: Նոյնիսկ առաստաղէն կախուած երկու՝ փոթորիկէ՛ն իսկ անմար կանթեղներն անտեսանելի էին, որոնց շուրջ կը թեւածէին յարդի բարակ թերթիկներ:

Այս տեսարանէն շփոթած կը վարանէի յայտնել Սերեօժայի հետ խօսակցութեանս մասին: Անոնց առաքելութիւնը Մամախաթուն կը վերջանար: Հաւանական էր որ քանի մը օր հոն մնանք: Մեզ կարին տանող կ'առքերը կ'երթեկէին Մամախաթուն-կարին քաղաքներուն մէջ միայն: Անհրաժեշտ էր սպասել յարմար առիթի:

Փորս կուշտ, տրամադրութիւնս քիչ մը բարձրացած էր, ըսկած էի ինքզինքիս կարեւորութիւն տալ, միայն Յփրատի դիակները մերթընդմերթ կը կճէին զիս: Քրոջս հետ չարածիճիութեան կարօտը կը մտրակէր հոգիս, ու մօտենալով իրեն, որ մեր երկուքին սահմանուած «պաթանիան» թօթուելէ դադրած, աչքերը անոր մէջ մխրճած «լու» կը փախցնէր, «ոջիլ» կը փնտռէր,

— Վա՛րձքդ կատար, քոյրի՛կ ճան, հապա յարդի մէջի՛ննե՞րը ով պիտի վռնտէ:

Ան այդ աշխատանքը յաջող կերպով գլուխ հանած էր երզնակայի հանրակացարանին մէջ, ուր յատակը տախտակ էր: Այլայլեցաւ յանկարծ, ու վհատած՝ մէկզի նետեց «պաթանիան»:

Այդ գիշերը գլուխս իր թեւերուն մէջ, ես պիտի քնանայի հրեշտակային անդորրութեամբ:

Իսկ ի՞նքը: Բա՛ն մը չըսաւ:

Տեղի տալով քրոջս մշտոցներուն, աչքերս բացի :

Սերեօժան, երկչոտ քայլերով «կանանոց» մտնելու համարձակած էր : Որպիսութիւն հարցնելու սկզբնական խօսակցութեան պահին էր, երկուստեք, փոխանակուած խօսքերը զօրութեամբ միայն հասկնալի էին : Արեւմտա-եւ-արեւելահայերէններու մտերմութեան առաջին փորձերն էին մերոնց եւ Սերեօժայի միջեւ :

— Եաւրո՛ւս, կ'ըսէր Նարդու խաթուն, քիչ մը «եաւաչ» քչէ ձիւրդ, բոլորիս «օսկրները» ջարդ ու փշուր եղան :

Սերեօժա դէմքը ինծի ուղղեց, հասկցածը յստակ չէր, բացատրեցի : Իր կուշտ ու կուռ ծիծաղը, եւ գլխու շարժումները, որ հաւանութեան նշաններ էին, համակեց ամէնքն ալ, ու արժանացաւ միահամուռ օրհնէնքի :

— Պօյիդ, պօսի՛դ խուրպան, ո՛վ գիտէ մայրդ ի՞նչ տերտի մէջ է հիմա :

— Հայր, մայր, ունի՞ս : Նշանա՛ծ :

— Աստուած մուրատի՛դ հասցնէ, եաւրի՛կս, ողջ-առողջ տուն վերադառնաս, ծնողդ խնդացնես :

— Հայր Աբրահամու օրհնութիւնը վրա՛դ ըլլի, <sup>օղջի</sup> օղջի՛ք : Աստուած ամէն գաւակ իր ծնողաց հասցնէ : Մեզի եղածը եղաւ : Պատճառ եղողին Տէրը «պէլա՛ն» տայ :

Թափուած աղօթքի հեղեղէն ամօթխած, Սերեօժա, ձեռքը ուսիս նետեց, ձեզի բարի լուր ունեմ տալիք, որպէսզի անոնք լուեն :

Ձեզ կարին փոխադրող կառքերը պիտի ուշանան, մեր առաջարկով առաջնորդ սպան, հրամանատարէն խնդրեց որ մեզի արտօնէ շարունակել մինչեւ կարին : Զինադադարին շնորհիւ ռազմամթերքի առաքումները նուազած ըլլալուն, այդ արտօնութիւնն ստացանք :

Ջահել ազջիկները ուրախ կանչերով ընդունեցին այս բարի լուրը : Տարեցները մնացին անտարբեր :

— Հո՛ւս եղեր է, թէ ուրիշ տեղ, պապերնուս տո՞ւնը կը տանին : Սերեօժան կրկին բացատրութիւն ուզեց, տուի :

— Իմանում եմ : Սա ահաւոր դժբախտութիւն է մեր ժողովրդի համար :

Խորապէս յուզուած, պահ մը տատանելէ յետոյ՝

— Դու ամէնքին կ'ասես, որ մի քառորդէ պէտք է ամէն ոք կառքերի մէջ տեղաւորուած լինեն : Ես էլ գնամ պատրաստ լինելու :

Թէ՛յր բաւական կազդուրած էր բոլորս ալ, ա՛նգամ գիշերն ի բուն «աչք աչքի վրայ չդնողները» : Որոշեալ պահէն առաջ, առաւօտեան ցուրտէն կծկուած մեր գաղթականները իրենց տեղերը դրաւեցին դէպի «աւետեաց երկիրը», ըստ իրենց՝ վերջին կայանը, այնքա՛ն ծանօթ քաղաքը, ուրկէ արդէն տասնեակ մը տարիներ առաջ «Չայն» մը հրաւէր կը կարդար :

«Ձայն մը հնչեց Երզրումի Հայոց լեռներէն» :

Միթէ ես չէ՞ի ամենէն անհամբերը՝ տեսնելու Սանասարեան-ցիներու այնքան դովարանած Կարիւնը, ուր, մեր շրջանին հետ հոգեկան կապեր ունեցող, Տնօրէն Գէորգ Ապուխանի դորովալից նա-յուածքներով գօտեպնդուած, պիտի փափաքէի աշակերտել, եթէ դպրոցը Սերաստիա փոխադրուած չըլլար, ու իր հմայքէն անպայ-ման, անպայման քիչ մը պճնաթափ :

Այդ ցանկութիւնը ծնունդ կ'առնէր մօրս հեռաւոր զարմիկներէն, Իւչպէկի Միացեալ Ընկերութեան յարած, վարժարանի Նահա-տակ Տնօրէն Ղազարոս Գուլումեանէն ճառագայթող մտաւոր կարողութենէն, անոր բարեձեւ հասակէն, խնամուած մօրուքէն, իրմէ անբաժան լաթակազմ ու հաստափոր ձեռագիր տետրակներէն, հոն, Սա-նասարեանի մէջ աւանդուած զանազան նիւթերուն վերաբերեալ՝ զորս թղթատելէ չէի կշտանար :

Իրաւ է, այն ատեն, ծննդավայրէս դէպի Եւրոպա, օտար հա-մալսարաններու ճամբուն վրայ կը գտնուէր Պոլսոյ Կեդրոնակաւնը, Ներսէս Վարժապետեան Պատրիարքի, եւ իր մտերիմ, ականաւոր ազգային գործիչ՝ Մինաս Չերազի հոգածութեան առարկայ վարժա-րանը, որուն համբաւը այնքա՛ն քաղցրօրօր կը շոյէր մեր երեւակա-յութիւնը, որուն կրթական ուղեգիծը կը համապատասխանէր ա-րեւմտահայոց ընդգրկած Ֆրանսական մշակոյթին :

Աղէտի նախօրեակ տարիներուն, ան փայտայուած երազ մըն էր, արտազաղթի ճամբուն վրայ, դէպի նոր աշխարհ, որուն անգլե-րէնը մայրենի մեր լեզուին հետ կը մըցէր, մինչդեռ Սանասարեանի մէջ գերմաներէնն էր տիրապետողը :

Երկար ատեն կառքին մէջ, երկու ուսւ բանակայիններուն մի-ջեւ սեղմուած, կը ցատկոտէի հին երազ դարձած մտածումներուս մէջ ու շուրջը, որոնց խանդարող ազդակներն էին մերթ ընդ մերթ ձիերուն կռնակին շաշող մտրակներուն ձայները, զանոնք խրախու-սող օտարոտի կանչերը, տեղ-տեղ խորտակուած կառուղիին վրայ գլխովս երկու զինուորներուն ուսերուն տուած հարուածներս, մա-նաւանդ ներսէն խուժող կանանց պոռչտուքը, ի մեծ տխրութիւն Սե-րեօթային, որ իր ընկերոջ հետ իրենց լաւագոյն ռազմավարութիւնն ի գործ կը դնէին՝ կառքին անիւներուն ուղղութեան ի խնդիր :

— Սրանք, մեր եւ թշնամու հրետանիների գործած աւերներն են, հապճեպ լիցքաւորուած :

Խորխորատներու մէջ կը տապլտկէինք տակաւին, երբ ճամ-բուն եզերքը կին մը յայտնուեցաւ, որ ձախ թեւը պարզած, աջով անդադար կը խաչակնքէր, միաժամանակ կը պարզուէր խումբ մը կիներու դէպի մեզ պարզած թեւերու տեսարան՝ մը, ու աղէկտուր կանչեր :

Հայու բնագրը ցնցեց Սերեօծան, եւ իր վարած ձիերուն բաշե-  
րը նոյնպէս, որոնք կանգ առին նաեւ առաջնորդ սպային տուած հը-  
րամանին վրայ, ու կարաւանն ամբողջ անշարժացաւ :

Ինձ համար արտասովոր երեւոյթ չէր, ոչ ալ գաղտնիք մը,  
Հայեր էին, նոյնիսկ առանց իրենցմէ փրթած աղաղակներու հաւաս-  
տիքն էր անհրաժեշտ, սակայն ե՞րբ եւ ինչո՞ւ թափուած էին, բոլո-  
րովին ձեռնունայն, այդ ամայի, ու մա'նաւանդ անջրգի հեղեղատին  
մէջ, Մամախաթունէն մօտ երեսուն քիլոմեդր հեռու :

Սերեօծային հետ կրնկակոխ կը ցատկեմ կառքէն, ու, մինչ ան  
իրեն մօտեցող սպային բարեւելու, եւ անկէ հրահանգ ստանալու վը-  
րայ է, կառուղիի թումբին վրայ բարձրացողներուն մէջ գլուխ մը կը  
տնկուի, անակնկալ մը :

— Սաքեմի՛կ, ու կը պլլուինք իրարու :

Հարցումներու տեղատարափին պատասխանելու կու գան ա-  
մէն կողմէ :

Սպային հետ Սերեօծան կը մօտենայ եղելութիւնը ճշգրտու, ու  
երբ ամէնքը կը լուեն, երիտասարդ կին մը, կոկիկ հագուած, մաքուր  
հայերէնով կը պատմէ : (\*) :

— Մեր կառքը, որ վերջինն էր, հետզհետէ կը դանդաղեցնէր  
իր վագրը, ու միւսներէն ետ մնաց : Ճամբու ոլորտներուն մէջէն ա-  
նոնց անիւներուն դղրդո'ցն անգամ այլեւս չէր լսուեր, երբ մենք  
կանգ առինք, եւ կառավարը եկաւ մեզի հրամայելու որ վար իջնենք :

Սպան, որուն տակաւին թարգմանուած չէին այս խօսքերը,  
ուզեց գիտնալ թէ ի՞նչ լեզուով կը խօսէր իրենց այդ զինուորը :

— Տեսակ մը թուրքերէն, պատասխանեցին տիկիները միա-  
բերան, իրենց հայեացքը սպային վրայ, եւ շատ դժուար հասկնալի :

Սերեօծան կռահեց, ու իր պետին հետ քանի մը բառ փոխանա-  
կելէ յետոյ յայտնեց, որ կովկասի Թաթարներուն լեզուն է :

— Դուք հոս հանդէսեցէ՛ք, ըսաւ, ձիերս անօթի են, երթամ քո-  
վնտի գիւղէն յարդ գնեմ, մէ՛կ ժամէն կը վերադառնամ : Մեր ու-  
նեցածները կառքին մէջէն հանել թոյլ չտուաւ, նո'յնիսկ կէսօրուան  
մեր ուտելիքներուն ծրարները՝ պնդելով որ ժամէ մը կը վերադառ-  
նայ :

Սպասումը արդէն երկու ժամը անցած էր : Սպան ու երկու հա-  
յախօս զինուորները, ճամբու եզերքը վեր-վար շրջագայելով կը խօ-  
սակցին՝ անշուշտ ելք մը գտնելու համար :

---

(\*) Այս դէպքին գրաւոր նկարագրութեան հետեւանքը պիտի ըլլայ Կովկաս-  
սահայ Գրողներու Ընկերակցութեան կողմէ Թիֆլիզի Ներսիսեան վարժարանի հա-  
մար իբր սան ընդունուիլս :

Մենք արդէն տրամաբանական առաջարկը գտած էինք, լքեալները մեր կարաւանին մէջ բաժնելով ճամբայ ելլել :

Սակայն քոյրս, այս «գիւտին» հեղինակը, երբ արդէն Սաթենիկին թեւը մտած դէպի մեր կառքը կը տանէր, ինքն ու գիւտը հանդիպեցան բուն ընդդիմութեան, դարձան վէճի նիւթ : Մեծամասնութիւնը որեւէ գնով չէր ուզեր բաժնուիլ կառքին մէջ թողած իրենց անարժէք իրերէն : Անոնք ուրեմն վստահ էին նաեւ կառապանի վերագարձին, ու առաջարկը, որուն սիրայօժար յարած էին նաեւ մեզ առաջնորդողները, մերժուեցաւ :

Կարաւանին երկրորդ հայ զինուորը, որ լուռ, ուշադրութեամբ կը հետեւէր անլերջանալի բանակցութեանց, «բոպէն կրիտիկական» է մրմոռալով՝ գլուխը կ'օրօրէր : Այդ պահուն, ինչպէս որ էր յետագային՝ անվրէպ, այդ բառերը տակաւին նորութիւն, ո՛չ հեզնանք, եւ ոչ ալ քրքիջ կը պատճառէին, կու գային ռուսեւիայ լեզուի պաշարս ուսուցանելու, որոնք Երզնկայէն սկսած, օրըստօրէ կը հարստանար :

Այդ օր ո՛չ թէ զուարճութեան, այլ նշանակելի դեր մը վիճակուած էր ինծի, զոր կը ստանձնէի ինքնակամ, անվարան :

Քանի որ հայ կանանց մեծամասնութիւնը չէր զիջաներ վազ անցնիլ իրենց ունեցած ոչնչութիւններէն, եւ անոնց մէջ ամենէն վրձնական, յամառ անձն էր Սաքեցիկի ազգանունը կրող Թաքեան մը, ի՛րապէս «կրիտիկական» էր անոր համար քրոջս թախանձանքներուն տեղի տալ : Ուստի, երբ սպան ճարահատ, Սեբօժայի բերնով հրահանգեց շարժուիլ, ասպետական պարտականութիւն սեպեցի վար ցատկել, առ ի պաշտպանութիւն արցունքով մեզմէ բաժնուող Սաքեցիկին, եւ հոն մնալ որոշող խումբին, որոնց մէջ ո՛չ մէկ մասն է կար, նո՛յնիսկ ինձմէ փոքրահասակ :

Իսկ քոյրս Սաթենիկին ինձ փաթթուիլը տեսնելով՝ կառքին մէջ թաղուիլը ընտրեց իբր պատասխան, չընդդիմանալու համար անխոհեմ որոշումիս, որուն պիտի անդրադառնայի, երբ կառքերը բոլորովին անհետացան՝ տեսք, ճայն, փոշի : Ճշմարիտ վախ մը զիս կը պարուրէր, ու այդ պահուն մէջս ծնած դադափարն ա՛յն էր, որ այլեւս ես չէի Սաթենիկի պաշտպանը հապա ա՛ն էր զօրավիրս :

Ինքզինքս արդարացնելու ճիգ մը ծնունդ կ'առնէր մտածումներուն մէջ, որ առած քայլս անխուսափելի էր : Երբե՛ք այնքան տխուր, ընկճուած տեսած չէի մեր սիրուն, գեղեցիկ Սաքեան, որուն հետ դըպրոցական տարի մը անցուցած էի իրենց սեփական տան մէջ, մեծ մայրիկիս քրոջը տաք օճախին մէջ, եւ անոնց, մօր ու աղջկան հարազատի գուրգուրանքը վայելած :

Տխուր էր այն օրուան պէս, երբ կը համակերպէր, իր Գեղեցի դառն կորուստին, իր դեռատի եւ նոյնքան շնորհալի ամուսնուն, ա-



յո՛ւ, Գեղեցիկ, ինչպէս կը կոչէին զինքը նաեւ ականանի օրուան անուանով :

Ի՞նչպէս չլիշել զիրենք, իմ անմեղ աչքերուս առջեւ անոնց սիրոյ փթթումը : Գաղտազողի սկսուած , ու ի վերջոյ անտեսելով զիս եւ մօրաքոյրը, անոնց վերջ չունեցող համբոյրներուն համբա՛նքն անգամ ինչպէ՞ս կրնամ մոռնալ, մեր գիւղական խոտաբարոյ կեանքին արգիւրուած այդ պատկերը, որուն տեսքը, այն ատեն, սիրող զոյգին հանդէպ համակրանք կը ստեղծէր մէջս : ու ո՛չ մի ա՛յլ դրօշմ, ինչպէս տեսք մեր պարտէզներուն, կարմիր երիզներով խնձորներուն, ինչպէս տեսքը փոխնիփոխ կարմիր ու ճերմակ խազողի որթատունկներէն կախուած ողկոյզներուն, ցանկապատներուն մէջ պահուած մուգ-երկնագոյն մորմենիներու պտուղներուն, նոյնպէս տեսք մեր սառ աղբիւրներուն յատակը թաւալող ջրագոյն փոքրիկ միջատներուն, երկտասնեակ մը ճանկիկներով, անապական ըմպելիի յայտարար, որոնց պաշտօն տուած ըլլալ կը թուէր՝ դուռին յատակը փորփորելով զայն մաքրել, որպէսզի մեր դուռները կարենան անոր մէջ մխրճուիլ ու ըմպել ա՛յնքան երկար, որքան հոն թաղուած մեր քիթերը իրենց շունչը կարող ըլլային բռնել :

— Միմիայն ա՛յդ աղբիւրներէն ջուր խմէ, եթէ չես ուզեր «դող բռնել» :

Իսկ այժմ, աչքս կրկին տխրադէմ Սաքէնին վրայ, զիրար հըրմշտկող, իրարու վրայ դուրսուող մտածումներուս գերին եմ :

Ամէն երեկոյ, դպրոցէն դարձիս, կարգալէ եւ ճանճրոյթէ յոդնած՝ կը ցանկայի Գեղեցի ու Սաքէնի ներկայութիւնը, հոգ չէ թէ անոնք մեզ կ'անգիտանան : Անոնց համբոյրները կենդանութիւն կը բերէին տան մէջ, ինչպէս մեր գիւղական օճախներուն մօտ նոր ծնած ուլիկներու պարերն ու դզվտուքը, մեծ հայրիկիս ոտքերուն տակ մրափող կատուններու զարթնումը եւ անոնց փոխանակած մեղմիկ՝ ճանկի հարուածները :

Երբ կը դիտէի Սաքէնն ու Գեղեցը, կը ցանկայի բազմապատկել անոնց սէրը, թէեւ ան չէր յագենար, մինչեւ որ երկու գաւազնեւրով այրիացած մօրաքրոջս ձայնը թրթուար :

— Հերի՛ք է փսփսաք, մենք անօթի՛ ենք : Կերակուրը պղեցաւ :

Այժմ այդ անբարեհամբոյր, հեռուոր ձորերուն մէջ, խումբ մը թշուառներ նոյնպէս անօթի էին : Որո՞ւ հոգ :

Յետ միջօրէի արեւը, հեղեղատի կլոր խճերէն յաւելեալ ոյ՛ ստացած, փորած էր անոնց աչքերը, որոնք օրնիրուն զիրենք լքած կառքին ճամբան քերելով կաս-կարմիր կտրած, անէծք կը փշրէին :

Ի՞ գո՛ւր :

Ինչո՞ւ այդ պահուն իմ բարի Սեթոյին ձայնը կը հասնէր ականջիս :

— Միմիայն ա՛յդ աղբիւրներէն ջուր խմէ , եթէ չես ուզեր «գող բռնել» :

Միայն թէ ջուր գտնէի , լոկ սպեղանի բորբոսած թարթիչնե՛րունս , պապակած լեզուիս համար :

Մեր կարաւանի մեկնելէն յետոյ , ճամբուն վրայ , երկու ուղղութեամբ , ո՛չ մէկ կենդանութեան նշոյլ : Պատանիի սուր աչքերովս , մինակ , կամ Սաթենիկի ընկերակցութեամբ , երկու կողմի բըլուրները ի զուր կը պեղէինք : Երզնկայէն քակուող կառուղիին երկայնքն ի վեր ճա՛նճ չէր վզզար :

Այլեւս իմա՛ստ չունէր գիշերային արկածախնդրութիւն փորձել :

Մօտեցայ խումբին , քանի մը քայլի վրայ էի , ամէն խօսակցութիւն միանուազ դադրեցաւ : Մութին մէջ հասակս թռիչք առած էր , ու տակաւին կ'իշխէր տղամարդու առջեւ չչաղակրատելու դարաւոր սովորութիւնը : Խումբին «տղամարդն» էի :

— Աստուած «պէլա՛ն» տայ , համարձակեցաւ ամենէն տարեցը : Կտոր մը չոր հացերնի՛ս անգամ չթողուց որ առնենք , «չօճուխը» մեզի համար անօթի , անսուաղ , հոգի՛ն դուրս կը բերէ :

Եւ խօսակցութեան նիւթը կրկի՛ն փոխադրուեցաւ «չան ձազ»ին վրայ , որուն վերադարձը այլեւս անբաղձալի էր , նոյնիսկ վտանգաւոր :

Ի՞նչ էր , իրապէս , այդ «չան լակոտին» դիտաւորութիւնը :

Իր ցեղակիցներուն ստոր արարքին իր բաժի՞նը բերել :

Անոնց ճիրաններէն ճողոպրածները անելի՞ մատնել :

Իրօ՞ք մտադիր էր մեղսակիցներ ճարել , ու գիշերային , հրէշային խրախճանք սարքել անօգնական կիներու ի հեճուկս , կիրք եւ վրէժխնդրութիւն յագեցնել :

Թէ՛ միմիայն անոնց ունեցած չնչին իրերուն կարօտ էր :

Եթէ «տղամարդը» կը լռէր , եւ կարծիքներու ճնշող բառերուն փոխանակութիւնը հետզհետէ կը փոթորկէր , կը նշանակէ դժուար էր նման առեղծուածի մը լուծումը գտնել :

Վախը իրօ՞ք պատեց զիս :

Սաթէն քոյրիկիս հրաւէրները՝ իր մօտ նստիլ , հանգչիլ , անգօր էին զայն փարատելու , ա՛նընդհատ երթեւեկելու մէջ կը ջանայի խեղդել վախս , ու չէի յաջողեր :

— Եթէ այդքան կը վախնաք , առաջարկեցի՛ գրեթէ հեկեկալով , խոհեմութիւն է տեղերնիս փոխել , որ «չան ցընածը» զոնէ մեզ դժուարաւ գտնէ :

— Այո՛ , պատասխանեցին միաբերան , կամքդ ի՛նչպէս որ կ'ուզէ :

Խրախուսուած՝ թելադրեցի պահուելու թաւական հեռու ,

ճամբուն հանդիպակաց զառիվերի քարակոյտերուն մէջ ինքզինքնիս կորսնցնել :

Խելայեղ վաղքը վերջ գտաւ մատնանշուած ժայռերու ետին :

— Հիմա, եթէ գոյլ-գոյլ ասոնց ետին պառկած մնաք, ու բացարձակ լռութիւն պահէք, ո՛չ մէկ «աղուէսի ձագ» մեզ չի դտնար : Եթէ դան, ու անմիջապէս չգտնեն, մեկնած են ըսելով կը հեռանան :

Սակայն հարցը բոլորովին լուծուած չէր :

— Հա՞պա եթէ օձերը մեզ խայթեն :

Օրն ի բուն, թափառումներուս ընթացքին, ա՛յլ էր եղած նաեւ վախերէս մէկը : Երկար ժամանակ, եւ ի գուր, փայտի կտոր մը փնտռած էի իբր նեցուկ, սակայն այդ տաք քարերուն վրայ մողէ՛ղ մ'անդամ չէի նշմարած, ու ինքնիրենս ատոր պատճառ մը ցոյց տուի :

— Օ՛ձ-մօձ չկայ, նո՛յնիսկ մողէղ, ըսի կորովի շեշտով, անոնք այս ձորերէն օձիք թօթուած են ուսական թնդանօթներու որոտէն :

Բարբախտաբար ելոյթս ընդունուեցաւ քրքիջներով : Դա՛ր-ձեալ օրհնութեանց փունջ մը ծնողացս հասցէին : Ասոնք սրեցին միտքըս, եւ սեփական վախս ալ փարատելու իբր միջոց, պատգամեցի որ քարի ձեղքերէն հեռու հարթ կամ լերկ տեղեր ընտրեն, եւ փոխն ի փոխ մէկ աչքերնին բա՛ց քնանան :

Վերջին խօսքերն եղան :

Սաքէնի հետ տաք ժայռերուն կռնակ տալէ հրաժարական տը-ւինք, ու տեղերնիս ընտրելէ յետոյ, գլուխս անոր մէկ ծունկին վը-րայ՝ երկննա՛լս միայն գիտեմ :

Ու ապա,

«Մաքօս ընկերս եկաւ, զիս կը կանչէ : Տղամարդոց հերթական նիստը իրենց տունն էր՝ Չնկրեան Մամուկ աքօր մօտ : Հա՛յրս զրկած էր զինքը : Առարկութիւն չի վերցներ այդ հրաւէրը : Դերերնիս դոց գիտենք, պիտի ծառայենք բաւական ուչ՝ մատուակելով, երգելով :

«Տուներնիս հեռու չէ : Քիչ մըն ալ երբ մեծնամ, մէկ երգիքի ծայրէն միւսը ցատկելով, անոնց տանիքի դռնէն վար կ'իջնամ :

«Դեռ փոքր ենք, ու այդ գիշեր մեր վարի դռնէն քիչ մը ձախ, մինչեւ հանդիպակաց դրան հասնիլը, շատ երկար թուաց, իսկ իրենց դռնէն ներս, բակին ծայրէն վերի յարկերը բարձրացող սանդուղը հետզհետէ կը հեռանար, մեզ լուսաւորող տեղւոյն ծանօթ մեր ոտքի մատներն էին, ուստի հաղի՛ւ առջեւէս վազող Մաքօսը կը տեսնէի, կը ձայնէի, ետին չէր դառնար, կորսուելու վախէս կանգ առնել չէի համարձակեր, երբ չգիտեմ ի՛նչ կամ որո՛ւ միջնորդութեամբ ինքզինքս կը դտնեմ արտակարգօրէն լուսաւորուած շատ ընդարձակ սրահի մը մէջ, ինծի բոլորովին անծանօթ, թէեւ մտերիմ ձայներ կ'ողջունէին մուտքս, սիրելի՛ դէմքեր՝ հայրս, իր բոլոր ըն-

կերները, Պողոս Հօրեղբայրը, Տէրտըրուն Սերոբ արարը՝ Մաթօսին քեռին, բոլո՛րը, բոլո՛րը :

«Հլու-հնազանդ, Մաաթէոս, ունելիով կայծ մը ցցած, անոնց չրթունքներուն կպած մոմերը կը վառէր: Վերջաւորութեան, եկաւ զիս ոտքի հանեց:»

«Երգերու յայտագիրը պատրաստելը դժուար չէր, հարուստ էր մեր ցանկը: Մի՛միայն փոքրիկ տեղափոխութիւններ: Եթէ Հնչակեանի տուն էր, կը սկսէինք «Հեռաւոր երկիր»ով, Դաշնակցականի տան մէջ՝ «Մշակ, բանուոր»ով. իսկ պահպանողական, անկուսակցական ճանչցուածներուն համար բերքը առատ էր՝ «Ո՛վ մեծասքանչ», «Թէ հայրենեաց պսակազիր», «Տէ՛ր, կեցո՛ղ ու զՀայա», «Հայրի՛կ, հայրի՛կ», «Արիք հայկազունք»: Իսկ երբ գլուխները տաքնային, մենք, երգիչներս, կը տապալէինք ամէն պատշաճութիւն, «կը փայլեցնէինք սուր ու թուր», «կը գողգղացնէինք սուլթան ու վէզիր», «կը սարսէինք գահ ու բռնակալ»:

«Մաթօս ականջիս փսփսաց որ պէտք է սկսինք «կոչնակ հնչեցնելով»: Գիտէի, աւելորդ էր: Աւարտին՝ մեր չրթունքները քաղցրացուցինք «Ո՛վ մեծասքանչ»ով:»

«Ծափերու տակ, անկիւն մը քաշուելու ատեն, Մաթօս հարցուց թէ ի՞նչ կը փափաքին:»

«Հօրեղբայր Պողոս, որ դանադան խաղերուն չէր մասնակցեր, օճախին անկիւնը ընկողմանած, թմրած ու երազկոտ, պարտադրեց «Բարի, գեղեցիկ»ը:

Առաջին տունին բառերը մէկզմէկու կրկնելէ յետոյ՝ սկսանք:

«Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն»:

Յանկարծ, ամէն զիէ պոռչտուք, բողոք: Մխա՛լ է, սխա՛լ, չեղա՛ւ: Այո՛, անդրադարձանք մեր սխալին, ու աւելի զիւ ձայնով,

«Բարի, գեղեցիկ, Առաքելին ընկերն է Մօջօն»,

«Որ փայլեցնէ արեւու պէս...»:

«Մաթօսի ձեռքը ափիս մէջէն կ'անհետի՛ յանկարծ, սրահին լոյսերը սեւեր կը հագնին, մա՛րդ-մարդասանք չկայ. ո՞ւր են: Ինքզինքս կը գտնեմ մեր գիւղէն «Բառսուն Մանուկ» տանող ճամբուն վրայ, մէկը կացին մը վեր՝ Մօջօյի գլխուն:»

Սաթենիկ քոյրիկս, որ անդադար գլուխս ու այտերս կը շոյէր՝ ինծի անուշ քուն մըմալով, թեթեւ մը կը ձայնէ: Կ'արթննամ: Պումբը համայն մեր շուրջը բոլորուած է:

Թէեւ թմրած, քիչ մը ալլայլած կը հարցնեմ՝ ի՞նչ կայ, բա՞ն մը պատահեցաւ:

— Ոչի՛նչ, ո՛չ մէկ բան պատահած է, ամէն կողմ լռութիւն էր, մինչեւ քու պոռալը՝ «Մի՛ սպաններ Մօջօն, մի՛ սպաններ, մե՛ղք է Մօջօն»:

— Եաւրի'կս, մէջ մտաւ ուրիշ մը, երա՞ղ տեսար, բարի'ն ըլլայ, պատմէ՛ նայինք ի՞նչ տեսար :

Որքա՞ն երազներ ընկղմած էի մոռացութեան ուղիներն մէջ, հովերուն բաժին ըրած, այս վերջինը սակայն տակաւին թարմ է, եւ բաց աջօք կ'ապրիմ դայն, նոյնիսկ Մաքօսը կը փնտռեմ, զոր չեմ գտներ, ու կը սկսիմ պատմել՝ առանց նախաբանի, որուն համար անհրաժեշտ է վերադառնալ ծննդավայրս՝ Հագարիմ :

«Բարի, գեղեցիկ, Առաքելին ընկերն է Մօզօն»,  
«Որ փայլեցնէ արեւուն պէս պատկերը մարդու :»

Առաքէլ եւ Մօզօ, հեքիաթային էակներ չէին, թէեւ մեր դիւղին մէջ կենդանի՝ անդենական էին անոնք, առաջին զոհերը պանդխտութեան աղէտին : Անոնց տարիքը ո՛չ ոք գիտէր, իրե՛նք՝ բնա՛ւ երբեք :

Ունեցեր էին երկու մանչ զաւակներ, չար լուր մը տարիներ յետոյ միայն, հաղորդեր էր թէ ի՛նչպէս անոնց թոքերը բզիկ-բզիկ եղած էին, ու օտար հողերուն ծոցը մտած : Առաջնեկին կիներն ալ, անմեղունակ հարս մը, երկու ծերունիներ խնամելու աւանդական շաւղին հաւատարիմ՝ աւարտած էր, վաղաժամ, բարի հարսի իր պարտականութիւնն ու կեանքը : Երկրորդ որդուն մահը թէեւ ստոյգ, երբե՛ք պիտի չհաղորդուէր իր ծնողաց :

Երբ կը տեսնէինք դիրենք, Առաքէլն ու Մօզօն, յաւէտ անբաժան, մօտակայ բանջարանոցներէն, թթաստաններէն դարձին, Ս. Վարվառայ Աղբիւրին մօտ հանդէսը առնելով, կամ որեւէ ուրիշ կողմերէ վերադառնալու ատեն՝ միշտ աղբիւրի մը դուրսը, չնստած, Մօզօն լաթի կտոր մը կը հանէր ծոցէն, խնամքով կը սրբէր Առաքէլին վիզը, այտերն ու ճակատը, ու թեւէն բռնած զգուշութեամբ կը նըստեցնէր դարերէ ի վեր այդ պաշտօնին կոչուած քարերէն մէկուն վըրայ :

Մեկնելու ժամը երբ կը հնչէր, մօտակայ ծառին շուքին ծայրէն, Մօզօն իր ափերը մէկ բուռ շինած, ակէն ջուր կաթեցնելով դայն կը դնէր Առաքէլի շրթներուն, որ այդ միջոցին դիրք բռնած, սրունքները բացած, եւ հնազանդ կը սպասէր մեկնումի արարողութեան վախճանին : Մօզօն դա՛րձեալ կը հանէր իր լաթը, կը սրբէր Առաքէլի բերանն ու կուրծքին թափած կաթիլները, ու դէպի տուն կ'ուղղուէին :

Երբ ուզէին Առաքէլին ու Մօզօյին դժբախտութիւնը երգել, կը կրկնէին նո՛յն բառերը, առանց բացատրելու :

— Տա՛կն անցնի փատիչահին գլուխը :

Առաքել եւ Մօզօ աղքատ չէին, ծոյլ՝ ո՛չ : Երդին բառերու աղաւաղումը ո՛չ նուաստացուցիչ էր, ո՛չ ալ հեզնական, մենք, տղաքս,

ճիշդ կը մեկնաբանէինք այդ պարագան, խոր յարգանք կը բարեւէինք զիրենք, ե՛րբ, եւ ո՛ւր որ հանդիպէինք, յաճախ իրենց դրան մըրջադին(\*) մէջ, երբ նստած կ'ըլլային կողք-կողքի: Մեծ պատրաստակամութեամբ անոնց կը հասցնէինք մեր մեծ մայրերուն առաքած ամէն ծրար:

Գիւղի տեղահանութենէն քիչ յետոյ, անոնց ղիակաները տեսնուած էին «Քառսուս Մանկանց» չհասած, քաղքին ճամբուն վրայ, գիւղէն մի'այն երկու քիլոմետր հեռու, Մօշոյի գանկը ջախջախուած:

Առաքէլ չի կրնար հետեւիլ կարաւանին, Մօշօ որեւէ գնով չ'ուզեր բաժնուիլ Առաքէլէն, եւ ուզեղը դուրս թափուած՝ ծածկած է մարմինը իր առաքինի ընկերոջ:

— Աստուած երկու անմեղներուն հոգի՛ն լուսաւորէ ու դրախտի՛ն արժանացնէ:

Որքա՛ն, որքա՛ն նմանօրինակ պատմուածքներ այդ ձեւով պիտի վերջանային: Տակաւին անվերջ: Որքա՛ն, որքա՛ն, որոնք երբե՛ք պիտի չպատմուին:

Մղոններով ծննդավայրէն հեռու, այդ գիշեր արշալոյսէն առաջ, ո՛վ դուք բարի՛, գեղեցի՛կ, առաքինի՛ ընկերներ, Առաքէլ ամուսնի, Մօշօ հարսանիք, ձեր հոգեհանդիստը կը կատարուէր: Չանց անուսեցաւ «Ի վերին Երուսաղէմը», ներողամիտ եղէք, ո՛վ սուրբերը իմ դժբախտ հայրենեաց:

Գիշերը անցած էր խաղաղ:

Ապացո՞յց: Ջարդուած չէինք: «Աչք գոցող» չկար սակայն մէջերնիս: Համարձակած էի բացառութիւն կազմել: Շատ երազներ տեսած էի, Սաքէնիկին ծունկին տուած ցնցումներս վիայ են: Ամենէն ցնցողն էր քրոջս առեւանդումին վերաբերեալը, զոր չուզեցի պատմել: Ինչպէ՞ս կրնայի սակայն պարտկել Մօշօն ոգեկոչող պոռչտուքս, որ առաւօտեան զանգակն էր այդ ցուրտ ամայութեան մէջ, յուշի եւ զգաստութեան հրակէր:

Ճամբուն հակառակ կողմն ենք, սար ու ձոր շողեր հագած կը շարժին, դիմացը վէտովէտող կառուղին կ'ամջնայ տակաւին մերկանալ: Սաքէնիմ հետ կը բարձրանանք աւելի վեր, լոյս փնտռելու, տաքնալու համար: Կառուղին ետեւնիս արդարեւ կ'երկարի աջ ու ձախ: Արե՛ւ, արե՛ւ, դո՛ւրս ելիր, քեցի շաքար ենք բերեր»:

Եթէ՛ դայ, պիտի տաքցնէ կոնակնիս, պիտի փախցնէ մեր վախը:

— Քանի դուն քովս ես, բնա՛ւ չեմ վախնար:

Ինչո՞ւ այս խօսքը, ի՞նչ պատասխանեմ Սաքէնիմ:

— Ե՛ս ալ, քանի դուն մօտս ես:

(\*) Արեւ տեղ, վերջալուսին:

Բաւական ատեն է որ մեր շուրջի բլուրները կը լուացուին արեւուն շողերով :

Օրը յառաջացած կը թուի : Կ'ուզեմ գիտնալ ժամը : Մեր գիւղը որեւէ ատեն դայն ճշդելու մէջ անսխալական էի , կը չափէի շուքս : Մեծ հօրս հետ երբ անհանդատութեան նշաններ ցոյց տայի՝ տեղ փոխելու , տուն վերադառնալ ստիպէի , ժամը կը հարցնէր , կը սկսէի շուքաչափութեան :

— Նո'րէն չափէ . կօշիկիդ ծայրերը իրարու կպած պէտք է ըլլան :

Իրաւ ալ ամէն չափելու տարբերութիւն կը նշմարէի :

Սկսայ մենախօսել , որ Մամախաթունի արեւը նոյնը չէ , երբ Սաթենիկ գլուխս բռնած դէպի աջ կը դարձնէր :

Կարնոյ ճամբէն փոշու կծիկ մը ինքնիւր վրայ գլորուելով կը յառաջանար : Ան կը հալածէր ձիաւոր մը : Երբեմն կը թուէր թէ ան արդէն ճգմուած է : Ո՛չ , յա՛նկարծ ան կ'երեւար , կծիկը՝ ո՛չ :

Պոռացինք որ ամէն ոք պահուրտի :

Ձիաւորներու գունդ մը , որ արեւուն մէջ մերթ ընդ մերթ կը սենար ու կը ճաճանչէր : Ահա կ'անցնին մեր առջեւէն , կուրծքերնուն վրայ շարուած «ինքնահոս գրիչները» կը փալիւիւն , գլուխնին՝ «փափախ» :

«Խաղախներ» են , կը պոռանք , մի՛ վախնաք :

Մեզ նշմարեցի՞ր : Անցան սրընթաց , իրենց ետին ձգելով յոյսի փոշիներ :

Անօթի փորով աղօթքը աւելի ընդունելի է , կ'ըսէր մեծ մայրը :

Սաթենիկ գետին կը չոքի , ու կը խաչակնքենք միասին :

Ճամբուն վրայ պահակելու պահն է :

Խումբը նախորդ օրուան դիրքերուն վրայ է : Ամէն մէկը նոյն հարցումը կ'ուզէր դէպի կառուղին .

— Ի՞նչ տրլլի մեր վիճակը :

Օրուան կարգախօսը տալով կ'աճապարեմ դէպի կառուղի , դայն աւելի արժանահաւատ դարձնելու նաեւ ինձ համար :

— Մի՛ վհատիք , համբերութիւնը կեանք է :

— Աստուած ձա՛յնդ լսէ , եաւրո՛ւս :

Երբ լիեց , կէսօրը շատոնց անցած էր , արեւը մեր գլխուն վրայ տաք դամբը ցանկելով կը փախչէր «չան ձագին» ուղղութեամբ , անձկութեան ժանիքներ ցցած մեր հոգիներուն մէջ :

Մտածումներուս մէջ , անչափելի քանակով , իրարանցում մը կար , զիրար կը հրմշտկէին , ամէն մէկը պահ մը տիրապետող , յստակ , պայծառ :

Որքա՛ն կը ցանկայի , օրինակ , որ արեւը ատեն մը դադար տար

իր վաղքին, թէեւ շատոնց էր որ գիտութիւնը փաստած էր անոր անշարժութիւնը: Ուրեմն ինչպէ՞ս Յեսու կրցած էր զայն կեցնել: Մայրիկս ալ հաւատացող էր Յեսուի հրաշագործ զօրութեան, ինքն ալ օր մը, ի գուր, մեր Աղիօլայ արտերուն մէջ, երեկոյեան մթնշաղիին ի տես, աջ ձեռքը մանգաղով երկինք ցցեց՝ զայն, արեւը կեցնելու, որ օրուան քաղը լրանայ, ու իրենց խնայուի յաջորդ օրուան վերադարձը աննշան կտորի մը համար: Այդ օր երբ իմ գիտութիւնս թափեցի, չմերժեց, բայց ուղեց հաւատալ Աստուածաշունչին, որուն ամէն էջերուն հետ մտերիմ էր շատ, ինչպէս անակնկալի եկած, հիացումով, լուռ եւ հպարտ կը հաստատէի անոր հմտութիւնը Իւշպէկի մէջ, ուր հիւր էր ու տան դորձերուն հոգէն ազատ, ինծի եւ քրոջս այցելութեան եկած մէկ քանի օրերուն, տեղւոյն բողոքական պատուելիին հետ բռնուած վիճարանութեան մը ընթացքին, երբ անոր փաստերը կը ջախջախէր իր սեփական մեկնութիւնները տալով, տող առ տող կը պատասխանէր Աստուածաշունչի հատուածները տալով, անոնց թուարկութիւնը ճիշդ ու ճիշդ հրամցնելով:

Ես ալ պատրաստ էի պահ մը «խաթրը» կտորել ամբարած գիտութեանս, ու բաղկատարած կը դիմեմ արեւուն, որ կանդ առնէ: Չառաւ, բայց չվշտացաւ այդ սրբազոյժութենէն, ու մեր աչքերն ու սիրտը հմայող հորիզոնէն ծնունդ տուաւ շարք մը կառքերու, ու դէպի մեզ քշեց:

— Ծո՛ւտ, շո՛ւտ: Բոլորս ալ կառուղիին մէջտեղը, մի՛ ընկերակիք, ձիերը մարդ չեն կոխկոտեր, մի՛ վախնաք քիթ-քիթի գալ անոնց հետ, ու կեցուցէք զանոնք ամէն զնով:

Անգամ մըն ալ աչքս կպաւ արեւուն, կը խնդար:

Ձին կանդ առաւ: Տասնեակէն աւելի միաձի, սրընթաց կառքեր, իրարու կռնակ ու քիթ հոտոտելու համար անշարժացան:

Խաչակնքելու պահն էր: Արմիան հոլովելու պահն էր: Ձիերը կը Փշչան, մեր բացատրութիւններուն դէմ բռնողներու պէս, բաշերնին կը թօթուեն, մեր ոտքերուն առջեւ փրփուրի դէզեր կը թափեն, իրենց արիւնէն հրաշէկ:

Առաջին կառավարը, արծաթէ թելերով ուսանոցներ կրող, սքեմտորեան ձայնով մը, իր գլուխը կիսովի՛ն միայն ետ չըջած, «Իկո՛ր» կը պոռայ:

«Իկո՛րը» չհասած, ան իր կուրծքը կը ծեծէ, «Արմիան», «Արմիան»:

Իկո՛ր աջ ձեռքը ճակտին տարաւ:

Սպան «Արմիան» էր: Իկո՛ր՝ Հայ:

Ո՞վ կընար չափել մեր երակներուն զարկը:

Ոտքերնիս դեմնէն կտրուած էին:

Փոխադարձ ծանօթութիւնն ալ հերթի պէտք է սպասէ:



Քանի՛ հկոք կը յառաջացնէր թարգմանութիւնը, ա՛յնքան սպային դէմքը կը թթուէր ու կը տխրէր :

Զինուորական կանոնադրութեամբ այդ կառքերուն մէջ խնամիւ արդիւրուած է որեւէ անձ ընդունիլ, նո՛յնիսկ զինուորական :

Արմիան եւ Հայ ալյալած կը խօսին ընդհատ-ընդհատ, օտար լեզուով, յայտնապէս լուծում փնտռելու մտահոգութեամբ :

Իկոք դէպի վերջին կառք կը յառաջանայ, ու նոյնպէս սպայի երիզներ կրող զինուորի մը հետ խօսակցելով կը վերադառնայ :

Այս վերջինն ալ յարգալիբ կը բարեւէ մեր «Արմիան»ը, եւ կը սկսին խօսակցիլ, որուն աւարտն է կարծես, երբ ան ժպտադէմ մեզի կ'ուղղէ իր հայեացքը :

— Խարաչօ<sup>օ</sup>, կը պոռամ մէկէն :

— Խարաչօ՛, կը պատասխանէ նորեկը, ուսիս հարուածներ տալով :

Հակառակ արդելքին, «Արմիան»ը, իր օգնականին հաւանութեամբ պատրաստ է մեզ վերցնել ու տանիլ-թափել առաջին ապահով վայրը, պայմանաւ որ ամէնքս ալ բաժնուինք կառքերուն մէջ, ու զանոնք ծածկող մոմլաթէն գլուխինս դուրս չհանենք :

Ի՛նչ «դժնդակ» պայման: Խօսքը կիներուն էր: Հայր Աբրահամու փոխարէն՝ օրհնեցին Ռուս Բանակը, Արմիանը, Իկոքը, Ռուս Սպային ձեռքէ՛րն իսկ համբուրելու ելան :

Ու ինկանք ճամբայ :

Սաքեմիկիմ անբաժան, Իկոքի քառակուսիին մէջն ենք :

Իկոք մոմլաթի առաջամասը բարձրացուց, կեդրոնամասի ծայրը հաստատուած պարանը հանեց իր օղակէն, իր մէջքին փաթթեց, որպէսզի կարողանանք շնչել եւ խօսակցիլ, մէկզմէկու ծանօթանալ :

— Ես կարող եմ նաեւ մեր լեզուն սահուն կարգալ: Ծնողքս հազիւ քանի մը տարի առաջ Արաքսի ափից Աստրախան փոխադրուեցին: Էդտեղ Հայերը ազգասէր են, եւ ունեն հայկական մի զպրօց :

«Արմիան»ի մասին դովեստ շոյլեց :

— Նա շատ լաւ Հայ է զգացումներով: Ինքն եւս ախոսում է որ հայերէն չի խօսում: Քանիցս այս մասին խօսելիս, խոստացել է որ պատերազմի վերջաւորութեան սովորի :

Խօսակցութիւննիս կը կատարուէր դժնդակ պայմաններու մէջ, արագասլաց կառքին ցնցումներուն, մանաւանդ երկուստեք մեր աննպաստ դիրքաւորման պատճառաւ, նաեւ մէկզմէկու լեզուններուն տակաւին անվարժ ըլլալնուս պարագան կար :

Զիս կը խռովէր քոյրիկս՝ կորսնցնելու հաւանականութիւնը: Հարց-պատասխանները սկսան ընդմիջումներ ունենալ: Իկոք կարծես անդրադարձաւ այս անտրամադիր վիճակիս :

— Քնե՞լ ես, կը ձայնէր Իկոր: Երեւի շատ էք յողնել, հասկանալի է:

— Քուն չունիմ, ո՛չ ալ յողնած եմ: Սերեօժա անուն հայ զինուոր մը կը ճանչնա՞ս:

— Շատ լաւ եմ իմանում: Ինչի՞ ես հարց տալիս իր մասին: Ինչպէ՞ս, եւ ո՞ւր ես դու նրան ճանաչել:

«Իմանում» բառը թէեւ խորթ թուեցաւ, սակայն մանրամասն սկսայ բացատրել էութիւնը:

— Երթեւեկող գրեթէ բոլոր «Ֆուրկօն»ների առժամեայ կեդրոնը Կարիմէն քիչ առաջ, «Իլիճա» կոչուող վայրն է: «Արմիան»ը ի վերջոյ ցանկացաւ ձեզ մինչեւ այդտեղ տանել: Նրա՛նք եւս հոն կը լինեն:

Արդարեւ կէս ճանապարհին, ապահով վայր մը կանդ առնելու առեն, «Արմիան» եւ իր ստորադասը կ'որոշեն մինչեւ «Իլիճա» յառաջանալ, ու հոն, կայանէն մէկ-երկու «վերստ»ի վրայ մեզ դուրս թափել:

— Ես չասացի՞ որ նա պատուական Հայ է, եւ ազնիւ մարդ: Ու փոխեց նիւթը:

— Ապա մի տեսնենք, ինչպիսի՞ն է Ալանաց Օրիորդին տրամադրութիւնը:

Անակնկալ էր հարցումը. պէտք եղաւ պահ մը տանանիլ: Ան մէջս չուշացաւ Իկորի հանդէպ ունեցած համակրութիւնս հրացումի փոխել, ուրեմն ան ծանօթ էր ե՛ւ Հայոց լեզուին, ե՛ւ մեր ազգի պատմութեան, ու թէեւ ուրախ էր հողիս, սակայն չկրցի անոր թեւերովը թռչիլ:

— Ախո՞՛ս, պատասխանեցի, մեր «Ալանաց Օրիորդը» իր Արտաշէսին կորուստը կ'ողբայ:

Յաւ ու դառնութիւն մեղմացան լռութեան սպեղանիով, կանքին ցնցումները՝ նոյնպէս: Կանդ առինք:

Թէեւ դեռատի, տակաւին ինչքա՞ն առիթներով փափաքած էի որ հաճելի մարդոց ընկերութիւնը վերջ չունենայ: Իկորէն բաժնուելու հարկադրանքը, քոյրս փնտռելու հեռանկարը կը բազմապատուէին անձկութիւնս:

Տարեց կիներ ջերմեռանդութեամբ համբուրեցին «Արմիան»ի ու իր ստորադասին ձեռքերը, որոնք ապշած կը համակերպէին: Անոնց համարձակութիւնը բարձրացաւ մինչեւ Իկորի այտերը, հոն դրոշմուեցաւ խումբին երախտիքը: Յօղով ողողուած անոր աչքերը կը խայտային, երբ իր վերջին թարգմանութիւնները փնտռելու դժուարութեան մատնուած էր:

— Աստուած վերջ տայ պատերազմին, ձեզ ձեր ծնողաց զիրկը հասցնէ, ձեր մուրատին հասցնէ, ծլիք ու ծաղկիք:

Տխրամած վերջին բառն եղաւ՝

— Ամէ՛ն :

Թարգմանելը անհրաժեշտ չէր, Ռուս ու Արմիան, ժպտելով, հաւանութեան գլուխ տուին :

Մեր բարեկամները չկային : Իրենց ետին ձգեցին ազգին հանդէպ նոր հաւատքով առլցուն կանացի խումբ մը :

— Ո՞վ ըսաւ որ հայ ազգին վերջն է, կը փսփսային իրարու : Որքա՛ն յարափոփոխ է մարդս : Հօրենական օճախը ձգած օրերէս հայ ծնած ըլլալու բազում անիծողները զղջումի արցունքներ կը թափէին :

Սաքէն, թեւս մտած, զիս կը տանէր ճամբուն եզերքը մոռցուած փշենիի մը ետեւը :

Մեր, աւելի ճիշդ «տղամարդոց» աչքերէն հեռու հանգիստ փնտռողներ մէկիկ-մէկիկ եկան անցան անոր ետին :

«Կոտորուքի» արարողութիւնները եւս վերջ գտան, ու յառա՛ջ, դէպի Իլիմա :

Նոր բառ մը եւս կը ձնչէր ուղեղիս մէջ : Կարծես ուրիշ հոգ չունենայի : «Վերստ»ը անպայման հեռաւորութեան չափ մըն է, բայց որքա՞ն : Ինչո՞ւ չհարցուցի Իկոբիմ : Երբեմն աւելի զգաստ էի : Քոյրիկս, իմ անունիս «ինչո՞ւ» բառը փակցուցած էր, ածանցաւոր, երբեմն մի՛միայն, «ինչո՞ւն» եկաւ : «Ինչո՞ւն» դնաց : Կը կատղեցնէր զիս : Հո՛գ չէ, թող մէ՛ջ մը գտնեմ գինքը :

Այդօրուան մոռացութիւնս Իկոբէն բաժանումիս զոհն եղաւ : «Տահա» շատ պիտի քալե՞նքներուն, ի՞նչ կրնայի պատասխանել : Փախչի՛լ : Իրաւ ալ ճամբան կ'երկարէր մեր շուքերուն հետ :

Մի՛թէ բազը պիտի ունենայի քոյրս հոն գտնել : Արցունքի գաղտագողի քանի մը կաթիլներ թեթեւութիւն տուին քայլերուս :

— Մի՛ վազեր, կը պաղատէր Սաքեցիկ, չե՛մ հասնիր :

Վազք չէր, այլ թոխչք :

Ահա քոյրիկիս թեւերուն մէջն եմ, գրկին վրայ գլուխս կը թփռտայ իր սրտի զարկերուն հետ միալար :

— Տղամարդը լաց չի լինում : Իկոբն է : Տե՛ս, ուղքե՞ր կան շուրջդ : Սեքեժան, . . . . .

Քրոջս գրկէն թագուհին զիս իրեն կը քաշէ :

Կը լսեմ անոր կողքին, ձեռքը գլխուս, Նարդու Խաթունիմ աղօթքին մրմունջները :

Զինուորական հսկայ վրանի մը մէջ եռուզեռ է :

Ծալապատիկ նստած ենք «սոված»ներս, առջեւնիս թէյի բաժակ, ծոնկերնուս՝ առատ հաց, ու նաեւ պանիր :

Մա՛նաւանդ, մանաւանդ կայ քոյրիկս, թեւը վզիս անցուցած :

— Ա՛լ պիտի չբաժնուիմ քեզմէ :

Վարագոյրը իջաւ :

## ԱՅԼ ԱՆՁԿՈՒԹԻՒՆ

— Մեղա՛յ, մեղա՛յ, էսոնք Տաճիկէն ըլ «պէթէր» են :

Այս եղաւ «բարի լոյս»ս կորկորդիս մէջ խեղդող բողբոջը : Ուշացողը է՛ս էի, ամենաերկար քնացած գիշերներէս մէկը՝ ամիսներէ ի վեր : Պատրաստ գտնուելու յատուկ արարողութիւն անհրաժեշտ չէր, կը բաւէ որ քոյրս ձեռքի փոքր հպում մը տայ, վեր ցատկել, «է՛ս եմ, նե՛րկայ» ըսելս կը բաւէր : Երկորդ անգամն էր որ կը գտնուէի գինուորներու վրանաքաղաքի մը մթնոլորտին մէջ : Մերոնց, բոլորն ալ հայ կիներ, մօտենալու համար պէտք էր ձեղքել դանոնք շրջապատող գինուորներու շղթան, ինչ որ անմիջապէս ինձ ապշութիւն կը պատճառէր, ու նաեւ վախազդու :

— Մեղա՛յ, մեղա՛յ, կը կրկնէր նոյն անձը, էսոնք մարդ չեն տեսեր, «մէր» ու «քօր» չեն ունեցեր :

Կանուխէն հաւաքուած էին ճամբուն եզերքը, մեկնելու յոյսով, ու յանկարծուստ շրջապատուած գինուորներէ, որոնց սեղմ շղթան, սեւեռուն ու քաղցած ակնարկները ե՛լ կը խոցոտէին հայ ամօթխած աղջիկներուն այտերը, ե՛ւ թունդ կը հանէին մեր տարեց կանանց ջիւղերը :

Անոնցմէ մին, քիչ հեռու, բազկատարած, դանդաղ ու վեր-վար շարժումներով կը ժպտէր, ու մեղմօրէն կը կրկնէր նո՛յն բառը «սը-չա՛ս, սըչա՛ս» : (\*)

— Աղջի՛կ, ի՞նչ կ'ըսէ :

Ու աւեր հողիներէն քահ-քահ մը կը փրթէր, իբր արձագանդ «սըչաս»ին, խումբէն նետուած թուրքերէն բառ մը :

Ձեռքէս ամուր բռնած՝ քոյրս զիս կը քաշէ դէպի կեդրոն, մինչ ես կ'ուզեմ խոյս տալ, փնտռել Սերեօժան, Իկորը : Չկան :

Ի՞նչ կը նշանակէ «սըչաս» :

Միրտ ու միտք ջերմացնող հողի՛ մ'անդամ չկայ : Երջակայքին պէս մերկ, օտար, մեզ հրմշակող ժպտուն շղթան ցուրտ է, ցուրտ՝ նոր ծագող արեւուն պէս, որ կը հանդէի անկենդան հողին վրայ, ուր չկան իր շողերէն շարժուող ու հրճուող թուփ ու տերեւ : Կան մի՛ւսյն քիչ առաջ զինքը հայցող տխրադէմ, ու այժմ փախուստ փնտռող հոգիներ :

Տխրութիւնը պատեց նաեւ զիս, անոր պատճա՛ռը կը փնտռեմ :

(\*) Ռուսերէն բառ, որ կը նշանակէ «շուտով» :

Նախորդ օրուան խանդավառ ընդունելութիւններէն լեռնացած հողիւի գլխուն վրայ պատած մշուշը կը ծաւալի մէջս ու կը թանձրանայ: Ինչքա՛ն վազամեռ են մարդոց ընծայած պատիւները, վայրկենական ձիգի ու խաղի արտայայտութիւն, մինչ ես անոնց արձագանդը գոնէ գտնելու յոյսեր ունէի տակաւին այդ առաւօտ: Ինչպէ՛ս կրնայի մոռնալ հասցէիս ուղղուած գովասանքները, որոնք երջանկութեան արտասուք յորդած էին քրոջս պայծառ ու պսպղուն աչքերէն, երբ այս պահուս կշտամբանքի եւ անձկութեան բո՛ւ մը միայն կը զգայի, որ կը տարածուէր մէջս իր մատներուն ուժգին սեղմումներով:

Անվերջ ոստոստելէ յետոյ, միտքս կը պայծառանայ անգիտակցաբար, երբ իմ կարգիս առանց մէկու մը ուղղելու, հարց կու տամ, բարձրաձայն.

— Բայց ինչո՞ւ են հաւաքուած այս զինուորները, եւ ի՞նչ կ'ուզեն:

Այո՛, իբր մարդ, երէկ ինծի անծանօթ, երեսնուն գոյները թափած այս մարդկային ժխորը, այս ոռու զինուորները, որոնց դէմքերը բոլորովին կ'անէանան իրենց վրայ թափուող արեւու շողերուն մէջ, ի՞նչ կը փնտռեն մեր շուրջը:

— Տղամարդ չե՞ն: Գետի՛նն անցնին:

Ահա վճիռ մը, արձագանդ մը հարցումիս: «Տղամարդ»: «Արջաս»էն աւելի անհասկնալի բառ մը այդ օրերուն:

Միթէ՞ այդքան շուտ պիտի անէանար նաեւ ոռու մարդուն հանդէպ սնուցուած երկարամեայ հիացում մը, պատկերացուած իբրեւ տիպար, նոյնիսկ մեզմէ՛ հայ գիւղացի գաւկի՛ն տեսած ամէնօրեայ սրբութիւններէն գերիվեր:

Մեզմէ լաւե՞ր: Կարծես այդպիսիները փնտռելու առաքելութեան մը ուղեւորներն ըլլանք:

Իսկ ի՞նչ ըսել է տղամարդ: Հասցա ե՞ս ինչ եմ:

— Մեծնա՛ս, կը հասկնաս, կ'ըսէ մէկը ներսէս, ինծի վաղուց ծանօթ ձայն մը, յանկերգ մը:

Ո՛վ երանելի պատանեկութիւն: Ինչո՞ւ կ'աճապարենք անոր սահմաններէն շուտով փախչելու:

Նոր հրմշտուքի մը մէջէն ահա ճամբուն կեդրոնը կը նետուի տարեց կին մը, մեծ մօրս տարիքը հազիւ ունի, վար կը քաշէ իր շրթները ծածկող լաթը, ու ձեռքերու շարժումներուն եւս լեզու տուած, գէպի զինուորները կը սկսի պոռալ, որ քաշուին:

Կը ձայնէ ի՛ր լեզուով, անօգուտ: Կը բղաւէ տաճկերէնով, գոր ըստ իրեն պէտք է հասկնան, քանի որ օտարներ են:

Հասկցա՞ն: Բառերը կը թռչտին, շղթան կ'օրօրայ, խնդուք, ծափահարութիւն, որոնք ի վերջոյ հեռուէն դիտող մեծաւորի մը ուշադրութիւնը կը գրաւեն: Շղթան կը քակուի՛ վերջապէս:

— Է՛ս ըլ տի տեսնանք եղեր :

— Աշխարհի ետքն է , անա՛մ :

Ուրիշ մը խաչակնքելով կ'աւելցնէ .

— Ո՞ւր է , մէյ մը սա ճահիլ-ճուհիլը էրզրում հասցնենք , ի՞նչ տըլի , թո՛ղ ըլլի :

Թէեւ ծանր մտահոգութենէ մը ձերբազատուած , երկարատեւ սպասելու դատապարտուած փոքրիկ մեր խումբին միաւորները , երկուական , իրարմէ հեռու , գլուխ գլխի , նստտած են , ոմանք դեպերոզ : Կը վերստանան Երզնկայի հանրակացարաններուն տխուր պատկերները , որոնցմէ այնքա՛ն զգուանքով կը փախչէի : Ու այժմ , կրկին , ինծի յատուկ տեղ չեմ գտներ մերոնց մօտ :

Հեռանա՛լ : Բայց ո՞ւր : Երբ «սըչաս» բարբանչոզ ուրիշ զինուոր մը կը հրաւիրէ՝ խօսքին ձեւ տալով , որ ճամբու եղերքէն չբաժնուինք : Բուռներձուս մէջ քարի կտորներ , նաեւ հագուադէպօրէն գրպան կոշուած ծալքի մը խորքը , աջ , ձախ , ետ ու առաջ , նշմարած ամէն խոշոր քարերուն նշան առնելէ եւս ձանձրացած՝ տարբեր զբաղում կը փնտռեմ , դէմքս պահ մը հեռուն տնկուած բլուրներուն , կռնակս միշտ զոյգ-զոյգ հեկեկոզ կանանց : Մերթ կը փորձեմ մօտենալ հարազատներուս , Սաքեմիկ , Վարդամոյշ , Թագուհի եռեակին , անոնց փսփսուքէն վռնտուելով , կը սկսիմ լրտեսել զինուորական ամենէն մօտակայ վրանները : Երբ նստիմ , մէջս վախ մը կ'արթննայ , տխուր մտածումներ կրնան յաղթանակել զիս ու արտասուել տալ , որ ասպետի մը անվայել է , երբ այնքա՛ն թարմ են զիս այդպէս որակոզ քնքոյշ բառերուն յոյգերը :

Արկածի բերմամբ հանգրուան մը եղաւ Իլիմայի այդ կայանը , որմէ մեզ հեռացնելու , Կարին հասցնելու միջոցներուն մասին , եթէ կայ , սակայն մեր սնունդին վերաբերմամբ , ո՛չ ոք , ո՛չ մէկ նշան : Ժամը անցած է , ուրիշ ժամեր իրարու վրայ դիզուելու վրայ են : Մենք ամչկոտ ենք , մանաւանդ համր :

Ու երբ էրզրում տանոզ կառքին մէջն եմ , քառածի լուծքով , դոց տնակին մէջ թխմուած , առանց ոչ մէկ Իկոբի եւ Սերեօծայի գիւտ ըրած ըլլալու , ի՞նչ կ'ուզէք որ ըլլայ մեծագոյն իղձս , «սըչաս»ին նշանակութեան թափանցել :

Այդ ալ սակայն պիտի չուշանար տեղի տալ նոր եւ այժմէական հետաքրքրութեան մը : Կառայարկին առաջակողմի պղտիկ լուսամուտէն Կարնոյ ճամբան եւ շրջակայքը դիտել , որ կառավարներուն եւ ձիերուն անդադրում շարժող գլուխներուն արանքէն յոգնեցուցիչ էր , մանաւանդ անբաւարար :

Շատ չանցաւ , սկսած էի զինուորներուն ուշադրութիւնը հրաւիրել , ու երբ ձեռքի , գլխու նշաններովս հասկցան իրենց միջեւ տեղաւորուելու յամառ խնդրանքս , անոր հետեւեցան հնչեղ եւ արդէն

ընտանի դարձած՝ բարձրաձայն «խարաչօ» բառը, ձիերու գլուխները նոյնպէս վեր ցնցուեցան տրուած հաւանութիւնը շեշտելու :

Առաջին մեծ քաղաքը, բռնադատուած ճամբորդութեանս սկիզբին՝ Երզնկա, մտած էի հետիոտն, լեռներու կատարներէն վար, դիտելով անյագօրէն չըջապատի բնութիւնը իր տեսարաններով, լեռ, ձոր, դաշտ, հովիտ, անտառ, ու ապա պարտէզ ու այգի, վարէն հանդարտ սահող Եփրատի դժած ժապաւէնը գրեթէ նորութիւն էր, երբ վարժ էի մի'միայն լեռնային հեղեղներէն ու աղբիւրներէն փոշեխառն ջուր Ֆշչացնող առուներուն ու առուակներուն :

Իսկ այդ պահուն, տափարակ դաշտի մը մէջէն կը թաւալին մեր կառքին անիւները, եւ շուրջս կը տիրէ միապաղաղ եւ անհրապօր տարածութիւն մը, շատ հեռուն լեռներ, հողակոյտեր՝ չոր ու ցամաք :

Այլ, ձախ, կառավարներուն հետ մերթ ընդ մերթ փոխանակուած ժպիտներն են միայն ճանճրոյթ փարատող ընդմիջումները : Դէպի անոնց, ժպիտներուն հետ կը թոցնեմ «խարաչօ»ներ, եւ անոնց կը հետեւին ծիծաղ եւ խնդուք : Երբ կը փորձուիմ արտասանել «Երզնկա» բառը, ահա միաբերան պատասխան մը՝ «սըչաս» :

Մտմտուքի մէջ թաղուիլ անհրաժեշտ չէ, «գորութեամբ» կը հետեւի անոր նշանակութիւնը, ուրեմն «չուտով» Կարիմ կը հասնինք :

Յոյց կու տան ճամբուն մօտակայ հորիզոնին վրայ բարձրացող, զայն փակող հողակոյտի պար բռնած բլրակներուն շարքը, Կարնոյ բերդաքաղաքի պատնէշներն են, հինաւուրց :

Այդ պարիսպին մէջ, Իլիմէ, Պոլիս, եւ կամ նաեւ Երզնկա կոչուող դրան առջեւն ենք արդէն, երկու կողմերը զինուորական պահականոց, առջեւին մէյմէկ զինուոր, գետինը իրենց հրացանները ուս ըրած, փողերը ձախ ձեռքին մէջ :

Պահակախումբի զինուորներուն հետ հազիւ քանի մը խօսք, մուտքի պահն է : Անձկութիւն եւ հետաքրքրութիւն շունչս կը կղպեն ու կը քակեն : Եթէ ո՛չ ամենէն բազմամարդ, սակայն Արեւմտեան Հայաստանի ամենէն հոչակաւոր քաղաքը կը մտնեմ : Հի՛ն-հի՛ն դարերէ ի վեր զինուորական եւ առեւտրական ճամբաներու գլխաւոր կայան, երէկ տակաւին ազգային մշակոյթի կեդրոն, իր Սախասարեան վարժարանով անուանի, ու այժմ այնքա՛ն աւերներու ու փլուզումներուն մէջ, Հայոց նոր վերածնունդի մայր հանգրուան : Վերջակէտը մեր փորձութիւններուն ու թափառումներուն, եւ ուր կը փութանք թրթռացող յոյսերով փղձկած՝ դէպի նո՛ր ապագայ :

Ժխոր է «Հայոց Ծտապ»ի դռներուն առջեւ :

Հոն են թափուեր ամէն հորիզոններէ հաւաքուած մարդկային

էականեր, իրենց վիշտերով, յոյզերով եւ յոյսերով՝ միայն, անոնց ծանրութիւններուն տակ կը քած :

Կը խառնուինք անոնց : Նոր հասած, անհամարձակ, անվստահ շարժումներով կրկին սպասողական պահեր ունինք համբերիք : Բայց մեզ կը պաշարեն յանկարծ նորեր : Հարցումներ կը սկսին տեղալ : Ո՞րտեղացի էք : Ե՞րբ եկաք : Ուրկէ՞ կու գաք : Այսինչը կը ճանչնա՞ք : Ամերիկա մարդ ունի՞ք : Ամուսինդ ո՞ղջ է, ո՞ւր է : Դուն ի՞նչ ունիս, ո՞րք ես, անունդ ի՞նչ է :

Մեր անմիջական միւս հոգերով հետաքրքրուող չկայ :

Հարց տալ համարձակելու կարգը մե՛րն է ի վերջոյ, բոլորին հետ մտերմացած ենք կարծես, ամէն ինչով հաւասար մարդիկ ենք, մէկ ցեղէ, մէկ ազգէ, տառապանքէ բացի ոչինչ ունինք, բոլորովին հաւասար : Ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը, ո՞ւր պիտի զրկեն մեզ, գիշերը ո՞ւր պիտի անցընենք, փորերնիս կշտացնող պիտի ըլլա՞յ :

— Այս ի՞նչ օրի ինկանք : «Կոռպակոռպ» ըլլիս դուն Սուլթան «օյաճախ», աչքերդ բա՛ց սատկիս, հոգի չունենա՛ս, միտերդ չունե՛րը կրժեն :

— Ի՞նչ անհամբեր էք : Սպասեցէք «Կօմիտէի» անդամները գան :

— Գետի՛նն անցնին, «Կօմիտէ», անդամ :

— Սո՛ւս, հարսա՛, «էտէնկ» խօսքեր ընելու «լա՞խթն» է :

— Մեզքը իրենց վիզը, ես ի՞նչ գիտնամ «Կօմիտէն» ի՛նչ է :

Լուռ, տխրամած, հետաքրքրութիւնս ալ յոգնած, նոյնպէս անհամբեր եմ ելքի մը, բերանս ու ներսս չոր ու ցամաք, ահա քեզի նոր բառ մը կլլելիք :

Մէկ-քանի «սիսիլի փիսիլի» երկսեռ խումբ մը դէպի մեզ ձամբայ կը փնտռէ, տեսնենք ի՞նչ դուրս կու գայ :

«Կօմիտէն» է : Հիներու կողմէ հարցումներ ծայր կու տան, լաւագոյն է ըսել՝ բողոքներ :

Ռուսերէնը կը վերածուի հայերէնի, «Ձայն բազմաց ձայն Աստուծոյ», «սըչաս»ներուն կը յաջորդեն «էս բոպէին» բառերը, զայն թոցնողները անդադար կը շրջադային իրենց բեռը կշռելու մտամտութիւնները, լեզուներու խառնուրդ մը ցանկէ վերջ կը հեռանան : Անոնց աչքերը կշտացած կը թուին տեղաւորելիք բազմութենէն, մինչ ես նոր բառերուն նշանակութիւնները սկսած եմ ծամել, ու Երզնկայէն ի վեր սորվածներս որոճալ :

Անձանօթ փողոցներու մէջ կորսուելով, ներսը մութին մէջ երեւացող սանդուխի մը դրան առջեւ ենք, հրաւիրուած ենք այդ շէնքին մէջ մեր յարմար դատած ձեւով տեղաւորուիլ, նախորդ օրերէն հոն



Հաստատուողներուն հետ առանց վէճի, խաղաղ կարգադրութեամբ :  
Իսկ երբ պատահ մը հացի խօսք կը նետէ տարեց կիներէն մէկը՝

— Էդ հարցի մասին կարգադրութիւն կը լինի վաղը՝ առաւօ-  
տեան : Այժմ ձեզ հետ ունեցած կենսամթերքով բաւականացէք :

Ի՞նչ «կենսամթերք» : Կուշտն ի՞նչ կը հասկնայ անօթիին հալը»  
պիտի նետէր մեծ մայրիկս, որ առանց ինծի յայտնի ըլլալու քանի մը  
քայլ հեռու էր միայն :

Այս խօսքերը կը կրկնուին, կը «թարգմանուին» Կօմիտէին ըն-  
կերացող պարոնի մը կողմէ, կոկիկ հագուած, համակրելի եւ յաղթ,  
որ մեկնելէ առաջ, մեր իւրաքանչիւր խմբակի ծննդապայրերուն տե-  
ղեկանալէ յետոյ, ինքզինքը կը ներկայացնէ Ամերիկայէն եկող կա-  
մաւոր, ու Քղեցիներ չզանելով գլխահակ կը մեկնի, բայց չի մոռնար  
ամչկոտ, ցած ձայնով ըսել՝

— Հող մի՛ ընէք, վաղը ամէն բան կը ջանանք կարգադրել :

Այդ է Կարնոյ դաղթականութեան մէջ կարգապահութիւն պա-  
հել տալու ձեւը, որուն թափանցելը աւելի դժուար պիտի ըլլար ան-  
շուշտ :

Առաջին շանդիպումի տուն «Կօմիտէին» ոռոտախօս անդամի  
մը ներկայութիւնը անհրաժեշտ է իբր «հեղինակութիւն» :

Դեռ չենք տեղաւորուած, նորեկներու ժամանման լուրը տա-  
րածուած է թաղին մէջ : Ներս կը խուժէ հարցուփորձի ծարաւ բաղ-  
մութիւն մը :

— Այս ի՞նչ է, «չունը տէրը չի ճանչնար» :

Շատ մտերմիկ խօսք մը, եւ ո՛վ դարմանք, զայն արտասանո-  
ղը նոյն անձն է՝ Անաս, որ նոյնպէս իր թոռները փնտռելու ելեր է :

Իր հետն է Պետրոս : Ամէն դի տարածուող թեւերը մէյմէկ գլուխ  
կը ծրարեն, որմէ դուրս կը փախչին համբոյրի բողբոջներ, լացի ձայ-  
ներ :

Մէկ-քանի դուռ անդին են իրենք, քովերնին պարապ սենեակ  
մը կայ, վազն ի վազ, «աղերնիս չոր, բեռերնիս թեթեւ», հոն ենք :  
Հաղիւ կը բաւէ «Երիցադրակցիներու» խումբիս, որոնցմէ անբաժան  
ինծի կ'ուզէ միանալ նաեւ Պետրոս, որուն լացին ակամայ տեղի կու  
տայ խեղճ քոյրիկս :

— Մեռնի՛մ զօրութեանը, փա՛ռք Տիրոջ, քեզ հոս տեսնելու ար-  
ժանացուց :

Անան, հօրեղբայրս ընտանեօք յաջորդ օրն իսկ դէպի ներսերը՝  
Ալէքսանդրապօլ մեկնող կարաւանին մաս կը կազմեն, ու ի զուր կը  
փնտռեմ զարմիկներս : Հարսիկիս գիրկը կայ մի՛այն Վարսենիկը,  
մեր չքնաղ Հագարիի, հոն ծնած մեր գերդաստանին վերջին վարդը,

մինչ շարաթ մը հազիւ առաջ, նոյն քաղաքի որբանոցներուն մէջ ճամբուած էին իր եղբայրները՝ Արտաշէս, Աշոտ, Անդրանիկ :

— Պետրոս չուզեց մեկնել, յարեց Անան, մտածումներս կուսհելով, «երկու ոտքերը մէկ» դետին կը ծեծէր, կ'աղաչէր, կը պաղատէր, որ քեզի սպասենք: Ու դա՛րձեալ սկսաւ իմ բարի Անաս, իր անէծքներուն նաեւ արցունք ու աղօթք շաղել:

— Աղուընիկներս ցանած՝ ես ո՞ւր երթամ, դժո՛խքն է իմ տեղս, կը կրկնէր խեղճ մեծ մայրիկս, ու երանի կու տար իր գլխաւորին, որ այս օրերը շտեալ:

«Բարի մարդ էր» երբ ըսաւ, ջրամբարիս ամբարտակները փուլ եկան, նետուեցայ կուրծքին վրայ, բաժնուելու պահն էր: Երկու թեւերէս բռնած կը քաշէին, Պետրոսն ու իր վարդաւանջ բոյրիկը, մեր քոյրիկը, որմէ չէինք ուզեր բաժնուիլ:

Կարնոյ եռուզեռը պիտի մեղմացնէր նաեւ այս երկրորդ բաժանման տառապանքը, ինձմէ փոքրիկի մը ներկայութիւնը կրկին պատասխանատուութեան կը հրաւիրէր զիս, ու քոյրիկիս ներկայութիւնը անստգիւտ սպեղանին էր իմ բոլոր ցաւերուս:

Յաջորդող օրերուս, գինովի մը պէս անհող, սկսայ թափառիլ: Ի հարկէ յարգելով խոստումս, փութանակի վերադարձնելով: Պէտք էր հեռանայի, նոր փորձանքի դուռ չբանալ, չկորսուիլ: Անյազ էր դիտելու, լսելու, միջավայրը ըմբռնելու կարօտս: Զուր տեղը չէր, որ մանկութեանս կեղծ անուններէն էր «Ինչո՞ւն»: Նոր եւ մեծ քաղաք, խայտաբղէտ բազմութիւն, գինուոր, սպայ, գաղթականութիւն, Ռուսահայ, Տաճկահայ, կամաւորներ ամէն ծագէ:

Քաղաքի կէսէն աւելի թաղերուն մէջ կամաւոր լուծիւն, անշարժութիւն, ահազու կերպարանք ներշնչող: Արդիլեալ դօտի հայ պատանիներու համար, նաեւ օտար գինեալ ոյժերէն անտեսուած: Հոն, այդ տուններուն մէջ, անշնչացած էին նոյնիսկ ծինելոյցները եւ թուրքերը, ո՛վ ինչ գիտնայ, ի՛նչ մեծ յամառութեամբ կը ծածկէին, որպէսզի իրենց պարտութեան դառն սո՛ւգն անգամ անոնցմէ դուրս չժայթքի, ու կը փորձէին մանաւանդ, մանաւանդ խուլ մնալ, անգամ այն խրոխտ ոտնահարութեան, յաղթականներուն կողմէ իրենց քաղաքի այնքան հազուադիւտ սալայատակներուն տրուած:

Կեանքը սակայն հետզհետէ կ'եռար մնացեալ թաղամասերուն մէջ, նոյնպէս կղզիացած՝ օրըստօրէ աւելի հայկական:

Պետրոսին հետ ձեռք-ձեռքի, քոյրիկներուն ընկերակցութեամբ պտոյտներէն փախուստ տալ կը սկսիմ: Հանրակացարաններու թաղէն դուրս ուշադրութիւնս գրաւող կեդրոններն են եկեղեցին, Գաղթականաց Շտապը, Սանասարեանը, մանաւանդ լաւագոյն հրապարակներէն մէկուն մէջ նոր մկրտուած գեղեցիկ շէնքը՝ Չաշկա Չայ:

Ամենուն բերանն էր այս անունը, կէսը ծանօթ: Բնականաբար չպիտի համարձակէի այդ շէնքէն ներս մտնել, ոչ մէկ պատճառ ունէի, ո՛չ «գաւաթ մը թէյ» ինքզինքիս վճարելու կարող, ո՛չ իսկ փափաք, ու իմ արտաքինիս բերմամբ ետ մղուելու նուաստացում մը օրուան հոգեբուս վրայ դիզել խելօքութիւն պիտի չըլլար:

Եռուզեան ու յարափոփոխ տեսարանն էր զիս քաշողը հոն: Կառքերով ժամանող խայտաբղէտ, կոկիկ ու սեղմ՝ համազգեստներով սպաներուն ելումուտը: Պաճուճաւոր ու լայնածաւալ, աշտարակաձեւ դլխարկներով, դլուխ, դէմք ու դլխարկ ամբողջովին սեւ, լայն «թանթեւ» շղարչներով փաթթուած, երեսնին բաց, ոմանց նոյնիսկ կուրծքերը մերկ, մուշտակածածկ, բարձր կրունկով ու արծաթապատ կօշիկներով կիներու կառքերէն վայրէջքի եւ վերելքի արարողութիւններն էին տեսարժան նորութիւնները, մինչ այդ ինձ բոլորովին անծանօթ:

Ժամեր հոն թափառելէ յետոյ, վերադարձիս քոյրիկներու չէի պատմեր տեսածներս, ինչքան ալ պնդէին, կ'ամ չնայի, կը վախնայի որ զիս ծագրեն, «ձեռք առնեն», կամ ի հարկին կշտամբեն: Պիտի չուզեն հաւատալ բուն շարժառիթին, որ դիտելու, ուսումնասիրելու անսահման իրձն էր, նոյնիսկ ա՛յն, որ այդ կիներուն տրուած ծիծաղելի մեծարանքներուն առթած գուարճութիւնն էր, ու անոնց ենթակայ եղողներուն ցուցադրած ծոկտանքները:

Մինչ այդ տեսած եւ սպրած միջավայրէս տարբեր ծամածռութիւններ տեղի կ'ունենային, գորս ամէն օր քիչ մը աւելի չափազանցուած կը գտնէի:

Նոր աշխարհի մը մէջ էի, կեղրոնն էր՝ կինը, խնամքով հաղուած-չքուած ու զարդարուած: Անոնց հանդիպող ամէն տղամարդ, զինուորական կամ քաղաքացի, Չաչկա Չայի մուտքի կողքերուն յատկապէս սպասողներ մանաւանդ, կը շտապէին անոնց առջեւ ծռիլ, ըզմայլանքով կը սպասէին անոնց աջ ձեռքերը մերկանալուն, ուր կը դէտեղէին իրենց շրթները՝ քիչ մը աւելի խոնարհելով:

Ասոնք իրապէս նորութիւններ էին, չափազանցուած, բայց ի սկզբան հաճելի, ու շարունակելով հետազօտութիւններս՝ շուտով ինքնիրենս պիտի տայի պատասխան մը.

— Ա՛յս է Եւրոպան:

Անգրազ, հետեւաբար անգաւակ կիներ ու անոնց շուրջ թաւալող միմոսներ:

Այս խիստ դատաստանը կազմելու արդարացուցիչ պատճառները արդարեւ չէին պակսեր, ի տես համատարած թշուառութեանց, պատերազմի աւերներուն, եւ ինձ տրուած քրիստոնէական դատախարակութեան:

Զիրար հակասող բուռն տեսարաններ կը պարզուէին մատղաջ աչքերուս առջեւ: Հարստութիւն, արտակարգ ճոխութիւն, ընկերային դասակարգութեան խոր տարբերութիւններ իրենց պերճանքը կը ցուցադրէին, երբ միւս կողմէն ոչ շատ հեռու աղքատութիւնն ու թրջուատութիւնն էր, որ իր վէրքերը բացած սպեղանի կը հայցէր:

Նոր տեսակի բռնութիւններ, ընկերային խորթ երեւոյթներ:

Անոնց ճնշող տպաւորութիւններէն զերծ մնալու համոզեցուցիչ տուեալներ կը փնտռէի: Ի զուր: Հազիւ հասկցած էի երէկը: Երբ բոլոր անարդարութիւններուն պատճառը կը բղխէր տիրակալ ու բռնակալ, նաեւ այլակրօն Թուրքին, լեռնական անօթի Քիւրտին, եւ անոնց դրացի հպատակ Հայուն փոխյարարերութիւններէն, որոնցմէ ազդու վին ազատուելու փորձերէն ձախողած, գոնէ իբրեւ մարդ փրկուած ըլլալու համոզումը կ'ուզէի խարսխել մէջս:

Դիմացս ցցուող, քարէ երեք աստիճանով բարձր Զաշկա Զայի բաց դրան եւ իմ միջեւ անտեսանելի, եւ սակայն անանցանելի պատնէջ մը գոյութիւն ունէր:

Միմիայն ի՞նձ համար: Աւա՛ղ: Ո՛չ:

Իրաւ է, այդ պահուն, հոն մտնելու յատուկ պատճառ մը չունէի, վրաս-դլուխս աւելի քան համեստ էր, ու ասոր գիտակցութիւնն ունէի, ու զրպանս բոլորովին դատարկ էր: Սակայն ահա ժամեր տեւող, գրեթէ ամէնօրեայ քննութիւններուս ընթացքին, ո՛չ մէկ գիտնոր համարձակած էր ներս անցնիլ, հետիոտն ներկայացող ո՛չ մէկ անհատ կամ զոյգ նմանապէս, ու անոր դրան առաջ յամեցող շատ կողիկ հագուած տարեց մարդիկ կոպտորէն կը հրաւիրուէին հեռանալ:

Երկար ատեն, անկիւնաքարի մը վրայ նստած դիտելս աննըժմար անցած չէր, վազնիվազ ինձ մօտեցող զինուոր մը թեւէս քաշելով, լուռ, զիս կը հրէր հրապարակէն դուրս, հոն խուժող կառքի մը ձիերուն առջեւ:

Դէպի տուն քայլերուս մէջ, կէս արթուն, խոհերս կը վերադառնային այդ կառքի նստարաններէն արձակուող զուարթ քրքիջներուն:

Նախա՞նձ, չարութի՞ւն: Բնաւ: Ես այդ պահուն ուրիշ հոգեր ունէի: Երէկի եւ այսօրուան բաղդատութիւնը, զոր կ'ուզէի չսփեղ մեր կորուստներուն գնով:

Հիմա որ յանգած կը կարծէի վերջակէտի մը, ուր, նոր կեանք մը պիտի սկսէր, յուսալքութեան, բարոյալքման զգացումները, չէզոքութիւն յայտարարած, ինձմէ հեռու սպասումի մէջ էին:

Առաւօտեան ցօղերը թօթուելով նորածագ արեւուն ի տես, առաջին անգամ բացուող վարդի մը թերթիկներուն նման, տակաւին

իմ հողեկան ծալքերս նոյնպէս զերծ էին օտարոտի միջամտութիւններէ :

Ատելութի՞ւն : Տակաւին անծանօթ բառ մը :

Քրիստոնէական սիրոյ վարդապետութենէն , իրաւ է , դուրս չպրտած էի անարժան էակ մը , թուրք մարզն ու իր լակո՛ւտը միմի-  
այն , բայց ո՛չ անոնց կիներն ու մայրերը , որոնց անգթութիւնը չէի  
ճանչցած , եւ որոնք կը շարունակէի յարգել հետեւելով հայ «Ֆէտա-  
յու» պատգամին , երգով յաւերժացած :

Ու ես անոնցմէ ո՛չ մէկը տեսնելու պատեհութիւնը ունեցած  
էի , եթէ զանց առնեմ մերթ ընդ մերթ , երախայի մը ձեռքը բռնած ,  
գլանաձեւ արարածներու ուրուականային անցքը փողոցի մը անկիւ-  
նէն :

Մինչդեռ այլուր , սնած ու ապրած միջավայրիս մէջ , յարաբե-  
րարար բնականոն , ու ապա դաժան պարագաներու բերմամբ նոյնիսկ  
մեր դրացի քիւրտ ընտանիքներու սեղմ շրջապատին մէջ , հայ եւ քիւրտ  
կնոջ հանդէպ որդիական , յերբայրական եւ ընտանեան միահամուռ սէր  
ու հողածութիւն տեսած էի : Ո՛հ , որքա՛ն , ինչքա՛ն կը սիրէի մեծ մայ-  
րիկներս , հօրեղբօրս եւ համայն ազգականներուս տանտիկիները :  
Մեծ էր նաեւ յարգանքս ու ակնածանքս միւս բոլոր կանանց հանդէպ՝  
ինչպէս էին նաեւ վերաբերմունքներս դասընկերներուս եւ զիւրի մեծ  
ու պզտիկ տղամարդկանց :

Այժմ , կարնոյ մէջ , վայելուչ , պճնազարդուած այս կիներուն  
մէջ , ես իրաւամբ կը հաստատէի որ անոնք իմ քոյրիկներէս ու իրենց  
նմաններէն աւելի զեղեցիկ իսկ չեն , եւ սակայն ամէնուրեք անոնց  
հանդիպող տղամարդիկ , այդ օրերուն առաւելաբար Եւրոպաներէն  
կամաւոր եկող հայ երիտասարդներ , ո՛չ իրան կը ծռեն , ո՛չ կը ծռ-  
մուկին , եւ ո՛չ ալ անոնց բաց ձեռքերը խլել ու համբուրելու աճապա-  
րանք ցոյց կու տան :

Նման արտառոց խոհեր , թեւանցուկ , զիս իրենց մէջն առած ,  
ամէն օր , հանրակացարաններու թաղէն կը տարուբերին առանց եզ-  
րակացութեան :

Ամէնօրեայ հաւաքական ուխտատեղին էր մանաւանդ «Հայոց  
Ծտապ»ը : Գաղթականական «Կոմիտէն» : Հոն կու դային արձա-  
նազրուիլ նորեկները : «Կէօլ Պաշի» շուկային մօտակայ շէնք մը խո-  
չոր բակով : Հոն , եւ հոնկէ պիտի կերակրուէին անոնք ու տեղաու-  
րուէին , մինչեւ սեփական գործ եւ բնակարան ունենային :

Աղէտի մեծութեան չափով հիւրընկալ օգնութիւն :

Ռուս բանակներուն , Արեւմտեան Հայաստանի հողերուն մէջ  
յառաջացման օրերէ՛ն մանաւանդ , հոն տեղի ունեցած անբեւեակայե-  
լի վայրագութիւններուն ահազանգի կոչերը անարձագանգ չէին մնա-

ցեր, ու եղբայրական օգնութիւնը ներկայ էր ռազմաճակատի երկայնքին, մատակարար ձեռքերով:

1916-ի ամառնային օրերուն Կարիւնը անոնց գլխաւոր կեդրոնն էր, երբ վերջ գտած էր արդէն ազգային երազներէն վերջինը, Հայ կամաւորական գունդերու ցրուումով, զրաւուած վայրերուն մէջ ռուսական հովանաւորութեամբ, Հայ ինքնավար վարչակարգ մը ունենալու ակնկալութիւնը:

Հայ ազգի մնացորդացին կը մնար միակ ելք մը, անմիջական՝ անհատներու փրկութեան գործը:

Արդարեւ այդ գործին լծուած էր Համայն ազգը, այլեւայլ կազմակերպութիւններով, որոնցմէ Կարնոյ մէջ գործօն դեր ունէր Մոսկուայի Հայկական Կոմիտէն, որ ունէր ընդունելութեան իր սեփական կայանը, հիւանդանոց մը, եւ որբանոց-դպրոց:

Քաղաքներու Միութեան Կոմիտէ: Ռուսական իշխանութեանց կողմէ Հաստատուած, որ ունէր Հայ վարիչ մը Կարնոյ մէջ, յանձին Տիգրան Աղամալեանի, երբեմնի Սանասարեանի ուսուցիչներէն:

Պրքատրն Եղբայրներու Որբանոց-Դպրոցը: Անգլիացի, Հայոց տառապանքին ծանօթ եղբայրներու նիւթական օժանդակութեամբ: Այդ դպրոցին վարիչն էր Լեւոն Լանիս, որուն կ'օգնէին Տրապիզոնցի Արապեան Քոյրերը, եւ ուր կ'ուսուցանէր Վահան Թոթովենց:

Իրրեւ ազգային վարժարան գոյութիւն ունէր դպրոց մը, զոր կը վարէին Առաջնորդարանը, Գաղթականաց Կոմիտէն ու Հայրենակցականները. տնօրէն՝ Փրոֆ. Լիւլէնեան, խորբերդցի:

Փրկութեան գործին նուիրուած այս կազմակերպութիւններուն նիւթապէս կ'օժանդակէր «Կովկասահայ Բարեկործական Միութիւն»ը, որուն քննիչներէն էր հանդատեան կոչուած գնդապետ Տէր Յակոբեան անունով պատկառելի ծերունի մը, որ ղինուորական համազգեստով, իրրեւ նախկին երդուեալ սպայ, ազատ շրջագայելու բացառիկ իրաւունքն ունէր:

Հայ փախստականներուն օժանդակելու յատուկ «Փոնտ» մը հաստատած էր ցարի ազլիկներէն Թաթիանա Իշխանուհին:

Եւ սակայն լացի, տրտունջի, բողոքի, եւ ամէն ակնկալութիւններու գուռը, ժամադրաւայրը, ընդհանուրի հասցէն, կը մնար «Հայոց Ծտապը», նիւթեղէն եւ հոգեղէն նպաստներ բաշխող, վերապրող Հայուն նախախնամութիւնը:

Հո՛ն էր կորիզը, որուն շուրջ կը թաւալէր հիւլէի վերածուած Հայ ազգը, արչալոյսէն վերջալոյս, նո՛յն խտութեամբ, խելայեղ շարժումի մը ծիրին կպած, անյուսալի հանդիպումներու անձնատուր, նո՛յն անտարբերութեամբ լսելու ուրախ եւ տխուր լուրեր:

Հեռաւոր Ամերիկաներէն յանկարծ հոն կը յայտնուէր հարա-

զատ մը, որ կամաւորական գունդերու ցրուումէն յետոյ, ընդմիշտ փորձած էր ժա՛մ առաջ հոն նետել ինքզինքը: Ազգական կամ համա- գիւղացի՝ այդ օրերուն եղբօր մը համարժէք էր իր ներկայութիւնը: Միթէ՞ հրաշքի նման բան չէր նամակները բաշխող գործակատարէն իր անունը լսել, այո՛, իր անունը, բարձրաձայն, քանի մը անգամ կրկնուող, որ կու գար ճամբան յարդարելու խանդավառ յոյսերու, որոնց պիտի հետեւէին ուրիշներ, ծանր կշռոյթով, ո՛հ, ինչքա՛ն սփոփարար:

Նուիրեալ անձինք էին «Հայոց Շտապին» ղեկավարները: Բա- րի կամեցողութեամբ հարուստ, անփորձ երիտասարդներ, որոնցմէ քիչե՛րը պիտի կրնային տոկալ անսահման վշտերով օրօրուն դան- գուածի մը արտառոց պահանջներուն դէմ պատնէշներ ցցել:

Արեւելեան Հայաստանի ազգային եւ կուսակցական գործիչ- ներու հովանիին ներքեւ կը գործէին նախկին կամաւորներ, նաև հատ- ընտիր արիւնիներ ու օրինորդներ: Պիտի ուզէինք զանոնք մէկիկ-մէ- կիկ ճանչցած ըլլալ, որպէսզի իրենց անուննե՛րը միմիայն յիշատա- կելով, անոնց ազգանուէր գոհողութիւնները վարձատրած ըլլալ:

Գլուխս քրոջս թեւերուն մէջն է, ուշացած եմ կրկին:

— Նորէ՞ն «Ձաշկա Ձայ»ի հրապարակը կը թափառէիր:

— Ո՛չ, «Գաւաթ մը Թէյ»ի: Մեր սեւ բալին գոյնն ունին այդ թէյերը, ու որքա՛ն շաքար կը դնեն մէջը, ու ինչքա՛ն տաքուկ են:

— Փչելո՛վ խմէ, բերանդ չայրի: Ու զիս նոր գտածի պէս կը սեղմէ:

Ներելի չէ մոռացութեան տալ Հայուն մշտնջենական ժամա- գրովայրը:

Քովի, անոր կից մատուռին դո՛ւռը միայն բաց է: Չեմ յիշեր թէ ուրիշ լուսամուտ ունի՞: Մուտք-ելք գործողներուն գլուխներուն վրայէն գունաւոր ամպի հաստ շերտ մը յարատեւօրէն կը շողիանայ: Ներսը այրուող մոմերուն ծածանող բոցերուն հողիներն են: Դուրս կը թռչին, դէպի երկինք, ժամ առաջ հոն հասցնելու համար ուխտաւոր- ներուն հեկեկանքն ու աղերսը:

Ամէն օր կ'անցնիմ Կարնոյ եկեղեցւոյ հրապարակէն: Ձաշկա Ձայը լքած եմ գզուանքով եւ զայրոյթով, ի սպառ լքած:

Չորս սիւներ կան մուտքին, փլատակները անհետացած դան- գակատան մը: Բարձր, մերկ եւ անհրապոյր պատերով, գրեթէ քա- ուակուսի հսկայ շինութեան մը առջեւն եմ, որուն մէջ առասպելական հարստութիւն մը կայ զիգուած, կ'ըսեն: 1840-էն 1844 տարիներուն մէջ կառուցուած Կարնոյ Ս. Աստուածածին Եկեղեցին է: 1915-ի Յու- նիսի սկիզբէն փակ են անոր դռները, ուր ամփոփուած են Կարնոյ հայ վաճառատուներէն փոխադրուած ապրանքները: Անոնց տէրերը «Ժա-

մանակաւոր» կերպով միայն տեղահանուած են, «իրե՛նց իսկ ապահովութեան» համար, ու շուտով «պիտի վերադառնան»:

Շատ աւելի հինաւորց է «Միաբան Ս. Աստուածածնայ Տաճարը»: 600 թուականներու կառոյց, հաստաբեստ պատեր, սրածայր տանիք ունի:

1916-ի ձմրան, Կարնոյ գրաւման օրերէն ի վեր, այդ մեակ փոքր սրբավայրին մէ՛ջ է որ տեղի կ'ունենան Հայոց կրօնական բոլոր ծիսակատարութիւնները, որուն մէջ հազի՛ւ քահանայ մը ու իր դըպիրները տեղ ունին: Ժողովուրդը, ամէն օր քիչ մը աւելի խիտ, կը հետեւի դուրսէն:

Շատ անգամ ցոյցեր տեղի կ'ունենան եկեղեցին բանալու ի նըպաստ, բոլորն ալ մեզի նման անհամբեր են տեսնելու «հայկական մեծադոյն եկեղեցին», նաեւ հետաքրքիր են ներսի ապրանքները մարմնաւոր աջօք տեսնելու եւ զանոնք ժառանգելու համար:

Անգամ մը եւս յուսախար ենք: Գուռը դոց է, եւ «բացում»ի ո՛չ մէկ յայտարարութիւն, ինչպէս խոստացուած է:

Իրբեւ պտոյյա, քաղաքին արտօնեալ կամ ապահով վայրերու չըջանը ըրած էինք: Քարաչէն քաղաք մըն է Կարիքը, ծովէն 2050 մեդր բարձրութեան վրայ, բաւական հեռուներէն լեռներով չըջապատուած, մօտակայ ո՛չ մէկ գետակ, կանանչութեան եւ ծառերու դաւլի պակաս, տեղ-տեղ աննշան ծառաստաններ, գրեթէ մի՛միայն Հայոց թաղերուն եւ Սանաարեան դպրոցի չըջապատին մէջ:

Քաղաքին կեդրոնն է միջնաբերդը՝ հնադոյն Կարիքը՝ ամբողջովին թուրք տուներով չըջապատուած: Հին Կարիքը, անոր բոլոր-տիքը՝ նաեւ պարսպապատ, նո՛յնպէս թրջաբնակ է: Հայկական է առաւելապէս նոր Կարիքը, տասնեակ մը քարաչէն թաղեր, օժտուած քարաչէն բնակարաններով, երկյարկանի, եւ սաստիկ ցուրտերուն դէմ պաշտպանութեան յարմարութիւններով:

— Գոնէ Եփրատը մօտիկ ըլլար, կ'ըսեմ Պետրոսին, եկեղեցւոյ սանդխաքարին վրայ պառկած: Լեռ, գետ, բոլորն ալ գրեթէ տասնեակ մը քիլոմեդր հեռու են:

Ձեռքիս ուժեղ սեղմում մը:

Պետրոս կը յայտնէ իր յողնած ըլլալը: Ժամերով լուռ, ձեռքս բռնած, շուքիս պէս հետեւեր է թափառումներուս, որոնք զինքը բնաւ չեն հետաքրքրեր: Միակ սփոփանքը ներկայութիւնս է:

Այդպէս մեկնած էինք տասնըութ ամիսներ առաջ, միասին, մեր ընտանիքի անդամներէն բաժնուած, ու այնուհետեւ այդ ներկայութիւնն էր իր ապահովութեան գրաւականը՝ ձեռքս իրենին մէջ:

Օրեր յետոյ, մեր երկուքին «հիւանդութենէն» յետոյ, վերըստին Կարնոյ փողոցներուն մէջն ենք:



— Նորէն նո՛յն տեղերուն մէջն ենք, ի՞նչ է փնտռածդ :

Պատասխան չունիմ :

— Վարդանոյշ քոյրիկը ըսաւ որ շուտ տուն դառնանք, դուն հիւանդութենէ նոր ելած ես :

— Հասաւ դո՞ւն : Դուն ալ հիւանդ չէի՞ր :

Կուրծքի թեթեւ պաղառութիւն մը, գլխու ցաւ : Այտերէս ու ճակոտէս կրակ կը շողայ : Պառկած եմ եռյարկանի տան մը առաջին յարկի սենեակի մը անկիւնը : Անոր մշտատեւ բաց դռներէն ու սանդուխներէն վեր-վար կանչ, աղմուկ, այցելուներ անպակաս են՝ օճախին ու հիւանդին հուրը արծարծող :

Գլխու մէջ կ'արձագանգեն զիրար յաջորդողներուն ոտնաձայները, անոնց արտասանած բառերը՝ մի՛շտ նոյնը :

— Ո՞ր տեղացի էք : Ե՞րբ եկաք : Այսինչը կը ճանչնա՞ք :

Թերեւս ալ անխօս են, կամ ոչինչ կ'արտասանեն : Կան պաշտօնական այցելութիւններ՝ խմբական : Ազգային վերին մարմնոյ կողմէ քննիչներ :

Գլխու վերեւ է ահա «Առողջապահական Մարմինը», անոր մէջ բժշկական ուսանողուհին, դունտ ու կլոր, յարաշարժ, Օրիորդ Տիմա Իստամանովան :

Ա՛չք բանալու կարողութիւն չեմ գգար, ուրախ-զուարթ ներս խուժող խումբը վտարելու ոյժը կը պակսի, մա՛նաւանդ, երբ յա՛նկարձ լուսթիւն մը կը տիրէ, եւ փոփոսութեն վախ մը կը ծնի մէջս : Մանաւանդ այդ գնալիկ, սիրուն դէմքով բժշկուհին դուրս կ'ուզեմ վռնտել իր ոռուներէն բառերուն հետ, որոնցմէ մէկուն «համաճարակ» թարգմանուիլը ահաբեկեց խեղճ քոյրիկս :

Թաշկինակը ափին, անոր դէմքէն վար իջնող թեւը բռնած, իրանս կը ցցեմ, ու տիրական շեշտով՝

— Ո՞վ է «համաճարակ» բառն արտասանողը :

Մասնակի խօսակցութիւնները կը դադրին, եկուորները դիմացըս շարք բռնած՝ կ'ապշին : Ես ո՛չ :

— Ես այսպիսի անհանդատութիւններ շատ անգամ ունեցած եմ մեր գիւղը՝ փոքր տարիքէս սկսած : Ու երբ մօտակայ սրբալայրի սառ ջրերուն մէջ երեք անգամ խոթէին-հանէին, յաջորդ օրը ոտքի էի ,

— Եթէ չմեռնէիր :

Երբ իմ խօսքերը կը թարգմանուէին, Օրիորդ Տիմա, որ հայերէն կենդանի դպրոց մը յաճախելը սկսած էր Կարիմ Ժամանած օրէն սկսեալ, կը դադրի քրքջալէ, ու լուրջ դէմք մը առնելով՝ ինքն ալ կը կրկնէ .

— Եթէ չմեռնէիր :



ՊԵՏՐՈՍ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Փարիզ, 1924

Սէզ ամուլի միակ ողջ մնացած բոռնիկը,

մեռած Փարիզ 1924ին :

— Եթէ չէք հաւատար, ուրեմն տակաւին բժիշկ չէ'ք :

«Համաճարակ» բառին դէմ ցցուող բողոքներէն պարտուած,  
«Առողջապահական Մարմինը» բաց դռնէն կը նահանջէ, հրահանդե-  
լով որ հիւանդը կարելի եղածին չափով մեկուսացած պահուի, մին-  
չեւ յաջորդ առաւօտ իրենց այցելութեան պահը եւ տալիք որոշումը :

Անքուն գիշերը ուշ կը լուսնայ: Միսմինակ, մութնուլուսուն, Տիմա Խստամանովան, որ պիտի մնայ յետոյ մեր տան մշտնջենական բարեկամուհին, զիս կը գտնէր ժպտադէմ: Մօտեցաւ, ձեռքըս առնելէ յետոյ զննեց բազկերակս, ու քովս պառկող Պետրոսը ցոյց տուաւ:

— Ձեր եղբա՞յրն է, ի՞նչ ունի:

— «Համաճարա՛կ», պատասխանեցի ամենայն լրջութեամբ:

— Իսկ դո՞ւ, «Ժուլի՛կ», էլի պաղ ջրի մէջ լողացա՞ր:

— Ո՛չ, պատասխանեցի, «Համաճարակ»ի մէջ: Ու «Ժուլի՛կ» բառին բացատրութիւնը առնելով՝ հաշտուեցանք:

Պետրոս, իրապէս «Համաճարակ» բառին թողած ազդեցութենէն վարակուած էր, երբ «առողջապահ»ներու մեկնելէն վերջ քովնոր սենեակներուն մէջ լսած էր ահագնեցիկ մեկնութիւններ, նո՛յնիսկ բողբոջի խօսքեր, թէ ինչո՞ւ արդէ՛ն իսկ «կոբուտեան դատապարտուած» տղեկ մը կայանէն չեն հեռացուցած:

Ամբողջ գիշերը, գետին փռուած լաթերու վրայ, Վարդանոյշին եւ իմ միջեւ պառկած, անվերջ թփոտալէն յետոյ առաւօտեան դէմ հազի՛ւ քուն մտած էր, երբ մեր խօսակցութիւնները տեղի կ'ունենային Օր. բժշկուհիին հետ:

Անոր մեկնելէն յետոյ միայն, ընդոստ արթննալով, երբ հաստատեց որ իր քովն եմ, ինքզինքը հիւանդ յայտարարեց, եւ լալաղին կը պահանջէր որ բժիշկ կանչուի:

Կը մերժէր առաւօտեան համեստ չոր «պարսիմատը» թէյին մէջ թաթխել: Միխիթարանք, խրատ, բժիշկ գտնելու անկարելիութիւն, զինքը յուսադրող փաղաքշանք ու խօսք անդոր եղան:

— Լա՛ւ, հիմա թէ՛յոք խմէ, կէսօրէն վերջ բժշկուհին պիտի դայ:

— Ան բժիշկ չէ, ես աղջիկ բժիշկ չեմ ուզեր:

Ճարահատ՝ Վարդանոյշ մեկնած էր բժիշկ փնտռելու, ու շատ չանցած վերադարձաւ:

Իրեն կ'ընկերանար վայելուչ, խիստ լաւ հազուած յաղթանդամ մէկը, որ իբր բժիշկ մեզի ներկայացուելէն եւ մէկ-քանի խօսքեր փոխանակելէ յետոյ, Պետրոսին բազկերակը զննեց, լեզուն դուրս քաշել տուաւ, մէկ կոճակին վրայ ականջը քանի մը տեղ պտըտցուց, դրպանէն թղթի կտոր մը հանելով՝ վրան քանի մը բառեր շարեց, ու քրօջա տուաւ:

— Ծատ ծանր չէ, այս փոշիէ՛ն առէք Ծտապի դեղարանէն, եւ օրը երեք անգամ կէս դաւաթ ջրի մէջ հալեցնելով խմցուցէք, ո՛չ համ ունի, եւ ո՛չ ալ հոտ:

Համակրելի բժիշկը ինքզինքը ծանօթացուց «հայ կամաւորա-

կան դռնդի բժիշկ» , այդ օրերուն պատշաճ խօսքերու փոխանակութենէ յետոյ յայտնեց , որ ինքը գաղթական եւ որք խնամելու համար որեւէ վարձատրութեան չ'սպասեր :

Պետրոս «պաքսիմաթը» շարձարանքով կուլ տալը եւ թէյը խըմելը հազի'ւ վերջացուցած էր , երբ Վարդանոյշ կը մօտենար , գաւաթ մը կիսով լի ջուրը կը խառնէր դգալով մը :

Յաջորդ օր երկուքս ալ ոտքի էինք : Մէկ-քանի անգամ կուլ տուած ջուրին մէջ ո'չ մէկ փոշի խառնուած էր : Վարդանոյշ Շտապի ճամբուն վրայ հանդիպած կամաւորին բժիշկի վկայական տուած էր , կարճ դասախօսութեամբ մը բաւականանալով :

Օրիորդ Տինա նոյնպէս տակաւին վկայեալ բժշկուհի չէր , այլ ուսանող : Հայ բժիշկ Խստամանօփի եւ բժիշկ Յովհ. Զարիէֆի քրոջ առաջնեկ դակալը , իր ուսումը չաւարտած , եկած էր իր դժբախտ ազգակիցներուն ծառայելու : Համակ նուիրում էր , անխոնջ : Իր կոչումին կցած էր նաեւ բարոյական հսկողութեան դժուարին առաքելութիւն մը : Զօրակայանի վերածուած Արեւմտեան Հայաստանի ցանցառ կեդրոններուն մէջ , անպաշտպան հայ էիներով լեցուն բաց բնակարաններուն շուրջ կը վխտային ե'ւ զինուորներ , ե'ւ ամէն տեսակի բախտախնդիրներ , որոնք միջոցներու առջեւ ո'չ մէկ խորութիւն կը դնէին , հրապոյր , կաշառք , բռնութիւն , կնոջական շնորհներուն տիրանալու համար :

Օրիորդ Խստամանօվա , համախոհ «նախկին» կամաւորներու հետ կը կատարէր նաեւ զիշերային շրջագայութիւններ : Եթէ բաւարար չէր ուսներէնը , որ մինչ այդ ատեն իր մայրենի լեզուն էր , ի հարկին չէր վարաներ իր կողերուն ամբացած եւ զինքը աւելի կ'ընդունող զոյգ ատրճանակներուն սպառնալիքը թափել , անօրինակ յանդգնութեամբ , իրեն ընկերացողներուն հիացում առթելով :

Անկումի եւ մարդկային թշուառութեան այդ օրերուն , ո'հ , ինչքա՛ն մխիթարական էր դոյութիւնը խելք , կորով , արիւթիւն , անձնագրհուլիւն եւ համեստութիւն զուգորդող տիպար էակներուն , որոնք յայտնուեցան այդ կարճ շրջանին մէջ , եւ որոնցմէ շատ շատերուն տեւական բարեկամութեան վայելքը ըմբոշխնեցինք , եւ եղանք հարագատներ :

Միթէ այդ օրերուն աւելորդ պերճա՞նք էր , երբ վերապրող ամէն Հայ , եղեռնի սահմաններէն ներս թէ դուրս ինքզինքնին հաշտեան անտամ մեկնան անտանտէն ...

բացուիլն» էր, Պետրոսն ու զիս ձանձրոյթէ, պոռոյտներէ, ուստի նա-  
եւ այլազան վտանգներէ հեռու պահելու համար :

Անձնապէս արդէն կորսնցուցած էի զպրոցի, զբքի ճաշակը :  
Երկու տարիէն աւելի անոնցմէ հեռու, «Սանասարեանի» աւեր դըռ-  
ներուն առաջ, Կարմոյ եկեղեցիին արտաքին տեսքէն հիասթափ, հա-  
մոզուած էի որ այլեւս ոչինչ պիտի կրնար փոխարինել ծննդավայրիս  
այդ նո՛յն հաստատութիւններուն հրապոյրը : Ահա ասոնց ի խնդիր կը  
դեգերէի, որով, անչէջ ու հետզհետէ կուտակուող ծնողքիս կարօտին  
մէջ, դառնութեան ու բողոքի ճեղքեր սկսած էին շողշողալ : «Ինչո՞ւ,  
ի՞նչ սորվելու համար, հայրս պարտադրեց որ իրենցմէ բաժնուիմ» :  
Ու սկսած էի նոյնիսկ ատել զպրոցը :

Պատանեկան հաւատք մը ունէի մեր ազգին հզօրութեան մա-  
սին, ի՞նչ փոյթ ինծի շուրջիս աւերները, պահը, պայմանները, ո՞ւր  
են այդ մեծ վարժարանները, որոնց, կամքէս անկախ զիս զրկած էին  
յաճարելու : Ազգին մեծութեան այս փնտոտուքը ո՞ւր, եւ ի՞նչ բա-  
նի պիտի յանգէր :

Շարաթ մը անցաւ արդէն, «Շտապ»ի բակին վրայ բացուող  
տախտակէ «վրան»ի մը տակ կ'աշակերտիմ : Ամէն կէս ժամ անդամ  
մը, ներսը փոշեխառն ձանձրոյթ կ'լլելէ յետոյ, դուրս կը խուժենք  
«գրօսանք»ի : Յետ միջօրէի զպրոց մըն է տակաւին, կը սպասենք դա-  
սարաններու կազմութեան, մանաւանդ զբքերու եւ ա՛յլ պիտոյքներու  
ժամանումին : Մեզ հոն պահողը ամէն բանէ վեր, մեկնելու պահուն  
տրուած հացի շերտն է, անոր ընկերացող մինչ այդ բոլորիս անծա-  
նօթ հաստիկ, պաստեղի գոյնով համեղ կտոր մը՝ շոքոլա :

— Խնդիր մի՛ հաներ, կը կրկնէր Վարդանոյշ : Քու զպրոցդ կա-  
նոնաւորելէ աւելի ծանր հոգեր ունի ազգը : Համբերեցէ՛ք :

Քսան տարիներուն չհասած, քոյրս վեհութեամբ կը կրէր եր-  
կու սեփական մեծ վշտեր՝ գաւկի, և ապա ամուսնուն զառն կորուստ-  
ները : Արի, անխռով կը բաժնէր համատարած դժբախտութիւնը, ա-  
նորոչ ապագայի մը մղձաւանջը կ'ապրէր :

— Այս տղուն տեսքը մանաւանդ զիս ա՛լ աւելի կը տանջէ,  
կ'ըսէր շարունակ՝ ակնարկելով Պետրոսը : «Վիզը ծուռ» մնաց, հե-  
տը լա՛ւ վարուէ, տա՛ր, պտըտցո՛ւր :

Արդէն անկարելի էր «տունը» նստիլ : Ի՞նչ տուն : Մտնող-էլլո-  
ղըն անպակաս : Տեղահանութիւն, ջարդ, տխուր բառեր :

Պետրոս զլուխը աւելի քան կը ծռէր : Չէի սպասեր քրոջս «աչք  
խփելուն» : Դուրս կը նետուէի : Գիտէի որ Պետիկ կը հետեւի : Աքսո-  
րի ճամբաներուն վրայ ունէր մայր, քոյրեր, եղբայրներ : Ո՞ւր փախ-  
չիլ սակայն՝ չլսելու համար հոն տեղի ունեցող տառապանքի, չարչա-  
րանքի եւ մահուան պատմութիւնները : Իր վերջին նեցուկէն, Տիգրան

Հօրեղորօրմէն բաժնուէլէն յետոյ, երբ «որբանոց»ի խօսք ըլլար, Պետիկ կ'իյնար Վարդանոյշ քոյրիկի ոտքերուն, կը հեկեկար՝ «ղիս մեռցնե՞լ կ'ուզէք»:

Կը խորշէր, «պառաւ»ներէ'ն մանաւանդ: Երբ անոնցմէ մին մեր սենեակի դրան յայտնուէր, ձեռքէս կը քաշէր՝ որ անմիջապէս հեռանանք: Վատահ գիտէր որ շատ չանցած հոն սգատօն պիտի դառնար, «էկին հաւասի»ի ցաւազին մեղեղիներով համեմուած:

Յետ միջօրէի մը սկիզբը, դպրոց չմեկնած, Պետիկ ըստ սովորութեան դացած էր ջրի փարչը ամբողջացնելու: Արտորալով ներս խուժեց:

— Քոյրիկ, «համաճարակ»ը կու գայ, հետը քանի մը տիկիներ կան:

Անկէ փախչելու պատճառ չունէինք այլեւս, ընդհակառակը Օր. Տիման մեր հիացումը գրաւած հայ աղջիկն էր, իսկական «Ֆէտայի»: Պետրոս տակաւին կարօտ էր անոր այցելութեան, անոր զըլարթ տեսքին, ձեռքերուն եւ խօսքերու շոյանքին:

Ան յատկապէս կու գար մեր ընտանիքը ծանօթացնելու Տիկին Շուշանիկ Տէր Գրիգորեանին, անկէ անբաժան երկու գործակից օրիորդներուն: Տիմայի նոր բարեկամներն էինք: Կ'ըսէր ու կը համբուրուէր քոյրիկներուս հետ:

Սօսակցութիւնը տեղի կ'ունենար հայերէնով: Մերթ ընդ մերթ Տիմա ուսերէն կարճ խօսքէ'ր միայն կը թոցնէր՝ յատկապէս նիւթը փոխել տալու առեն, քանի որ արդէն սկսած էր հայերէնին հետեւիլ:

Սպասեցինք հիւրերու մեկնելուն: Իրենց այցելութենէն մեծ «բաւականութիւն» ստացած ըլլալին կը յայտնէր Տիկին Շուշանիկ: Վարդանոյշ եւ Թագուհի քոյրիկները մաս պիտի կազմէին անոնց ծըրազբաժնի ազգօգուտ ձեռնարկներուն, որոնց թուումը յանկարծ թըրբիք կու տար մեր խարխլած հոգիներուն:

Բախտաւոր օրեր կան իրապէս:

Դպրոցին ուշացած էինք: Քրտնած՝ հոն կը հասնէինք սակայն: Վերակացուն մեզ բռնեց, յանդիմանեց, վռնտել սպառնաց, ու չմոռցաւ այդ պահուն դասարան մտնող հայերէնի ուսուցչին յայտնել, «այս պարտնը չի հաւնիր մեր դպրոցին»:

Ուրեմն չարիքէն բարիք ծնող պարագաներ նոյնպէս կան:

Դասէն վերջ, ուսուցիչը, առօրե, բարձրահասակ, չէկ ու առատ մազերով, կապտաչուի, գեղեցիկ դիմագծով, Ամերիկայէն կամաւոր եկած քսանը նոր մտած երիտասարդ մը, խարբերողի, ժպիտով կը յառաջանար դասարանին վերջին նստարանը:

Աչքերը վրաս անշարժացուց: Նստաւ: Թեւէս բռնեց, մօտը նըստեցուց: Հարցուփորձը յանգեցաւ ի վերջոյ նախապէս յաճախած



Վահան Թորոնյան

դպրոցներու : Այլուր լաւ դպրոցներէն կային , բայց Կարինէն հեռանալը անընդունելի էր : Քրոջմէս չէի ուզեր բաժնուիլ , յոյսեր ունէինք նաեւ ծնողքիս հաւանական ժամանումին :

— Խարրերդ քաղաքը դացած էս :

— Ո՛չ , բայց մայրիկիս ծննդավայր Երիցագրակ զիւզին բարձունքէն , պայծառ օդով , ինձի ցոյց տուած են ձեր քաղաքը :

Գրպանը թուղթի կտոր մը փնտռեց , վրան արագօրէն քանի մը տող , ու ձեռքս դրաւ :

— Այս թուղթով վաղը կը ներկայանաս հոն գտնուած հասցէին , աւելի կանոնաւորուած դպրոց մըն է , ես հո՛ն ալ ուսուցիչ եմ :

Անձանօթ ստորագրութիւն մը , առանց «եան» վերջաւորութեան , համարձակեցայ ճշդեւ տալ :

— Կ'ըսես Վահան Թորոնյանի կողմէ կու գամ :

Ճշդում մը եւս :

— Միմիայն ի՞նձ համար է : Պարզեցի թէ ինչո՞ւ չէի կրնար Պետրոսէն բաժնուիլ , որ եկած՝ քովս կձկուած էր արդէն :

Անոր զարձաւ , «ի՛նչ սիրուն տղայ է» : Թուղթը ձեռքէս հանեց , «գրաբեր տղան» վերածեց «գրաբեր տղաքը» ձեւին , ու գուարթ , կենսախայտ առողջանութեամբ յաջորդ օրուան համար ժամագրութիւն նշանակեց :

— Ես Հիմա Հոն կ'երթամ, կը ջանամ ձեր ընդունելութիւնը յաջողցնել: Իսկ դուք Հոն եղէք վաղը առաւօտ ժամը 10-ի մօտերը:

Պատմեցինք: «Տունը» ցնծութեան մէջ էր այդ օր: Անոր իւրաքանչիւր անդամը Թոթովեցի կը թոթովէր կարգաւ: Բնականաբար ո՛չ ոքիս ծանօթ էր այդ երիտասարդը, թէեւ խարբերոցի էր, եւ Անդրա-նիկի կամաւորներէն:

— Աբօ տային Հոն՝ ըլլար, պիտի ճանչնար անոր ծնողքը: Մէջ մտաւ էջօն, որ տակաւին «Նարդու Խաթուն» անունը կը կրէր:

Հէգ Աբրահամ(\*) մօրքար: Ու օրը դա՛րձեալ մոռայլեցաւ, այդ անկորնչելի յիշատակին ոգեկոչումովը:

Թրքական թաղի գեղեցիկ շէնքերէն մէկուն առջեւն ենք, մէկ քանի յարկանի: Քոյրիկները եւ մեզ առաջնորդեցին տնօրէնին սենեա-կը:

Երիտասարդ մը նստած է Հոն, ուսական սպայի հագուստով: Ոտքի չէլաւ, եկող տիկինն եւ օրիորդը «դպչէ կը մարի» տեսակներէն չէին: Նշան ըրաւ որ յառաջանանք, դռնապանը քաշուեցաւ նոյն նը-շանին վրայ: Խոժոռ, ահագըռու կերպարանքէն փախուստ տալով, աչ-քերս ինկան անոր աջակողմեան պատին վրայ, ուր կախուած էին ա-ռանձին-առանձին, անոր զինուորական գլխարկն ու վերարկուն, մէջ-տեղը երկար սուր մը, չքեղօրէն զարդարուած պատեանով:

Քրոջս ձեռքի սեղմումը փարատեց զմայլանքս ու վախվխելով մօտեցայ Պ. Թոթովեցի զրութիւնը ցցած:

Առանց կարգալու՝ հրեց սեղանին վրայ:

— Մեր որբանոցին տղոց ցանկը լրիւ է: Բարերարներն են նը-շանակած անոնց թիւը: Բայց Պ. Թոթովեցի ըսաւ որ դուք իր լաւա-դոյն աշակերտներէն էք, ուստի որոշեցինք ընդունիլ:

Քոյրս փորձեց չեչտել որ փնտռածնիս դպրոց է, ո՛չ թէ որբա-նոց:

Տնօրէնը, Պ. Լեւոն Լանիս, որուն զինուորական աստիճանը ոչ ոք պիտի գիտնար երբեք, ընդմիջելու հրաւիրող թեւին հետ հաճեցաւ ինքն ալ կանգնիլ, հակառակ կարճ հասակին խօսքերուն մեծ հանդի-սաւորութիւն տալու համար:

— Մեր հաստատութիւնը առայժմ նաեւ Կարնոյ լաւագոյն դպրոցն է: Միանգամայն որբանոց, որովհետեւ աշակերտներուն մե-ծամասնութիւնը որբեր են՝ համաձայն Հիմնադիրներու ցանկութեան, ուստի բոլորովին գիշերօթիկ, եւ ենթակայ խիստ կարգապահու-թեան:

Ապա ձեռքը տարաւ առարկայի մը վրայ: Գուռը կրկին կը բա-

---

(\*) Տե՛ս իր մասին Ա. հատոր:



ցուի : Հրահանգեց որ երկու փոքրիկները ընդունուած են , կրնան այժմէն իսկ մնալ , կամ վերադառնալ յաջորդ օրը՝ անպայման :

Տնօրէնը «գաղթական»ի շնորհակալութեան կարիք չունէր , ու յառաջացաւ դէպի սուրը , կապեց , շքուեցաւ : Գրեթէ միասին մէջ-անցքին մէջն ենք : Դոնապանը վազեց դէպի դուռը , Պարոն Լամիս արդէն փողոցն էր :

Պրէքստըն , անդլիացի կրօնաւոր եղբայրներուն փոքրաթիւ որբանոց-դպրոցը արդարեւ իր հիմնադիրներուն անմիջական հըս-կողութեան եւ հոգածութեան առարկայ , մանաւանդ այդ օրերուն իր տեսակին մէջ անզուգական էր : Ունէր պաշտօնէութեան լրիւ կազմ եւ գոհացուցիչ մատակարարութիւն : Հոն կ'իշխէր , սուտ կամ իրական սպայ՝ Լեւոն Լամիսի չափուած-ձեւուած հեղինակութիւնը : Հայերէնի ուսուցիչ՝ վահան Թոթովեցի հմայքը : Կային հողատար քոյրեր՝ Օրիորդ Արարեանները , որոնցմէ կը պահեմ լաւ յիշատակներ , մանաւանդ անմոռանալի եւ շնորհալի Օր . Ջաջօէն : Ունէր շարքավան թշկական այցելութիւն : Հսկիչ եւ մարզանքի ուսուցիչ էր նախկին կամաւոր մը , թէեւ հազիւ քանի մը ամիս առաջ զինքը վար դնել ստիպուած , Ռեվանտուզի կուրի յաղթական վերջաւորութեան սպանուած Քեռիի զինուորներէն՝ Կարօն , ափիոն-գարախարցի , որուն հայերէն բառեր արտասանող մեծ հօր լեզուն կտրած են իր ծննդավայրի Թուրքերը , ուստի կը կրէր Համտիլեան(\*) մականունը : Միջինէն վար հասակով , ան ունէր հզօր մկաններ , կը թռչտէր հորիզոնական զուգահեռ ձողերուն վրայ , ու թեւերուն ուժովը սկիւռի մը պէս կը մագլցէր հաստ պարանի երկայնքն ի վեր : Յիշատակելի պարագայ մըն է նաեւ խոհարարուհիին ինքնութիւնը : Մեր տեղացի , դրացի գիւղէն մօրս տարիքը ունեցող կին մը , մեզի հանդէպ հարազատի մը չափ հոգածու :

Դպրոցը երկսեռ էր , ութ տասնեակ մը տղաք , տասնչորս տարիէ պակաս : Եթէ անոր մակարդակը անշուշտ շատ հեռու էր ծըննդավայրիս բարձրագոյն նախակրթարանէն , սակայն հոն դտանք ընտանեկան մթնոլորտ՝ դասերով , խաղերով համեմուած :

Դուրսը , քաղաքը կը դիտէինք մեր շէնքին տանիքէն : Իրարու փակած հարթ տանիքներով շարք մը տուններ , մեր շրջանի շէներուն պէս : Միմիայն մե'ր տանիքը կենդանութեան նշոյլ ցոյց կու տար , միւսներուն դռները , Թուրքերու պատկանող , բնաւ չէին բացուեր , անոնց միջին եւ վերի յարկերուն պատուհանները նոյնպէս : Ամէն-

---

(\*) Համտիլեանի շնորհիւ , տնօրէնութիւնը զինուորական իշխանութեան արտօնութիւն ստացաւ , հինգ աշակերտներ սինեմա տանիլ , ուստի առաջին անգամ Կարնոյ մէջ պատեհութիւնը ունեցած եմ Չարիի Ձեփլինի խաղերը տեսել :

օրեայ գրոյցի նիւթ էր որ անոնց մէջ Հայու տղաքներ կը պահուին, անշուշտ թրքացուած, որոնցմէ շատեր կը հաշուէինք մեր դպրոցին մէջ:

Օրը օրին տեղեակ էինք դուրսի անցուղարձերուն: Հարազատներու այցելութիւնները, այնքան շատ, անպակաս էին: Հետզհետէ, այլեւայլ պատճառներով որբանոցէն հեռացողներուն տեղը եկած էին լեցնել մեր տոհմին, մասնաւորապէս ամուսնացած աղջիկներուն զաւակներն ու անոնց ընտանիքէն պատանիներ: Երկվեցեակէն աւելի էր մեր թիւը Պրէքրտըններու այդ հիմնարկին մէջ, ասոնց «էջիրաթապետն» էի, իմ շարժումներէս ու շրթունքներէս կախուած էին բոլորն ալ, ինչպէս նաեւ նոր բարեկամներու խումբ մը:

Եթէ քոյրիկներուս այցելութիւններէն սպասած լուրը, առաւելապէս ծնողքիս ժամանումին կը վերաբերէր, եւ միշտ յուսախար էի, սակայն անհուն հրճուանքով կը լսէինք դուրսիներուն վիճակին բարելաւումին մասին: Շատեր, փոքր կամ մեծկակ տուներու մէջ հանրակացարաններէն աւելի մտերմիկ բոյներու տէր կը դառնային: Մեր ապլաներէն(\*) ոմանք խոհարարուհի եւ ծառայող դարձած էին հայ ծագումով բարձրաստիճան ռուս սպաներու տան մէջ: Հեռաւոր Ամերիկաներէն գիւղացիներ եւ հեռաւոր ազգականներ կը յայտնուէին, եւ թղթատար լուրեր ու օգնութիւններ սկսած էին հասնիլ:

Ոգի ի բռին, հակառակ ռուս սպայակոյտի դրած արգելքներուն, գրաւեալ զօտիները թափանցած էին երէկի «կամաւորներէն» շատերը, իրենց ընտանիքի անդամներէն ու մերձաւորներէն ազատուողներ գտնելու ակնկալութեամբ, եւ մանաւանդ կարնոյ փոքրիկ մատուոր ամուսնութիւններու նոր տոմար մը կը բանար, երկար ընդմիջումէ յետոյ:

— Վարդանոյշը հիւանդ է: Ինչո՞ւ չեկաւ:

— Հի՛չ ալ հիւանդ չէ: Ճամբայ ելած էինք, եկան լուր տուին որ ձեր Աննիկ Քեռկիմը կ'ամուսնանայ: Թեւէն քաշեցին, քոյրդ եկեղեցի տարին՝ հարսնիքի:

— Ո՞վ է փեսացուն, մեր տեղերէ՞ն է:

— Ամերիկայէն եկած քղեցի կամաւոր մըն է: «Շտապի» կամաւորները ամէնքն ալ հարսնուոր են: Քու ճանչցած Տախաղ ալ:

— Տէլի Պալթաեա՞նը: Խարբերո՞ւ քէսրիկցի:

Ի՞նչ վճիտ հոգիներ կային այդ կամաւորներուն մէջ: Պրիսմակի պէս ջինջ ու թափանցիկ, եղէգի պէս խոնարհ, բայց աննկուն, նոր ծլած աղջկայ մը պէս քնքոյշ ու ազնիւ, վրէժի դառնութեան տոկա-

(\*) Անդրէասեան Տոմի ամուսնացող աղջիկներուն անունին կցուած տաճկերէն բառն է «ապլա» = բոյրիկ:

ցող ու չխամրող էակներ, որոնք հայրենի հողը մտած էին մերկացած իրենց այլուր տեսածներէն ու ապրումներէն :

Միամիտներ կամ սուրբեր : Եթէ կ'ուզէք :

Ձուարթ թէ տրտում, կ'ամ շնային իրենց մասին պատմել, խօսքերնին մէկ ըրած կը կրկնէին «Մեծ վարպետին ըսածը» միայն, երբ բաժակ վեր բռնելու պահն էր, երբ տրտունջ ունէին,

«Գործերնիս կէս մնաց» :

Իսկ ի՞նչ էր միւս կէսը :

Ապրիլ անշուշտ, բայց . . . :

Կ'ուզէի ճանչնալ զիրենք : Ամէ՛նքը, ամէ՛նքը : Ու ա՛յլ էր դե- շերօթիկ կեանքիս դժգոհութիւններէն ուրիշ կարելոր կէտ մը :

Հէ՛գ Տախտ : Հաճոյակատար, ազնիւ, բարեմիտ : Կ'ուզէր ապրիլ : Քսանը մտած էր : Լաւ օրերու սպասեց, որ ամուսնանայ, տուն-տեղ ըլլայ, հայրենի աւեր օճախը վերականգնէ :

Ի՛ր ալ երազները փախուստի ճամբան բռնած էին : Չանձրա- ցաւ սպասելէ, իրեններէն ո՛չ ոք կը յայտնուէր : Վերադարձաւ Ա- մերիկա :

Քաղաքը այցելութիւն տալու մասնակի եւ կարճ արտօնու- թիւնները վերջ գտան խիստ ձմեռին հետ : Մենք թեթեւագգեստ պա- տանիներս, կրկնակ ապակեփեղկերով պատուհաններուն ետին, փո- րերնիս կուշտ, կը յագենայինք մանաւանդ այցելուներուն «երանի ձեզ» բռներով, երբ անոնք թարթիչներէն ու հագուստի ծերպերէն կախուած սառոյց մոմերով զարդարուն ներս կը խուժէին :

Բարձր էր նաեւ քոյրիկներու տրամադրութիւնը : Մեր խօ- սակցութիւններուն նիւթն էր առաւելապէս Տիկին Շուշանիկը, «Տի- կին Մայրիկը», ինչպէս սկսած էին անուանել զինքը :

Գերազանց լաւատեսութեան մթնոլորտ մը ստեղծուած էր նոր օրերու այդ ի՛րապէս «փափկասուն» հայ կնոջ շուրջ :

Մայրական հեղինակութեամբ օժտուած, Տիկին Շուշանիկ Տէր Գրիգորեան, Կարին հասած օրէն պիտի վայելէր անվերապահ յար- դանքն ու սէրը «տաճկահայ» երկսեռ երիտասարդութեան, որուն ե- կած էր ծառայել ու զոհարարել իր անձին բովանդակ կարելիութիւն- ները :

Հոգիով վեհ, անձով վայելուչ, հրապուրող եւ մտքով զարդա- ցած, շուտով «Տիկին Մայրիկ» քաղցր տիտղոսին արժանացած այդ ազնիւ Հայուհին, Ա. Աշխարհամարտի սկիզբին պիտի դիմադրուէ երկու հզօր պատուհաս, անհատական եւ ազգային, յոնձին իր քսան տարեկան սպայ զաւկին եւ «տաճկահայ» իր սեփական ժողովուրդի կոտորումին :

Քոյր-եղբայրներով հարուստ, բարեկեցիկ ընտանիքի աղջիկ,

ան բացառութիւններէն մին էր ժամանակի զարգացած սերունդի պատանեկութենէն, որոնք սրտի եւ մտքի կապերով անբաժան մնացեր են իրենց ազգէն: Օրիորդ Շուշանիկ, թերեւս հակառակ իր միջավայրին մէջ ունայնութեան հասած սովորութիւններուն, իրեն արժանի ամուսին սեպած է հայ համեստ ուսուցիչ մը, զոր պիտի նոյնպէս կորսնցնէր, արեւմտեան ճակատի վրայ ինկած իրենց զաւկէն քանի մը ամիսներ յետոյ:

Տիկիմ Շուշանիկ այնուհետեւ իր ժառանգն ու ընտանեկան խնայողութիւնը կը յատկացնէ որբախնամ դործին: Իր սեփական միջոցներով ու ջանքերով կը հաւաքէ որբեր, ու իր հիմնարկը ի վերջոյ Սանահին կը պատասպարէ, վստահելի ազջիւններու կը յանձնէ, ու սպա ազգին նուիրումը կ'ընդարձակէ ու կը վերածէ ասպարէզի: Կ'անցնի Կարին:

Շուտով արդէն, իր դասակարգին երբեմնի ծանօթներն ու բարեկամներն անգամ «բեզարած» են, յոգնած են անոր սրտազին կոչերուն արձագանգ տալէ, կը խուսափին եւ իրեն երես կը դարձնեն: Սեփական բոյն գրեթէ չունի: Յարաբերութիւն եւ հանդատանալու պարբերական այցելութիւններ կը պահէ իր հարազատներուն հետ: Իր բուն միջավայրը բզբտուած հայրենիքի ծոցին մէջն է, անոր հալածական եւ դժբախտացած զաւակներուն հետ:

Առօրեայ հոգերէն ձերբազատուած բախտաւոր մեր վիճակին մէջ, Կարնոյ խիստ ձմեռը մեր մարմնոյն շարժումները կը կաշկանդէր, անոր փոխարէն թոխչք կը ստանային արդար յաւակնութիւններ սպազայի նկատմամբ:

Պրֆրատրնեան մեր պատասպարանին մէջ թէեւ բացառիկ վարկ ունէի, պաշտօնէութեան թէ աշակերտութեան գուրգուրանքին առարկան, սակայն դպրոցական բաժինը հեռու էր զիս գոհացնելէ, եւ ուսուցիչներուն յարատեւ փոփոխութիւնները կը հրահրէին անձկութիւն մը, որ հետզհետէ մէջս տուն-տեղ ըրաւ:

Տոհմիս անդամներուն մէջ պատահած հիւանդութիւններո՛ւն անգամ ինքզինքս պատասխանատու կը գտնէի: Եթէ մասնաւորաբար հոգածու էի Պետրոսին հանդէպ, որ իր ճիւղէն միա՛կ ազատուածն էր, միւսներուն քիթերնին կախ եւ տխուր կերպարանքներէն չափազանց կ'ազդուէի: Այդպէս, ձմրան կիսուն, մեր աննման Աննիկ Ապրայիմ միա՛կ աղջկան, Զարթիկիմ ամիս տեւող ծանր, մահամերձ հիւանդութիւնը ամէն մտածումներս իր վրայ կեդրոնացուց:

Իրապէս անգուզական էին մեր տոհմին համայն «ապլանները»՝ քոյրիկները: Ո՛ւր ալ որ գտնուէին անոնք, ամուսնացած մեր գիւղի մէջ, մօտակայ ու հեռաւոր ա՛յլ տեղեր, անոնք, մշտնջենապէս, եւ ինչքա՞ն սրտովին, կը մնային իրենց «մէրանց» տան անբա-

ժան անդամները: Որքա՞ն կարօտով ու հպարտութեամբ շատ յաճախ, անակնկալ հանդիպումներու բերմամբ, ինքզինքս դտած եմ անոնց քրոջական գիրկին մէջ, որոնցմէ շատ-շատերը արդէն տոհմական տուներէն հեռացած էին ծնունդէս առաջ:

Ի՞նչ օրինակելի դրուագներ կը պատմէին անոնց վերաբերմունքին վրայօք: Անձնագոհութեան, անշահախնդրութեան:

Յայտնի չէ երբուրնէ, բայց մեր տոհմէն աղջկայ ձեռք խնդրող երիտասարդը, իր ծնողքը կամ միջնորդողը, քաջ գիտէր որ ան իր հօրենական տունէն, իր եղբայրներէն, ասե՛ղ մ'անգամ իր ապագայ ամուսնուն տունը տանիլն յանձն պիտի չառնէր:

Բազմաթիւ էին Անդրկանց «ապլաները»: Երկուքը նամանալանդ օրօրեր ու գրկեր էին զիս, իբրեւ տան բնակիչ ու անդամ, իրենց մօր վաղաժամ մահէն ու հօր պանդուխտ դառնալէն յետոյ: Մեծ հայրիկիս մեծ եղբոր թոռներն էին Աննիկ եւ Տիրիկ (Տիրուհի) ապլաները, գրեթէ հօրս տարեկից, Անային «աղջկները»: Անոնց մէ՛կ հատիկ զաւակներուն գրեթէ տարեկից, ես ինքս չէի ճանչցած կամ չէի յիշեր իրենց ամուսինները, որոնք նոյնիսկ չէին տեսած իրենց զաւակներուն աշխարհ գալը, ու «ոտքերնին» կապուած մեկնած էին հեռաւոր Ամերիկա: Ու մինչդեռ ես ամիս մը շարունակ իր աղջկան կորուստին վախը կ'ապրէի, մեր Սոդկանց (Սոդիկեան) փեսան բնաւ չէր տեսած իր այնքան դեղեցիկ աղջկան դէմքը: Մարգար Խանրէկեանը չէր տեսած իր կնոջ, Տիրիկ Ապլային գունտուկլոր տղուն՝ Միմասին ծնունդը:

Երգրումը գրաւող ոռս բանակին բարձրաստիճան հայ սպայի մը մօտ խոհարարուհի, Աննիկ Ապլա, որմէ այլեւս չէինք կրցած ծածկել իր աղջկան հիւանդութիւնը, աչքերուս մէջ կը կարդար իր մահամերձ զաւկին որպիսութիւնը, իմ ճակատս ու այտերս թրջող համբոյրներովն է որ իր մայրական սիոփանքը կը թափէր իր մէկ հատիկին մարմնոյն մէջ, եւ այդ իրեն երբեք չզլացայ, օրական այցելութիւններովս, Կարնոյ ցուրտ ձմեռին, եւ առանց վերարկուի, դէպի հեռաւոր միջնաբերդ:

Անձնապէս մոռցած էի արդէն դաս ու դպրոց, Զարթիկին ապաքինումի երջանիկ օրերը կ'ապրէի տակաւին Պրքըստընի յարկին տակ դտնուող մեր տոհմին մնացորդացին հետ, երբ դարնան հետ հանդէս եկաւ անծանօթ հիւանդութիւն մը, բորոտութիւն անուսով, որմէ վարակուած գտնուեցաւ տղոց մեծամասնութիւնը:

Շաբաթներ տեսող օրական քննութիւններուն իբրեւ հետեւանք, տղաներ կ'անջատուէին ու կ'անհետանային պատերու ետին: Ու տան նկուղներէն, ծծումբ խառնուած դաղջ ջրով անոնց լոգանքի պահեւորուն արձակուած ցաւերուն արձագանգը կը կրծէր մեր սրտերը:

Ամէնօրեայ քննութիւններուն մղձաւանջն ունէինք: Առաւօտները բժիշկին առջեւ «ողջ»երուն ներկայութիւնը աւելի քիչ էր, քան անոնց թիւը կէսօրէ եւ երեկոյի ճաշերուն ատեն: Հսկիչը շատ մը թաքստոցներ երեւան հանց, բայց ոչ ամէնքը: Օրերով հոն անօթի մնացողներ եղեր էին, կամ դաղանաբար կերակրուողներ:

— Քերուըտուք ունի՞ք: Հարցումին կարելի չէր որոշ պատասխան տալ, ան իր հետ կը բերէր դայն:

Այս փորձութենէն բոլորովին անբացատրելի յարակցութեամբ զերծ մնացին մեր տոհմին շառաւիղները՝ առա՛նց բացառութեան: Միակ մեկնութիւնը այդ երեւոյթին այն էր, որ մենք համախումբ, կառավարիչներու բարեացակամութեան շնորհիւ, կը դիչերէինք նո՛յն սենեակին մէջ, եւ մեր աղջիկները դայն կը պահէին կատարեալ մաքրութեան մէջ, գրեթէ անձեռնմխելի:

Սակայն օրուան միւս կենակցութիւնները, դասարան, ճաշարան եւ խաղեր, բնականաբար խառն էին:

Բորտութիւնը կը սկսէր ձեռքի մատներու արանքներուն մէջ քերուըտուքով: Բարեբախտաբար մէկ-քանի շաբաթ տեւող խողանակաւոր լողանքներով ու դեղերով կարելի եղաւ առաջն առնել, եւ վարակուողները վերջնականապէս բուժուած յայտարարուեցան, ու մինչեւ մեկնումս, որ շատ չուշացաւ, այլեւս նման անհամութիւններ չունեցանք:

Որքա՛ն մեծ եղաւ վիշտս, երբ մեր խումբին խիստ մօտիկ պահող, շատ սիրուն Բարեբրդցի Ովսաննան եւս բժիշկը վարուակուածներուն խառնեց: Կը վախնայի որ բորտութեան բշտիկները պայթէին նաեւ անոր մատղաշ ու ողորկ սիրուն դէմքին վրայ, ու խողանակի կոշտ հպումներուն զոհ դառնար: Կարօտ մը ծայր առած էր մէջս անոր հանդէպ՝ ու այլեւս առանց վախի կը մօտենայի բժիշկին՝ զիս «վարակուած» հոչակելու վճիռը լսելու յոյսով: Ան մեր Զարթիկի ծանր հիւանդութեան օրերուն ինձ հետ շատ մը դիչերներ հսկած էր, եւ անոր առողջանալուն համար ծունկի եկած աղօթելու պատկերը յուերժօրէն կենդանի կը մնայ մէջս: Մեր տոհմայիններէն փորրիկները սկսած էին դայն կոչել Ովսան քոյրիկ, մինչ մեծերը իր երեւնայր կ'ողջունէին «նորէ՞ն եկաւ» բառերուն անբաղձալի շեշտ տալով:

Գարնան հետ զիս խոցող, յատկապէս ինծի սահմանուած «դժբախտութիւն» մը կը պատահէր, Վահան Թոքսվեցի կարիմէն հեռանալը դէպի կովկասեան մայրաքաղաք, արդէն մեզի համար համբաւաւոր դարձած Թիֆլիզը, ուրկէ կանչուած էր կարեւոր առաքելութեան մը համար, որուն էութիւնը տակաւին ոչ ոքին ծանօթ էր:

Ու ես մնացի անմխիթար: Այժմ իսկապէս որբացած:

Կը կորսնցնէի անփոխարինելի դաստիարակ մը: Ուսուցի՞չ էր վահան Թոթովեց: Որ այդ օրերուն ոչ ոք կընար յաւակնել որոշ կոչում մը ունեցած ըլլալ, ակներեւ երեւոյթ մըն էր: Ոչ ոք բծախընդիր էր նման նրբութիւններ փնտռելու մէջ:

Վահան Թոթովեց, ամերիկահայ կամաւոր, ռազմիկի կոչո՞ւմ ունէր միթէ: Իր կամքէն անկախ, ճակատը լքելէն յետոյ ուսուցչական ասպարէզի մա՞րդն էր՝ թէ ո՛չ, դժուար է պատասխան մը տալ: Գիտեմ միայն ու միայն որ իր դասերուն ամբողջ տեւողութեան, դասարանը կը բաղկանար մէ՛կ աշակերտէ:

Այդ միա՛կ աշակերտն էր որ կը կորսնցնէր իրեն համար արժանաւոր միա՛կ ուսուցիչը: Այդ աշակերտին սորվելու յազուրդը դո՛հացնող բարեկամ մը, որ բացառիկ պարագաներու բերմամբ եղբայր մըն էր, հազիւ տասնամեակ մը տարեց, դեղեցիկ, վայելչակազմ եւ առոյգ, կենսախայտ եւ ինչքա՞ն անկեղծ, անսեթեւեթ բնաւորութեամբ անձ մը:

Այդ օրերուն էր, ճմեռուան վերարկուն դեռ չպատռած, մեր մատղաշ եւ կոյս ականջներուն կը հասնէր արձագանգը հեռաւոր հիւսիսի որոտումներուն, երբ մենք անհամբեր էինք լսելու դղրդիւնները, որոնք պիտի շառագէին հարաւի հորիզոններու երկայնքին:

Արեւաշաղ օր մը: Տանիքին վրայ մեր խաղի ճոռողիւնները սկսան սաստել, էրզրումի ճիւնածածկ թաց լեռներու կողերուն վըրայ սաստկացած թնդանօթներուն հնչիւնները: Անոնց կը հետեւին տանիքի փոքրիկ դռնակին առջեւ սարսափահար տղոց հրմշտուք եւ վարերէն, սանդուխներէն դլտորուողներու ճիչեր:

Բոլորովին անակնկալ այդ պայթումներուն առթած վախը եւ խուճապը բազմապատկել կը փութային քաղաքամէջէն լսուող հրացանի եւ հրթիռներուն ճաթոցները:

Սուգ եւ սուտ քուն մտած, Կարնոյ թրքութեան ըմբոստացումին վերադրելն էր անոնց առաջին պատճառը միմիայն տարեցներու հսկողութեան թողուած տղոց ահաբեկումին, մինչդեռ նոյնիսկ իբրեւ խրախճանք, վերջին չարիքն էր ան, դահէն տապալած ու այնքան անիծեալ ուս վեհապետին՝ Յարին եւ իր իշխանութեան:

Ամէն պատահարի ատեն, անախորժ կամ բարեբաստիկ, մեր հաստատութեան լացի եւ թովչութեան խուցն էր խոհանոցը, իր խիստ համբերատար եւ բարեսիրտ մայրիկին մօտ:

Քանի մը ամիս միայն ներկայութեանս միջոցին, ո՛չ մէկ օրէնք ու պատիժ պիտի խախտէին հոն խոնուելու հրապոյրը, նոյնիսկ «բորոտութեան» խիստ հսկողութեան օրերուն: Կարգապահութեան վերաբերմամբ որեւէ հեղինակութիւն ունեցող, մանաւանդ բացակայութենէ վերադարձին՝ խոհանոցէն կ'անցնէր, կշտամբելու եւ ցրուե-

լու տղաքը, յանդիմանական երկդիմի խօսքեր ուղղելով նաեւ խոհարարուհիին :

Այդ օր «ամենուն մայրիկը», որ առհասարակ իրեն ուղղուած դիտողութիւնները կը չէզոքացնէր զինաթափող ժպիտով մը, իր ալ կորսուած հանդարտութենէն կը քաղէր անողոք վճիռ մը :

— Եթէ այս անմեղները իրենց հալին ձեզելով ձեր քէյֆին ետեւէն չվազէք, անոնք լեղապատառ իմ փէշերուս մէջ չէք դնար :

— Լեղապատառ ըլլալու ոչ մէկ պատճառ չկայ : Յարը տապալեր է, եւ զինուորները ցնծութեան մէջ են :

— Բերանդ չբռնուի՛, հիմա՞ է ըսելու ատենը, առաջնօց խելքըդ ուր էր :

Ու «մախտում»ներուն ահուզողը մէկէն կը թռչէր, ինչպէս իրենք թռան խոհանոցէն դուրս :

Եւ շուտով վերադառնալու համար :

— «Մայրի՛կ», ցարը ո՞վ է, ի՞նչ ըրեր է, ինչո՞ւ են տապալեր :

— Ես ի՞նչ գիտնամ : Ուռուներուն թաղաւորն է : Թուրքը ունի իր գետի՛նն անցնելիք փատիչահը՝ սուլթանը, Ուռուք՛ իր ցարը :

— Ա՛լ հիմա ցար չունի՞ն : Ի՞նչպէս կըրցած են «տապալել» : Ազէ՞կ են ըրեր, թէ գէ՛շ :

— Օղտ՛ւլ, իմ խելքս չի հասնիր : Համիտը երբ վար առին, մեր երկիրն ըլ «թփէնքներ» կրակեցին, քէյֆեր սարքեցին, ու ապա այս օրին ինկանք : Աստուած Ուռուք մեր օրին չձգէ :

Բնականաբար, մեր ալ, պատանիներուս խելքը բնաւ չէր հասներ, մանաւանդ զինուորական իշխանութեան տակ դառնող օտար գրաւեալ քաղաքին մէջ, ահնյայտնի ոչ մէկ փոփոխութիւն կը նշմարուէր «յեզափոխութիւն» յայտարարող այս եզակի ցոյցէն վերջ :

Գարոցէն դուրս մեր այցելութիւններուն առիթով, իրաւ է որ մերոնց շրջապատին մէջ եռուզեռ կար, ու հայկական կեանքը աւելի ոգեւոր բնոյթ ստացած կը տեսնէինք : Կը լսէինք արտայայտութիւններ, լաւատես ու յոռետես տեսակէտներ՝ ո՛չ միայն հայ վաղթականին մօտաւոր ապագային վերաբերմամբ, այլ ազգային երազներու :

Մենք Հայերս, մասնաւորաբար քոյրս եւ ես, յայտնի պատճառներ ունէինք յուսալու, որ զարնան հետ ռուսական բանակները պիտի մխրձուէին դէպի հարաւ՝ գրաւելու պատմական Հայաստանն իր ամբողջութեամբ : Նոր կառավարութիւնը պատերազմը մինչեւ յաղթանակ շարունակելու իր կամքը կը յայտարարէր՝ գրով ու ձոռերով : Կարիմ դառնող հայ երէկի կամաւորները գէնք վերցնելու միշտ պատրաստ, նոր վարչակարգէն կը սապասէին Հայոց վերաբերմամբ աւելի բարեացակամ կեցուածք, աւելի յստակ :

Ինչպէ՞ս կրնային ճիշդ ըլլալ մասնակի խաղաղութեան մը շուրջ



պտըտող գրոյցները, երբ ամէն օր Կովկասէն եկողները կը պատմէին թէ ի՞նչ տենդոտ աշխատանք կը թափուէր Սարը Ղամիշը Էրզրումիմ կայեւրու կոչուած երկաթուղագիծը ժամ առաջ լրացնելու համար :

Ռուսական անպարտելի պետութեան հանդէպ ունեցած մեր անխախտ հաւատքը, երկաթուղագծի շինութեան այս կարեւոր ապացոյցը, թո՛ւրջը կու տային մեր երբեմնի երազներուն, Հայաստանի վերջնական եւ ամբողջական ազատութիւնը ուս հովանիին տակ :

Անկախ քաղաքական նկատումներէ, որուն անձեռնհաս էի անտարակոյս, երկաթուղու դծին փաստը, անոր Կարնոյ դռներուն առջեւ հասնիլն ու բացման տօնակատարութիւնը կու գար արդարեւ նոր ընթացք մը դծել նաեւ իմ կեանքիս :

Հեքեաթ, հանելուկ, բախտ, դիպուած, գուշակութիւն, անակնկալ :

Տակաւին շատ մը բառերով եւս կարելի է բացատրել նոր սկըտող կեանքի մը տարուբերումները :

Ահա Սարը Ղամիշը նոր գրաւուած Կարիմ քաղաքին կապող դոյզ երկաթեայ դծերուն շինութիւնը : Այդ աշխատանքներուն մէջ կը խտանան մարդկային ապրումներուն վերաբերեալ երջանկաբեր ու տաժանելի դրուազներ, մահեր անտարակոյս : Անկէ սպասելիք մօտաւոր օգուտներուն հետ բոլորովին կապ չունեցող միջամտութիւններ կը ծնին :

Այդ ձեռնարկին յաջողութենէն արդար վարձատրութիւն անկալողներուն, զայն իրագործելու համար տքնող եւ իրենց կեանքին վախճանը հոն գտած բանուորներուն՝ ազատ թէ գերի վարուած, մտքէն չէր անցներ անշուշտ, որ իրենք, երկրագունտիս անթիւ-անհամար, խոնարհ էակներէն միուն հեքեաթին սկիզբը կը դնէին, երբ իրենց ձեռնարկը իր վերջաւորութեան կը հասնէր :

Հրագէններու ժամանակաւոր դադարին մէջէն յոյսի ճշոց մը եւս Էրզրումի Հայոց լեռներէն : Եփրատն ի վեր, Հայաստանի հինաւորց բերդաքաղաքին մէջ Ռուսը ձմեռած էր յաղթական, ու անոր բանակին կրնկակոխ Վանանդի հովիտները մրտելով, «կուկուշկան» հեւալով ու մխալով Կարնոյ դաշտը հասած՝ կը սպասէ բարի գալուստի իրախճանութեանց :

Ինչե՛ր, ինչե՛ր կ'անցնին հայ դաղթականի մտքէն : Թերահաւատութիւնը անոր մէջ պիտի հրաժարի՞ իր դարաւոր ճնշումէն : Գիծը որ ձգուած է «Հայկական Պարի» եւ «Անդի-Պոնտական» լեռնաշղթաներուն միջեւ, յաւիտենական դոյութեան մը նոր յայտարարը չէ՞ միթէ, երէկի եւ վաղուան միջեւ բարեբաստիկ հանգրուան մը չէ՞, թանձրացեալ երաշխիքը անդաստական Հայու երջանկաբեր իղձերուն :

Բազմութիւն մը կը փութայ Կարնոյ սարահարթը՝ Հասան Ղա-  
լէի ուղղութեամբ :

— Պարոն, ո՞րն է Կարսի դրան ճամբան :

— Աղջիկ, չըլլա՛յ կորսուինք ու «սալտատ»ներուն ճանկն իյ-  
նանք :

Գարնան արեւոտ օր մըն է : Հարաւային մեղմ գեփիւռ մը մեր  
այտերը լցելով, դէպի լեռ կը փութայ գովանալու, մինչ մենք կ'ա-  
ճապարենք : Գպրոցականներու շարքերն են :

Գրաւող ոյժերու իշխանութիւնն է հրաւիրողը, Սարը Ղամիշ-  
Կարին շոգեկառքի նեղ գծին աւարտման փառասօսին :

Մեծ խումբը «Հայկական Շտապ» դպրոցի տղաներն են, անոնց  
կը հետեւին «Քաղաքներու Միութեան» եւ «Պըքքստընի» որբանոցնե-  
րուն սոգաքը՝ երկսեռ :

Փոշեկոյտները «սալտատ»ներու վաշտերն են, մէջընդմէջ  
փայլող պղինձները՝ զինուորական նուագխումբերը :

Կը թրթռան Հայոց լեռները : Լուռ է հայ տղամարդը : Հայ  
մայրն է որ միշտ կու լայ, իր հոգին միշտ կը փոթորկի՝ բարբ կամ  
չար երեւոյթները մեկնաբանելու մէջ անճրկած :

Ամբոխը կը սողայ դէպի որոշեալ վայրը՝ շոգեմեքենային գիլ  
ձայնին ուղղութեամբ, հոն ուր համադգեստներ կը պսպղան, փայ-  
լուն կոճակներ, ուսադիրներ արծաթահիւս-ոսկեհիւս, գլխարկի նը-  
շանազարդեր : Սուրբ պատեաններ արեւուն մեղսակցութեամբ իրա-  
բու աչք կ'ընեն :

Հանդէսը բացուած է :

Հայը կը մասնակցի իր դպրոցականներուն ելոյթներով : Ճա-  
ռերը շատ քիչերու համար են՝ ոռւսերէն : Իւրաքանչիւրը ինքն իր հետ  
է, իր երազներուն հետ կը փսփսայ : Ուշադրութիւն, ունկնդրութիւն  
դէպի բեմ, հայ երգերուն, պար ու արտասանութիւններուն՝ պատա-  
հականութեան թողուած, երբ քով-քովի նստողներ կ'ուզեն նիւթ փո-  
խել՝ մէկ խօսակիցէն միւսին դառնալու պատրուակ :

Բացառութիւն մըն է պարագան, վայելչօրէն հագնուած կնոջ  
մը եւ համադգեստաւոր, հանգստեան կոչուած հազարապետի մը, ո-  
րոնց շրթները թէեւ Ռուսի պէս կը շարժին, բայց Հայու աչքերով բե-  
մին կ'պած են :

— Ուրեմն, իմ սիրելի Բալկովնիկ, դուք հաւանեցի՞ք այդ տը-  
ղային :

— Նո՛ւ, խոստովանում եմ, որ նա կարողացաւ իմ մէջ Հայը  
վերակենդանացնել :

Տիկին Շուշանիկ Տէր Գրիգորեան կը թուի թէ օրերով երազած

էր այդ վայրկեանը, խօսակցին ձգելով դէպքերու բերումով անակընկալ առաջարկութեան մը հետեւանքը :

— Թէ որ էդպէս է, թոյլ տուէք Ձերդ Բարձրապատուութիւն, մի առաջարկութիւն անել Ձեզ, հէ՛նց էդ տղայի վերաբերմամբ :

Նուազախումբի ուժգին մէկ երանդը, ծափահարութիւնները, թէեւ կ'ընդհատեն խօսակցութիւնը, բայց Տիկին Մայրիկը իր մտածումներուն կապը պահած է :

— Գէթ այդ տղային ընդունիլ որպէս Կովկասահայոց Բարեգործական Ընկերութեան «սան», մինչեւ բարձրագոյն կրթութիւն :

Բալկովմիկ Յակոբեանի բողոքի, «խնդրում եմ», «մի՛ պարտաւորէք» զիս բառերը ձեւական բնոյթ ունին, իր արտասանած «այո»ն նոյնպէս, ան միեւնոյն նշանակութիւնը չունի երկու խօսակիցներուն մօտ, բայց այս անգամ զինուորականը քաղաքավարական նահանջ մը կատարած ըլլալու մէջ կը սխալի : Իր դորձը տարբեր կնոջ մը հետ է, Կարնոյ դաղթականին եւ կամաւորներու Տիկին Մայրիկին հետ :

Հեւարով, ճշոցներով, որբերու յոյսերուն եւ երգերուն ալ ոյժովը դօտեպինդ կառաչարը կ'անցնի դարերով արիւնտտած սարահարթերէն, կը մագլցի վերերը, կը կորսուի անտառներու մէջ եւ երկինքին փռուած բարձունքներուն վրայ, եւ վերջապէս յողնատանջ՝ իր շալկը կը թափէ Սարը Ղամիշի կայարանին մէկ անկիւնը : Քիչ հեռուն պար բռնած կը սպասեն հսկայ տնակներ, բարձր, կլոր, պըսպղուն անիւներու վրայ : Ասոնք ունին գողաւոր առաստաղներ, պատուհաններ, երկու ծայրերը դռներ՝ սանդուխներու վրայ, որոնք ափիբերան կը թողուն Թրքական Հայաստանի գաւազները :

Քիչ անց, լքուած կալուածի մը դեղեցիկ պարտէզին մէջ լարուած վրաններուն առջեւ, անոնք, գոյնզգոյն ժապաւէններու պոչերէն բռնած, մանչ ու աղջիկ փոխնիփոխ, սիւններու շուրջ կը դառնան մէջ-մէջի՝ խոնարհելով ու զիրար բարեւելով : Կ'երգեն հիւսելով :

«Կարմիր-կապոյտ ժապաւէն ունիմք,

Ա՛լ ի՞նչ կ'ուզեմք, պէտք է հրնուիմք» :

Ոչինչ առայժմ : Տարիք եւ օրուան նորութիւնները զիրենք կ'ամբացնեն անմահութեան դադափարին հետ : Ի՛նչ որ կ'ուզեն, պիտի ունենան հաւատքով :

Պիտի գան կուշտ փորով անկողին մտնելու օրեր : Գեղեցիկ հագուստներ պիտի ունենան : Իրենց սիրելիները պիտի վերազանեն, եւ շուտով : Դե՛ռ աւելիին կը ձգտին անմիջապէս, պիտի յաջողին պատժել չարերը, վերջ պիտի տան աշխարհին մէջ տիրող անիրաւութիւններուն :

Ու դո՛հ են, զուարթ, ճոռոողուն, վերացած, ապահով :

Սարը Ղամիշը խեղդող լեռները կ'արձագանգեն անոնց երգերն

ու մտածումները: Հոգատար տիկիները կը հետեւին ու կը հրահրեն ընդարմացող խմբակները:

Անոնց հետեւիլ կը թուի նաեւ, խումբին ճամբու ընկեր «Բարեգործականի սանը», կանաչներուն վրայ մեկուսի ընկողմանած բարդ հաշուեկշիռի մը մանրամասնութիւններուն մէջէն ելք մը փնտռողի լրջութեամբ:

— Տղայ ջա՛ն, ինչի՞ դու էլ չես ընկերանում սրանց խաղերին:

Մինչդեռ անոր ականջին ուրիշ ձայն մը պատուար քաշած կը կրկնէ հօրը կողմէ բաժանումի պահուն շեշտուած խօսքերը.

— Գնա՛, մա՛րդ եղիր: Հոս չօպան կը մնաս: Բայց թի՛ղ մ'անգամ պէտք չէ բաժնուիս քրոջմէդ:

Հեծկլտուքներու մէջ արտասանուած «այո՛»ն է որ կը տապակէ իր հոգին, մինչ քրոջը անուշ դէմքը մեղադրանքի ժպիտներով կը փսփսայ՝ «դիս սալտատներուն մէջ ձգեցիր»:

Խմբակները կը շարունակեն.

«Մէ՛կ ձախ, մէ՛կ աջ, միշտ յառա՛ջ, յառա՛ջ,

Յառա՛ջ, յառա՛ջ, հիւսեմք քաջ-քաջ:»

Ե՛ս ալ ոտքի, եղած հրաւերներուն բարեացակամ ողի ցոյց տալու մտօք, կը յառաջանամ մօտիկ խմբակին, մտածումներուս հիւսքը շարունակելով:

\*\*

Քրոջմէս բաժնուած ըլլալուս միակ տուեալը բաւարար չէի սեպեր: Երկուքս ալ սակայն չէինք յարգած մեր ծնողաց հրամայական միւս պատուէրը՝ անբաժան մնալ: Ուսման գեղեցիկ հեռանկար մը մեզ անակնկալի բերած էր: Արտաքին ճնշումներու եւ աճասպարանքով տրուած որոշումը արգելք եղած էր այդ բաժանման այլազան հետեւանքներուն հաշուեկշիռն ընել:

«Գեղօն ի պատիւ հայ լեզուի»:

«Կուկուչկան» ողջունելու համար յարդարուած բեմէն, ինքնամոռաց եւ համարձակ, ե՛ս ալ հողեւին թռիչք առած էի, «ինչպէս գետ մը անհուն, հինաւուրց, անմատոյց լեռներու բարձունքներէն ծընած...», ու ապա խելայեղ ծափահարութիւններու մէջ խլացած, հագիւ կ'անդրադառնայի թէ ինչպէ՛ս, աչք ու միտք նո՛ր միայն բաց, կը դանուէի Սարը Ղամիշ կոչուած կանաչագեղ ձորին խորը՝ անտառներով բանտուած:

Մտածումներուս տանջող շղթան ի վուր կը ջանամ բեկանել, երբ ահուդողի մէջ մերթնդմերթ ձեռքս ծոցս կը խրուի: Չըլլայ թէ միակ թանկագին առարկան որ ունիմ, թոած ըլլայ «կուկուչկայ»ի

բաց վակոններուն վրայ մեր կուրծքերը քերելով փախչող հովերուն հետ :

Ծոցիս այդ փոքրիկ հատուածը ամենէն տաքուկն է՝ հոն է թղթիկը, վարդագոյն երազներու ներշնչարան, միաժամանակ ինքնութիւնս ճշդող :

Ամբողջ որբանոցի մը «կուկուզկայով» Թիֆլիզի շրջանը փոխադրելու համար տրուած արտօնութենէն պէտք էր օգտուիլ :

Հինգ օրուան մէջ Տիկիմ Շուշանիկ Տէր Գրիգորեան յաջողած կամ բռնադատած էր Բարեգործականի «լիազօր» Բալկովնիկը, զիս իր ընկերութեան «սան» յայտարարող այդ թղթիկը ստորագրելու : Իր հոգածու, ալեծուփ խանդավառութիւնը բռնկած էր ուրեմն մեր ընտանեկան եւ նոր բարեկամներու շրջանակը, եւ անոնցմով ու «Պըքըստըն»ի Գպրոցին ընկերներովս շղթայուած «կուկուզկայ»ի կայարանը գտած էի ինքզինքս :

Երբ ան սկսաւ սուլել ու իր կոջերը ծոմոկելով տքալ ու շարժիլ, պատահածին մէջ երկո՛ւ հոգի միայն իբր թէ կը ժպտէին, մին քոյրիկս՝ ցնծագին ողջերթ մազթողներուն մէջ, միւսը՝ վակոններու վրայ երգ ու գուարթ կանչերով «մնաք բարով» գոռացողներուն մէջ :

Որպէսզի, օրին մէկը, այդ քոյրը ինքզինք չմեղադրէր իր եղբօր «չողչողուն» ապազան խորտակած ըլլալու յանցանքով, ու եղբայր մը, որ չէր կրցած հանդուրժել իր հասցէին նետուած մեղկ, անարի ակնարկութիւնները, երբ համոզելու կոչուած ուրիշ բառեր անլսելի մնացեր էին :

Արդէն ուշ էր, աքցանի ժանիքներուն պէս Սարը Ղամիշի ձորը կը խեղդէր զիս :

Աչքերս կրկին ինկան գոյնզգոյն ժապաւէններու սիւններուն վրայ, կարօտ յագեցնելու յանդուգն շող մը կը փորէր ներսիդիս :

Սեփական որոշում մը, ամբողջութեամբ իմս՝ առաջինը :

Քիչ մը հեռուն, վարը, ձոր թափող անտառին շուրջը, իրարմէ աւելի լայն երկաթէ ցոլցուն գծերու վրայ պար բռնած սքանչելի տրնակներն են հիացումիս առարկան : Այդ շարքին կը տրուէր «գնացք» անունը, որով «գնալու էինք» : Գծերուն վրայ վեր-վար շոգի փչող մեքենաներ գիրար կը խաչաձեւեն, բարեւ կու տան հօր ճիչեր արձակելով, «պօեզտ»ներ կը կոչուին ասոնք, միմիայն ասոնց ազմուկը իրենց արձագանգներուն վրայ գումարելով, արդէն գաղափար մը կը շեշտուէր՝ որ իսկապէս լուծութիւնը ոսկիէ աւելի թանկարժէք ըլլալու էր Սարը Ղամիշ սահմանային քաղաքին մէջ :

Ուղեկիցներս, աննպատակ, գուարթ պահեր կ'անցընեն, ես՝ անհամբեր եմ : Պէտք է սակայն սպասել, որ կայարանապետը յաջորդող

«Գնացք»ներէն մէկուն մէջ մեծ խումբ մը տեղաւորելու չափ տրամադրելի վակոններ ունենայ :

Վերջապէս, զիրար հրմշակելով, հետաքրքիր տղաք կը խուժեն վակոնի երկու ծայրերու դռներէն ներս, լայն, մեծկակ խուցերու պատուհաններն են ասոնց մրցակցութեան նշանակէտը :

«Գնացքը» սար ու ձոր կլլելով կը սուրայ : Ալէքսանտրապօլ քաղաքին մերձաւորութիւնը յայտարարող սուլոցը կը ցնցէ էութիւնս, որոշումս անխախտ է այդ անաղանդին ի լուր, կը հրահրէ մեծ մայրիկս տեսնելու կարօտս : Հոն են հօրեղբայրս ու իր զաւակները :

Ունիմ անուն մը : Ո՛չ մէկ ուրիշ ցուցմունք զանոնք գտնելու :

Վար կը թռչիմ : «Գնացքը» սողալով կ'անհետի : Միս-միտակ եմ այլեւս :

Լայն պատուհանին առջեւ առանձնաշնորհեալ տեղ մը տուին տղաքը, սակայն հօրեղբայրս գտնելու միջոցներուն մէջ խորասուզուած, կործանեալ Անիի աւերակներուն անապատային տեսքը որեւէ կերպով չյուզեց զիս :

Հօրեղբայրս նախապէս արհեստ մը չունէր, մեծ շնորհք ցոյց տուած էր կահագործութեան մէջ՝ բացառիկ օրինակով մը թէեւ : Ամերիկահասնելուն, իր մէջ սափրիչի կոչում տեսած էր, եւ առանց աշկերտութեան՝ այդ արհեստին փարած : Երգնկայի մէջ, երբ այլեւս ընտանիք սպրեցնելու հոգն ունէր, հետամուտ եղած էր սափրիչի կրպակ մը ունենալու : Ուստի համոզուած էի, որ սեփական խանութի միջոցներէն զուրկ, անպայման սափրիչի մը մօտ աշխատանք գտած ըլլալու էր :

Դէպի արեւմուտք, կայարանէն բաւական հեռու էր քաղաքը : Հարկ էր պտըտիլ ամէն փողոց, «վարսավիրանոց» հարցնել, ոչ ոքի ծանօթ բառ մը :

Ուստի, որպէսզի մի գուցէ մտնամ, «բարիքմախեր» «տերմին»ը շարունակարար կրկնելով, «քայլ յառա՛ջ»ի հրահանգ տուի :

Ալէքսանտրապօլը, այն ատեն, մեծամասնութեամբ հայարնակ քաղաք մըն էր՝ ցածրիկ տուներով, զիրար ուղղահայեաց խաչաձեւոց՝ կանոնաւոր փողոցներով, առհասարակ հողածածկ : Ուրկէ՛ կու գայի, այդ ինձ համար սովորական յարգարանք էր :

Առանց փողոց մը զանց առնելու դիտաւորութեամբ, սկսայ հետախուզողի աշխատանքիս : Կայարանէն դուրս բաւական քալելէ յետոյ, ինձ կը թուի որ քաղաքը կը ծաւալի ձախիս վրայ : Անցայ ձախ մայթին վրայ, եւ առաջին երկար փողոցին անկիւնը կեցուցի տարեց կին մը :

— Մայրի՛կ, այս փողոցին մէջ սափրիչի խանութ կա՞յ :

— **Չեմ իմանում :** Անցաւ :

Փողոցները ձգուած են դրեթէ հիւսիս-հարաւ եւ արեւելք-արեւմուտք ուղղութիւններու վրայ : Ուստի նախապատուութիւնս տուի հիւսիս-հարաւին , ու անմիջապէս ձախ դարձայ , երկու կողմի վրայ խանութ փնտռելու :

Բեռս թեթեւ էր : Յոգնութեան հեռանկարը աւելորդ հոգ մը : Տոպրակիս մէջ կար զոյգ մը փոխնորդ , երկու զոյգ գուլպայ , եւ հինգ թաշկինակ : Անոր կողքին հաստատած էի որբերու կառավարչուհիին կողմէ ինծի շնորհ ըրած ուտելիքի կապոցը , որուն պաշարը մէկ օր պէտք է բաւեցնէի , այսինքն յաջորդ օր նո՛յն «գնացքը» առնել պարտաւոր էի , եթէ պրպտումներս անհետեւանք մնային :

Արեւելք-արեւմուտք Ալէքսանտրապօլի հորիզոնը փակող բարձրաբերձ լեռներ չկան , արեւուն կորուստը կճեց սիրտս , մութին հետ միտքս ալ մէ՛կէն թանձրացաւ , բարձրաձայն յայտարարեցի որ այս քաղաքին մէջ սափրիչ չկայ :

- Պարո՛ն , այս փողոցին մէջ սափրիչի խանութներ կա՞ն :
- Չեմ հասկանար , ի՞նչ ես ուզում ասել :
- Վարսափիրանոց :
- Է՛լի չհասկացայ :

Տուած բացատրութենէս ծնաւ քարիփմախօտը : Բայց անցորդը Երեւանցի էր : Անցաւ :

Տակաւին ուրիշ անուանափոխութիւններ տեղի պիտի ունենային :

Տիկին Շուշանիկի կողմէ տրուած եւ գրպանիս մէջ ազուցուած ուրբիւնները , իրենց տե՛ղնուտեղը վերածուեցան «մանէթ»ի :

Մեծ եղաւ ապշութիւնս , երբ փողոցի մը մէջ , պղպղակաւոր շէրպէթ (լիմօնատ) ծախողը ինձմէ շաւի մը պահանջեց , մինչ ունեցածներս կոպէկներ էին :

Գիտաբար կը հետեւէի տեղացիներու հայերէնին , որոնք կարծես խօսքը մէկ ըրած՝ զիս կ'ուզէին զարմացնել : Ալէքսանտրապօլցի էի , այլ Կիւմրեցի :

Երբ գաղթական հայ ընտանիքի մը տունը ցոյց տալ կը խընդրեմ ,

- Ես գաղթական չեմ , Գիւմրեցի եմ : Թ՛թուած հեռացաւ :
- Կասկածը փորս մտաւ : Սխալ քաղաք իջեցուցին զիս :
- Փողոցի մը անկիւնը , ծորակաւոր ազբիւրի մը մօտ կանգնած կնոջ ,

— Մայրի՛կ , ի՞նչ է այս քաղաքին անունը : Ալէքսանտրապօլ , թէ Կիւմրի :

Ապա ինծի դարձաւ , երկար դիտեց , սկսաւ ծիծաղիլ :

— Երկո՛ւսն էլ է : Հեռացողը ես էի :

Յողնած եմ , սակայն մու՞թն է զիս վհատեցնողը : Յատկապէս դրուած , դէ՛մս ցցուող բրգածեւ , վրան տափակ , քարի մը վրայ դըրած պայուսակս վար թռած էր , շնիկ մը կը հոտոտէր զայն , կը փորձէր բզբտել , հազի՛ւ կըցայ խլել : Հա՞պա եթէ զամբռ մը ըլլար , կամ մեծկակ շուն մը :

Պատասպարանի մը անհրաժեշտութիւն շեշտող վախս կը սաստկանար : Ուղղահայեաց փողոցներուն կէսէն աւելին չափչփած էի՝ ապարդիւն :

Ահա փոքրիկ հրապարակ մը , պանդոկ մը , քովը երբորդ վարսափերանոցը : Առաջինին մէջ՝ վարպետը եւ աշկերտ մը գործի վրայ : Երկրորդին սափրիչը բաց դրան առջեւ կանգնած՝ մէջը ո՛չ ոք :

Երրորդին մէջն եմ , սպասողներ ալ կան : Երկու վարսափերները միկատնին չրխկացնելով զիս կը դիտեն : Հորեղբայր չկայ :

Որոշեցի պանդոկի հա՛րցը ձեռք առնել :

— Տեղ չունեմ , կը պատասխանէ , պեխաւոր , խոժոռ պանդոկապետը , զիս գննելէ յետոյ :

— Սենեակ «չեմ ուզում» : Աթոռ մը , նստարան մը բաւ է , միայն դուրսը չմնամ :

— Էստեղ խօ Ղազարապատ չի : Հարկ է վճարել :

— Որքա՞ն է հարկաւոր :

— Հի՛նդ «մանէթ» :

Բայց ես մանէթ չունիմ :

— Հինդ ուրբի , է՛լի , միեւնոյնն է :

— Այդ իմ ամբողջ ունեցածս է :

Առաջնորդեց զիս դէպի դուրս : Սպասեց որ մեկնիմ : Լուռ եմ ու անշարժ :

— Դուն ո՞ր տեղացի ես , եւ ի՞նչ գործ ունես էս կողմերը :

Ինքնութեանս բաւականաչափ տեղեկանալէ յետոյ , ձեռքով նշան ըրաւ որ իրեն հետեւիմ : Միջանցքին մէջ դուռ մը բացաւ , խուց մը , մու՞թ , հոն ցոյց տուաւ խարխլած թիկնաթոռ մը : Պահանջեց որ գոյքերս , դրամս , լիազօրագիրս իրեն յանձնեմ : Այս թղթիկն էր որ իր վերաբերմունքը փոխել տուաւ : Զիս գողի կամ ստահակի տեղ դրած էր :

— Այստեղ կը մնաս մինչեւ առաւօտ , մինչեւ ես զարթնեմ ու գոյքերդ յանձնեմ : Կը վերցնեմ մէ՛կ մանէթ :

Խնդրեցի որ տոպրակէս անջատէ ուտելիքի ծրարս , եւ մանաւանդ զիս շատ կանուխ արթնցնէ՝ լուսաբացէն իսկ առաջ :

— Ինչի՞ ես էդքան «վրազում» :



Վրացումը թէեւ չհասկցայ, բայց աւելցուցի ուրիշ խընդրանք մը:

— Ո՞ւր է, ո՞ր փողոցին մէջն է Ալեքսանտրապօլի Հայոց մայր եկեղեցին, կամ մեծագոյնը:

Ուտելիքս անշատեցի, մնացեալները իրեն յանձնելու գործողութիւններու ատեն անպատասխան թողուցի շատ մը հարցումներ: Գոհ էր որ ժամ առաջ պիտի հեռանամ, յայտնեց որ ժամը ութն է, երբ հեռուէն զանգերու ձայն մը կը լսուէր՝ համաչափ ընդմիջումներով:

Երկրորդ փողոցին մէջն էր Ս. Սարգիս Հայոց մայր եկեղեցին, պանդոկէն մէկուկէս քելոմեզր դէպի քաղաքամէջ, ուր պիտի գտնէի նաև «բարիքմախերներ»ի մեծ խանութներ:

Պանդոկապետը այնպէս խնամքով կղպած էր չորսդին, որ երբ ուտելիքիս կէսը թեթեւցնելէ վերջ ջուր փնտռեցի աղջամուղջին մէջ, ծորակի հետք չգտայ: Յուսարեկ, խարխափելով կրցայ թաղուիլ թիկնաթոռին մէջ, ինքզինքս յանձնելով Ս. Սարգիսի բարձր հովանաւորութեան:

Արդարեւ պէտք ունէի ապաւինիլ Սուրբին մշտակայ ներկայութեան, որ մտածումներու տեղեակ, իր սրընթաց երիվարով երթայ գտնէ Անա, անոր թելադրէ որ չթերանայ իր ամէնօրեայ առաջին պարտականութիւնը կատարելու մէջ, ինչպէս սովոր էր մեր երբեմնի շէն օրերուն, ու ըլլայ մանաւանդ ճշդապահ տեղւոյն Հայոց մեծ եկեղեցիին դրան առջեւ:

Ու թէեւ զանց առած էի պանդոկապետին ինչոններուն պատասխան տալ, սակայն սերտօրէն փարած էի դէպքերու այս դասաւորումին, եթէ Սուրբը ոյժ ու կորով ներշնչէր Անայիս, զայն նոյն դիշերն իսկ առողջացնէր՝ եթէ հիւանդ էր մեծ մայրիկս:

Առանձնարանիս լոյսը կը շողար անոր դրան վրայի փոքրիկ եւ միակ պատուհանէն, անոր աղտոտ ապակին սրբելէ յոգնած, երբեմն այնքան ազօտ, որ կարծես շունչ առնելու համար կանգ կ'առնէր: Իբրան դիմաց մէկ պատէն միւսը տախտակէ բարձրորակ նստարան, մերկ, որուն վրան միջահասակ մարդ մը կրնար ինքզինքը փռել: Թիկնաթոռը անոր կռթնած էր, գետինը մազէ հին կարպետ մը: Նոյն պատին վրայ սեւցած իւղաներկ մը՝ որսի տեսարան, միւս պատերուն վրայ ընտանեկան նկարներ, խառնիխուռն, փոքրածաւալ, առանց շրջանակի:

Հոն փակուելէս վերջ պանդոկը կենդանութիւն կը ստանար, ու բաւական վերջ բոլորովին պիտի լռէր: Անոնց մասին լսած էի պանդխտութենէ վերադարձողներէ, բնաւ տեսած չէի: Մեր քաղաքը կար «խան» կոչուած ընդարձակ բակով չորս-բոլորը պատերով

չէնք մը, ուր ճամբորդներ եւ կենդանի իրենց բեռներով կը գիշերէին : Անոր դռնէն մի'այն դէպի ներս ակնարկ նետած ու անցած էի, ու անոր բակի ցեխն էր որ տպաւորած էր զիս :

Իմ այս «Հիւրանոցիս» մէջ, Հազիւ լուսաւորուած, երբ եռուզեռը բոլորովին դադրեցաւ, մէջս վախ ինկաւ, սակայն ա'յնքան կամազուրկ վիճակ ունէի, որ եթէ նո'յնիսկ փոխնորդս եւ ռուբլիներս գոհել ուզէի՝ ոյժ չունէի խոյս տալու, թիկնաթոռը ուժգին գրկած էր զիս :

«Կիրակի է, կէսօրուան ճաշի վերջին պատառը մնաց սեղանին վրայ : Տրդատ, Գարեգին, Հրաչեայ, եկեր զիս կը կանչեն : Երբեք ձիւնը այդպէս ծածկած չէր տուն, ծառ, լեռ ու խորշ : Արեւու այդքան հսկայ սկաւառակ տեսած չէի : Կապոյտ Հայելիին մէջ կը ցոլար գետնի Համատարած ձիւնը, եւ դուրսի արտասովոր լուսաւորութեան մէջ ցցուն էակները ընկերներս են, անկերպարան, սեւերու մէջ պատանքուած : Միւսները արդէն որսի վայրն են : Հեռուն ձայներ, կաքաւի երամակի մը յայտնութիւնը կը բացականչեն, պէտք է աճապարել, պաշարումը սկսած է : Դէմս կը ցցուի Ս. Սարգսայ ապառաժը, տարակոյս չկայ Իւչպէկի դպրոցական ընկերներս են, մեր յաճախակի ձմեռնային որսի վայրին մէջ :»

«Միայն թէ, միայն թէ ի՞նչ գործ ունին մեր ուսուցիչները ապառաժին վրայ : Թուղթ—մատիտ ունին, բարձրաձայն մեր անունները կ'արտասանեն ու կը գրեն վաղուան գէրօները :»

«— Թող գրեն, մի' վախնաք, կը պոռայ Գարեգին : Մէյմէկ կաքաւ, ու գէրօները ջնջել կու տանք :

«— Բայց չէ՞ մի որ անոնք Երեցագրակ, իրենց կիներուն մօտ մեկնած էին, ե՞րբ վերադարձան :

«Ե՛ս եմ պոռացողը, ու կանգ կ'առնեմ : Ս. Սարգսայ քարը ծածկուած է միապաղաղ ձիւնով, վրան ոչ ոք, աչքերս կը շրջեմ անոր Հանդիպակաց լեռնաշղթային վրայ, Օձգեղէն իջնող «ալէլուիա»-յէն սեւ գիծ մը կը յայտնուի, ու լուրթիւնը կը խզուի «տաուլ-զուռնայ»ի ախորժալուր մեղեգիով :

«— Այս խիստ ձմեռին Հարսնըւո՞ր : Ո՛չ կաքաւ կայ, ո՛չ ընկեր, մինակ եմ : Ուշրկցիկ խենթեցե՞ր են, Հազիւ արտասանած, քաղաքի կողմէն Հրացանի Համազարկերէն ահաբեկած ի զուր կը փորձեմ դէպի լեռ վազել :

Դէմքիս վրայ ինկող լոյսէն ընդոստ կ'արթննամ, միջանցքին դուռը բացած պանդոկապետը առաւօտս կ'ողջունէ : Յանցանքի վրայ բռնուողի մը պէս անճարակ, գետինէն վրաս քաշած կարպետը վար կը նետեմ, ու ոտքի՛ :

— Երեւի մըսել ես : Ժամ առաջ ինձմէ ազատելու մտօք, մէկ ձեռքով տոպրակս, միւսով մնացած մանկերները, ու կ'աւելցնէ :

— Յոյց տուածս փողոցի ձախ մայթի կիսուն հանդիպելու ես եկեղեցւոյ երկաթեայ վանդակորմին :

Նշանակուած փողոցին ծայրն եմ : Բոլորովին ամայի : Պայծառ օդ մը, անամպ : Ուշացողի վախս քայլերս կ'արագացնէ : Յուրտ էր : Տի՛նկ, տա՛նկ, ժամը 6 : Աչքերս մայթի հեռուոր ծայրին :

Հոն շարժում մը կը նշմարեմ . . . : Կին մըն է, կարծես անշարժ ուրուական մը, որ հետզհետէ կը խոշորնայ :

Ներսս անօրինակ թփուտում մը, դէպի զայն քաշող ոյժ մը կը ծնի, թերեւս ցուրտն է դողդղալուս պատճառը :

Անան տեսնելու ցանկութիւնս կը շեշտուի, անոր հասակը, շարժումները, վերջապէս գլուխը, լաշակով կղպուած շրթունքները կը տեսնեմ կարծես :

Վանդակորմի ծայրին թերահաւատութեան փոքրիկ նշոյլը փառատելու համար կանգ կ'առնեմ, ցուրտն արցունք լեցուած աչքերս կը ճմուտեմ :

Տասը քայլ հազիւ կը բաժնէ մեզ, այլեւս տարակոյս չունիմ, աղբիւրէն բուռ մը ջուր, ու կը խաճակնքէ : Չեմ ուզեր տակաւին խանգարել իր շարժումները, կրկին կը խաչակնքէ :

— Անա՛, կը մըմնջեմ դողահար : Տոպրակս դետին կ'իյնայ, բայց Անաս դրկիս մէջ է : Սոսկումով ինքզինքը ազատելու անզօր ճիշդ կը թափէ :

— Մեղա՛յ Տէր, մեղա՛յ, չա՛ր սատանայ. ծօ՛, տղա՛յ, դուն ո՞վ ես, ճի՞ն ես, թէ՛ փերի՛ : Թո՛ղ տուր, ինձմէ ի՞նչ կ'ուզես :

— Ես եմ, Անա՛ :

— Զայնիդ դուրպան, դո՞ւն ես : Ո՞վ ամենազօր, ի՞նչ կը տեսնեմ, դուն ուրի՞՞ «բուսար» : Գիշերուան երազս էր, ըսի ժա՛մ երթամ, որ Աստուած բարին կատարէ :

Դեռ չի հաւատար, թեւերուս մէջէն խոյս տալով աչքերը վըրաս են : Զեռքերէս բռնած զիս կը քաշէ վանդակորմին քարէ ցած պատին եզերքը :

— Ծունկերս բռնուեցան, հըլէ քիչ մը շունչ առնեմ : Կը կռթնի քարին՝ ձեռքերը աչքերուն :

Ես այլեւս ըսելիք-ընելիք չունիմ :

— Այս գիշեր չգիտեմ ո՞ւր էինք, մեծ հայրդ եկած էր, քեզ կարօտցած էր, կ'ուզէր հետը տանիլ : Էվէլ-պակաս խօսք չմնաց, թափեց, բայց ձեռքդ թող չտուի, ինձի՛ մնացիր :

Բաւական վերջ ոտքի ելաւ, կարծեցի եկեղեցի պիտի մտնենք :

— Ո՛չ ըսաւ: Շուտ տուն երթանք: Արթնցայ, ու ամբողջ գիշերը աղօթք ըրի, Աստուած ձայնս լսեց: Ծօ՛, իրա՞ն դուն ես:

Երկու այտերս ձեռքերուն մէջ էր, փոխնիփոխ կը համբուրէր:

— Ամիսները տարի դարձան: Ըսի ա՛լ եաւրիկներս չեմ տեսնար, ինձ այտեղուանքը հողը կը դնեն:

Որքա՞ն քալեցինք, քանի՞ փողոց անցանք, ուշադրութեանս արժանի բաներ չէին այլեւս: Անան ձեռքս պինդ սեղմած կ'առաջնորդէր:

— Մինա՞կդ ես, քոյրդ հետդ չէ՞: Հօրմէդ, մօրմէդ լուր առի՞ք: Փողոցները կենդանացեր էին, իրարու ետեւէ սրննթաց ձիու կառքեր:

— Ասիկա մեր փողոցն է: Բաւական ատեն լուռ էր, մնացեալ հարցումները վերապահած էր տան մէջ: Այս փողոցին մէկ ծայրը կայարան կը տանի ըսաւ, միւսը դէպի հօրեղբօրդ աշխատած խանութը:

Փողոցի դռնէն ներս, նեղ ու երկար բակի մը երկու կողմերուն վրայ դռներ կ'երեւէին, անոնցմէ ամէն մէկը գետնայարկ երկու մէջէ-մէջ սենեակներու անցք կու տան: Հոն կը բնակին մերոնք: Այդ բնակարաններուն դուրսի դրան առջեւէն անցած էի, ու ինձ կը թըւէր թէ աճապարած էի անկէ ներս մտնող տարեց կնոջ հարցում ընել, ու առանց համարձակելու շարունակած էի ճամբաս: Շրջազայելու նախապատուութիւնս ուրեմն սխալ ուղղութեան տուած էի, բախտս իր ժպիտը վերապահած էր հեքեաթային հանդիպումի:

— Մայրի՛կ, ե՞րբ դացիր ժամ, ե՞րբ եկար, ընդառաջ եկաւ հօրեղբայրս, ու ափիբերան մնաց:

— Հապա՛, թող չտուիք երազս պատմեմ: Իմ երազներս սուտ չեն:

Հօրեղբայրս գրկեց զիս: Քիչ անդին փոխմիւսի մը վրայ հարսիկս կաթ կը տաքցնէր Վարսեցիկին համար, առանց անցուղարձին հետեւելու: Գիտէի որ տղաքը որբանոցն են, վազեցի Վարսեցի մըրայ, գիրկս առի, սկսաւ լալ: Մոռցա՞ծ էր արդէն զիս:

Անան, որ բացակայած էր պահ մը, ներս ինկաւ հեւալով, հացի կտոր մը, կաթի շիշ մը ձեռքին:

Ո՞վ, ամենազօ՛ր Անաս: Դուն, որուն մառանին հացի երկու դարակները լեփ-լեցուն էին, որ կաթին դոյլերը քանի մը հեղ կճըրտելով բակէն վեր կը բերէիր ամէն օր, դուն, որ վարի դռնէն մտնողը կչտացնելէ վերջ, վերի դռնէն կը ճամբէիր տուպրակը լեցուն ու վերէն մտնողը վարէն: Այս պահուս ի՞նչ մեծ զոհաբերութեամբ յաւելեալ բաժին մը ճարելէ կը վերադառնաս: Հարազատներէ բոլորուած՝ չեմ յաջողիր այս տխուր մտածումները վանել:

Մտիկ կ'ընեն պատմութիւնս : Անայիմ աչքը կաթին ամանին վրայ է , որուն մէջ հաց բրդած է , ինչպէս երբեմն : Կ'ընդմիջէ որ ուտեմ , որ իր այնքան թանկ ձեռք ձգած կաթը չպաղի :

Վարսեմիկը դրկիս մէջ , աչքերը աչքերուս , ժպիտներով կը շոյժ զիս : Հօրեղբայրս արդէն պատրաստ է դործի մեկնելու :

— Այս իրիկուն շոգեկառք պարտաւոր եմ առնել , պէտք է ուրեմն անմիջապէս երթամ տղաքը տեսնեմ :

Այս ալ ուրիշ անակնկալ յայտնութիւն մը :

— Ծօ' , խենթ ու խելառ բաներ մ'ըսեր : Նախ տղաքը շատ հեռու տեղէն , օ'ր մը պէտք է երթալ—գալու համար :

— Սպասէ՛ Կիրակի , կ'ըսէ հարսիկս , անոնք չգան , մե'նք կ'երթանք :

Կիրակին հեռու էր :

Անան դեռ ուրիշ արարողութիւններ ունէր . կ'ուզէր նախ ջուր դնել , զիս լողցնելու համար : Մերժեցի կտրուկ կերպով , պնդեցի որ ես շատ մաքուր էի : Թերեւս ջուր ունէին , բայց ի՞նչպէս պիտի տաքցնէին , եւ ո՞ր պիտի լողցնէր զիս . անպայման բակին մէջ , անկիւնը , լաթի կտորի մը ետին :

Երկու ոտքով ցատկեցի հօրեղբորս առաջարկին վրայ : Իրեն ընկերանալ ու մազերս թեթեցնել : Խանութը բանալը հօրեղբորս պարտականութիւններուն մաս կը կազմէր , կայարանէն մեկնող ճամբան քիչ մը ցածնալէ վերջ փոքր բլուր մը կը բարձրանար , անոր կէսին վրայ էր վարսավիրանոցը՝ բարիֆմաիսէր : Առաջին յաճախորդը ընդունեց , երբ դործս աւարտած , հարց կու տար ապագայ ծրարիս յաջողութեան մասին : Ի դուր կը սպասէի որ սակաւախօս հօրեղբայրը քաջալերական բառ արտասանէ : Գիտէի իր բնաւորութիւնը : Խօսողը ես էի , գաղտագողի հեռանալու վրայ էի՝ օգտուելով յաճախորդներու խուժումէն :

— Եթէ տունը չգտնես , հո'ս եկուր , կէսօրին միասին կ'երթանք :

Նոյն ուղղութեամբ սկսայ քալել : Բլուրին դադաթն էի , աջիս կը ցցուէր քարակերտ պատկառելի շէնք մը՝ պաշտօնատուն : Դէպի հարաւ , ամայի , ընդարձակ տարածութիւն մը , որ կը ցածնար դէպի Ախուրեանի անտեսանելի ափը , ուրկէ անդին թեթեւ շեղութեամբ դէպի հորիզոն կը բարձրանար դաշտային հողամաս մը :

Քաղաքի վերջաւորութիւնն էր՝ ետ դարձայ : Ինձ համար նորութիւն , չըջողութեամբ մարդոց կը հանդիպէի , առաջին անգամն էր որ խանութներու ճակտին ոռոսերէն եւ հայերէն նշանատախտակներ կը տեսնէի , անցորդները անխտիր հայերէն բառերով բարձրաձայն զիրար բարեւելով կ'անցնէին :

Փողոցին անկիւնը դէմս կը ցցուի ներսէն աթոռներ դուրս բերող խանութպան մը, երկու ուղղութեան վրայ արդէն աթոռ-սեղաններ կան՝ յաճախորդներէ զրաւուած: Սրճարան է: Հայեր են: Անոնցմէ մէկուն առջեւն եմ:

— Պարո՛ն, Բոլիկոն անուն որբանոցներուն ճամբան կը հաճի՞ք ցոյց տալ:

— Է՛ս բոպէին: Կանչեց սրճարանապետը:

— Փողոցի վերջաւորութեան, քաղքից դուրս, դաշտին մէջի շէնքերն են:

— Ոտո՞վ ես գնալու, ա՛յ տղայ, վրայ տուաւ ուրիշ մը, կուրծքը փղոսկիէ ձողիկներով զարդարուն, փափախաւոր:

Ընդուս դուրս ինկած տեղ հասայ: Ընդունելութեան օր չէր, ո՛չ ալ մանաւանդ ժամը, տղաքը դասարաններն են:

Տնօրէնին մօտ, դիմեցի մեծագօր թղթիկիս օգնութեան, տըպաւորիչ՝ մանաւանդ համոզիչ:

Մեր ծննդեան օրերէն ասդին, տակաւին տարին չէր բոլորած մեր բաժանումը, մէկ յարկի տակ ծլած-ծաղկած եղբայրներ էինք, բաժնած տան թէ՛ կաթին, թէ՛ մարդոց համն ու սէրը: Այժմ քովս կըկզած, ժամ մը մտիկ ըրին զիս, անօթի էին բառերուս, որոնցմէ վերջինները, մեկնիլս աւետող, ստուերեցին իրենց մինչ այդ պահ մը փայլատակող աչքերը: Ներկայութիւնս, իրենց մօտիկ նո՛յն վայրին մէջ, ապահովութեան եւ լաւադոյն օրերու երաշխիք էին:

— Մեծ եղբա՛յր, ինչո՞ւ Հոս չես կենար, կ'ըսէ Արտաշէս, բաժանումի համար երբ ոտքի էինք: Հոս մեծ դպրոցներ չկա՞ն: Դուն Հո՛ս ըլլաս, մենք երջանիկ ենք, Թիֆլիզ շատ հեռու է:

Մեր սրտառուչ բաժանումը դիտողներ կային, անոնցմէ էր տընօրէնին մօտ ինձ յաջորդող «փափկասուն» տիկին մը:

Միաձի կառք մը, դրեթէ գիս քերելով՝ կանդ առաւ:

— Տղա՛յ ջան, քաղաքը շատ հեռու է, վե՛ր կաց, միասի՛ն դընանք:

Անային համար զարմանքի օր մըն էր: Չուզեց հաւատալ տղոցը քովէն դալս:

— Գաղթականի տղուն երեսը նայո՞ղ ըլ կայ եղեր այս քաղքին մէջ: Ասոնց անո՛ւնը միայն Հայ է:

Անաս, ողորմած, բարեսիրտ, իր դռները ամէն ցեղի օտարին առջեւ բաց, անպայման կը չափազանցէր: Միբար կերպով մը վառած էր:

— Հո՛ս ըլ բարեսիրտ կիներ կան, Անա՛ս, թէեւ քեզի հասնող ո՛չ:

Նետուեցայ դիրկը, անյիշաչար Անան մխիթարելը դժուար չէր:

— Թող Աստուած ամենուն իր սրտին վայել կամենայ: Ի՞նչ ըսեմ ուրիշ:

Հօրեղբորս իսկական գաղթականի վիճակը, ուրեմն մեր կրած աւերին մեծութիւնը տարբեր երեւոյթով կը ներկայանար ինձ այժմ: Նո՛յն գիշերն իսկ մեկնելու որոշումս մնաց անզրդուելի: Գիտէի որ մեծ մայրիկիս ծոցին մէջ տաք տեղ կար ինձի համար, բայց անոր արցունքի լողանքէն անհրաժեշտ էր խոյս տալ: Համոզիչ առարկութիւնն էր Սարը Ղամիշ պարտազրարար կորսնցուցած օրերս չաւելցնել:

Մեր Հազարիէն, անոր շրջակայ գիւղերէն շատ հայրենակիցներ ալ եկեր հաստատուեր էին Ալէք-Պօլի մէջ: Երեւնալուս լուրը արդէն տարածուած էր: «Ֆարի եկեր ես»ի այցելութիւններ եղան: Ամբարիկայէն իւշպէկցի հնչակեան գործիչ՝ Պետրոս Ախիկեան նո՛յն գնացքով ինձ հետ ճամբորդ յայտնուեցաւ: Անաւ համոզելու, մխիթարելու պատճառ մը եւս:

— Աստուած հետք ըլլայ: Ու կարծես իբր գաղտնիք, արցունքներուն հետ մտերմօրէն կը թափէր իր էութիւնը:

— Ծո՛ւտ մեծցիր, որ Անադ այս վիճակէն ազատես:

Երկար ատեն գլուխս վակոնի միջանցքի պատուհանին, չողեկառքին անիւներն Անայիս այդ երկու բառերը հեզեցին: Ու գիշեր մը ամբողջ Ախիկեանի պատմութիւններէն հայրիկիս կուսակցական կեանքին վերաբերեալ մանրամասնութիւն մը մնաց: Ան արդարեւ մաս կազմած էր գիւղի հնչակեան խումբին, եւ այդ խումբը ծանօթ էր «Երեսունմէկ»ներ անունով, ինչ որ կ'անդիտանայի:

Հօրս գաղափարակից ընկերը, առ ի յիշատակ, ազնուութիւնը ունեցաւ անձամբ առաջնորդուելու «Ֆարեգործականի» տունը, ուր պարտաւոր էի սպասել մինչեւ զրասենեակին բացուիլը:



## ԱՆՈՒՐՋՆԵՐՈՒ ՈԼՈՐՏԻՆ ՄԷՋ

Յանուած բախտի կոկոններ հաւաքելով կը յառաջանամ դէպի Թիֆլիզ :

Ախիկեանին հետ դէմ-դէմի նստած ենք վակոնին մէջ՝ դրան մօտիկ : Կը ծռի դէպի ինձ, գլուխս՝ փոքր պատուհանին կպած՝ կը չըջէ իրեն :

— Յոգնած ես :

Ճիշդը ըսել չեմ կրնար, աչքերս պատրաստ են պայթելու, ոյժերս պէտք է ամփոփ պահել : Ինչպէ՞ս յայտնեմ որ նորոգուող բաժանումներու կսկիծը կ'ապրիմ, ու անծանօթ վաղուան մը մղձաւանջը : Ձէի կարող նոյնիսկ ըսել թէ իր ներկայութիւնը ինչքա՞ն մեծ գօրավիզ էր ինձ համար, այնպիսի՛ ատեն մը, երբ այլեւս միս-մինակ, պիտի դարձնէի բախտիս անիւը բոլորովին սեփական որոշումներով :

Ինքը նոյնպէս պատանի, մեկնած էր Հիւս . Ամերիկա, անտարակոյս զինուորական ծառայութենէ խոյս տուած էր, ուստի հակառակ իմ ի՛րապէս յոգնած, մտադրազ եւ վշտոտ վիճակիս, սկսած էի հետզհետէ խանդավառ նկարագրել մեր շրջանի վերջին տարիներու վերելքը՝ վակոններու թրբիկոցներէ՛ն միայն ընդմիջուելով :

Ինչպէս հասցնեալ եւ կէս բերնով զինքը ներկայացուցած էին Ալէքսանտրապօլ, իւչպէկցի հայրենակիցի մը տան մէջ, իր յայտնութիւնը Կովկաս՝ ունէր առաւելապէս կուսակցական հանդամանք, ու կը գտնուէր Ամերիկա կամ Եւրոպա վերադառնալու ճամբուն վրայ :

Կը ճանչնայի իր ընտանիքը, իր ծննդավայրը, վերջին տարիները իմ դպրոցական վայրս եղած էր, ու այդ արդէն աւելի քան տըպաւորեցին զինքը դաւառի մէջ կատարուած վերելքի մասին :

Ա՛յլ տեղեկութիւններու մասին խօսակցութեանց առիթով, պատմեցի թէ ի՞նչպէս հայրս գերծ մնաց վերջին ձերբակալութիւններէն, քիւրտ Սէիդ Աղայի թաղման ներկայ եղած ըլլալուն գուզադիպութեամբ, սպանուած Թուրքերու դրդումով, իբրեւ թուրք պետութեան գաւող անձ, հայ-քիւրտ գործակցութեան ջատագով : Ախիկեան չգոհացուց իմ հետաքրքրութիւնս, բոլորովին անտեղեակ կը թուէր, դոնէ իբր հնչակեան, նման գործակցութեան մը ծրարդէն : Հնչակեան նահատակներ՝ Յարէթ-Յակոբի մասին ալ իմ կողմէ հարցուփորձը մնաց մութի մէջ :





ԱՆԴՐԱՆԻԿ

Սուրբն պահ մը քննակալութեան առիթով, թէեւ դիշեր, փորձեցի միջանցքի պատուհաններէն դուրսը դիտել: Վակոններու ճայնին երանդը կը փոխուի՝ յանկարծ, անդունդի մը վրայ ենք, այլայլածներս կը նետուիմ, ինձ կը թուի թէ վակոնը պիտի չըջուի: Միւս պատուհանէն՝ նո՛յն տեսարանը, ամպ ու անդունդ, մէջս վախը կը բազմապատուի: Կ'անցնիմ ճախին, անիւներուն թրբիկոցը կը փոխուի, հոն այժմ կը ցցուի հսկայ ապառաժ մը, միւս կողմը ձոր:

Նման յաճախակի դարձուղարձերէ յե՛տոյ միայն ինքզինքս ապահով կը զգամ, ճամբորդները միշտ հանդարտ են, ու հետզհետէ երեւոյթը կը դառնայ երկաթուղիի վրայ առաջին ճամբորդութեան տպաւորութիւններ, թէեւ միշտ թարմ:

Հայաստանի լեռներէն, անդնդախոր ձորերէն վերջ, ահա դըրեթէ դաշտադետին մը, որուն մէջէն «Կուրն է գալիս, ուրբ-մուր, Կովկաս սարերէն»: ՆախաՎերջին կայարանը, ու շոգեկառքը կը սուրայ, նախ տեղ-տեղ, ապա աւելի խիտ բնակարաններու արանքէն, Կուրի մակերեսէն բարձր, դիմացը հսկայական, գեղակերտ քաղաք մը՝ բլուրի մը տակ, անոր կողերուն փռուած:

Առաւօտուն կանուխ Թիֆլիզ ենք: Մինչ տարուած եմ շուրջիս եռուզեռը դիտել, միշտ արտասովոր ինձ համար, Ախիկեան, իր ծանր պայուսակին վրայ չոքելու պատրաստ բեռնակրի մը հաւանութիւն տուած, հրապարակին վրայ կը յառաջանանք, կառքի մը առջեւ:

Թիֆլիզ հմայած է արդէն զիս: Կառքը ձիաքարչ, կը թաւալի մաքուր, սալայտապակուած փողոցներէ դէպի Կուրի կամուրջը, ուրկէ, ձախին ձգելով փոխարքայի մը հեծեալ հսկայ արձանը, յամբաքայլ կը բարձրանայ դէպի հռչակաւոր Սոլովակ կոչուած թաղը՝ հայկական:

Քարեգործականի շէնքին առջեւն ենք: Ախիկեան յիուլի կատարած իր խոստումը, զիս կը յանձնէ բախտիս:

— Այլեւս փրկուած ես, բարի յաջողութիւն: Եթէ անմիջապէս մեկնիլ չյաջողեցայ, քեզ կը գտնեմ Ներսիսեան Վարժարանը:

Փրկուած չէի: Ինձ կը սպասէր կեանքիս ամենէն տաղնապալի ժամերն ու օրերը ապրելու փորձութիւն մը: (\*)

— Ռազմաճակատի վերապրողները այցելող մեր լիազօրը ոչ մի իրաւասութիւն ունէր ուսանողներ ընդունիլ: Սա՛ մի անպէտք թղթի կտոր է:

Յանձնարարականը կը պատուուի, կը նետուի:

— Կորի՛ր, թէ չես ուզում որբանոց գնալ:

Չուզեցի արդարեւ: Մերժեցի օրերով՝ յամառօրէն:

\*\*

Եղբայր մը՝ բախտս, յանձին Վահան Թոթովենցի դէպի ինձ կը փութար: Յաղթած էի:

Ազգային հերոսի հովանին կրող ՀԱՅԱՍՏԱՆ թերթի խմբագրատան մէջն եմ: Անդրանիկ հովանաւորած է նա՛եւ զիս, ու մաս կը

---

(\*) Մանրամասնօրէն նկարագրուած իմ ԱՆԴՐԱՆԻԿ ԵՒ ՓԻԹ հատորիս մէջ՝ էջ 44:

կազմեմ իր շունչովը դինով, ինձմէ հազիւ տասնեակ մը տարի աւելի ունեցող երիտասարդներու խումբի մը:

Այդ ամէնը ապշեցուցիչ է՝ անհաւատալի: Բախտաւորութիւն բառը արտասանել կը վախնամ, մեծ մայրիկիս նախապաշարումներէն ժառանգ վախ մը: Մի գուցէ եղածը երազ մըն է՝ կընայ չքանալ:

Ունիմ սենեակ, հոն ընկողմանելու չոր «թախթ» մը:

Շատ մը բաներ կան քոյրիկիս գրելու, կ'ամչնամ թուղթ-գըրիչ ուզել, առաջին մտածումներս սակայն իրեն կը վերաբերին:

Պիտի կընա՞մ, դառնութիւններս զանցելով, նկարագրել Ագ-գայիմ Հեքոսիմ հանդիպումս, որ մտքիս մէջ հեռոզհեռ կը բողբոջի ու կը բորբոջի:



Կամաւորներու խումբ մը, 1916, Երեւան

Կեցած՝ Ստեփան Տերտերեան՝ Սեբաստիա, Նապարթ Չրէիկեան, Յովակիմ Յովակիմեան, Վահան Չերազ՝ Պոլիս, Մկրտիչ Ասլանեան՝ Մալաթիա, Համբարձում Տոլմանեան՝ Սեբաստիա:

Նստած՝ Մետրոպ Սահակեան՝ Սեբաստիա, Չինազործ Մարգար, Պարուչիկ Մեղրումեան (Ռուսահայ), Հրանդ Կիպիրճեան՝ Երզնկա, Երուանդ Փալանճեան-Սուրիկեան՝ Արաբկիր:

Գետինը՝ Յովսէփ Եսպըճեան՝ Պոլիս, Պետրոս Մարգարեան՝ Չմշկաձագ, Եղիշէ Քաջունի՝ Արաբկիր, Պետրոս Այճեան՝ Արաբկիր:



Ս. ԷԶՄԻԱՄԻՆ

Զինքը կը ճանչնայի ցարդ ԵՐԱՆ երգարանի միջնորդութեամբ, Ամերիկա, Պոստոն տպուած: Այդ ձայնագրուած երգերով հատորը Թուրքի պիղծ աչքերէն հեռու պահելու համար թաղած եմ Իււպէկ, Սուրբ Սարգսայ ապառաժին եւ Բողոքականաց Ժողովարանին միջեւ: Հոն իր պատկերը Փէտայիի, ամբողջ էջ մը կը գրաւէ, ճերմակ ձիու վրայ, հրացանը աջին պարգած, կուրծքը փամփշտակալներ:

Հիմա իր առջեւը կեցած եմ ամչկոտ, քաղաքացիի հագուստով է, ո՛չ ձի կայ, ո՛չ դէնք, յուսախար չեմ ամե՛նեւին, միջահասակ, թիկնեղ մարմնոյն վրայ ունի գեղեցիկ գլուխ մը՝ ձիւնախառն առատ մագերով, կանոնաւոր գծերով, համակրելի եւ արտայայտիչ դէմք մը ունի:

Նստած՝ իր երեւոյթը աւելի՛ պատկառելի կը դառնայ, բոլորին աչքերը իր վրայ ինկած՝ աւելի փայլ կու տան, կը հետեւիմ մի՛այն իր ձեռքի շարժումներուն, կը սկսի ծխել, մոխրամանը իրեն կը մօտենայ, որուն մէջ մոխիր կը թօթուէ: Մեր կտրիճ Փէտայիներուն առասպելական առաջնորդին մօտն եմ, խի՛ստ մօտիկ, նո՛յն օդը կը շնչեմ, պատանեկութեան զմայլանքս, պաշտամունքի համազօր շուրջիններուս ակնածանքը, քիչ առաջ մանաւանդ, ճաշարանի վիճաբանութիւնները, որոնց կեդրոնական անձն էր, եւ որոնց հետեւած էի ուչի-ուչով, անաղարտ պատկերը կը ներկայացնեն հերոսի մը, որ այլեւս ինձ համար առասպել մը չէ:

Երանութեան բով մը պարուրած է զիս, վախ եւ ա՛յլ անձկու-  
թիւն չողիացած են անոր մէջ, ու այդ բոլորը իմ աննման քոյրիկիս  
յարմարագոյն եւ լաւազոյն բառերով գրելու մասին եմ մտահոգ:  
Տասնեակ օրեր անցած են մեր բաժանումէն ի վեր, այդքան օրեր լը-  
ռութիւնս կերած է զինքը, շուտ, շուտ պէտք բաժնեմ երջանկութիւ-  
նըս: Յարկաբաժին մը կայ ինծի վստահուած, թուղթ, գրիչ՝ ուզա-  
ծի՛ս չափ:

Վահան յայտնուեցաւ բաւական ուշ, վերմակ մը անութիւն  
տակ, հին, բայց իրեն հաւաստած էին որ շատ մաքուր էր: Վերի  
յարկերէն Եգնիկիմ հետ նոր վար իջած ենք, իր եզրայրը Եղիշէն, կա-  
մաւորական Շտապը վերջնականապէս լուծելու գործով գրադուած  
քարտուղարը, եւ չէնքին հայ պահապանը հետերնիս, որ իր մայրի-  
կին հետ վերջին յարկը կը բնակի: Ուրեմն այդ հսկայական տան մէջ,  
վերը թառած Մուկուեիմ վերին հսկողութիւնը պիտի վայելեմ:

Մինակս եմ: Անդորր վիճակ մը, ոչ մէկ բանի ցանկութիւն կայ  
մէջս, ո՛չ անօթութիւն կը զգամ, ո՛չ ալ դուրս գալու կորով եւ հե-  
տաքրքրութիւն:

Փորձի համար կ'ընկողմանիմ, ցո՛ւրտն է որ զիս կ'արթնցնէ,  
մուս-մութի մէջէն կ'անցնիմ քովի սենեակը, անոր ապակիներէն լոյս  
մը զիս կը հրաւիրէ:

Եգնիկի գրասեղանին վրայ թուղթ, գրիչ:

«Միրելի՛ քոյրիկներ, ...», «Շա՛տ սիրելի քոյրիկներ, ...»:  
Յետո՞յ: Ո՛չի՛նչ: Ժամերէ ի վեր մտքիս մէջէն ջրվեժի պէս հոսող  
բառերը գրչիս ծայրը չհասած՝ կը չքանան: Յրտեր են նո՛յնիսկ բա-  
ռերը:

Բնակարանս քննելու որոշում: Թուղթի «մառան»ի մուտքին  
տաք «գուլ» մը զիս կ'ողջունէ, հոն լո՛յս ալ կայ, առանց վերմակի՛ ան-  
գամ չմտելու գաղափարը կը ծնի, ու թղթի հակերուն մէջ խցիկ մը կը  
յարդարեմ, վերմակիս մէջ պլլուած ինքզինքս կը փակեմ անոր պա-  
տերուն միջեւ: Կազդուրիչ ջերմութիւնը երկար ատեն զիս օրօրած է  
իւր գրկին մէջ, հակառակ զիս ոտքի հրաւիրող դրան բաղխումներուն:

Յանցաւորի մը պէս վերմակը շալկած դուրս կը թռչիմ, զայն  
կը նետեմ իրեն սահմանուած թախթին վրայ, ու կը փութամ ողջու-  
նելու Եգնիկը, որ ամէն օր մի՛շտ առաջին գրասենեակ հասնողն է:

Նոր օր մը կը սկսի՝ գէթ ինձ համար:

Բաց են «ՀԱՅԱՍՏԱՆ»ի դռները: Ի դուր կը դնեմ այդ չակերտ-  
ները, ան իսկական Հայաստանն է պատանիի երեւակայութեանս մէջ,  
Անդրամիկի ներկայութեամբը նուիրագործուած:

Երէկի յետ-միջօրէի եռուզեռը չկայ: Այդ առաւուտ խմբագիր,

պաշտօնեայ, այցելու, Հաղի՛ւ ներս ինկած՝ լռիկ կ'աշխատին, իսկ ես մեղաւորի պէս կը դեզերիմ :

Եզնիկին հետ թաղային նամակատունէն դարձիս, Վահան թեւէս կը բռնէ, միւս ձեռքը թղթի թերթերով լեցուն է, ու բոլորին լրսելի ձայնով կը գոռայ .

— Տպարան կ'երթանք : Բան ունի՞ք տալու :

Գեղածիծաղ քաղաք է Թիֆլիզ : Թերեւս պատշաճ է յիշել որ հո՛ն աչքս բացի, իր գեղեցիկ թաղամասին մէջ, գրեթէ հայակերտ եւ հայաբնակ : Շարաթ մը բաւական եղաւ որ ինքզինքս հոն գտնելու ի վիճակի ըլլամ :

Ահա հո՛ն եմ, ուր, «Ոլոր-մոլոր Կուրն է դալիս Կովկաս սարերէն» :

Արեւմուտքէն-արեւելք, գետը, աջին ընդարձակ հողամասերով շրջապատուած Օրթախալայի «վիլաները» այցելելով կը մտնէ քաղաք : Յանկարծ, գրեթէ ուղղանկիւն մը կազմելով կը թեքի հարաւ-արեւելք, իր գլխին կանգնած ահագու Մետեխի հողաբլուրին ժայռերը քերելէն յոգնած, ու այնուհետեւ շարունակ, գինովի մը պէս տարուբերուելով ու ոռոգելով կը հեռանայ անվերջ, դէպի անապատ, գիրկն առնելու համար իր քոյրը՝ Հայոց Մայր Արաբսին :

Մետեխ, երբեմնի բերդ ու բանտին դիմաց, Կուրի աջակողմը, հսկայ բլրաշղթայ մը կը փակէ քաղաքին հորիզոնը, որուն ստորոտէն մինչեւ գետեզր կը տարածուի հայկական երկրորդ նորաշէն թաղամասը, գեղակերտ ապարանքներով, եւ անոր իբրեւ շարունակութիւն դէպի արեւելք կառավարական պաշտօնատուներ ու ա՛յլ հաստատութիւններ եւ բնակարաններ, որոնց կեդրոնը կը գտնուի ռուս փոխար-բայութեան գնայլիի պալատը, համբաւաւոր կեդրոնական պողոտային սկիզբը, «Գալափինսքի Բրոսպեքթ» :

Ճիշդ դիմացը, այդ պալատին վրայ կը հսկէ Մետեխը տխրահռչակ : Կուրի ձախ ափէն հոն կը բարձրանայ, մեծ շեղութեամբ, բլուրի կողքին վրայ փորուած կառուղի ճանապարհը, որ կը տանի նաեւ Հայոց հինաւուրց թաղը՝ Հալլապար, ուրկէ, շոգեկառքի գծին ուղղութեամբ Պաքու՛մ-Պաքու, ո՛չ մէկ բնական արգելք քաղաքի ընդարձակման : Գետնին դամուած այդ երկաթեայ գծերը օր մը անպայման քաղաքը պիտի կիսեն : Այդ մասին մէջ շինուած է արդարեւ Նոր Ներսիսեանը՝ մեծկակ քարակերտ փառայեղ շէնք մը, Թիֆլիսի եւ Նաւթլուղ (Հալլապարի մօտ) կայաններուն կէս ճամբուն վրայ՝ բարձրադիր :

Մոլուկը ունի զբօսապտոյտի երկու հանրային ձեռակերտ : Մին փոխ-արքայի պալատին կռնակը՝ ցից բարձրաւանդակ մը՝ վերելակով օժտուած, միւսը մեր Շտասլին կից արեւմտեան բլրաշար-



- |   |                          |     |             |     |            |
|---|--------------------------|-----|-------------|-----|------------|
| 1 | Ա հայֆ                   | 7   | Աղջնիֆ      | 13  | Արցախ      |
| 2 | Բ ”                      | 8   | Մոկֆ        | 14  | Փայտակարան |
| 3 | Գ ”                      | 9.  | Կործէֆ      | 15. | Ուլֆի      |
| 4 | Դ ”                      | 10  | Վասպուրական | 16. | Գուճարֆ    |
| 5 | Բարչր հայֆ               | 11. | Կարսկահայֆ  | 17  | Մայֆ       |
| 6 | Սոսորու բերան<br>Կիլիկիա | 12. | Արևիֆ       | 18  | Այրարատ    |

----- խորհրդային հայաստան  
 ..... ԱՄԵՐԻ ԴՊՐՆԱՎՐԻ սահմաններ

# ԱՆԸ ՃՈՎ



# ՄԻՋԱԳԵՍԻ

● հալէպ





# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԽԱՆԴԱԿ

Քարտի սալաքափ 1:4.000.000  
 0 40 80 120 200 280

ԳՏԵՑ՝ վալյճԻՆ Լեւոն-Ռամեսյան



քի ետին իրարու յաջորդող բլրակներուն զառիթափերուն վրայ եւ խորշերուն մէջ կերտուած Բուսաբանական կոչուած Պարտէզը, քաղաքին կցուած՝ գետնուղիով: Յետ-միջօրէի ամէնօրեայ ժամադրավայրերն են անոնք մասնաւորաբար Սոլոլակի հայ բնակչութեան, մինչեւ ուշ երեկոյ:

Ու երբ հոն տանող գետնուղիին դռները փակուին, անոր առաջը բղխող աղբիւրը գիշերային հաւաքատեղին կը դառնայ, հոգ ու շոգ փարատելու անհամբեր Թիֆլիզի կիմտօ կոչուած դասակարգին, մեծամասնութեամբ Հայեր՝ մանաւանդ քաջ վրացախօս, նուազածու, խմող ու պարող:

Շարժուան երեկոներուս շատերը անցուցած եմ ասոնց կողքին, կամ մօտիկէն լսած, տեսած ու հետեւած: Ու եթէ ինձ համար ալ դոյուլթիւն ունեցեր են «անհասանելի մարդիկ», սակայն այդ դժուար օրերուն զանոնք գտած եմ երանելի, որոնք զուարթ պահը, սրտակից և անսեթեւեթ մարդոց ընկերութիւնը գերիվեր դասած են հարստութենէ ու փառքէ: Ինձ կը թուի որ, եթէ փոքրիշատէ գերծ մնացած եմ ունայնամտութենէ, այդ կը պարտիմ այդ պարզ մարդոց փնտռածը հասկնալու ճիգիս:

Ունէի նաեւ ՀԱՅԱՍՏԱՆը: Անդրանիկ մը պարունակող նոր ուխտատեղին, ոմանց ներշնչարանն ու ապաւէնը, շատերուն «լացի պատը», ուր ամէն կէսօրէ վերջ հանդիսատեսն ու ունկնդիրն էի խայտաբղէտ այցելութիւններու: Արեւմտահայեր մեծաւ մասամբ, Կովկաս հասնող, անկէ մեկնող ազգային գործիչներ:

ՀԱՅԱՍՏԱՆ թերթին ամենախոնարհ ծառան, յոյսի օդակ մըն էր գաղթական մարդուն եւ որբութեան, եւ ես օ՛րբ-օրին տեղեակ էի անցուղարձերու, քաղաքական թէ անհատական, նաեւ զանազան վայրերէ Թիֆլիզի բանտը բերուած հայրենակիցներու դժբախտութեանց, որբանոցներէն հիւանդանոց նետուած տարեկիցներուս, ոմանք ծանօթ՝ հասած պատուհասներուն:

Անդրանիկի հարցումներուն նպաստաւոր պատասխան տալու վախէն, շուրջիններս և ես ի՛նքս մանաւանդ, անյապաղ հետամուտ էինք դպրոցականի պահանջներս կարգադրելու հարցին: Ներսիսեանի մտից քննութիւններուն նիւթերը և մաս մը գրքեր արդէն ճարած էի: ՎԱՀԱՆ ինձմէ պահանջած էր կարճ գրութիւն մը, զոր պիտի ներկայացնէր «Կովկասահայ Գրողներու Միութեան», տակաւին առանց պատճառը ճշդելու: Նիւթ առաջարկած էր Երզնկա-Մամախաթուն ճանապարհին արկածի մը նկարագրութիւնը, որ կատարեալ փորձութիւն մը եղաւ, չըսելու համար տանջանք մը, որ օրեր պիտի տեւէր:

Ներսիսեան Դպրոցի շէնքը այցելութիւնս խանդավառութեան թափս կոտրած էր, Կալք գետի մօտերը, խարխուլ հինաւուրց խան

մը: Քարտուղարին սառն ընդունելութիւնը, մտից դժուարութիւնները, հարցումներու տուած իր հեղնական պատասխանները:

Մեղկանալու ատենը չէր, ընկիւններս շատ: Կարիքներս անհաշուելի:

— Այս Կիրակի հետո անպայման դաշտ պիտի գաս, կը կրկնէ Եզնիկ Քաջունի, ֆուքպոլի կարեւոր մրցում կայ, ինչպէս նաեւ հաւաքական մարզանք:

Եզնիկ, առաջին օրէն իմ բարոյական եւ Փրզիքական կրթութեանս հոգը վրան առած էր ինքնաբերաբար: Ահա երկու ճիւղ, որ իմ մտահոգութիւններու մաս չէին կազմեր: Առաջինին մէջ սայթաքելու համար՝ գրպանս դէթ բոլորովին տափակ էր, իսկ երկրորդին մէջ փայլելու համար՝ որովայնս: Օրականս, այն ալ իբր շնորհ, քանի որ ՀԱՅՍՍԱՆ թերթը իմ օժանդակութեանս պէտք չունէր՝ թէեւ առաւելապէս կը դործածէին զայն, մէկ ուրբի էր: Վրացական «պուրի» կոչուած հացը կ'արժէր 35 կորէկ, մէկ հոգէ կարաս մածունը, — որ կը կոչուէր մացոնի, — 60 կորէկ: Օրական խնայողութիւն՝ մէկ կոպէկ: Ի՞նչ կրնայի տալ մկաններուս, որ ուռնային ու պրկուէին: Գալով մոլութեանց՝ ինձ մօտենալու կը վախնային:

Շարաթը երեք օր, առաւօտեան, քառորդ ժամ շուէտական մարզաձի փորձեր ընել կու տար Եզնիկ, եւ իրեն կը խոստանայի զանոնք մինակս կրկնել միւս օրերը:

— Կը ներես, Պարոն՝ Եզնիկ, Օրթաճալայի կողմերը, հիւանդանոցին մէջ ընկեր մը ունիմ, համադիւղացի, տարեկից, շատ ծանր հիւանդ է, խոստացած եմ իրեն այցելել:

Շատ չեմ սխալիր, եթէ պնդեմ որ Կովկասի մայրաքաղաքին մէջ ֆուքպոլը եւ մարզաձիք մտցնողն եղած է Եզնիկ: Գործէ վերադարձող շատ մը տեղացի հայ երիտասարդներու հետ կը խորհրդակցէր, գրեթէ ամէն օր: Մօտիկ «Գիմնազիում»ի մը մէջ իրենց սրահ տրամադրուած էր մարզանքի դասերուն համար, իսկ քաղաքէն դէպի արեւմուտք, Կուր գետի մօտ, դաշտավայր մը ճարած էին ֆուքպոլի համար, ու Եզնիկ հոն էր ամէն Կիրակի, երբեք զինքը միւս խմբագիրներու ընկերակցութեան մէջ չէի տեսներ պարապոյ ժամերուն, ոչ ալ «Պօսթանսքի Սատ»ի ճեմելավայրերուն մէջ:

Այսպէս ամէն Շարաթ կէսօրէ վերջ դժնդակ պահ մը ունէի անցնելիք, վախով կը սպասէի Եզնիկին հրաւերը, մինչեւ իսկ հրահանգը, եւ զայն մերժելու պարտաւորութիւնը, խիստ ծանր մեղք մը չգործելու համար, ու յաջորդ օր ընդունելութեան ճիշդ ժամին, Հայկազն Ներսէսեանի սնարին մօտն եմ, հետիոտն, քրտինքներու մէջ:

Քրտինքիս հետ յիշատակներ կը սրբեմ: Երեք եղբայրներ էին,

Արբախամ եւ Խաչեր Ներսիսեանի որդիները : Մեծը հօրը հետ Ամերիկա : Միջակը Խաչեր հարսային հետ մեծ տան մը վախա սիւները : Հայկազնը՝ դասընկերս , որուն հետ մեր կալերը կը չափչփէինք , կրենց բարձրադիր կալէն «Ճիրիա»ներ կ'արձակէինք , զորս մեզի համար մեծ հաճոյքով կը կտրէր ու կը յղէր իր զարմիկը՝ Տիրան : Թաշկինակիս շարժումներուն արանքէ'ն միայն կը համարձակիմ իրեն նայիլ այժմ , անցեալ Կիրակիէն աւելի հիւժած կը դռնեմ զինքը : Աջ կզակին տակ ուռ մը ունի , կը պզտիկնայ ու կը խոշորնայ :

— Հո՛ս , հո՛ս է ցաւս , կ'ըսէ , մատը ուսին վրայ :

Ձեռքը միշտ հոն է , բաժանումի ատեն միայն անկէ կը հեռանայ , վզիս փաթթելու եւ պաղատելու որ զինքը չմոռնամ :

— Գա՛լ Կիրակի , հա՞ :

Կը լսե՞ս , Եզնի՛կ :

Գալ կիրակիներէն մէկն է , քրտինք սրբելով Հայկազի սենեակին կը մօտենամ , հիւանդապահուհին զիս նշմարելով կանդ կ'ատնէ :

— Ընկերդ ուրի՛շ տեղ փոխադրեցին :

— Լա՞ւ է :

Կը հեռանամ , արցունք ու քրտինք իրարու կը շագուտին :

Եզնիկի վերաբերմունքը ինծի հանդէպ օրըստօրէ կը փոխուէր : Սկիզբը եղբայրական , ըսենք մեղմ եւ քաղաքավար , ան կը դառնար վերակացուի մը չափ խիստ : Երբեմն կը տարուէի թշնամական որակել : Սակայն ինչո՞ւ :

Յաճախ նամակներ կը ստանար Էրզրումէն , ու զանոնք ընթերնելէ վերջ զիս , տեղի-անտեղի , կը հարցուփորձէր , եւ իմ խուսափողական դիրքս կը շարացնէր զինքը :

— Շուրջ միայն Վահա՛ն մը կը տեսնես , ըսաւ օր մը :

Ուրիշ անգամ մը , նոյն ատեն ստացած նամակը ընթերնելէն յետոյ , անոր թերթերը սեղանին վրայ հրելով , ինծի դարձաւ .

— Ծօ՛ , դուն Վահաններով շրջապատուած ես : Այս նամակին մէջ ուրի՛շ Վահան մը քու մասիդ կը գրէ , ինչո՞ւ ցարդ ինծի այդ մասին բան մը չես ըսած :

— Ես , ուրի՛շ Վահան՝ ունիմ հօրեղբայ՛րս միայն , որ սափրիչ է Ալէքսատրապօլ :

— Այս նամակը գրողը կը կոչուի Վահան Ձերագ , Պոլսոյ ընկերներէս է , Ֆրանսայէն կամաւոր եկած , կը գրէ որ մօտէն կը ճանչնայ քու ընտանիքիդ Կարին բնակող անդամները :

Ուրեմն իսկական վերակացուս էր Եզնիկ , հեռուէն նուիրազոր-ծուած իրաւունքներով :

Իրաւ է որ Ներսիսեանի մուտփի քննութիւնները մինակս կը պատրաստէի , ատեն-ատեն Թոթո՛վեմց հայերէնի ընթերցումներ եւ

բացատրութիւններ ընել կու տար, եթէ ժամանակ գտնէր, շարաթը անդամ մըն ալ Հրաչ Զարդարեան կ'օգնէր թուաբանական տիպար խնդիրներուն լուծումները ցոյց տալու մէջ, սակայն Եզնիկն էր հըսկողը, որ սերտելու ժամանակացոյցը յարգէի: Սխալ կը մեկնէր սակայն լուռ եւ երկչոտ դիրքս, ոչինչ ունէի իրեն պատմելիք: Խմբագրութեան վերաբերեալ բոլոր դործերս կ'ընէի վազնիվազ, նոյն արագութեան մէջ կը կարդայի մի'այն խանութներուն վերտառութիւնները՝ ուսներէն սորվելու համար, ու կը դիտէի երբեմն ալ անցած փողոցներու ինքնատիպ կողմերը:

Ընկերնե՞ր: Չունէի: Հեռուոր, անծանօթ որբանոցներու մէջ կային ազգական եւ հայրենակից տղաք, կամ Թիֆլիզի հիւանդանոցները բերուած:

Խմբագրատուն այցելողները, նախկին երիտասարդ կամաւորներ, անզբաղ, ձանձրոյթէ տառապող, ինծմէ տասնեակէ մը աւելի տարիքաւորներ էին: Մօտս ամենէն երիտասարդը Հրաչն էր՝ վերապահ գրեթէ եւ բոլորիս հանդէպ: Աւելի համակրութիւն ցոյց կու տար իր մեծ եղբայրը՝ Ռաֆայէլ, բայց ան արդէն բանաստեղծի համբաւ ունէր, եւ անհաս:

Միակ տարեկից ընկեր մը կար, Բարգէն Թիբեաֆեանը, ան ալ Եզնիկը ինծի անարժան կը գտնէր: Ինչո՞ւ: Ինքն ալ չէր գիտեր: Անոր համարձակ լեզուն, պերճ դրսերեւոյթն էին թերեւս պատճառը, զայն ինծմէ հեռու պահելուն, այլապէս ազնիւ տղայ էր, ինծի մօտիկութիւն ցոյց կու տար, եւ Զարդարեաններու շրջանակին մաս կը կազմէր:

Բուսարանական Պարտէզին մէջ իրեն հետ կատարած երբեմնի պտոյտներս հաճելի՝ հազուադիւտ պահերս էին:

Օր մը Եզնիկ ափիբերան թողուց մեզ: «Գիմնազիա»յէն տուն դարձին, Բարգէն, ճամբուն վրայ խմբագրատուն մտած էր զիս տեսնելու:

Տակաւին բարեւ չփոխանակած, Եզնիկ մուտքի մօտ աթոռին վրայ դրած Բարգէնին գրքերու պայուսակը Պէհպուտեան փողոցի հանդիպակաց մայթին վրայ չպրտեց, ու ինձ դարձաւ:

— Չեմ ուզեր որ անոր հետ ընկերութիւն ընես:

Ներկաներէն ոչ ոք բողոքեց: Աչքս ինկաւ մեքենագրող սեւուրիկ Օրիորդ Օրֆելիային վրայ՝ կը ծիծաղէր լռիկ-մնջիկ:

Լաւ որ ձանձրանալու ժամանակ չունէի, քանզի չէի գիտեր թէ ի՞նչ պէտք է չընել Եզնիկին հաճելի ըլլալու համար:

Անմեզ առիթները չէին պակսեր:

Օրական խնայած մէկական կոպէկները մսխելու երկու կենսական կերպ ընտրած էի:

Առաջինը, Կիրակի առաւօտ մը կանուխէն, Գերեմիկի սրճարանային հաստատութեան մէջ կարագով, անուշով կաթ մը խմել:

Միւսը Երեւանի Հրապարակէն վար, դէպի Հայոց Վանքի Եկեղեցի տանող ճանապարհի պտուղի շուկաներէն աժան պտուղներ գնել: Հոն ամէն տեսակ առուծախի նիւթեր կային, խիստ բազմամարդ շուկայ մը:

Շատ կը լսէի խուլիկան անուն կրող տղոց եւ պատանիներուն արարքներուն մասին, ու այդ շուկային մէջ է որ, արդարեւ, անոնց հետ անձնական ծանօթութեան մէջ պիտի մտնէի: Տեղոց տեղ երբ իրարանցում մը սկսէր, գոռում-գոչում, ոստիկանական խուժում, յա՛նկարծ դուրս կը բերուէին գլուխնին թեւերնուն մէջ ծածկուած տղաք, մտրակի անխնայ հարուածներու տակ:

Անդրիմադրելի ցանկութիւն մը ծնած էր մէջս այդ տղոց արարքներուն հետեւելու: Շուտով հաստատեցի որ անոնք կը դեզերին մի՛այն սնունդի բաժիններուն մէջ:

Վարպետ «յափշտակիչ»ներ էին մանաւանդ, այդ էր զիս հըրպուրողը, եւ ոչ թէ դողը: Անոնք կը գործէին խմբակներով ու վանքի պատերուն տակ ազահօրէն կուլ կու տային իրենց «աւարը»:

Անգամ մը երբ անոնց արշաւին կը սպասէի, քառորդ կրուանքա կեռասի պարկը ձեռքիս, երկու ոստիկան մա՛ղ մնաց զիս բանտ տանէին, եթէ ճիշդ դիմացս, կեռասավաճառը չվկայէր զայն վճարած ըլլալս: Տարիքով անոնց համապատասխան էի, վրայ-գլխով քիչ աւելի խնամքոտ, սակայն որքա՛ն երկչոտ:

Շատերուն հետ գրեթէ ծանօթներ էինք, աչքերով: Անոնք ալ կը ծարանային, ու Բուսարանական Պարտէզ տանող դարպասին դուռը երբ բացուէր, կը խուժէին դէպի պաղ աղբիւրը, ու անկէ կը հեռանային շտապով՝ բռնուելէ խուսափելու համար, եւ միշտ ալ զիս հոն կը նշմարէին, աղբիւրին մօտ, կամ Շտապի դրան առջեւ, որ ամբողջ օրը բաց էր:

Երեկոյ մը, ուշ, իջած էի դուռը գոցելու: «Յափշտակիչ» մը, որ անպայման կը լրտեսէր զիս՝ մօտեցաւ: Կիսաբաց դրան մէջ էի դեռ,

— Տղա՛յ ջան, մի խնդրանք ունեմ, ուզո՞ւմ ես զիս լսել:

Դէմքը ծանօթ էր, համակրելի տղեկ մը, իրմէ եւ ընկերներէն մինչ այդ լսած էի ոռուներէն ու մէկ-քանի հայերէն բառեր, կը յիշեմ մասնաւորաբար «սքարի»ն, զոր յաճախ կը գործածէին:

Լսեցի զինքը, բոլորովին հակապատկերն էր ա՛յն տղուն, ուրուն «ստահակ», «խուլիկան» անունը կը տրուէր:

— Կ'երզնում մեր սուրբերուն անունով, քեզ համար ոչ մէկ

չարիքի պատճառ կը լինեմ, եթէ թոյլ տաս այս գիշեր սանդուխին ներքեւը քնեմ :

«Երեսը միւռոն տեսած տղեկ մըն է» պիտի ըսէր մեծ մայրիկս :

Ամէն ապահովութիւն ստացած կարծելով, դուռը բռնած գէպի ներս ետ քայլով հազի'ւ զինքը կը հրաւիրէի, երբ ծառերու ետեւէն երկու «ստահակ» եւս դուրս թռան :

— Այո', ըսաւ, ընկերներս են, վախեցանք միասին ներկայանալ :

Երեքն ալ նշմարեցին շփոթութիւնս, դժգոհ երեւոյթս ու միաբերան,

— Լուսարացին մենք դուրս կը գանք: Հաւատա՛ մեզ: Ձեռ փոշմաներ :

Խմբադրատան յարկարաժինը կղպելէ վերջ, խոհեմութիւն սեպեցի Մուկուներ տեսնել :

— Տեսնենք, է՛լի: Թերեւս լաւ տղաներ են: Արդէն միւս յարկարաժիններուն մէջ գողանալիք բան չկայ, եթէ դու չես վախնար :

Այնուհետեւ խումբը երբեմն հինգի կը բարձրանար: Ուշ ատեն թերեւ ուրիշներ ալ կ'ընդունուէին, սակայն ո՛չ մէկ անախորժութեան առիթ տուին, բացի Եզնիկիմ մէկ ելոյթէն :

Կը գիշերէին անկանոն կերպով, օրերով կը կորսուէին :

Առհասարակ կը ստուգէի մեկնած ըլլալին: Առաւօտ մը ուշացած էին, ու չար սատանան Եզնիկը զրդած էր կանուխէն գրասենեակ գալ: Ձիւ ընկերովի գտաւ զբան առջեւ, եւ ի՞նչ ընկերներ, ուզեց ինքնութիւննին ճշդել՝ տղաքը փախան, իր ցատուժը անպատում էր, քանի օրեր խոով մնաց :

Երեւոյթով անտարբեր, համարեայ սառն, պարտաճանաչ, սակաւախօս, ճշդապահ Եզնիկ գիտէի որ կը դուրգուրար վրաս: Լռեցի, յանցաւորի խեղճուկ գիրքի մէջ :

Երկու եղբայրները, Եզնիկ եւ Եղիշէ, գիրար գտած էին Թիֆլիզի մէջ: Սպայ թրքական բանակին մէջ, Եզնիկ գերի ինկած էր Ռուսերուն, Սիպիւրի ճամբարներէն միոյն մէջ զրկուած եւ Հայոց միջամտութեամբ «պայմանաւոր» ազատութիւն գտած: Եղիշէ, պատերազմի համարեայ նախօրեակին վառ գացած՝ փաստաբանի ասպարէզ մը կերտելու, հոն մասնակցած էր ինքնապաշտպանութեան յաջող պայքարին, եւ ոռւս բանակի ներխուժումէն ու նահանջէն յետոյ Կովկաս անցած :

Կ'ապրէի բարեկամական սեղմ եւ հաճելի մթնոլորտի մը մէջ: Նիւթապէս խեղճուկ կեանքս ուրեմն հարուստ էր պատահարներով, մտաւոր եւ հոգեկան դոհունակութիւն պատճառող այլազան դրուագներով :



Վազգի ոտուքներէ խմբագրատուն վերադարձիս, սովորաբար նախ դըլուխս կը ցցեմ ներսիններուն ինքնութիւնը ճշգեղու: Անդամ մը, ամէնքը մէկէն թեւերնին աչքերուս ուղղութեամբ սկսան դռալ:

— Ահա՛ Չմշկիկի թռուան թռուր: Կեցցէ՛ մեր արքայազնը:

Շուարումէս սթափած՝ բարկանալու վրայ էի, երբ անծանօթ մը զիս գրկած էր արգէն: Համագիւղացի մը, զոր Երզնկա կը կարծէի: Մտերմիկ խօսակցութիւնը կը վերջացնէ տխուր պարտականութեան մը հրաւէրով:

— Թրքական բանտերէն ուսականը:

— Ի՞նչ բան, Ատո՛մ աբար, ո՞վ են բանտ դրած:

— Ձեր Աէգ ամուսին Տիգրանը, Տէրաբում Սերոբ աբարը, Ուշիկցի Թագուրն ու Սարգիս Եագրեանը:

— Ի՞նչ յանցանք են գործեր:

— Ապրի՛լ կ'ուզեն: Ա՛յս է յանցանքնին:

Երզնկայի քաղաքին եւ շրջաններուն մէջ եթէ անխորժութիւն մը պատահի, թուրք քաղաքապետը սուտեր կը հնարէ, եւ անոր խաբրը չկտորելու համար, թրքական թաղէ անցնող Հայերը կը ձերբակալուին, մարդասպան, գող եւ ա՛յլ տխուղոսներով:

— Ըսին գնա՛, մեր տղա՛ն տես, թող բանտէն հանելու ճար մը դտնայ: Վազը ես կը վերադառնամ, յոյսերնին վրադ է:

Քանի մը ամիս իրարմէ բացակայութեամբ, զիս մեծցուցած եւ այն ալ մայրաքաղաքի ազդեցիկ մարդկանց կարգին դասած էին:

— Հասցէս ո՞վ տուաւ:

— Ձեր Տիգրանէ՛ն լսած էի հոս ըլլալդ: Ամէն տեղ դադթականներուն միակ յոյսը Անդրանիկն է, եւ իր թերթն է իրենց սնունդը:

Յաջո՛րդ օրն իսկ կը ձեռնարկեմ բանտերու պտոյտը, հետքերնին կը գտնեմ, ինծի գրեթէ մօտիկ, Շէյքան Փագարի բաղնիքներուն դիմաց, պարսկական թաղ, Օրքանալա տանող թրամվայի գծին վրայ, Կուրի եզերքը: Մեծ յանցաւորներ չեն, անմիջապէս իրենց մօտ կ'առաջնորդեն զիս, ու կը թողուն ազատ: Լաւ կը ճանչնամ զիրենք, զրպարտութեան զոհեր, Երանի թէ չարութիւն ընելու վարժ ըլլային:

Հօրս գարմիկը՝ Տիգրան աբար, արտասուալից կը համբուրէ զիս անմեղ: Իւչպէկցիները ծանօթ են դպրոցականի օրերէս: Սարգիս Եագրեանը մանաւանդ, մեզի դրացի էր, Քիւրտերու մօտիկ բարեկամ, անոնց հետ էր իր առուտուրը, ազդեցիկ մարդ էր: Մեր Սերոբ աբարը իր շուքէն վախցող էր, անոր, ինչպէս միւսներուն զող, մարդասպան ըլլալը եթէ հաստատող մը գտնուէր, զինքը պիտի ծափահարէր: Հայը, մա՛նաւանդ անոնք, արկածախնդր՞: Իցի՛ւ թէ:

Եւ սակայն, գրեթէ հպարտ էի խմբագրատան բարեկամներու առջեւ, որ ե՛ս ալ բանտը ազգական, ծանօթներ ունէի: Առաքինի,

պարկեշտ, աշխատասէր՝ պատանիի հասկացողութեանս մէջ, հոմանիշ դարձած էի վախկոտ եւ ստոր ածականներուն :

Թէեւ իմ «հերոսներս» չէին փոխուած, ու շուտով բանտէն դուրս էին :

Թիֆլիզ եւ ՀԱՅԱՍՏԱՆի խմբագրատունը իմ աշխարհիս կեդրոնն էին :

Նոր դէմքեր կը յայտնուէին ամէն օր, հեռաւոր Ամերիկաներէն, նոյնիսկ ծննդավայրէս դաղթողներէն : Վերապրող հարազատներ փնտռողներ, Հայոց Շտապին իրենց մտերմիկ իրերը ձեռք անցընելու մտօք այցելող կամաւորներ, իրենց ապաւէն, քաղաքական եւ ազգային՝ Անդրանիկին տեսնելու, լսելու կարօտն ունեցողներ :

Ամէն օր կ'այցելեմ մեր բանտարկեալներուն, կը սպասեն, խօսք տուած եմ, ուտելիքի, թերթի, յոյսի կը սպասեն :

Մեր դիւզէն, Ամերիկայէն նոր ժամանած երիտասարդ մը ինծի կը սպասէ հոն, յայտնած էին որ անպայման պիտի հանդիպիմ :

Դուրսը, կը պնդէ որ միասին ճաշենք, հարցումները շատ են, բանտարկեալները իրմէ տարեց էին, անոնց հետ մտերմութիւն կարելի չէր : Մօտիկ, Շէյթան Փազարի հրապարակը, Բաքերդցի Արշակին Չաշարսանն ենք, Ժողովրդական դին, հայկական խոհանոց :

— Դուն նոր ոտքի ելած էիր, երբ «ստիպուեցայ» դիւզէն հեռանալ :

Ինքն էր «ստիպուեցայ» բառը շեշտողը : Մինչ այդ յայտնի պատճառներն էին գինուորութենէ փախուստը, ընտանիքին նիւթապէս օգնելու ստիպողականութիւնը :

Անհամբեր էի իր պատճառը լսելու, կ'ուշանար, խմբագրատունն ինծի կը սպասէին : Կախէթի դինին լուծեց ինդիբը, մոռցնել տուաւ բացակայելու յանցանքս : Կատարեալ շատախօսներ էինք, ես մեծցած, ան պզտիկցած :

— Ուրեմն Մկր ամուսն ազատուածներուն մէջն է : Աչքը վրաս՝ լռեց :

Երգեկայի դիւզերը պտղահաւաքի արշաւներէն վերջ այլեւս պիտի չտեսնէի Մկր ամուսն : Օտար միջավայրին դժուար օրերու հոգեբը, առժամաբար դինքը մոռացութեան մէջ թաղած էին, առանց որ կարենամ իր վիպային կեանքին դրուագներուն ծանօթանալու : Բայց միշտ ալ, ինչպէս ծնողքս կը սիրէին ու կը յարգէին դինքը, ես ալ յատուկ խանդաղատանք կը տածէի իրեն հանդէպ :

Կարելի՞ բան էր դինքը մոռնալ : Մոռնալ ծննդավայր մը, անոր ամենէն ինքնատիպ, առեղծուածային տիպարը, իր բարձր թառած բոյնը՝ ջրի ճամբուս վրայ ժիա'կ հետաքրքիր շինութիւնը :

— Մկր ամուսն, երկու դիշերային ձերբակալութիւններէն ա-

զատ մնաց, ոչ ոքի մտքէն կ'անցնէր, նաեւ ոստիկաններուն, որ ան օր ու գիշեր ծառի մը վրայ կը բնակէր :

— Ինչպէ՛ս թէ ծառի վրայ : Ձէ՞ որ երկու եղբայր, խոշոր տուն ունէին :

— Մկր ամուռն, պանդխտութենէ կամ Ֆէտայիութենէ վերադարձին, գիշեր մ'իսկ իր հօրենական տան մէջ պառկած չէ : Այդպէս լսեր եմ, ու ես զինքը միշտ ծառի վրայ տեսած եմ : Իրենց տան գիմացի պարտէզին մէջ :

Այդ օր, հարբեցողի առաջին օրէս, հաստատեցի որ գինին երկու հակընդդէմ զօրութիւն ունի. մին կ'ուրախացնէ, միւսը կը տըխրեցնէ :

Իմ ուրախութիւնս՝ յարձակողական, եւ Կախէքի գինին՝ զիս վերածեցին խոստովանահօր մը :

— Կեանքիս մէջ երկու դժբախտութիւն ունեցեր եմ. առաջինը աշխարհ զալս է, ու ... լռեց :

— Բայց ատիկա ինքնին դժբախտութիւն մը չէ, մէջ մտայ Բէյֆով : Երկրորդը ինչ է :

— Երկրորդը կամաւոր ընկերներէս շատերուն հերոսական մահէն ազատուելու ու այս ու այն կողմ դեզերելու դժբախտութիւնը :

— Կատա՞կ կ'ընես, ըսի շփացած. ամէն մարդ ապրիլ կ'ուզէ, ու այն ալ ես գիտեմ ինչպիսի՛ պայմաններու մէջ, ու դուն մեռնելէ կը ճառես : Այդ մէկը չեղաւ :

Ես քանիերորդը պարպած էի, իրեն դաւաթը քանի մը կաթիլի տեղ ունէր, ամբողջացուցի : Վրայ-վրայի ճնկեց, ու ինծի դարձաւ .

— Դո՛ւն ալ խմէ, խմէ՛, որ պատմեմ :

Արշակ, որ երբեք զիս այդպէս զուարթ, գրեթէ երջանիկ տեսած չէր, ամէն առիթով քովէս կ'անցնէր՝ գլուխս շոյելով :

— Հայրդ, մայրդ, քեզի բան մը պատմա՞ծ են Մկր ամուռի մասին :

Ա՛ն ալ սկսած էր զիս մեծ մարդու տեղ դնել :

— Ուրեմն, գիւղին մէջ անոր մասին բնաւ բան մը լսած չե՞ս :

— Ո՛չ, ու ամէն անգամ երբ մօրս հետ անոր խօսքը բացած եմ, «մեծնաս, կը գիտնաս» պատասխանած է :

— Իրաւացի էր անշուշտ մայրիկդ, հիմա սակայն մեծցեր, մեծ մարդոց շրջանակին մէջ ես, ամէնքէն գնահատուած ըլլալդ կը լսեմ :

— Նախ կ'ուզէի իմանալ, թէ այս առաւօտ, բանտին մէջ, Մկր ամուռին 10 տօլար նուէրդ ինչո՞ւ չուզեցիր որ ան գիտնայ քեզմէ տրորուած ըլլալը :

Ու պատմեց հետեւեալը .-

«Մկր ամուռի անհատական դժբախտութեան մէջ ա՛յնքան մեծ

եղած է բաժինս, ա՛յնքան դառն յանցաւորի գգացումս եւ խղնահարութիւնս, որ շատոնց փնտռած եմ մէկը, որուն հաղորդեմ այդ ամէնը: Ճիշդ է որ քանիցս, օտար երկրի մէջ, այլեւայլ ընկերներու պատմած եմ, սակայն երբեք սփոփանք գտած չեմ: Ի գուր կատարուած խոստովանութիւններ եղան, որովհետեւ անոնք մեզմէ չէին: Գուն մե՛րն ես, քու մատուց հոգիդ շա՛տ աւելի լաւ պիտի վկայէ ցաւիս մեծութիւնը: Կը մանչնա՛ս անձերը, խմած ես նո՛յն աղբիւրներէն, շրջած ես նո՛յն լեռներուն կատարները, մեր անտառներուն ու դարերուն մէջ, շնչած նո՛յն օդը, պտըտած անոնց մամբաներուն երկայնքին, լսած նո՛յն զանգակին դողանջները: Ինչ որ պիտի լսես ինծմէ, պիտի պահես մասունքի պէս, ու մերոնց պիտի պատմես նո՛յն լեզուովը, որ իմ չգործած մեղքս քեքեմայ:»

«Ճշմարիտ յեղափոխական մը եղած է մեր Մկր ամուսն: Այդ բանին բովանդակութիւնը հասկնալու համար պէտք էր պանդուխտ ապրիլ, ու օտարութիւնը մաշակելէ յետոյ ակնատես ըլլալ այս ահաւոր չարիքին, որ մեզ գրկեց, անվերադարձ, մեր սիրելիներէն, մեր հայրենիքէն:»

«Մեր յեղափոխութիւնը խօսք էր, մարտասանութիւն, ցուցամուտքիւն, դերասանութիւն: Արդիւնքը, ողբերգութիւն, ու ահա տարբեր մամբաներէ, օտար հորիզոնի տակ, երկու համագիւղացիներս գիրար կը գտնեմք բանտի մը խուցին մէջ, մեր վերապրող անմեղ ու առաքինի սիրելիները ողջունելու համար:»

*Գլուխս տաքցած էր, խոստովանութիւնը կը յամենար, ու մտ- ու մտ խմելով անհամբերութիւնս ծածկել կը ջանայի: Գործէս կ'ուշանայի, կ'ընային դիս Անդրանիկը փնտռելու դրկել, կամ տպարան: Սակայն առիթը փախցնել՝ կարելի չէր:*

— Բոլոր այդ ըսածներուդ մէջ ես յանցանք մը չեմ գտներ: Մանաւանդ ո՛չ մէկ կապ ունին Մկր ամուսին հետ, որ Ֆէտայի էր, եւ դիւղէն բացակայ:

*Յայտնապէս կը դժկամակէր, թերեւս զղջացած ալ էր:*

— Այդ ես ալ տակաւին չեմ ըմբռնած, չեմ համողուած նոյնիսկ տարբեր երկիրներու կեանքը ճանչնալէս վերջն ալ:

«Մկր ամուսն, դուն, ես, միեւնոյն տան գաւակներն ենք: Մեր աշխարհը մեր գիւղն էր, լեռներու մէջ մեկուսացած, բնութիւնը խիստ, մարդիկը խստաբարոյ, օրէնքները անյեղի, Աղամ-Շւայէն մնացած: Մեր երջանկութեան շրջա՞նը: Անգիտակից պատանեկութեան մը կարճատեւ տարիներն էին: Այբբենարանի տախտակները մեր վիզերէն կախ օրերէն մինչեւ մեր տարեցներուն կողմէ հինցած շապիկներով զարդարուն՝ փոխասացի, սարկաւագի ու դպիրի աստիճանին հասնիրը: Հո՛ղ ալ կը վերջանային մեր հաւաքաբար եւ համարձակ

մասնակցութիւնը խաղ ու պարերուն, երբ ժողովրդական «վկայութիւն» մը յա՛նկարձ մեզ նշմարէր եօթը պորտ հեռու աղջկայ մը բովէն անցնիլը : Որմէ յետոյ արդէն պարտաւոր էինք պահուըտուք խաղալ, մինչեւ անոր հետ քահանային առջեւ գլուխ-գլխի կանգնած օրերնիս :»

«Ես այդ միակ երջանկութեանէ՛ն ալ զրկուեցայ» :

*Աեղանին վրայ կը բաժ, մելամաղձոս, աջ ափը այտին, ձախը գինիի պարապ դաւաթի պռունկին վրայ, հէգ կամաւորը դերադոյն ճիգ մը կ'ընէ :*

— Այս բոլորը մէ՞կ խնձորի համար :

«Դիտես : Մեր գիւղը ամառնային անոթներ գրեթէ չունէր : Տաքը հեղձուցիչ չէր թէւ, սակայն օրուան կէսերուն ձորի պարտէզներուն մէջ աշխատողները, յաճախ, հեղեղատին եզերքը սառ ջրի մէջ թաղուած ջրի փարչերը համբուրելու կը վազէին :

«Նոր պաղշտկած, մագերս, դէմքս ջրաթաթախ, բաւը ձեռքիս, ջրտուփի գործիս կ'անցնէի :»

— Ի՞նչ աղուոր խնձորներ ունիք, մարդուն ուտելը կու գայ :

«Մկը ամուրի կիմն էր : «Եկուր տամ»ը հագիւ բերնէս ելաւ, ներս անցաւ ու շուքին մէջ երկնցաւ : Գացի քանի մը հատ բերի, բովը դրի : «Դուն ինչո՞ւ չես ուտեր, ուտուելու ատենն է» : Սկսայ հատ մը խածնել, բովը նստայ : «Քրտինփի մէջ կը լողաս», բովս մօտեցաւ, թաշկինակովը սկսաւ դէմքս շոյել, գլուխս կուրծքին վրայ քաշելով :»

*Հայրենակիցս կը շարունակէր իր պատմութիւնը, բայց լմ լսողութեանս թելը բեկանուած էր : Մեծ հայրիկիս պատուաստած մեր պարտէզի անմահական խնձորներուն դացած էր ուշքս, մեր գիւղն էի այլեւս, անոր անուանի մրգաստաններուն մէջ :*

— Վե՞րջը, վե՞րջը :

«Ջրտուփի մեր ժամը կ'անցնէր, մեր չար բախտէն եկան հաղորդելու որ ջուրը պիտի կտրեն : Փափկանկատութիւն մը, որ բնաւ տեղի չէր ունենար, եւ մեզ տեսան այդ վիճակին մէջ :»

— Ահա՛ դործուած սճիւրը :

«Մկը ամուրի կիմը, անէծք քափելով կը հեռանար, չար նախագագուում մը ինկաւ մէջս, եւ երբ երեկոյեան ուշ տուն հասայ՝ թերեւս գլխաւոր մեղքս, նկատեցի որ տնեցիք քիթ-քերան կ'ընեն, ու յաջորդ օրն իսկ փոթորիկը պայթեցաւ, որուն յաջորդեց քամբասանփի հեղեղ մը :»

«Ծօ՛, դուն չե՞ս ամչնար» : Դե՛ն աւելին . «Իրա՞ւ է որ Նագլուին հետ ծունկ-ծունկի տեսեր եմ ձեզ :» Բան մը չէի հասկնար, ի՛նչ ըլլալս չէի գիտեր, ո՛չ ուտելու գիտէի, ո՛չ պառկիլ-քնանալս, մարդու երեւան գալ չէի համարձակեր, օրերով, ամիսներով :

«Ձերկնցնեմ, ա՛յս էր գործած ոնիրս, որ զիս վաղաժամ կերպով «դուրպէք» հանեց, ոտքս չկապուած, քէեւ քեկնածու պատրաստ :»

Ճաշարանէն Բէհպուքեան փողոցը բարձրանալու տեսն, պատմեց թէ ի՞նչպէս Մկր ամուիմ եղբայրն ու կինը, հանդերձ ընտանեօք եւ դրացիներու, ստիպած են խեղճ հարսը տանիքներուն վրայ պառկել, ու անոր մահուան ո՛ւղղակի պատճառը դառնալ : Նաեւ ա՛յլ մանրամասնութիւններ, զորս չէի կրցած իմանալ, հակառակ յաճախակի հարցուփորձերուս :

«Մկր ամուիմ լուր տրուած էր, անշուշտ իրողութեմէն տարբեր ձեւերով, ստիպած էին զինքը, որ տուն դառնայ, եւ կինը անձամբ վնասէ : Մեռած էր՝ չհասած : Գիւղի կիներէն տարբեր մեկնութիւններ լսեք էր, լքած՝ հայրեմի երգիքը, քառած ծառի մը բունիմ վըրայ :»

\*\*

Թիֆլիզի տաքերը անտանելի էին : Բարեկեցիկ դասը ամառը վրաստանի եւ Անդր-Կովկասի հովասուն վայրերը եւ հանքային ջրերու կեդրոնները կը փախչի :

Անդրամիկ, շրջապատի պնդումներուն տեղի տուած, որոշեր էր Հիւսիսային Կովկասի ջերմուկները երթալ, իր յօդացաւերը մեղմացնելու յոյսով : Խմբադրատուն եկած էր սովորականէն ժամ մը առաջ, իրենները լսելու եւ կարգ մը թելադրութիւններ ընելու :

Պաղ ջրով լեցուն դաւաթը արդէն սեղանին վրայ է :

— Շատ պաղ չէ, այսօր շատ ծարաւ եմ, տղա՛ս, գնա նորէ՛ն լեցուր սափորդ, վերադարձիդ քեզի լաւ լուր ունիմ տալիք :

Ինչպէս միշտ, գինքը շրջապատուած գտայ : Կը պատմէր :

— Այսօր, շարունակեց Փաշան, խօսքը փոխելով, ճաշի էի Յովի. Թումանեանի մօտ, կային գրողներ : Խօսակցութեան նիւթ բացին «Հայ ամուրի հերոսի» մը վրայ, որմէ տասնըջորս տարեկան գաւակ մը յանկարծ մէջտեղ կ'ելլէ : Այդ պատանին նկարագրելէ յետոյ՝ կը յայտնուի որ ան միաձայնութեամբ Գրողներու Ընկերութեան սան ընտրուած է, առ ի գնահատութիւն ներկայացուած «պատմուածք»ի մը :

Ակնարկութիւնը ա՛յնքան պայծառ է, որ բոլորին աչքերը վրաս կը թափին, Անդրամիկ Թումանեանի սրախօսութեան զոհ դարձած է, համախումբ ծիծաղ՝ բայց Փաշայիմ տրամադրութիւնը ու՛ճացնող :

— Մի՛ խնդաք, այնպիսի ճարտարութիւն դրաւ Յովիաննէս իր պատմելու ձեւին մէջ, որ սկսայ երանի տալ այդ «հերոսին» :

— Փաշա՛, շիտա՛կն ըսէ, «խըրս» ելա՞ր երբ քեզ այդպէս «քաշ-քշեցին» :

— Ծօ՛, ինչո՞ւ խըրս պիտի ելլամ : Այդ մարդուն կատակներուն կա՛մ կը վարժուիս, կա՛մ առաջին օրէն անկէ կը հեռանաս : Երկուքն ալ դժուար են :

Թոքալիեց կը խոստովանի որ ինքը տեղեակ էր սարքուած ճաշ-կերոյթին, ամենուն կողմէ զիս կը շնորհաւորէ : Իբր սան այդ երրորդ մկրտութիւնս է, որ այսուհետեւ պէտք է լրջօրէն հետապնդեմ մտից քննութեանց յաջողութիւնը : Կը յայտնէ որ ինք արդէն մեծ սենեակ մը գտած է, հայ ընտանիքի մը մօտ, մեր երկուքին համար, եւ այսուհետեւ դրասենեակի ժամերս պիտի կիսով կրճատուին :

«Րոպէն կրիտիկական է», կը միջամտէ Լեւոն Թիւքիւնեան, «յեղափոխօրէն» լեզուի սրամիտ քաջըշոյներէն, վասնզի Թումանեան որոշապէս յայտնած է որ որոշումը պիտի բեկանուի առաջի՛ն իսկ ձախորդութեամբ :

«Շէյթան Փաղարի» հրապարակին մօտ, Պէհպուտեան փողոցի ծայրամասի թաղին մէջ էր մեր նոր սենեակը, Հրէից սինակոլից դըրեթէ կից, մաքուր եւ հանդսաւէտ, ունէր երրորդ մեծագոյն առաւելութիւն մը, առաւօտեան առատ նախաճաշ, հայ գեղանի տիկնոջ մը կողմէ անձամբ մեզ մատուցուած, որուն ո՛չ գինը, եւ ո՛չ ալ սենեակի վարձքին քանակը կրցայ գիտնալ :

Ընդարձակ սենեակին մէջ, դուռ-պատուհան բաց, ես մէջտեղը, գլուխս սեղանին վրայ ժամերով կախ, քրտինքս սրբող հովերուն զոհն եղայ :

Հօրենական տունէն հեռու առաջին լուրջ հիւանդութիւնս էր, երբ օտար ձեռք մը մայրական հոգածութեամբ օրական քանիցս կը պաղղիկէր ձակատս : Ինչպէ՞ս չիշեւ նորապսակ այդ գոյգին եղբայրական վերաբերմունքը :

Այցելուներ ականջիս կը հասցնէին ինծի բժիշկ մը առաքելու վէճերը : Մեր խմբակին, Անդրանիկի հաւատարիմներուն մէջ կային երկու բժիշկ : Երկուքն ալ գաղթական :

Մէկը, «խենթ» անուանեալ, ամենայն յամառութեամբ կը մերժէր իր գիտութիւնը ի սպաս դնել ո՛րեւէ մէկուն, մէջն ըլլալով Անդրանիկը : Ան, մշտատեւ ներկայ մը, ինծի համար բնաւ խենթ մը չէր, աշխարհէն «պէզարած» երեւոյթով, մըթմըթացող ու հակաճառող, վերջին ծայր ազնիւ, ճանճի վրայ չկոխող մէկը : Չեմ կրնար հաւաստեւ թէ խմելով գինով էր, թէ առանց խմիչքի :

Միւսը կը կոչուէր Տօֆօ. Պօնափարքեան, խորբերզցի, հեռուներէն կամաւոր եկած, եւ Անդրանիկի անձին նուիրեալ մը : Իր ինքնայատուկ դոռողութիւնն ու վարուելակերպը թէեւ զինքը անբաղ-

ձալի դարձուցած էին, սակայն ան հայրենեաց արի զինուորն էր, ազգի վրէժխնդիր կոխներուն զոհած էր բժշկական ասպարէզը: Ոչ ոք կը համարձակէր իր հիւանդ անձն անգամ անոր խնամքին վստահիլ, իր մասնագիտութեան մասին կարծիքները կը յանդէին արհամարհանքի: Պէտք է ըսել նաեւ որ ան բնաւ չէր փորձեր հիւանդ ընդունիլ:

Երեկոյ մը, տուն դարձին, Վահանի հարցումին, «Պօնափարթեա՞նը կ'ուզես, թէ «խենթը», անվարան պատասխանած էի «խենթը»:

— Եթէ «տամարը» «չթէրստի»:

Յաջորդ օրը, կէսօրէն առաջ, Վահանին հետ տնկուեցան, ու փոխան բարեւի մոնչեց .

— Այս աղայէն բացի, ուրիշ մը թող օժանդակութիւնս չսպասէ: Ան մարդ գնահատելու ձիրք ունի, ձեզի պէս ամբարտաւան չէ:

Թոքերու ծայրամասի բորբոքում մըն էր:

Խենթը բարեբոյցի էր, իր բազմանգամ ընտանիքէն ո՛չ մէկ չունչ չէր կրցած դանել:

Բացակայութենէս մտահոգուած, այցելութեան եկաւ Վահանի մեծ բարեկամուհին՝ զմայլելի Օր. Ջաջօն: Կը բնակէր Թիֆլիզի մօտիկ արեւելեան արուարձանը: Շարաթն անգամ մը տոպրակ մը լեփ-լեցուն իրեն մօտ կ'ըլլայի, ան մեր վրայ-գլխի կոկիկութեան ու մաքրութեան հսկող հրեշտակն էր:

Դասերուս մէջ խրուած, օր մը երբ իրեն կ'երթայի, թրամվայը իր վերջակէտին հասցուց զիս: Հրապարակ մը, հսկայ վրանի մը տակէն աղմուկ եւ երաժշտութիւն: Մուտքին կանգնած էր ոսկեճամուկ երիտասարդ մը:

Յիրքի մը առջեւն էի, նորութիւն մը, ներսի անցուղարձերուն բոլորովին անձանօթ, անտեղեակ: Մուտքին ճակատը դունաւոր թանձր վարազոյր մը, քովնտի ձեղքեր:

Մարդը մօտեցաւ, մուտքը 50 կոպէկ էր, չէի կրնար այդ շնորհըն ընել ինքզինքիս:

— Լա՛ւ, մտի՛ր, յաջորդ անգամ կ'ունենաս:

Ջաջօյի քրոջական ընդունելութեան հետ պիտի մրցէր ցիրք մտնելու անյազ փափաքս:

Մէկ-քանի շաբաթ միայն, ափսո՞ս, որմէ յետոյ բնաւ պիտի չտեսնէի մեր սիրելի Ջաջօն, թէեւ ցիրքի կարօտս պիտի յազենար տարբեր հորիզոններու տակ:

Մովորութիւն մը ժառանգած եմ այդ օրերէն: Քննութիւններուս պատրաստութիւնը, խմբադրատան գործերուն զուգընթաց, զիս ստիպած է առանց գրքի դուրս չելլել: Կարդալ փողոցները, թրամվայներուն մէջ, սպասման պահերուն, ուստի մնալ անտարբեր շուր-



ջրի եղելութիւններուն, անտեսել ինձ հանդիպողները, մանաւանդ գործի եւ ա՛յլ գրադումներուն ատեն՝ ըլլալ անհամբեր :

Ունակութիւն դարձած այդ սովորութիւնս պատճառ դարձած է որ ըլլամ կտրուկ ընկերային յարաբերութիւններուն ատեն : Ժամանակի ի զուր վատնում տեսած եմ երկար վիճաբանութիւններուն մէջ, մանաւանդ անոր համար որ կ'ապրէի այդպիսի մթնոլորտի մը մէջ : Յետագային շատեր տարբեր մեկնութիւններ տուած են, բոլորովին անճիշդ, անարդար :

Եւ ամէն ասպարէզի պատրաստուած մարդոց շրջանակին ու մտերմութեան մէջ : Ի՞նչ փոյթ թէ կը գտնուէինք անբնականոն պայմաններու տակ : Դատաստանս պիտի կատարէի աչքիս առաջ գտնուող օրինակներուն համաձայն :

Ի՞նչ կրնային ըլլալ «Գրողներու Միութեան» սանի յաւակնութիւններս :

Ծննդավայրիս մէջ յարգուած, փնտռուած ասպարէզն էր ուսուցչութիւնը : Գիւղացին կը սիրէր իր խոնարհ վարժապետը, որոնցմէ տարուէ տարի աւելի ուսեալները կը ցանկար ունենալ :

Բաւականաչափ կալուածներու տէր ընտանիքի մը անդամ, հոգադորձ եւ արհեստաւոր հօր զաւակ, եղեռնին պատճառաւ ծննդավայրի միջավայրէ զրկուած, նիւթական միջոցներէ բոլորիկ, երբեմնի հնարաւորութիւններէն կը մնար ուսուցչական ասպարէզը իբր սկզբունաւորութիւն : Մեր մէջ, առհասարակ ուրիշ ազգերու մէջ եւս, ուսուցիչը է նաեւ յեղափոխական, ազգային գործիչ, բանաստեղծ, գրագէտ :

Թէեւ դպրոց մը մտնելը ինձ համար կարեւոր էր՝ առժամեայ ապահովութիւն մը ձեռք ձգելու տեսակէտով, սակայն քանի՛ կը մօտենային քննութեանս օրերը, սկանջս աւելի կը սրէի, երբ խմբագրատուն այցելողներուն հանգամանքները ձգելէ վերջ, խօսակցութիւնները քաղաքականէն պահ մը կը շեղուէին ասպարէզներու վրայ :

Մեր վաղուան ալ անորոշ վիճակին մէջ՝ այն է անհայրենիք, կարծիքներու այդ փոխանակութենէն կը պարզուէր զանոնք ընդգրկողներուն երէկի եւ այդ օրերու «Թշուառութեան» պատկերները :

Իմ ամենէն մօտիկ եւ սիրելի Թոքովեցս, բանաստեղծ էր նախ, այժմ հրապարակագիր : Ի՞նչ կրնար ըլլալ իր ապագան, երբ շարունակ կը լսէի թէ ի՞նչ անփառունակ պայմաններու մէջ կ'ապրէին տրեւերահայ գրողները, ի՞նչ միջոցներով կը տպուէին անոնց գործերը, եւ ուրկէ՞ կը գոյանար «Հայ Գրողներու Ընկերութեան» հասոյթները, որոնցմէ ինձի բաժին մը պիտի հանուէր, այն է, Ամենայն Հայոց Բանաստեղծ Յովի. Թումանեանի կատարած աճապարարութիւններէն :

Քաջունի Եղբայրները իրաւարանի վկայականներ ունէին :

Փոքրաթիւ գիւղի մը մէջ ծնած ու դաստիարակուած , չէի կըրնար ըմբռնել որ մեր նո'յնիսկ բազմաթիւ համայնքներուն մէջ , ոճիր , գողութիւն , արկած եւ ա'յլ դատաւարտելի արարքները կընային ա'յնքան բազմաթիւ ըլլալ , որոնց պաշտպանութեան եւ պատիժներուն համար անհրաժեշտ էր յատուկ նուիրեալներ : Զէի կընար միտքս հաշտեցնել , թէ ի՞նչպէս իրաւարան մը կընար մերթ ոճրագործի մը դատաւարտութիւնը փաստարկել , եւ ուրիշ առիթով մը մարդասպանի մը անպարտութիւնը պահանջել : Այնքան սեղմ էր միջավայրս եւ ըմբռնումս , կամ հոգեվիճակս :

Բժշկութիւն եւ ճարտարապետութիւն ինծի կը թուէին պերճանքի ասպարէզներ : Մեր դաւառին մէջ դէթ , այգալիսիներ չկային , կատարուած միակ փորձը , դեղարան մը , երկու տարի հազիւ կեանք ունեցաւ իմ օրօքս , ձեռնարկողը թերահաւատութիւն ճաշակելէ վերջ անցած էր սնանկութեան : Տունե՞ր : Կը շինուէին փորձառու մարդոց ցուցմունքներով , եւ ես դիտած էի անոնց պատերուն բարձրանալը , որմէ յետոյ հայրս կը սկսէր անոնց ներքին յարդարումներուն :

Ամէն անգամ որ համարձակէի խորհուրդ հարցնել շուրջիննեւրոս , կարծես խօսք մէկ ըրած , նոյն պատասխանը կու տային :

— Վստահ եմ որ դուն ինչ որ ուզես , կընաս ըլլալ :

Այդ փաղաքչական խօսքերը հետզհետէ ինծի համար ալ ճիշդ կը թուէին եւ քննութիւններու զանազան նիւթերուն մէջ մասնաւոր դժուարութիւններ չէի տեսներ , ամէն ինչ սիրելու եւ սորվելու տենդէն բնուած :

Կընայի՞ անտեսել գինուորական ասպարէզը , այն ալ Անդրանիկի եւ իր կամաւորներու շունչին մէջ : Առաւելապէս զէնքի անվարժ , գինուորական ուսում չտեսած մարտիկներէ կազմուած մեր մօտաւոր երէկի վաշտերուն մէջ գլխաւոր պակասը թնդանօթաձիգ սպաներն էին : Միւս հրամանատարները , նախկին Փէտայիներ եւ կռիւներու կրակին մէջ թրծուած ռազմավարներ էին , ուստի հրետանիի սպաներուն կարեւորութիւնը մեր խմբագրատան ամէնօրեայ խօսակցութեանց ընթացքին միշտ կը շեշտուէր :

Այդպէս է որ , պիտի յանգէի ուսուցչական եւ գինուորական ասպարէզներուն , վերջինին տալով առժամեայ նախապատուութիւն , քանի որ ուսական յեղափոխութենէն յետոյ նոր յոյսեր սկսած էին օրօրել Հայոց երազները :

ԲԱՅՑ ԱՀԱ ԱՌԱՋԻՆ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՍ :

Կէսօրուայ մը վերջին ժամերուն , «խենթ»ը՝ բժիշկս գրասենեակ մտաւ :

— Արդէն ոտքի՞ ես: Ըսի հանդիպիմ:

Շատեր մեկնած էին, մեքենագրուհին ինձ հետ ուսերէնով կը «պարսպէր»: Մանուկեան եւ Եգնիկ կ'աշխատէին: Այս վերջինը կը տնտնար:

— Դո՛ւն ալ կրնաս մեկնիլ, ըսաւ «խենթը», ես վազգէմին ըսելիքներ ունիմ:

Ճամբեց ու ինձի դարձաւ:

— Տեսա՞ր որ հիւանդութիւնդ մեծ բան մը չէր, առողջ տղայ ես, բայց սնունդդ շատ ու շատ անբաւարար է:

Պատասխան գիտէր որ չունէի, օրուան վաստակս նոյն օրը կը հալէր:

— Հիմա քեզի հետ տուն մը պիտի երթանք, ուր ես եւ տասնեակ մը կամաւոր տղաք հաւաքարար զնումներ կ'ընենք եւ հայ կին մը մեզի կերակուր կ'եփէ:

Գիտէի բնաւորութիւնը, չպիտի հանդուրժէր առարկութեան:

Առլուպիկն ցած դէպի Կուր գետ, նեղ փողոցներով հին թաղ մը առաջնորդեց զիս: Մութ սանդուխներով Բ. յարկը բաժին մը մտանք, հազիւ աւելի լուսաւոր:

Դուռը ներսէն գոցուած չէր, մեր մուտքը լսած, առոյգ երեւոյթով կին մը մեզ զիմաւորեց, ասեղի պէս սրածայր, երկայնահասակ: Խենթին բարեւը թուրքերէն էր: Նկատեց շուարումս:

— Մեր մայրիկը ափիռն-գարահիսարցի է՝ թրքախօս:

Կուշտ փորով մեկնեցայ, կերակուրները ե՛ւ համեղ էին, ե՛ւ առատ: Սեղանակիցներս տասնէն աւելի էին: Կարօ Համտիխանէն բացի, բոլորն ալ անծանօթ: Կարոյիմ հանդիպիլս անակնկալ մը եղաւ, զինքը Կարիմ կը կարծէի, Պրֆըսորնի որբանոցը: Ա՛ն է եղեր այդ հանճարեղ կարգադրութեան հեղինակը, իբրեւ ափիռնցի:

Բաժինս որոշեցին, ձեռնտու էր. բժիշկը պնդեց որ օրը անդամ մը գէթ պէտք էր կուշտ փորով ճաշէի: Բժիշկս, ինք խումբին միակ վկայեալը, աւելի կը խմէ՛ր, քան թէ կ'ուտէր: Միւսները, որոնց թիւը կը մնար նոյնը, կը փոխուէին շարունակ:

Ես ամենէն շուտ եկողն էի:

Ութսունի մօտ, տարիքով մեր բոլորին ալ մեծ մայրիկը, յաջորդ օրն իսկ մտերմութեան մէջ՝ ինձ արգիլեց իրեն հետ թրքերէնով հաղորդուիլ, որուն մէջ արդէն անվարժ էի:

Ընտանեկան ճաշարանի այդ ձեռնարկը գոյութիւն ունէր կամաւորական գունդերու ցրուումին առիթով, ուստի տարին չբոլորած «մեծ մայրիկը» հայերէն խօսակցութիւններուն կը հետեւէր, ու իր փափաքը, հայերէն տառերուն ծանօթանալու, յաջողութիւն չէր գըտած, ա՛յլ հոգերով ծանրաբեռնուած, փուշի վրայ ապրող մեր կամա-

ւորներուն մօտ : Սիրտը ինձի բացաւ : Ա՛յնքան աղաչանք-պաղատանք դրաւ , որ յաջո՛րդ օրն իսկ այրբենարանով մը իր մօտ վազեցի :

«Մեր մայրիկը» մարմնով չէր միայն կայտառ , ունէր արտակարգ սուր միտք : Մեր փորձը հազի՛ւ ամիս մը զազտնի մնաց , ան բոլորին գարմացուց , իր ծոցին մէջ պահած ժամերգութեան գըրքէն զանազան էջեր կարդալով , առանց կմկմալու :

Մասնաւոր խրատնանք սարքեցին տղաքը այդ առիթով : Աշակերտուհիս ցուցադրեց նաեւ խոհարարի բացառիկ շնորհք : Ուսուցիչն եւս արժանացաւ աժան «կենաց»ներու , որմէ յետոյ ան կը պահէ անեղծ յիշատակ մը իր առաջին եւ այնքա՛ն ուշիմ աշակերտուհիէն : Արգարեւ իրմէ ժառանգ մնացած է մէջս , խստիւ դատապարտել հանդիպածս բոլոր թրքախօսները , որոնք իրենց ծննդավայրէն վընտուելէ յետոյ , տանեակ տարիներ , հայ ընտանեկան միջավայրի մէջ ոչ մէկ ճիւղ ըրած են իրենց մայրենի լեզուով կարդալու մէջ , նոյնիսկ չեն ուզած խօսիլ :

\*  
\*\*

Անդրանիկի հովանիին տակ , ՀԱՅԱՍՏԱՆ թերթի մթնոլորտին եւ քննութիւններու բովին մէջ , սեփական կեանք մը կը վարէի , միշտ յուսալի , երբեմն դուարթ , նոյնիսկ խանդավառ , մինչդեռ դուրսը համայն Ռուսաստանն ու իր կայսրութիւնը կ'եռային յեղափոխութեան կայծերուն մէջ :

Այդ յեղափոխութիւնը տակաւին կ'ապրէր իր տօնավաճառի օրերը , մեղի մերձաւոր , կովկասեան ռազմարեմերուն վրայ արիւնալի մարտնչումները ժամանակաւոր դադար մը կ'ապրէին , գրչի , բեմական , եւ ա՛յլ հրապարակային ճառերու սլաութեամբին վիջելով իրենց տխուր պաշտօնը , եւ ոչ ոք զիտակից էր մօտաւոր ապագայի ահաւոր դէպքերուն , որոնց զօհերը պիտի ըլլայինք դարձեալ մենք՝ Հայերս մանաւանդ :

Երբեմն կանց կ'առնէի «Երեւանեան հրապարակը» , ուր խմբակներ իրարմէ քիչ հեռու կը վիճէին օրն ի բուն : Հայեր՝ ռուսերէնով : Ռուսերէնով խառն հայկական ճառախօսներ , որոնց մօտ կը յամենայի պահ մը , լսելու ընկերաբաններու եւ իմաստասէրներու անուններ , որոնցմէ խօսքեր կը շարտէին բեմբասացները չլիբժացող ծափահարութիւններու մէջ :

Բառե՛ր , բառե՛ր , բառե՛ր : Սոցիալիզմ , կապիտալիզմ . . .

Իզմերու կոյտեր :

Չոն էր Բաբելոնը , աչք ծակող , ահանջ խլացնող :

— Ի՞նչ ասաց որ կը ծափահարեն , ընկե՛ր ջան :

Երկար ատեն է որ կողս կը մշտէր՝ ծանօթ «խուլիկաններէս» :  
— Բան չհասկցայ : Հաւանաբար մեր ժողովուրդին դամբանա-  
կանը :

Ընկերացաւ ինծի դէպի «Շտապ» :

Մեր դիմաց, Պէտպուտեան փողոցի Ռուսական Գիմնազիումի  
դրան առջեւ, բազմութիւն մը՝ Հայեր : Մտանք ներքնայարկ : Մի-  
թինկ կար :

Բեմը, բաւական խորը՝ դրաւուած էր բեմբասացներու խում-  
բէն : Նեղ ու երկար սրահին աթոռները, աւելի քան երկու հարիւր,  
բռնուած էին, մենք բարձրացանք յետնաշարքի նստարանին վրայ :

— Ընկե՛ր նախագահ, խօսք եմ ուզում, կը բղաւէր շարունակ  
մեր առաջ դտնուող մը՝ թեւերը վեր շարժելով :

Զինքը լսող չկար, իսկ մենք՝ միմիայն զինքը կընայինք լը-  
սել :

— Խօսքը քոնն է, վերջապէս պոռաց նախագահը, ձեռքը մեր  
մարդուն ուղղութեան :

— Պարո՛ն նախագահ : Պարո՛ն նախագահ, սխաւ պոռալ ձայ-  
նին տէրը : Վալախէն, Սրալէն, Ռուսէն, զմէնն էլան գարիօլ, Խայ մը-  
նաց Խայ, դուն իրլէ սօսիա՞լ կի քարոզես :

Մէկ-քանի պարոններ եկան ընդդիմախօսը լռեցնելու : Մարդը  
հայհոյելով դուրս ելաւ : Իրեն ընկերացանք :

Դժգոհ, ինքնիրեն կը խօսէր փողոցին մէջ, հետզհետէ աւելի  
բարձրաձայն :

— Հայրենակի՛ց, ընդմիջեցի զինքը, սրահի ժխորին պատճա-  
ռաւ ձեր խօսքերը չկրցինք ըմբռնել :

Ճշմարտութիւնը ա՛յլ էր, չէինք հասկցած : Բացատրութիւ-  
նը հետեւեալն էր :

«Վաւաքներ, Սերպեր, Ռումէններ, Թագաւորութեան, անկա-  
խութեան տիրացեր են, Հայը մնացեր է նոյնը, իսկ մենք ընկերվա-  
րութիւն կը քարոզենք» :

Տխուր եզրակացութիւն մը արդարեւ :

Դարձաւ դէպի Շէյք-ան Փազար, մենք դէպի թիւնէլի աղբիւրը :

Հնչակեաններու միթինկ էր :

«Ռոպէները կրիտիկական» էին : Տաղնապալի, ի մասնաւորի  
հայ մնացորդացին անմիջական դոյութեան տեսակէտով :

Բովանդակ ուս կայսրութիւնը, թէեւ առանց կեսարի, կ'ապ-  
րէր օրը օրին Փետրուարեան Յեղափոխութեան վարանումներուն  
մէջ :

Արեւմտեան ճակատի յարձակումը ձախողած էր, ուս-թուրք  
ռազմաբեմի երկայնքին զինադադարը կը խլրտէր տեղ-տեղ :

Տուճայի (երեսփոխանական ժողով) անդամներուն ընտրապայքարը օրակարգի առաջին հարցն էր, եւ Դաշնակցութեան թափօրները, Թիւ Ձորս ցանկի յաղթանակին ի խնդիր, իրենց քարոզչներով կը դղրդացնէին Թիֆլիզի թաղերը:

Բազմազգի, բազմալեզու Կովկասը, ազատութեան ճառերուն ընդմէջէն ինքնավար վարչաձեւեր կ'երազէր, ու արդէն ազգամիջեան վէճերն ու զոհերը, մանաւանդ հայ-թաթարական, հետզհետէ կը ծաւալէին:

Տակաւին «իսկական խորհուրդներու» իշխանութիւնը չհաստատուած, զանազան խորհուրդներ կը ծլէին Հայոց մէջ:

Արեւելահայոց Ազգային Խորհուրդ:

Հայաստանի Ապահովութեան Խորհուրդ:

Արեւմտահայ Ազգային Խորհուրդ:

Ամէն շրջան սեփական թղթադրամներ հրատարակ կը թափէր, եւ պարենաւորումը հետզհետէ կը դժուարանար, զրոյցներ զինուորական ընդհանուր նահանջի եւ տեղական իշխանութիւններ հաստատելու շուրջ:

Հայ կամաւորական շարժումը կէսէն աւելի պակաս ձգած էր իր դործը:

Անդրանիկ, իր ՀԱՅԱՍՏԱՆ խմբակով հայ դադթականի անձկութիւնը կ'ապրէր, մօտաւոր ապագայի եւ գալիքին անորոշութեան մէջ:

Արհամարհանք, վէճ, կռիւ, նախատական խօսքեր հայկական հատուածներուն միջեւ, հանրային պարտէզներուն մէջ, հանդէսներու, հաւաքօթիւններու ընթացքին, «Չաշկա Չայ»երու մէջ, մամուլով, փողոցը:

Մանր-մունր բաժանումներ, աջ, ձախ՝ կազմակերպութիւններու ծոցին մէջ, փոխադարձ մահուան սպառնալիք, նո'յնիսկ յաջող մահափորձեր:

Անձանօթներու կողմէ վար կ'անուէին Հայեր, Թիֆլիզ-Սանահին, Թիֆլիզ-Բազու «գնացքներէն», ու անհետ կը կորսուէին:

— Տղա՛ք, կը պաղատէր Թոթովեց, հեռագրենք Փաշային, որ դիժը չկտրուած վերագառնայ: Թող Արեւմտահայ Խորհուրդի կողմէ՛ ստորագրուի:

Հեռուն, զինադադարի դժի երկայնքին, «անկանոն» կոչուած զինեալ ուժերուն միջամտութիւնը կը պարտադրէր թրքահայ բեկորներուն տեղափոխուելը: Արեւմտահայ Խորհուրդին գլխաւոր պարտականութիւնն էր տէր կանգնիլ անոնց կեանքին ու դատին:

— Ա՛յս էր կացութիւնը: Երբ Անդրանիկ, մարմնապէս տկար, ըստիպուած էր մեկնիլ հանքային ջրերը, վարանոտ, տխուր, յառաջի-

կայ փորձութիւններուն անպայման գիտակից, իր ուժերը վերանորոգելու յոյսով:

Փաշան կը վերադառնար: Հեռագիրը չէր ստացած:

— Սիրոս անհանգիստ էր: Ինչպէս յաճախ պատահած է, դրժբախտ դէպքերու նախօրեակին ըլլալու նախազգացումն ունիմ՝ պիտի ըլլար իր առաջին խօսքը:

Անստուգութեան, վախի այդ բովին մէջ, Սասնոյ առիւծին յանկարծուստ վերադարձը ապահովութեան երաշխիք մ'եղաւ, ո՛չ միայն իր արմատախիւ երիտասարդ խումբին համար, այլ անոր անհեռատես հակառակորդներուն:

Թիֆլիզ հասած օրը, Անդրանիկ կը զովանար իր պաշտպանեալի պաղ ջուրով, ու զայն համբուրելէ յետոյ, իր մօտ կը հրաւիրէր խմբազրատան կազմը, իբրեւ կարեւոր խորհրդակցութեան մը համար:

Կիսլավոսաբի մէջ բուժուողներէն էր նաեւ Ս. Էջմիածնայ Հոգեւոր ձեմարանի Տեսուչ՝ Գարեգին Ծ. Վրդ. Յովսէփեանց:

Օրեր շարունակ, Անդրանիկի եւ Հայր Սուրբի խօսակցութիւնները կը վերջանան ձեմարանի ուսման եւ մանաւանդ ներքին կենցաղի մանրակրկիտ հարց ու պատասխաններով: Վարդապետը մըտահոգ է եւ զարմացած:

— Պարո՛ն Անդրանիկ, թոյլ տուէք այժմ իմ կարգին ձեզ մի հարցում տալու: Ինչի՞ համար էք ուզում այդքան մօտիկէն տեղեակ լինել տղոց ապրելակերպի վրայօք:

— Ի՞նչ մեղքս պահեմ, Հայր Սուրբ, տղուս համար յայժմար դպրոց մը կը փնտռեմ, եւ այն եզրակացութեան եկայ որ Ձերինը աւելի նպաստաւոր է իրեն համար, քան Թիֆլիզի Ներսիսեանը:

Այս անակնկալ յայտնութենէն, պատրաստաբան վարդապետը պահ մը կ'անճրկի:

— Ինչպէ՞ս թէ «տղուս համար», դա մի մեծ նորութիւն կը լինի, միթէ դուք էլ մեզ նման մի կուսակիցօն մարդ չէ՞ք:

Արդարեւ, Անդրանիկ, Թումանեանի դրան առաջ շատ անդամներ հանդիպած էր տղոց՝ Գրողներու Միութեան սաներ, որոնք իրենց համար սահմանուած համեստ թոշակէն մասնիկներ փրցնելու համար՝ պարտաւոր էին քանիցս ներկայանալ: Այդ տղոց երեւոյթը, պատահաբար կամ ուզողակի, իր ականջին հասած տրտուելի բռուրը, մեծ քաղաքի մը մէջ անոնց սպառնացող փորձութիւնները, բաղդատութեան ո՛չ մէկ եզր կը հանդուրժէին Հայր Սուրբի նկարագրածներուն հետ, ուստի կ'առաջարկէր իր սանին համար աշխարհազրական փոփոխութիւն:

Թոյլ առարկութիւն մը, մուտքի քննութեանց տարբերութեան

չուրջ, կրօնքի վերաբերեալ մասը, որ պատրաստելիք նիւթերէն դուրս ձգուած էր :

Այս աստիճան հոգածութեան կարող գէնքի մարդը, իր ունկընդիրները ամչցնելու չափ զարմացնելէ յետոյ, իր ղեկոյցը կ'ամփոփէ իրապաշտ թուումներով :

— Քննութեանց յաջողեցա՞ւ : Գլո՛ւխը կը խուզեն : Մօրէ մերկ բաղնիք, ու ապա հագուստ-կապուստ : Կ'ուտէ-կը խմէ մաքուր ճաշարանի մէջ, կը պառկի հանգստաւէտ եւ անազմով ննջարանի մէջ : Երկու շաբաթն անգամ մը ընդհանուր մաքրութիւն, բժշկական քրննութիւն, եւ ի հարկին խնամք : Լուսաւոր դասարան՝ յատուկ դաստիարակի հսկողութեան տակ : Լաւագոյն ուսուցիչներ : Իրեն կը մնայ մի'միայն սորվիլ, սորվիլ, եւ երբ օրը դայ՝ ազգին ծառայել :

Երբ որոշումը կը տրուի միաձայնութեամբ, խանդավառ ցոյցերու մէջ, «սան»ը մտովի կ'երգէ .

«Այժմ դառնանք մենք շուրջանակի,

Եւ միշտ ալ հիւսեմք, աշխոյժ եռանդուն :»

Մինչդեռ քիչ վերջ, Անդրանիկի մեկնումէն յետոյ, ապահար սողաք նոր գիւտ ըրածի պէս անոր գովքը կը հիւսեն, անոր մէջ դտած բացատիկ նոր գիծը՝ հայրականը, նոյնքան ցայտուն եւ հերոսին վայել :

**ՋՈՒԱՐՃՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՀԱԶԴՈՒ ՊԱՏԱՀԱՐ ՄԸ :**

Թղթիկներ ձեռքին երիտասարդ մը Եզնիկի թեւէն կը կախուի :

— «Սիրող»ներից եմ : Խնդրանք ունեմ, որ բարի լինէք ԱնՈՒՇի ներկայացումը յայտարարել ձեր լրագրի մէջ :

Բնականաբար «սիրողները» հարուստ չեն : Եզնիկ յաջողեցաւ այդ ազնուութեան փոխարժէքը երկուքէն-երեք ձրի տոմսակի բարձրացնել, մէկը անմիջապէս ինծի երկարելէ յետոյ, իբրեւ իմ ցարդ ստացած լաւ լուրերուն շարունակութիւն :

Երջանիկ պահերէս մէկն եղաւ, անհամբեր սպասեցի արեւամուտին :

ԱնՈՒՇի եղանակներն ու բառերը, այն ատեն արդէն ամէն Հայու, մանաւանդ գաղթականներուն համար հանապազօրեայ հացին ու ջուրին չափ կենսատու էին : Ամէն տան մէջ, հանդէսներու, խընջոյքներու, փողոցի անկիւնները, ԱնՈՒՇի երգերով ողողուած էին, նաեւ անխօս շարժանկարի պատկերներուն ընկերացող ջութակի թրթռացումներուն ու երգեհոններուն գլխաւոր բաժինը կը կազմէին :

Անոր եղանակները չլսած, ժողովրդական մեծ բանաստեղծի համբաւի տէր Թումանեանի տաղերէն շատեր գոց ըրած ու արտասանած էի ծննդավայրիս՝ Մոփաց աշխարհին փոքրիկ բեմերուն վերայ : Այժմ սիրուած բանաստեղծը ինծի մօտիկ մարդ էր, թէեւ իբ-



րեւ սաճ իրեն հաշիւ տալու բեռս նոր կը վերցուէր, սակայն ան պիտի մնար անձերէն մին իմ բովանդակ հիացումիս :

Ներկայացումը տեղի կ'ունենար գիշերը, շոգեկառքի կայանին մօտերը, մեզմէ շատ հեռու :

Հանրակառքի վերջաւորութեան իջայ : Սկսայ փնտռտուքս, այսուհանդերձ բացումէն շատ առաջ հասած էի, ու տակաւին դատարկ սրահը խանդավառութեանս թափը իջեցուց :

Վարագոյրը կը յամառէր մնալ անշարժ, ետին ժխոր : Միակ անհամբերը չէի, քովի նստարաններէն դանդատներ սկսան տեղալ, ուսերէն, վրացերէն, նաեւ, այո՛, նաեւ հայերէն :

Այդ օրէն պէտք էր վարժուէի հայկական հանդէսներուն բացումի յապաղումներուն :

«Օփերայի «երես» տեսած չէի :

Եղանակներուն ծանօթ, բեմադրութեամբ անոնք նոր փայլ կը ստանային, եթէ շուրջիս քննադատութիւնները չպղտորէին հաճոյքս : Կային ԱՆՈՒՇի բոլոր ներկայացումները չփախցնողներ, անոնց միջեւ բաղդատութիւնները կը շարունակուէին միջնարարներէն յետոյ ալ :

Ինձ համար այդ ամէնը երազային էր, տեսակ մը հրաշք :

Մեր դիւղի եկեղեցւոյն մէջ, կամ դպրոցի ճղճիմ սրահին մէջ սարքուած թատրոններուն հետ բաղդատել թէեւ չէի կրնար, սակայն առիթ մը եղաւ ինձի յաճախակի մտքով եւ ուշադրութեամբ հոն փոխադրուելու, եւ ԱՆՈՒՇի հետ լռելեայն աղի արցունք թափելու : Այս մտքերուն մէջ առջեւս փոռուող ողբերգութիւնը իր ուժգնութենէն կը կորսնցնէր, կը փափաքէի ժամ առաջ խուսափիլ տխուր տեսարաններէն, ու կը հրճուէի անվերապահօրէն խմբերգներուն, պարերուն եւ զուարթ երաժշտութեան տեսիլները դիտելու ատեն :

Ես ալ երկարօրէն ծափահարեցի «սիրողները», Տիգրանեանն ու Թումանեանը, եւ դուրս ինկայ մութ գիշերին մէջ, որ իր կէսը ցատկելու վրայ էր :

Հրապարակն ու փողոցները շուտով ամայացան : Օրքսեալաւ տանող հանրակառքին թիւն ու տեղը նախապէս ճշդած էի : Հոն եմ, մարդ-մարդասանք չկայ : Թեթեւ սարսուռ մը անցաւ մէջէս : Գոնէ մէկը դտնուէր ինձի պէս սպասող : Ճար չունէի, պէտք էր սպասել :

Կը փորձեմ յառաջանալ ճամբուս ուղղութեամբ, վախը մէջս կը սաստկանայ, կը վերադառնամ տեղս : Կը սպասեմ կրկին : Ժամացոյց չունիմ . իմ հաշուով ժամէ՛ն աւելի սպասած եմ : Հանրակառքը այդքան պէտք չէ ուշանայ :

Միաձի կառք մը իր վազքը դանդաղեցնելով կը մօտենայ : Կառապանը երեք լեզուով իր սպասարկութիւնը կ'առաջարկէ, աւելցնե-

լով որ ի դուր հանրակառքի կը սպասեմ, ան երթեւեկութիւն չունի այս գիշեր:

Դրամ չունիմ. տեղեկացաւ, ու քչեց անցաւ:

Բոլորովին անծանօթ, Կուրի աջակողմեան թաղամասերուն մէջն եմ: Գիտեմ որ հանրակառքը Մետեխի բլուրին տակի կամուրջէն կ'անցնի Շէյքան Փագար, ապա ձախ՝ դէպի Օրթաֆալա արուարձանը: Առաջնորդներս են երկաթեայ զոյգ դժերուն փայլը: Ճգմուլու վախ չունիմ, կ'արտորամ առանց ոտքի ցաւերուս անսալու: Ինձ կը թուի թէ գիշերուան ժամերը թակոյ ձայներ դպան ականջիս՝ երկու դարկ:

Ձախիս Հալապար բարձրացող բաժանումին հասած եմ: Գետը չի տեսնուիր, սեւ կոյտը Մետեխն է, կորսուած չեմ: Հանրակառքին գիծերը կը մխրճուին ու կը քերեն փորուած ժայռին կողերը: Հեռուն հորիզոնը մէկէն կը բոցափառուի աչքերուս մէջ, խուլ եւ անձոռնի ձայներ այդ բոցերէն դուրս կը թռչտին:

Գետեզրն եմ վերջապէս, տուներ չկան այլեւս, իմ կողմս ո՛չ մէկ կենդանութիւն: Ճամբան կը շարունակեմ լոյսերուն եւ ազմուկին ուղղութեամբ. կամուրջի կիսուն հասած, անոր դողաւոր բարձունքէն ահաւոր տեսարան մը կը պարզուի: Զիւտը մը դէպի ինձ կը յառաջանայ, գլխուն վրայ սուր մը կ'ապուած, երեսը արիւնլուայ, քովերէն նոյնպէս դանդաղօրէն օրօրացող բազմութիւն մը, ձեռքերնուն մէջ դանդաղան առարկաներ, լապտեր, դրօշ, ձողեր, որոնց ինքնութիւնը տակաւին չեմ կրնար ճշդել: Երկու բառեր, երկփանկանի, կը ճշան միաձայն եւ ողբադին:

Թուրք-թաթար կամ պարսիկ կոչուած թաղը ամբողջովին ուղղուած է լոյսերու մէջ:

Յեղափոխութեան օրերու մէջ կ'ապրինք, մտքիս մէջ նոր թարմացած են հազի՛ւ տասնեակ մը տարիներ առաջ հայ-թաթարական կռիւներէն դրուազներ: Նոր եմ անցած ինքս ջարդերու բովէն, սարսափ մը կը պատէ դիս, սրահ մը կ'ընկրկիմ, ու ապա ինքզինքս վերագտած՝ կը փախչիմ ետ, Մետեխի ժայռին խոռոչներուն մէջ, մինչ թափօրը դանդաղ եւ հանդիսաւոր կարծես ինձի կը հետեւի, ու արդէն միւս եզրին վրայ կամուրջին մօտն է:

Այժեամի թեթեւութեամբ կը թռչիմ ժայռի կոտրաւուածքներուն վրայ, ու խորշի մը մէջ թաղուած կ'անդրադառնամ բախտիս, որ շատ մը փորձանքներէ գերծ պահելէ յետոյ, ապահով կարծուած վայրի մը մէջ վերապահած է կորուստս:

Անդալաբար քարի կտորներ կ'առնեմ, վճռած եմ պայքարիլ. աչքերս ամբոխին են, որ կամուրջի կիսուն հասած, անշարժացած կը թուի:

Միրտս անվերջ կը բարախէ, ամէն կողմերէս կ'արձագանդեն անոր դարկերը. կարծես անոնք խեղդած են դուրսի աղաղակները: Իրաւ ալ բազմութիւնը կ'ընկրկի, ետ դարձած է, կամուրջը պարպուելու վրայ է, իմ կողմս անցնող չկայ:

Շունչս կը կանոնաւորուի, փորձանքը հեռացած է, առժամեայ ապահովութեանս հետ քաջութեան նշոյլներ կը յայտնուին մէջս, բայց հարկ է սպասել:

Առեղծուածին կեդրոնը թաթարական թաղն է, հանքային բաղնիքներուն շուրջը: Ժայռի կողերէն աւելի վերերը կը մաղցլիմ. արդարեւ միւս թաղերը կատարելապէս խաղաղ են՝ քնած:

Կրկին պողոտային վրայ, երկու մտքէն եմ, ետ դառնալ, բայց ո՞ւր:

Որոշում տալու անկարող, կը յառաջանամ սակայն դէպի կամուրջ, առաջիս ամէն ինչ խաղաղ է: Արդէն միւս կողմն եմ: Սեւլաքեղ վաղք մը, ու Շէյթման Փաղարի մեր հայրենակիցին ճաշարանին դուռը կը թակեմ տենդոտ, աչքերուս բիբերը գլորելով:

Գիգոհ ձայնով, խապոտ ու երեք լեզուով, ներսէն ինքնութիւնըս կը հարցնէ: Ու վերջապէս դուռը կը բացուի:

— Այս պահերուն հոս ի՞նչ գործ ունիս: Ինչո՞ւ ես այդպէս այլայլեր:

Կը պատմեմ կցկտուր, կը սկսի ծիծաղիլ:

— Ա՛յ տղայ, Շախտէյ-վախտէյի օրն է, չէի՞ր գիտեր:

— Շախտէն, վախտէն շա՞տ գիտեմ, որ օրը գիտնամ:

Կը դողդղայի, ներս առաւ:

— Վախնալու բան չկայ, եկուր բան մը խմէ, մինչեւ ես հագուիմ: Միասին կը պտըտինք թաղը, շատ հետաքրքրական բաներ պիտի տեսնաս:

Գիշերուան 4-ը մօտ էր: Ինկանք աղտոտ, եւ քիչ մը աւելի կեղտոտած փողոցներուն եւ քարվանսարայներու բակերուն մէջ:

Տեսարանը ի՛րապէս ահաւոր է: Ամէն անկիւն, ամէն քայլափոխի, դետին փռուած, հոնդացող մարդկային կոյտեր, կեղտոտ, արիւնլուսայ, ժանգոտած շղթաներ, սուր, դանակ ձեռքերնուն մէջ: Տեղ-տեղ տակաւին ոտքի կանգնած՝ շղթաներով կռնակին ձեռքով խմբակներ, իւրաքանչիւր դարկի ընկերացող՝ Հասան, Հիւսէյն, կամ Ալի պոռչտուքներ:

Բաղնիքները մանաւանդ լեւի-լեցուն էին: Վախս փարատելու համար ուղեցոյցս յաճախ ոտքով «գիւակները» մէկ կողէն միւսին վրայ կը շրջէր: Ոչ ոք մեր վրայ ուշադրութիւն կը դարձնէր, եւ ինչպէս ան կը բացատրէր միաժամանակ, խաղաղասէր մարդիկ էին, երաճը կրօնական ծիսակատարութիւն մըն էր, այդ դիչեր ո՛վ մահա-

նար որեւէ ձեւով, կամ խոշտանգումներու պատճառաւ, մահմետական դրախտին կ'արժանանար :

— Բայց այս որքա՞ն մեռեալներ կան, ըստ :

— Սուտ են, ըսաւ Արշակ, վաղը, կարատաւոյնմերում (ոստիկան) սուլիչը երբ ճչայ, ոտքի կ'ելլեն, ու վազելով կ'անյայտանան :

Մտանք քարվանսարայները : Քառակուսի այդ բակերը լիքն էին «մեռեալներով» :

— Հո՛ն նայէ, հո՞ն, զիս ցնցեց ընկերս : Մեռելները յարութիւն առին :

Ծերունի, հարուստ, հաւատացեալ կամ շարածճի միւսլիման մը տուրքակով հնչուն կոպէկներ կը թափէր պատշգամէն : Մեղունբու պէս պարս ելան «մեռեալները», իրարու վրայ :

— Տակաւին ի՞նչ դուարձալի տեսարաններու կրնանք հանդիպիլ :

— Հապա ան, որուն գլուխը սուրով մը կիսուած, ձիու վրայ քովերէն բռնած կը տանէին թափօրին գլուխը :

— Դերասանութիւն է եղածը : Յիրք : Մետաղեայ թասի մը վըրայ փակցուած սուրի կտորներ են : Ծօ՛, այդ որքա՞ն պարզամիտ ես :

Մահմետական Շիա մեծ աղանդին տարեկան ծիսակատարութեան օրն էր : Խալիֆայի, Մուհամմէտի յաջորդութեան առաջին հերձուածը, Ալիի եւ անոր յաջորդող իմամներուն եւ հետեւորդներուն ջարդին ողբերգման օրը : Ջարդ մը, որ տեղի ունեցած էր Պաղտատի մօտերը Քերպլէա կոչուած վայրին մէջ, այսօր Շիաներու սըրբաւայր :

Մինչ այդ ես ճանչցած էի Սիւննի կոչուած մահմետական թուրքերը, ու թէեւ ծնած-ապրած էի դուտ հայաբնակ գիւղի մէջ, սակայն քաղաքացի հայ ընկերներէս երբեք չէի լսած նման ծիսակատարութիւն մը իրենց քաղաքին մէջ :

Իմ ճանչցած միւս մահմետականները, մեր Տերսիմի Քիւրտերըն էին, ու, ինչպէս յաճախ, մեծ մայրիկս կը կրկնէր, անոնց «մէմ-մէտականութիւնը վրաս գրէ» : Մզկիթ, ո՛չ մէկ տեղ ունէին : Կը համբուրէին իրենց մօտակայ ամենէն մեծ քարը, որուն վրայ արեւու առաջին ճառագայթները կը տեսնէին ինկած : Յաճախ երդում կ'ընէին Ալի կամ Խըզըր բառերը արտասանելով : Իբր իսլամ, մեր Քիւրտերուն եւ տիրող թուրքերուն մէջ չեչտուած հակառակութիւններ չկային :

Այդ գիշեր պիտի տեղեկանայի որ մահմետականութեան մէջ ալ բաժանումներ կային, ինչպէս քրիստոնեաներուն մէջ, ու այդ բարբարոս խոշտանգումները միայն իրենց յատուկ չէին, քանի որ

քրիստոնեաները նո՛յնքան վայրագ հանդիսութիւններ սարքած են Մի-  
ջին Դարուն Եւրոպայի սրտին վրայ: (\*)

Շատ բան սորվեր էի, մանաւանդ փարատեր էր վախս, եւ ան-  
ջնջելի տպաւորութիւններով տուն վերադարձայ: Գրեթէ առաւօտ  
էր:

Վահագն բացակայ էր: «Այս դիչեր հաւանաբար տունը չըլլամ»  
ըսելով բաժնուած էր, եւ գիտէր թատրոն երթալս:

Յաջորդ օրը, երբ իրեն կը պատմէի տեսածս եւ վախս,

— Հայտէ՛, շուտ նստէ՛, գրէ՛:

Դասերս պատրուակելով խոյս տուի:



---

(\*) Մեր Տիրոջ Յ. Գ. ի 1349 շնորհաց տարիին մէջ յայտնուեցան ապաշխա-  
րողները: Ասոնք ծնունդ առին Գերմանիոյ մէջ: Կ'ապաշխարէին հրապարակաւ,  
ինքզինքնին գանակոծելով գամեր կրող եղեգնեայ ձողերով: Իրենց ուսերն ու կըռ-  
նակները կը կտրատէին, ողբագին երգերով արարողութիւններ կը կատարէին Բը-  
րիստոսի ծննդեան եւ յարութեան նուիրուած: Ասոնք միեւնոյն վայրին մէջ գիշերէ  
մը աւելի չէին հանգստանար, ու այսպէս 33½ օր կ'ապաշխարէին ի յիշատակ  
Քրիստոսի երկրի վրայ անցուցած տարիներուն: Կը յայտնաբերուէին մանաւանդ  
համանարակներու ատեն, մեր Տիրոջ գուրբը շարժելու համար:

## «ԳՆԱ՛, ՄԱ՛ՐԴ ԵՂԻՐ»

Այս է անցադիրս : Նուիրական, անդիր, անջնջելի : Էութեանս մէջ պարուրուած : Ան կը պարունակէ ինծի կեանք տուող երկու ըզմայլելի էակներէն միուն կամքը, միւսին արցունքներովը նուիրագործուած : Հոն չկայ «մարդ ըլլալու» յստակ սահմանում, որ ձգուած է իմ կարողութիւններուս եւ բարեբաստիկ դէպքերու քմահաճոյքին :

Ս. Էջմիածին մեկնելու օրերը մօտեցեր են, դրքերուս դէզը, օրը թերեւս մէկ քանի հեղ հապճեպով անդ կը փոխեն : Կը թղթատեմ դրեթէ առանց կարդալու, գալիքին անձնատուր : Ծառերու ճիւղերուն վրայ, ամրան արեւներէն հասունցած պտուղներուն պէս, մե՛ր ալ գլուխներէն պիտի հաւաքուէին ամենէն համեղ պատասխանները, տեսակ-տեսակ նիւթերու մասին :

Նոր փորձութիւններու վախը չէ միայն անձկութեանս պատճառը. վերստին բաժանումի մը կսկի՛ծն է մանաւանդ, նոր եւ անգրտանելի այնպիսի՛ ընտանիքէ մը, զոր կը գլխաւորէ մեր, եւ տակաւին շատ մը գալիք դարերու Հայոց վաւերական հերոսը՝ Անդրանիկ :

Պատանիի մը յատուկ ջերմեռանդութեամբ, ամիսներ շարունակ ապրիլ ընտանեկան նման մաքուր եւ ժուժկալ մթնոլորտի մը մէջ, յեղափոխութեան մը մեղրալուսնի այդ օրերու շրջապատին մէջ խմորուող, ընկերային եւ քաղաքական անցուղարձեղէն վեր ճախրել, ապահով, անհոգ, նաեւ անգիտակ մօտաւոր գալիքին, ի՛նչ անփոխարինելի կեանք : Ինձ համար հետզհետէ համոզիկեր կը դառնար, որ ամենալաւագոյն դպրոցին մէջն էի, ու ահա յանկարծ իրականութիւնը թողած՝ պիտի վազէի ցնորականին :

Ծովածաւալ Ռուս նոր Հանրապետութեան Սահմանադրութիւնը կերտելու կոչուած ընտրութիւնները վերջ գտած էին, խիստ հետաքրքրական, եւ խաղաղ պայմաններու մէջ, նոր Տուման կը պատրասուէր իր դռները բանալու, նոյնպէս դպրոցները : Սեպտեմբերի նախօրեակին ենք, 1917 :

Իր արագ քայլերով Վահան գիս կը քաշէ դէպի Վանքի թաղամասը՝ Թիֆլիզի Հայոց Առաջնորդարանը, ուր ապաստան տրուած է Արեւմտահայ Ազգ. Խորհուրդի վարչական կազմին :

Երկու պատանիներ ենք միայն, դէպի Էջմիածին ճամբորդութեան թեկնածուներ : Հոն մեզ կանխած էր Արտաշէս Գարսաէֆերեան՝ վանեցի : Թղթիկներ ձեռքը մեզի կը մօտենայ Վահան Փափա-

գիան (Կոմս), «Խորհուրդ»ին Նախագահը: Մեր տոմսակներն են, «Արեւմտահայ Խորհուրդի» նուէրները:

Հանդիսութիւնները երկար չեն տեւեր: Ոտքի կը կանգնին Պարոյր Լեւոնեան եւ Աւետիս Թերզիպաշեան, իրենց համաձայնութիւնը յայտնելու համար մեզի տրուած քաջալերանքին եւ խրատներուն:

Բարի երթի եւ յաջողութեան մաղթանքներուն մաս կը կազմէ Կոմսի նամակը իր եղբոր՝ երեւանաբնակ Վրքանէս Փափագեանին, որուն կը յանձնարարէ յատկապէս զիս: Արտաշէս՝ իբրեւ վանեցի հոն շատ մը ազգականներ ունենալուն պատճառաւ:

Տարիքը ինձ անծանօթ, Արտաշէս ունէր ինձմէ աւելի բարձր հասակ եւ ճոխ արտաքին: Նոյն երեկոյ, ուշ ատեն, շողեկառքի կայարանը զիրար կը դիմաւորենք վաղեմի ընկերներու պէս: Անծանօթ ապագայի ճամբուն վրայ ուշացած ըլլալու վախի զգացումներն են մեր փոխանակած առաջին խօսքերը, ճակատնիս վաղուի ապակիին կոթնած, երբ գնացքը սկսաւ դանդաղօրէն շարժել՝ մեր Ազգային Սրբավայրին ուղղութեամբ: Միշտ կողք-կողքի, այնուհետեւ, աւելի յաճախ, մեր երազներուն անձնատուր, ժպտախառն, փոխադարձ համակրանքի ակնարկներ միայն պիտի ըլլային մեր յարաբերութիւններուն էութիւնը, քաջալերուած հայրենի երկրին տեսարաններէն:

Մթին ձորերէն ու անտառներէն երբ դուրս ժայթքեց զնացքը, եւ ճշալով ողջունեց Ալեքսանտրապօլ իր մուտքը, սիրտս շատոնց սկսած էր մղկտալ, որ ո՛չ ժամանակ, եւ ո՛չ ալ յանդիսութիւնը պիտի ունենայի երթալ ողջագուրել մեծ մայրիկս ու հօրեղբայրս, ու այդպէս չպիտի կրնայի անոնց հետ բաժնել իմ սին յոյսերս, այնքա՛ն կը ծաւալէր մէջս անյաջողութեան մը սեւ պարագան:

Գեղածիժաղ Վրաստանէն յետոյ, շողեկառքը կը կտրէ Արարատեան չոր, ծառազուրկ դաշտը: Շքեղ Թիֆլիզէն վերջ ահա մեր անտեսուած, հինաւուրց Երեւանը: Անոր հեռաւոր կայարանէն, անխնամ, փոշոտ փողոցներէն, հեռիտան հասած եմ, վերջապէս, դրապէտ Վրքանէս Փափագեանին բնակարանը:

Բացակայ է, նամակը կը դնեմ զինքը խնամող բարեհամբոյր երեւոյթով տարեց կնոջ մը ձեռքը: Պէտք է վերադառնամ ուշ երեկոյեան: Իր եղբոր սրտազին խօսքերէն տպաւորուած, ինձ եղած ընդունելութիւնը կը դանեմ խիստ կարճ եւ վերապահ, ինչ որ կ'ընկճէ զիս: Յոգնութիւնս նոր կը զգամ:

— Լաւ, ուրեմն վաղ առաւօտեան եկ, քեզ կ'առաջնորդեն Եջմիածին տանող կառքերու կայանը:

Քաղաքի կեդրոնն եմ: Նեղ ու երկար քաղաքային պարտէզին բոլորտիքը կը դառնամ: Տեղ-տեղ պտղավաճառներ, ուր աչք կը ծակեն համեղ երեւոյթով խաղողի կողովներ, վրայ-վրայի դիզուած ձը-

մերուկներ, դեղին ու ճաթուտած սեխեր՝ պարտէզի պատին կռթնած : Ամէնքն ալ խիստ աժան եւ դիւրամատչելի, նաեւ ինձ համար :

Գիշերը քանի մը անգամ «հանրային պարտէզի», այսինքն «Սատ»ի նստարաններէն վտարուելէ յետոյ, վերջապէս առաւօտը կը դտնէ զիս Վրքանէս Փափագեանի դրան առաջ : Կանուխ է : Բարի մայրիկը կը կռահէ որ բերանս բան տեսած չէ, կարծես վախն ի վախ զիս կը կերակրէ, ու ապա առանց դրադէտը տեսնելու, կը բացատրէ կառքերու կայանը, որ «Սատ»ը շրջապատող փողոց մըն է :

Արեւելեան Հայաստանէն, մեծամասնաբար որբանոցներէն, ա՛յլ հատընտիր վայրերէ, չորս հարիւրէ աւելի տղաք կը դեգերին Էջմիածնայ եւ Վաղարշապատի մէջ : Եկած են մասնակցելու ձեւաբանի մուտքի մրցակցութեանց :

Առաջին յանձնարարութիւնը կատարեցինք միասնաբար : Ձեւաբանի քարտուղարութեան մօտ մեր ներկայութիւնը նշել տալէ վերջ, Արտաշէս նորէն ծլկեց Վանեցիներու մօտ : Ինձ համար ցոյց տրուած միակ կայանն էր վանքի հիւրանոցը, ուր ամէն հայ քրիստոնեայ քանի մը օր մնալու աւանդական իրաւունք մը կը վայելէ :

Չայն բոլորովին մերկ դտայ, նստարան եւ դետին մաքուր, ևաֆթածձեան լաթով սրբուած : Հագիւ քանի մը շաբաթներ առաջ պարպուած էր 1915-ին Վանի նահանջէն փախչող հազարաւոր դադթականներէն, նմանապէս մերկացած իր երբեմնի հիւրընկալութեան յատուկ պերճանքէն, որ ինձ համար առասպելի կարգ անցած էր արդէն :

Յուսահատութեան եզրին վրայ, օրը կը վերջանար, երբ հիւրընկալ արեղային կամ վարդապետին հետքը դտայ : Զիս առաջնորդեց ուրեմն մեծկակ սենեակ մը, անկէ մեկնող հոտէն առաջնորդուած : «Պատին եզերքը միակտուր բարձրադիր նստարանին վրայ կրնայի երկնալ, ինձ հետ բերած միջոցներս օգտագործելով», ինչ որ չունէի :

Յարաբերութիւններս օգտագործել մտքէ՛ս իսկ չանցաւ, աւելի նպաստաւոր պայմաններ ձեռք բերելու. երկչոտ էի. տակաւին չէի ծանչնար յանձնարարութիւններու զօրութիւնը, կամ ա՛յլ հմայքի դիմել. ինձ համար խորթ մտածումներ էին :

Այդ սրահին մէջ նաեւ վախ կը զգայի, երբ մեր ետեւէն՝ վարդապետը տեսնելու առիթը չուզեցին փախցնել երկու տարեկից տղաք, որոնք նոյնպէս «հիւր» էին, եւ ճակատադիրս բաժնող : Վարդապետը, որ խիստ բարի երեւոյթ ցոյց կու տար եւ մեզմ արտայայտութիւն՝ կը շտապէր հեռանալ : Խօսքը ինձի ուղղեց, յայտնելու որ իբրեւ հիւրամեծարութիւն միմիայն առաւօտները դաւաթ մը թէյ



եւ չոր «պաքսիմաթ» մը կը տրուէր: Միւսները արգէն տեղեակ էին, կը փափաքէին երկարաձգել շնորհը:

Այդ տղաքը, որոնց անունը այդ օրերուն ալ չէի փորձած հարցնել, ինձ համար նախախնամութիւն եղան: Քննութիւններուն ատեն անգամ չնշմարեցի զիրենք, որմէ վերջ բոլորովին կորսնցուցի հետքերնին: Անոնց կը պարտէի տասնեակ մը օրեր սնանելու մէջ եօլա» երթալս, թէեւ ձեմարանին թեկնածու ըլլալնին անգամ մշուշի մէջ մնաց:

Կը ճանչնայիս Վաղարշապատի ծակն ու ծուկը, ինծի հանդէպ խիստ ընկերական, ամէն օր միասին կ'անցնէինք վանքապատկան այգիներէն, զորս միւսներէն կը զանազանէին չեմ գիտեր ինչպէս, ու զիս կը կշտացնէին համեղ պտուղներով: Բռնուելու վախիս պատճառաւ զիս ցանկապատերէն միշտ դուրս կը պահէին: Իսկ երբ, ծննդավայրէս մեկնելէն յետոյ մոռցուած ջերմ մը ինքզինքը յիշեցուց, եւ օր ընդ մէջ անկողին կամ տախտակի վրայ դամեց, անոնք կատարեցին հարազատի դեր՝ քաջալեր եւ ջերմ խօսքերով, որոնք կը մեղմէին ակռաներու կափկափանքը:

Այսպէս տփգոյն օրերէ վերջ, մէկէն կենդանութիւն մտաւ վանքի շրջապատին մէջ: Ան կը պարունակէր ի հարկէ վեհարանը, թանգարանը, դպրոցը, եւ ապագայ «Մատենադարան» անունով մկրտուած շէնք մը՝ որբանոցի վերածուած:

Օր ընդ մէջ ջերմ խնամել, պարտէզներու շրջապայութիւն, սողոսկումներ Մանուկ Արեղեանի քերականութեան ուղղագրական կանոններուն մէջ, թուարանութեան կաղապարուած խնդիրներու վերյիշումի փորձեր, նման անհամ զբաղումներով ինչպէ՞ս կրնայի վանել կրօնական ճիւղի քննութեան ալ մղձաւանջը, որ ամէն օր քիչ մը աւելի կը ճնշէր վրաս, նոր ծանօթներու պատմածներուն համաձայն՝ վերջին հոգէտուր թեկնածուներուն:

Արարատեան Դաշտի բերքահաս ամիսն է, աշակերտութեան վերադարձի օրերն են: Թիֆլիզի մարզկային ժխորէն յետոյ արտաքին աշխարհէն կտրուած, ձեմարանը դարձաւ փեթակ մը, որուն մէջըն ու շուրջը խորթալի բզզիւն մը ոմանց երազները կ'օրօրէ, ուրիշներու հոգիները կը խայթէ՝ սեւ ցանկի մը վրայ անուններու շարան մը փոելով:

Մրցորդներու թիւը կրճատելու ապերախտ գործին առաջնութիւնը կը պատկանի ծերունի, դաժան երեւոյթով բժիշկի մը, անոր միջամտութենէն երկու օր վերջ անուններուն քառորդը կ'անհետի՝ կրկին դէպի որբանոց՝ աղի արցունքով: Ջերմի օրս էր, երբ մտայ բրժիշկին գրասենեակը, կէս ժամէ ի վեր մերկ, անդամներս, կեղբոնախոյս ոստումներով ակռաներու նուագին չափ տալէ յղանձ, նոր

փրկիլիած վերստին սկսան պարել, անոր՝ բժիշկին սրածայր մօրուքէն ասղնտուած, իր աչքերուն մարմինս կճող շողերէն ախօտուած :

Ի վիճակի՞ էի բան մը ըմբռնել լսածներէս, եթէ նոյնիսկ քարտուղարին հետ փոխանակուած մասնագիտական բառերը ծանօթ ըլլալին ինձ : Մերկուլթինս մալարիայով ծածկուած դուրս հրեցին զիս :

Տէ՛ր Աստուած, ի՞նչ ըսել է մալարիա, արդեօ՞ք շատ գէշ եւ անբուժելի ախտ մըն է : Ահա մխիթարող ճառագայթ մը : Նախամեծար չէ՞ այս ձեռով մերժուիլ՝ քան քննութեանց մէջ ձախողել : Սոսկում մը փախուստ տուաւ ջերմիս, երբ հազուած դուրս ինկայ : Ոեւէ մէկը հազորդակից ընել, ինչո՞ւ : Եթէ վախս հաստատէին, ի՞նչ շահած պիտի ըլլայի : Ներսը երբ կակազելով արդիւնքը համարձակած էի հարցնել քարտուղարին, «վա՛ղը, վա՛ղը» կրկնեց, «անունդ դրան վրայ փակցուած ցանկերուն մէջ կը կարգաս» :

Հիւրանոցի նստարանին վրայ հազիւ կծկուած էի, դրան մէջ ցցուեցաւ վարդապետին վեղարը : Կը գնկոտայի : Տեսաւ վիճակս, իրեն համար սովորական, «ոչինչ, ըսաւ, կը լաւանաս» : Խոստացաւ թէյ բերել : Բերաւ, անպայման միս-մինակ ըլլալուս պատճառաւ :

Դրան վրայ մէկ ցանկ կար, երկու օր վերջ միայն, «հետեւեալ-ները չեն կարող մուտքի քննութեանց մասնակցիլ» :

Երկու օր տառապելէ վերջ, անունս փնտոցի վերէն վար, վարէն վեր : Չկար :

Շշմած վիճակէս արթնցուց Արտաշէս : «Պատճառ մը չունիս անունդ այս ցանկին մէջ փնտոելու», հոս ամէն մարդ մալարիա «ունի» : Եւ աւելցուց, աւելի լուրջ թոնով, «վաղ առաւօտ թուաբանութեան գրաւոր քննութիւն կայ, տե՛ս, մեր անունները հո՛ն են» : Մինչեւ ցանկապատ իրեն ընկերացայ, նոր ոյժ ստացած, նուազ մը-տահոգ վազուան զալիքէն :

Այդ վազուան մէջն եմ . կրկնակի տենդ ունիմ : Վերջիններէն եմ, երբ հսկիչը թուղթը ձեռքէս կը խլէ : Երկու ժամ ես դիտեմ ի՞նչ քաշեցի : Հսկիչին աչքը անընդհատ վրաս էր, ան ուրիշ բան կը կոտակէր, վախ, տատանում : Ի վերջոյ, պահ մը գլխուս տնկուած, աշխատանքս կը գննէր, ու բարի եղաւ՝ «լաւ է, ի՞նչ կը տնտնաս» խօսքերը նետել ու շարունակեց իր երթեւեկը : Բայց ինձի թեւեր տուաւ :

Երբ դուրս ելայ, անսովոր իրարանցում, զոռում-զոչում, բողոք : «Պէտք է բեկանել», կը պոռպոտային, «խարդախութիւն կայ», ընդօրինակում : Բանից դուրս եկաւ, որ բողոքողները իրաւացի էին : ձեմարանի աշակերտներէն ոմանք մասնաւոր զասերով սաներ պատրաստած են քննութեանց, անոնց թելադրած են պատուհաններու մօտ տեղաւորուիլ, ու յաջողած են ներս մուծել խնդիրներուն լուծումը : Այս խաղը շատ աւելի դիւրաւ յաջողութիւն գտած էր մեր տարին,

թեկնածուններու բազմութեան պատճառաւ թոյլ էր հսկողութիւնը, սակայն դաւը ներսէն լոյս աշխարհ բերին խնդիրը չլուծողները, եւ յաջողեցան փաստել:

Լաց եղողները սկսան յուսալ, ուրախութենէն պոռչտողները սմբեցան:

Դուրս ելած պահուս, երբ հարցուցին «գտած պատասխան», սկոռաներէս գոհացուցիչ բառեր դուրս հանելու ի վիճակի չէի, ջերմս կը սաստկանար: Բազմութիւնը ճեղքելու վրայ էի, երբ բարձրահասակ եւ շէկ երիտասարդ մը մեղմօրէն հարց կու տար ո՞ր տեղացի ըլլալու մասին:

— Ի՞նչ կ'ըսես, գոչեց ուրախութեամբ, Զմշկածա՞գ: Քաղաքէ՞ն ես:

— Ո՛չ, Հազարի գիւղէն:

— Քաղաքէն ընտանիքներ չե՞ս ճանչնար:

— Ի՞նչպէս թէ՛ չէ, գրեթէ բոլորը:

— Թուխմանեանները:

— Մեծ մօրս ազգականներն են, եւ մօտիկ յարաբերութեան մէջ ենք իրենց հետ:

Հայկակ Քաջունի (Թուխմանեան) անոնցմէ էր: Հայրը, Թուխմանեան Քահանայ, Շապին Գարաիխար անցնիլ պարտադրուած էր, (\*) եւ ընտանեօք հոն հաստատուած:

Ուրախութենէն Հայկակ ձեռքերը նետեց ուսերուս, անմիջապէս խօսքը փոխեց՝ իմանալու քննութեանս արդիւնքը: Բացատրութիւններս ճիշդ գտաւ, կը մնար ապահովել Բ. յաջողութիւն մը միայն՝ հայերէնը, եւ արդէն ընդունուած կ'ըլլայի:

Հայկակ, ձեմարանի ամենէն յաջող աշակերտն էր, մաթեմատիքայի մէջ ախոյեան, ուստի Պահատուր Պահատուրեանցին «աչքին լոյս»ը: Աննչան հանդիպում մը չէր, օրը նպաստաւոր, ան այնուհետեւ դարձաւ ինձ եղբայր մը, նեցուկ, պաշտպան, առաջնորդ:

Քննութիւնը ի՛րապէս «բեկանեցին», եւ այդ «տրամաթիք» վէճերուն պատճառաւ քննութիւնները վերսկսան «առողջ» օրս, եւ այդպէս յաջորդաբար, երկու օրն անգամ մը, լաւագոյն պայմաններու մէջ: Սրահ կը մտնէի Հայկակին հաւատքովը զինուած:

Երբ կարգը եկաւ հայերէնին, ծննդավայրիս բարձրագոյն նախակրթարանին համբաւը հանեցի մինչեւ Մասիսի գազաթը, որ այդ օր արդարեւ վե՛հ ու պայծառ, ինքզինքը կը ցցէր Սրախէն նետուած մշուշէն վեր, եւ այդ փառքը ամբողջացնելու համար, քննի-

(\*) Տեղւոյն մէջ կասկածելի անձ, յեղափոխական:

չին տուի նաեւ վերջին ուսուցչիս՝ Վահան Թոթովեցի բանաստեղծին անունը :

Թուարանութեան կրկնակի քննութեան յաջող արդիւնքէն յետոյ՝ Պահատուր Պահատուրեանց, սպառաջ փրոֆէսէօր Երեւանի Համալսարանին, արդէն սպահոված էր Հայկակը, որ իր ազգականի ընդունելութեան այեւս ոչ մէկ բան կրնար արգելք հանդիսանալ :

— Հապա Հայր Ս<sup>ո</sup>ւրբը :

— Նո՛յնիսկ Հայր Սուրբը, եղաւ պատասխանը :

Իրագիտութեան քննութիւնս վերջացաւ 5-ի վրայ 5-ով, դըրուած աչքիս առջեւ : Հայաստանի սպառաջ համալսարանի ընդհ. տեսուչ, գիտնական Աւետիք Տէր Պօղոսեանի ըրած յանկարծակի առաջին հարցումին տուած զուարթ եւ յանկարծուստ պատասխանէս .

— Որո՞նք են ըմպելի եւ մաքուր ջրերը :

— Անձրեւի՛ ջրերը :

— Բաւական ժամանակ վերջ, երբ նրանք օդի փոշիները մաքրած կը լինեն, ա՞յնպէս է :

— Անշո՛ւշտ :

Մնացեալ հարցումներուն տրուած պատասխաններուն ճիշդ ըլլալը գլխու շարժումով կը շեշտէր, Փոխ-Տեսուչի կողքին նստած հայերէնի քննիչը, եւ այդ պահուն ինձ կը թուէր արդէն, որ Հայկակ ճիշդ գնահատած էր :

Գարեգին Ծ. Վրդ. Յովսէփեանի քննութեան պարագան բոլորովին ա՛յլ էր : Ապագայ հռչակաւոր գիտնական, եւ Կիլիկիոյ Կաթողիկոսին առջեւ ներկայանալու օրն է, նախասենեակին մէջ կը սպասենք : Ամէն քառորդ ժամ դուռը կը բացուի, յաջորդին վրայ հագիւ գոցուած՝ ելլողը կը փղձկի : Ասոնցմէ շատերը արգարեւ պիտի վերադառնային իրենց տուները կամ որբանոցները :

Կարգը իմս է, դրան մօտ եմ արդէն, ներսս «կու տայ-կ'աննէ» :

Բարապան մը, յաղթանդամ, ոսկեճամուկ, զոր երբեմն կը տեսնէի վեհարանի դռնէն անցուղարձերուս ատեն, ներս կը մտնէ՝ դրան հագիւ փոքր հարուած կեղծելով, փոքր դաղար մը, թեկնածու մը եւս լալով դուրս կը նետուի : Անոր ետեւէն Տեսուչ Վարդապետը, առջեւէն դռներ բանալ աճապարող բարապանը :

Ետ ընկրկած, սպասողներուն հետ կասկածաւոր ժպիտներ կը փոխանակենք, այդ օր ազատուած ենք, քննութիւնը պիտի յետաձգուի :

Ո՛չ : Ծատ չանցած, տեսչի փոխանորդը կ'անցնի՝ դուռը բաց ձգած :

— Տեսնենք կրօնի մէջ էլ նոյնքան յաջո՞ղ ես :

Աւետիք Տէր Պօղոսեանն է, քովը՝ դա՛րձեալ հայերէնի քննիչը :

— Ո՛չ, կը պատասխանեմ համարձակ, յարմար դիրք չունէի զայն պատրաստելու :

— Ո՞նց թէ : Ասա տեսնենք ինչե՞ր դիտես :

— Լերան քարոզը :

— Բայց դա փոքր բա՞ն չի :

Շարեցի «երանելիներու» շարանը, որուն ծայրը դա՛րձեալ յանդեցաւ 5-ի :

Բախտ ըսածդ ասանկ ըլլալու է : Գարեգին Ծ. Վարդապետը պիտի յաջողէ՞ր զիս կրճատել, թերեւս ո՛չ, բայց կը լացնէր, տարակոյս չունէի : Ատիկա իրեն համար «սկանջ քաշելու» պէս սովորութիւն ըլլալու էր, իր պատըլիկ մարմնոյն հեղինակութիւն տուող ազբիւր մը :

Վերին հրահանգ էր արդարեւ, կրճատել, կրճատել : Սովորական տարիներու մէջ մրցումներէն կը ջոկէին երկու տասնեակ աշակերտ : Մեր այդ ի՛րապէս բացառիկ տարին, արեւմտահայ պատանիներու որբանոցներէն զրկուած բազմութիւնը նկատի առնելով՝ դասարանին թիւը հասաւ 48-ի : Մարմնական ամենաչնչին թերութիւնները նկատի առնուած էին, քննութիւններուն մէջ շատ խիստ ըլլալ անհրաժեշտ չէր, որբանոցներու մէջ կատարուած թերի պատրաստութիւններուն բերմամբ :

Սրբագրութեանց գործողութիւնը պիտի տեւէր երկու օր : Վարչապատի մօտակայքը տեսնելու արժան վայրեր չկան, ծանր բեռ մը մեր ուսերէն նետուած էր՝ յաջող կամ ո՛չ, օրն ի բուն անվերջանալի խաչաձեւումներ տեղի կ'ունենային Ներսիսեան Լիճի եւ նոյնանուն արուեստական Անտառին ու դպրոցի հրապարակին միջեւ, նաեւ Գայիանեան Եկեղեցիի կից գերեզմանաքարերուն բոլորտիքը :

Ես ալ, հաւանական ճախողութեան մը պարագային, յուզում եւ լաց ցոյց չտալու համար հետեւած էի ոմանց, ու մխրճուած անտառին խորքերը, մինչ Հայկակ Քաջունի ընդունուածներուն ցանկին գլուխը անունս կը կարգայ, եւ կը սկսի փնտռուելի :

Ուրեմն, այդ 1917 նշանաւոր տարուան Սեպտեմբերին Ճեմարանի առաջին դասարանը՝ Գիմնազիումներու Գրդին համարժեք, կը կազմուի 24 արեւմտահայ եւ նոյնքան ալ արեւելահայ աշակերտներով, մինչդեռ սովորարար թրքական մասի հայութեանէն տարեկան ընտրովի զրկուածներուն թիւը միջին հաշուով երեք էր :

Անդրանիկին եւ ՀԱՅԱՍՏԱՆԻ բարեկամներու անտեսած չէի ընդունելութիւնս աւետող հեռագիրը տալ :

Հիւրանոց մնալու ուխտաւորի պայմանաժամս շատոնց լրացած էր, ուստի առողջական վիճակս ալ նկատի առնելով, վարդապետը յարմար դատած էր որ առժամեայ կերպով մօտակայ որբանոցը բնա-

կիմ, մինչև քննութիւններուն վերջը, որոնց յաջող արդիւնքէն յետոյ պիտի դառնայի նեմարանակամ՝ դիչեր-ցերեկ :

Այդ ժամանակաւորը տեւեց ամիսէն աւելի, անբաղձալի մանրէններու գրոհին մատնուած . լուութեամբ կը դիմակալէի :

Թոքովեցի յանդիմանական նամակն եղաւ զիս սթափեցնողը :

— Ծօ՛, ինչո՞ւ նամակ չես գրեր, յաջողութիւնդ թոցուց երբեմնի խոնարհութիւնդ : Անփութութիւնդ ծածկելու համար ամէն օր սո՞ւտ պիտի խօսինք Փաշայիմ, որ ամէն բաժանումի պահուն քեզ կը հարցնէ :

Անհրաժեշտ էր այլևս յայտնել ճշմարտութիւնը, թուել ձեմարանէն դուրս բնակելուս անյարմարութիւններէն մէկ-քանին՝ նոր կշտամբանք աչք առնելով :

Շատ սպասել պէտք չեղաւ : Դասարանի դաստիարակը երեք օր յետոյ կը հրաւիրէ միասին ներկայանալ Աշխարհական Տեսուչիմ : Ընդունելութիւնը սիրալիք է, բնագիտութեան քննիչի հանգամանքով ծանօթներ ենք, ան դովեստով կը շեշտէ այդ հանդիպումին յիշատակը :

— Ա՛յ տղայ, այդ լաւ չես արած մեզանից թաքցնելով քո պաշտպանի ինքնութիւնը, մանաւանդ ձեմարանից դուրս բնակութեանդ պարագան, որ մեր ուշադրութիւնից վրիպել է : Ձէ՞ որ դունոյնքան իրաւունք ունես : Հայր Սուրբ բարկացել է քո վրայ :

Այդ առաւօտ ՀԱՅԱՍՏԱՆ թերթի մէջ կարդացեր են «Գէորգեան ձեմարանի տեսչութենէն կը խնդրուի դիչերօթիկ առնել իրենց աչակերտ . . .» : Տեսուչը կը կանչէ գործակիցները, և անոնց կը պատմէ Կիսլավոտսիի մէջ Անդրանիկի հետ ունեցած խօսակցութիւնը :

— Կարծում էի Անդրանիկ ինձ հետ կատակում է : Ոչինչ, դուք շուտով կը զբաղուէք իր տղայով, ահա՛ նամակը, զոր ես արգէն գրել եմ նրան :

Ձեմարանի հարազատ սանին մագերը կը կարծնան, շատ ու բազում ամիսներ երազած տաք բազնիքի ջրերուն մէջ ընդարմացած, միտք ու երազ կը թռչկոտին դէպի հեռաւոր Մննաւրիի լեռները, դէպի Կարին՝ քրոջը ժպիտը հայցելու, Թիֆլիզ՝ ուր հարազատներու նոր հոյլ մը թողած է, Թոքովեցի, Անդրանիկ, մա՛նաւանդ այդ երկուքը :

Այդ առաւօտ ի՞նչ երազներ պատմեց մայրիկս :

Ամէն օր ունէր անոնցմէ, նիւթը այժմ անփոփոխ : Ի գո՛ւր արփոսանք կը փնտռէր՝ զանոնք պատմելով, մանաւանդ իրբեւ ամէնօրեայ թաքուն մեղադրանք՝ զինքը զաւակներէն բաժնող ամուսնուն ուղղուած, թէև ծանօթ՝ ստանալիք նոյն պատասխանին :

— Դրկեցի որ մարդ ըլլայ :

Գէթ միմիայն իր այդ արդար, բարի մարդուն փսփսացող մը ըլլար, իր դժած ուղիէն շեղած չըլլալս, յամառ կամքով խրած այս չնչին յաջողութիւնը՝ թէեւ տուեալ պայմաններուն մէջ արտակարգ, բացառիկ՝ իր ընծայած ժամանակաւոր ապահովութեամբ, իր մէջ՝ վայրով, ուսումնաստենչ եւ հետաքրքիր խառնուածք ունեցող պատաս- նի մը յազեցնող ամէն առաւելութիւններով:

Բոլորովին մեկուսի՞ եմ:

Գաղղիական ժողովրդական առած մը կը ճշդուի. «Միայն լեռ- նե՛րն են որ իրարու չեն հանդիպիր»:

Կը յայտնուի մեր Գարեգիւնը: Մեր մեծ հայրերը՝ երկու եղբոր թոռներ են: Մեր տուները պատկից էին: Ինծմէ վեց ամիս յետոյ աշ- խարհ եկած՝ մեր տոհմի օճախներէն միուն մէջ: Առաջին շաբաթը չլրացած՝ Երզնկայէն Ալէքսանդրապոլի որբանոցները զրկուած: Հոն ձեմարանի քննութիւններուն պատրաստեր են, եւ այդ ընտրեալներէն կարեւոր խումբ մը՝ երկու հսկիչ Էջմիածին բերեր են, տեղւոյն որ- բանոցին հետ 15 օրուան համաձայնութեամբ, եւ արդէն քննութիւն- ներուն մասնակցած:

Զիս նշմարեր է, բայց «հսկիչներու վախէն» չէ կրցած անմե- ջապէս մօտենալ:

Օգտուեր է թուարանութեան գրաւոր քննութեան բեկանումէն յետոյ տիրող խառնաշփոթութենէն: Այդ պարագան եթէ իրեն հա- մար բարեբաաստիկ էր, ինձ համար դժբախտ որոշում մը՝ որ ոչ միայն աւելորդ անձկութեան դուռ կը բանար, այլ կ'երկարաձգէր վանքի չոր տախտակներուն վրայ գիշերելը՝ պարապ ստամբջսով եւ տենդէ տա- ուապելով:

Ուղեց որ միասին մտնենք քննութեան սրահ, ջանանք մօտ-մօ- տի նստիլ, «իրարու օգնել»: Գարեգիւն սիրուն պատանի մըն էր, մայ- րը տարադրուած, հայրը պանդուխտ՝ Ամերիկա, իր Սանդուխտ մօ- րաբրոջ, նոյնպէս տարադիր, տեւական գուրգուրանքին առարկայ, դպրոցին մէջ շատ յաջող: Տերսիմ մէկ տարի չանցած կորսնցուցած էր սակայն մեր լեզուն խօսելու յիշողութիւնը, հովիւ էր աղնիւ քիւրտ ցեղապետի մը մօտ, ու կը մերժէր անկէ բաժնուիլ, երբ իր մեծ հօր, Աղախան՝ Դանիէլ հօրեղբոր, Մարտիրոս եղբոր հետ գացած էինք զինքը մեր կարաւանին խառնելու դէպի Երզնկա՝ ազատարար գօտի ապաստանելու համար:

Դասարանին մէջ ալ կողք-կողքի նստանք: Այլեւս անբաժան:

Դասի մը ատեն, գրատախտակին առջեւ, ուսողութեան ուսու- ցիչ Պահատուր Պահատուրեանցի տուած մէկ խնդիրին համար, մէկ- քանի կ'միմացող դասընկերներ իրենց տեղերը ձամբելէն յետոյ, ու- սուցիչը՝ աչքը իր առջեւի ցանկին վրայ՝ կը դողդողայ:

— Անդրաշեան :

... .. Լուսութիւն : Դա՛րձեալ՝ Անդրաշեան :

Մեր ուսուցիչը քիչ մը թոթով էր, մանաւանդ բարկութեան պահերուն :

Երկուքս ալ ոտքի տնկուեցանք, մերինին մօտիկ անուն մըն էր :

— Մէկն ու մէկդ :

— Դո՛ւն գնա, մշտեց Գարեգին, մինչ ուսուցիչը ցուցամատով նոյն ընտրութիւնը կը շեշտէր :

— Քննութեան առթիւ տուածս հանելուկը լուծեցի՞ր :

— Շուարած իրեն կը նայիմ, լուս : Շարաթներ անցած են, ուրիշ հոգերու մէջ կորսուած միջադէպ մը :

— Տէ՛, ոչինչ : Ապա տեսնենք նաեւ քո՛ շնորհքը : Խնդիրը կրկնեց :

Բերանացի քննութեան ատեն, քննիչ Պահատուրեանց ծալլուած թուղթ մը ձախ ափիս մէջ փակել տուաւ, յանձնարարեց որ առայժմ դայն չբանամ : Ղրկեց մեծկակ զբատասխտակին ձախ ծայրը, անոր մէկ քառորդը կաւիճով անջատեց, հո՛ն պիտի կատարէի իմ հերոսութիւնս : Գրել տուաւ երեք թուանշանով թիւ մը, ըստ իմ կամքիս : Օրինակ՝ 476 : Շրջէ՛ թիւը : Շրջեցի՛ 674 : Փոքրը մեծէն հանէ՛ : 674—476 : 198 : Դա՛րձեալ չրջէ՛ : 891 : Վերջիններուն յաւելումը կատարէ : Կատարեցի : 198+891= 1089 :

— Բա՛ց արա թղթիկդ : Ի՞նչ գրուեր է հոն :

— Նո՛յնը : Գոչեցի զարմանահար :

— Ո՞նց կը լինի : Չեմ պատասխաներ, վախը կը պարուրէ արդէն զիս : Կորսուած եմ, Օ—ի արժանի :

Թելադրեց որ ուրիշ փորձեր եւս կատարեմ, մինչ ինք ուրիշ թեկնածուներ ներս հրաւիրելով՝ անոնցմով կը զբաղուէր : Ոմանք լալով դուրս կը փախչէին, անոնց կսկիծն ու իմ վախս անդամալուծեր են զիս ալ :

— Տէ՛, լաւ, յետոյ կ'իմանաս, ու ներս անցնող ուրիշ տղայ մը կանչելէ յետոյ՝ զիս արձակեց :

Բոլորովին անզգայ էի արդէն, երբ դուրս կ'ելլէի դանդաղ, եւ ճակատագրին անձնատուր քայլերով :

Գէ, հետեւանք չէր ունեցած անոր այդ զուարճութիւնը :

Պարոն Պահատուրեանի հետ առաջին դասի մեր հանդիպումը եղաւ ծայր աստիճան գոհացուցիչ : Ինծմէ՛ աւելի խանդավառ էր ան : Անոր իմ վրայ տածած հաւատքին բերմամբ, ինքզինքս ուսողութեան ընդունակի կարգը դասելով՝ պիտի ընտրէի ապագայ ասպարէզս :



Բայց տակաւին երկար տարիներ ունէի առաջիս, եւ իրօք որ-  
եւէ խանդ չէր յայտնուեր մէջս, անոր տեւականութեան գալով:

Այսուհանդերձ քեմարանակաւ առաջին ամիսը ի՛սկուհակ մեղրա-  
լուանի օրեր եղան. անյազ ստամոքսս կը կշտանար, մանաւանդ միտ-  
քըս: Քնե՛լ անդամ աւելորդ կը գտնէի, երբ ժամերը պարտադիր չըլ-  
լային: Դաստիարակ ուսուցչի կողմէ նշանակուած զբքերուն ընթեր-  
ցումը պիտի չուզէի ընդհատել: Սկսած էի Ղազարոս Աղայեանի հա-  
տորներով, անոնց պիտի հետեւէին Պերմ Պռօշեանի գործերը, ու ա-  
պա, . . . աւելի վերջ կարգը պիտի գար ա՛յնքան երազածս Ռաֆֆիի  
պատմավէպերուն:

Դասամիջոցները՝ աւելորդ: Երկար պարապոյ ժամերուն ըն-  
թացքին ո՛չ մէկ խաղ, պտոյտ կամ խօսակցութիւններ՝ որոնց չէի  
մասնակցեր գրեթէ. չէի մերժեր մի՛միայն Հայկակ Քաջունիի հրա-  
ւէրները, ան օ՛ր մ՛իսկ չէր անցըներ առանց զիս տեսնելու, կը ծանօ-  
թացնէր միջավայրն ու իր ընկերները, կը հրաւիրէր նաեւ իրենց  
փոքր «փախուստներուն» մասնակցիլ, որոնց մէջ էս սորվելիք ունէի  
տարբեր տեսանկիւնէ դիտուած:

Ձեմ հաւատար, սակայն Ս. Էջմիածնայ Գէորգեան Հոգեւոր  
ձեմարանի աշակերտ եմ, ուսմանս վերաբերեալ երբեմնի գծուած  
ուղիներէն բոլորովին ա՛յլ:

Խորհուրդք մարդկան՝ կամք Աստուծոյ:

Հայոց երրորդ կամ, չորրորդ մեծագոյն դպրոցը, ուր եմ, ու-  
նէր աշակերտներ եւ ուսանողներ, այս վերջինները լսարանակաւ ա-  
նունը կրող: Դասարաններուն թիւը ուսուկայերական միջնակարգ  
վարժարաններուն կը համապատասխանէր, սակայն ազգային հնարա-  
մտութեամբ մեր առաջին դասարանը, Գ. դասարան՝ համազօր էր ա-  
նոնց երրորդին կամ չորրորդին, որուն շնորհիւ վերջին դասարաննե-  
րուն մէջ կ՛աւանդուէին բարձրագոյն ուսմանց կարգ մը ճիւղեր,  
յատկապէս պատմա-իմաստասիրական, եւ զանոնք աւարտող լսարա-  
նականին մտաւոր պաշարը կը բաւարարէր մեր «ազգային կարիքնե-  
րուն»:

Վանքապատկան, Հոգեւոր Գերագոյն Խորհուրդի, Ամենայն  
Հայոց Հայրապետի ուղղակի ղեկավարութեան ներքեւ, բայց յատուկ  
տեսչութեամբ, գիշերօթիկ եւ ճրի, կամ թոշակաւոր աշակերտներու  
սահմանուած ձեմարանը, յղացումն էր Գէորգ Գ. Հայրապետին,  
հիմնուած՝ 1874-ին:

Աշակերտութիւնը կ՛ընտրուէր խիստ մրցակցութեամբ՝ տեղ-  
ւոյն վրայ, նաեւ Ազգ. եկեղեցական այլեւայլ թեմերու առաջնորդ-  
ներուն կողմէ, զանազան բարերարներու յանձնարարութեամբ, որով  
վանքին կողմէ տրուելիք նիւթական բաժինը շատ մեծ չէր:

Ինչքան ալ համեստ՝ յետագային ճանչցածս նման հաստատու-  
թիւններուն բաղդատմամբ, Ս. Էջմիածնայ Վանքին պարսպապատ  
չըջանակը իր վեհարանով, մասնաւորաբար դպրոցի շէնքին շքեղու-  
թեամբը եւ անոր յարակից բաժիններով, ինձ համար արտակարգ ե-  
րեւոյթ էր :

Բուն ուսումնարանը՝ երկյարկանի, բազում դասարաններէն  
անջատ, ունէր հարուստ գրադարան, գիտութեան յատուկ անօթնե-  
րու սրահ, երաժշտութեան դործիքներով ճոխ բաժին, մանաւանդ Բ.  
յարկին վրայ՝ կեդրոնը, Մասիսներուն դէմ-դիմաց՝ գեղեցիկ եւ  
մեծկակ սրահ մը՝ ընդունելութեան :

Ճեմարանը բաղկացնող բաժինները, թիւով չորս, կը գտնը-  
ւէին Մայր Տաճարի շրջափակին կից, վանքապատկան ընդարձակ  
դաշտի մը վրայ : Գետնայարկ երեք մասնաբաժիններով միակտուր  
ննջարան մը՝ ամէն յարմարութիւններով օժտուած, խիստ մաքուր,  
հսկայ վառարաններով, հանգստաւէտ մահճակալներով :

Սոհանոց եւ սեղանատուն քով-քովի, ասոնց վերի յարկերուն  
մէջ յատուկ դասարաններ, ուր լսարանականներու համար տեղի  
կ'ունենային մանկավարժական փորձառական դասեր՝ Վաղարշապատ  
գիւղաքաղաքի աշակերտութեան մասնակցութեամբ :

Հանդերձարան եւ լուսցարան : Ճեմարանցիք արտօնուած էին  
դորձածելու վանքին բաղնիքը :

Առաջին ամիսներուն՝ կարգապահութիւնը անթերի էր, ոմանց  
համար խիստ, ամէն կողմ մաքուր, դասերու եւ ժամանակացոյցի  
անթերի կանոնաւորութիւն : Այնքա՛ն շատ էր աշխատանքը : Ոչ մէկ  
պարապոյ ժամ՝ երջանկութիւնս ըմբոշխնելու համա՛ր իսկ :

Այդ հազուադէպ պահերը ես կը վատնէի ձեմարանի անցեա-  
լին փնտռուողը կատարելու մէջ, եւ մօտաւոր ապագայի նորութիւն-  
ներուն նախապէս ծանօթանալու, շնորհիւ անյազ հետաքրքրութիւնս  
գոհացնելու պատրաստակամ՝ նոր համակիրներու, դաստիարակ թէ  
աշակերտ :

Դաստիարակ ուսուցիչներ՝ մասնաւորաբար վարի դասարան-  
ներուն համար : Պաշտօն ունէին ասոնք, հսկելու կարգապահութեան  
եւ հետեւելու մանաւանդ նորեկ աշակերտներու ընթերցումներուն :  
Անոնց շնորհի՛ւ միայն կարելի էր գիրք վերցնել դպրոցի հարուստ  
գրադարանէն :

Օտար լեզուներու դասաւանդութեանց մէջ, նախապատուու-  
թիւնը անշուշտ ռուսերէնին էր, ապա թուրքերէն, թրքահայ աշա-  
կերտներուն համար, որ սակայն կը ջնջուէր մեր օրօք, 1917-ին : Կա-  
րելոր տեղ կը գրաւէր մանաւանդ գերմաներէնը, վերջապէս նաեւ

Ֆրանսերէմը՝ դա՛րձեալ թրքահայ տղոց համար: Գրադարանը կը պարունակէր դրքեր՝ այս լեզուներէն:

Նիւթեղէն սնունդը, 1917 թուի պայմաններուն մէջ կարելի էր բաւարար համարել՝ ո՛չ աւելին: Կուշտ փորով սեղանատունէն դո՛հ հեռանալը կը պատահէր սակայն, երբ ճաշացուցակը կը յայտարարէր Կարմիր կամ սեւ լօպի (լուբիա՝ չոր):

— Տղա՛ք, այսօր լօպի կայ: Տրամադրութիւնները կը բարձրանային:

Այնպէս որ, համազգեստով կամ ո՛չ, «լօպի ուտողները» քաջածանօթ էին Վաղարշապատցիներուն, ասոնց անցըր կամ ներկայութիւնը ցնծութեան կոչերու առիթ էին տեղացի «լամուկներուն» համար:

Սննդառութեան վերաբերեալ մեր բոլոր ղժգոհութիւնները պարունակող կլորիկ, ցցուն, խոշոր որովայն մ՛ունէր դպրոցին համբաւուր կապալառուն, Բակլաչօփը: Իր մեծ ու փոքր շահատակութիւնները յաճախ ըմբոստութեան պատճառներ տուած են, մանաւանդ որդիտաձ պամիայի մը առիթով:

Սա իսկական Հայ էր, նման անո՛նց, որ կը կոչուէին Անդրէասօֆ, Թարասօֆ, Խատիսօֆ, Եսպլըքօֆ, Փիթոէֆ:

Մեր ժամանակ ձեմարանը անունով հոգեւոր էր: Իր հիմնարկութենէն ի վեր՝ 43 տարիներու ընթացքին, այդ հանգամանքը կորսնցնելու համար պարբերաբար բողոքներ, ցոյցեր տեղի ունեցեր էին, ներքին կանոնադրի փոփոխութեան ի խնդիր: Աշակերտութեան բոլոր պահանջները այլեւս դո՛հացում կը դռնէին վարժարանի փակումէն մէկ-երկու ամիս առաջ:

Մաւալուն պայքար մղուած էր կուսակրօնութեան դէմ, պարտադիր աղօթքներուն, եկեղեցի յաճախելուն եւ սպասարկութեան, կրօնական համազգեստին, կրօնական առարկաներու չափազանց թիւով դասաւանդումներուն, կարգ մը ուրիշ արգելքներու դէմ՝ ինչպէս աշակերտական թերթ հրատարակել, ժողովներ դումարել:

Վաղարշապատ անհրապոյր հիւղատունին կից, չորս պատերու ետին, ըստ հիներու նեմարանակամ ներքին կարգապահութիւնը, մեր ժամանակացոյցի ձանձրոյթն ու միապաղաղութիւնը փարատելու կը ծառայէր, մանաւանդ այդ օրերուն, երբ մարդանքը հագի՛ւ մուտք դործած էր Ռուս Կայսրութեան հաստատութիւններուն մէջ, եւ Հայոց համար աւելորդ պերճանք մը:

Չարթնում՝ առաւօտեան ժամը վեց եւ կէսին: Կարճ տեւողութեամբ արդուզարդէ անմիջապէս յետոյ հաւաքական աղօթք: «Հայր Մեր», եւ իւրաքանչիւր օր «Առաւօտ լուսոյ»էն վեց տուն երգեցողութիւն՝ Հայոց այրուբենէն տող մը:

Աղօթքէն յետոյ ժամ մը սերտողութիւն՝ որպէսզի  
Գանձդ ողորմութեան,  
Գանձիդ ծածկելոյ  
Գտող զիս արա :

Ես երբեք, երբե՛ք չկրցայ հասկնալ թէ ի՞նչպէս նման սքանչե-  
լի տողեր հաւաքարար երգելը կրնայ դժգոհութեանց եւ բողոքի ա-  
ռիթ տալ : Նոյնիսկ նախաճաշի, ճաշի եւ ընթրիքի սկիզբին, ըլլա՛յ  
միասնաբար, ըլլա՛յ աշակերտի մը կողմէ «Հայր մեր» արտասանելէ  
վերջ միայն զրոհել սեղաններու վրայ շարուած համեստ պատանե-  
ւը :

Ուստի ինձ համար, պատանի, կարգապահութիւնը ե՛ւ նորու-  
թիւն էր, ե՛ւ հմայիչ : Պարտադրաբար անկողին մտնել երեկոյեան  
ժամը 21-ին, իւրաքանչիւրիս արժանապատուութիւնը ճանչնալ եւ  
յարգել կը նշանակէր : Մութին մէջ, անկողինները հրմշտկելով ու  
աղմուկով որեւէ պահու ննջարան մտնելը ո՞վ կրնայ զերազաս հա-  
մարել :

— Այս բոլոր կաշկանդումներուն դէմ կը բողոքենք : Ո՛վ համա-  
ձայն է, թող ձեռք բարձրացնէ :

Ես բնաւ պիտի չբարձրացնէի, եւ առիթը շուտով եւ շատ ան-  
զամ պիտի ներկայանար, ախո՛ս :

Ննջարանները՝ երեք մասնաբաժին, աղօտ լոյսի մէջ, մաքրու-  
թեան, լուսութեան տաճար մըն էր : Փսիսուքը արդիւրուած, մասնակի  
շարժումները մատներու ծայրերուն վրայ : Տախտակամածը՝ նաւթով  
սրբուած՝ կը պսպար . անոր հօտը չսիրողներ կային, բայց ո՛չ մի-  
ջատները, նա՛եւ փոշին : Անկողինները միօրինակ, մեծիակ, գեղե-  
ցիկ, հանդիստաւէտ : Լսարանականները՝ ննջարանի մը անկիւնը ամ-  
փոփուած, իրաւունք ունէին ըստ կամս մէկուկէս ժամ մնալ իրենց  
դասարաններուն մէջ :

Օրուան մնացեալ ժամերուն՝ սերտողութիւնը ազատ էր : Թէեւ  
մեծամասնութիւնը սովոր էր դասամիջոցներուն, դպրոցի առջին ըն-  
դարձակ պարտէզներու մէջ, ուսուցիչ մը շրջապատած վեր-վար  
ճեմել :

Արեւամուտին, դասերէն վերջ, ամէնօրեայ պոոյտ՝ Ներսի-  
սեան արուեստական Լճին եւ համանուն Անտառին մէջ շրջադայիլ :

Մայր Տաճարի ժամերգութեանց մասնակցութիւնը վարի դա-  
սարաններու աշակերտներո՛ւն պարտականութիւնն էր, հերթով, ե-  
րեք փոխ-քարոզասացներով : Շատ քիչեր կը խուսափէին կիրակնօ-  
րեայ պատարագէն :

Ճեմարանի մէջ երաժշտութիւնը մեծ տեղ զբաւած է, Կամիտա

Վարդապետէն առաջ եւ յետոյ : Կար երգչախումբ , իմ ատենս կ'ուսուցանէր Գրիգոր Սիւնի : Եւ գործիքաւոր նուագախումբ :

Դա՛րձեալ նոյն հարցը : Ինչո՞վ կարելի էր փոխարինել կարգապահութեան այս զանազան պարտադրանքները : Երբ միակ եռուգեւոր , կենդանութիւնը մեր շրջապատին մէջն էր , մեր ներքին կեանքին՝ դասերուն , ընկերներուն , դասախօսներուն հետ : Վաղարշապատի մէջ պարապոյ ժամեր վատնել , կը նշանակէր այգիներէն մէկը միւսէն աւելի համեղ պտուղներ որոնելու ետեւէն իյնալ : Ու աշխարհ ելած ըլլալու խաբկանքը կրել , մէկ-երկու անուանի նկուղներու մէջ «Հայոց գինի» ձնկել , սեխ ու ձմերուկ փարատել : Արբունքի չհասած պատանիի մը դատողութիւննե՞ր , թերե՛ւս :

Պտուղի գողութեան «հաճոյքը» վայելած էի , ստիպեալ : Մուտքի քննութիւններուս ատեն «փորս» լեցնելու , «մալարիա»ս ուսձացնելու ուրիշ միջոց չունէի : Տեղւոյն «գինեատուններուն» ծանօթութիւնս կը պարտիմ , ո՛չ թէ հաճոյքէ մը մղուած , լսարանական երեք պատուական հայրենակիցներուն ընկերանալու հրապոյրէն , այլ հետաքրքրութեանէ ալ մղուած , միշտ վաղուան դասերուս ընկերակցութեամբ , որոնցմէ ձերբազատելու համա՛ր էր որ մերթ ընդ մերթ զիս հրաւիրողները ուսերէս բռնած կը ցնցէին զիս , ախմայ զիս ստիպելու որ ընկերանամ : Պատուական տղերք : Հեռաւոր ազգականս՝ Հայկակ Քաջունիին , անհետացած Մոսկուայի մէջ , բժշկութիւն ուսանելէ վերջ , Վահան Համբարձումեան՝ սերաստացի , Բ. միջազգայնականի մէջ Դաշնակցութեան ապագայ ներկայացուցիչ , եւ Վանեցի Փանոս Փանոսեան՝ դպրոցին մէջ Գրիգորեան անուամբ ծանօթ՝ փարիզի մէջ Հայաստանաւէր կոչուած խմբակին գործակից :

«Հայաստանասէր» կոչում մը , զոր ինչպէս ուրիշ յորջորջումներ , հեթանոսական կամ բարբարոսական պիտի որակէր Կեդրոնականի գրաբարի ուսուցիչս՝ Հայր Արսէն Ղազիկեան :

Մենք , նորեկներս , ո՛չ ժամանակը , եւ ո՛չ ալ առիթը պիտի ունենայինք զարնանային եւ ամառնային արշաւներուն մասնակցելու . անոնց նկարագրութիւնը լսելով պիտի գոհանայինք , յուսալով մեր կարգին այցելել , մեր հայրենեաց պատմական առաջին վայրը՝ Օշական , եւ ա՛յլ մեր հողւոյն մէջ փթթող վայրեր : Կը խօսուէր դպրոցական ներկայացումներու մասին եւս , սակայն հեռաւոր տխուր լուրերով ընկճուած , զանոնք կազմակերպելու սիրտ ունեցողներ չեղան :

Օրացոյցը մեր սակայն՝ ճոխ էր : Ոգեկոչումներ , զանազան հանդիսութիւններ , տօնակատարութիւններ , կրօնական եւ ազգային , որոնց ներկայ կ'ըլլային ձեմարանի աշակերտները՝ վասն ոգեմշակութեան , նաեւ արդարացնելու «հոծ բազմութիւն» :

1917 Հոկտեմբերին հանդիսաւոր պատարագ Խրիմեան Հայրի-

կի մահուան տասնամեակի առիթով, ներկայութեամբ Գեորգ Ե. Կաթողիկոսին, որուն վեհարանէն տաճար առաջնորդուելը տպաւորիչ էր՝ հայրապետին լայնածաւալ մարմնոյն պատճառաւ: Շունչս բռնած, անձկութեամբ կը հետեւիմ այդ շարժումներուն, բարապանքնու ճիգերուն մանաւանդ: Առաջին անգամն էր որ զինքը տեսնելու բախտն ու երջանկութիւնը կ'ունենայի, ու որքա՛ն, ինչքա՛ն պիտի խրախուսիչ ըլլար, որ տառապակոծ հայրապետին վեհութիւնը իմ երբեմնի երեւակայութիւններու համապատասխանէր:

Անգա՛մ մըն ալ պիտի տեսնէի զինքը՝ Ղարապաղի Հայկ. Գունդին ճակատ մեկնելուն առիթով, զայն օրհնելու արարողութեան ատեն: Քանիցս յայտարարուած այս մեկնումը վերջապէս տեղի կ'ունենար հանդիսութեամբ միայն: Գունդին առժամեայ բանակատեղին Վաղարշապատն էր: Մեր դպրոցին առաջակողմը՝ հարաւային ճակատի ընդարձակ տարածութեան վրայ շարուած է գունդը: Տեսարանը իբր հորիզոն ունի զոյգ Մասիաները: Գահին վրայ բազմած, անշարժ հայրապետին աջ թեւը վեր կը բարձրանայ, ու կը սկսի երերալ: Իր ետին շարուած են ձեմարանի աշակերտութիւնն ու ցանցառ հրաւիրեալներ: Հեռուն, ամպերը ստէպ-ստէպ ցոյց կու տան Հայոց սրբազան լեռան գագաթն ու կը ծածկեն: Մեր երազներուն պէս, երբեմն վառ, ու յաճախ մռայլ:

Տխուր ու մռայլ, յուզարկաւորութիւն մը նաեւ, այդ զօրագունդին պատկանող երկու ենթասպաներու: Երեւան-էջմիածին քրտան վերստնոց կառուղիին վրայ դարան մտած մալգեթիստ-աւազակներու կողմէ սպանուած: Հայոց պաշտպանութեան յանձնուած մեր փոքր հողամասին վրայ ճամբաներու ապահովութեան ահաւոր տազնապ: Կողոպուտ եւ սպանութիւններ: Շրջանի դաղթականութեան համար դրամ (փող) փոխադրող պաշտօնէութեան ընկերացող զինուորական տասնեակին մաս կազմողներէն են երկու զոհերը, որոնց մարմինները ուսամբարձ, հսկայ թափօրով, Մայր Տաճարէն պիտի տանէինք պահ տալու, իրենց ծննդավայրէն ու ծնողներէն հեռու, Ս. Գայիանէ Եկեղեցւոյն կից դերեզմանատան մէջ, զինուորական պատիւներով՝ խոր վշտի մէջ:

Թշուա՛ռ հայրենիք, անտէ՛ր ու անզգաստ:

Տակաւին երջանիկ էր կեանքը ձեմարանին մէջ, ուր Հայոց աշխարհին սպառնացող նորանոր տազնապներու շշուկները կը սկսէին ներխուժել: Մեր անմիջական երէկի անստոյգ օրերը մոռնալու ժամանակ իսկ չտրուեցաւ անոնց, որ դժուար քննութիւններէ յետոյ պատսպարան մը դտած ըլլալու երազը կը փայտայէին:

Երազը պատանիին համար արհամարհելի սնունդ մը չէ:

Չքաւորին ո՛յժն է, եթէ այս բառը բան մը չունենալ կը նշա-  
նակէ, եւ ո՛չ թէ ազնիւ ձգտումներու պակաս :

Տարիէ մը ի վեր այդ «բան չունեցող» ի դրութեանս մէջ առաս-  
պելական փոփոխութիւններ կային, անոնք հետզհետէ կը շեշտուէին,  
երբ Ռուս Կայսրութեան նախապատերազմեան սահմաններէն ներս  
ոտք դրած էի, եւ սոյն տարուան Փետրուարեան յեղաշրջումէն յե-  
տոյ, եւ ուր ինքզինքս կը զգայի մարդկային արժանապատուութիւնս  
նկատի առնող միջավայրի մը մէջ, եւ ուր Ռուս յեղափոխութեան  
մեղրալուսնի շրջանին անկաշկանդ պայքարներուն մէջ շոյուած կը  
տեսնէի նաեւ ազգային արժանապատուութիւնս :

Ու երազային էին այս ամառնային ամիսները, երբ ազգու-  
թիւնները, ազատութիւն շեփորող կարգախօսներով, տէրը ըլլալ կը  
կարծէին իրենց ճակատագրին, առ այդ կը ձգտէին բացայայտօրէն,  
կոչերով, կրքոտ, անհող, կարծես Ձարը ո՛ւր որ է, ե՛րբեւիցէ, բոլո-  
րովին անհետացած ըլլար :

Իսկ ի՞նչ տեղի կ'ունենար այժմ Ս. Էջմիածնայ պարիսպներուն ե-  
տին: Կ'ապրէինք անուն եւ կոչում չունեցող հայկական հանրապե-  
տութեան մը մէջ :

Նման խաղեր քանիցս կրկնած ենք պատանիներս Հագարիի  
մէջ, մեր պարտէզներուն եւ բուրաստաններուն մէջ, շար աչքերէ հե-  
ռու, անոնցմով աւիւն ստացեր էին երբեմն մեր հոգիները, եւ ապա  
փուլ եկած :

Աւելի ընդարձակ գետնի վրայ, իսկական գէնքերով, համազ-  
գեստով, սուր եւ խաչ կրող առաջնորդներով, երկու Մասիսներուն  
առջեւ շարուած այս բանակին տողանցքը նոյնպիսի խա՞ղ մըն էր մի-  
թէ, մօտաւոր վաղուան մը կեանքով :

Նոյնիսկ այս հանդիսաւոր եւ տխուր զինուորական յուզարկա-  
ւորութիւնը :

Շարքերը ցրուած, դերեզմանատան քարերուն մէջէն ազատ  
վերադարձի պահն է : Զոհերուն՝ անոնց մայրերուն ցաւը ողբացող-  
ներուն մէջն եմ : Գովասանական խօսքեր՝ օտար, բռնակալ ոյժին վե-  
րադարձը մաղթողներ կան :

— Հայը՝ Հայո՞ւն : Ի՞նչպէս չմեղքցան ջահէլ-ջիվաններուն :

— Թող Աստուած Ռուսը անպակաս ընէ մեր գլխէն : Իրար չու-  
տենք :

Դասարանին մէջ ինքզինքս մի՞նակ կը գտնեմ : Միս-մի՞նակ  
քառասունը ութ հոգինոց նստարաններուն մէջ : Ձայրոյթս կը փոխա-  
րինէ անօրինակ տխրութիւն մը :

1917 թուի ձեմարանի Գ. դասարանը, որուն ուսումնական  
մակարդակը կը համապատասխանէր օտար միջնակարգ վարժարան-

ներու, օրինակ գաղղիականի Դ. դասարանին, կը բաղկանար 48 աշակերտներէ: Երբեք այդքան թուով դասարան չէր ունեցած ձեմարանը: Արարատեան Դաշտ ապաստանած Թրքահայոց հոծ բազմութեան եւ որբութեան կը վերադարձի այս բացառիկ կարգադրութիւնը: Իսկ թէ ինչո՞ւ 2A աշակերտ Թրքահայ էին եւ 2A հատը Կովկասահայ, այդ կէտը մեզի համար անյայտ կը մնայ: Անչուշտ անտեղի պայքարի բոյն զնոյդ երեւոյթ մը, որ յայտնաբերուեցաւ առաջին օրերուն, նաեւ դասարանապետի ընտրութեան ատեն: Ընտրուեցաւ վերջապէս Արեւմտահայ Աղբ. Սորհուրդի կողմէ զրկուած սանը, Արտաշէս Գարսաէֆէրեան՝ վանեցի ծնողքէ:

Դասարանը ունէր իր մասնաւոր դաստիարակ-ուսուցիչը: Դասերը սկսած էին ստանալ կանոնաւոր ընթացք: Հոկտեմբերի նոր յեղաշրջումին ակիբները չուշացան մեր պատուհաններուն ապակիները ծեծել:

Օրընդմէջ զիս ցնցող ջերմը, մեր գիւղական յորջորջումով՝ դռնս; նոր անուանակոչութեամբ մալարիաս, սկսած էր մեղմանալ: Ես անոր բոլոր խաղերուն ծանօթ էի վաղուց, այնքան ընտելացած էի իրեն: Նոյեմբերեան անձրեւներն ու ցուրտը նոր փորձանք մը ի յայտ բերին, որ եթէ բոլորովին անծանօթ չէր, բայց իր ուժգնութեամբ ե՛ւ տառապալից էր, ե՛ւ հասնող ամէն երեկոներու մղձաւանջս:

Հազի՛ւ անկողին մտած, սուս-փուսը համատարած, ոտքիս մըր-սուքին կը յաջորդէր անդիմադրելի քերուրտուքը:

Ի՞նչ ընել, Աստուա՛ծ իմ: Գիւղը կը բաւէր հինգ վայրկեան բուրդի ոտքերով մեր տանիքին ձիւնին մէջ վազվառել, որմէ յետոյ շատ չանցած՝ անուշ քունը կու գար օրօրելու զիս, մայրիկիս աչքերը վըրաս:

Ի դուր կը փորձեմ ոգեկոչել այդ օրերը, օգնութեան կանչել աննման մայրիկս իր անհատնում աղօթքներով: Քունս կը յամռուէր, քերուրտուքս հետզհետէ կը սաստկանար, կը տանէր խելայեղութեան:

Միակ, բայց արդիւեալ միջոցն էր տաքով, կրակով խարկել ոտքերս ու անոր մատները: Ինչպէ՞ս: Յաւը զիս առաջնորդեց գաղտագողի դէպի յախճապակիի կտորներով պատուած հաստափոր վառարանը: Երկու ննջարաններու պատին մէջ հաստատուած, տախտակամածէն ան կը բարձրանար մինչեւ առաստաղ, ու հոն կը կորսուէր դէպի վեր:

Կարգապահութեան դէմ միակ ըմբոստութիւնս եղաւ, անկողինէս՝ շարժուն մահճակալէս փախչիլ, ոտքերս փոխնիփոխ շփելու կրակոտ յախճապակիներուն, մինչեւ որ անոնք ստանային նոյն ջերմութեան աստիճանը, ու վերադառնալ անկողին: Չար բախ-



տէս վառարանին հսկայ դռնակը, որ երբ բացուէր ոտքերս կրնար ընդունիլ իր թոնիրին մէջ՝ կը գտնուէր միւս ննջարանը: Ամէն օր քիչ մը աւելի յանդուգն, այս ամէնօրեայ տառապալից փորձերս վերջապէս տարին միւս սենեակը, մինչեւ որ դիշեր մը լսարանականներու ժամէն բաւական վերջ, հսկիչ մը, չես գիտեր ուրկէ՛ բուսաւ գլխուս, սկսաւ սաստել:

Սաստը հետզհետէ սկսաւ մարմրիլ, փսփսուքի մէջ յայտնի եղաւ որ հսկիչը բախտակից մըն էր, կը հասկնար ցաւս, կ'արտօնէր հանապազօրեայ գիշերային մարզանքս, ու կը խոստանար ի հարկին պաշտպան կանգնիլ:

Հին աշակերտութիւնը, մեծամասնութեամբ կովկասէն, իրենց վագանցի օրերը կ'անցընեն սեփական տան կամ ծննդավայրի մէջ: Հոն ֆէտրուարէն յետոյ տեղի ունեցած դէպքերը, որոնց շուկները հասած էին իրենց, ձեմարանի մէջ, ա'լ աւելի պատկերալից կերպարանքով եւ մեկնաբանութիւններով կը ներկայանային: Տակաւին յեղափոխութեան մը մեղրալուսնի շրջանն էր, ամէն ինչ կարելի, հնարաւոր, ներելի եւ յուսալի: Նոյնիսկ Հայոց աշխարհի գիւղական միջավայրի մէջ, թերահաւատ եւ լուռ ծերունիներու շուքին մէջ ծիւրեր արձակած էին այդ դէպքերը իրենց պատանի հոգիներուն մէջ:

Այդ 1917 տարուան դպրոցական մուտքը, պարզ դադարէ մը յետոյ, դասընկերներ վերագտնելու ջերմ փափաքէն տարբեր քաջողութիւն մ'եւս ունէր: Ինչե՛ր տեսած էին անոնք եւ իրենց ուսուցիչները: Մօտաւոր ապագայի նկատմամբ մեկնաբանութիւններու, կարծիքներու փոխանակութեան, ի հարկին նոր կարգերու իրենց մասնակցութիւնը բերելու կարօտն ունէին:

Յնցուած էին իրենց միտքն ու հոգին, անոր արձագանգները փնտռելու եկած էին, կը սպասէին քաջալերութեան եւ հրահանգի, անհամբերութիւնը կը կրծէր իրենց էութիւնը, յեղափոխութեան կ'ուզէին տանիլ իրենց բաժինը, ու անկէ ստանալ իրենց վարձքը:

Յետ միջօրէի դասերը հազի'ւ վերջ կը գտնէին, Արարատեան Դաշտի հովուն հետ ներս սկսան խուժել մարդկային բացականչութիւններու ալիքներ, նոյեմբերեան օր մը, երբ դասարանը հազիւ կրցած էր դուրս ճողոպրիլ, դժգոհ, թթու:

Դասարանին ճիշդ կեդրոնը, հիւսիսային բակին վրայ բացուող պատուհանին առջեւ է գրասեղանս, զոր կը բաժնեմ Գարեգիմիմ հետ: Սովորաբար դասադիրք եւ դասատուէն խլուած բացատրութիւններու տետրակս դասաւորելու վրայ եմ, գոհ եմ տրուած դասէն, այսինքն երջանիկ, նոր բաներ լսած ըլլալուս ու անոր քաղցրութեան մէջ ինքնամոռաց:

Կէսէն աւելի, ընկերներս դուրս թռած են արդէն, երբ դասա-

բանապետը բաց դռնէն կը յայտարարէ բարձրանալ երկրորդ յարկի մեծ սրահը, եւ մասնակցիլ տեղի ունեցող «միթիւնկ»ին :

Ժողով կայ : Դաստիարակ, ուսուցիչ, հսկիչ չքացեր են, մէկէն :

Ճեմարանի աշակերտութեան «Յեղափոխական Կոմիտէն» կը հրաւիրէ լսելու տնօրէնութեան ներկայացուելիք մեր պահանջները :

Այդ տարուան գարունն ու ամառը, Թիֆլիզի մէջ, ամէն քայլափոխի հանդիպած էի ցոյցերու, երեկոները դպրոցներու սրահներուն մէջ, լոյսերով ողողուած, լսած էի ճառերու փշրանքներ, բայց եւ այնպէս ապշեցուցիչ էր դպրոցական այս անակնկալ «միթիւնկ»ին կանչը :

Միշտ հետաքրքիր շուրջս կատարուող դէպքերուն, մռայլ մտածումներով սակայն վեր կը բարձրանամ, ու արդէն իսկ լեցուած սրահին ետեւի շարքերուն մէջն եմ : Հեռուն, մեծկակ, կլոր պատըշգամի պատուհաններուն առջեւ, բեմէն, զիրար կը հրմշտկեն ու կը ճառեն ինծի տակաւին բոլորովին անծանօթ տղաք :

Բեմէն անցնողներուն մէջ զիրար հակասող չկար, ո՛չ մէկ տարբեր կարծիք կամ տեսակէտ : Սրահին մէկ մասը լուռ, մնացեալը աղմկարար : Անյապաղ ընդունուելիք եւ գործադրութեան դրուելիք պահանջները ծափահարութիւններով ոյժ եւ օրինականութիւն ստացած, նոյն երեկոյ կը ներկայացուէին Ս. Էմիլիանայ Ս. Սիմոնի Խորհուրդին, աշակերտական Յեղափոխական Խորհուրդի անդամներուն կողմէ, որոնց թիւն ու անձերը ընտրուած էին չես գիտեր ի՛նչպէս :

Պայքարի եւ յաղթանակի առաջնորդող միջոց՝ դասադուլ :

Շատ սպասել պէտք չեղաւ : Փոթորկոտ եւ աղմկալի օրուան ու դիչերուան յաջորդ առաւօտեան, առանց հաւաքական աղօթքի, նախաճաշէն յետոյ, հազի՛ւ սերտողութիւնը սկսած էր, դասարանապետը բացակայ :

Աչքերնիս գրքերուն վրայ չէ : Պատերուն, դռներուն, պատուհաններուն եւ մէկզմէկու վրայ : Կը սպասենք դասը սկսելու զանգակին :

Դասարանապետն է առաջին մուտք գործողը :

— Կոմիտէի որոշումով դասադուլ հռչակուած է, կը հրաւիրուինք գումարուելիք ժողովին :

Միջանցքին մէջ կը նշմարենք դասադուլի առաջին գոհը, ուսողութեան դասատուն՝ Պահատրեանցը, որ գլուխն օրօրելով պատէպատ կ'անցնի, դուրս խուժող աշակերտներուն ճամբայ կու տայ :

Մեր «Յեղկոմ»ը չէր ընդունուած ո՛չ հայրապետէն, եւ ո՛չ իսկ տեսչութեան կողմէ : Նոր ժողովը յայտարարեց որ դիմումը կըրկ-

նուած է, եւ կը յանձնարարէ առժամաբար դասարան ներկայանալ:

Պ. Պահատրեանց, պայուսակը ձեռքէն կախ, համբերութեամբ կը շարունակէր ձեմել միջանցքի երկայնութեամբ: Քառասունըութ տղոց անկանոն մուտքը վերջ չունի: Ուսուցիչը կը գրաւէ իր տեղը, ու աչքերը դրան, ոտքի, կը սպասէ վերջին աշակերտին: Վերջապէս, փակուած դուռը այլեւս բացող չկայ, լռութիւնը կը տիրէ թէեւ, բայց մեր պատուական դասատուն կորսնցուցած է իր ճարտասանութիւնը, Ս եւ Շ հնչիւնները սովորականէն աւելի շփոթ են, առատ լորձունք պարունակող, մինչեւ որ վերջապէս իր ելքը կը խեղդուի գոռում-գոռումներու մէջ, իր շփոթութիւնները շեշտելու ձիգ կ'ընէ, չի համարձակիր դժգոհութիւն յայտնել, ինչ որ ակնբերել էր:

Այսպէս, օրեր կ'անցնին ամուլ, ներս, դուրս, բակերուն մէջ անվերջանալի դեղերումներով, ու անոնց յաջորդող գիշերները «ոտքի քերուղտութեամբ» տառապանքներով, որոնց ամէնօրեայ դարմանումս ալ խանդարուած է անկարգ-անկանոն, անժամանակ անկողին մտնողներուն պատճառաւ, հաստիկէ վառարանին հետ մտերմութիւնս խանդարուած:

Ժողով, ուլքիմաքում (վերջնագիր), իրարու կը յաջորդեն, ամէն անգամ պահանջներու ցանկը կ'ուռճանայ: Մերթ ընդ մերթ յանկարծուտ դասադուլ, առանց այդ ալ դասերուն համբ փախած է:

Աշոտ Յովհաննիսեան ինքզինք կը յայտնէ դասարանի մուտքին, սեւ մագերով, բարձրահասակ, հրաւէր է լռել եւ ոտքի, երկիւղած սպասել մինչեւ դասախօսին իր տեղը գրաւելն ու նստելու ցուցմունք տալը: Դասը կ'անցնի սովորականէն նուազ ուշադիր, ելքի պահը մօտ է, քովի դասարանէն եկող աղմուկը, բոլորովին անսովոր, մեզ ալ կը պղտորէ:

Աշոտ Յովհաննիսեան կը պատրաստուի դասարանը թողուլ, դրան հասած չէ տակաւին, մեր կողմը, աղմուկը, գրասեղաններու կափարիչներուն կափ-կափերը, ոտնաձայները, խօսակցութիւնները, բոլորովին անժամանակ ու անսովոր, կը խռովեն մեր երիտասարդ գերյառաջդիմական փրօֆէսօրը, ու ահա ան, ետ կը դառնայ, կը բարձրանայ ամպիոն, ու ստեփանոսեան ձայնով կը գոռայ՝ «Ես ձեզ ցոյց կը տամ, անպիտաններ»», ու դուրս կը սուրայ, աչքերուն վրայ թափուած սեւ-սեւ երկար մարգերը աւելի արագօրէն վեր շարտող շարժումներով:

Դասարանը քար կտրած է: Քովնտի սրահներէն կը խոնուին մեր դրան մուտքին՝ եղելութեան տեղեկանալու:

Հակառակ զրոյցներուն, մեր գերմաներէնի ուսուցիչը, հակառակ իր առաջաւոր յեղափոխականի գաղափարներուն, Հովտեմբերեան նոր յեղաշրջումը կատարող իր ընկերներուն յաջողութեան, նը-

ման ըմբոստութիւն մը հրահրողը չէր կրնար ըլլալ, իրեն ըմբռնումով աւելի մեծ տալամ մը կը հիւսուէր մեզմէ հեռու՝ սակայն մեզի համար ճակատագրական: Այսուհանդերձ ան եղաւ մեր դասարանին վերջին դասախօսը, քանզի աշակերտական շարժումը հետզհետէ պիտի ստանար ծայրայեղ հանգամանք՝ յանգելու համար տխուր վախճանի մը, Ճեմարանի փակման, ինչ որ թերեւս Հոգեւոր Խորհուրդի առաջաւոր ցանկութիւնն էր:

Շարաթներով ազատ դասախօսութիւններու շարք մը, գրօսավայրին մէջ, Ներսիսեան Լճին եզերքը, երբ ըստ կամս, եւ խառնիխուռն, ըստ նախասիրութեան, աշակերտները կը շրջապատէին իրենց ներկայութիւնը ցուցադրող ուսուցիչներ, խօսակցութեանց միակ նիւթ ունենալով օրուան դէպքերը եւ ապագայի մասին գուշակութիւններ:

Ամենէն ցանցառ շրջապատուածն էր ապագայ Ակադեմիկոս Ա. Յովհաննիսեանը, մասնագիտութեամբ պատմաբան, պօլշեւիկ հատուածին իբր անդամ ծանօթ: Անոր շուրջ հրմշտուկ ուրեմն անհրաժեշտ չէր: Հոն էի յաճախ: Իր ընկերային տեսութիւնները, ըսինք, որեւէ նման տեսութիւններ, ինծի անծանօթ էին, նորութիւններ, մասնաւորաբար Ռուս Յեղափոխութեան մասին իր խորհրդածութիւնները, երբեմնի, այսինքն վեց ամիս առաջ լսած Թիֆլիզի Երեւանեան Հրատարակիչ ճոռոմարանութիւններէն բոլորովին տարբեր: Տակաւին Նոյեմբերի կէսին, 1917, ան կը գտնէր թէ մեծամասնական (պօլշեւիկ) շարժումը և ղեկավարութիւնը, մինչեւ զանգուածներուն որոշ դաստիարակութեան մը հասնիլը, անպայման պարտաւոր էր մերթ ընդ մերթ կոթնիլ գործաւորական եւ զիւլացի բանուորութեան, եթէ մին կամ միւսը ներկայացնեն անմիջական պահանջներ՝ տակաւին անիրագործելի, բայց կը հաւատար պօլշեւիկ յաղթանակին, եւ կը ջանար իր ունկնդիրները հաւաստիացնել: Իր այդ պտոյտ-գասերուն ատեն, հակառակ կճող հարցումներու, մեր ուսուցիչը վերջին աստիճան համբերատար էր, ընկերական, մտերիմ, ուստի դասարանին մէջ իր ելոյթը միտքս տանջող հանելուկներէն մէկն եղաւ:

1917-ին Դաշնակցութիւնը ունէր առաջնորդող դեր, եւ Ճեմարանի մթնոլորտը նոյնպէս դաշնակցական էր, ուստի մեր «Յեղկոմի» ղեկավարութիւնը նոյնպէս:

Այդ «Յեղկոմ»ի պահանջները կը խտանային ուսանողութեան մասնակցութեան սկզբունքին շուրջ, իբր հասուն տարր: Դուրս ձգուած էին կրօնական հարցերը:

Մինչեւ յատուկ յանձնաժողովի մը կողմէ, մեր մասնակցութեամբ, դպրոցը հիմնովին վերակազմելու գործին աւարտիլը, աշա-

կերտութեան ներկայացուցիչները պէտք էր մասնակցէին կրթական, կարգապահական եւ մատակարարութեան յանձնախումբերու նիստերուն՝ վճռական ձայնով: Մեր պահանջներուն մաս կը կազմէին հետեւարար՝ քննել վանքին բոլոր պահեստները, մասնակցելու տնտեսութիւնը, դպրոցի փակուելուն շուրջ շուկաներուն անտեղի բլլալը փաստելու դիտաւորութեամբ:

Այլանդակ, անհաւատալի զրոյցներ մատակարարութեան վերաբերմամբ: Սուտն ու իրաւը ճշդել ժամանակի կարօտ, թերեւս անհնար: Տարեկան եկամուտը երեք ամսուան մէջ հալեր էր կ'ըսէին, դրամին օրէ օր անկումին հետեւանք: Մնունդի պաշարներուն հալչի՞ր: Կը մնար բացատրութեան կարօտ: Աշակերտական հետախոյզները պարապ գտած էին ալիւրին շտեմարանը, եւ անոնց խելքին շատ աւելի հասանելի էր անշուշտ աստղագիտութիւնը քան տնտեսութիւնը:

Ըմբոստութեան շօշափելի արդիւնքներն եղան դասերուն ընդհատումներն ու դադարը, հակիչներուն անէացումը՝ արժանապատուութիւն վիրաւորող պարագաները: Դադրեցան աղօթքներն ու կըրօնական արարողութեանց մասնակցելու պարտադրանքները: Քնանալու պարտադիր ժամին ջնջուիլը, բայց ո՛չ ճաշելու ժամանակացոյցը:

Ո՛չ «Հայր մեր», ո՛չ «Առաւօտ լուսոյ», ո՛չ փոխասացութիւն: Թէեւ այս վերջնոյն համար կամաւորներ անպակաս էին, յատկապէս մեր դասարանէն:

Բացի ճաշերէն, աշակերտութիւնը այլեւս որեւէ կախում չուներ ձեմարանի տնօրէնութեանէն:

Ննջարան երբ մտնէի, դիւրին չէր իրարու յար եւ նման մահճակալներուն մէջէն իմինս ճանչնալ. փնտուել հարկ էր, ու տեղը վերադարձնել:

— Տեսայ մահճակալը: Ս. Հռիփսիմէի պատերուն առջեւ քեզ կը սպասէ, Երեւան մեկնող ճամբորդներով:

— Վաղարշապատի կայարանին ճամբան բռնեց, վազէ՛, կը հասնիս:

Ու այսպէս, նաֆթուած, երբեմնի փայլուն տախտակամածին վրայ, հազիւ ճկոյթի մը ճնշումին պէտք ունէին, ու մեր քառանիւ մահճակալները կը համբուրուէին ճշալով, վէրքերով լի:

Ձաշարան մուտքը, Բիւզանդիոնը նուաճող Խաչակիրներուն նախանձը կրնար շարժել: Առաջին օրերը մէկ-երրորդը կրնար կուշտ փորով դուրս ելլել, անշուշտ միեւնոյնները: Պատկերը պիտի փոխուէր, տեղի տալով ինքնապաշտպանութեան բնագրին եւ իրերօդնութեան սկզբունքին: Առաջին մտնողները կը հաւաքէին հացի կը-

տորներ, ինչքան որ հրմշտուքը թոյլ տար, ու կը բաժնէին անճարակներուն :

Շարաթական բաղնիքները վարդավառի օրեր դարձան, մինչեւ սառնորակ ջրերու յայտնաբերումը :

«Սեւազգեստ»ներուն բարեւելը «Յեղկոմի» պատգամներուն դէմ «փրօվոքացիա» կը սեպուէր : Բարեմիտ, անմեղ տղեկ մը դատի քաշուեցաւ, վարդապետ մը չափէն աւելի խանդաղատանքով բարեւած ըլլալուն համար : Անպարտ վճիռ ստացաւ անո՛ր համար, որ բարեւը տրուած չէր վեղարաւորին, այլ իրեն հանդէպ առիթով մը հոգածութիւն ցոյց տուող մարդուն : Մալարիայով հիւանդ օրերուն, վանքի չոր տախտակներուն վրայ պառկած ատեն, իրեն այցելող ուխտաւորներ հիւրընկալելու պաշտօն ունեցող անձին, որ ամէն առաւօտ ներս կը մտնէր դաւաթ մը թէյ եւ չոր «պաքսիմաթով» մը : Այս տրամաբանական տեսակէտը պիտի չյաղթանակէր սակայն, առանց երկու հեղինակաւոր լսարանականներու միջամտութեան՝ Հայկակ Գալուսի եւ Վահան Համբարձումեան :

Դուրսը, աշխարհային կեանքը նուազ փոթորկոտ չէ, պատանեկութեան անհոգութիւնն իսկ ցնցող լուրերով : Ներքին կեանքը դարձած է անհամ : Զանձրոյթ, յուսալքութիւն, դասերը վերսկսելու լուրին փոխարէն վարժարանը փակելու հաւանականութիւն : Մեր ամէնօրեայ խանդավառ հաւաքոյթներուն թափը կտորած է, ժողովները կը յետաձգուին, մեր «Յեղափոխականները» ոչինչ ունին յայտնելիք, եթէ ո՛չ «Ալիւր չկայ» :

Յոռետես լուրեր ռազմաճակատէն, արդէն քայքայուած, ուրկէ ուսս զինուորները «դէպի տուն» պոռալով լքեր են դիրք, նոյնիսկ զէնքերնին :

Դուրսը՝ «Տամոյ = դէպի տուն» :

Ճեմարանցիին ահազանգն է՝ «Ալիւր չկայ = դէպի տուն» :

Համատարած «Տամոյ» : Երանի անո՛նց որ տուն ունին :

Աշակերտաց անխորհուրդ ելոյթներուն կը յաջորդէ Հոգեւոր Խորհուրդի ձեմարանը փակելու նոյնքան անխորհուրդ որոշումը : Մենք չէինք կուսած «լօսլի»ի եւ «ալիւրի» պակասը, Հոգեւոր Խորհուրդը, իր կարգին, չէր սպասեր որ շուտով դպրոցը եւ իր յարակից պարապ չէնքերը պիտի դառնային «տուն վազող» զինուորութեան կայան, ոտքի կոխան, աւերածութեան առարկայ :

Ննջարանները ակնթարթի մը մէջ լեցուեցան, «Տուն» չունեցող աշակերտները, վախն ի վախ, ինքզինքնին անկիւն մը հաւաքեցին՝ մաճակալնին իրարու կպած : Դասարաններուն տախտակամածներուն վրայ եւս ոտք կոխելիք տեղ չկար, յարդի դէգերուն վրայ խառնիխուռն զինուորներ : Ուրկէ՞ դտան այդքան յարդ : Թէ ինչպէ՞ս

կը սնանէին, հանելուկ մը: Կրցա՞ն ալիւր դտնել: Վանքի շրջապատին մէջ կը մտնէին գիրկ-գիրկ հացերով, ուրիշներ գինիի շիշեր, «չինելի» (գինուորական վերարկու) գրպանները ուռած:

Դպրոցի դռներէն, պատուհաններէն, ծուխի քուլաներ փախուտ կու տային, կարծես ներսը հրդեհ ըլլար: Ուրկէ՞ կը ճարէին այդքան առատօրէն իրենց բարիբոսները, երբ առասպելական դըրուակներու գրոյցը կ'ըլլար ծխախոտի պակասութեան հետեւանքով գինուորներու շահատակութիւններու մասին:

Բոլորովին լքուած, մնացողներս ապահով չէինք զգար ինք-գինքնիս. ո՞ւր երթալ, եւ ի՞նչ միջոցներով: Միակ անձը, զոր կը նշմարէինք ատեն-ատեն, մեր դասախօսներէն Պահատուր Պահատըրեանցն էր: Կու դար աչք մը նետելու դպրոցի շէնքին, ներս կը մտնէր ծուխին ու մուխին մէջ, գինով, հոս-հոն ընկողմանած գինուորներուն մէջէն կ'անցնէր՝ անոնց նետած յարգերուն մէջ տակաւին կայծկըլտող բարբրոսները մարելու: Յատկապէս խոցելի էին դրադարանն ու ընթերցարանը, բնագիտութեան փորձարանը՝ թանկարժէք պարունակութեամբ:

Երեւանի Համալսարանին մաթէմատիքայի եւ Ֆիզիքայի ապագայ ուսուցչապետը հո՛ն կ'այցելէր, երեկոյեան ուշ պահերո՛ւն մանաւանդ, կը ջանար մեզ դտնել, այցելել բոլոր սրահները՝ իբր հրշէջ: Անտարակոյս ան շարունակեց մեր մեկնելէն վերջն ալ, ու չեմ տարակուսիր որ, այդ ազգասէր եւ խղճամիտ ուսուցչին կեցուածքը օրհնութիւն մը եղաւ դպրոցի շէնքին համար: Եթէ անգամ մը, գրադարանին մէջ ծագած հրդեհը աւելի աղիտաբեր չեղաւ, կամ ուրիշներ կանխուեցան, անոր հոգածութենէն մեծ բաժին կայ: Քանզի մեղադրելի չէին, այդ փոթորկոտ օրերուն, կրօնաւորները, անոնց միջամտութիւնը ազդեցիկ չըլլալէ բացի, փնասաբեր էր, եւ իրենց համար խիստ վտանգաւոր:

Առաւօտ մը, քանի մը ընկերներով կը բռնենք էջմիածին կայարանին ճամբան:

Կարճ ճամբան ուղիղ գիծն է: Մեզմէ առաջ նոյն ճամարտութեան երկրպագուները ճեղք մը բացեր են արդէն, փլիված, վանքապատկան պարիսպին մէջ: Անոր փլատակներէն կը ցատկուտենք մէնք եւս՝ առջեւնիս բացուող անապատը: Կոխկոտուքէ ցածցած լայնկեկ ախօսին մէջ անիւի հետքեր եւս, ձիւնախառն ջրով լեցուն՝ տեղ-տեղ լճակներ: Դաշտ մը անծայրածիր, անապատի վերածուած մեր հոգիներուն նման, այլազան հետքերով անպակաս:

Ընկեր մը կանգ կ'առնէ, կը ձգնի գետնէն բան մը քաշել: Կօչիկն է: Կ'անդրադառնամ խեղճ ու կրակ ոտնամաններուս, անոր կա-

պերը ամբացնել կը փորձեմ, ու Գարեգիմին կը թեւագրեմ նոյնը ընել:

Եզերքէն քալելու ատեն, երկիրը ոտքերուդ կը կպչի, ցեխի բեռներ ներբաններուն եւ կօշիկին կողերուն, մինչ ճանապարհ կոչուածին մէջ ան ամբողջովին կ'անհետի: Անկարելի պիտի ըլլար կամաւոր դացողի այս առաջին փորձութեան ալ միս-մինակ դիմագրաւել, առանց մէկզմէկ խրախուսելու:

Քարակոյտի մը վրայ կը ցատկեմ, ոտքերս թեթեւցնելու: Կ'երգեմ:

«Մենք անկեղծ գինուոր ինք՝ «ահաւոր վիճակ»: Ամէնքը ինծի կը նային ապշած: Ի՞նչ ալ կատակելու առիթ է:

Ահա հեռուն ծառեր, որոնց պէտք է հասնիլ ամէն գնով:

Ձեռքս շարունակ ծոցիս ուղղութիւնը կ'առնէ, հոն փնտռելու՝ թէ տաքութիւն, այլ թղթի ա'յն կտորը, զոր ձեմարանի տնօրէնութիւնը տուեր է իբր վերադարձի իրաւունք, դպրոցի վերաբացման պարագային:

Ի՞նչ բանի պիտի չհաւատայի այդ օրերուն, երբ երազները աւելի երկար կեանք կ'ունենան, քան Գէորգեան ձեմարանի եւ Ս. Էջմիածնայ մէջ անցուցած վեց ամիսներուս տուայտանքները, յոյզերով եւ յոյսերով արեկոծ:

Յամեցող, միօրինակ քայլափոխերէն, միտքս արդէն կտրած է Արարատները ծածկող թանձր մառախուղը, կ'անցնի անտեսանելի հորիզոնէն անդին, քրոջս մօտ, ու ա'ն է որ ինձ կը ներշնչէ պայքարելու նոր կտրով մը, ցեխին, ցուրտին, հովին դէմ, կը մարէ ու կը փարատէ յուսահատութիւնս՝ դիմագրաւելու համար ձիւն-ձմբան իմ կտրելիք աւելի երկար, աւելի դժնդակ ճամբաներու փորձութիւնները եւ վտանգները այլազան:

Պահ մը իրաւունք տալ կը գիջիմ Հայկակ Քաջունիին:

— Լաւ կը լինի որ դու մի քիչ սպասես, իսկ մենք ժամ առաջ մեկնինք, փակաւ հասնելու միջոցներուն փնտռուութիւն համար:

1917 Դեկտեմբերի վերջին օրերն են, դպրոցը փակելու որոշումը յայտարարուած է, ցնոր տնօրինութիւն: Վերի կարգերէն ըսկտեալ, իւրաքանչիւր աշակերտի կը տրուի մասնաւոր «անցագիր», հաւանական վերաբացումի ատեն կրկին ներկայանալու:

«Դէպի տուն» կարգախօսը մեզի համար հեղնանք է, խոցելի: Ո՞ր տունը:

Մեզ հրաւիրող չկայ: Պէտք է լսել անպաշտպան մնացած Հայրենեաց ձայնը: Ինկած ենք այդ մեծ ճանապարհին վրայ: Ընդհանուր ժամադրաւայրն է Լեւինակաւ (Ալէքսանտրապօլը նոր օրերու), երկաթուղային հանգոյց, գինուորագրութեան կեդրոն, ուրկէ իւրա-



քանչիւրս, անհատական նախասիրութեամբ եւ հաշիւներու բերմամբ, պիտի դիմենք անվերջ հոլովուած հայրենական քաղաքներ՝ Կարին, Երզնկա, Քղի, Բաբերդ:

Ովքե՞ր ենք:

Քաղաքական կամ ընկերային խռովութիւններով հարուստ կարճատեւ եռամսեայի մը ընթացքին, դասարանիս 48 հոգիներուն ծանօթանալու պատեհութիւն իսկ չեղաւ, ու հիմա կայարանի ուղին բռնող հինգերուս մտերմութիւնը վերջին շարթուան վարանումներուն արդիւնքն է:

— Տղա՛ք, «քայլադուլ» կը հռչակեմ, ու կ'աւելցնէ աւելի բարձրօրէն՝ «Յանուն Յեղկոմի նո՛ր որոշումին»:

Խորէնն է, բաբերդցի, հետը անբաժան մնալու դաշինք ունինք, մինչեւ Կարին անպայման, ու ապա՞...: Ան կ'ուզէ բռնել Բաբերդի ճամբան՝ Սեպուհի զինուոր, ես, նախ Անդրանիկը տեսնելու ծրագիր, որմէ վերջ դէպի Երզնկա, դէպի Տերսիմ անշուշտ, զիս քաշող անդամադրելի ձգողութեան անձնատուր:

Խորէնին ձայնը երգիծանքի շեշտ չունի սակայն, տխուր է, յուսահատ, կօշիկներո՞ւն դաւաճանութեան արդիւնք, միա՞յն: Մտա՛հոգ եմ:

Հայրենեաց կանչին պատասխանելու պատրաստակամ ընկերներէն ամենէն խանդավառն էր, խլուած Թուրքի մը ապարանքէն 15 ամիս առաջ, հայրը զինուոր, եւ անյայտ, իր աչքին առաջ սպաննած էին մայրը, եւ կ'ուզէր որ այսուհետեւ մեր բառարանները պարունակեն միմիայն մէ՛կ բառ՝ վրէժ:

Անշուշտ կը կարեկցէի իր մեծ վիշտի՛ն մանաւանդ: Խորէն իբր ընկե՛ր ալ խիստ համակրելի էր, եւ ինծմէ աւելի զուարթ: Զինքը որդեգրել «տուած էի լսարանական բարեկամներէս: Անոնց սուսիկ-փուսիկ մեկնելէն յետոյ, երբ ամէն ոք ազատ էր «եօլա զնալու», ճակատը լքող զինուորներու ներխուժումէն սոսկացող փոքրերուս խումբին առաջնորդի դերը կը կատարէր Խորէն, իր համարձակ բնաւորութեամբ: Ինչպէս այժմ ցեխերու մէջէն:

Վանքի պատէն կայարան տափարակ դաշտ է, մինչեւ Արափս:

Գնացք մը սուլելով կը տատանի քիչ հեռուէն, բնազրօրէն կ'աճապարենք: Կայարանին ո՛ւր ըլլալը ճշգրիտ չենք դիտեր, ու թէ՛ եւ դանդաղ, գնացքը երթալով կը հեռանայ:

— Կա՛նգ առ, է՛լի, կը գոռայ Խորէն, յուսահատ ճիգով: Լսող չկայ:

Մեր քայլերը պատճառ մը եւս ունին յամենալու: Միտքս՝ ո՛չ: Ան կտրեր-կ'անցնի հորիզոնը՝ Արաքատեան Պարէն, ուր իմ է՛ն թանկազին էակներս կան, որոնց երազներուն եւ առօրեայ մտածումնե-

րուն մէջն եմ նաեւ ես ինքս, ինչպէս իրենք իմ իններուս, եւ յուսա-  
հատութիւնս անոնց կարօտին բերմամբ կը մարմրի ու կը փարատի,  
պաշքարս հովին, ցուրտին, ցեխին դէմ նոր թոխչք կ'առնէ, երկար է  
արդարեւ ճանապարհս :

Տածլիկ շէնքի մը շուրջը մարդկային շարժումներ : Կայարանն  
է, մէկ-քանի տասնեակ սպասողներով լեցուն, կան նաեւ ճեմարանցի-  
ներ :

— Հայկակ եւ Վահա՞ն : Անոնք վազելով յաջողեցան ցատկել  
քիչ առաջ անցնող դնացքի աստիճաններուն վրայ :

Մինչդեռ ես զիրենք արդէն կարիմ հասած կը սեպէի :

Կայարանապետը հազիւ կըրցած էր դանդաղեցնել դնացքը, եւ  
կառավարը զինուորի սպառնալիքին տեղի տալով չէր կըրցած կանգ  
առնել :

— Ուրիշ դնացք կա՞յ :

— Սատանա՛ն դիտի : Տեսնո՞ւմ էք, կանգ չեն առնում : Զուլ-  
փայից արդէն լեւի-լեցուն կը լինին զինուորներով, եւ չեն թոյլ տար  
կանգնելու :

Ա՛լ չեմ բամբասեր զիս լքող մեծ ընկերներս :

— Լաւ կը լինի, կը կրկնէր Քաջունի, որ մենք ժամ առաջ  
մեկնինք, եւ Ալէք-պօլի մէջ ճակատ մեկնելու միջոցները հետապըն-  
դենք : Մեզ կը գտնես Ալէք-պօլի զինուորական շտապը :

Սակայն Հայկակի մտածումը բոլորովին ա՛յլ էր :

Մանաւանդ վերջին տասնեակ մը ամիսներուն գտած հոգեկան  
փոթորկոտ վիճակս, սնունդի կատարեալ անբաւարարութեամբ, զիս  
վերածեր էին ճղճիմ էակի մը, եւ կամաւոր արձանագրուելու որո-  
շումս իսկական հեղինանք մըն էր, որուն անձամբ ի հարկէ չէի ան-  
դրադառնար : Ուստի բոլոր բարեկամներս իրաւամբ կը ջանային հա-  
մողել զիս, թէ տարիքս, թոյլ կազմս ունեցողի մը համար ծա՛յր աս-  
տիճան անխոհեմութիւն էր առնելիք քայլս :

«Էջմիածին» կայարանի երկաթէ գծերուն ի տես վերագտած էի  
կարիմ հասնելու հաւատքս, թէեւ նոր դողդոթայ մը կը սպասէր մեր  
հինգին :

— Պարո՛ն կայարանապետ, ե՞րբ է յաջորդ դնացքը :

— Ի՞նչ իմանամ : Ժամերը բոլորովին խանդարուած են, ամե-  
նէն դժբախտ պարագան ա՛յն է, որ «վերէն» եկող դնացք չկայ,  
եւ «վարը» պարպուած կը լինի : Վարը Նախիջեւան-Զուլփան է :

Հայաստանի համար իրաւամբ «դժբախտ պարագայ» մը եղաւ  
այդ, հոն գտնուող շողեմեքենայ եւ վակոն կը պարպուէին, իսկ «վե-  
րէն» վրացի եւ Թաթար թոյլ չէին տար անոնց մուտքը դէպի Հայաս-  
տան :

Կէս գիշերին, լապտերը ձեռքը ճօճելով կայարանապետը կանգնած է գծին մէջտեղը, Թո՛ւՖ, Թո՛ւՖ հեւալով դնացք մը կը մօտենայ: Պիտի կանգնի՞:

— Ձեմ հաւատում: Երեւան հաղորդեց որ կանգ առած չէ հո՛ն եւս:

Դա՛րձեալ կը խճկուինք մեր շունչերով տաքցած փոքրիկ սրահին մէջ: Վերջին խօսողը կայարանապետն էր:

— Աստուած ընդհարումներէ՛ պահէ: Թէ ոչ գիծը բոլորովին կը փակուի:

Խորէն ականջիս կը փսփսայ.

— Գիտե՞ս, Հայկակ իրաւո՛ւնք ունէր, կամաւոր երթալ մեր դործը չէ:

— Այդպէս չէիր խօսեր սակայն, երբ ՀՈՐԻՁՈՆ Թերթին մէջ Աւետիս Ահարոնեանի «Ահագանդը» կը կարդայինք: Վրէ՛ժ, վրէ՛ժ կը դռայիր արտասուելով, մենք ալ հե՛տդ:

Ռուս Հնկտեմբերեան յեղաշրջումը անակնկալ մըն էր, որ անգամ մը եւս տակնուվրայ կը շրջէր մեր ներկան ու դալիքը:

Զիրար ատող, Հայուն նախանձող կոփկասեան ժողովուրդնե՛րուն վրայ դսպիչ ոյժը կը վերնար, եւ ներքին ապահովութիւնը խորտակուած էր: Անոնք եւ մենք, մեր անմիջական օրերու ճակատադրին տէրն էինք փաստօրէն, ու անկազմակերպ, անկերպարան:

Զարդարար Թուրք բանակին յառաջացումով վտանգը յատկապէս կը սպառնար մնացեալ հայութեան:

Ազգային մեր մարմիններուն վրայ աւելի քան ծանր բեռ մը կ'աւելնար:

Մինչ այդ իրերօդնութեան նուիրուած, հայութիւնը պարտ էր այժմ պաշտպանել իր տունն ու կեանքը:

Ա՛յդ էր «Ահագանդ»ին իմաստը՝ Թուրքին դէմ լքուած ռազմաճակատներուն պաշտպանութիւնը եւ դեռ աւելին:

Մեր փոքրիկ ամբոխը զգալապէս տահնութիւն կը պատճառէ կայարանի մարդոց, զիրենք հարցափորձելու մէջ մէկս-միւսին կը յաջորդենք:

— Ամէն ջանք պիտի փորձ անեմ, դանդաղեցնել եկող դնացքը, ջանացէ՛ք ցատկել վրան, կարծում եմ ուրիշներ չեն լինում: ԶուլՓայում այդքան վակոն լինելը երբեք չէի սպասում:

Անտեղի վախ մը չէր, եւ խի՛ստ տրամաբան, քանզի վերէն եկողներ չկային:

Մութին մէջ ամէնքս ալ կը յաջողինք կէս գիշերն անց՝ նոր դնացքին վրայ, խիստ անյարմար վիճակ ունինք, բազրիքներուն վրայ մէ՛կ ձեռքի տեղ չէ մնացեր, ողկոյզի հատիկներուն պէս փա-

կած ենք իրարու, ոչխարներու պէս ամէնքս միեւնոյն երկու վահոններու արանքին մէջն ենք:

— Ծօ՛, ներսը բոլորովին պարապ է, մարդ-մարդասանք չկայ:

— Այո՛, դռները փակ, սուրիններ ետեւը խրած, ներսը կը խումբացնեն:

Վախնիվախ, անդամներնիս սառած, գնացքը կանգ կ'առնէ «Մարդարապատ» կայարանը, ուր կարծես հրավառութիւն կայ:

Շէնքը աւելի ընդարձակ է, թէեւ ցածլիկ, մէջը «պուֆէթ», լեփ-լեցուն, լոյսի եւ մուխի մէջ խեղդուած ամբոխ մը, եւ անտանելի ժխոր: Խայտաբղէտ բազմութիւն մը, հագուստ-կապուստի այլազան խառնուրդ մը, լեզուներո՛ւ նոյնպէս, եւ մա՛նաւանդ ահազուռ: Մե՛նք ենք ամենէն փոքրերը, մեր վրայ սեւեռող աչքերէն քար կտրած ենք:

Աստուած իմ, ո՛ւր ինկանք: Սուտ ու իրաւ գինովներ, կոռազան, շատեր քրտական հազուստներով մէջքերնին թուր ու դանակ: Գնացքը կանգ առած է, գինուորներէն շատերը «պուֆէթ»ին վրայ են խուժեր ամբոխը հրմշտկելով ու գոռում-գոչիւնով:

Վահոն մտնելու մեր փորձը կը ձախողի, դռները միշտ փակ են, մէջը պարապ, սուրինաւոր գինուոր մը պահակ:

Յուրա է, կը վերադառնանք դժոխք, ուր քիչ անց դանակներով իրար վրայ կը յարձակին Գնչու եւ Քիւրտեր, գինուորները չեն միջամտեր: Դուրս կը խուժենք հինգերս, ամէն գնով չփախցնելու դընացքը, ու կը բարձրանանք վահոնի մը տանիքը:

Կճող ցուրտ մը, անդամնիս շարժելու կարելիութիւնը բոլորովին կը չքանայ, երբ թրէնը ճամբայ կ'իյնայ: Իրարու փաթթուելով կը փորձենք տաքնալ, մանաւանդ վար չիյնալ:

Երբեմն ոստումի համարժէք, գնացքի ցնցումներէն ստացած մեր սոսկումը, մոռցնել կը պարտադրեն մեր մարմինները ծակող սառն հովերը: Չենք խօսիր, բայց միասին ենք, հինգ: Միակ մխիթարական պարագան: Բայց ո՛ւր կ'երթանք, ո՛րքան պիտի տեւէ այս տաժանքը: Եթէ գնացքը որեւէ տեղ կանգ չառնէ, ձիւնակոյտ դարձած տեղ մը վար պիտի գլորուինք, ով գիտէ ո՛ւր:

Կասկած չկայ: Կանգ առած ենք, անսպասելիօրէն, դաշտի մը մէջ, համատարած սպիտակութիւն, ուրկէ լուսնակէն ժպտող կայծեր կը թռչտին, աչք խտխտացնող:

Հինգերուս Աստծուն թելադրութեամբ գնացքը կանգ առաւ Ալագեազ կայարանը, անշուշտ: Հրաչքով մը տանիքէն վար, ձիւնի փոսերու մէջէն սողոսկեր ենք տնակի մը մէջ: Հինգե՛րս ենք միայն, բոլորովին պարապ հնոց մը, եւ իրեն քովի բաժինին բաց դռնէն կը տեսնենք բոցի սիւն մը, որ մեզ կը գգուէ, կը քաշէ իրեն: Թոնիր

մը, որուն եզերքէն կին մը դէպի մեզ կը շարժի, մինչ իր ամուսինը մեզ դէպի անոր կը քշէ :

Կարեկցող, մայրական շեշտով հայերէն խօսակցութիւն մը, կնոջ եւ համազգեաստաւոր միակ պաշտօնեային միջեւ :

— Ա՛յ մարդ, Աստուած վարձատրէ քեզ եւ իր ողորմութիւնը անպակաս ընէ մեր վրայ, մեր զաւկին վրայ : Բացակայ :

Հայ կայարանապետին առաջին բարի գործը չէ : Իր ինչո՞ւն է պէտք չուրջի անցուղարձը, եւ սակայն այնքա՞ն մեծ հոգածութեամբ, այս նոր փորձութեան առիթով, շատերու փրկարարը եղած է, գա-նոնք նոյնպէս տանիքներէն վար քաշել-խնամելով :

Փոռած ենք թոնիրին շուրջը, տարբեր պատճառով անզգայ : Մեզ տեղաւորող բարեպաշտ կինը կը յայտնուի, մեր գլուխները կը շոյէ, մէկիկ-մէկիկ կը ջանայ նստեցնել, եւ ցոյց կու տայ թէյի բա-ժակներ :

Մէկ-երկու ժպիտ ունինք միայն անոնց բարիքը վարձատրող :

Օրհնելով, փսփսալով, այր ու կին կը հեռանան, մենք կը գրկենք թոնիրին կողերը, ոտք-ոտքի, գլուխ-գլխի զայն շրջապատե-լով :

Հազարով առաջին արթնցողն եմ : Կայարանապետին կինը քովս կը փութայ :

— Ոչի՛նչ, կ'անցնի : Մի՛ վախենար : Էլի թէյ ուզո՞ւմ ես :

Կծովի է այս անգամ շաքարը, ոչ դցովի : Կը պարպւմ բաժակս՝ ականջս իր հարցումներուն : Մեր ինքնութեան ծանօթացումը արցունք-քի կաթիլներով կ'ունկնդրէ :

Ժամեր սահեր են, այր ու կին մեղքքեր են մեզ արթնցնել : Կը պատմեն իրենց միակ զաւկին արեւմտեան ճակատ դրկուած ըլլա-լը : Ամիսներու լուսթիւն մը կրծեր է իրենց հոգին, եւ շատ մը մայր եւ ծնողք :

Կէսօրը անց է, նոր դնացք մը :

— Հարկաւոր է ժամ առաջ Ալէքսանդրապօլ հասնիք, տեսնում էք որ ձեզ պահելու ուրիշ հնարաւորութիւն չունինք, բացի տաք թո-նիրէն :

Մարդը կը նետուի դուրս, դրօշակ մը ձեռքը՝ կաս-կարմիր, կանգնած է երկու գծերուն մէջտեղը, դնացքը յամենալու միտք չունի, ինքը նոյնքան յամառ է՝ տեղը անշարժ :

Կը յաջողի դնացքը կեցնել, հակառակ գինուորի սպառնալի-քին, որ մեքենավարին քով պահակ է, որ, վար կը ցատկէ՝ դինքը հեռացնելու, եւ որուն հետ յաջողութեամբ կը սակարկէ միմիայն չի՛նզ հոգիի, հինգ պատանիներու ներս ընդունուելիլ :

Մեր երազները կրկին կը փայլատակեն :

Իրենց զաւակներէն բաժնուողի մը համազօր տխրութեամբ,  
բարի մարդիկը թաշկինակ կը ճօճեն՝ մինչեւ մեր աչքերէն կտրուելը:  
Ալեքսանտրապօլ ենք՝ Լեւինական:  
Մարդ ըլլալս դա՛րձեալ կէս մնաց:  
Հօրս պատուէ՞րը՝ մի՛շտ ի գօրու:



## ԴԱՐՁԵԱԼ ՓԼՈՒԶՈՒՄ

— Խեղճ տո՛ւն կանչէ : Քեզի՞ մնաց ազգը փրկել :

Տարբեր ընդունելութեան կարօտն ունէի : Եւ ահա մեծ մայրիկիս ելոյթը : Երբ, ե՛ս գիտեմ, ի՞նչ քաշեցի մինչեւ զիրենք գտայ, մէկ «գաղթականի» տունէն միւսին վազվզելով :

Երեւոյթս լեղին պատռած էր խեղճ Անայիս : Զիս լաւ ճամբու մէջ, ապահով տեղ գիտէր : Ի՞նչ կը տեսնէր : Դեղնած, չոր փէտ կտրած, իր մեղքերուն վրայ ուրիշ մը եւս՝ կամաւորի թեկնածու :

— Ա՛յս էր պակաս : Թմնցաւ : «Տահա» շատ բան տի տեսնեմ, ատոր համա՛ր Աստուած հոգիս չ՛առներ : Մէյ մը քե՛զ նայէ, մէյ մը անոնց :

Հայկակ, Վահան, Արամանեակ Արապեան, ցուցմունքներու հետեւելով նոյնպէս յաջողած էին գտնել հօրեղբայրս նախ՝ եւ մեր տունը, լուրերս տուած, եւ յայտնած Կարին մեկնելու մտադրութիւնս :

Տեսայ զիրենք, դեռ չէին կրցած մեկնիլ : Պնդումներու վրայ երբ զիս ներկայացուցին Շտապի պետին՝ իբրեւ «կամաւոր», մերժումը եղաւ չոր եւ վճռական :

Մարմինս սառեցնող Արագածի ցուրտերուն դէմ թոնիր մը դրտայ, մինչ Ալէք-պօլի մէջ, հոգիս սառեցնող վերաբերմունքներուն դէմ-յանդիման, միակ դարմանը աշխատանք մը ճարելն է :

Հոն հասած յաջորդ օրն է, քիթս աւելի կախ կը վերադառնամ Շտապէն : Հարսիկը տունը մինակն է՝ Վարսեմիկը գիրկը, հօրեղբայրս անշուշտ «վարսավիրայի» խանութն է (փարիքմախէր) : Արտաշէս, Աշոտ, Անդրանիկ որբանոցն են, գիտեմ : Ուրիշ նորութիւն մը՝ Անան բացակայ է, կը սպասեմ, չի վերադառնար : Գործաւորուհի է քաղաքի միակ հիւսուածեղէնի գործարանին մէջ, կէսօրերը հոն կը ճաշէ :

Բաներ մը ծամելս հաղիւ աւարտած, կը հարցնեմ գործարանի հասցէն ու ճամբան : Դրան մէջ Գարեգիմը կը տնկուի, ու միասին գործարանին առջեւ ենք :

«Ի՞նչ էք ուզում»ին, «գո՛րծ» կը պատասխանենք միասնաբար :

Տարիք, հասցէ, մասնագիտութիւն, արհեստ կամ ուսում հարցումներուն մէ՛կ պատասխան՝ ցեմարանակալն ենք : Առաջին դասարանէն արձակուած՝ դպրոցի փակուելուն պատճառաւ :

Ներսն ենք: «Երկու օր յետոյ, եթէ կը փափաքիք, կարող էք աշխատանքի սկսիլ, մէկդ դեղարանի մէջ, միւսդ որպէս «Փէլտէր»ի օգնական՝ հիւանդապահ:

— Անտարակո՛յս փափաքում ենք: Շնորհակալութիւններ:

Այդ երկու օր վերջը անկասկած Երկուշաբթի առաւօտ մըն է:

Կը ջանամ Անան գտնել՝ միասին տուն վերադառնալու մտօք: Փորձերս անյաջող կ'անցնին, «կարելի չէ որեւէ մէկին խանդարել», իսկ Փարեգիմ անհամբեր է բարի լուրը իր մեծ հօր եւ հօրեղբոր յայտնելու, որոնք նոյնպէս Ալէք-պօլ հաստատուեր են, ինչպէս ուրիշ համաքաղաքացիներ եւ համագաւառացիներ:

— Կրակն ընկեր կը վառիս: Ծօ՛, դուն հիւանդ ես:

Ձեռքերը ճակտիս ու այտերուս պտըտցնողը Անաս է, շուրջս կը դառնայ անհանգիստ, յայտնապէս այլայլեր է: Կ'անիծէ իր չար բախտը: Ես հաղիւ կ'անդրադառնամ կատարուածին:

— Ծօ՛, բերանդ բաց: Այս ի՞նչ բերիք գլխուս:

Մէկ ձեռքը կրկին դէմքիս վրայ կը պտըտի, միւսը չեմ տեսներ, դիտեմ որ բռան մէջ ապի կտորներ սեղմած է: Անդադար կը յօրանջէ, «չար աչքը» վրաս աւերներ դործեր է, աղօթք կը մրմռայ, արտուլախ կ'արձակէ մէջընդմէջ:

Կոնակիս մէջ աղին կտորներուն ասղնտելը կը դգամ, նաեւ կտոր մը լեզուիս տակ մխրճուիլը:

Ուրիշ որեւէ մանրամասնութեան տեղեկանալու ի վիճակի չեմ այլեւս:

Գիշեր մը անցեր է, յաջորդ օրը «մեր կամաւորները» եկեր են մնաք բարովի, իրենց «Թանկագին» իրերը մերոնց վստահեր են՝ վերադարձի յոյսով, ու մեկներ են՝ առանց որ աչքս բանալ կարենամ:

«Անա՛յ, Անա՛յ»: «Մա՛յրիկ, դո՞ւն ես»:

Կուրծքիս վրայէն բոցեր կը վանեմ, աչքերս լոյսերու մէջ կ'ողողին, օտարոտի ձայներ, եւ անծանօթ խօսակիցներ:

Ստուեր մը կը մօտենայ, վերէն վար սպիտակութեան մէջ:

Անաս չէ՛: Ո՞ւր եմ: Եկողները շատուր են: Ռուսերէնով խօսակցութիւնները երկար կը տեւեն: Աչքերս չեմ կրնար բանալ լոյսերուն, մարմնոյս վրայ տեղէ տեղ ցատկուտող հպումներ կը դգամ, վախէս կը համարձակիմ աչքերս բանալ՝ անակնկալ յարձակումներուն դիմակալելու, ինչպէս ուրիշ ահաւոր փորձանքներուն, որոնց կ'ենթարկուիմ անդադրում:

— Այսօր լաւ է, այնպէս չի՞, հարցումը կը կրկնէ նաեւ՝ օտար լեզուով: Հիւանդանոցն եմ:



— Նո՛ւ, խարաչօ, կը պատասխանէ գոյնը թափած սպիտակաւոր կին մը, Ռուսուհի:

— Լա՞ւ ես էլի՛, կը կրկնէ այս անգամ թուխ, սիրունիկ հիւանդապահուհի մը՝ մեր լեզուով: Երկու կողերէս, անութիւններու տակէն բռնած՝ զիս կը բարձրացնեն նստելու:

— Ռուսերէ՞ն, չի խօսո՞ւմ: Բժիշկն է:

— Մինչեւ այս բոլէին, նա շարունակ զառանցել է՝ մի՛միայն հայերէն բռեր արտասանելով, յաճախ անհասկանալի: «Գաղթականի՛ տղայ է», կ'աւելցնէ թուխ աղջիկը, մաքուր հայերէնով:

Վրաս կը ծոխ բժիշկը, հոգածութեամբ կը հաղորդէ որ վըտանգը անցած կարելի է համարել, ռուսերէնով յանձնարարութիւններ կը ցանցնէ, վերջին խօսքը՝ խրախուսական, ինծի ուզուած՝ ռուս լեզուով, զոր չի մոռնար անձամբ թարգմանել:

Թուխ եւ շէկ՝ բոցի գոյն օրիորդները կրկին մօտս են, հարցուփորձի կարգը իմս է:

Ութ օր է, անօթի, անսուաղ, հիւանդանոցն եմ, կրակներու մէջ, անվերջ զառանցանք, մայրիկ, Անա, քոյրիկ, եւ ա՛յլ բռեր: Իրենք արդէն տեղեակ են ինքնութեանս մանրամասնութիւններուն՝ վակոնի տանիքին վրայ նոր տարուան օրերու ճամբորդութիւնս, ճեմարանականի երազներու քայքայման, կամաւորի «հերոսական դրուագներու» անէպոսան:

Այս դժբախտութիւնները կը փոխարինեն շուրջս տիրող ջերմ համակրութիւնները: Երկու «քոյրերը» զիրար կը գերազանցեն՝ զիս խնամելու, փայփայելու մէջ: Բժիշկը՝ աւելի քան մերձաւոր մը, եղբայրական, հայրական, ու վերջապէս այդ բոլոր հոգածութիւններուն պատճառ տուող դադտնիքն է որ կը պարզուի:

Անցեր են շաբաթներ արդէն, ապաքինումս սկսած է, մեծ թափով դէպի յառաջ: Բժիշկին պատուէրները զիս լիովին կերակրելու մէջ կը գործադրուին կէտ առ կէտ, առանց զանց առնելու շամբանիս, ինծի մինչ այդ անձանօթ գինին, որուն համը նոր կ'առնեմ, ու այնքան անյազօրէն կ'ըմպեմ: Բացառիկ շնորհ մը այդ նեղ օրերուն:

Միշտ վերջին արցունքը սրբելով գլխաւոր այցելուս Անան է: «Հայ քոյրը» արդէն մտերմացեր է հետը, գիտէ բնաւորութիւնը, առաջի օրերուն մանաւանդ միշտ ընկերացեր է՝ լալը արգիլելու, եւ տխուր բռերէ գգուչացնելու համար զինքը:

Ամէնօրեայ այցելուս է մանաւանդ մեր գիւղացի Գէլոեցի Մարիկին աղջիկը, որուն եղբօր տղան՝ Գալուստ Գալստեանը, ինձ հետ միեւնոյն օրը ծնած, միեւնոյն օրը նոյն աւագանին մէջ մկրտուած, նաեւ դասընկերս, իր մօր հետ աքսորի կարաւանին խառնուած՝ անյայտ:

Երեկոյեան ժամը 6-էն վերջն է իր այցի պահը: Չէի համար-  
ձակեր իրեն հարցնել, թէ ինչո՞ւ ամէն օր կանոնաւորապէս նոյն  
ժամուն մօտս է:

Դեռ աւելին կար, օ՛հ, ո՞րքան յուշիչ եւ դօտեպնդող:

Գաղտնիքը պարզողն եղաւ «հայ քոյրը», միշտ իրմէ անբաժան  
բոցադոյն աղջկան հետ:

— Բժիշկը եւ մենք քո մասին երկար լսել ենք Աննիկից: Նա  
այնքա՛ն շատ ու շատ սիրում է քեզ, եւ չգիտես ի՞նչ խոշոր զոհա-  
բերութիւն ցոյց է տուել նա, քեզ այստեղ իմանալու առաջին բո-  
պէէն յետոյ, եւ այդ՝ օրերով շարունակ:

Արցունքը կը մթապնէ աչքերս, ու հոգիս ալեկոծ՝ խօսքս փո-  
խել կը ջանամ: Անհրաժեշտը արձանագրած եմ: Աննամ՞ն Աննիկ:

— Խնդրեմ, ըսէք, ի՞նչ էր հիւանդութիւնս:

— Նո՛ւ, այժմ կարող եմ ասել: Մեծ մայրիկդ նրան կոչում է՝  
սաթլիխան, մինչդեռ բժիշկը ունի հայերէն անուն՝ թոքատապ, եւ  
դու դրան ժառանգել ես ապահովաբար Էջմիածին-Ալեք-պօլ ճանա-  
պարհին:

Խօսեց ապա Աննիկի մասին: Թէ ի՞նչպէս ան, հիւանդանոցի  
մէջ լուսացարարուհի, երբ իմացեր է ինձ պատահածը, առաջին օրէն  
սկսեալ աղաչե՜ր-պաղատեր է գիշերները սնարիս մօտ անցընել, երբ  
ես իրապէս մահամերձի վիճակի մէջ գտնուեր եմ գրեթէ շաբաթ մը  
ամբողջ: Բժիշկին եւ քոյրերուն պատմեր է մեր հայրենի գիւղին վը-  
րայօք, մեր ընտանիքին, ծնողացս մասին, ու այնքա՛ն հիացումով  
ու խանդաղատալից, որ ստիպեր է բժիշկին արտօնութիւնը, ու այդ-  
պէս՝ հակառակ իր ծանր աշխատանքին՝ գիշերներ լուսցուցեր է  
սնարիս կոթնած:

— Նրա անչափելի զոհաբերութիւնը եւ հիացական խօսքերը  
մեզ ա՛յնքան լաւ տպաւորեցին ե՛ւ քո մասին, ե՛ւ քո, մանաւանդ ըն-  
տանիքի:

Իմ կարգիս, պատմեցի ընկերոջս Գալուստի մասին, որուն հետ  
այնքա՛ն հաճելի ժամեր անցուցեր էի, իր մեծ մօր՝ Մարիկի օճախին  
մօտ, մեր մանկական խաղերը՝ իր հօրաքոյրներուն գգուող աչքերուն  
տակ, որոնցմէ մի՛ն էր միայն ողջ մնացեր:

— Տէ՛, լաւ, մի՛ խոսովիր, յուսով եմ մի օր կը գտնես ընկե-  
րոջդ:

Հարուածային խնամքի շնորհիւ առողջութիւնս գտած էի, ա-  
պաքինումի տասնեակ մը օրեր եւս անցընելով հիւանդանոցին մէջ,  
ուրիշ դուրս կու գամ անձկութեամբ՝ մանաւանդ բժիշկի եւ քոյրե-  
րու լուրջ յանձնարարութիւններէն տպաւորուած:

— Այսուհետեւ պէտք եւս զգոյշ լինել նման պաղատութենէ ,  
թէեւ բոլորովին վերջ գտած է հիւանդութիւնդ :

Ճիշդ էր՝ բայց սպի մը ձգելով :

Հիւանդ էի ուրեմն , եւ ծանր : Հիւանդ էր համայն Հայոց աշ-  
խարհը :

Այդ ցուրտերը , որոնցմէ իրաւ է որ եւս հրաշքով եմ ազատուեր ,  
ի՞նչ աւերներ են գործեր , հեռուն մեր հայրենի Բարձր Հայքի ճանա-  
պարհներու երկայնքին , որոնց արձագանգները կը լսեմ այժմ դուր-  
սը , իբրեւ դառն նորութիւններ , որոնց ենթականերէն ոմանք պիտի  
տեսնեմ , մարմնոյն անդամներէն տեղ-տեղ հատուած , հաշմուած :

Երկաթուղային հանգոյց՝ Ալէք-պօլ՝ ամենէն աշխոյժ եւ ե-  
ռուն քաղաքն է , նաեւ ամենէն աւելի Հայ : Նաեւ զուարթ են եւ ան-  
փոյթ , անհոգ , իր հին բնակիչները , ինքզինքնին Գիւմրեցի կոչող ,  
ալ աւելի հնութեան տիտղոս , որուն այժմու բնակչութիւնը կրկնա-  
պատիկ եւ թերեւս աւելի է , թրքահայ փախստականներու ներխու-  
ժումով , հոն հաստատուած որբանոցներով , ամէն օր հասնող հարիւ-  
րաւոր եկուորներով :

Դժուար է հոն հիմ Գիւմրիի զատորոշել : Նորը՝ Ալէքսանտրա-  
պօլ , ընդարձակ քաղաքի երեւոյթն ունի , ցածլիկ տուներ , մեծամաս-  
նութեամբ երկյարկանի : Զիրար ուղղահայեաց կտրող երկրաչափա-  
կան կանոնաւոր փողոցներ , հազիւ մէկ կամ երկու ծառուղի : Արե-  
ւելքէն եկող զլիսաւոր պողոտան , կը մեկնի կայարանէն՝ քաղաքէն  
երկու-երեք քիլոմետր հեռու , ու կը վերջանայ Ռուսական Գիմնա-  
զիումի փառաւոր շէնքին մօտերը՝ դէպի Ախուրեան , եւ որուն առջեւ  
կը բացուի ընդարձակ տարածութիւն մը՝ ամայի , նոյնպէս Ախու-  
րեանի ափերուն հասնող :

Միւս մեծ փողոցը , տեղ-տեղ ծառեր , Հայոց Ս . Գէորգ Եկե-  
ղեցւոյ փողոցն է , տեղւոյն Մայր Եկեղեցին :

Մեր խեղճուկ , ցածլիկ բնակարանը կայարանի ճամբուն վեր-  
ջաւորութեան մօտ է : Հիւանդանոցէն դուրս առաջին օրերու հան-  
գիստի պահերս անոր դրան առջեւը կ'անցնին , ուրկէ ամէն օր եռու-  
զեռը կը բազմապատկուի ճակատի աղիտարեր լուրերէն ի վեր :

Կ'անցնին կապոցներով՝ թեւերէն կախ , կռնակներէն թափ-  
թփող , յոգնած :

Հազիւ մէկ-քանի ձիու կառք , որոնց մէջէն կը պսպղան զինուո-  
րականներու համազգեստներ :

— Մօտերը բնակարան կարելի՞ է գտնել :

Գիրկը երախայ , խուճբին վերջինն է , կին մը : Ի՞նչ պատաս-  
խանեմ :

— Դո՞ւն ալ գաղթական ես :

— Այո՛, քոյրիկ, քաղաքին անծանօթ: Առաջնորդարանը հար-  
ցուցէք երեք փողոց անդին:

Կրկին հարցում, նոյնը: Յուսահատ մարդիկ, անտանելի տե-  
սարան: Ներս կը քաշուիմ, դեռ ուրիշներ ինծի չհասած:

Ամէնօրեայ խրախուսիչ հանդիսութիւնը կը լրտեսեմ սակայն:  
Եզրտի ձիաւոր գունդին տողանցքը, Ախուրեանի մօտիկ իրենց զօրա-  
նոցէն մինչեւ կայարան, եւ դարձ, գլխաւորութեամբ Գարեգին Նրժ-  
դեհի, (\*) որ մէկ գծի վրայ կը ձիավարէ եզրտի տոհմապետ հրամա-  
նատարին հետ:

Ալէք-պօլի ապահովութեան յայտարարներն են ասոնք: Նժդե-  
հի ճերմակ ձին կը ծեքծեքէ, սանձէն տրուած հրամաններուն հըռ  
հնազանդ, հպարտ է, երխասարդ իր գեղեցիկ ձիաւորով:

Պարապ, անգործ: Դիտելը փոր չի կշտացներ: Նման դիտողու-  
թիւն երեսիդ շարտուելէն զգուշանալն է մեծագոյն խելօքութիւնը:

Ինձ գործ խոստացողներուն մօտն եմ: Իրաւ է, շաբաթներ ան-  
ցած են, առանց «պօյս» իրենց ցոյց տալու:

Որո՞ւ վիզ կրնամ փաթթել այս գործուած մեղքը: Գործը ար-  
դէն ուրիշի մը տրուած է: Պատմութեանս կարեկցող ֆէլտշէրը ան-  
ձամբ ինձ համար ժամադրութիւն կը խնդրէ տնօրէնէն: Ճեմարանցիի  
հանգամանքս ալ կ'աւելնայ ընծայուած բարեխօսութեան վրայ:

— Այս պահուս ձեզի յարմար որեւէ աշխատանք չեմ տեսներ:  
Երբեմն հանդիպէ, ցո՛յց տուր այս բացիկը, սիրով կ'ընդունիմ, եթէ  
բացակայ չեմ:

Պարոն Գարախանեան, տնօրէնը, սրտմտիլս կը դիտէ:

— Եթէ կ'ուզես գրասենեակիս դռնապանի պաշտօնը, այժմէ՛ն  
իսկ տրամադրութեանդ ներքեւ է: Ծերուկը, որ կը ծառայէր ինձ,  
այլեւս անկարող է իր տնէն դուրս գալ:

Կ'աւելցնէ, երբ հասկցաւ ոռուսերէնի մէջ անվարժութիւնս:

— Ռուսերէնը այնքան ալ հարկաւոր չէ, գէթ շատ հագուա-  
դէպ պարազաներու տակ:

Նոր արեւ տան մէջ, հարսիկիս մոայլ կերպարանքը կը փոխա-  
կերպուի, երեք աշխատաւորներ ենք ուրեմն, չորս անձ եւ աղջնակ մը  
կերակրելու համար:

Մեծ մայրիկը նոյնքան գոհ է, հպարտ եւ երջանիկ: Հօրեղ-  
բայրս՝ լուռ:

Անայիմ հետ գործարանին մէջ կը ճաշենք, բակի մը անկիւնը,

---

(\*) Գարեգին Նժդեհ, յետագայիմ պիտի դառնար Զանգեզուրի  
բանակի մը սպարապետը, 1921 Փետրուարեան ապստամբութեան յե-  
տոյ:

գրեթէ զաղտաղողի : Շատեր մեզի պէս : Ով ինչ գիտնայ ի՞նչ կ'ուտէ միւսը : Անային երէկուրնէ պատրաստած համադամներն են , իբր առանցք տեղւոյն գետնախնձորները , այնքան համեղ ու նաեւ քաղցր , զանազան կերպարանքներ ստացած , ձեւով միայն միօրինակութիւն բեկանող : Տակաւին ինձ կը թուի թէ նման համեղ գետնախնձոր չեմ կերած :

Եւ Անան կ'օրհնէ խօսքերս՝ միշտ երէկը աւազելով : Զինքը վերատեսած առաջին օրերու մեծ մայրիկս չէ , աւելի աշխոյժ : Երբ դռնապանի պաշտօնս թոյլ տայ երեկոյեան իրեն ընկերանալու , «խուրպան ըլլիմ , խատատ առնեմ»ներով նախ կուրծքին կը սեղմէ , իր պաշտօնակից տիկիներու աչքէն հեռու , ախուլախերը չի մոռնար , «էնողը գտնայ» անէծքն ու «Մօ' , նորէն աչքի չգաս» : Միշտ կը հաւատայ որ հիւանդութիւնս «չար աչքի» արդիւնք էր :

Ափսո՞ս , ա՛յդ նոյնիսկ բոսպէական գոհունակութիւնները անխառն չեն :

Նահանջ է կրկին , քոյրս՝ վարդանոյշը , որ կարիւն է , մեր դըրան առջեւէն անցնող նոր փախստականներուն հարցուփորձ ընելու նիւթն է : Արդեօք կը ճանչնա՞ն զինքը : Ե՛ւ կան , բայց անտեղեակ :

Շարաթներ կ'անցնին՝ տարիներու ծանրութեամբ :

Շուտով կը մոռնամ դռնապան մը ըլլալս , շրջապատս օգնած է այդ փոփոխութեան : Գրասենեակի ծառայող եմ , այն ալ անօրէնի մը : Եւ անոր աջ բաղուկը , ինչպէս կը տեսնեն շուրջիներս : Արդարեւ տարիքէս եւ աստիճանէս բարձր վստահութեան առարկայ եմ , ու այդպիսով բոլորովին կլանուած նոր գիրքէս , հետաքրքիր բնաւորութեանս պատշաճօղ ի՞նչ թանկագին եւ հարուստ պատահութիւններ կան : Մասամբ ծնողացս կարօտն ու տենչը քօղարկած , միմիայն վարդանոյշն է հոգեբուս հոգը :

Նախանձ շարժելու տարիք չունիմ տակաւիմ , ոչ ալ հեզնող ակնարկութիւնները պրպտելու կարիքը կը զգամ , երեւոյթս այնքան համեստ՝ որ Գարախանեանի անմիջական գործակիցներն են կատակել համարձակողները :

— Բարե՛ւ , ա՞ջ բաղուկ , ե՞րբ է վերադառնալու օգնականդ : Մեզ հաղորդելիքներդ ասա՛ տեսնենք :

— Հրահանգներդ , կ'աւելցնէ ուրիշ մը :

Այլապէս գորովալից է գործաւորութեան եւ համայն անձնակազմի վերաբերմունքը : Կրնայի՞ երեւակայել թէ ինչքա՞ն վէճեր կրնան տեղի ունենալ գործարանի մը մէջ , որոնցմէ մեծամասնութիւնը տնօրէնի դատ-դատաստանին կը սպասեն : Եւ բազմաթիւ մեծ ու փոքր հարցեր :

— Եթէ գիտնան թէ որքա՞ն աւելի ծանր պատահարներ կա-

խուսած են մեր գլխին : Ան, անուղղակի զիս ալ կը հրաւիրէր, որ, դուրսը, ուղմանակատներուն վրայ տեղի ունեցող դէպքերուն հետեւիմ :

\*\*

— Ճակատի փլուզումին մէջ մեղաւորը դուն ես : Այդպէս չէր լիներ, եթէ դու այնտեղ լինէիր՝ քո Անդրանիկի կողքին :

Անակնկալ թէեւ, սուր մեղադրանքը լռեցուց զիս, չկրցայ զսպել արտասուքս :

Բժիշկը զգաստացաւ, ներողութիւն խնդրեց իր անմեղ կատակին համար : Իր սենեակն եմ, զոյգ քոյրերուն հետ : Խստիւ յանձնարարեի էին ամէն 15 օր ներկայանալ ապաքինումիս ընթացքը քննելու համար :

Ես ալ կարօտն ունէի զիրենք տեսնելու, թէեւ ամէն անգամ հիւանդութեանս ծանրութեան մասին տրուած մանրամասնութիւնները յետնեալ վախ ու սարսափ կը պատճառէին :

Չօրակոչի հրաւերներուն հանդէպ կը մնայի ընդարմացած, այդ նոյն վախին պատճառաւ : Եթէ միայն քոյրիկս նահանջողներուն, ազատուածներուն մէջն ըլլար : Այսպէս ամէն երեկոյ, ես որ վերջինն էի գործարանը լքող՝ երբ տնօրէնը հոն էր, կ'աճապարէի տուն, նոր, բարի լուրի մը յոյսով :

Չօրահաւաքը անշուշտ ժողովրդական խանդավառութեան արժանացող հրաւէր մը չէ : Եթէ անկէ խուսափելու մէջ թրքահայ տըղամարդն ու անտուն մնացած երիտասարդը, տարի եւ ամիսներ տեւող դժբախտութիւններէն ընկճուած, չքմեղացուցիչ պատճառներ ցոյց կրնային տալ, Ալէք-պօլի հայ տղամարդոց վերաբերմունքին մասին տխուր եւ նոյնքան այպանելի լուրեր կը շրջէին, խուլ էին «Աննիրալ մեր դոներուն» հասած ըլլալու ահազանգին :

Քաղաքի միակ մեծ գործարանի մը տնօրէնին դրասենեակի ըսպասեակի պաշտօնիս բերմամբ, ամէն շշուկ ու տգեղ արարք հոն կ'արձագանգէին, եւ երազկոտ պատանեկութիւնս քիչ մ'աւելի կը խռովէին :

Թէ ի՞նչպէս Գիւմրեցիներուն մեծամասնութիւնը, բռնահաւաքի միջոցաւ զօրանոց տարուելէ, հոն տասնեակ մը օրեր մարզուելէ եւ զինուելէ յետոյ, դէպի ճակատ ճանապարհներէն կը փախչէր, իր զէնքը նոյնիսկ կը ծախէր թուրքին, որոնք Ախուրեանէն հարաւ, Ադ-Պապայի Լեռնաշղթայի գիւղացիներ՝ կը վխտային Ալէք-պօլի շրջակայքը՝ այլազան առաքելութիւններով :

Ու ա'յլ պատկեր :

— Մեր ո՞ր հայրենիքն է վտանգի տակ : Գաղթական չե՞նք հիմա : Նո՞ր մտքերնին ինկաւ որ մենք ալ Հայեր ենք :

Դժգոհ էր զազթականը անտարակոյս :

Ո՞վ էր սահայն մեղաւորը :

Տրտունջ կը մաղէր զազթական տարեց կինը : Ան, որ վերապարողներուն գոյութեան բովանդակ հոգերուն պատասխանատուութիւնը իր վրայ առած, հանդիստ, դադար չունէր, արթուն, ինքնամոռաց : Ան, որ լեզո՛ւ անդամ ունէր ե՛ւ իրենները խրախուսելու, ե՛ւ գանդատ ցրուելու առ որ անկ կը սեպէր, իրաւամբ կամ ոչ : Ան, որ երախայի մը, գիւմրեցի, յուզարկաւորներու թափօրէ լսած էր՝ «Գաղթականի տղայ չկա՞ր որ մերինը մեռաւ», եւ տակաւին աւելի մեղմ, եւ սահայն իրեն համար կ՛ծու ակնարկութիւններ, փողոցը վազող ջուրի ծորակներուն մօտ, հացադործի, նպարավաճառի խանութներուն մէջ, առանց մոռնալու պաշտօնատուներու առջեւ իր կրած սաստերը՝ ինքը հոն՝ անլեզու : Եւ ո՞վ էր որ զազթականին հացարածին թղթիկ կը հայթայթէր . գիւմրեցի քաղաքապետութի՞ւնը, թէ Ամերիկացիներէն հովանաւորուած հիւսուածեղէնի գործարանին տէրերը :

Բայց ո՞վ էր երբեմն երգողը՝

«Կովկասի՛ քաջեր, խմբեր կազմեցէ՛ք՝

«Քաջ Անդրանիկին օգնութեան հասէ՛ք» :

Ի՞նչ հեզնանք : Որքա՞ն դառնութիւն, ո՞վ Հայաստան :

Նժդեհ կը շարունակէր ուրեմն իր օրական տողանցքը :

Մերթընդմերթ գինուորացուներ կը տարուէին կայարան, օդա-կի մէջ առնուած՝ կարծես գերիներ :

Հանդիսաւոր պատարագ եկեղեցիներէն, զի Հայը, մանաւանդ Գիւմրեցին, բարեպաշտ է, եւ ան Հայաստանի ամենազուարթ ժողովուրդը՝ անհազորդ է անհազանգի կոչերուն :

Դարձեալ անապարանքով տուն եմ վազեր, աւելի կանուխ, կայարան դեգերելու մտադրութեամբ :

Ո՞վ կը տեսնեմ :

Սրբուհիմ է, մեր Սրբոն, մօտիկ հօրեղբայրներէս միուն՝ Համազասպի միակ աղջիկը, թէեւ այդ պահուն տխուր, բայց միշտ սիրուն :

— Քոյրիկդ տիւ եւ զիշեր իրար խառնած Կարնոյ հայութիւնը թնամիէն հեռացնելու գործին լծուած է, անոր շնորհիւ է որ մենք ալ կրցանք կայարան հասնիլ՝ վերջին «կուկուչկա»ներէն մին չփախցնելու համար :

— Ուրեմն ո՞ղջ է : Ինչո՞ւ ձեզի հետ չեկաւ :

— Վերջը կը խօսիք, աղէկ է, ողջ է, կը բաւէ, հէլպէք օր մը մէջտեղ կ'ելլէ : Աղջիկը եկեր է որ օգնես իրենց՝ սենեակ մը գտնելու, տեղաւորելու, ճամբան կը խօսիք : Անան է :

Յը մխրճուինք քովի փողոցներուն մէջ: Միշտ աճապարող եղած եմ ամէն գործի մէջ: Սրբոյիմ ձեռքէն կը քաշքշեմ, որ ինձ հետեւի: Ինչքա՞ն վազվզեր ենք, ձեռք-ձեռքի, մեր տանիքներուն վերայ, կալերուն ու պարտէզներուն մէջ: Յը վազեմ գրեթէ հիմա՝ յիշելով այդ անվերադարձ երէկը, իրեն հետ մեր պատերու մըշաղիմ տակ անցուցած երանելի, անհոգ պահերը, մեր խաղերը՝ «տունտեղ» երթալ, «խալա-խալա» խաղալ: Նա՛ տարեկից, ամէն բանի տեղեակ, անուշ ու մէկիկ-մէկիկ կը պատմէր, կը սորվեցնէր ինձ կեանքը, գորս կ'ընդունէի մեծ ապշութեամբ, այլ հետաքրքրութեամբ մանաւանդ:

— Մի՛ քաշքշեր, չեմ կրնար վազել:

— Բայց առանց քաշելու ալ դանդաղ ես: Տե՞ղ մը կը ցաւի:

Սրբոյիմ երկու ոտքի մատները հալած-թափած էին, Երզնկայէն նահանջի օրերուն սառած: Կարնոյ մէջ ըստ կարելւոյն ինամուշուրու բախտը ունեցեր է, բայց դեռ կտրուածքներուն տեղերը կայուն վիճակ չունին: Լսեր էինք նման դժբախտ պատահարներու մասին տխուր նկարագրութիւններ, եւ ահա աչքիս առջեւ, իմ աղուոր զարմուհիս անոր զոհերէն է, ինչպէս շատեր մեր գիւղէն, մեր գաւառէն՝ մեծամասնութեամբ ոտքի եւ ձեռքի մատներ կորսնցուցած՝ կին եւ երախաներ, եւ ա՛յլ հայրենակիցներ:

Գրկեցի զինքը, համբուրեցի երկար, մէկէն զուարթացաւ, մեծ մխրթարութիւն ինձի, որ իրենց օգտակար դառնալու աճապարանքիս մէջ, քրոջս մասի՛ն միայն հարցուցեր էի, եւ ո՛չ իրենց կրած պատուհասներուն եւ որպիսութեան, անգիտանալով նոյնիսկ իր փոքր եղբոր, Վաղարշակի գոյութիւնը:

Մայրը՝ Սանդուխտ հարսիկ, մեր շրջանի գեղեցկուհիներէն էր, Ձմշկածագ քաղաքի յայտնի վաճառականի աղջիկ, գիւղ եկած էր Համագասպ հօրեղբոր գեղեցկութենէն հմայուած, կը մնար «չփացած», եւ գիւղը հարս դացողներուն պէս, «անպէտք արարած», ձեռքը «մոխիրը խառնելու» անատակ: Մեկուսի կ'ապրէր, տան եւ կից պարտէզին մէջ, դուրսի գործերը «քաղքցի աղջկան» վայել չեն: Ինձ հետ խիստ մայրական էր, թէեւ երբեմն շատ «ձուկտան» կը գտնէի. մեր տոհմի հարսներուն հետ իր յարաբերութիւնները մշտական էին եւ սերտ: Ամուսինը՝ «իւր փէշերուն» մէջ կը պահէր դաշտի աշխատանքէն վերադարձին, եւ թոյլ չէր տար իրեն տարեկիցներուն երեկոյեան հաւաքոյթներուն մասնակցիլ, թէեւ իր ընդունելութեան երեկոները կը յարգուէին, որոնց սպասարկութեան համար ներկայութիւնս անհրաժեշտ էր իրրեւ ամենէն մօտիկ տարեց պատանին:

Նահանջի պատմութիւններով մէկ-քանի դուռ կը զարնեմ: Բախտով մեր գործարանի բանուորներէն մին սենեակ մը ունի՝ կը



վարձենք եւ վերադարձին Սանդուխտ հարսիկին օրհնութիւններուն վերջանալը կը սպասեմ «Քրոջդ կտորն ես» կրկնութիւններով :

Դէպքերուն արագութեան հետ կը կորուսին նաեւ անոնց հետքերը, նոր գաղթը դադար չունի այլեւս : Տարիներ յետոյ նոր հանդիպում Պոլսոյ մէջ, ուր են նաեւ Համագասպ հօրեղբօր Խաչատուր եղբօր կիներն ու երկու աղջիկները՝ Ագապիմ ու Եղիաբէքը : Ասոնց եղբայրը՝ Յովհաննէս Անդրէասեան, ջարդէն առաջ Ամերիկա գաղթած բանուոր, Նիւ Եորքի մէջ Ղեւոնդ Արք. Դուրեանի սպանութեան դործին իբր մեղսակից 10 տարի կը բանտարկուի, իսկ հայրերնին, որ նոյնպէս պանդուխտ կ'ապրէր ի Պոլիս, հոն Ապրիլ 24-ի (1915) բռնահաւաքին զոհերէն եղաւ :

Գացի Սրբոյեմց այցելութեան : Ոչ թէ անոնց երէկուան նորակերտ, բազմալարի տունը, որուն սենեակները դորգածածիկ էին, հողայտակները հաւկթի իւղերով փալիւուն, որոնց վրայ քալելը իսկ ու իսկ կոպտութիւն էր եւ ոճիւր, այլ սենեակ մը, դուռ ու պատուհանով : Անցայ մօտիկ ուրիշ համազիւղացւոց խրճիթները, ամենուն ալ պատմութիւնները նորութիւն չեն, նոյնքան քստմնելի . շատերուն ականատես էի, եւ, իմ կարգիս, զրկանքներ կրած, եւ սակայն այնքան շուտ մոռցած էի, որ անոնց հաւատալս չէր դար :

Քաղաքն ալ արտակարգ եռուզեռի մէջ կը գտնեմ այդ Կիրակին : Ճիշդ է միւս օրերը գործարանը փակուած կը մնայի, ու անոր տուած համեստ աշխատանքին ամբողջովին նուիրուած :

Կ'անցնիմ նոր եկող համատեղացիներու մօտ : Տուն ըսել չեմ համարձակիր, ծածքեր, անկիւնները կապոց, ոմանք ոտքի, մաս մը ծալապատիկ նստած, ոտքերնին բոպիկ, ձիւնին մէջ թափած մատներնին փնտուել կը ջանան, անմատ ձեռքերով, զլուխ օրօրելով անոնց պարսպ թողած տեղերը կը շոյեն, ու կը խօսին : Ի՞նչ կը մըրթմըթան, Աստուած՝ իմ : Յաւ ու գանգատ :

— Մեզի չափ ալ չդիմացան : Ու հերոս «Երզնկացի»ներէն կը բակ կը տեղայ Կարմոյ հայ կոչուած զօրքին ու զօրականներուն վրայ մանաւանդ, որակումներով այլազան, այլասերած, վախկոտ, հայրենադաւ ու դաւաճան :

— Անդրանիկ : Ի՞նչ կրնար ընել :

— Յոյսերնիս, հաւատնիս Ան էր : Ի՞նչ ըրաւ :

— Թուրքը էրզրումէն հեռու պահելու յարձակումներով ամէն ինչ փորձեց :

— Զինքը մտիկ ընող, ու իր կողքին միմիայն վերապրող երկտասարդութիւնն էր, անվարժ, այն ալ թափթփուիլ գէնքերով, երբ անդին բերդերուն մէջ ինչե՛ր ըսես չկային, մօսին, թնդանօթ :

— Այդ խեղճերուն ստոյգ մա՛հ անգամ առաջնորդողներ չկա-

յին, անոնք ուր երթալնին չէին գիտեր, Անդրանիկ քանի՞ կտոր ըլլար :

— Բերդերէն մէկ հատ թոփի «կիւլլէ» չինկաւ թուրք զօրաց շարքերուն մէջ, մարդը ի՞նչ կրնար ընել :

— Երբ տեսաւ որ մնացեալ Հայն ալ իրեն հետ կոտորել պիտի տայ, սիրտը փլաւ ու քաշուեցաւ :

Վախն ի վախ առիթ կը փնտռեմ, քրոջս մասին կը հարցնեմ :

— Ծօ', դուն մեր Վարդանոյշին եղբա՞յրն ես : Չըսէի՞ր :

Մին վրաս ցատկեց, սկսաւ համբուրել, ներսս վախ մը մտաւ գէջ նշանակութեան, երբ յանկարծ դռնէց .

— Կտրիճ անոր կ'ըսեն, «մինչեւ վերջին Հայը Կարսի դռնէն ճամբայ չդնեմ, ես հոս եմ» կ'ըսէր :

— Հիմա՞, հիմա՞ :

— Ծօ', մի՛ վախնար, Աստուած կը պահէ իրենպէսները : Սարը Ղամիշ հասած ըլլալը որոշ գիտեմ, երդում կ'ընեմ որ հոն հասած է, Տիկիմ Ծուշանիկ Տէր Գրիգորեանին մօտ տեսնողներ եղած են զինքը :

— Աստուած իրեն ու իրեններուն երկար կեանք տայ, ամենուս ալ բանով մը օգնեց :

— Ինչպէ՞ս թէ ուրախ չեմ, կը պատասխանեմ Սրբոյի հարցումին, ու միասին կը վերադառնանք հօրեղբորս տնակը :

Իրապէս արտակարգ Կիրակի մը : Նժդեհի ձիաւորներն ալ կատաղած են, մեր տան եւ կայարանի հարթութեան վրայէն փոշի ցրուելով վրանիս կը վազեն : Կէսօրէն վերջ Ալէք-պօլի հարաւի հարթակին վրայ բացուող սրճարաններուն կողմն եմ՝ Մկրտիչ տայիս(\*) տեսնելու յոյսով, հոն ուր վերջ կը դտնեն քաղաքին այլեւայլ հանդիսութիւնները, անշուշտ զինարբուքները մանաւանդ, նաեւ Ս. Կոյսի արձանը առաջնորդող թափօրները : Կ'ուզէի մեծ մօրեղբորս յայտնել քրոջս մասին ունեցած լուրերս, ու անխուսափելիօրէն անոր կողքին լուռ մտաբերել իր քոյրը, Զմրուխտ մամիկս, իր միւս եղբայրը Յովնան տայիս, անով-տեղով մահուան ճամբաներուն վրայ : Վերջիչելու մամիս այցելութեան ատենները, որ ժամանակ երբեմն ջորիս կ'անցընէի Վերի Մուռնայիէն, հիմնովին քարուքանդ, տուներուն յատակազծի վերջին քարերը միայն թողուած՝ իրենց տեղերը եւ փողոցները դժելու համար : Քոսան թէ երեսուն տարուան պատմութիւն մը հազիւ ունէր այդ աւերածութիւնը, հրդեհով սկսածը մարդոց կողմէ ամբողջացած : Մամիկս հոն ծնած էր, մեծկակ զիւզի մը յատակազիծն ունէին իր աւերակները, որուն բնակիչներէն դոյզն մաս մը միայն ինքզինքնին նետած էին քիչ մը վարձ՝ Վարի Մուռնայի, Ծակտիփ

(\*) Մուռնայի Մկրտիչ եւ Յովնան Նագարեան մեծ մօրեղբայրներ :

կոչուած մեծ ժայռին հարթակին վրայ, հոն նոր տուներ շինած, ու կ'ապրէին վերի իրենց հողերը մշակելով:

Նախ Տաճիկ, ու ապա Քիւրտը անցած էր վերին Մուռնայի կոչուած շէնէն:

Այժմ իրարմէ աննախանձ: «Վեր», «վար», քարուքանդ:

Կարիւնէն փրթած մարդկային կծիկէն ի վեր, գործէս դարձէն քիչ անց, կը նետուիմ փողոցները, կը վերադառնամ շատ ուշ: Զըլլային ճակատի փլուզումին լուրերը, ինքզինքս կը զղայի ապահով, Հայաստանի անկախութեան մը բոլոր տուեալներով, քաղաքի մը մէջ, որուն բացարձակ մեծամասնութիւնը հայութիւն էր:

Գերազանցապէս հայաչունչ, ամենէն անառակ այդ քաղաքը, որ պատրաստ էր բռն մը հող տալ ածիւններուս, հոն զիս ապրեցուց իբրեւ Հայ, իբրեւ ազատ Հայ, եւ ուրեմն նաեւ ազատ մարդ՝ կեանքիս ամենէն հաւատաւոր ամիսները:

Պատանեկութեանս օրերուն մէջ երազած ազգային անկախ կեանքի բոլոր խարկանքները կային այդ քաղաքին մէջ: Հայկական նոր հարստութեան մը օրերը կ'ապրիմ, որ իրաւ է դեռ անուն չունի, եւ կան շատ մը կարօտներ սրտիս մէջ: Իրաւ է եղաւ կարճատեւ, սակայն ազատութեան բոլոր յատկանիշներով: Նորատեսակ վարչաձեւի մը մեղրալուսնի վաղանցուկ շարքներ, զորս բնաւ այլեւս պիտի չկրնայի ունենալ այնուհետեւ, եւ այլուր, գէթ իբրեւ Հայ:

Զէի կրցած չանդրադառնալ Գարախանեանի քանիցս, եւ առանց բացատրութիւն տալու կրկնած խօսքին՝ «Ասոնք չեն դիտեր թէ ի'նչ կը սպասէ իրենց», ակնարկելով գործաւորութեան ներկայացուցիչի մը պահանջներուն, ու ահա, յանկարծ, Պրեսք-Լիքոնվսֆի կոչուած բարբարոս անուն մը կու դար պղտորել երազէն իրականութիւն դարձած վիճակ մը, Հայուն ազատութեան սպառնացող դաշնադրութեան մը սեւ ուրուականը, որ այդ քաղաքէն կերպարանք առած պիտի խեղդէ այդ ազատութիւնը, եւ դեռ աւելին՝ մահ պիտի սփռէ:

Եւ այդ, թէեւ տարազիր, դադթական, մեր խեղճուկ կացարաններուն մէջ մէկտեղում, հաւաքոյթ կար ընտանեկան, ամէն երեկոյ: Ծովագ Աշխարհէն մինչեւ Շիրակ քշուած վերապրողներս, երբ դա'րձեալ սկսած էինք յարմարիլ, «Եօլա» երթալ մեր նոր պայմաններուն հետ: Հոն, այդ երեկոները, խօսակցութեանց նիւթը իրաւ է չէր փոխուեր, նախ փլուզումի եւ անդարձ կորուստներու ոգեկոչում, ու ապա, բռնադրօսիկ, դոնէ երեւոյթով անփոյթ ու հոգերէ գուրկ սրախօսութիւններ թղթախաղերու ընթացքին, խնդուք, եւ ո՛վ դարմանալի, նոյնիսկ Հիւրասիրութիւններ:

Ի՛նչ խորթ, չարաչուք զոյգ մը անուն՝ Պրեսք-Լիքոնվսֆ: Ուրկէ, անձանթներէ բղխած պատգամ մը, որ կը նշանակէր դա'րձեալ

աւեր, փախուստ, հայրենի հողերու գերութիւն, մարդկային թշուառութեան շղթային նոր օղակներ կռելու անիծեալ դաշինք:

Գալիք այս անհամար աղէտներուն տեղեակ, եթէ ոչ գիտակից, նոյն Ալէք-պօլ քաղաքին մէջն էր որ, շաբաթներ, ամիսներ, թիկունքին մէջ ազգային բանակ մը կազմակերպելու ձախողութենէն յետոյ, Անդրանիկ, Ազգային Հերոսը՝ այժմ Զօրավար, ճարահատ, այդ բանակը վտանգին աւելի մօտիկ տեղ մը գտնելու ակնկալութեամբ Թիֆլիզէն կը մեկնի դէպի հայ պատմական հողերը, եւ այս նոյն Ալէք-պօլի մէջն է որ կը պարպէ իր հողիին մաղձը, երբ կը տեղեկանայ տխուր իրականութեան, այս բազմամարդ հայութեան վերաբերմունքը՝ իր հողը, իր ընտանիքը, իր սեփական կեանքը պաշտպանելու սրբազան պարտականութեան հանդէպ անտարբեր, յանցաւոր, հոս է որ ան կը պայթի ճառով մը, որ իր շնորհներէն դուրս կը մնար մինչ այդ, ու մեծ ներշնչումով, ինչպէս չէին դադրեր արձազանդ ըլլալ լսողները, կը դատափետէ անոր եւ շրջակայքի հայ բնակչութեան անհոգութիւնը, ընչաքաղցութիւնը, հայրենագաւութեան համոզ աւարքները, հոս, Հայոց Առաջնորդարանի պատշգամէն, խուռներամ ամբօխը՝ որ եկած էր իր Հերոսը տեսած ըլլալու փառքը միայն վայելել, բաւ համարելով զինքը միայն զրկել Թուրքը կեցնելու հրաշատու առաքելութեան, թերեւս իբրեւ Ս. Կոյսին համադօր: Հուռոտներու, անվերջ կեցցէներու մէջ երեւացող Անդրանիկ, այդ կեղծաւոր ժողովուրդը կը խարանէ իրաւացիօրէն, ու կը մեկնի յաջորդ օրը, միշտ ձեռնուռայն, միշտ նոյն ողիէն առաջնորդուած՝ ինքզինքը հայրենիքին նուիրած, ինքն ալ չդիտէ ինչպէս, այդ հայրենիքի բերդերէն միտն վրայ պարգելու յոյսով ա՛յն դրօշակը, որ դրաւականը պիտի ըլլար մեր դոյութեան, մեր կամքին, մեր իրաւունքներուն պաշտպանութեան՝ Հայաստանի անկախութեան:

Ու ամէն օր կ'երթամ, կը փնտռեմ, կը խօսեցնեմ նորեկներ, ի՞նչ լսելու համար: Այդ աղնիւ Հայուն բոլոր յոյսերուն փշրանքներուն պատմութիւնը, Երզնկայի, Բաքերդի, Կարնոյ, Սարը Ղամիշի, Կարսի ճամբաներուն վրայ ցրուած:

Դժբախտ Հերոս: Ուր էր նա ինքը այժմ: Իր չար բախտին ճիրաններուն մէջ: Իմ սրտիս ալ, մտքիս ու Հայու երազներուս ալ այնքան մօտիկ, կրկնակի հարազատ, երաշխաւորը մեծադոյն իղձերուս:

Իղձեր, որ կը փլչին քիչ մը աւելի, իւրաքանչիւր պատմողի դառն եղբակացութիւններէն:

— Ծօ՛, ո՞ւր մնացիր, ի՞նչ ես ընկեր փողոցները, աչքս չեմ կրնար դոցել, երբ դուն դուրսն ես: Անան է:

Զի դադրի խօսելէ, կը զգուշանայ կշտամբելէ, սիրտս չ'ուզեր կոտրէ:

— Եկուր չնթռկէ : Առտուն կանուխ գործի ես : «Իշտէ» քոյրդ ողջ—առողջ է, ուր որ է մէջտեղ կ'ելլայ :

Ի՞նչ գիտնայ խեղճ մամիկա, որ ատենէ մը ի վեր իր թոռնիկը ո՛չ թէ նահանջ, այլ ներարչաւ կ'երազէ, ներարչաւ մինչեւ հոն, իր ծննդավայրը, իր ծնողաց տաք եւ կարօտեալ գրկին մէջ, փոխանակ ետեւ, ուր հորիզոնը փակողը Կովկասեան Լեռնաշղթան է, անկէ անդին Ռուսաստան, եւ անծայր ուղի, անյայտութիւն :

Միշտ կէս հանուած կը սպրդիմ անկողին՝ «ա՛լ չպիտի տեսնեմ ծնողքս» մռայլ ինքնավճիռիս մէջ ինքզինքս փաթթելով : Դարձեալ երազ, ամէն գիշերուան պէս, սպառազէն դուռդի մը գլուխ՝ Տերսիմ եմ, ծնողացս, եղբօրս համբոյրներէն խոյս տուած Աղային խոնախը, ձայն կու տամ դռնէն, դամբուր չէ մոռցած գիս, իր կազկանձիւնները բարեկամի այց կը յայտնեն, դուռը կը բացուի, Խաքունէ, Աղայէ, Մեմբէ, որ ինծի չափ հասակ նետած, մեծցեր է, ահա վէլի Աղան, ցոյց կու տամ գէնք ու գրահս, հիացական աչքեր կ'ողողեն համազդեաստ : Եկեր եմ նորոգելու մեր յաւիտենական բարեկամութիւնը, նոր պայմաններու, նոր կարգերու մէջ, ազատ, անկաշկանդ, համահաւասար եղբայրական ոգիով :

Ու հոտ գիս տանող ճամբան իբր մկնակէտ ունէր բազմիցս լսած ու այլեւս ականջիս մէջ տուն—տեղ եղած Անդրանիկի դուշակութենէն կամ պատգամէն խօսք մը, որուն իրագործումին դացած էր, «Եթէ մենք մեր հողի չնչին մասնիկի մը վրայ գէնք ձեռքերնիս չներկայանանք դալիք հաշտութեան ժողովին, մեզի բան տուող չ'ըլլար» :

Գացեր էր ուրեմն այդ ճամբան հարթելու, որուն համար իմ առժամեայ բաժինս երազն էր, եւ ի՞նչ կը պատմէին սակայն Կարինը լքողները, նոյն Անդրանիկի դառն ձախողութեան հետ իր ուրիշ մէկ մարդարէութիւնը՝ «Ասոնք Կա'րսն ալ կու տան, ասոնք Կա'րսն ալ կու տան» :

Եւ «ասոնք», մե'նք ենք, բոլո՛րս, հայրենիքի եւ մեր դոյուրութեան կոչին անասատողներս, մե'նք, Ալէք—պօլցիմերս՝ հիմ ու նոր, «Ս. Կոյս»ի արձան պտըտցնողներս, դայն թուրք բանակին իբր պատուար ցոյց տուող վատագիներս :

Գործարանը գետնախնձոր կը ծախէ, կէս գին, աշխատաւորութեան միայն յատուկ, Անան եւ ես պիտի ունենանք 50 քիլօ : Հոն կ'աշխատին նաեւ մեր Ստեփան հօրեղբայրն ու աղջիկը՝ Տիրուի (Տիրիկ ապլան) : Պոչ բռնած մեր կարգին կը սպասենք, դոհունակ համբուրութեամբ : Անձամբ ներկայութեան պահը աւարտելուն՝ կը վերադառնամ տնօրէնի գրասենեակին դուռը, բեռնակիր ճարելու, տուն փոխադրելու գործը ձգելով միւսներուն :

Այդ գործին համար Անաս պահ մը կը բացակայի, «վերադարձին ի՞նչ տեսնեմ աղէկ», կը պատմէ տուն դարձիս :

— Մեր Տեփանը, մեր տոպրակէն իրենին մէջ կ'անցընէ բուռբուռ :

— Է՛հ, ի՞նչ ըրիր, կ'ըսեմ ծիծաղելով :

— Խնդալիք ալ բա՞ն է, աչքերուս չէի հաւատար, «հէմ ըլ» բանս բռնուեցաւ :

— Ապա կը տեղեկանամ բեռնակրին հետ իր կատարած սակարկութեան :

Խուսական ուրբին՝ 100 կոպէկ՝ տեղացիները կը կոչեն մանէք, որ քսան շահի է, ուրեմն 5 կոպէկը մէկ շահի :

— Պարկս քանի՞ով տուն կը տանիս, ու Անան բեռնակրին կը բացատրէ տան տեղը :

— 13 շահի կու տաս, կ'ըլլայ պատասխանը :

— Ես այդքան չեմ տար, եթէ համաձայն ես՝ մանէթ մը :

— Տէ՛ր լաւ, է՛լի, 15 շահի ալ կը տանիմ (75 կոբէք) :

— Գործի՛դ դնա, մա՛րդ, շահի-մահի խելքս չի պառկիր, մէկ մանէթէն աւելի չեմ տար :

Մարդն ու շուրջիները կը սկսին քահ-քահ մը բարձրաձայն :

— Ճաթելու չափ խնդացէք, մանէթէն աւելի չեմ տար :

Բեռնակիրը կը շալկէ, տուն կը հասնին : Անան շունչ չառած՝ հարսիկիս .

— Աղջի՛, ինքը 15 շահի ուզեց, ես մանէթ մը ըսի, չըլլայ աւելի տաս :

Երկար բացատրութիւններէ վերջ, որ Անան մտիկ իսկ չէ ըրած ,

— Քանի որ «էտէնկ» է, նորէն մանէթ մը տուր :

Գրասենեակին դրան առջեւն եմ : Ներսը տնօրէնը աթոռին կռթնած, աչքերը առաստաղին՝ դոց : Ներկայութիւնս կը զգացնեմ, ներս կը կանչէ :

— Դուրսը ի՞նչ կայ-չկայ : Եկող-գացող եղա՞մ :

Բացատրեցի իմ բացակայութեանս պատճառը :

— Սովորականին պէս : Ոչ ոք ներկայացաւ ձեզ տեսնելու : Այսօր գործաւորութիւնը ուրախ է, յառաջիկայ մթերք ցրուելու աղդերը կը մեկնաբանեն :

— Ուրիշ ոչի՞նչ : Լաւ որ անտեղեակ են, լուրերը գէշ են, գործարանն ալ պիտի պարտաւորուի նահանջի ճամբան բռնել :

— Գործարան մը ինչպէ՞ս կրնայ նահանջել... : Մեքենանե՞րը... :

— Ուրեմն հը փակուի: Ո՛չ ոքի ոչինչ չյայտնես, ո՛չ իսկ ձեր տանը կամ ոեւէ մտերիմի:

Այս տխուր լուրէն կբաժ, մեր դրան առջեւ կ'իյնամ իսկական նահանջողներուն գիրկը, Հայկակ եւ Արմենակ: Հօրեղբօրս մօտ թողած իրենց աւանդները առնելու եկեր են: Կը մեկնին նոյն գիշերը՝ ուղղակի Թիֆլիզ, ի՞նչ ընելու: «Ձեռք գիտեր» կ'ըլլայ պատասխանը:

Պատմելու արտօթակ չունին, ո՛չ մէկ բառ կրնայ հիասթափութիւննին արտայայտել, տեսած են առաջաւոր դիրքերուն խառնի-ճաղանճն ու ողորմելի վիճակը, ցուրտ, բուք, դասալքութիւն:

Կարնոյ մէջ յաջողեր են շուտով քոյրս գտնել, նոր մտատանջութիւն մը աւելցուցեր են անոր հոգերուն՝ «Ճեմարանի փակումը» յայտնելով, նաեւ Ալէք-պօլ գտնուիլս, հասցէս, ի բաց առեալ հիւանդութիւնս:

— Վերջին անգամ ե՞րբ, եւ ո՞ւր տեսաք քոյրս:

— Ա՛յ տղայ, մենք ի՞նչ ուռուցիկ հաւատքով ճամբայ ինկանք, հարսնիք երթալու պէս, բայց չես կրնար երեւակայել ի՞նչ տարտաբոսի մէջ ինկանք:

— Ըսել է ա՛լ բնա՞ւ չհանդիպեցաք իրարու:

— Ի՞նչ լաւ որ մեզի չընկերացար. լուռ եւ համբոյրներով բաժնուեցանք: Հայկակիմ հետ ընդմիշտ, Արմենակին հետ մինչեւ փրանսա:

Իսկ մեր դործարանը կը փակուէր ինքնաբերաբար: Որեւէ նիւթ կարելի չէր այլեւս ստանալ եւ փոխադրել: Բանուորները, մեծ մասամբ դաղթական, նորէն զլուխնին առած լոխի-մնջիկ կը հեռանային: Ա՛հ, ինչքան զլխիկոր՝ մանաւանդ ամօթով, իրենց լաճերը որբանոցներէն քաշած, որ այնուհետեւ միասին ասլրին կամ մեռնին, երթալու հեռու, միշտ աւելի հեռու, Սիպերիոյ, Ճաբոնի, Պաղաղա-կանէն ամերիկեան գիծերու վրայ:

Կարս – Ալէք-պօլ գէի որբանոցները արդէն տարի առաջ փոխադրուեր էին մեծ մասամբ Վրաստան, հայ հարուստներու կալուածներուն եւ ապարանքներուն մէջ: Նորեր կու դային՝ առժամեայ պատսպարան գտնելու:

Թուրք բանակը հասած էր Կովկասի ճակատին վրայ նախապատերազմեան իր սահմանները, ու կը պատրաստուէր ներխուժել Կովկաս՝ յենուելով Պրէսթ-Լիթովսի մէջ ստորագրուած դաշնագրին:

Ինքզինքը Ռուսաստանի համայնավար վարչաձեւէն անկախ հռչակած, անդրկովկասեան ժողովուրդներու միացեալ կառավարութիւնը՝ Մէյմը, պատրաստ էր ընդունելու այդ դաշնագիրը, որ նախկին փոխարքայական հողամասէն կ'անջատէր հայկական դաւառնե-

րու մեծ մասը, փոքր մաս մը վրացարձակ մարզէն եւ ոչինչ թաթարաբնակ հողերէն: Ուստի Թուրքերու յառաջացումին առջեւ ամենէն վտանգուածները անոր նախկին «հպատակ»ներն էին, որոնք լաւ կազմակերպուած քարոզչութեան մը ճնշումին ենթակայ, կը բռնէին դէպի հիւսիս փախուստի ճամբաները:

Բաւական եղաւ, ինչպէս միշտ, որ մեր երկրացիներէն ընտանիք մը նախաձեռնէ նոր գաղթը, ու ան ստանայ զանգուածային եւ խուճապային բնոյթ:

Հօրեղբորս երեք մանչերը որբանոցէն դուրս եկան, եւ մեր ընտանիքն ալ աճապարեց հեռանալ, առանց ինծի: Այս նոր գաղթականութեան հաշտ աչքով չէր նայեր վրացական իշխանութիւնը, որ գերակշիռ դերք ունէր Սէյմին մէջ, քանի որ անոնց ապաստանը միմիայն Վրաստանը կրնար ըլլալ: Անոնց Թիֆլիզ մուտքն ու բնակութիւնը արգելուած էր, ուստի կը թափուէին Նաթլուղ կոչուած կայարանը, ուրկէ անոնք կը ցրուուէին շրջակաները, ուր որ կրնային տեղաւորուիլ, յատկապէս Հալապար թաղը, Մետեխի բարձրաւանդակին վրայ, որ արդէն վաղուց, նոյն պատճառներով հայկական դիմագրծ ունէր: Հոն պիտի հաստատուէին մերոնք եւս, առժամաբար:

Մերոնց մեկնելէն մէկ-քանի օր առաջ էր, միշտ դրան առջեւ, կը նշմարեմ երեք-չորս կառքերու իրարու կպած սրբնթաց արշաւը՝ կայարանէն քաղաք, անոնցմէ մէկուն մէջ ծանօթ մը, իր դէմքին այնքան վարժ աչքերուս համար՝ Անդրանիկը, որ իրապէս, վազնիվազ պիտի տեսնէի Առաջնորդարանին մէջ, երբ պահ մը հանգստանալու եւ պատրաստուելու եկած էր՝ ի պատասխան Հայոց սպարապետութեան հրաւերին:

Սէյմի կողմէ Հայոց ուժերուն սպարապետ ճանչցուած Զօր Նազարպէկով եւ Անդրանիկ ծանօթներ էին, ու գործակցած Պարսկահայաստանի երկրամասէն Վասպուրական մտնելու զինուորական արշաւի օրերէն:

Հազիւ վեց ամիս առաջ իրմէն բաժնուած, Ազգային Հերոսին հետ այս խիստ կարճ հանդիպումին դրուազը, որ վերջինն եղաւ, գրելու առիթը ունեցեր եմ իր մահուան յիսնամեակին առիթով, 1978 թուի Սեպտեմբերին, փարիզեան ՅԱՌԱՋ թերթին մէջ:

Նոյնպէս, հօրեղբորս մեկնելէն քիչ առաջ էր, երբ ամէնօրեայ պրպտումներուս եւ յամառ այցելութիւններուս իբր արդիւնք, անակնկալ յայտնութեամբ, նոր հանգչող վակոններու երկայնքին վազվզող իմ անգին քոյրիկս՝ Վարդանայը, որուն հոգածութեան յանձնուեր էր որբերու երկսեռ խումբ մը, Սարը Ղամիշ թափուող գաղթականութենէն հաւաքուած, իբրեւ օգնական լիովին ազգանուէր եւ



անդուզական հայ տիկնոջ մը՝ Շուշանիկ Տէր Գրիգորեանին, որուն միւս օգնականն էր, ինձ համար կրկնակի անակնկալ մը, Կարօ Համտիլեան, Կարմոյ վարժարանին մէջ հսկիչ եւ մարզանքի ուսուցիչս :

Քրոջս հետ էին անշուշտ իր ներքը՝ Տիկին Նարդուհի Զէննէ-եան՝ էջօն, իր տալը՝ Թագուհի եւ տարարախտ ամուսնուն զարմիկը՝ Անդրանիկի կամաւորներէն՝ Պետրոս Մարգարեան, Փիք անուանեալ, Ամերիկայէն եկած ըլլալու իբր յատկանիչ : Նոյն գնացքին մէջ էին բազմաթիւ կամաւորներ, յատկապէս Անդրանիկի եւ Սեպուհի գունդերուն մաս կազմող զինակիցներ, ինչպէս Մեսրոպ Սահակեան, Յակոբ Շահպազ, Յակոբ Գրիգորեան, եւ ա՛յլ Քրի-ձապաղջուրէն եւրիտասարդներ : Ասոնք բոլորն ալ Կարմոյ նահանջի վերջապահներ, իբր հետեւանք նոր ստորազրուած դաշնադրի, եւ սպասելով ազգային նոր գունդերու վերակազմութեան, ազատ արձակուած էին «կամաւորական» բանակի հակառակորդ, ու Սարը Ղամիշի մէջ սոնքացող սպայական կազմէն՝ որոնց քայքայուած բանակը հաւաքելու եւ վերակազմելու առաքելութիւնը տրուած էր :

Կամաւորներու այս բազմութիւնը, իրենց վերջին առաքելութեան եւ նուիրումին ձախողութիւնը, վերոյիշեալ ուսս կանոնաւոր բանակի վկայեալներուն ստոյգ դասալքութեան հետեւանք նկատող, բազում ընդհարումներ ունեցեր են անոնց հետ Սարը Ղամիշի մէջ, եւ հազիւ կարելի եղած է ազգամիջեան կոիւի առաջն առնել, որուն պատիւը կը պատկանի հայ դեռտաի աղջիկներու միջամտութեան : Ասոնք ջանք չեն խնայած տարհամոզելու կամաւորները, դառնօրէն խոցուած, ու առաջն առած են նոր գոհերու եւ նոր վէրքերու :

Կրկին, ծառայելու մտօք, ասոնք ահա միասնաբար, նոյն վրէժէն մղուած, հայ հայրենիք մը կերտելու նոյն խտէալով վառ ու խանդավառ՝ եկեր-հաւաքուեր են Ալէք-պօլ, հոն դտնելու իրենց արժանաւոր պետ մը, գէշ հովիւի մը չենթարկելու իրենց առաջնորդութիւնը, եւ որոնք, միմիայն նախկին Ֆէտայի, անձնազօհ խմբապետներ էին, փորձով վաւերացուած, «դասալիքներէ արհամարհուած» : Եկեր էին իրենց յօժար կամօք ճամբուելու առաջաւոր դիրքերուն վրայ, ուր թշնամին արդէն սկսած էր իր կրծող ժանիքները սրել, նաեւ ներքին մեղսակցութիւններով քաջալեր :

Թոյլ էր այս նախկին կամաւորներուն հաւատքը նոր կազմուելիք ազգային բանակի տարրերուն վրայ, անոր հրամանատարութեան մանաւանդ, ենթակայ Թիֆլիզ նստող՝ քաքար, վրացի եւ հայ տարրերէ կազմուած կառավարութեան, որուն մէջ հայկական շահերը կը բաղխէին մէկի դէմ երկու հակառակորդի : Ու այս վիճակը նոյնպէս անխուսափելի :

Ժողովուրդի պաշտպանութեան համար դա՛րձեալ ցաւագին

պայքար, ազգին անփոյթ եւ զգաստ տարրերուն միջեւ: Ոմանք կը հաւատային հրաշքի, դաշնագրի, թշնամու ասպետականութեան, անոր հետ «եօլա դնալու» հանճարեղ մտքին: Միւս կողմը, դոյզն զանգուած մը, աւա՞ղ, որ ո՛չ տուն ունէր, ո՛չ ընտանիք, այլ կեանք մը լոկ, որուն զնով կը ճզնէր հայրենիք մը ձեռք անցընել:

Եւ ի՞նչ պատեհ առիթ: Թէկուզ ուժաքամ պայմաններու մէջ:

Ալէք-պօլի դուտ հայկական այդ բազմութեան մէջ է որ մօտէն դիտող մը պիտի նշմարէր Հայ ապրելու բնագրին անէացումը, անուազն բթացումը, իր առաջնորդող տարրին սեփական հողերէն բացակայութիւնը:

Արթուն պահող միակ ազգակն էր շողեմեքենաներուն սուլոցները՝ փախուստի հրաւիրող: Մնացորդ Հայաստանն էր պարպուողը: Պարոն Գարախանեանէն բաժնուեցայ իր գովեստները բմպելէ վերջ: Նորածագ «պաշտօն» մը պատճառն էր, որ մնամ իրբեւ իր կողքին վերջին ծառայող: Գործարանը վերջնական հաշուեյարդարի ենթարկողներէն մին ըլլալու շնորհը, որուն մէջ իմ դերս չնչին օրավարձքով, ներկայութիւն մը պիտի ըլլար:

«Քրօջ ուրբանոցը» առժամեայ կայան գտաւ քաղաքին հարաւը, բաց դաշտի եղբրքին, միայնակ, եռայարկ շինութեան մը մէջ, ուր, իրբեւ ամենէն չափահաս, «պաշտօն» էր գիշերային պահակութիւն, ուրեմն գէնք մը կոնակէս կախ, իբր մխիթարանք կամաւորի վրժած յաւակնութիւններու: Ամսական անփոխարինելիօրէն հսկայ էր՝ սնունդ, անկողին, մանաւանդ անբաժան ներկայութիւնը քրօջ, անկէ այլեւս անբաժան, ինչպէս միամտօրէն կ'ենթադրէի այդ պահուն, ու տակաւին, այդ պարագան օր ըստ օրէ կ'արժէքաւորուէր, երբ կը դիտէի այդ փոքր հաւաքականութեան գուրգուրանքն ու սէրը հանդէպ իմ ամենէն, ամենէն հարազատիս, կը լսէի անոր քնքոյշ թեւադրանքները, ժպտուն հրահանգները՝ ամէն ոք իր պարտականութիւններուն, կարգ ու կանոնին հրաւիրող:

Տիկին Մայրիկը, մեծ տնօրէնուհին, Շուշանիկ Տէր Գրիգորեան, տեղաւորումը չլրացած, կրկնակի պատճառներով կը մեկնէր Թիֆլիզ, առաւելագէս ընդհանուրի օգտին, քան անձնական: Հոն, իր լայն շրջանակին մէջ շարունակելու տարիներու քարոզչութիւնը իրերօզնութեան ի խնդիր, եւ կը յուսար կարճատեւ հանգիստ:

Կամաւորները, որբերուն ընկերացող, արդէն զօրանոցն էին: Համտիլեան անյայտ էր շուտով, անձնական պատճառներով: Ծերուկ կամաւոր մը, սպիտակազարդ, եւ սակայն աշխոյժ, կը ջանար ապահովել 150նոց խումբին պարենաւորումը, ու անվերջ կ'երթեւեկէր քաղաքին մատակարարութեան դռներուն եւ որբանոցին միջեւ:

«Վարդանոյշին որբանոցը» յորջորջումը կ'աւելցնէր իմ ալ պա-

տասխանատուութեանս տարողութիւնը: Ինքս իմ աչքիս արժէք ունէի, թէեւ դեռ չէի կրնար թօթափել դառնութիւնս. մինչեւ Էրզրում կամաւոր երթալու ձախողութիւնս կը ճնշէր վրաս, աւելի գեղեցիկ ու մեծ երազ մը չքացեր էր:

Բայց չէ՞ որ ձեռքս գէնք մ'ունէի: Լուրջ կամ հեզոտ շեշտերով ականջս շարունակ կը քերէին անձս «պահապան հրեշտակ» անուանումները:

Երգնկա, կարիմ, դաղթակայաններուն սպառնացող վտանգը, ուր մեծամասնութիւնը կին էր, գինուորներուն կողմէ մղուած յամառ հետապնդումներն էին, անոնց պատճառած զանազան անհամութիւնները: Վախ չկար հոն թուրք բնակչութեանէն, բոլորովին սմբած, նոյնիսկ աներեւոյթ:

Նոր պաշտօնիս առիթով ինծի տրուած հրահանգ-խրատներուն մէջ, Տիկին Մայրիկը, մարդկային այդ կարգի չարիքները քանիցս կը շեշտէր, «Մարդը մարդ է ամէն տեղ», կ'ըսէր, «Պէտք է միշտ զգոյշ մնալ», ու ապա կ'աւելցնէր՝ «նաեւ ամէն ձեւի դողերէ»:

Մեր գլխուն վերեւ, թէեւ բաւական հեռու, Ռուսական նախկին «Գիմնագիտում»ին մէջ էր հայկական բանակի սպարապետութիւնը, իսկ ամենամօտիկը՝ արեւմտեան բացատին վրայ, շարքով դօրանոց-պահեստատուները կային, եւ մինչեւ թրքահայ ձիաւոր վաշտին անկէ մեկնիլը կը կազմէր մեր ապահովութեան լաւագոյն երաշխիքը: Անմիջապէս օգնութեան փութալու պատրաստ՝ մեր առաջին հրացանի պայթումին վրայ:

Մենաւոր պահակութիւնը կը սկսէր ուշ երեկոյեան, ժամը 11-էն վերջ, մինչեւ պաշտօնէութեան անկողին մտնելը, սովորաբար կէս գիշերներն անց:

Գիշեր մը, կէսէն բաւական անց, Ախուրեանի վրայով բարձրացող գոլորշիներուն կը հետեւիմ լուսնի խաղերուն առնթեր, երկրորդ յարկի միջանցքի պատուհանէն: Լեղապատառ ճիչ մը, որբանոցի ներքին բաց դռներէն վայնասուն մը կը փրթի, իբր իրարու խօսք տուած:

«Պէտքարան գացող աղջնակի մը հանդիպող «մարդ» մը, երկրորդ յարկի սանդղակներու գլխէն վար կը թաւալի», այս է դրդապատճառը:

— Մա՛րդ մը, մա՛րդ մը տեսայ, ... փախաւ:

Մեղաւոր ու սարսափահար, հրացանը դրկած կը յառաջանամ սանդղակին գլուխը, շրջապատուած արդէն քրոջմէս ու Թագուհիէն, եւ խումբ մը կիներէ:

Ո՛չ մէկ հետք այդ յարկին վրայ: Բոլոր պատուհանները գոց են, դուռը նոյնպէս՝ ներսէն կղպուած, փայտէ ձողը անցուած, որ իմ

ամէնօրեայ վերջին դործս է: Բացի ննջարաններէն եկող վախի բացականչութիւններէն, զորս լուսթեան կը հրաւիրէ քոյրս, ոչ մէկ ուրիշ աղմուկ:

Կը մնայ գննել գետնայարկը: Հոն, օրուան մէ՛ջ անզամ, մի-նակ հոգի մը քիչ մը սարսուռով պիտի սիրտ առնէր պտտրիլ:

Հոն տանող նեղ սանդուխին վարի աստիճանը հասած, զէնքիս փողը տնկած անջրպետին մէջ, կէս մը մութ, կրակելու պատրաստ, կը լսուի կարասիի մը, աթոռի մը իյնալուն նմանող ձայն, ու ետեւէս համանուագ կոչ մը՝ ամենուն բերանին մէջ պատրաստ.

— Կրակէ՛, շո՛ւտ, ... կրակէ՛: Հո՛ն է, հո՛ն, ... ճի՛շդ դիմացը:

Ձեմ կրակեր սակայն, չեմ իսկ անդրադառնար վարանումիս էութեանը, եւ մինակ ե՛ս եմ բան մը չտեսնողը:

— Կրակէ՛ շուտ, ... չե՞ս տեսնար, հոն է, աչքերը կը փայլին:

Այդ ներքնայարկէն դուրս փախչելու հնարաւորութիւն չունի մարդ արարած մը, ծակուծուկ գոց է, նոյնիսկ մո՛ւկը չի կրնար դուրս սպրդիլ:

— Կրակէ՛, ... կրակէ կը պոռան միշտ ետեւէս:

Ու ես թմրած ըլլալու եմ, ոչինչ չեմ տեսներ տակաւին, ու միշտ սանդուխի վարի աստիճանին վրայ անշարժ՝ կը զգամ սպրդում մը սրունքներուս մէջէն:

Հրացանիս ըլթակին դպչելու պահը այլեւս անցած է, ու սանդուխի գլխէն կը պոռան.

— Կատո՛ւն էր, ... կատուն:

Այո, կատուն է եղեր, սարսափի բացականչութիւնները կը փոխուին տեսակ մը աւազելու, հիասթափ «ա՛հ»երու, որ կը վերածուին զուարճալի խօսակցութեանց: Անոնց նիւթն է մանաւանդ իմ ցոյց տուած պաղարիւնութիւնս, զոր չեմ կրնար ճշդել թէ ի՛նչ բանի կը պարտիմ: Քիչ մնաց մօտի եւ հեռուի զօրանոցները մեր վրայ թափելու հրացանի սրտը տայի, եւ այն ատեն իրաւամբ ինքզինքս երկար ժամանակ նուաստ պիտի զգայի: Մինչդեռ այժմ իրաւ է վախցեր էի, բայց քիչ մը հպարտ եմ, ու արդէն իսկ կ'անդրադառնամ վատ գործի մը մտածումը վանել մտքէս՝ եթէ մա՛րդ ըլլար, եթէ կրակէի՛, եթէ ան մեռնէ՛ր:

Անիծեա՛լ կատու, ան ալ իր մեղքը քաւեց զգացած սարսափին շնորհիւ: Օրեր շարունակ հալածեցի զինքը, թէեւ զիս տեսնելուն կը հեռանար, կը սկսէր մեղմ մլաւիւններ արձակել՝ աչքերը աչքերուս, ներողութիւն կը խնդրէր անշուշտ, ու կը ստիպուէր խոյս տալ:

Ձեմ գիտեր ի՞նչ տեսք ունի այսօրուան Լեհիմականը (երէկ

Ալէքս-պօլ) ընդհանրապէս, ի մասնաւորի մեր մէկ-քանի շարաթերու որբանոցի շրջապատը: Անցած են տասնեակ տարիներ, հոնկէ, այնուհետեւ, երկու անգամ Թուրքը անցած է, հազիւ կրկին իր շինարար սեփական ձեռքերուն անցած, քաղաքը կրած է 1925-ի ահաւոր երկրաշարժին աւերածութիւնները, որմէ յետոյ դարձեալ շինարարութիւն, ու այդ, աւա՛ղ, այնքան մօտիկ Ախուրեանին, որուն աջ ափին նոյն թշնամին կայ դարանակալ:

Անմիջական ապահովութեան եւ գալիք մեծագոյն ահնկալութիւններու ի՛նչ հոգեպարար երեւոյթ էր, պատկերը, ամէն առաւօտ կանուխէն, դէպի արեւելք կարգով շարուած զինամթերանոցներուն անպաճոյճ, այլ ամբակուռ շինութիւններուն առջեւ կատարուող զինուորական մարզանքները: Երբ զեփիւօր, մեր ուղղութեան վրայ, զանոնք հրահանգող բառերը մեզի կը բերէր կտրուկ, խրոխտ, գիշերապահութեան քնաթոր, չէի կրնար զսպել անոնց տեսիլքին պատճառած հոգիս կշտացնող տարբեր այդ հաճոյքը: Կը ցատկէի վերի պատուհաններէն միուն առաջ, կը զիտէի անյագ, մինչեւ որ քոյրս, իր ստէպ-ստէպ հսկողութեան ատեն նշմարէր բացակայութիւնս, ու կշտամբելով զիս անկողին վերադարձնէր, ու հոն ալ կրկին անոնց օրօրովը կ'ընդարմանայի:

Հոնկէ պիտի մեկնէին Ադ-Պապայի թրքութեան հսկելու դացող նախկին կամաւոր ձիաւոր եւ հետեւակ գունդեր՝ Մուրատի առաջնորդութեամբ, որոնց մաս կազմելու համար ստացած մերժումս ունէր գերագոյն պատրուակ մը՝ որբանոցին հսկիչ, ձեռքս զէնք մը մանաւանդ:

Մեկնողներէն շատերը ահա կրկին կ'երեւնան, այս անգամ մաս կազմելու «հայկական առանձին հարուածող զօրամասին», զոր հրամանատարութիւնը պատշաճ գտած էր յանձնելու Զօր. Անդրանիկի, ուղղակի սպարապետ Զօր. Նազարպէկովի հրամանին ենթակայ:

Այդ էր արդարեւ տրամարանական լուծումը, հայրենիքի ծառայութեան չզրկելու համար թրքահայ մարտական արժէքով բարձր, թէեւ սակաւթիւ այդ ոյժերը, որոնց փորձառութիւնը կռիւներու մէջ ունէր մեր պայմաններուն յատուկ շատ մը առաւելութիւններ, եւ որոնք պիտի հրահանգուէին հայերէն լեզուով, երբ վերակազմուելիք բանակին լեզուն կը մնար ռուսերէնը:

Այդ էր եւ հրամայական պահանջը ազգային դոյութեան ի խնդիր մղուելիք վերջնական բնոյթ ստացող պայքարին:

Ինքնաբերաբար ռուս բանակէն լքուած, Պրեսքի դաշնագրին հիման վրայ, վերագրուեալ ընդարձակ երկրամասին մէջ կատարուող զօրաշարժին շնորհիւ թրքական բանակը նոր ուղիով հզօրացեր էր, ե՛ւ համրանքով, ե՛ւ ձեռք ձգուած ճոխ աւարով: Այդ բանա-

կը հետզհետէ կը նեղէր 1914-ի սահմանադրուիսի հայ-վրացական ոյ-  
ժերը, կը դառնար սպառնալից: Թշնամիին այդ սպառնալիքին իբր  
պատուար, Անդրկովկասեան «Սէյմը» թէեւ ինքզինքը «անջատուած»  
կը հռչակէր Ռուսաստանէն, սակայն նոր պատրուակ մը կու տար ա-  
նոր, չեղեալ համարելու Պրեսքի դաշնագիրը, չէր հրաժարեր ուրեմն  
Կարս, Արտահան, Պաքում քաղաքներուն տիրելէ, այլ կը հետա-  
պնդէր սկզբնական երազներէն դիւրաւ գործադրելիք մէկ նպատակը,  
համայն Անդրկովկասի տիրապետումն ու մանաւանդ Պաքուի նաւթա-  
հանքերուն տէր ու տիրական դառնալը:

Ինձ համար, հայկական բանակին կազմակերպումը ցոյց տուող  
միակ տեսանելի ձեռնարկը Անդրամիկի վստահուելիք մէկ-քանի  
վաշտոց փոքր բանակին համախմբումն ու զինումն էր, որ կը կա-  
տարուէր մեր քոյի բաց դաշտին վրայ, որբանոցի շէնքին մօտակայ:

Անհաւատալի եւ նոյնքան այպանելի շշուկներ կը թռչտէին ա-  
մէն պահ, այդ բանակին ընծայուելիք կարեւորութեան շուրջ, անհամ  
բանակցութիւններ, անվերջ միջամտութիւն Անդրամիկի կողմէ ուղ-  
ղակի սպարապետին մօտ, անոր դոյզն պահանջներուն գոհացում ըս-  
տանալու համար ա՛յն մթերքէն, որ շատ չանցած Թուրքին պիտի ձը-  
գուէր առանց կռիւի:

Թշնամին հասած էր Կարսի բերդերուն, կը պահանջէր անոր  
յանձնումը անյապաղ, իբր իր ստացուածքը: Սէյմը տեղի կու տար:

Շուտով ան Ախուրեանի աջ ափին էր, մենք անոր աչքերուն  
առջեւ՝ ձախ ափին: Հրամանատարութիւնը կը ստիպէր մեր հեռա-  
նալը:

Անդրամիկի վաշտերը տասնեակ օրեր առաջ մեկնած էին՝ ի-  
րենց վերջին տողանցքը կատարելէ յետոյ մեր թաց աչքերուն առաջ.  
չատ մը սիրելիներ կը բաժնուէին, ոմանք անդարձ:

Մեր նահանջի առաջին հանգրուանն էր Ալէք-պօլի կայարանը:

Սպասել Զուլֆայէն, կամ Կարսէն եկող գնացքի մը, անոր մէջ  
ճարել տրամադրելի վակոններ, ու եթէ բախտը բերաւ որ ճամբայ  
ելլէ գնացքը, իջնել հո՛ն, ուր մեզ ընդունող գտնուի:

Դէպի հիւսիս, Դեւ-Բետի կիրճերուն մէջ, դէպի հայ գաղթա-  
կանութեան առժամեայ մթերանոցը, Վրաստան, ուր մեզ առաջնոր-  
դող գծերուն կտրտուքներուն մասին չրջող յամառ գրոյցները վերա-  
ծուեր էին պայծառ եւ արիւնալի իրականութեանց:

Շունչ կտրելու չափ գահավիժող այս դէպքերուն ժամանակա-  
միջոցը կը խտանայ հագիւ չորս կամ հինգ ամիսներու մէջ, որոնց  
առանձին թուականները նշանակելուն կրնան փոխարինել հետեւեալ  
արձանագրութիւնները՝ աւելի խօսուէն, սկիզբ ունենալով էջմիածնէն  
ձեմարանը թողելու թուականը՝ Դեկտեմբեր 1917:

իր գլխավոր յօդուածներով ծանօթ եւ իրագործումի ձեռնարկուած Պրեսք-Լիքովսիի դաշնագրին վերջնական ստորագրութիւն՝ 3 Մարտ 1918 :

31 Յունուար 1918՝ նահանջ Երզնկայի հայ կայազօրին եւ բընակչութեան :

11 Փետրուար 1918՝ նոյն պայմաններու մէջ նահանջ Բաքերդէն :

12 Մարտ 1918՝ Կարնոյ պարպումի հրաման Անդրանիկի որոշումով, իսկ Խնուսի ճակատին կռուողները Կոֆի եւ Մանգլեքտի վրայով կ'անցնին Ալաշկերտի հովիտը :

30 Մարտ 1918՝ Թուրքերը կը գրաւեն Ղարաուրկանը, 1914-ի սահմանագլուխի պահակատեղին :

5 Ապրիլ 1918՝ հայ ոյժերը կը լքեն Սարը Ղամիշը :

22 Ապրիլ 1918՝ Անդրկովկասը անկախութիւն կը յայտարարէ, բոլորովին կ'անջատուի Ռուսաստանէն :

25 Ապրիլ 1918՝ Կարսը կը յանձնուի Թուրքերուն՝ առանց կըռիւի :

28 Ապրիլ 1918՝ Հայեր իրենց նոր սահմանին վրայ՝ Ախուրեանի (Արփա Չայ) ձախ եզերքը :

Անծանօթ վայրեր տեսնելու հմայքը մեզի զօրավիւզ, որբանոցային փոքրիկ բանակին բեկորներս ահա երկու երկաթէ գծերու վերայ ենք վերջապէս : Նոր նահանջի մը ուղին բռնած, ու այդ արժեքէ ժամերով սրտհատնում, վէճ, աղերսանք, հապճեպ ու անխնամ մատակարարութեան առթած զժողովութիւններ, բայց եւ այնպէս վազողին մը չոր տախտակներուն վրայ ենք, վրանիս ծածկ, հովերէն պաշտպանուած :

Միայն թէ վազողը շարժիլ սկսի :

Շարժում մը, ի՛նչ մեծ մխիթարութիւն՝ որ կանք : Այլապէս աճապարող չկայ, ո՛չ ոք մեզի կը սպասէ, ո՛չ ոք գիտէ մեզ ընդունող տեղոյն, երկրին կամ աւանին անունը :

Գնա՞ցքը : Քանի մը տասնեակ շարժուն տնակներ, չորսին մէջ համայն որբանոցը, միւսները խայտարակ հասարակութեան մը գըրոհովը բռնաւորուած, ուր, ինչպէս մեր տախտակներուն վրայ, «ասեղ ձգելու» նոյնիսկ տեղ չկայ :

Տեղաւորումէն եւ սպասումէն յողնած մեր առաջնորդները, կիներ, կողք-կողքի ընկողմանած են ցիրուցան կապոյցներու արանքները, ու ամենէն չարաճիճիներն անգամ կը վարանին անոնց հանգիստը խոտվելու, թէեւ անվերջ կը խլրտան ու կը փսփսան :

Ապրանքատար վազողին կիսարաց գրան պոկունքը նստած, իմ աչքերս ալ կը խլրտան, ոտքերս դէպի դուրս կախ, կողքիս երկու մեծ որբերէն՝ ինձի մտերիմ, իբր թէ լուռ եմ, սրունքներս ինքնաբերա-

բար կ'երերան մտածումներու թափով: Հայրենի հողերուն վերջին հանգրուանները համբելու կ'երթամ, այդ մտածումն է զիս աւելի չարչարողը, քան այդ ճամբորդութեան ի նպաստ օրերէ ի վեր բերած անդուլ աշխատանքս, երբ վարակիչ օրինակ մըն էի զիս շրջապատող փոքրիկներու համայնքին համար, ի մեծ գոհունակութիւն Տիկին Մայրիկին, որ նոյն վակոնին մէջ կը գահակալէ կապոցներու վրայ:

Շարժում եւ փսփսուք կը սաստկանան: Կը սթափիմ խոհերէս: Հողային փոքրիկ ցցուածքներու ընդմէջէն կը նշմարուի քաղաքը, դոր կը լքեմ շատերուն պէս, վերջնականօրէն: Տեսարանը կը տարածուի Ալուարեանէն անդին, անձկութիւնը դարձեալ կը պատէ հողիս: Այդ տեղուանքը մօտ օրերէն Թուրքէն ոտնակոխ ըլլալու դառն իրականութիւնը, ուրիշ ցաւերու հետ խառնիխուռն զիս կը նետեն հին փլուզումներէն նորերու մէջ:

Ղարափիլիսէ կայարանը: Երկար ու տաժանելի անշարժութիւն, ձորի մը բերանին մէջ թաղուած: Վերը, լեռնալանջին վրայ, հարաւարեւմուտք նայող, ծառերու մէջ տուններ կ'երեւան, քաղաքն է: Ո՞րքան պիտի տեւէ մեր դադարը, ձանձրոյթ վատնելու համար պտոյտի հնարաւորութիւն պիտի ունենա՞նք: Ո՞չ իսկ այդ, արդէն դիչեր է:

Արեւը իր վերջին ժպիտները տալէ չէր դադրած թէեւ, քաղաքին ետեւը հորիզոնը բռնող անտառի անհամար տերեւներէն, փայլփլուն, մնաք բարովի նշաններով: Այդպէս է որ ձորերու մէջ իրիկուն եւ գիշեր իրարմէ շատ տարբեր չեն:

Չանձրոյթէ խտացած հողիներ կը սկսին նոր խլրտում մը:

— Մթնեց: Այս ի՞նչ չուտ:

— Աչք-ունք տեսողութենէ չկտրուած, սըռոնց հացերը տանք: Քոյրիկս է քովս սողոսկած ու կ'աւելցնէ:

— Հա՛յտէ, վա՛ր ցատկեցէք, ու շատ չհեռանաք: Տեղ բացուի, որ ինչ ընելնիս գիտնանք:

Պատրաստակամ, վակոններէն դուրս վռնտուելու կը պարտաւորուինք՝ բերանին «պատառ մը բան»երուն փնտռուքն ու անոնց բաշխումի արարողութիւնները դիւրացնելու համար: Սարսափահար մեր վրայ կը խուժեն կայարանի մարդիկ եւ քաղաքապահ ոստիկաններ: Ի՞նչ պատահեցաւ: Ո՞վ արտօնեց վակոններէն դուրս գալը:

Տիկին Շուշանիկ ուսերէնով կը բացատրէ պատճառը: Թէ ինչո՞ւ ուսերէն՝ քիչ մը խորթ կը թուի: «Հեռուի սուրբը զօրաւոր է»:

Հապա եթէ միւս վակոններէն մեր օրինակին հետեւողներ ըլլան: Սակայն ո՛չ ոք: Միմիայն գնացքին երկար եւ անվերջանալի դադարին համար աւելի բուռն բողոքի բացականչութիւններով կը գոհա-



նան: Հազիւ «գլուխնին տեղ մը խոթած», ոչ մէկը կը համարձակի վար թափիլ, բացի՝ քանի մը առոյգ այր ու կիրներէ եւ վակոններէն դուրս կախուողներէն:

Երբեմնի մեր տան մէջ, երանելի, երբ բարակ հացին մէջ սէր ու մեղր ծալլած, խածնելով կը վազվզէի մէկ սենեակէն միւսը, խեղճ Անայիս համբերութիւնը կը հատնէր ու կը սաստէր:

— Ծօ՛, չչնթուկի՞ս տեղ մը, կերածդ ո՞ւր կ'երթայ:

Երկու օր է, թէեւ ուրիշ շատերու շարքին, իրաւ ալ «կերածնիս ո՛ւր կ'երթայ» չենք դիտեր: Գիտենք միայն որ փորբերնիս միշտ պարապ է, «կոնակնուս փակած»:

Կ'արթննամ, կամ կ'արթնցուիմ Փամպակի ձորին բերանը. ինձ կը թուի թէ «աշխարհ կտրած—անցեր ենք»: Ո՞ւր: Ղարաքիլիսայէն հի'նգ վերստ հեռու միայն՝ անշարժացած «վազանցի եկած»:

Տրուած բացատրութիւնները անբաւարար են, կը փութամ դժբան մօտ: Իմացս լեռ ու անտառ, քարոտ, ժայռոտ: Երկինք տեսնելու համար պէտք է ծովը դուրս, առջեւ խորխորատ մըն է, կը տատամսիմ:

Կ'անցնիմ մանչերու վակոնը, քնանալու համար նախընտրած էի քրոջս մօտն ըլլալ: Ուխտած եմ այլեւս անկէ չբաժնուիլ: Գիշերելու ատեն պաշտօնէութիւն եւ տարեցներ, առ ի հսկողութիւն արդէն ցրուեր էին չորս վակոններուն մէջ, իմ ընտրութիւնս մասնայատուկ էր:

— Ծօ՛, կը պոռան յանկարծ ինձմէ կանուխ «աչքերնին շփող» տղաքը, ետ կ'երթանք:

Կայարան վերադարձեր ենք իրապէս, բացատրութիւնը հետեւեալն է. ճամբանիս փակ է: Ո՞վ է փակողը, եւ ո՞ւր: Մո՞ւս:

Մեծ աղոց հետ կը ճամբուիմ ջուր ճարելու, անկիւնէ մը կը լսեմ անունս: Գէլոյեմց Մարիկին աղջիկն է, կը վազեմ կը փաթթուիմ. հիւանդանոցը թողեր է՝ իրեններէն չբաժնուելու համար: Իր երկրորդ եղբօրը որդին՝ Սիմոնը, քովս կը տնկուի, դիւզի դասընկերս ու տարեկիցս:

Սիմոնին հայրը Ամերիկա է, ինք չծնած ան պանդուխտ ելած է. այժմ հետեւելով շատերուն՝ ճամբայ ինկեր են ձաքոնէն Ամերիկա նետելու ինքզինքնին: Ինչպէ՞ս: Հանելուկ, եւ սակայն լուծողներ կան:

Մօրաքոյրը կը պատմէ քաջածնին: Քաղաքը տեղ չգտանք, թրէն մտնել չկրցինք երէկ, կայարանէն վռնտեցին դիշերը, կրկին հոս ենք, պէլֆէ թրէն մը կ'անցնի, գլուխնիս մէջը խոթենք:

Չորս հոգի են: Տիկին Մայրիկէն կը խնդրեմ իրբեւ առժամեայ ճամբորդ տեղ աւալ, մերիններուն մէջ սղմել: Քրոջս հետ փաթթուած

կու լան, իսկ ես կը փախչիմ իրենցմէ, ջրխոյզի պաշտօնիս գլուխը  
դանկելու յոյսով հողեխառնութեանս հանդարտութիւնը :

Կէս դար աւելի վերջն է որ Սիմոն, Մարսիլիոյ մէջ իր մայրը  
հողին յանձնելէ յետոյ, շնորհիւ նախապէս Ամերիկա զրկած իր աղ-  
ջիկներուն, Միացեալ Նահանգներ պիտի դադթէ, եւ սակայն ուշ՝ իր  
անծանօթ մնացած հայրը տեսնելու համար :

Մեր ճամբան շարունակելու թելադրութիւններուն մէջ կայ  
պայման մը, «իւրաքանչիւր յաջորդ կայարանին մէջ սպասել նոր հրա-  
հանդի» :

Կայարանապետը՝ սուլիչը բերանը, անխուսափելի լապտերը  
ճօճելով, երկու «Կարատալօյ» կողերուն կ'երկարի դէպի շոգեմեքե-  
նան, եւ սուր, երեք ճիչերով կ'աւետէ մեկնում մը եւս :

Առանձնաշնորհեալներս, քիչ մը թերահաւատ, արդէն մեր տե-  
ղերն ենք, վախոններու արանքին ողկոյզի պէս կը կախուինք եւ ի-  
րարու կը պլլուինք : Գնացքը հարսի պէս ճամբայ կ'իյնայ, դէպի կա-  
յարան մեր վախոնի կիսաբաց դռնէն ոտքերս կախ նշյն տեղն եմ,  
միեւնոյն ընկերները կողքիս : Նեղճուկ հովիտը կը դառնայ խոր ձոր  
մը, ու այլեւս անոր ելքն ալ, մուտքն ալ, հազիւ գնացքի երկայնու-  
թիւնն ունին, բոլորովին փակ, ձորին միակ հեռուոր հորիզոնը երկ-  
նային կապոյտն է, մեզմէ վար հսկայ քարերու վրայ ցատկոտող  
խենթ Դեւ-բետի ջրերն են : Երկաթեայ ճանապարհը ձորին հետ կը  
կը ծովու, երբեմն իրեն ուղղահայեաց խորշերուն վրայէն կը ցատ-  
կոտէ, փոքր կամուրջներ թէեւ, սակայն անոնց վրայ գտնուած պա-  
հուս ինձ կը թուի թէ ահաւոր անդունդի վրայ կախուած են ոտքերս :  
Բնազդական վախով մը իրանս ներս կը ծոեմ, թեւերս քովիններուս  
կուրծքին վրայ ճնշելով :

Բաւական երկար կը թուի այդ համարաքայլ մեր ընթացքը :  
Ո՞րքան վերստ կարեցինք արդեօք : Հարցումս բերանս կը մնայ, տաս-  
նեակ մը «կըրթ, կըրթ, կըրթեր» կը պատասխանեն արդէն, կրկին  
կանգ առեր ենք :

Կախուողները իսկոյն ցատկեր են, ու նստեր գծերը բռնող  
փայտերուն վրայ, ու կը Ժպտին դէպի մեզ :

— Ա՛լ համը փախաւ, կը փսփսամ քովինիս, իջնենք ու յառա-  
ջանանք գնացքին գլուխը, տեսնենք բան մը կրնա՞նք հասկնալ :

Տեղերնիս կորսնցնելու վախը չունինք, եթէ մեզ սաստող չըլ-  
լայ :

Առջեւնիս կը բացուի հսկայ ճեղք մը, երկար, վրան բարձր  
կամարով կամուրջ մը, այնքա՛ն, այնքա՛ն նեղ : Ճիչդ մէջտեղին վրայ  
կը նշմարենք երկու հողի, որոնք դանդաղօրէն դէպի կամուրջին միւս  
գլուխը կը յառաջանան : Հոն կանգ կ'առնեն պահ մը, վար կ'իջնեն, ու

կը շրջադաշին կամ ուրջի ոտքերուն շուրջը, պէտք մը գոհացնելու կերպ կ'առնեն՝ կռնակներն դէպի մեզ, ու ապա նոյն արահետներէն վեր կ'ելլեն ու ետ կը դառնան:

Իր բարձունքէն մեքենավարն ալ կը հետեւի անոնց:

— Ինչո՞ւ յաճախ կանգ կ'առնէք, կը համարձակիմ հարց տալ: Ե՞րբ տեղ պիտի հասնինք:

— Տղա՛յ ջան, պա, ասա տեսնեմ ո՞ւր ես ուզում հասնել:

Ուշադրութիւնը վերադարձողներուն վրայ դարձուց, անոնք իրենց թեւերը դուրսնուն վրայ տարածելով բոլորակաձեւ կը ճօճեն:

— Ասա տեսնեմ ո՞ւր ես ուզում գնալ:

— Մենք որբերու խումբէն ենք: Սամախիմը դեռ հեռո՞ւ է:

— Տէ՛, որ այդտեղ էք գնում, կը հասնէք: Ուշ լինի, նուշ լինի: Իմանո՞ւմ ես սրա նշանակութիւնը:

Հեռուէն փոխանակուած խօսքերէն վերջապէս խելքի ինկանք որ այդ մարդիկը գծի վրայ քննութիւն կատարելու են ելեր, ու կը յայտնեն որ որեւէ քանդուած գիծ, կամ անբնականոն ոչինչ չեն տեսած:

— Դուք ապահովաբար ուշ կամ կանուխ Սամախիմ կը հասնիք, բայց մենք Թիֆլիզ, դա խնդրական է:

Տարեց, կայտառ մէկն է, դաղթական՝ լեզուէն յայտնի, մեզմէ քաջալեր՝ հետեւեր է:

Անցեր ենք աւելի մեծ կայարան մը եւս, Զալալօղլու եւ Դսեղ տանող ճամբաներու հանգոյց, ու կրկին կանգ առած:

Որստ ծանր լուծիւն մը, վհատութիւնը համակած է հազարներով ճամբորդները: Երգ մը կը խզէ գայն, Օր. Տիգրանուհիմ է, Տիկին Շուշանիկի գործակիցն ու իր հին հաւատարիմներէն, երգ մը մեղամաղճոտ, որ առաջին անգամ կը լսեմ: «Հէ՛յ Մանթաչի, նաչ-խո՛ւն հաւքեր... մեր դարտը որ ձերն եղներ», հատիկ-հատիկ, հանդարտ եւ խորապէս զգայուն բառերը կը թրթռան մեր թարթիչներուն հետ, ու «Ձեր այդ գառ-վառ խառ փետուրներ»էն յետոյ շատեր կը միանան՝ վերջացնելու տողը՝ «Կը խամրէին քանց գիշեր», եւ արցունքները չեն ամչնար այլեւս հոսելէ, ու տրուած հրամանի մը անսալու պէս որբերը դուրսնին միահամուռ կը ծռեն դէպի վար, դէպի Դեւ-Բետի ջրերը:

Միայն Դեւ-Բետն է որ կ'արտասուէ բարձրաձայն, մինչ լուռ են մեր ետին, առջին, աջ ու ձախին բարձրացող այլեւայլ հսկաները՝ Հայոց լեռները:

Այո՛, ո՞ւր են չքացեր մեր քաջերը,

«Ե՛ւ Դեւ Ալ, Դեւ Բետ, եւ ա՛յլ հսկաներ»,

Որ փարատին մեր թախիճն ու վշտերը:

— Աղջիկ ջան, այդ ի՞նչ արիր :

Քողը վեր քաշած, թաշկինակին ծայրերը աչքերէն վար, Տի-  
կին Մայրիկն է :

Մինչ երգին արձագանգները գրգռու փոթորկած կ'անցնին վա-  
կոնէ վակոն, ու կը դադրին միայն, երբ անոնց անիւնները կը սկսին  
թակել ու համրել երկաթէ դժերը :

Գնացքին վակոնները դա՛րձեալ կը պլլուին հողաթումբի մը  
կողերուն, ձորը կը լայննայ, դէպի հիւսիս—արեւելք կապոյտը կը  
տարածուի, մեր ձախին վրայ խորշի մը կողերուն մէջ ծխնելոյգներ,  
չէնքեր, վարը՝ դժի շարունակութեան վրայ՝ եռանկիւնածեւ տանի-  
քով կառուցումներ կը յայտնուին առանց պատուհանի, աջին Դեւ-  
Ռեդի վրայ կամուրջ մը, իր արտաոց կուզը դէպի երկինք ցցած : Ա-  
ռաջնիս կը բռննին գէնքեր ուսակալած մարդիկ, ինքնութիւննին  
անյայտ, այդ օրերուն անոնք կրնան ըլլալ ե՛ւ բարեկամ, ե՛ւ թշնամի :

Սակայն դնացքը դէպի անոնց կ'արագանայ, կանգ կ'առնէ,  
բարեկամներ են : Կայարանին անունն է՝ Ալլաիվերտի :

Վայրկեաններ առաջ Տիկին Մայրիկն ու իր օգնականները մեր  
գլխուն կանգնած անուններ կը թուեն, իրենց մտերիմ, վերջապէս  
հասեր ենք Սանահիմ, թէեւ ոչ մէկս, անոր կամուրջէն բացի, նման  
գիւղի կամ գիւղաքաղաքի պէս բան չենք տեսներ : Երեկոյ է արդէն՝  
միջօրէն կէս չեղած՝ արեւը բարձունքներուն վրայ թառած :

— «Հաւատք քո կեցուցեն դեկ» , կ'ըսեմ բարձրաձայն : Մայ-  
րիկ ջան, ես Սանահիմ—մանահիմ չեմ տեսներ :

— Վե՛ր առ գլուխդ, տղա՛ս, դիմացդ բարձունքին վրայ օձա-  
պտոյտ ճանապարհը դէպի Սանահիմ կը մադցի :

Ափիբերան բոլորս քիթ—պոռնկ ծոմովելով գիրար կը քննենք :

— Ալէլուիա զառիվեր մը, կը մըմնջեմ : Քոյրս գլուխս կը շո-  
յէ, իրե՛ն միայն ծանօթ է ակնարկութիւնս, ու չեմ համարձակիր աչ-  
քերս իրեն դարձնել :

— Եկող առաւօտեան տեսնելու էք թէ ի՞նչ հիանալի տեղ էք  
քնակելու :

— Ուրեմն ո՞չ այս գիշեր :

— Դա դժբախտաբար կարելի չէ, պէտք էք բարձրանալ հե-  
տիտոն հազար մեղրէն շատ աւելի, միայն մեր ինչքերուն համար  
պիտի փորձենք փոխադրող կառքեր ճարել :

Քանի մը փոքրերու ճիչին՝ «Մե՞նք ալ, մե՞նք ալ», Տիկին  
Շուշանիկ կը պատասխանէ. «Այո՛, դո՛ւք էլ, բացի ինձանից, ինձ  
հարկաւոր է մի կառք ճարել ու հոն շտապել» :

Գծի պաշտօնեայ մը կաղնիկաղ դէպի մեր վակոնը կը շտապէ ,

կ'արգելէ վար իջնելը, մեր բնակարանները պիտի բաժնուին գնացքէն, քովնտի դժի մը վրայ, ուր պիտի գիշերենք:

Կը հրահանգէ մեզ շրջապատող գիւղացիներն ու կիները իրենց դաւակներով հեռանալ: Տարբեր անակնկալ մը՝ Յոյներ են: Եւ, ինչպէս պիտի իմանանք, Յունաստանէն բերուած հանքի բանուորներուն ընտանիքներէն:

Միւս անակնկալը գնացքը անմիջապէս ճամբայ հանելու աճապարանքն է, որուն պատճառը մեզի պիտի յայտնուի անոր մեկնելէն յետոյ:

Սանահին երկաթուղիի վերջին կայարանն է Հայաստանի հողին վրայ, յաջորդը Սատախլու կոչուածն է, վրացի, քաթար, հայ գիւղերու միջեւ, քաթար բնակչութեան գերիշխանութեան ներքեւ, ուրկէ անցնող գնացքնե'րն անգամ, ամիսներէ ի վեր թաթար յարձակումներու ենթարկուելու են, եւ ո՛չ մէկ Հայ կրնայ ողջ անցնիլ այդ կողմերէն:

Աճապարանքը թելադրողն է առժամարար հոն գտնուող զրահապատ գնացք մը, Վրաց հրամանատարութեամբ, որուն ներկայութենէն պէտք է օգտուիլ:

Մեր վաղոնները կը տեղաւորուին բլուրին եւ պահականոցին միջեւ երկնցող դժի մը վրայ, պահակ հայ զինուորները խորհուրդ կու տան յոյ՛գիւղէն կաթնեղէններ գնել, եւ իրենց կաթսաները արժամադրելով՝ ամբողջ խումբը համեզ կաթի կարասներու մէջ հաց բրդելով իր լաւագոյն ընթրիքներէն մին կը ճաշակէ, երբ արեւը իր վերջին շողերը տակաւին չէ ետ տարած Հաղբատ Վանքի բլուրներէն:

Լեցուն ամանը ծունկերուս սեղմած, հացի փշրանքները կը թաղուին տաք կաթին մէջ, իմ կարգիս ես ալ կը թաղուիմ մօտաւոր անցեալիս մէջ, հայրենի տան կարօտով, անկէ մղոններով հեռու, բնութեան միեւնոյն ամեհի տեսարաններուն մէջ, Մայր Հայրենիքին հիւսիսային սահմանէն քանի մը քայլ հեռու, Գուգարֆի լեռներուն մէջ, որուն սիրելի անունները պատանեկութենէս ծանօթ են՝ Լոռի, Սանահին, Հաղբատ:

Քրոջս ընկերակցութեամբ, երկու աղջիկ, կաթսայի աղերէն բռնած քովէս կ'անցնին, շերեփ մը լեցուն, կանգ կ'առնեն, ամանս կրկին կը յորդի կաթով ու ժպիտով, կատարեալ խնձոյք մը:

Չնախատեսուած այս փառաւոր նախընթրիքէն յետոյ, որ անպայման ընթրիքի ալ պիտի ծառայէ, կաթնալաճառ գիւղացիին միջնորդութեամբ բախտը կ'ունենանք յոյն գիւղէն կառք մը վարձել՝ Տիկիմ Մայրիկը Սանահին բարձրացնելու համար՝ մութը չիմկած: Իրեն պիտի ընկերանան Վարդանոյշ եւ Թագուհի քոյրիկներս:

Շոգեկառքի երթեւեկութեան սկիզբէն, Ալլահվերտի կայարանը զնացքի անցած ժամերուն սպասողներ եղեր են իրենց կառքերով, մասնաւորներ իրենց ճամբորդներն ընդառաջող, նաեւ վարձու կառքեր: Անոնց թիւը պակասած է պատերազմի օրերէն սկսեալ, զլիւսաւորաբար զնացքներուն ժամանակացոյցի անկանոնութեան հետեւանք, յեղափոխութեան եւ ռազմաճակատի անցուղարձերուն բերմամբ:

Ալէք-պօլէն բացակայութիւնը իր հանգստութեան վատնած չէր մեր Մեծ Տիկիին: Ան անցեր էր Սանահին, իր նախկին որբանոց ծառայող չէնքն ու յարակից մասերը պարապ դատած, եւ արդէն որոշած էր հոն փոխադրել իր երկրորդ որբախնամ ձեռնարկը, ուր պէտք էր երթալին յաջորդ օր խումբը ընդունելու եւ տեղաւորելու գործին համար:

Կառապանին հետ ժամադրաւայր նշանակուեր է Սանահինի կամուրջի մուտքին: Օր. Տիգրանուհիին հետ վահան Յովնանեան եւ ես խօսակցելով կ'ընկերանանք մեր ճամբորդներուն, ու կամուրջի սապատին վրայ անոնցմէ բաժնուած ետ կը դառնանք, ես՝ ետեւէն, հըրացանս հպարտօրէն ուսիս նետած, իշխանութեան բարակ ճպոտ մը Օր. Տիգրանուհիին ձեռքը: Քաջ ռուսագէտ, ինչ որ կարեւոր է, տեղւոյն արդէն իսկ ծանօթ, քսան տարիները չբոլորած վառվռուն եւ սիրուն օրիորդ մը, որուն հրահանգները տարածելու պատինն ունէի, նաեւ հաճոյքը, քանի որ անոնց գործադրութեան մէջ որեւէ դժուարութեան հանդիպիլ մտքէ-իսելքէ հեռու բան էր:

Երգնկայի նահանջէն ողջ-առողջ կարին ինկած, վահան Յովնանեան քոջս հետեւեր էր՝ անոր շուքին պէս անբաժան: Մեր մայրիկին դարմիկ, զինքը ճանչցայ ծննդավայր Երեցագարակ (Իրիցագարակ) գիւղին ուսուցիչ, երբ պատանեկութեանս, Զմբուխտ մամիկիս մօտ, տարին երկու անգամ տասնական օր իր փեթակներուն մեղուններուն հետ անոր շուքը կը բզզայի: Մեր կապերը նաեւ աւելի սերտացան վահանին հետ, երբ հարս առաւ մեր գիւղէն, դասընկերօջս Տիրանին քոյրը՝ Երանուհի Ներսէսեանը:

«Իրիցագարակ» շրջանի ամենէն գեղատեսիլ վայրն էր, արեւահայեաց, ընդարձակ հորիզոնին ծայրը խարբերդ քաղաքի բարձունքներն էին, երբ մթնոլորտը պայծառ էր՝ մօտ յիսուն քիլոմետր:

Պարբերական եւ շարունակուող գաղթերէն ամայացած, կը մնային սակայն իր հին փառքի վկաներն եղող եռայարկ, բազում եւ ամայի սենեակներով հսկայ տուններ, ամենքն ալ ունէին մեծկակ ախոռ, մառաններ ու բակեր, սեւ ու ճերմակ քարերով նաշխուն խոշոր եւ սիրուն եկեղեցի մը, յարակից՝ կէս քարաչէն ու երկյարկանի փայտաչէն դպրոց մը:

Վահան նման տան մը միակ բնակիչն էր՝ երբ գինքը ճանչցայ, այն օրէն երբ գինքը կը յիշեմ, մինչեւ իր ամուսնութեան պահը:

Գիւղի բոլոր հողածածկ այդ բակերուն եւ ծածքերուն մէջ «ձին ձիաւորով կը խաղար», եւ սակայն իմ այցելութեանս օրերուն, ճանճրոյթս փարատելու համար, երբ իրարու ձայն տայինք՝ հազիւ տասնեակ մը տարեկից խաղընկեր երեւան կ'ելլէին, այնքան սակաւ էր պատանեկութեան թիւը, ըսենք նոյնքան ալ դուրսն էին, խաչնարած, կովարած, եւ աշխատող՝ օգնող ձեռքեր, արեւուն հետ մեկնող՝ աստղերուն հետ տուն մտնող:

Ալլախվերտի կայարան հասած պահէս, Վահան Յովնանեան կը դառնար այլեւս իմ շուրջս, եւ երկար ատեն: Իր կնոջ եւ փոքր զաւկին կորուստէն յուսալքուած, դոյզն ձեռներէցութենէ բոլորովին դուրկ էր, կը վարանիմ ըսել թէ այդ երբեմնի ուսուցիչը գրեւ-կարդալու ճաշակն իսկ պահած կրնար ըլլալ: Մեզ՝ քրոջ եւ եղբոր շարժումներուն ուշադիր, բարի էր եւ հնազանդ:

Պարապ վահոններուն առջեւ դտանք պահակ գինուոր մը, խոհարարին եւ մէկ-քանի որբուհիներու հետ: Միւսները թափուեր էին ձորը, Դեւ-քեդի ջրերուն մէջ պաղօղկելու: Ոմանք մագլցեր էին բլուրի կողերուն վրայ, ու կը հետեւէին դէպի Սանահին սողոսկող կառքին, որ աջ ու ձախ շարժումներով տեղափոխ մէջ էր կարծես, երբ իմ կարգիս իրենց մօտ հասայ, նոյն տեսարանը դիտելու:

Իր հետեւանքներով, օրուան վերջին կարեւոր դէպքն եղաւ, սղաքը տեղաւորելէ վերջ, պահակախումբին այցելութիւնս, պահակի պաշտօնիս հանգամանքովը՝ հրացանս կախ, միշտ Վահանի ընկերակցութեամբ:

Անկիւն մը օճախ, քովնտի սեղանին վրայ առատ ալիւր, շաքար, կարագ, եւ ա՛յլ մթերքներու տեսքը կերպարափոխեցին մեր Վահանը: Անմիջապէս առաջարկեց իրենց «հէլվա» եփել: Զինուորները՝ ութ հոգի, ոչ մէկը անոր ինչ ըլլալը չէին դիտեր, ու խանդավառ համամտութիւննին հազիւ ստացած՝ դործի անցաւ:

Կէս ժամէն աւելի այդ պատրաստութեան ընթացքին, իմ հետաքրքրութիւնս կը թուշտէր պահակապետի տեղեկութիւններուն վերայ՝ հէլվայի հոտովը ոգեւորուած:

Ենթասպային հետ փոխադարձ խոստովանութիւննիս նոր ուղիի մը կ'առաջնորդէին զիս: Ան պատմեց թէ ի՛նչպէս իր երեք տասնեակ գինուորները «նոր ախտէն» վարակուած՝ լքեր, չքացեր էին: Որ, Ալլախվերտիի դիրքը խիստ էական էր Հայոց աշխարհի արհաւիրութեան համար, անոր յաջորդող Սատախլու կայարանի պետը թէեւ Ռուս, ո՛չ հեղինակութիւն ունէր, ո՛չ հնարաւորութիւն: Իր աչքերուն առջեւ դնացքներէն վար առնուած են Հայեր, ու Թաթար-

ներու ձեռքով անհետացած, խողխողուած, եւ ոչ շատ հեռու՝ ջրհորներուն մէջ նետուած: Որ, Թաքարները, թէեւ մաս կը կազմեն Անդրկովկասեան Սէյմին, ներքին բացայայտ թշնամիներն են Հայոց, եւ վախ յայտնեց որ զանգուածային յարձակումներ կրնան գործել մօտակայ անպաշտպան հայ գիւղերու վրայ:

Ծնունդով աստրախանցի, ան կը խօսէր բաւական մաքուր հայերէն, հայրենասէր էր, եւ պարտաճանաչ՝ իրեն յանձնուած գործին, եղած էր Պարսկաստանի ճակատը գործող ոռու բանակին մէջ:

Ինծի համար հաճելի յայտնութիւն մը եղաւ, անոր հետ անցուցած միւս օրերուն մէջ, այդ հեռաւոր ու անձանօթ հայ զաղութի ազգասէր ոգին նշող պատմուածքները:

Իսկ այդ առաջին պատեհութեամբ, երբ իր կարգին տեղեկացաւ անցնող վերջին ամիսներու մտադրութիւններուս, իր խօսքերուն իբր հետեւութիւն կ'ըսէր.

— Ի՞նչ լաւ կը լինէր, որ Պ. Վահանը եւ դու եւս, մեզ մօտ «կամաւոր» լինէք: Սա էլ փոքրիկ գործ չի: Այդ է Սանահինի որբերուն եւ մեր շրջանի գիւղերուն ապահովութեան պահանջը:

Վահանի պատրաստած մեր գաւառի մասնայատուկ «այլերէ հէլվան» նախ իր բոյրով, ու ապա իր համով մեծ յաջողութիւն դատաւ: Ան իրապէս իր տրամադրութեան ներքեւ դրուած առատութեանէն օգտուելով, կըրցած էր ճշգրիտ չափեր դնել, լաւագոյն աղինձին բերել զայն, ու մեծկակ տապակին մէջ մեր աչքերուն առջեւ այրել ու համին բերել:

Ու այդ հէլվային քանակը իսկոյն չքացաւ, եւ «կախեթինաքի» դիւին անդամ, զոր ես առաջին անգամ կը համտեսէի, չկըրցաւ անոր համը մեր բերաններէն վանել:

— Էլի՛, էլի՛ ենք ուզում Պ. Վահան, ու ես անշուշտ համամիտ էի:

— Էդուց նորից կը պատրաստի, միջամտեց պետը, դէպի ինձ աչք խփելով, երբ դիչեր բարի կը մաղթէինք մէկզմէկու:

Վակոններու չոր տախտակին վրայ պատանի պէտք է ըլլաւ, արդար քուն վայելելու համար: Զորերուն մէջ դիչերը աւելի երկար է, առաւօտեան դալը ճշգրէլ դժուար, ու հակառակ կըկնուած սաստի եւ խրատականի, որբերու կանչին արձագանգները մեր դռները բերեր են բազմութիւն մը, մեծ ու փոքրիկներու, մօտակայ հանքաւանէն, եւ ո՛վ զարմանալի, կ'իմացուի նաեւ օրուան ինքնութիւնը՝ Կիրակի է:

Օր. Տիգրանուհի գիւղի ճամբան ցոյց կու տայ կաթի ամաններուն, միաժամանակ ակնարկները կը զրկէ դիմացի զառիվերին պտուտաւոր ժապաւէնին, ուրկէ կառքեր եւ խանիխունն բազմու-



Թիւն մը իրաւ ալ վար կը սահի զիկզակ, կառք, մարդ եւ անասուն պոչ բռնած :

Վարը հարսանեկան մթնոլորտի կը վերածուի, վերջին օրերու մոայլութեանց հետքն անգամ չէ մնացեր, փորերնին կուշտ, փոքրիկներուն խումբը արդէն բռնեք է Սանահիինի հինաւուրց քարակերտ կամուրջին ուղղութիւնը, վերելքի անհամբեր, որուն համար նախատեսուած է առնուազն օրուան առաջին կէսը :

Կցկտուր բառերով, այն է քիչ մը վախնիվախ, պահակապետին հետ ունեցած խօսակցութիւնն Վահանին յայտնելու ճիգս աւելորդ եղաւ : Անոր համար երկիրնքէն ինկած կարգադրութիւն մըն էր : Ինքը՝ որբանոցին մէջ կշտացնելիք փոր մը աւելի էր, մինչդեռ ես պատանի՝ նման խղճահարութեան նուազ պատճառ ունէի, եւ սակայն համաձայն էի առաջարկը ընդունելու :

Եթէ առատ մթերքին տեսքը, «հէլվածի» նոր համբաւը Վահանի որոշումին մէջ մեծ դեր խաղացին, դալով իմ պարագայիս, ենթասպային իրապէս սրտառուչ կոչը ու զիս ապա հայ Սպայից նորահաստատ Վարժարանը անցընելու ակնարկութիւնները քրոջս մօտ պատուաւոր ելք մըն էր :

Վահան կը մնար ուրեմն, ես խոստացայ վերադառնալ որբերու տեղաւորումէն, Սանահիինը ճանչնալէս անմիջապէս յետոյ, վստահ որ պիտի կրնայի այս անգամ եւս քոյրս համոզել մեր բաժանումին ի նպաստ, Սպայից Վարժարանի հմայքը օգտագործելով, գիտէի որ ան տեղի պիտի տար նման հայրենանուէր արարքի մը առջեւ : Արդարեւ, Թիֆլիզի մէջ հայ Սպայից Դպրոցի մը հիմնուած ըլլալու շնորհները իրականութիւն էին, մեր ենթասպան թեկնածու էր, ու անհամբեր կը սպասէր զինքը փոխարինողի մը :

— Այո՛, անպայման ետ դարձիր, միասին կը գնանք, եզան մեր բաժանումի վերջին բառերը :

Ընկերացաւ մինչեւ կամուրջ, կարծես սահման մը ըլլար, բռնած էր սրտիս բարակ թելերէն, ու կը քաշէր : « «Կուրս»ը ամբողջ, նորեկներու համար վեց ամիս է, թերեւս ինձ համար աւելի կարճ լինի : Տէ՛, աւելցուց, հեկեկանք դրաւ, հայրենիքը այնքան պէտք ունի կարող եւ զոհարերող առաջնորդներու :»

Դարձարձիկ, հետեւաբար թեթեւ շեղութեամբ կառուղիին ճամբան կտրող ուղղաձիգ արահետներէն հեւասպառ վազվառուքով զուարթ վերելք մը սկսանք, կարճ հանգրուաններով :

Եւ ամէն դադարի, ձորը կը խորանար, հորիզոնը կ'ընդլայնէր դէպի հիւսիս-արեւելք, ուրկէ արդէն ճամբու կիսուն, մեզի ցոյց կը տրուի Հաղբատի Վանքը :

Մեր բախտէն օդը պայծառ էր, օրը արեւոտ : Մեծ կամ փոք-

րիկ, ոչ ոք իրեն պատիւ կը սեպէր կառքերու երկար ճանապարհը բռնել, լերան կողերը լերկ էին, ոչ մէկ բուսականութիւն, դիմացի լանջերուն հակապատկերը, կորսուելու ոչ մէկ վտանգ: Մեծ կամ փոքր քար մը, անխոհեմօրէն գլորուած, քանիցս ճամբան կտրելով մինչեւ ձոր արգելքի չպիտի հանդիպէր, եթէ ոչ կառք մը կամ մէկ-քանի ճամբորդներ:

— Տղէ՛րք, զգոյշ: Քար չգլորէք:

Օրուան կարգախօսը:

Սաւահինցիք գորակոչի ենթարկուեր են, կիներ, օրիորդներ, նաեւ մէկ-քանի ծեր ու չափահաս տղամարդիկ կը դիմաւորեն մեզ ժպիտով ու կարեկցութեամբ: Փոքրիկ շէնք մը, յարակից տաղաւարներ, արդէն պատրաստ են Տիկիմ Շուշանիկի երկրորդ որբանոցին համար:

Աչք չլացնող, այն ալ անկուշտ աչքեր, սեղան մը տաղաւարներէն է՛ն մեծին մէջ: Ո՛չ նախապէս, եւ ոչ ալ թերեւս յետագային որբերը նման համեղ եւ առատ ճաշ կրնային վայելած ըլլալ: Սրտագեղ ընդունելութեան ապացոյց մը հայ գիւղացիին կողմէ իր անբախտ զաւակներուն, ու անոնց օրուան յոգնութիւնը փարատող սպեղանին: Արդարեւ հագիւ պատանները տեղաւորած, երախտագիտական պար մը կը յաջորդէր խնձոյքին, որ անտարակոյս ախորժաբեր եղաւ նոյնպէս յոգնատանջ իրենց Մեծ Մայրիկին եւ իր վաղեմի բարեկամներուն, Սաւահինի մէկ-քանի ազգայիններուն:

Հայ արծուերոյնին մէջ, պահուով, կեանքը յանկարծուստ կը վերածնէր, նախորդ օրուան մեղամաղձոտ երգերուն ելեւէջները դրժորք նետուած: Քրոջս հետ մեր բաժանումէն ի վեր տարի մը անցեր էր, զինքը կը տեսնեմ, անցնող շարաթներու մտահոգութիւնները, վտանգները, յոգնութիւնները թօթափած՝ պարին գլուխը, որբերուն զսպուած ցանկութիւնները քաջալերող՝ իր պաշտօնին տարբեր համամանքովը եւս:

Հազար մեզը վարը տուած խոստումէս գերուած, այն պահուն ես պիտի թռչտէի ալլուր: Երեկոյեան կամ գիշերային ծառայող, անհամբեր էի Սաւահինը զննել, ճանչնալ, Հայոց բարձրագոյն մեծ գիւղը, ինչպէս ինձ կը թուէր:

Տաղաւարէն դուրս կը կծկեմ, դէպի արեւելք բաց հորիզոն մը՝ դիմացը Հաղբաւտ, գիւղ եւ վանք օրուան մը չափ հեռու: Քիչ մը ցած, երկու հարիւր մեզրի վրայ, Սաւահին վանքը: Բոլորտիքը կը դառնամ, ներսերը մտնելու փափաքս յաջորդ օրուան թողլով, անխնամ, ամայի, սակայն ոչ մէկ աղբակոյտ, անոր հաստակուռ սիւներով ցածրիկ կամարները ճիշդ է որ կը տպաւորեն զիս, կարծես աշխարհի բեռը կայ անոնց վրայ, առանց մեծ հիացումի, ակնկալած մխիթարանքս չեմ գտներ, որուն կարիքն ունէի:

Կը խոստանամ ինքզինքիս կրկին վերադառնալ, արդէն հիւրընկալ անձ մը, վարդապետ մը չ'երեւիր, կամարներուն տակ բոլոր գոները փակ են: Հոն պահուած են Էջմիածնայ թանգարանին, ազգային տարողութեամբ մեծագոյնը, երկրորդական կարգի արժէքաւոր մասունքներն ու գանձերը, ես այդ արդէն գիտէի, տեղւոյն վերայ տեսած էի այդ իրերուն երրորդական արժէք ունեցողները, քանի որ անոնցմէ ամենէն թանկարժէքները զրկուած էին Մոսկուա կամ Լենինկրաւ մայրաքաղաքները՝ առ ի ապահովութիւն օտար ներխուժումի:

Այդ պահուն ի գուր կը թափառէի՝ փնտռելով հերկուած ու ցանուած արտեր, մրգաստան, բանջարանոց, այդ ընդարձակ գառիվերերուն վրայ արածող ոչ մէկ կենդանի: Ո՞ր են այդ գիւղին շրջանները: Քննութիւններս ընդարձակելու արգելք էր յոյնութիւնս, սկսաւ ճնշել, մանաւանդ Ալլահվերտի վերադառնալու խոստումս կը մղէր որ ետ դառնամ, յարմար առիթը դարպասեմ՝ քրոջս հետ լուսաբանուելու այդ կարեւոր խնդրոյն վերաբերմամբ:

Գլուխս առաւ գրկին մէջ: Ի՞նչ կը պատրաստէր իբր պատասխան, աչքերը սրբելու ատեն միայն ազատեց զիս:

— Հապա մեր երգովմը:

Երկար տեւեց լուսթիւնը:

Ի վերջոյ, առժամեայ շատ լաւ կարգադրութիւն մը եղած ըլլալը յայտնեց: Իրարմէ շատ հեռու չէինք, եւ ինքը թէ՛ Տիկին Մայրիկի, եւ թէ միւս ծառայողներու մօտ աւելի անկաշկանդ պիտի զգար ինքզինքը, իր սեփական եղբայրը, մանաւանդ տարեց ազգական մը որբանոցին պարտադրելու մեղադրանքներէ զերծ:

— Գալով Սպայից Վարժարան երթալու հաւանականութեան, տակաւին պէտք է լրջօրէն մտածեմ, առ այժմ պարզ զինուոր մնալով գոհացիր:

Ուշ երեկոյեան, Տիկին Շուշանիկ, քանիցս համբուրելով ու արցունքով, զի իր միակ որդին, սպայ, պատերազմի սկզբին զոհուած էր գերմանական ճակատին վրայ, սրբեց իր այտերը, կրկին սեղմեց զիս կրծքին, գովեց ու կնքեց մեր այս կարգադրութիւնը:

Սանահինի առաջին առաւօտը, լերան կանխածագ արեւուն երբ աչքերս բացի, հազիւ ոտքի, քնատ եւ անտրամադիր, զիս բարեւոզներէն, անջատ-անջատ, մտերմիկ երեւոյթով, վրաս կը թափուի նոյն հարցումը:

— Այս գիշեր ինչո՞ւ պոռացիր:

Ահա եւ քոյրիկս, որուն պատմեր են հարիւր բերաններ գիշերային այդ ելոյթս: Զիս քննելով կը մօտենայ:

— Գիտե՞ս: Այս գիշեր ամէնքս ալ գէշ քնացեր ենք: Հազիւ

ժամը վեցն է, ժամ մըն է ամէնքն ալ ոտքի են, չես գիտեր ի՞նչ ընելու :

— Շատ կերան : Յոգնած ալ էին : Մէջ ինկաւ Թագուհի քոյրիկը :

— Լեռնային օդն է երեւի, վճռեց Օր. Տիգրանուհին, որ մեծ եղելու թեան տեղեկանալու համար նոյնպէս մեզի կը միանար :

— Ձեմ գիտեր, ըսի, ամօթէս վարարուն : Ես բան մը չեմ յիշեր :

— Պատմէ՛ նայիմ, ի՞նչ երազ տեսար, երբ երերալով, առանձնացած, քոյրիկիս հետ գետին ինկանք՝ արեւու շողերուն մէջ պլլուած :

«Ձմրուխտ մամիկի տունն էի, իր ձայնը հեռզհեռէ բարձր զիս կը կանչէր, վազեցի պատշգամ, սովորական տեղս, ձորին վրայ թառած՝ որ աւելի անդունդի երեւոյթ ունէր կարծես, որուն երկու կողերուն վրայ շարք-շարք փեթակներ կան, բռնջենիներու, նշենի, ծիրանի եւ բալի, ու ա՛յլ կեռասենիներու շարքերուն մէջ պահուրտած, ծառերուն վրայ արտակարգ գեղեցկութեամբ ձիւնի գոյնգոյն փաթիլներ են թափուեր, որոնց միջեւ կը շրջէր մեղուներու ամպ մը, սակայն սեփ-սեւ : Մեր մամիկին ձայնը աղէկտուր, ընդհատ-ընդհատ անոնց պարերուն մէջէն կ'արձակուէր, բայց զինքը չէի կրնար նըշմարել : Հոս եմ, հոս եմ, պոռալով, սանդուխներէն վար, իրեն կը փորձեմ հասնիլ, քայլերս սակայն բռնուեր են, միայն պոռալու կարողութիւնս ի գորու է : Մէկէն չորս կողմս մթնեց, ծաղիկներու փայլը անհետացաւ, ինքզինքս կորսուած գտայ : Ձեռք մը կուրծքիս վրայ կը ճնշէր : Արթնցայ » :

Երագիս հաւատարիմ պատկերը տալու համար, ինքնամփոփ, աչքերս գոց դայն կը վերապրէի, մինչ քովս, քոյրս արցունք կը թափէր՝ լուռ :

— Իմ պատճառովս, խեղճ մամիկս, եթէ տակաւին ողջ է, կը տառապի իմ պատճառաւս :

Քիչ մը ձեռներէց ոգի ունեցողներու համար ազատարար գօտի էր Հագարիին՝ մեր գիւղը : Մեր Ձմրուխտ մամիկը, իր հարսին եւ Օննիկ զարմիկիս հետ, պատճառ մը աւելի ունէր կռահելու այդ հանգամանքը, իր աղջկան հոն գտնուիլը մանաւանդ : Մեկնումի ատեն քոյրըս գտնելու՝ զայն իր հետ առնելու փնտռուքէն ապարդիւն մնացած, խորհած էր որ Վարդանոյշն եւս նոյն մտածումներով անպայման փորձեր էր իր հօրենական գիւղն ապաստանիլ, ու մեկնած էր առանց անոր : Միալեր էր, ինչպէս իրեն հաղորդեր էին գիւղի մօտերը հանդիպած ծանօթներ :

Ետ կը դառնայ խեղճ մամիկս : Ինչպէ՞ս կրնայ իր աղջկան ու

փեսին ներկայանալ, անոնց մօտ ապաստան փնտռել երեք հօգիով, անոնց զաւակը, իր ալ սեփական թոռը՝ ետին թողած :

Ետ կը զառնայ, դէպի տառապալից աքսոր եւ մահ :

Անդամ մըն ալ անոր յիշատակը կը հալածէ մեզ, Սամահինի բարձունքին վրայ թեւէն քաշելով կը վազենք աւելի լաւ առանձնանալու, ու քոյրս միտիթարելու խօսքերը այլեւս ես ինքս միայն կը լսեմ, ինծի ուղղուած :

— Հապա միւսները, այն ամէնքը, բոլոր այն անմեղ արարածները, ո՞վ է անոնց պատճառ եզոզը :

Նախաճաշի համար մեզ փնտռելու ելեր էին : Բան մը ընելու արտորանքով զայն հագիւ վերջացուցած, Թագուհի քոյրիկին կը համարձակիմ յայտնել վար (Ալլահփերտի) իջնալու որոշումս :

— Չէ՞ որ կը փափաքէիր նախ Սամահինը ճանչնալ, շրջակայքը, իր վանքն ու թանգարանը :

Հազար աղբիւրէ ջուր բերի, քոյրս եւ Թագուհին համոզելու, անոնցմէ ծածկելու միակ ճշմարտութիւնը, անցնող դիշերուան երազիս ուժովը պոռալ իրենց՝ «Սանահինը աչքէս ելաւ» խօսքը :

Ծներ էի Հայոց լեռներու ծերպերէն միուն մէջ, որուն խորտուրոզ լանջերն ալ դարերով արգասաւորուեր էին հայ նոյն չարքաչ գիւղացիին քրտինքովը՝ լաւագոյնս ապրելու, լաւ օրերու յոյսով : Ի՞նչ էր մնացեր : Կը գտնուիմ ոչ թէ խորթ, այլ շատ հեռաւոր բարձրաւանդակի մը վրայ, ուր նոյն գիւղացիներուն եղբայրները կը ճըզնին յանուն միեւնոյն սրբազան առաքելութեան : Ինչպէս երէկի, այժմ այսօրուան, նոյնպէս վաղուան անորոշութիւններուն առջեւ, սիրտս կը մղկտայ :

Ի՞նչն է ուրեմն հոն ինծի անձանօթ, եթէ ոչ անոր վաղուան լինել թէ չլինելուն առեղծուածը, ու կը թռչիմ վար՝ այս վերջինը լուծելու :

Բարձունքի կիսուն կանգ կ'առնեմ, «ետեւէս ինկողի» պէս վազեր եմ մինչեւ հոն, զառիվերին ահաւորութիւնն է որ մարմինիս ծանրութիւնը կը քաշէ, եւ անոր սանձը փնտռել ու քաշելու մէջն է միայն խտացած իմ կամքս ու անոր ճիգը :

Շունչս բռնած, վարի անդամներու թրթռալը երբ քիչ մը կը հանդարտի, առջեւ փոռուած կը տեսնեմ Ալլահփերտի խորշը, իր գործաւորական տներով, ծխնելոյզով, Դեւ-Բեդի հովիտին ուղղահասակեաց : Այնքան ձիգ է զառիվարը, որ դետը ամբողջ հունով, դիմացի եզրին ձգուած երկաթուղային դժերը, կայարանն ու իր յարակից մասերը կը զանազանուին շուքին մէջ, երբ արեւը տակաւին իմ աչքերս կը ծակծկէ, կէսօրէն շատ քիչ անց :

Զիս կեցնող պատճառ մըն էր ձորէն եկող հրացանի ձայները :

Ուշադիր կը պրպտեմ վարը, արտառոց ոչինչ կը նշմարուի: Մէկը ձեռքերուն ամաններ փարտելով դէպի հանքաւան կը դիմէ, կասկած չի վերցնէր՝ վահանն է: Հրացանի ձայները կը դադրին, չորս-հինգ հոգի, զէնքեր ուսերնին, կայարանի պահեստատունէն ներս կ'անցնին: Կը փորձեմ վահանի ուշադրութիւնը ինծի դարձնել՝ իր անունը բղաւելով:

Իրապէս տէրը չեմ քայլերուս, անոնք զատիվարին չլթայուած կը քահուին ու կը թաւալեն զիս ուղղաձիգ՝ արահետէ-արահետ:

Կամուրջ հասցնող վերջին դարձուածքին անկիւնն եմ, միւս կողմէն վահան ծանրաքայլ կայան կը դիմէ: Կը պոռամ, դոյլերը գետին կը դնէ, զիս նշմարեր է, ձեռքերը տարածուն դէպի ինձ, կը սպասէ:

— Ինչքա՞ն պիտի ուրախանայ Պարուչիկը:

— Ի՞նչ Պարուչիկ:

— Ես գիտե՞մ: Ամէն օր տարբեր անուն կու տան տղուն, մեր հրամանատարը ըսել կ'ուզեմ:

— Քիչ առաջուան հրացանի ձայնե՞րը:

— Հա՛, ուղած տեղդ է: Քիչուր ըլլալնուն, օրը երկու անգամ մէկական ժամ, այդպէս «կը պարպեն»:

— Հոս մա՞րդ կայ ըսել կ'ուզեն:

— Ծիչդ այդպէս: Բայց շատ հայրենասէր տղաք են, ասոնց մէջ առաջին անգամ կը տեսնեմ:

— Ասոնքը ո՞վ ըսել կ'ուզես:

— Ռուսահայերը:

— Սո՞ւս: Պարուչիկդ կու գայ:

Հինաուուրց բարեկամի մը պէս, բազկատարած ու ժպտադէմ «ընկեր» հրամանատարս ընդառաջ կու գայ, «նոր կարգերու» զինուորականներ ենք:

— Ապրես, եւ այդպէս շուտով, ինքս, անիրաւ կասկած ունեցայ որ վերադառնալու չես:

— «Հէլվաս» կարօտցաւ, ու վահան աճապարեց ընդունելութեանս պատշաճ ընոյթ տալու համար «նորը» ետեւ:

Ի պատիւ ինծի, անտնալով ու մեր համբերութիւնը բերաննիս բերելով եփեր էր իր լաւազոյն հալվան, ինքն ալ արդէն հրաժարելով «հէլվա»յէն, յարած էր անոր նոր անուանակոչութեան: «Զինակից»ներս նոյնպէս գործի վրայ են, նստարաններուն վրայ, դուռ մը երկարած՝ սեղան պատրաստեր են, վրան սաւան մը, «սպիտակ», գաւաթներ եւ «Կարխէթինսքի»ի շիշեր:

Վահան տապակը ձեռքին հանդէսը կը յայտարարէ բացուած: Կը պարպեն կենացս: Աստրախանցի՛ն՝ իր ոգին եւ ձեռքի գաւաթը դէ-

պի երկինք հանած՝ գովեստս կը հիւսէ, կարճ բացակայութեանս իբր խօսակցութեան նիւթ, անտարակոյս Վահանի կողմէ հասցէէս շուշուած յայտնի կամ դալիք շնորհներուն, որմէ նուազ օգտուողը ինքը չէ որ պիտի չըլլայ:

Մեր «մարաջխտ»ը, որ ո՛չ վանական է, եւ ոչ ալ ժուժկալ, միանգամայն յայտնաբերեց որ ինքը զգաստ մէկն է եւ պատասխանատու, ու ընթրիքը տեղի տուաւ շուտով օրուան յայտադրին:

Պէտք էի ծանօթանալ տեղւոյն եւ նոր «պաշտօնիս»: Կատակելն ունի իր չափն ու ժամանակը:

Մառան-տաղաւարներուն մէջ կը տեսնեմ պատերուն կոթնած մարդակերպ փայտէ «գլինուորներ», հանճարեղ «մարաջխտ»ի ռազմավարութեան կերտուածքները, որոնք ամէն օր գլինավարժութեան ժամերուն ծառերուն եւ քարաժայռերուն կոթնցնել կու տայ, առտուն կանուխ զանոնք յարդարելու եւ իրիկունները ուշ ներս բերելու պայմանաւ, երբ մարդ-մարդասանք իրաւունք չունի մեր շուրջը դառնալու, բացի կայարանի ծառայողներէն, Հայեր, ընդամէնը երեք հոգի, այս կատակերգութեան տեղեակ երգուեալներ:

Գնումներու հերթը երկու նպատակ կը հետապնդէ, մեր թիւը շատ ներկայացնել, ամենուն ալ պտոյտի առիթ ընծայել, քանի որ մեր տաղաւարներուն մուտքը ունէ մէկուն խստիւ արգիլուած էր: Զինավարժութիւնը միմիայն դիմացի սարերուն նապաստակներն ու կաքաները վախցնելու բնոյթ չունէր, այլ մարդոց, արդէն մենք չեկած՝ մեր տեղւոյն վրայէն թռչո՛ւն անգամ չէր համարձակեր անցնիլ:

Անմիջական շրջապատին մէջ Թաքարներ չէին բնակեր: Յոյն հանքագործներուն կողմէ բացայայտ թշնամութիւն չէր պատահած, իրենց օրինակին հետեւելով մեր Աստրախանցիմ ալ նոյնքան վերապահ էր, եւ իր մասին տարածած էր խիստ եւ անգութ մարդու համբաւ, ու ոչ ոքի կ'ընդունէր անձամբ:

Հոս ալ օրերը անցան դարերու համարժէք տենդով եւ յոյգերով, լաւ նշանառու դարձայ, եւ սակայն նոյնքան արագ հասաւ միօրինակութեան աւերիչ ճնշումը վրաս, կը մնայինք անտեսուած ու լքուած, իսկ անցնող գնացքները նոյն սրտաճմլիկ պատկերը կը կըրկնապատկէին՝ փախուստ:

Պարուչիկը սկսաւ նեղսրտիլ Սպայից Վարժարանի վերաբերեալ կրկնակի, անվերջ հարցումներէս: Կը խուսափէինք մէկգմեկէ: Վահանիմ հալվաներուն համն ալ փախաւ:

— Ես ի՛նչ անեմ, ա՛յ տղայ: Ուզում ես փորձի, ինքզ զնա Թիֆլիզ, եւ ներկայացիր որպէս թեկնածու:

Ականջիս հասեր էր թէ ի՛նչպէս իմ մասին գանգատ կը յայտ-

նէր զինակիցի մը, «այլապէս հետաքրքիր տղայ է, բայց «զահէտ» տանում է», եւ ա՛յլ խօսքերով,

Արդէն բուրբոսի ստարոտի եղաւ յարաբերութիւններս, իմ անհամբեր բնաւորութեանս պատճառաւ, կը մնար յարմար առիթի մը սպասել, որ, աւա՛ղ, այն ալ փախուստ կու տար:

Սպայէն տրուած վկայագիրի մը հիման վրայ կայարանապետը յանձն առաւ ձրի տոմսակ մը պատրաստել, ու առաւօտ մը ճամբայ ինկայ դէպի Թիֆլիզ, առ ի վարձատրութիւն «զինուորական ծառայութեան» պարկ մը ալիւր: Գնացքները հազուադէպ էին, թեքեւս վերջին առիթը:

— Ծօ՛, խենթեցա՞ր: Առանց քրոջը լուր տալու:

Վահան մանաւանդ ինձմէ բաժնուիլ չէր ուզեր: Վազեց սպային մօտ՝ արգիլելու այդ «անխոհեմ քայլս», ինչպէս ինքը որակած էր առաջին օրէն:

— Պարոն հալվա, եթէ զիս փոխարինող լինէր, մէկ րոպէ իսկ չէի վարաներ նոյնը փորձելու:

\*

\*\*

Հիասթափումէ հիասթափում, փախուստ կրկին, վտանգ, վերադարձի ձախող ձեռնարկ:

Ճամբայ ինկայ նոր երազներու ետեւէն: Ա. կարգի բաժնեակի մը նստարանին տակ պարտկեցի պարկ մը ալիւրս՝ երկու սրունքներս անոր պահապան:

Երազներուս մէջ պլլուած, ի վերջոյ անդրադարձայ որ զնացքը կ'ուշանար Սառախլուի կայարանին առջեւ: Քովիններուս աչքերը իրենց ժամացոյցներուն վրայ են, մէկը թեւին նայեցա՞ւ, միւսը գրպանէն տուփ մը հանած՝ կափարիչը կը բանայ հանդիսաւորապէս, դանդաղ, քիչ մը ժամանակ շահելու համար, երբ կը գոցէ՝ աչքը վերաս կ'իյնայ, ու թեքեւս կը զգայ որ ժամացոյց չունեցողին համար ալ վայրկեանները նոյնքան տաղտկալի են:

Գաղտնիք մը չէր, որ Հայաստանէն եկող ոչ մէկ հայ ճամբորդ կրնայ Սառախլու կոչուած տիրահոշակ կայարանը իջնելու խիզախել, ինչ որ ալ ըլլայ այդ քայլը առնելու հրամայական որեւէ պահանջ:

Սակայն մեր զնացքին ներսն ու դուրսը, անոր երկայնքն ի վեր, անօրինակ երթեւեկ մը տեղի կ'ունենայ, անոր անձեռնմխելիութիւնը եւս անցեալին մաս կը կազմէ, բաժնեակներէն Հայեր կը հրաւիրուին իջնել կայարանի սրահը, ի հարկին բռնութեամբ, ուստի վէճ, բողոք, ու բանակոխ անցորդներու եւ արտակարգ երեւոյթով մարդոց միջեւ, որոնց կ'ընկերանան զինեալ Թաքարներ:



Չանճրոյթ, անձկութիւն փարատելու միտումով զլուսնս դուրս  
կը հանեմ պատուհանէն, քովս նստած տարեց կին մը՝ շիկահեր, բո-  
լորովին անծանօթ ինծի, բայց երեւի դէպքերուն աւելի տեղեակ,  
զիս ներս կը քաշէ, ինչ որ տարօրինակ կը թուի ինձ: Մի՞թէ արդեւք  
մը եղայ իրեն: Այդ ակնթարթին ատեն կը նշմարեմ որ բոլոր վահան-  
ներուն առջեւ զինուած մարդիկ կան:

Մերինին մէջ կը խուժեն Թաքար մը երկու զինեալներով, ու  
զիս կը «հրաւիրեն» կայարան՝ տոմսակիր քննութեան: Սրահը լե-  
ցուն է Հայերով, ամէն բերանէ ցասման աղաղակներ, դրան առջեւ զի-  
նուորներ»:

Կը խնդրեմ երթալ ջուր խմել, պահակ մը բրտօրէն զիս ներս  
կը հրէ, ուրիշ իրարանցում մը բռնի ներս քշուողներու առիթով, որ-  
մէ կ'օգտուիմ, փոքր եմ, երեւի անկարեւոր:

Կայարանապետին ջուրի մասին հարցնելու փորձիս պահուն,  
քովս նստած նոյն կինը մեր վրայ կը խուժէ: «Ասիկա իմ դարմիկս է,  
մենք Ռուս ենք, ի՞նչ իրաւունքով բռնի վար առին զինքը»:

Ռուս է կայարանապետը, բարի, անցուդարձերէն ալ յայտնա-  
պէս զզուանք ցուցաբերող երեւոյթ ունի, մեզ վակոն առաջնօրդելու  
ատեն ժամ առաջ զնացքը ճամբու դնելու աճապարանքը կը յայտնէ,  
ու մէկ ձեռքէս բռնած, միւսը տիկնոջ ձեռքին, մինչեւ սանդուխ կ'ըն-  
կերանայ, ու անոր պահակը մէկզի շարտել կը համարձակի: ~~Կրնա՞կ  
տեսնած 16 Մարտ 1921-ի Սովետ-Քուրք համաձայնութեան:~~

Կձկուած ազատարարիս կողքին, ահաւոր վտանգը, զոր ան-  
ցուցեր եմ, կը լեռնանայ մէջս, շղթայի նման մտքիս մէջ կը քակուին  
ինչ որ կը պատմուէր Թաքարներու բաժինին մէջ կատարուող ոճիր-  
ներու մասին՝ Հայոց հանդէպ միայն, երբեմն նաեւ Ռուսերու:

Շփոթութենէս, ամօթէս, լուռ եմ: Անձկութիւնս կը սաստկա-  
նայ, կայարանապետի սուլիչին է ականջս, ի զուր, պաղտաղողի  
դուրս կը շեղին աչքերս, ոչ մէկ շարժում: Անիւններու ձայնին է ու-  
շաղրութիւնս, միշտ ի զուր:

Թմրեր, քնացեր եմ անպայման, երբ տիկինը զիս կ'օրօրէ մեղ-  
մօրէն, ու ճակտէս համբուրելով կը դռչէ:

Սակայն գնացքը միշտ կանգնած կը տեսնուի, իրեն կը նայիմ  
ապշած ու աւելի այլալլած ծամածռութիւններով:

— Ա՛լ մի վախնար, քաքարական հողերէն դուրս ենք այլեւս:

Ուրեմն Սատախուռն, այդ անիծեալ անուներ կրող վայրին մէջ  
պիտի գտնէի վախճանս, առանց բացառիկ միջնորդութեան մը, հը-  
րաչքի պէս:

Նաւթուղի կայարանն ենք, միւսը Թիֆլիզն է: Նոր միայն ան-  
ծանօթ կնոջ ձեռքերը կը համբուրեմ: Բաժանումի ցաւը համակեր է

զիս անդամ մըն ալ, եւ ի՞նչ ուժղնութեամբ կ'ուտէ զիս, եւ սակայն . . . , իր աչքերը անվերջ կը համբուրեն զիս . . . , բայց չեմ կրնար շարժիլ, ցոյց կու տայ ալիւրի պարկս . . . , զայն աւելի ծանր կը գտնեմ :

Քարափին վրայ կը դիտեմ զնացքին հեռանալը, թեւս անկէ շարժուող թաշկինակին ուղղութեամբ: Քանի կը հեռանայ, անոր տեսքը կը պղտորի՝ տեսողութեանս առջեւ դոյսացող զոլորչիներուն սպիտակութեան տեղի տալով:

Ինչո՞ւ Նաւթլուղ: Անոր մօտիկ «Հաւլապար» հայաբնակ թաղը հաստատուեր էին մեր գերդաստանի ազջիւններէն մին, իր ամուսին Համբարձում(\*) Ամիրխանեան՝ ընտանիքով, որոնց հետ էր զարմիկներէս՝ Մկրտիչ Անդրէասեանը: Առժամեայ կայան մը ե'ւ փրնտուտուքի, ե'ւ ունեցած հարստութիւնս, մանաւանդ թանկագին դանձս՝ ալիւրի պարկս վստահելու, հօրեղբօրս ընտանիքին սահմանուած նուէրս, մինչեւ զիրենք գտնելս:

Գիշերը, զլուխս ու թեւերս պարկիս վրայ, անցաւ կայարանին զարմանապան բազմութեան մէջ, ուր վախը պիտի հալածէր անուշ քնիկս:

Գտայ ազգականներս: Հայ Սպայից Վարժարանի վրայօք ու չինչ, ուրիշ հոգ չունէի՞ն: Ա՞յլ էր պակաս: Մկրտիչ ձեռքի վրայ առեւտուրի հտեւէ էր, զինքը չգտայ տունը: Հօրեղբօրս հասցէն բացատրեցին, գտնէ հոտ բախտը ժպտող եղաւ, Նաւթլուղի մօտակայ հանրակացարանի մը մէջ էին: Շալկեցի ալիւրը, մինչեւ զիրենք գրտնելը թափած քրտինքս բաւ էր զայն խմորի վերածելու: Ընտանիքը ամբողջ էր, որ այդ օրերուն կը բազկանար մեծ մայրիկէն, Վահան հօրեղբայրէս, Սաքեմիկ հարսիկէն, Արտաշէս, Աշոտ, Անդրանիկ եւ Վարսենիկ զարմիկներէն:

Քրտինքս չչորցած, ոտքի ելայ, բուն միտքս ծածկեցի, ինքզինքիս հին Թիֆլիզեցիի հովեր տալով բաժնուեցայ:

— Երթամ Թիֆլիզ բարեկամներս գտնեմ, կը վերազանամ:

Միայն տղաքը ոգեւորուեցան յայտնութենէս, միւսներուն ուրախութիւնը կ'իյնար տոպրակիս փորին վրայ: Ի՞հ, մեղադրանք չէ, ի՞նչ, ի՞նչ օրերու ինկած էին մեծ ընտանիքի մը հոգն ունեցողները:

Քայլերս տարին զիս Պէհպուքեան փողոց: Մտայ ծանօթ դարպասէն, ումպ մը պաղ ջուր ըմպելու: Ծարաւ չէի, ուխտադնացութիւն մըն էր: «Շտապի» շէնքին դուռը կրնկի վրայ բաց էր, ՀԱՅԱՍ-

---

(\*) Արամ (Համբարձում) Ամիրխանեան, ֆոէգնօ (Միացեալ Նահանգներ, Ամերիկա) ՆՈՐ ՕՐ Քերթի խմբագիր եղած: Ապա ՆՈՐ ՕՐի խմբագիր եղած Են Մկրտիչ Անդրէասեան, Ամիրխանեանի փեսան՝ Աղան Էնգոյեան, Եւ Անդրանիկ Անդրէասեան:

ՏԱՆ թերթի խմբագրութեան յարկի դուռը դոց , թէեւ պատուհանները բաց : Միւս յարկերը միշտ դատարկ , եւ ամայութիւն : Վերնադոյն յարկարաժինին մէջ երբեմնի պահնորդ նախկին կամաւորն ու իր մայրը կը փոխարինէին անծանօթ մարդիկ : «Ազգութեան Կենդրոնը» Գայիանեան Դպրոցն է ըսին : Բարեւս կլլած՝ չուեցի հոն :

Կատարեալ ֆորում մը , փողոց , բակ , սանդուխ , զաղթականներ , ասեղ իյնալիք տեղ չկար : Ո՛րքս դարձաւ , ուղղուեցայ աւելի վար Շէյք-ամ Փագար , մեր Բարերգցիին ճաշարանը : Փակ էր , ետ դարձայ , զբաւանիս նիհարութիւնը անօթութեանս յաղթեց : Դարձեալ Գայիանեան եմ :

«Զինուորական Շտապ» հարցուփորձերով ինկայ մութ ու մըռայլ սենեակի մը , երբեմնի դասարանի մը մէջ :

— Ուզում եմ Սպայից Վարժարան մտնել :

Համազգեստաւոր տարեց զինուորական մը , վերէն վար սկսաւ զիս չափչփել : Պապիրոս մը հանեց , ինձ ալ հրամցնելու ելաւ , մերժեցի :

— Դու ինչացո՞ւ ես , մըթմըթաց ահուաներուն մէջէն , երբ իր ուսուերէն հարցումը անպատասխանի թողուցի , մէկ կողմէն լուցկին , մեղայ , մեղայ , «սպիչկան» պայթեցնելով :

Անհրաժեշտ էր «ուռեցնել» , ինչպէս իրենք էին «ասում» :

— Ս . Էջմիածնայ Գէորգեան Հոգեւոր Դպրոցի աշակերտ , . . . եւայլն , եւայլն :

Մարդը ժամանակ ունէր քուլայ-քուլայ մխացնելու :

— Էլ ուրի՞չ :

Հարկ եղաւ վերսկսիլ .

— Կամաւոր , Սանահինի զինամթերանոցին մէջ :

— Բա՛ , էստեղ ի՞նչ դորժ ունես ուրեմն : Փախուստ ես տուե՞ր :

— Սպաս յարմար դատեց զիս վարժարան զրկել , անոր արտօնութեամբ կը ներկայանամ :

— Ապա մի տեսնեմ : Ձեռքը երկարեց արտօնադրի ի խնդիր , պապիրոսը անցաւ ձախին մէջ :

Այդպէս բան դոյութիւն չունէր , սակայն պահեր էի ճրի տոմսակ տալու համար կայարանապետին յղուած թղթիկը , նաեւ տոմսակը , որ ո՛չ մէկ տեղ , եւ ո՛չ մէկը փնտռած չէր :

— Լա՛ւ : Որ էդպէս է , ես ոչինչ չեմ կարող անել : Վարժարանը Ներսիսեան նոր շէնքին մէջն է , բաւական հեռու , դու ինքդ ներկայացիր :

Երկրորդ , երրորդ պապիրոսը նախկիններով վառեց , ընկերացաւ մինչեւ դուռը , ուսիս թափ մը , եւ բաժնուեցանք : Վրա՞ս կը խնդար : Ոչինչ :

Յաջորդ օր, կէսօրը բաւական անց էր, թրամվէյ փոխելով, ու սպա հետիոտն, բարձրացայ Ներսիսեանի քարաշէն, փառայեղ, ընդարձակ ու դեղատեսիլ շէնքը, չըջապատը տակաւին ամայի: Մուտքին աջակողմը, առաջին յարկին վրայ դասարանի մը մէջ եմ, անկիւն մը սեղաններ, աթոռներ, մէ'կը միայն դրաւուած:

Ռուս սպայի համազգեստով միակ անձը հայերէնով փոխարինեց բարեւ, հրաւիրեց նստիլ, ու ցանկութեանս տեղեկանալուն՝ սառ ջուր թափեց դլխուս: Երկու կամ աւելի ամիս հազիւ կեանք ունեցած Հայ Սպայից Դպրոցը արդէն փակուեր էր վերջնականապէս:

Առ քեզի բախտ:

Կմկմալը աւելորդ էր, առանց այդ ալ դասերը ուսերէն էին, տարիքս, հասակս մանաւանդ՝ փոքր, ընդունելութիւնն հարցական: Միխիթարական փաստարկութիւններ: Այդ տակաւին բաւարար չեղաւ, ցաւալի լուր մը եւս:

— Մեր կազմը հրաման ստացաւ շարժիլ դէպի Հայաստան, ուր թուրքերը զաշինքը խզած՝ յարձակեր-դրաւեր են Ալեքսանտրապօլը, ու կը քալեն Ղարաֆիլիսայի վրայ:

Հեռախօսի կանչ մը բաժնեց մեզ: Վարը, դռնէն դուրս ամայի վայրի մը անկիւնը առանձնացած կը պատկերացնէի դրութիւնս՝ յոյսի ամէն նշոյլ չբացած, ազատ ասպարէզ տալով արտասուներ թեւերուն:

Բարձունքէն կ'երևի Նաւքլուդի կայարանը, որքան մօտիկ է՝ չեմ գիտեր, իննյողութիւնը կը հրամայէ ուղիղ ճամբան: Գլխիկոր կ'իջնեմ երկաթադճերուն վրայ, ուստի ամենակարճ ուղին, ու կոճղէ կոճղ ցատկոտելով կը հասնիմ կայարան, առանց արդելքի, առանց մէկու մը հանդիպելու: Ո՞վ որո:

Զինուորներու արտակարգ համախմբումի մէջ կ'իյնամ, Հայեր են, կը խօսին ամէն լեզուով, կը փնտռեմ Թրքահայեր, որոնք կը բացատրեն թէ բանը ինչումն է: Թուրքերը արդարեւ դաւադրաբար յարձակեր են Ալեքսանտրապօլի վրայ, եւ զայն դրաւուած առանց դիմադրութեան, ուրիշ տեղեկութիւն չկայ:

Երկու «էջըրն» լեկ-լեցուն (վահոններու շարք) Հայ զինուորներ կը սպասեն շողմեքենաներու: Բանակը ունի ուսուցիկ անուն մը՝ Արմիանսֆի Կրասնի Կվարդիա, որ թարգմանի Հայկ. Կարմիր Զօրամաս, որուն մասնայատուկ առաքելութիւնն է Ալեքսանտրապօլի վերագրաւումը:

Սպայ մը կը մօտենայ քովիններուս, կը յանձնարարէ շտապով սպրանքատար վահոններուն մէջ, բոլորն ալ նոյն տեսակի, հողով լեցուն պարկեր շարել երկու կողմերուն վրայ: Արդարեւ անկիւն մը

տոպրակներու զէզ մը ցոյց կու տայ : Հեռանալու ատեն թեւէն բըռնեցի :

— Զիս ալ առէ՞ք հետերնիդ : Սկսաւ ծիծաղիլ :

— Օրօրոցդ ո՞ւր է : Հարսնիքի՞ կ'երթանք :

Բացատրեցի ձեմարանը լքելէս ի վեր զինուոր ըլլալու համար ունեցած մտադրութիւններս, կատարած ձախող փորձերս, կ'աճապարեմ աւելցնել թէ ի՞նչպէս Ներսիսեանէն հոն ինկայ նոյնպէս սըրտաբեկ, Սանահիմի մէջ ծառայելու պատրաստակամութիւնս եւ հոն կատարած զինավարժութիւններս : Կը լսէ՞, կը քալենք միասին, ու ես չեմ դադրիր խօսք թափելէ :

Այո՛ մը, ո՛չ մը բերնէն չելած՝ վաղեց ուրիշ խումբ մը հրահանգելու : Կը սըրտամ իրեն հետ խումբէ խումբ, կարեւորութիւն տուող չկայ :

— Տակաւին պոչի՞ս ես : Բա ո՞նց կարելի է մաս կազմել բանակի մը արդ ձեւով, ես ո՛չ համազդեստ ունիմ քեզ տալու, ո՛չ զէնք :

— Զէնք կայ, մէջ ինկաւ զինուոր մը, պիտի կրնա՞յ դորձածել :

Ինչո՞ւ մէջ ինկաւ, ուղեց օգտակա՞ր ըլլալ, թէ մերժելու պատճառ ցոյց տալ :

— Տո՛ւր զէնքդ : Նշան մը ցոյց տուր : Երկրորդ կամ երրորդին տես ի՞նչպէս կը խփեմ, ըսի համարձակ :

Միշտ նոյն անտարբերութիւնը : Կը հետեւիմ անո՛ր, որմէ զէնք խնդրեցի :

Վալոնին առջեւ կ'աճապարեմ ինքնաբերաբար օղնել հողակոյտերու կառուցման, պարկերուն բերանը բաց բռնելով, բան մը ըսող չ'ըլլար, հետերնին «տուն-տեղ եմ», եղած-չեղած չոր դլուի մ'ունիմ ծածկելիք :

Երկրորդ «էշըլոն»ին մէջն եմ, քրտինքս կը սրբեմ, բոլորին համակրալից ակնարկները վրաս են, նոր կը նշմարեն գոյուլթիւնս : Առաջին դնացքը մեկներ է արդէն, կը հետեւինք քառորդ ժամ չանցած :

Դէպի՞ Հայաստան : Վերացե՞ր եմ :

Յիսնեակը որդեգրած է զիս, լայնկեկ «շիմեյ» մը նախ, ապա մանաւանդ զէնք մը, քսան փամփուշտ, համայնական ճաչէն բաժին՝ օրուան առաջին խնձորը :

Մութը վրայ կը հասնի, ինքնիրմէս դո՛հ՝ դլուիս հողապարկի մը վրայ անուշ մրափեր եմ մինչեւ յաջորդ առաւօտ՝ արեւածագ :

Ինձ կը թուի թէ Նաւթլուդ ենք տակաւին, ո՛չ, Սառախլուէն (անիժեալ) մէկ կայարան առաջ, կը սպասենք միւս էշըլունէն հաղորդութեանց :

Գեղեցիկ կայարան մը, ծառ, պուրակներ, կանաչութիւն, երկու կողմը հերկուած դաշտեր, լայն հորիզոն :

Մեր դանդաղումները մեկնաբանող խօսակցութիւն մը տեղի կ'ունենայ, գլխաւոր պատճառը շոգեմեքենաներ բաց թողնելու ընդդիմութիւնը՝ Վրաց պաշտօնէութեան կողմէ, նաեւ Վրաց զբահապատ գնացքի մը մէջտեղ չելլելը, մեզ առաջնորդելէ խուսափելը, հակառակ նախապէս կատարուած համաձայնութեան, ոչինչով կ'ուզեն նըպաստել Անդրկովկասեան Միութեան պաշտպանութեան գործին հայկական ճակատի վրայ, իսկ մեր հրամանատարութիւնը կը խուսափի ժամովաճառ ըլլալէ՝ Սատախլուի Թաքարներուն հետ ընդհարումով բուն նպատակէն շեղելու :

Վրացիք կը մնան անյայտ, հեռախօսի գործիքին շուրջ ամուլ փորձեր գիրենք գտնելու, Թիֆլիզ ուղղուելիք խնդրանք, պահանջ, կը մնան անյաջող : Ի վերջոյ կը վճռուի յառաջանալ, բարեբախտաբար մեքենավարները Հայեր են :

Ատեն մը յետոյ, սակայն, փակ վակոններու մէջ ընկողմանած, մեր խօսակցութիւնները դադրեցնել կը հրահանգուի, իբր թէ Հայաստան դրկուած պարագ վակոններ ըլլան :

Շունչերնիս բռնած, անիւներու ձայնը կը կտրուի, մեր վրայ թափուող դնդակներու հարուածներէն, համազարկերու կրկնուէն :

— Թուրք բանա՞կը : Մարտկոցներուն մէջ պառկած զինուոր մը կը համարձակի խօսք առնել, այս որքա՞ն շուտ հասան :

— Իսկ մեր առաջին «էջըլտօն»ը, կը լսուի ուրիշի մը հարցումը համազարկի մը ընդմէջէն :

Երկու կողմերէն վակոնները ծակող դնդակներու հարուածները պահ մը կը դադրին, անոնց հետքերը կը նշմարուին մարդահասակէն վեր առաստաղի մօտերը գիրար խաչաձեւող շողերով : Դադարը կը շարունակուի, վար թափուելու եւ դիմազարձի հրահանգը կ'անցնի շարքէ շարք :

Այս անգամ լուութիւնը խզողը մեր կողմէ կուրօրէն արծակուած դնդակներն են, մեզի համար աւելի վտանգաւոր ձեւով, իր անկարգ եւ խաչաձեւող բնոյթին բերմամբ, որ բարեբախտաբար կանգ կ'առնէ առանց մեր ձեռքով մեզմէ զոհեր տալու :

Մեր հրամանատարներուն պէս, յանկարծակիի բռնուած, ամբողջ էութեամբ անդամայրոյժ դարձեր էի, թէեւ վար ցատկելու հրամանին շփոթութեան մատնուողը մինակ ես չեղայ, ապա ինչի՞ կը ծառայէին մեր հիւսած մարտկոցները :

Երբ վերջապէս վար ինկայ, դադարը կը շարունակուէր, մեր ինները երկու կողմի վրայ շղթայ կապած կը յառաջանային դաշտերուն մէջ : Մեր ենթասպան չվարանեցաւ վախի վերադրել ընթացքս,

եւ իրաւ առաջին մեծ վախս էր, թէ եւ չէի կրնար այդ կարճատեւ պատահարը պատերազմ եւ կրակի առաջին փորձութիւն սեպել: Ամօթս գրկած՝ գէնքիս հետ վահոնէն դուրս էի, եւ մէկ կողմի վրայ դիրք բռնած, առ ի պաշտպանութիւն յառաջացողներու, ինչպէս կը բացատրէր կողքիս պառկողներէն մին:

Հրաման ստացանք «վազըով» կայարանէն 100 մեթրի վրայ հողաթումբի ետին ապաստանիլ եւ դիրք բռնել, մինչ երկու կողմերու վրայ հետախոյզներ ոստումներով կ'ընդլայնէին մեր շրջանակը: Փամ մը թերեւս տեւող այդ գործողութիւններէն անոնք վերադարձան Թաթար մը ձեռք անցուցած, զոր կ'առաջնորդէն կայարան ապաստանած սպայակոյտին մօտ:

Շրջանը երեք քերտմեթրի վրայ խաղաղ էր այլեւս, ես նոյնպէս խաղաղած էի եւ տարբեր հով մը կը փչէր ներսիդիս, վտանգի անգիտացում կամ անոր հանդէպ անփոյթ վիճակ մը: Ոտքի կանգնեցայ, կշտամբելով պառկեցուցին:

Գերին, ոտքէն վերաւոր Թաթար մը, յայտներ է որ կատարուածը մեր գոց վահոններու ինքնութիւնը ճշդելու փորձ մըն էր: Ապուշներ չէին ուրեմն:

Ուրիշ տեղեկութիւն չէր կարելի եղած կորզել: Մեզի հրահանդեցին վահոն բարձրանալ, պիտի մեկնէինք, անշուշտ յառաջ: Հրացանի նոր պայթում մը:

— Մաքրեցի՛ն, եղաւ մէկ-քանի բերնէ թռած նախապատրաստի խօսքը:

Կը յառաջանանք դէպի Սատախլու, դէպի Հայաստան, բաց դաշտի մը մէջտեղէն, վահոնին դռները երկու կողմի վրայ բաց, մենք տուրակներուն ետեւը պատնիչուած, յանկարծ վահոնները իրարու կը կպին, անիւներուն երկաթները կը ճոնչեն ամեհի ճիչերով:

— Շղթայ կապած, յառաջանալ գծի երկու կողմերուն վրայ: Հրաման մըն է: Աստուած իմ, ի՞նչ է պատահեր: Ոչ մէկ հրացանի ձայն:

Քիչ մը քովնտի, կը պարզուի ահուելի տեսարան մը, մարդիկ՝ կին, երախայ, ճչալով կը վազեն դէպի մեր ուղղութեամբ:

Հայե՛ր են, անշուշտ Հայեր:

Մեզի հասնողները, ապաստան գտած, շնչասպառ դետին կը փռուին, կցկտուր բռներ արտասանելէ եւս կը դադրին, հեռուն վազքը կը շարունակուի, կը խտանայ ու կը նօսրանայ: Խուլ վայնասուն մը, նորատեսակ պատահար մը, սրտաճմլիկ, ահագողու փախուստի մը պատկեր, որ զիս կը պատէ սարսուռով: Կարեկցութիւն, ընդվզում, կատարուածին հանդէպ անկարողութեան խայթ, լուռ, հրացանս գրկած կը վազեմ զինակիցներու կողքին, եւ մեր

երկու շղթաներուն միջեւ նորեկներ կը փոռւին դետին, այդ էր ըլլալու մեր վաղըին նպատակը: Փախչողներուն ապահովութեան ողջոյն մը հաղորդել, որ կանգ առնեն, շունչ առնեն, ու իրենց հեծկըլտուքին ասպարէզ տան:

Փախչողներուն վերջին խումբին հասած ըլլալ կը կարծենք, տաղնապը տարբեր ձեւի կը վերածուի: Կը լսուին խուլ, ընդհատ-ընդհատ, հրազէնի ձայներ, մերթ համազարկ:

— Սատախլուէն կու գայ, անիծեալ Սատախլուէն, ուր թրքական դորքի ներքին օժանդակները, Թաքարներ, յարձակեր են Ղարաֆիլիսան լքող վերջին զնացքներուն վրայ՝ ամբողջութեամբ Հայեր: Կովկասեան Սէյմի երրորդ անդամը, դաւաղիւր, կը դործակցի ջարդարար Թուրքին, հայ դերացի ժողովուրդին վերջին մասնիկները փճացնելու, կոտորելու անարգ առաքելութեան, ու կը սպաննեն ինչքան որ կրնան ձեռք անցընել, նոյն կարգախօսին հլու-հնազանդ արիւնարբու դազաններ են դարձեր: Թուրք բանակին յառաջապահներն են Սատախլուի մէջ, հայ ժողովուրդը որողայթի մէջ բռնած:

Բախտաւոր դուզադիպութեամբ մը, փախստականներուն ի նըպաստ, մեր առաջին «էջըրոն»ը հոն կ'իյնայ ճիշդ ժամանակին, դիւրին, աժան, ամբողջական բնաջնջում մը վերածելու կուրի, եւ զայն հրահրող անարգ դերակատարներու փախուստին:

Պահուած ցորենի մարդահասակ արտերուն մէջ, ծառերու վըրայ, թուփերու ետին, դարանակալ քաքար ոտխը կը ծակծկէ իր զնդակներով Հայերով թխմուած վակոններու լանջերը, ամէն կողմէ, վտառ՝ որ իւրաքանչիւր զնդակ տասնեակներու մահ պիտի սփռէ:

Վակոններու տանիքներէն, նոյնպէս լեւի-լեցուն, ողջ կամ վըրաւոր ու մեռեալ, թուփի պէս վար կը թափին: Երէկի ջարդերէն վըրապրողները հոն կը դտնեն իրենց վախճանը, իրենց «զաչնակից»ին կողմէ: Անոնք Կովկասի ուղիները հրով ու սրով կը բանան զայն գերելու եկող Թուրքին, յանուն համաթրքութեան, նախանձէ մղուած ու երբեք չանթեղուած դազանային բնազդով գինոյցած:

Իրենց չար բախտէն, կուրի է, եւ գիտեն անոր նշանակութիւնը, գիտեն անոր վճարելիք գինը, երբ գէնք կայ Հայու ձեռքին:

Ուրեմն երկաթաղծերուն երկու կողմը, կանխապատրաստուած գիրքերու մէջ պահուըտած, Թաքարները երկու կրակի մէջ սեղմեր են վարէն եկող զնացքները, իրենք անտեսանելի են մեր գինուորներէն, ու ասոնց միջամտութեան կշիռ տուողը կը հանդիսանայ հայ քաջարի, անձնագորհ կին մը (Երզնկայի նահանջէն երկրորդ անգամ վըրապրող): Վակոնի մը տանիքին վրայ հասակով ցցուած երկու կողմի վրայ կը մատնանչէ մեր նշանառուներուն Թաքարներուն պահուած գրուխները, եւ անոնք անջատ-անջատ եւ համազարկերով կը հնձեն զանոնք անվրէպ:



— Սուրբի մը նման թեւերը տարածած, երկու կողմի վրայ, մէկ հոս մէկ հոն ցոյց տալով այդ հերոս կինը, թշնամու զնդակներէն մնաց անձեռնմխելի, եւ եղաւ մեր բոլորին փրկիչը:

Զինուորներու կողմէ եղած վկայութիւնները նուազ գոյասանական չէին:

Զինուորական կարգապահութեան տակաւին անվարժ եւ անհնազանդ՝ վազեցի գրկել ու ձեռքերէն համբուրել հայրենակիցս, որուն զաւակներն ու բարեկամները նոյնպէս անօրինակ բախտաւորութեամբ զերծ մնացեր էին սպանդէն, թէեւ տանիքին վրայ իր ոտքերուն փաթթուած, որպէս խարիսխ, միայն անպատում վախի ճաշակը ըմպած:

Առաջին «էջրլոն»ը դադթականներէն դատարկուած զնացքները հրելով մեզի կը մօտենայ, անոնց վարորդներէն մին սպանուած՝ միւսը ծանր վիրաւոր:

Թաքարները ետ մղելէ յետոյ, մեր զինուորները հաւաքեր էին տանիքներէն վար թափուած մեռելները, վիրաւորները: Ես այդ վահոններուն մօտենալու քաջութիւնը չունեցայ:

Օրուան միւս գայրոյթը եղաւ, մեր վիշտերուն վրայ հրճուելու փութացող «դաշնակից» Վրաստանի զրահապատ զնացքին ինքնաբաւ ու խրոխտ երեւումը, թնդանօթներուն բերանը ամէն դի տնկած, երբ քանի մը ժամեր առաջ կրնար օրուան աղէտին արգելք հանդիսանալ:

— Մի ձեռնառումը «սա շան որդիների» որջէն ներս:

Երբ անկէ ցատկող սպան մերինին մօտեցաւ, իբր թէ եղելութեան տեղեկանալու, սա, առանց բարեւն առնելու, շուռ տուաւ դէպի մեզ, հայերէն հրաման տալու ձեւեր առաւ:

Սպայակոյտը ինչպէ՞ս ընդունեց զինքը: Անկէ դուրս պրծիլը տեսանք թթուած, մտաւ զրահապատ, չուեցին դէպի Սատախլու, կէս ժամ յետոյ գետինը կրկին զղրղաց անոնց դէպի Թիֆլիզ աճապարանքի ատեն:

— Դէ՛հ, կորչէ՛ք: Սատանի ձժեր:

Ժամեր տեւեց մեր մեռելներուն ինքնութիւնը ճշգեւելու եւ զանոնք ամփոփելու գործը, մանաւանդ մեր սանիտարներուն կողմէ վիրաւորուածներուն առժամեայ խնամքի գործողութիւնները:

Հայկ. Կարմիր Զօրամասին կողմէ Ալեքսանտրապօլը վերադարձաւելու անձնագոհ գունդերուն առաքելութիւնը ի կատար ածելու շուրջ վէճերու եւ վճիռներու վերջաւորութեան սպասումի պահը կ'ապրինք:

— Տէ՛հ, որ Սատախլուն մաքրագործել են, էլ ինչի՞ ենք ըսպասում:

Տնտնալու բողոքներուն հետեւեցաւ ետ դարձի վճիռը, այս ալ ուրիշ տեսակի զայրոյթ մեր պարզ զինուորին համար, որուն ցասու-մին եւ անկեղծ հայրենասիրութեան բաժակը յորդեր էր իրաւամբ, որուն ի պատասխան տրուեցաւ հետեւեալ փաստարկութիւնը:

Զօրամասը ոչ մէկ կերպով կրցաւ հաղորդակցութեան մէջ մտնել Ազգային Խորհուրդի եւ մեր Զինուորական Իշխանութեան հետ»:

Նաեւ: Ալեքսանտրապօլէն յետոյ, թրքական յառաջացումի եւ ճակատի գործողութիւններուն մասին ոչ մէկ տեղեկութիւն: Վրաց զրահաւորին վերադարձը, մեր գունդը կը զրկէր նոյնիսկ թեթեւ հրե-տանիէ:

Սատախլուն անիծեալ՝ լիովին կատարած էր իր անարգ դերը՝ կրկնապէս:

Իմ զայրոյթս ու տխրութիւնս ունէր մասնայատուկ հանդա-մանք, Ալլահվերտի կայարանէն անցնելու երազիս անէացումը, որ առաջին վախս փարատելէն յետոյ, էութեանս սնունդն էր այլեւս: Մեր գնացքը հոն, հայկական հողի վրայ պահ մը կանգ պիտի առնէր անտարակոյս, աչքերս պիտի բարձրանային ձորն ի վեր՝ Սաֆահիմ, պիտի բարեւէի մօտաւոր երէկի ընկերներս՝ գէնք մը ձեռիս, ինծի պէս երկու հողի պարփակելու չափ մեծկակ «չինելիս» կոճակները յոյց պիտի տայի անոնց, պիտի տեսնէի Վահանը, հարվայի տա-պակը ձեռքին, Թուրքը չպրտելու սրբազան գործին մասնակցիլս պի-տի հասկնային առանց բառ մը արտասանել պէտք ըլլալու, առ ի ա-պահովութիւն հայրենիքս՝ իմա քրոջս, որուն նոր մեծ վշտին պատ-ճառն եմ: Միամտօրէն կը դառնամ շուրջիններուս:

— Կը կարծէք որ Թուրքերը արդէն զրաւե՞ր են Սաֆահիմը:

Անոնց «Ո՛չ» պատասխանին ակնկալութիւնը զիս կը տանի մէկ խումբէն միւսը, միշտ նոյն հարցումը շրթներէս կախուած, որ չի պայթիր:

— Ասում են ահեղ ճակատամարտ տեղի է ունենում Ղարաֆի-լիսայի համար:

— Իսկ մենք վատերի նման փախուստ ենք տալիս: Յուզուած ոտքի ցատկեց նախկին կամաւորը, որ մեր փոքր պատահարի ատեն ուշադրութիւնս եւ հիացումս գրաւեր էր:

— Երեւի փախչում ենք Թիֆլիզի «պուրժուաներն ու Ազգ. Խոր-հուրդի անդամները պաշտպանելու:

— Ես այսուհետեւ ոչ ոքի ծառայելու միտ չունեմ:

Խօսակցութիւններուն վերջ տուաւ սպային երեւումը:

Իմ դառնութիւններուս բաժակը յորդեր էր մանաւանդ ական-

ըըս մրմռացնող վիրաւորներուն խուլ հեծկլտուքներով, որոնց վակոնը մեզմէ հեռու չէր, որոնք անհամբեր էին մեր վերադարձի հրամանին :

Վակոնին մէջ գլուխս ծածկեր էի հողէ տոպրակներու արանքին, սպան մարդահամարի ցանկը կարդաց-վերջացուց, գործն աւարտած գլուխս օրօրելով հաստատեց ներկայութիւնս, անշուշտ անտեղեակ նոր յուզումիս բուն պատճառին, Վարդանայը, որ անգամ մըն ալ կը թողնէի ետիս, վտանգաւոր վայրերու մէջ, այն է Թուրքին ոտնակոխ :

—Ոչ ոք չպէտք է տեղէն շարժուի : Նաւթուղի կայարան մուտքի առթիւ տրուած հրամանն է :

Կրկին վայրկեաններ համրելու տաղտուկ, գոր մասամբ ամօքեցինք անժամանակ հաց ու պանիրի բաշխումին շնորհիւ : Փորը կուշտ մարդուն պարագան տարբեր է վերջապէս, եւ այդ գիտէին անտարակոյս մեր սպայակոյտի ռազմավարները, որոնց կռուողի շնորհներուն վկան ըլլալու չպիտի արժանանայի :

— Զօրացրում նրա՛նց համար, որոնք տեղացիներ են : Մնացեալներուն ըստ կամս :

Ենթասպային աչքերը զիս կը ծակէին հրամանին վերջին բառերը արտասանած ատեն : Ի՞նչ ըսելու : Հեզնա՞նք կ'արտայայտէին՝ թէ «քո ի՞նչ գործն է մնալ» : Վճռեցի խուսափիլ զանոնք բացատրելէ :

Թուրքերը գրաւեր են նաեւ Պաքումը, գինադադարի շուկ :

«Հերոսական» արարքէս ինծի պիտի մնար շինել մը, նոստանոր, զէնքէս ու փամփուշտներէն անշուշտ թեթեւցայ : Մեկնումի պահուս գնահատանքի սրտարուղիս խօսքեր, եղբայրական ողջագուրում նաեւ սպայէն, որ փոքրիկ անակնկալ մը չեղաւ . խրախուսանք մը, որուն հողիս այնքան կարիքն ունէր, երբ կրկին կ'ողողուէի դէպի Գայիա-նետան վարժարան, ինչպէս արդէն սովոր էի մտովի կրկնել՝ սովորական հաւաքատեղին :

Ոտքով Հաւլապար : Մ'կրտիչ պայուսակիս մէջ ակոսայի վրձին մը միայն գտեր է ծախելու, քիչ մը երեսս թթուեցի, ու հօրաքոյրս համբուրելով հեռացայ : Թրամվայը Կարի կամուրջէն յետոյ հեւալով կը բարձրանար Երեւանեան հրապարակ, ծանօթ վայրեր, որոնք այժմ ոչինչ կը խօսէին ինձ : Վարանցով Տաշխովի արձանը իր տեղն է, պղտիկ հրապարակի պուրակներուն մէջ : Երբ կ'իջնեմ հանրածանօթ հրապարակը, հոն համախմբումի նշոյլ իսկ չկայ, անցեալ տարուան Տումայի ընտրութիւններու առիթով ինչքա՞ն մեծ էր հոն խանդավառութիւնը, որուն չորս անկիւններուն մէջ գոռգոռացող ճառերուն արձագանգը իրաւ է դեռ չէ անհետացեր զիս գգուելէ :



Թիֆլիս 1918 թուին

Պետրոս, Բոյրս (Վարդանոյշ) եւ Թագուհի Զէննէեան  
Ալէքսանտրապօլը վերագրաւելու համար կազմուած  
Հայկական Կարմիր Բանակի մաս կազմած օրերէս մնացած  
«շինել» վերարկուովս :

Այս «շինել»ը պիտի յիշատակուի յաճախ :

*Ճամբաս անպայման կ'անցնի ՀԱՅԱՍՏԱՆ թերթի յարկարած-  
նի ճակատէն, կանգ կ'առնեմ, աչքերս վեր պահ մը ու կը ծոխմ  
ձախիս :*

*Ամբոխին տեսքէն քաջալեր՝ քայլերս կ'արագանան, չլինի թէ  
կարեւոր բանէ մը զրկուիմ : Հաստարեստ լայնեկ շինելիս մէջ կը  
պլլուիմ, քրտինքս անոր մէջ թող պաղի, բոլորովին ազատ ըլլամ  
մարդոց կոյտին մէջէն սողոսկելու՝ աչք ու ականջ լարած :*

*Իրաւ ալ, օրին եմ հասեր ճիշդ ու ճիշդ : «Արեւմտահայոց Ազգ.  
Խորհուրդը» արձանագրութիւններ պիտի կատարէ՝ իր խողովա-  
կով գաղթական ընտանիքներու եւ անհատ անձերու մէջ բաշխելու  
«Կենտրոնական Իշխանութենէն» ստացած գումար մը :*

*«Բանից դուրս է գալիս», որ ես, ի տես շինելիս, երկու հան-  
գամանքով իրաւունք «ունեմ» այդ գումարէն բաժին ստանալու, իբր  
գաղթական, իբր արձակուած «զինուոր» : Ուստի զիս հազորդակից*

պահող անձերէն մին, կը թելադրէ «փաստաթուղթ» ներկայացնել, իսկ ես այդպիսի նախատեսութիւններ շարունակ «անտեսել» էի:

Բաշխման օրը պիտի յայտնուի արձանագրութիւնները վերջանալէն յետոյ, նոյն վայրին մէջ, պիտի կատարուին այբուբենական կարգով՝ կը նշանակէ Գայիանեանի շուրջ մշտական ներկայութիւն:

Ամբոխին խոնուած, մարմինս մէկ ոտքէն միւսին վրայ փոխնիփոխ՝ համբերատար սպասում, գոնէ ասոր ծայրը շօշափելի արդիւնք կը յուսանք՝ մէկզմէկու հետ երազներ փոխանակելով:

Թեւերէս քաշող քաշողի:

— Ծօ՛, ուրկէ՞ ուր բուսար:

Չմշկածագի, մեր Հագարիի ողջերը եւս հոն ժամադրուած են:

Չորս կողմ դժուարաւ շուրջգարծի ատեն ակնարկս նախ կ'իյնայ Իւչպէկի Միացեալ Ընկերութեան դպրոցի դասընկերոջս՝ Հրաչեայ Իննէեանի վրայ, միւս թեւէս քաշողը մեր Մկրտիչն է՝ զարմիկներէս»:

— Ծօ՛, հօրեղբայրդ քանի օրէ քեզ կը փնտռէ, ո՞ւր կորսուեր էիր:

— Վերջը կը պատմեմ:

Մտերիմ շրջանակի յատուկ պատմութիւն է, թէեւ վստահ եմ որ ամբոխին մէջ ամէն անհատ խուլ է ուրիշին ըսելիքներուն:

Քիչ մը հեռուն, ահա հօրեղբայրս, իրմէն անբաժան իր հօրեղբոր տղան՝ Ստեփան արարը, քովերնին մեր զիւղացիք՝ լման, եւ ամենէն զարմանալին՝ մեր Սրապիռն քեռայրին քովէն, հեզնոտ, ինծի կը ծիծաղի Վախան Յովնանեանը, Սանահիմի «գինակից հարվածին», որ կարծես ըսել կ'ուզէ, «ես ալ հոս եմ»:

Մէկէն սիրտս թունդ կ'ելլէ, ապա ուրեմն քօ՞յրս ալ: Կը վազեմ քովը: Վազելը խօսք է՝ կը ճգնիմ, կը ճեղքեմ ալիքները՝ իրեն հասնելու, Հրաչը թեւէս կախուած:

Երազ մը եւս ծնաւ ու «փուլ եկաւ»: Վախան նոյնպէս պարկ մը ալիւր շալկած, առանց իր տապակին, Ղարաֆիլիսայէն եկող շողեմքենայի մը վարիչին հետ «համաձայնած», Թիֆլիզ նետուեր էր:

— Գլխուդ ճարը տես, ըսաւ պարուչիկդ: Կարծես միայն իմս ըլլար:

— Որբանո՞ցը, քոյրիկնե՞րս:

— «Պարուչիկդ» վստահեցուց որ անոնց վտանգ չկայ, թուրքերը միայն դիժը գրաւելու կու գան, ըստ զինադադարի պայմաններուն:

Միշտ նոյն միամտութիւնը, ու սիրտս կը լեցուի:

Անվերջանալի «պոչ»երու ատեն, ամէն օր նոր մանրամասնութիւններ այդ չարաշուք «զինադադարի» մասին, որուն պայմանները

այնքան ծանր, նուստացուցիչ, կործանարար են Հայոց համար մի-  
այն: Բանադնացիներ զրկուած են Պաթոււմ, թուրք եւ դերման սպայա-  
կոյտի կողմէ բռնադատուած հաշտութիւնը ստորագրելու:

Կը խօսուի գաղտնի պայմաններու մասին:

Ի՞նչ յաւելեալ ձիւն պիտի թափեն անոնք Հայոց գլխին, գաղ-  
թականի ճտին:

«Պօլշեւիկ» տիրակալութենէն յետոյ, «Ռուսական Կենտրոնա-  
կան Իշխանութենէն» ինքզինքը «անկախ» հռչակած անդրկովկասեան  
զիրար ատող ժողովուրդներու, հակամարտ քաղաքական շահեր հե-  
տապնդող ազգերուն Սէյմը կը փլչէր թուրք-դերման արշաւանքին  
բերմամբ: Անոր աւերակներէն ծնունդ կ'առնէին երեք խրտուելիակ  
պետութիւններ, որոնց մէջ հայութիւնը հազիւ քնիկ մը ունէր այլ-  
եւս, իսկ գաղթականը ի հարկէ ոչինչ, մանաւանդ ան գիտէր որ բնիկ  
Հայուն ալ գլխուն յարմար առիթի մը սպասող եաթաղան մը կար  
կախուած, որ արդէն տեղ-տեղ կ'իյնար:

Վարպետորդի մտքերու խորշերէն, իր վարձկաններու բերնով,  
դուրս կը ժայթքէր գաղթական Հայը հեռաւոր սփիւռքի հրաւիրող ա-  
հագանգը:

Դժբախտութեան դուռը նոյնպէս հասած՝ իրեն ազգակից խը-  
նամակալներուն համար ծանր բեռ, ան՝ գաղթական Հայը, բոլո-  
րովին անհանդուրժելի տարր մըն էր Վրաց ազգայնականութեան: Ի-  
րեն կը մնար մէկ միջոց՝ փախուստ, միակ ճանապարհ մը՝ ռազմավի-  
րական ուղիւն, այսինքն վաւախեցնող գրուզինական տարուան, ուս-  
տի Կովկասեան Լեոնաշղթայի կերճէն, Տարեալի խորշերէն անդին,  
ռուսական տափաստանները:

Աստուած հետերին: Ահագանգը լաւ դաշնաւորուած էր:

Ո՞վ կրնար առարկել, որ գաղթականութեան անակնկալօրէն,  
եւ առաջին անգամ ըլլալով, դրամական նպաստի յատկացումը այդ  
ռազմավարութեան մէկ ճարտար երեւոյթը չէր:

Հայաստան ընկճուած, կիսատ, զինաթափ ու ոտնակոխ հա-  
րաւէն, թուրքը Կովկաս կ'արշաւէր անսանձ: Թուրք-թաթար տէրն էին  
ու տիրականը Կուրի արեւելեան աւազանին: Արեւմուտքէն գերման եւ  
քուրք խառն բանակ մը կ'արշաւէր դէպի Թիֆլիզ՝ Պաթոււմը գրաւած,  
որմէ յետոյ գաղթականին վրայ պիտի փակուէր վանդակի մը միակ  
դռնակը՝ ռազմավիրական ճանապարհը:

Օրէ օր, իր չոր գլուխը միայն պահելու հոգերուն անձնատուր,  
գաղթականը անտարակոյս խաղալիքն էր նաեւ ընդհանուր տազնա-  
պին, կենսամթերքի գիններուն երկինք մագլցելուն, անոր զուգահեռ  
այլազան թղթադրամներու պարերուն, մինչդեռ ան կը սպասէր կո-  
կիկ գումարի մը, որուն արժէքին գիտակցութիւնն իսկ չունէր: Զին-

քը ահարեկող շշուկները սկսած էին կրել պաշտօնական հանդամանք կրող քարոզչութիւն՝ «նախկին թրքահայտակները յաղթական Թուրքին քմահաճոյքին» առարկան դառնալու «խոչոր» հաւանականութիւնը ունէին :

Օրուան կարգախօսն էր ուրեմն, թելադրել, համոզել, ստիպել, ահարեկել զաղթականը, որ իր փրկութիւնը նոր ապաստան փնտռելու մէջն էր, իրեն ու Թուրքին միջեւ նոր պատուար մը դնել՝ Կովկասեան լեռնաշղթան :

Վերածննդող ու «Անկախ» Վրաստանի իշխանաւորներուն եւ ժողովուրդին ընդհանուր ցանկութիւնն էր ստեղծել «միատարր» պետութիւն, ուստի դարեր շարունակ իրեն զօրավիզ, իր սահմանները ապահովելու համար արիւն եւ քրտինք թափած ամենահոգեգրայրական տարրին՝ Հայուն, ամէն կարելի միջոցներով նուազեցնելն ու չքացնելը կը հանդիսանար պետական առաջին նպատակ : Առայդ, յանձին Թուրքին, այդ պահուն անոնք ունէին «թանկագին դաշնակից մը» :

Կամաւոր հեռացումի կարգախօսին հետ հանդէս կու դար չափուած, ձեւուած, կազմակերպուած ցուցմունքներ : Դրամական նրպաստ : Տունով-տեղով ու իրերով ճամբորդելու համար տրամադրելի կառքերու մատուցում, որոնց վարձքը ամէն օր կը բազմապատկուէր, տարբեր ճնշում մը՝ փախուստը փութացնելու :

Այդպէս ուրեմն, մէկ առաւօտէն մինչեւ նոյն իրիկունը, Գալիանեանի շուրջը թաւալող բազմութիւնը ակնյայտնի կը քիչնար :

Զիրար բարեկելու նոր բառամթերք մը ծնունդ առած էր :

— Դուն դեռ հո՞ս ես :

— Այսօր Կալալիսէի վրայ գերման զօրքեր տեսայ : Փոխարքային պալատին առջեւ արձանի պէս պահակ Գերմաններ :

— Ուր որ է թուրք բանակը կը հասնի : Պաքուսէն հոս քայլ մը տեղ է :

— Կառք կը փնտռեմ : Երանի քեզի, չոր գլուխ մըն ես :

— Ծօ՛, ուշադրութիւն ըրէ, բռնած կառքը Թիֆլիզէն դուրս հանելուն պէս ձեզ կը պարպէ կը փախչի :

— Այո՛, կան որ երկու օր կառքին մէջ կը սպասեն : Որո՞ւն, ըսէ :

— Դրամը սկիզբէն մի՛ տար :

— Հա՛, մի՛ տար, մի՛ տար : Ես չտամ, ուրի՛շը կու տայ : Անոնց հո՞գն է :

— Ռուբլիներդ փոխեցի՞ր : Քանիո՞վ : Որմէ՞ :

Այս ալ ուրիշ առակ : Տրուած դրամը յայտնի չէ ո՞ւր տպուած է : Ամէն լուծալափոխ չ'ընդունիր, նոյնիսկ նոյն քաղաքին մէջ . տե-

դէ տեղ կը մերժուի բոլորովին : Հին՝ Նիկիայի մանէք-ները կը պահանջեն :

Երբ հօրեղբօրս ներկայութեամբ, միւս համատեղացիներու կողքին, իմ բաժինս առի, զայն վստահեցայ հօրեղբօրս, որ իրեններուն հետ Նիկիայի փոխէ, նաեւ քիչ մը մանր-մունր, որ մանաւանդ անգտանելի էին :

Կազմակերպութեան հսկողութիւնը այնքան կատարեալ էր, որ կէս օր շանցած՝ դրամափոխներու հասցէներ կը ճարուէին, անոնց պարտադրած գնով, որ նոյնպէս փոփոխական էր եւ աննպաստ :

Աճապարեղու կարեւոր պատճառ մը նոյնպէս :

Յաջորդ առաւօտ հօրեղբօրս մօտն եմ :

— Ծիւղէ ժամանակին եկար, «հայտէ» ճամբայ կ'ելլենք անմիջապէս որ վարձած կառքս դայ :

Չուզեց դրամս տալ, պնդելով որ պէտք եմ իրենց ընկերանալ :

— Մերժումս կտրուկ էր : Անային աղաչանքն ու լացը ի գուր, չէի կրնար իմ եւ քրոջս միջեւ Կովկասեան Լեոնաշղթան ձգել, ան ինձ համար աշխարհի ծայրն էր :

— Քո՛յրդ, քո՛յրդ. անոր համար կեանքդ վրաս՞ պիտի տաս, ինքնիրմէն ելած կը խօսէր մեծ մայրիկը : Արդէն անոր համար ծնողքէդ բաժնուեցար ու կը թափառիս :

Չարմիկներս լացակումած գիս բոլորեք են : Անան կը շարունակէր .

— Թէ որ չես դար, ես ալ չեմ երթար : Քեզ որո՞ւ պիտի ձգենք :

— Ինձի բան մը չ'ըլար : Ու ծիծաղելով աւելցուցի, «լեռ կ'ելլեմ» :

— Հա՞ : Մեր լեռնե՞րը գիտցար : Ասոնք Քիւրտին օտքին փոշին չեն արժեք :

Խորհելով որ, ինչ որ քաջ գիտէր՝ ոչ մէկ կոպէկի մնացած, ի վերջոյ տեղի պիտի տամ, հօրեղբայրս մնաց անդրդուելի, ինձի չափ յամառ : Անային լացը փոխուեցաւ վայնասունի : Միակ միջոցս փախչիլն էր :

Կորգամովներուն բնակարանին դուռը զանգահարեք՝ կը սպասեմ : Պարոն Ադէֆասնդրը երեւի տունը չէ :

Կրկին ու դարձեալ զանգը կը զօղանջէ : Դուռը կը բացուի, ասպշած ետ կ'իյնամ :

— Ա՛յ բալաս, անհամբեր սպասում եմ քեզ :

Մինչ ես այլազան անակնկալներու «սպասում էի», բայց ոչ «Թիֆլիզում» Տիկին Մայրիկի յայտնութեան : Ակնթարթի մը ընթացքին բախտաւոր կամ դժբախտ պատահարներու ի լուր վարանումի անձնատուր վիճակիս ի տես, նա, թեւերը տարածած ինքն է որ աստիճան մը վար իջաւ, գիս գրկեց :



— Նրանք ապահով են : Ա՛յ քեզ չար տղայ, դե՛ռ եղար վերջերս մեր մեծագոյն մտահոգութիւնը :

Տիկին Կորգանօֆ(\*) Շուշանիկ Մայրիկին քոյրն էր : Թիֆլիզ վերադարձիս անոնց հանդիպեր էի Սանահինցիներու մասին զխոցածս պատմելու, բայց Պարոն Կորգանօֆը միայնակ դտայ, տնեցիք՝ մայր, աղջիկ, եւ ինծի հասակակից՝ զիմնազիստ մանչերնին առժամապէս բացակայ, որոնց այլեւս բնաւ պիտի չհանդիպէի, այլ տասնեակ տարիներ յետոյ միայն՝ Պրուքսէլի մէջ :

Պարոն Աղէքսանդր զիս հիւրընկալած էր իր տան մէջ, ուր կը յայտնուէի միմիայն զիշերերու, ինչպէս հաւանաբար ինքն եւս : Իրեն հետ, 1917 թուի ամբան արձակուրդներուն, առիթը ունեցեր էի մըտերմանալու, երբ իր ընտանիքը Պորժուի ամարանոցը քաշուեր էր : Ինձ կը ստիպէր իրեն ընկերանալ Արտիստական Հայ Թատրոնի ներկայացումներուն, ուր ունէին տարեկան ելոյթներուն համար վարձուած լօժա :

Հասակով եւ զիմագծերով զեղեցիկ տղամարդ էր Պարոն Աղէֆսանդր, միջին տարիքի բերմամբ ծանրամարմին, ազնիւ ու սրտբաց, որուն մէջ գտած էի նոր սորված բառերէս միուն՝ Պորժուայի տիպարը, ըստ այլեւեայլ տեղերու մէջ լսած նկարագրութիւններու :

Բառերու նշանակութիւնը տեղոց տեղ, դասակարգէ դասակարգ, երկրէ երկիր կը փոխուի :

Երբ կը մտաբերեմ իմ տիպարս, պիտի ուզէի որ ամէն ոք պուրժուա ըլլար : Երբ կը լսէի, տարբեր-տարբեր բերաններէ, զրութիւններէ, քարոզչութիւններէ այդ դասուն վերագրուած շահատակութիւնները, ես, անտուն, անտէր թշուառս, առելութենէն աւելի կը մեղքնայի իրենց վրայ : Ինչո՞ւ այդ մարդիկը ստիպուեր են նման յոռի կողմեր ունենալ, ի՞նչը ստիպեր է զիրենք, երբ լայն միջոցներ ունին առաքինի ապրելու, ու այն ատեն երբեք-երբեք չպիտի փափաքէի որ այդ դասակարգին պատկանէր Աղէֆսանդր Կորգանօֆը :

Այսպէս են եղած իմ հակումներս շարունակ : Դասակարգերու եւ վարդապետութիւններուն դալով, ես անոնց մէջ մարդիկն է որ նրկատի առեր եմ անձնապէս, զանոնք իրազործողներն եմ փնտուեր ու դատեր, եւ ոչ թէ ընդհանուր եւ կանխակալ դատապարտութիւն մը, ինչ որ չի նշանակեր սեփական նախասիրութեան ժխտում :

Եւ թող թոյլատրուի ինձ յայտնել, որ չըջաղայութիւններու բերմամբ դտայ որ մարդկային առաքինութիւններուն լաւագոյն օրի-

---

(\*) Տիկին Աղէֆսանդր Կորգանօֆը վերստին տեսնելու բախտը ունեցած եմ Պրուսէլի մէջ, 1936-ին :

նակները դտայ զիւղացիութեան մէջ. անո՛նք, որ ստորակայութեան ախտէն գերիվեր հոգեբանութեան տիրացած էին, կամ անոր շինծու աւերներէն հեռու մնացած :

Թիֆլիզի մէջ, առաջին անգամ, պուրժուա դասակարգին պատկանող մէկ-քանի ընտանիքներու հետ յարաբերութիւններու ընթացքին, ես իրենց եւ մնացեալ ժողովրդային խաւերուն միջեւ, նոյնիսկ մեր թափառական գաղթական Հայուն միջեւ, մարդկային զգացական ելոյթներու ոչ մէկ տարբերութիւն դտայ, բարձր որակում անուանելու արժանի, այլ միայն կը գիտէի, կը տեսնէի որ անոնք ունէին ընդարձակ յարկաբաժիններ, ոմանք ապարանք, զանազան բաժանումներով, շքեղօրէն կահաւորուած, յատուկ ճաշասեղան, սեղաններուն վրայ սպիտակ սիւնոց, ուրեմն կը ճաշէին խոհանոցէն դուրս, ունէին ընդունարան—հիւրասենեակ՝ մէջը դաշնամուրով, ուր կային ջահեր, ժամացոյց, թանկագին դորդեր, արուեստի գործեր, գրադարան մը ճոխ, հեռախօսի գործիք, ունէին սպասուոր, ծառայ, խոհարար: Պուրժուան կը շրջագայէր ոչ թէ ոտքով, այլ կառքերով, իր գաւակները կը յաճախէին անպայման միջնակարգ վարժարան:

Բազմաթիւ Հայ հողատէր գիւղացիին հետ, օրինակ, մեր երբեմնի ընտանիքին, որ ունէր նոյնպէս իր սեփական ընդարձակ տունը, մարդոց, կենդանիներու բաժիններով, կահաւորուած տեղւոյն լաւագոյն կահ-կարասիներով, եւ սարբերական թախաններէն դերձ մնացած մեծկակ ու թանկարժէք գորգերով, աչքի զարնող տարբերութիւնը կը կայանար ընտանեկան կեանքը վաստկելու եւ կենցաղին մէջ: Մեր ընտանիքին անգամները, նահապետէն մինչեւ իմ օրերս, իրենց ձեռքի աշխատանքովն ու ճակտի քրտինքովը ապահոված էին իրենց սնունդն ու բնակութիւնը: Մեզ մօտ ալ ուսման տենչը նուազ չէր, անոր կարեւորութիւնը ժխտող չկար, հետամուտ էին անոր զարգման եւ յառաջգիւղութեան:

Ո՞ւր էր տարբերութիւնը:

Ապրելու եղանակին մէջ:

Հարստութիւնը չէր, այլ անոր տիրանալու միջոցներուն եւ զայն գործածելու կերպերուն մէջ էր տարբերութիւնը: Պուրժուան իր դրամը կը ծախսէր գլխաւորաբար արտաքին երեւոյթներուն փայլ տալու համար, իր հագուստ—կապուստին, բնակարանին, եւ ոչ թէ սնունդին: Իր աշխատանքը կը կատարէր արժէքաւոր կերպասէ կրտուած հագուստով, կը խրտչէր վրան կամ ձեռք աղտոտող ասպարէզներէն, վաճառականութեան մէջ մեծաքանակի ճիւղը կ'ընտրէր, իր գաւակներուն ուսումը պէտք էր անոր ապահովէր պուրժուայական կեանք չնորհող ասպարէզ մը:

Վերագառնալով զիւղացիին, ճիշդ է, ան գերի էր ընտանիքով,

իր մշակած հողին, իսկ պուրժուան, ըստ իմ նկատողութիւններուս, ստրուկն էր ըսի-ըսաւներու եւ ունայնութեանց, գերին էր արտա-  
նոց, անտեղի, աւելորդ մտահոգութիւններու՝ բնականաբար ծիծա-  
ղելի, կ'ապրէր տակաւին հզօր տառապանք մը՝ ազնուականութեան  
տիրտոսի մը տիրանալուն :

Եւ ահա նման ունայնութիւնները մոռացութեան տուող համա-  
տարած տապնապ մը, որ կը սպառնար դասակարգային գծով յատկա-  
պէս հայ պուրժուազիային՝ Վրաց ազգայնականութեան սեւ սատա-  
նան, ատելի՛ ուս տեղոյն ազնուականութեան, աւելի քան Հայու  
թշնամիին՝ Ագեթի խաներուն :

Հայկական Սոցիալի (Թիֆլիզի պուրժուա թագը՝ մեծամաս-  
նութեամբ Հայեր) ապարանքներու դարպասներէն ելեւմուտք գոր-  
ծողները ծառաներն էին, սպասաւոր, խոհարար, որոնք այդ օրերուն  
առանց հսկողութեան, վախի, սաստի, կրնային յամենալ իրենց ա-  
նօրեայ աշխատութիւններուն մէջ, փողոցներու մայթերուն վրայ ի-  
րենց բախտակիցներուն հետ երկար շաղակլատել, վերլուծել դէպ-  
քերը, անոնցմէ իրենց համար յուսալից պատգամներ քաղել :

Տիկին Շուշանիկի յայտնուիլը դօտեպնդեր էր զիս, շատ մը ձա-  
խողութիւններէս վերջ, մինակութիւնս կը կշռէր : Նա հոգեկան քաղա-  
հովութեան համար այդ պահուն այնքան անհրաժեշտ էր, ինչպէս նոր  
«չիներս» մարմնոյս համար :

Միասին կը դեգերինք իր քրոջ տան յարկաբաժիններուն մէջ,  
ինքն է որ կը խօսի, տուած հարցերուն ինքն է պատասխանողը, ես  
ի՞նչ ունիմ խօսելիք : Սամավարին բոլորտիքը կը դառնայ, ու ինձ  
հաղորդակից կ'ընէ թէ ինչպէ՞ս Սատախլուս աջին թողնելով, զինուո-  
րական առաքելութեան մը հետ, իբրեւ որբանոցային պատասխանա-  
տու ազգային վարիչ, որուն իրապէս այնքան իրաւունք չահեր էր,  
Թիֆլիզ կը հասնի : Երբեմն կը մոռնայ ներկայութիւնս, կը տարուի  
ողբալու թէ ի՞նչպէս Հայաստանը շրջապատուած է թշնամի ծովերով :  
Երբ կ'անդրադառնայ իր ըսածներուն՝ կը վերջացնէ, «Սանահինին ո՛չ  
մէկ վտանգ կը սպառնայ» յանկերգով, որուն կ'ընկերանայ քիչ մը  
շատ մտածուած ժպիտ : Կը շարունակէ ապա, որ, ի վերջոյ կը զղջայ  
անկէ հեռացած ըլլալուն, քանզի, մանաւանդ, ամայացած հայկական  
Սոցիալիզմը, վաղուան անորոշութիւններէն տարուբեր, ծայր սատիճան  
մտահոգ իր կեանքին եւ ինչքին վերաբերմամբ, ոչ մէկ կերպով այ-  
լեւս ունկնդիր պիտի չըլլայ իր կոչներուն՝ որբերուն գէթ սատարելու,  
որ, ինքն ալ նոյնպէս անբաղձալի հիւր մըն է : Այս անգամ ալ պէտք  
կը զգայ ինքզինքը մխիթարելու փորձ մը ընել, «Խեղճ Աղէքսանդրը  
միայնակ են թողել» :

«Պէհպուտովսքի Ուլից»ը անոնց բնակարանէն քանի մը քայլ է,

ճիշդ քովի ապարանքին անկիւնը՝ իմ ամէնօրեայ ուխտատեղին, ամենուն ժամադրաւայրը :

Մուտքին, աչքի կը դարնէ փողոցին դատարկութիւնը, գրպանիս պէս պարապ, վախ մը կը պատէ զիս, կ'արագանամ Գայիանեանի վրայ : Ներս-դուրս փնտռուող, սանդուխի մը կէսին, յոյսի նշոյլ մը՝ վահան Յովնանեան եւ դասընկերս Հրաչ Իննէեան : Այբուբենի կարգով դրամական բաշխումին պատճառաւ նոր ստացեր են իրենց բաժինը, ոտքի կանգնած ըլլալէ պարտասած, նստեր կը խոկան :

Ձիս տեսած ըլլալու խանդավառութիւններն յուզեց եւ խրախուսեց զիս ալ :

— Վաղը առտու ճամբայ կ'ելլենք երեքս միասին, ա'լ օձիքդ թող չենք տար :

— Ո՞ւր կ'երթաք :

— Դո՛ւ միայն կաս յերուսողէմ, կը պատասխանէ Երեցազրակի նախկին ուսուցիչն ու դպրապետը : Վրանի՞՞ս կը խնդաս, ամէնքը ո՛ւր, մենք հոն :

Հրաչ աւելցուց, զիս հետաքրքրող նիւթի մը անցնելով .

— Այս առտու, պոչ բռնած ատենս, ցոյց տուին վահան Թոքո-վինցոյ, մէկ-քանի հողի կ'ընկերանային իրեն, վարձու կառք կը հարցնէին :

— Բարի ճանապարհ ուրեմն ձեզի ալ : Ես չեմ կրնար դալ, կը փորձեմ վերադառնալ Սանահին՝ լեռնային ճամբով : Մանաւանդ կառք վարձելու կուտ չունիմ :

— Ծօ՛, կառքը ո՛ւր, մե'նք ուր : Ոտքով կամաց-կամաց կ'երթանք, մեզ սպասո՞ղն ով է :

— Ծօ՛, խելքդ տուն կանչէ : Վահանն է դարձեալ : Սանահինցիներուն բան մը չի պատահիր, լերան ծայրն են : Յիմարութիւն է ինքզինքդ գայլի բերան նետել, ու կ'աւելցնէ .

— Դրամդ փոխեցի՞ր : Քանիո՞վ, ո՞ւր, մեզ տար հոն :

Պատմեցի եղելութիւնը : Հօրեղբօրս իրաւունք տուին : Իմ ընկերութիւնս իրենց անհրաժեշտ էր, իրենցմէ աւելի աշխարհաբաղաճացի էի :

Հազարաւոր ուրբիներու տէր, մեր երկու «քափիթալիստ»ները թրջած հաւու երեւոյթ ստացեր էին : Ինչպէ՞՞ս զանոնք փոխել : Պէ՞՞տք է փոխել թէ՞ ոչ, ափսոս չէ՞՞ : Ի՞նչ սակով :

Ես այդ հողը չունէի, խորհուրդ տալու մէջ ընտրեցի «անզի-ջող» կերպը, չաճապարել, եւ փնտռել լաւագոյն սակով լումայափոխը :

— Հետերնիս եկուր, մենք հոս կը կորսուինք, կը խաբուինք :

— Մի՛ աճապարէք, սպասեցէք մէկ-քանի օր, դաղթական չի մնար, աւելի բարձր սահով կը փոխենք:

— Ուրեմն կը խոստանա՞ս մեզի օգնել:

Ձէի կրնար իրենց ընկերանալ: Տիկին Շուշանիկը որբանոցին ի ինդիր այցելութիւններ ունէր տալիք, իրեն ընկերացող մը անհրաժեշտ էր, դիս փոխարինող չկար:

«Կովկասահայ Բարեգործական»՝ տեղը հեռու չէր, անկէ յետոյ պիտի այցելէինք Տիկին Իստաւանօֆային, Օր. Իտայի մօր՝ բըժիշկի կին եւ Տոքթ. Զարիէֆի քոյր:

Ամենաբախտաւոր օրերուն պէս Տիկին Մայրիկը հազուածպճնուած էր: Ծաղկաբերով սեւ քօղը դլխարկէն սկսած վիզ ու գէմք ծածկած, այդ դեռ ոչինչ, հարցը բարձր կրունկներով սալալատակներ, մայթեր կտրել-անցնիլն էր, կառք ճարելու ատենը չէր, եւ տեղերը մօտակայ՝ նոյն թաղին մէջ:

Միտքս թոնչք առած էր Կարին, ուր գիշեր մը Տիկին Շուշանիկին ընկերացող խորբերոցի, Ամերիկայէն եկող կամաւոր՝ Տաճատ Պալքայեանին բախտը վիճակուեր էր այդ դերը կատարել: Չաշկա Չայի դրան հասած, էրգրումի անկանոն, խորտուբորտ փողոցներէն, Տաճատ իր պաշտօնը լիուրի կատարած ըլլալու դոհունակութեամբ՝ վարձքը կատար, կը գոչէ:

— Այժմ, Տիկին, կրնաք «սանձարձակ» քալել:

— Ինչպէս որեւէ երիվար, կ'արձագանդէ մեր չարածիճի թոքովեցը:

Միտքն էր այդ օր նոյնպէս՝ Տիկին Մայրիկը, վայելուչ: Տըրամադրութիւնս երկինք հասեր էր, եւ թեւս անցած, դանդաղ սկսաւ մեր «արշաւը»:

Երանի թէ Թիֆլիզի Սուլակի փողոցներն ալ քարքարոտ ըլլային, ցեխ ու փոշի, եւ մեր բովանդակ ուշադրութիւնը ամփոփել ըստիպէին, ու չխօսէինք:

Բարեգործականի մէջ գտած սառն ընդունելութիւնէն, ստացած տեղեկութիւններէն յուսաբեկ, առաջին բառերն եղան Թիֆլիզէն շուտով հեռանալուս անհրաժեշտութեան մասին:

«Ա՛յ քեզ նորութիւն», կ'ըսեմ մտովի: Այո՛, հեռանալս կը բաղձայ, բեռ եմ իրեն, եւ կամ առած տեղեկութիւններուն արդիւնք արտայայտութիւն մը:

— Այդ ո՛րքան նիհարել ես, տղա՛յ ջան:

Վահանի հալվաներէն կլորցած այտերս զգալապէս սմբած էին: Հարամ ու լեղի եղաւ Տիկին Իստաւանեանին մատուցած կարկանդակն ու թէ՛յր: Հոն շարունակ ոռուսերէն կը խօսուէր, եւ այնքան արագ, որ հազիւ մէկ-քանի ծանօթ բառեր կը կարթէի:

Սանդուխներուն վրայ Օր. Իսան կամ Տիման իբրև երթաս բարով նոյնպէս հեռաւոր ճամբորդութեան մը կ'ականարկէր, ի մօտոյ վերադարձ մաղթելով:

Ստիպողական էր ուրեմն մեկնիլս: Տիկին Շուշանիկ կը մնար՝ հետապնդելու Սանահինի որբանոցը Թիֆլիզի շրջանը տեղափոխելու գործը:

— Տղա՛յ ջան, դու եւ վարդանոյշը իմ թանկագին զաւակներս էք, ես այդ կ'երազէի ձեզ հանդիպած առաջին օրէն իսկ: Այժմ համոզուած եմ ձեր փոխադարձ զգացումներուն անկեղծութեան:

Քար լուծիւն կտրած՝ կը նայէի իր ստքերը դրած տեղերը:

— Խնդրում եմ, անասս իմ խրատներին, որպէս հարազատ որդիս: Մանաւանդ խօսք տաս ու երգուես որ, ինձմէ բաժնուէլէ յետոյ, Թիֆլիզում չդեղերիս, այդ մտածումը սարսափազդու կը լինի ինձ համար:

Լեռնային ճանապարհի մասին քանիցս իրեն ըրած հարցումներս մտաբերեց անպայման:

— Չլինի՞ Սանահին վերադարձի յիմար մտածումներ ունես:

Կասկածները անհիմն չէին, ուստի տուն դարձի պահուն սկսաւ պատմել այն ահաւոր դէպքերու մասին, զորս լսեր էր նոյն ճամբու երկայնքին:

— Երկրին, լեզուին, բոլորովին անձանօթ, դու ոչ մէկ կերպ կարող ես ողջ Սանահին հասնիլ: Վրացիք նուազ անզգամ չեն այս վերջերս Հայոց նկատմամբ, եւ քեզ իբրև լրտես կ'անհետացնեն, ինչպէս ինձ ասացին որ պատահել է շատերին:

Չիս ահաբեկելու ոչ մէկ փաստարկութիւն դանց կ'անէր, ամէն կերպով դիս հեռացնելու ցանկութիւնը կ'արմատանար մէջս, արդէն հոգեպէս կը հեռանայի իրմէն, կասկած մը իր անկեղծութեան վրայ, ու կարծես իր հանդէպ ունեցած հիացումս եւ սէրս կը տըժգունէին:

Կը ծրագրէի ելք մը, ի միջի այլոց հետեւեալը.—

Ամէն օր քանի-քանի անգամներ ՀԱՅԱՍՏԱՆ թերթի դրան եւ պատուհաններուն աչքս, միմիայն Անդրանիկ, Թոթովեց, եւ միւս ծանօթներուս յիշատակը չէ որ կ'արթննար մէջս, այլ նաեւ հայ «խուլիկան» տղաքը, որոնց կարեկցեր էի, եւ իմ պայմաններուս բերմամբ, նաեւ չնչին օժանդակութիւն ընծայած, անոնց վարած թափառաչըրջիկ կեանքը, արկածալից այլեւայլ պատմութիւնները, զորս կը կլլէի «հալած իւղի» պէս:

Ինչո՞ւ անոնց կեանքին մէկ մասը չորդեգրէի, ժամանակ մը միայն: Մեծաքանակ շուկայի մէջ առաւօտները թեթեւ բեռնակրութիւն, կրնայի սնունդ վաստկիլ կամ յափշտակել, քիչ մը դրամ ստա-

նալ, հնարաւոր չափերով խոստափել անհամուժիւններէ : Կը վախնա-  
յի մանաւանդ ծեծէ, նաեւ բանտէ : Տեղ մը գիշերելու համար կրնայի  
«եօլա երթալ», ինչպէս կ'ըսէին ու կ'ընէին տղաքը, Յովնանեան-  
Գայիանեան Դպրոցին մէջ, թերեւս ՀԱՅԱՍՏԱՆ շէնքին նոր դռնա-  
պանին հետ համաձայնիլ, գէթ աչքի դարձող «չինելս» անոնց մօտ պահ  
տալ ցերեկը՝ գիշերային այդ թանկագին բնակարանս :

Յետո՞յ, յետո՞յ, ի՞նչ ընելու համար : Ահա ո՞ւր է թաղուած  
չան գլուխը» :

Հասած ենք տուն : Մայրիկին յայտնեցի կարգ մը ծանօթներու  
հետ ժամադրութիւնս :

— Մի նե՛րս արի : Ուզում եմ երգուես, որ առժամաբար Վը-  
րաստանից հեռանալու ես, մի բազմամարդ կարաւանի ուղեկցելով :

Ուրիշ առթիւ ալ, «փող ունե՞ս» հարցումին, ստելով, «այո՛»  
պատասխաններ էի : Ուրեմն գիտէի, կամ կ'ենթադրէի որ իրեն բեռ  
ըլլալուս վախը չէր իր պնդումներուն տուն տուողը : Դարձեալ վերա-  
դարձ դէպի իր անձին :

Գրկեց զիս, երգուընցուց, համբուրեց :

— Այս երեկոյ չուշանաս : Որո՞նք են ծանօթներդ :

Յայտնեցի ճշմարտութիւնը :

— Տէ՛, ինչ լաւ է, յարմար են շատ : Դու էլ նրանց հետ փոխէ  
ուրեմն փողերդ, եւ շուտով մեկնեցէք : Ես ինքս քեզ երաշխաւորում  
եմ որ Վարդանոյշիմ հետ անախորժ ոչինչ էլ չի պատահելու :

Երգումս պիտի չյարգէի, եթէ Հրաչ եւ Վահան, թէեւ փախու-  
տի խուճապէն բռնուած, երկու երկա՛ր, երկա՛ր օրեր ինձ հանդիպե-  
լու, իմ ընկերակցիլս փնտռելու համբերութիւնը ունեցած չըլլային :

Ի՞նչը ստիպեր էր որ չխառնուին Վլատիկաւկազի ճամբուն եր-  
կայնքին պոչ բռնած որեւէ կարաւանի, խումբի մը : Եկուր բացատրէ :

Ինչպէ՞ս պիտի կրնայի այդ յանդուգն ձեռնարկին մասնակցիլ,  
ճանապարհի պատահարներուն եւ զրկանքներուն դէմ դնել՝ պարապ  
զրպանով :

Ոչ մէկ գնով ուզեր էի Կորգանոփներու բնակարանին հասցէն  
տալ, նուազ կը ճանչնայի Հրաչը, բայց մեր տառապալից կեանքը ա-  
նրեւս դարձուցած էր Վահանը, ու պիտի ամչնայի եթէ ան մեր  
«պուրժուա» բարեկամները նեղացնէր : Զանոնք վերագտնելու ճրգ-  
ճգումիս մէջ կար թաքուն բաղձանք մը, զիրենք չգտնել, ու բոլորո-  
վին միայնակ, չհեռանալու պատճառ մը եւս ունենալ, ի՞նչ փոյթ թէ  
որեւէ «անելիք չունենայի» :

Կը դեգերիմ մեր սովորական հանդիպումի փողոցներուն ան-  
կիւնները, վաղ առաւօտեան առաջին փորձիս ձախողութենէն յայտ-

նապէս ընկճուած եմ , ուրեմն զանոնք շտենեելու հաստատակամութիւնը վճռական չէր , ու միջօրէի մօտ կրկին փորձ մը , եւ ահա երկու կողմէ բացականչութիւններ , նոր աշխարհ գտած մարդոց պէս , հեռուէն ողջագուրում :

«Նազ ընելու» տրամադրութիւն չունէի , բացատրեցի «դրութիւնս» , հագիւ աւարտած՝ ինքնաբուղիս եւ միաբան ինձ դրամ փոխ տալու պատրաստակամութիւն , դիմադրական կարողութիւնս ալ թուլցած էր :

— Մանաւանդ , այո՛ , վրայ բերաւ Հրաչ , մենք ճշմարտապէս մեր ունեցածին կէսը քեզի կը պարտինք :

— Դուն կատարեալ քաղաքագէտ ես : Առջի օրը ուր որ դիմեցինք , կէս գին առաջարկեցին , միւս օրը աւելի յարմար , իսկ այս առտու արգէն մէկ քառորդ կորուստով :

— Ըսել է ինձի համար չսպասեցիք այդ երկու օրը :

— Հիմա որ ցուցմունքիդ արժէքը գիտենք , ժպտելով եւ ուսերս սեղմելով՝ Հրաչին ինկած էր պատասխանը , «այլեւս օձիքդ մեր ձեռքէն չ'ազատիր» :

Բաժնուելու համար ուրեմն անհրաժեշտ էր տալ երդում մը եւս : Վահան գիտէր թոյլ կողմս :

— Ծօ՛ , մայրիկիդ վրայ երդում ըրէ : Զէ՛ , մեծ մայրիկիդ Զումբուխս էջոյիս վրայ : Արցունքի կաթիլ նշմարեցի իր այտերուն :

Կը բնակէին Նաւթլուղի մօտակայ հանրակացարանը , որուն բոլորովին պարպուած ըլլալը յայտնեցին , ու պատրաստ ցոյց տուին ինքզինքնին անմիջապէս ճամբայ իյնալու :

— Ի՛նչ կ'ըլլի՛ , ի՛նչ չըլլի՛ր : Մեր երկրին բարբառով պատասխանը արդիւնք էր բարձր տրամադրութեան : Կրնան հոն այս գիշեր մեզ «սոթթել» :

— Վաղը առաւօտ կանուխ , վարանցովի արձանին առջեւ :





## ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ԶԱՆԱՊԱՐԿԻՆ ՎՐԱՅ (\*)

«Նրեւանսքի»ի շուրջը թրամվայ մը, երեք գրեթէ պարապ վա-  
կոն, կոնակ կոնակի, նազանքով ու ծամածուռ ինծի կը սպասեն:

«Նի Պուրթուլի»: Զանոնք արհամարհողը գրպանս էր:

«Մի ցոյց տուր փողերդ, լաւ տեղ պահիր», կը մտաբերեմ Մայ-  
րիկի խօսքերը:

Երէկ, տուն դարձէն քիչ վերջ, երբ զիս «քնելու» զրկեց, խո-  
հանոցի բաժինին կողմի սենեակ մը, զայն արգելողը, ի միջի այլոց  
անկէ «պրծած» դրախտային հոտն ալ էր:

Կը փորձեմ «քնել»: Արցունքս սրբելու ի խնդիր յաճախ մէկ կող-  
մէն միւսը կը դառնամ, անոնք միայն լուծում մը կը բերեն զիս չար-  
չարող այլանդակ մտածումներուն, եւ մանաւանդ կարճատեւ նինջե-  
րուս: Քունս, նոյնպէս, առաւօտեան սպասեր էր գիշերն ի բուն, եւ  
աննման Մայրիկը ինչքա՞ն, ինչքա՞ն կրկնեց իր զղջումը:

— Իմ անո՛ւշ բալէս, անուշ քունէդ գարթնեցի:

Ամէն ինչ պատրաստ էր: Կոկիկ «փաթաթուած» եւ կոնակէս  
կապելու լարելով ինձ սպասող «շինեղ»էս ախորժարեր ծանօթ հոտը  
կը բուրէր: Ո՛վ հայ մայրեր:

— Փողե՞րս:

Պատուիրեցիք որ ընկերներու տամ, փոխեն:

Դէմս նստած կը խրախուսէր որ ուտեմ կուշտ: Երկար է ուղե-  
ւորութիւնս, «200-էն 250 վերստ կը լինի»: Զէի համարձակեր իրեն  
նայիլ, տխուր էր: Մի՞թէ նոյն կերպով չէր որ ճամբու դրած էր իր  
միակ զաւակը, արեւմտեան ճակատի վրայ այս բազմիցս անիծեալ  
պատերազմին առաջին զոհերէն:

Վերջապէս իրարմէ խուսափելու գուր փորձերէն յոգնած՝ կը  
նետուինք գիրկ գրկի:

— Միամիտ կաց, Վարդանոյշիմ հետ ոչինչ չի պատահելու:

Մինչեւ ժամագրավայր, Կուրի ափին, քայլերս դիւրասահ զիս  
ազատ կը թողուն հին ու նոր յուշերուս: Կ'անցնիմ «Ներսիսեան Դըպ-  
րոցի» հին շէնքին մօտէն, զազտագողի ակնարկ մը, քիչ մը դառնու-  
թիւն: Բա՞ց է տակաւին:

Թրամվայի կայանին հասեր եմ, ո՛չ ոք: Կը յառաջանամ կա-

(\*) Տարեալի կիրճէն անցնող մանապարհ, շինուած Թուսերու կողմէ, 1802  
թուականին, վրաստանը կայսրութեան կցելէ յետոյ:

մուրջ, Կուրի ջրերուն պղտորութիւնը ճշգրտու : Մեծկակ երկու ձիով քարչ կառք մը զիս կը քերէ : Կանգ կ'առնեմ : Վրան, երկու կողերը մոմլաթով ծածկուած տնակին ետեւի ծածքերը քովնտի բաց են, հոն-կէ դէպի ինձ թեւեր շարժուիլը նուազ անակնկալ մը չէ : Ծանօթներ են, թէ բախտակիցներ, որ երեւոյթէս կուահեր են Հայու ինքնութիւնս, տակաւին մտադրութիւնս : Երեւի վրաս նայելով իրենց բախտաւորութիւնը կը չափեն :

Երթա՞ն բարո՞վ :

Կամուրջի միւս ծայրէն թրամվայ մը, կը թուի թէ անշարժ է : Ո՛չ : Անոր գլխուն վրայ կայծկտուք կայ, կը շարժի :

Թիֆլիզի ամենէն խոշոր եւ գեղակերտ կամուրջն է Կուրի վըրայ : Կը կրէ Վարանցով-Տաշկով անունը, հայ-թաթարական տասնեակ մը տարի առաջ տեղի ունեցած կռիւներէն յետոյ, նոր քաղաքականութեան մը պատգամաբերը, խաղաղութիւն բերող, «հայասէր» փոխարքային ի յարգանս մկրտուած :

Պուրակին մէջ թաղնուած կը լրտեսեմ մեր «թշուառականներուն» իջնալը : Եկող կամ յաջորդ թրամվային մէջն ըլլալու են : Ան ճոնչալով կ'անցնի իր ճամբէն, հրապարակը կրկին պարապ է առաւօտեան այդ ժամուն : Անոնք են միայն քով քովի, գիրար հարցուփորձելու ձեւեր կ'առնեն, շուարած :

Կամ չնամ անոնց անձկութեան վրայ ծիծաղելու շար մտքէս : Կապոյցը կոնակիս դուրս կ'ելլեմ, երբ չես գիտեր ինչո՛ւ, պուրակին բոլորտիքը դառնալու որոշում տուած, անոնք հակառակ ուղղութեամբ կը բաժնուին իրարմէ :

«Վարանցով»ին ձին վարձելու ելեր են անպայման» : Անբացատրելի բան մը տեղի կ'ունենայ մէջս, ծիծաղելու, կատակելու տրամադրութիւն :

Իմ մայթիս վրայ անցնելու ատեն կը ցցուիմ Հրաչիմ դիմաց : Անոր զարմացական բացականչութենէն Վահան ետ կը դառնայ, ու առանց բարեւի ,

— Ո՞ւր է ճամբանիս :

— Ոտքի մատներուդ ծայրը : Ծա՞տ աճապարուած ես :

Քէյֆը տեղն է, կը տեսնեմ : Շիտակ բան մը եթէ գիտես՝ ըսէ՛ :

— Վուայէննի կրուզիստի տարուկա :

Դարձեալ գոհ չէ : Տոպրակը ձեռնափայտին վրայ զետեղելու համար կանգ առած է, ամէնը մէկանց կը նետէ ձախ ուսին :

— Ծօ՛, կատակին ատե՞նն է : Ճամբանիս գիտե՞ս : Ա՛ն ըսէ :

— Նաեւ երկայնութեան չափը, նուազագոյն 250 վերստ» :

— Այսինքն :

— Մեր քաղքէն, կ'ըմբռնե՞ս : Մեր Չմչկաճագէն մինչեւ Երի-

ցազրակ հեռաւորութիւնը 50-60 անգամ բազմապատկէ, մանաւանդ անպայման անոր «Ալէլուիա» զառիվերին պէս տասնեակ մը պարունակող :

— Ծօ՛, իրա՞նք կ'ըսես : Ատոր կօշիկ պէտք է որ դիմանայ :

Հասեր ենք փոքրիկ հրապարակ մը, ուրկէ քանի մը փողոց կը բացուի :

— Լա՛ւ, լա՛ւ, հիմա ո՞ր փողոցը պիտի առնենք :

— Ս. Էջմիածին տանող ճամբան :

Երկու ընկերներս ալ կատողեր են, Վահան դէշ արթնցած՝ չի տանիր, իսկ Հրաչ ծիծաղը խնդուքի է վերածեր :

— Կ'ուզէք հաւատացէք, կ'ուզէք ետ դարձէք : Փոխանակ Հայոց Էջմիածնի, Վրացոց Էջմիածնայ ճամբան պիտի բռնենք, որ թարգմանի Մցխէք, Մցխէքա, ինչպէս որ ձեզի հաճելի է : Ծիչդ մէջտեղինը, ա՛յն, որուն հորիզոնը երկինքն է :

— Անոնց կաթողիկոսին հեռագիր զարկած ես : Վահան բոլորովին կերպարանափոխ, իր թեթեւ բեռը ձախէն աջ ուսին կ'անցընէ :

— Կէսօրուան ճաշի կը սպասէ, վախմամ ուշանանք :

Հորիզոնը, զոր ցոյց տուի, երբ հոն հասանք, Պաքում-Պագու տանող երկաթագծերու պատնէշներն անցնելէ վերջ, մեր առջեւ կը փռուէր Թիֆլիզ քաղաքն իր ամբողջութեամբ, մեր աջէն արեւու շողերը Կուրի երեսները շոյելով դէպի մեզ կը վազէին, կորսուելու համար Մետեխի բանտ-բերդին լանջերուն վրայ :

Շրթունքներէս կախուած, աչքերնին կը հետեւէին թեւերու, դիմացի բլուրին, փոխարքայի պալատին, Սոլովակին, Կալավիսկի Պրոսպեկտի, Պօթանսփի, Պարտէզի, Հաւլապարի, Շէյքան Փագարիի եւ իր տաք բաղնիքներուն, Օրթանալայի արուարձանի ուղղութիւններուն :

— Մեզի՞ ինչ, ըսելով, Վահան, որ միայն ինքն էր նստած, հանդիսաւորապէս ոտքի ելաւ : «Օն», ուրեմն, դէպի Մցխէթա» :

— Արեւելից արեւմուտք, վրայ տուի, Վահանը գրկելու փորձ ընելով :

Կէսօրուան մօտերը ամայի ճամբան կը կենդանանայ, առ ի ապահովութիւն մեր տղոց, իրարու ետեւէ կարճ տեւողութեամբ կանգներ՝ Հայերով լեցուն կ'անցնին, բարեւ տալով : Վահան անոնցմէ միուն կը կառչի :

— Ծամբանիս շիտակ է : Ու կը հրամայէ կանգ առնել, յոգնած է արդէն :

Այն օրերուն Վահան շատ հեռու չէր մեր կրկին տարիքն ունենալէ :

Ետեւ ետեւէ, կարճ տեւողութեամբ, իրարու կը յաջորդեն Հա-

յեր փախցնող կառքեր, Վահանին ներչնչելով վախ եւ աճապարանք:

— Ծօ՛, ըսել է այս ճամբան, որ բռներ կ'երթանք, նոյնն է, ուրկէ Պաքուսէն եկող թրքական զօրքը պիտի անցնի:

Հրաչ, մինչ այդ հաւատարիմ լուսթիւն եւ համակերպութիւն դերին, չուրջերնիս դիտող, եւ հեռաւոր հորիզոններուն սիրահար, մէջ ինկաւ, առանց իր միտքը բնորոշելու:

— Համայն երկիրը մեր աչքին առաջն է, ես ուրիշ կառուղի չեմ նշմարեր:

— Հոգ մի՛ ընէք, ըսի կատակի թոնով, միշտ գալիքին իրազեկ, անոնք առաջին կարգի վակոններով կը ճամբորդեն, ու թերեւս արդէն Թիֆլիզ մեզ կը փնտռեն:

— Խեղքովդ այս անիծեալ ճամբէն ե՞րբ պիտի ծռինք:

— Մինչեւ Վրաց կաթողիկոսին վանքը հասնիլը: Լաւ կ'ընես տոպրակդ բանաս, հալվա ուտենք, բեռդ թեթեւայ, ոտքերնուս վըրայ ոյժ գայ, արեւուն մուտքը հոն ողջունենք:

— Կոնակիրդ բեռը աւելի ծաւալ ունի, քան տոպրակս, ի՞նչ է մէջինը:

Բանից դուրս եկաւ որ մեր երկու չուսականները, սուտ ու փուտ մանէթներու ապաւինած, ակոսյի տակ դնելիք կուտ մ'իսկ գընելու միտ ըրած չեն:

Անհրաժեշտ է դիտել տալ, որ առաւօտէն սկսեալ մեր խօսակցութիւնները լռելեայն համաձայնութեամբ զուգադիպեր էին թեթեւ վայրէջքի պահերուն: Այս անգամ հարկ եղաւ մեր ունեցածները ճըրգելու խոստովանութիւններ կատարելու, որմէ վերջ երբ վերելք մը սկսաւ, առջեւնիս՝ շուքի հետք չէր մնացած՝ նաեւ ամէն կողմի վրայ: Ոչ իսկ զայն գտանք, ձախին, ճամբու գլխուն տնկուած գեղատեսիլ պանդոկ-ճաշարանին ցածլիկ պատերուն առջեւ, ուր որոշեցինք կանգ առնել, նստիլ:

Այդ փարթամ չէնքին, փարթամ պատերը կառքերէն զերծ պահող, մօտիկ-մօտիկ գետին ամբացուած քարակոյտները, իրենց վրայ պղպեղու ցանկութիւն մը հրահրեր էին մեզի, երեքիս ալ:

Գեղեցիկ էր վայրը, ինչպէս օդը այդ պահուն, եւ, մեր քրտինքին համազօր բարերար տաքութեամբ, հողածու, պատասպարող:

Ա՛յլ էր ճաշարանի բաց պատուհաններէն մեզ գզուող գօլը՝ սատանային տաք շունչն էր, որ դէպի մեզ կը հրէր «շաշիկի» գգլիւիչ բոյրը:

— Ծօ՛, հա՛յտէ, ելէք, գոչեց Վահան: Հիմա կու գան մեզ կը վռնտեն: Հոս մեր տեղը չէ:

Թէեւ մարդ-մարդասանք չէր երեւնար:

— Ասանկ տեղին առջեւները մուրացկանի չեն հանդուրժեր:

— Այո՛, ճիշդ է, Վահան: Շաշիկի հոտը առած ըլլալնուս փա-  
րան կ'ուզեն, ըսաւ Հրաչ, որ ձեռքերով մարմինը կը շոյէր, պա-  
հուած մանէթներուն տեղերը:

Գժուար էր սակայն ե՛լ հանգիստէն բաժնուել, ե՛լ բուրմուն-  
քէն, երբ Հրաչ դարձեալ լեզու կտրած հրապուրիչ առաջարկ մը քըն-  
նութեան դրաւ, որ միաձայնութեամբ հաւանութիւն գտաւ:

«Իմ շալիկնս վերապահել գիշերային խրախճանքներու, փոք  
խաբելու չափ հաշուըւած բաժիններով, իսկ այժմ արտակարգ առի-  
թէն օգտուել, շաշիկ եւ Կախեթիմսֆի ճաշակել, թէեւ գրպանները  
պիտի մի քիչ թեթեւանան»:

Տեսնելու բան էր, կատարեալ ռազմավարութիւն՝ գողերու  
պէս մեր մուտքը ճաշարանի գլխաւոր դռնէն, անձայն տեղ գրաւելու  
եւ մեր տոպրակները սեղանին քովերը, աթոռներուն եւ մեր սրունք-  
ներուն միջեւ ծածկելու ճիգերը՝ լայնկեկ ապակիներու ետին՝ Պոք-  
ժոմի անտառներուն դէմ-գիմաց: Ի դուր աճապարանք, ճաշարանը  
ամայի էր, վերջնագոյն դէպքերը մարած-փախցուցած էին ոչ միայն  
անդրկովկասեան պուրժուազիայի ախորժակը, այլ վրացի անհոգ դա-  
սակարգի մարդոց գուարճանալու անտեղիտալիութիւնը:

Անշարժ, նստեր-գամուեր ենք, անցնող ըոպէները իրենց հետ  
կը տանին հին վախեր, նորերը նոր անձկութիւն կը բերեն, կը սպա-  
սենք որ բան մը պատահի, մեր թմրութիւնները փարատելու:

Մէկ-քանի զոյգեր, գեղազարդ կռօքերու մէջէն դուրս կը  
ցառկեն, աջամարտիներու գործողութիւններ, գզուանք եւ անվեր-  
ջանալի շաղակրատութիւններ, նոր հասնող կնոջ մը առջին երկրպա-  
գութիւն՝ իրանին զետնին զուգահեռ՝ անոր ձեռքէն բռնած:

— Ծօ՛, մէկը «սըւոր» յետոյքին աքացի մը տար, ի՞նչ յարմար  
ատեն է:

— Երթա՞մ: Ի՞նչ կ'ըսէք:

Մեզի կարեւորութիւն տուող չկայ: Գոյութիւն ունի՞նք իրա-  
պէս: Ոչ իսկ դրան մէջ պահակի դերք բռնած սպասաւորներէն, որոնք  
արհամարհանքի ակնարկ մ'իսկ զլանալով, մեծ սրահը կը կտրեն-  
կ'անցնին: Խորքի դռնէն չես գիտեր ո՞ւր կը կորսուին «մեր քէյֆֆի-  
ները»:

Իրենց պարապութենէն սահմուկած մեր ստամոքսներու չարչա-  
րանքին «դէմ կը բռնեն» մեր ուղեղներուն մէջ զիրար հրմշակող  
մտքեր, դանոնք մատակարարող նիւթեր կան անվերջանալի, հիներով  
որոճալու տեղի չկայ:

«Հոս պիտի սոթթուինք» կը մրմռայ Վահան, «ես համաձայն  
չեմ փախչելու» արձագանգին ի պատասխան, զոր երկրորդ «միլիո-  
նատէր»ը արձակած էր: Իսկ իմ երազ ցանկութիւնս էր «շաշիկով»

համեմուած մատներս ծծել, Կախեթինսքիով լուսալ ու բմպել :

Կերանք վերջապէս շաշլիկը, աչքերնիս բան մը տեսաւ, փորերնիս ոչ. համով էր՝ քանի որ քիչ էր : Կախեթիմսփին, որ յազկերտեան փիղերուն զիմադարձելու աստիճան ոգեւորեր էր՝ յաղթեց մեզ :

Անոր ընդարմացումէն առաջին զգաստացողն եղաւ մեր «Քինանսների մինիստրը», Վահան : Իր առջեւ դրուած պնակին մէջ թուղթ մը կար՝ դրպան դատարկելու վճիռ մը, թուանշան մը «կոլոսալ» :

— Մարդ-մուրթ չկայ, կծկենք :

— Ուրեմն «կացութիւնը կրիտիկական է», իսկ «քո առաջարկը լրջօրէն քննելիք մի հարց» :

Կը շաղակրատէի թէեւ, սակայն հարուածը իրապէս ահաւոր էր, երբ աչքս թղթի վարի ծայրին հանդիպեցաւ : Փախչելու միտքը լուծում մըն էր՝ յաջողելու պարագային, այլապէս կրնային փառաւոր ծեծ մը քաշել, մեզ բանտարկել, Նիկոլայի այնքան սուղ գնով ձեռք բերուած ուսելիներէն թեթեւնալ բոլորովին, հա՛պա շիմեխ՝ որ մեր վրայէն ուրիշի վրան պիտի փոռէր գիշեր-ցերեկ :

Իբրեւ ամենածանօթը տեղւոյն գիներուն, ըսի որ «չան որդիները» տասնով բազմապատկեր են առնուազն. նկատի ունէի «Դերենիկ»ի ճաշարանին «մտաւորական դասու» ճաշացուցակները, զորս յաճախ աչքով լսիլիպիեր էի : Հոն ուր կը ճաշէի, երբ ազնիւ բարեկամ մը զիս հրաւիրէր, դիտեր էի քովէս անցնող պնակներուն մանաւանդ ճոխութիւնը, որ մեր կերածներուն հետ ոչ մէկ բազմապատկերն պիտի հանդուրժէր :

Վահան միշտ կը տնտնար ձեռքը գօտիին մէջ խոթել-հանելու մէջ :

— Ծ'օ՛, սրւոնց բան մը ըսէ, քիչ մը գեղչեն :

— Ի՞նչ լեզուով : Չտեսա՞ր որ վրացերէմէն վազ չեկաւ, իսկ ես «կացոյ», «սոմեխի», «երթի», «օրի», «մացոնի», «պուրի» բառերը միայն գիտեմ, շիտակ կամ սխալ հնչելով :

— Յնձա՛, գոչեց մէկէն Հրաչ բարկութեամբ, ու թուղթը ինծի տուր :

Ու մեր պարտաճանաչ հաշուապահը անոր ետին գծեց ուղղահայեաց բաժիններ, անոնց գլխուն գրելով տեղ, թուական, եւ իր մասնագիտութեան յատուկ ա՛յլ բառեր :

Կը մնայինք անշարժացած, այդ գինին մէջ կը տեսնէինք հոն գիշերելու իրաւունք : Որոշեցինք «թեթեւնալ մեր այլեւայլ հեղուկ կամ կարծր աւելորդութիւններէն», ու փոխնիփոխ կատարուած այդ «այցելութիւններէն» ընծայուած ժամանակէն օգտուելով՝ ունեցայ ոչ միայն անճոռնի միտք մը, այլ զայն գործադրութեան ղնելու յանդէնութիւնը :

Դուրս նետուեցանք, ու երկար ատեն վերստ վերստի յաջորդեցին: Անկանոն քայլերով իրարմէ կ'անցնէինք ու ետ կը մնայինք, արտաքուստ համբ, ներքին վիճաբանութեան մը ոլորտներուն անձնատուր:

Ի՞նչ անխղճութիւն, կողոպուտ, չարութիւն:

Առանց անդրադառնալու որ այդ էր «նման հաստատութիւններուն կոչումը»:

Պայքարը իմ մէջ տարբեր բնոյթ ունէր: Ըրած ստոր արարքիս մխիթարական ելք կը փնտռէի, ի դուր: Քանի կը յառաջանայինք, այդ մեղքիս ծանրութիւնը կը զգայի նաեւ մարմնոյս վրայ:

Ծոցէս հանեցի գեղեցիկ, փայլուն եւ նաչխուն յախճապակիէ պնակներէն մին:

— Տղա՛ք, սկսայ դոռալ, մօտեցէ՛ք: Այս պնակը ի՞նչ կ'արժէ: Պնդեցի, կեցան, մօտեցան, ապշած կը դիտեն:

— Ա՛ռ քեզի մէկ: «Եղիբ ջարդ ու փշուր»: Ես վճարեք եմ դինդ: Դարձայ Վահանին:

— Ի՞նչ ես պապանձեր: Ասոր դինն ալ դո՛ւն ես վճարեր:

«Եղաւ ջարդ ու փշուր», հակառակ Վահանի բողբոջին:

— Իսկ դուն, Հրաչ, վճարեք ես սա երեք պատառաքաղներուն ը: Անոնք կորան հեռուն, մացառներուն մէջ, մինչ Հրաչ վրաս կը վազէր իր սեփականութեան տէր դառնալու, ջարդուած պնակներուն վրայ ի դուր թափած ափսոսանքներով դիս լուալով:

— Օ՛Փ, կ'ըսէր քիչ անդին Վահան, քարացած, սիրտս պաղուցկեցաւ:

Ու այդպէս մերթ տրտունջ թափելով, մերթ պաղուցկելով, արեւը մեր դէմի, Կուրի ձախ ափին ցցուող լեռնաշղթային վրայ էր տակաւին, երբ կ'անցնինք Կուրի վրայէն, հնամենի քարէ կամուրջէ մը, Սաճահիճինը յիշեցնող, ու կը մտնենք Մցխէք դիւղաքաղաքը՝ Կուրի եւ իր ձախ արբանեակներուն միացման կէտին վրայ իշխող ժայռոտ բլուրի մը վրայ հիմնուած, որուն յատկանշական եւ ցցուն շինութիւնն էր արդարեւ՝ Հայերու ծանօթ ոճով եկեղեցի մը:

Մցխէք, 1918 թուի գարնան, երբ մենք հոն մուտք կը դործէինք, ոչ թէ փողով-թմբուկով՝ յողնած, դառնացած եւ ողորմելի, ոչինչ ունէր մեզի հիացում պատճառելու, երբեմնի թագաւորանիստ ստանի մը եւ Վրաց կրօնապետի աթոռանիստ աւանի մը համբաւը արժեցնող, ինչպէս ապահովաբար մեր թագաւորներուն բազմաթիւ մայրաքաղաքներուն մնացորդացը, զորս, իրաւ է, տեսնելու բախտը չէինք ունեցեր, քանզի թափառումներու մեր ծիրէն դուրս էր:

Եկեղեցիին թէ հինաւուրց վանքին կից հրապարակի նմանող բացատի մը հազիւ հասած՝ կարատաւոյ մը, նախ վրացերէն, ապա

ռուսերէն լեզուով մեզի ցոյց կու տար հետեւելիք ճամբան, ձեռքին փոխն ի փոխ, ջղածիւք, նոյն ուղղութեամբ շարժումներ տալով :

Վահան ցոյց տուաւ եկեղեցին, խաչ հանեց՝ չեղաւ, ոստիկանը անոր իրանը շտկեց՝ երեսը ճամբուն ուղղութեամբ :

— Ինչո՞ւ չըսիր որ դպիր եմ :

Յոյց տուաւ աղբիւրը, քովի նստարանը, ասիւր կլորցուցած բերնին տարաւ, չեղա՛ւ : Կարատաւոյը բրտօրէն հրեց զինքը :

Ահանոն, մեր գիւղաքաղաքներուն յար եւ նման, փողոցի նմանող անցքերու վրայ կը տեսնուին խանութի դռներ, սրճարան մը, որուն մօտէն անցանք հայերէն բառեր ըմպելով :

Ծարաւ գրգռող այդ տեսարանին յաջորդեց վայրէջք մը դէպի գետակ, որուն աջ եզերքին վրայ ցոյց տրուած էր մեր ճամբան, նաեւ ծարաւ յազեցնելու եւ գիշերելու վայրը :

Այս առաջին հանգրուանին յայտագիրը կանուխէն մշակուած էր, բոլոր մանրամասնութիւններով : «Անօթութիւննիս կոտրել Տիկին Շուշանիկի ծրարէն, ծարաւնիս՝ աղբիւրի մը կողքին ընկողմանած (գետին եզերքը աւելի ընդարձակ տեղ կար), գիշերային օթեւանը ճամբէն ոչ շատ հեռու յարմար խորշի մը մէջ, վրանիս՝ շիւնիւ թանկագին, երեք հողի ծածկելու չափ մեծ, մէջտեղը անոր տէրը, իբրեւ սեփականատիրոջ իրաւունք, անոր բեռը օրուան մէջ փոխն ի փոխ կրելու դաշինք» : Այս պայմաններուն վրայ պիտի աւելնար հեղեղատին օրօրը, որ նկատի առնուած չէր :

Ետ մնացեր էի, սրճարանի մարդոցմէ բաներ մը ճշդելու մտօք, ճամբուն յատուկ, որ թէեւ այլեւս միակն էր, հեղեղատին գուզընթաց, մինչեւ հռչակաւոր Տարեալի կիրճը :

Քաղաք ըսուածին ծայրը հասած, Վահան եւ Հրաչ ինծի կը սպասեն, զիս աճապարելու հրաւիրող անվերջ շարժումներով :

Աղբիւս վրայ սուր ցաւ մը կը զգամ յանկարծ, քովէս անցնող այծի մը կոտոջն է : Տղեկ մը կը վազէ ձեռքէն խուսած (խոյս տրուած) պարանը ձեռք անցընելու, դէպի ինձ պաղատագին բառեր մը կ'արտասանէ : Կը յաջողի այծին կոտոջներէն բռնել ու զայն հարուածեւ, երբ ես ճամբուն վրայ գետին ինկած՝ ցաւս պարտկելու համար գլուխս կը դարձնեմ պտուտակի պէս : Մի՞թէ կոտրտած պնակներուս վրէժն է, կ'անցնի մտքէս : Այդ մտածումը կ'ամօքէ զիս, թող «ատով վերջ դոնէ յանցանքիս պատիժը», ու մօտս վազող Հրաչին կու տամ թեւս, որ զիս վեր հանէ :

— Դուք ալ ուրիշ բան չունէի՞ք ընելիք : Ինչո՞ւ այդպէս շտապ-շտապ զիս կը կանչէիք : Վախցաք ե՞տ կը դառնամ :

— Աղէ՛կ, աղէ՛կ, թող մենք ըլլանք յանցաւորը : Վեր քաչէ նայինք, ի՞նչ է եղածը :



Այծին տէրը տակաւին կը շարչրկէր բուն յանցաւորը: Բարի տղեկ: Անշուշտ ան ալ Վրացի մը:

— Ծօ՛, վա՛խ, իրաւ գէշ զարկեր է, տեղը կաս-կարմիր եղած է: Ելի՛ր, երթանք պաղ ջրով փաթթենք:

— Լա՞թդ ուր է: Դուն ան ըսէ, ինչո՞ւ գիտ կը կանչէիք իրար անցած:

— Կարծեմ ճամբանիս կտրեր են: Կառուղիին երկու կողմերուն վրայ դաղթականներ թափուեր են «մալով-միւլբով»:

Մինչեւ այդ տեսարանին բացուիլը, կաղն ի կաղ յառաջացեր ու զարմացահար կանգներ եմ:

Դիմացս, ծառի մը բունին կռնակ տուած, կասկած չկայ, մեծ մայրիկս է, ու գէպի գիտ վագոզներն են Արտաշէսն ու Աշոտը: Ընտանեօք շարաթ մը առաջ մեկններ էին: Ուրեմն իրապէս ճամբան կտրեր են: Աչք կտրածի չափ երկայնութեան վրայ խառնիխուռն փռուած բազմութիւն մը:

Տղաքը կարօտագին կը փաթթուին ինձ, տեսեր էին կաղալս, պատճառ մը եւս իրենց խանդաղատանքին, ու կը քաշուին հարց տալէ:

— Հոս ի՞նչ կ'ընէք: Կրկնակ ցաւերէս դրդիւ, գրեթէ կը պոռամ վրանին:

— Կառապանին կը սպասենք:

Ոչ նուազ եղերական պատահար մը:

— Փա՛ռք քեզ Աստուած, ամէն բանի մէջ «խեր» մը կայ:

Մեր Անան, ուրեմն, հաւատացած է որ վրացի կառապանը 200 վերստի չափ ճամբայ տանելու դրամը կանխիկ դանձեւէն յետոյ, եթէ առաջին օրը չըրացած իր ձիերուն հետ անհետացեր է, դանոնք ջրելու պատրուակով, կառքը մասամբ դատարկել տալէ վերջ, զիրենք գետին թափելէ յետոյ, անոր համար է, որ ես իրենց հասնիմ:

Այս պարագային, նմանապէս, որովհետեւ աղէտը մասնակի չէ, չափուած-ձեւուած ու ընդհանրական, եւ որուն ապացոյցը փռուած է ճամբու երկայնքին, «Աստուած համբերութիւն եւ մխիթարանք շնորհած է», ու նոր կացութեան մը առջեւ դաղթականին համակերպելու անսահման կարողութիւն:

Հօրեղբօրս հանդէպ կուտակուած դառնութիւնս նոյնպէս, նոյն Աստըծուն շնորհիւ բոպէսապէս կը չքանայ: Ակնարկներս շեղակի հագիւ գինքը դգուելէ վերջ՝ կ'իյնան տղոց վրայ: Մեծ մայրիկիս ազերաներուն, անոր գրկէն դէպի գիտ փրթող Վարսեճիկի ձիգերուն:

— Ծօ՛, բան մը ըրէ, մեզ այս տեղէն փրցուր:

Ու Անաս, ցոյց տալով, առանձնացած, քարերուն վրայ պղզած հօրեղբայրներս ու ա՛յլ տղամարդիկ՝ համատեղացի, բարձրաձայն

կը խօսի ինքնիրեն. «Իշտէ Աստուած անոնց տղամարդ ստեղծեր է», ու ա՛յլ բառեր՝ «Ի՞նչ ընեն խեղճերը, երբ աշխարհը անողորմի ձեռք է ինկեր», ու հետզհետէ բարձր՝

— Սուլթա՛ն, սուլթա՛ն, կոռպակոռպ ըլլիս, մեր օրին իյնաս :

Խղճալի տեսարան մը, անել վիճակ, անակնկալ մը մեր երրորդութեան խաղաղ երթը բեկանող :

— Բայց ինչո՞ւ հոս կը սպասէք օրերով : Զէի՞ք կրնար քիչ մը ճամբայ կտրել :

Իրողութիւնը այն է որ մերոնց կառապանը զիրենք թափեր է առաջին օրն իսկ : Կէսօրուան մօտերը, առուակի մը եզերքէն հեռու, ձիերը ջրելու պատրուակով, ու անհետացեր, ու իրենք, իրենց նորելուկ չար բախտին վերահասու, ոտքով ու շալակներով «եւք» դըտնելու յոյսով եկեր-ընկեր են «մեծ» քաղաքի մը մէջ :

Ինչքա՛ն շուտ տեղի կ'ունենան իշխանութեանց փոխանցումները մէկ սերունդէն միւսը :

«Արեւ ծագեց», զիս ընդունած ատեն Անային բացականչութիւնը ուրեմն այդ կը նշանակէր, որուն կը հետեւէր «մեր գլխուն ճարը տես» խնդրանքը, որուն մէջ երբեմնի՛ հրամայական շեշտէն կոտրած բան մը կար, մինչդեռ կը սպասէի իր սոփորական ողորումներուն անձիս վերաբերմամբ :

— Հանդչելու մասին ոչ մէկ հրակէր : Անօթի ես թէ ծարաւ, ո՛չ մէկ ակնարկութիւն : Խեղճ ու կրակ ոտնամաններու մէջ, ամբողջ օր մը ճգմուած, ջարդուած ոտքի մատներուս ու կրունկներուս կոտտանքը, սրունքիս կերած կոտոշի հարուածին ցաւերը պէտք է սպասէին, իրենց վրայ ուշ դարձնելու համար, աւելի նպաստաւոր առիթի մը :

Ուստի ճամբէն անցնող զիւղացիին փակայ՝ Անայի՛ն յոյսերը արդարացնելու համար, տղաքը իբրեւ հետեւորդ՝ բախտ բերող :

— Կա՛մարձէպօ :

Առաւ բարեւ, «կա՛րկի մարձէպօ» : Երբ լեզուներ խառն ի խոռոն, կը փորձէի ինքզինքս բացատրել, ան մեզ կը զննէր, դերանդին մէկ ուսէն միւսը անցուց, ու ցոյց տուաւ բլուրի կողքին տնակ մը : Բա՞խտ թէ հրաշք, մէկ հիւղակէն միւսը, մարդ մը իր կառքով մեզ անելէն դուրս բերելու պատրաստակամ :

Տուաւ անուն մը, անշուշտ իմ աշխարհադրութեան հմտութենէս բացակայ, ուրիշ անդին անցնիլ չէր կրնար յանձն առնել : Իր բեռը ճշդելու ու վերջնական համաձայնութեան ի խնդիր, մարդուն հետ կը վերադառնանք մերոնց մօտ, Արտաշի՛ն ու Աշոտի՛ն ուրախ ոստոսուումները կ'ողբելորեն նաեւ վաղուան կառավարն ու զիս :

— Մե՛ծ եղբայր, ի՞նչ ըսաւ : Մեզ պիտի տանի՞ր :

— Այո՛, եղաւ :

— Ի՞նչ լեզուով կը խօսէիք :

— Հայերէ՛ն : Չհասկցա՞ք :

Օտարի մը հետ մեր մոռտքը բանակազայրին կենդանութիւն բերաւ, մանաւանդ երբ ան հասկցուց որ թերեւս ուրիշներ ալ իրեն ընկերանան, եթէ զիրենք վարձող ըլլայ : Վարձքերը աներեւակայելիօրէն չափաւոր :

Միաձի երեք կառքերով, յաջորդ առաւօտ, մեր գիւղացիք դըրեթէ ամբողջութեամբ ճամբայ ելան, կառքերուն մէջ բեռնաւորելով իրենց իրերը, փոքրիկները ու անոնց կարգին նաեւ մեծ մայրիկս՝ իմ «խաթեր» համար :

Իրապէս արտակարգ յաջողութիւն, որուն բախտ անունը պէտք է տալ թէեւ, սակայն այդ պահէն արդէն Անային անհամար օրհնութիւններով պատկուած՝ «տան սիւն»երուն կարգին կ'անցնէի :

— Պարապ տեղը չէր որ մեծ հայրիկդ, Աստուած հողին լուսաւորէ, հանգիստ պառկեր է, ծնած օրդ դնաց կորդ արտ մը քակելու :

Բաղմութիւնը նոյնպէս անտարբեր չմնաց ինձ հանդէպ, որուն ի տես Անային յորանջելու կապերը թուլցան, զիս քովը կանչեց, գիտէի ինչու համար, ստիպեց, ձեռքը գլխուս վրայ մըթմըթաց իր սովորական աղօթքը, «թող չար աչք չդպի» :

— Անա՛, հարսի՛կ, բան մը կ'ուզէ՞ք գնել այս մարդէն . կաթ, մածուն, պանիր, հաւկիթ :

— Աղէկ մէկը կ'երեւայ, հա՛րս, գացէք առէք, կրակի դին չ'ուզեր, մեզ պէս գեղացի է, «հալէ» հասկցող :

Տղոց հետ ընկերացանք մեր «աստուածաբախ» գիւղացիին, եւ իրապէս, վերջին օրերու գիներուն բաղդատմամբ, շնչին գինով մեր տոպրակն ու կաթնամանը լեցուցինք :

Անան անցնող գիշերը լաւ երազներ տեսեր էր, սկսաւ պատմել, տղոց աչքերը կը փայլէին կաթի դաւաթին ծայրերէն, հօրեղբորս դէմքին վրայ ժպիտի նմանող գիծեր կային, թեւ յամառօրէն լուռ, Ստեփան հօրեղբոր, միւս գեղացոց տրամադրութիւնները դէպի Կապէֆի կատարը կը ձգտէին, մինչդեռ իմ երջանկութեանս կը պակսէր թանկագին էակ մը՝ անդուզական քոյրիկիս ներկայութիւնը :

Ինչպէս իր յարզի կամ ցորենի խուրձերը, մեր կառապան-չինականը ինամբով լեցուց կառքը, Անաս իր կողքին՝ Վարսեմիկը գիրկը, տղաքը անոնց ետին, զիս բարձրացուց իր տեղը, ~~ստեղծ~~ ձիուն ուսերուն կապուած կառքի ձողի վեր-վար շարժումներ տուաւ :

— Շարունակ վերելք է մեր ճամբան, ուստի կառքը պէտք է բեռնաւորել այնպէս, որ ձիուն վրայ շարունակ թեթեւ ծանրութիւն մը ճնշէ :

Իր կողմէ անհասկնալի, սակայն մեր Անան, անոր ուղղուած հեշտալի խօսքերով, օրհնեց շինականին զաւակներն ու ընտանիքը, ու երբ ան նստած իր տեղը մտարկը կը շարժէր՝ մեկնելու հրահանգ տալու համար ձիերուն, չմոռցաւ «խաչ հանել», ու թեթեւցուց նաեւ իր կուրծքին մէջ սեղմուած շունչը:

Մենք եւս հանդարտած, կը հետեւինք կառքերուն, հարթ ու լայն թեթեւօրէն բարձրացող կառուղիէն, բախտաւոր Վրաստանի ծոցին մէջ:

— Երանի ասոնց: Ու նոյն հառաչանքը կ'անցնի մէկէն միւսը:

Արագվայի երկու լանջերուն վրայ կենդանութիւն: Սանդխաձեւ տափարակներու վրայ այր ու կին հողին կըքած կ'աշխատին, աւելի բարձրերը հովիւ տղաք զիրար կը բարեւեն՝ բերաննին երկու ափերու մէջէն:

Կառապանը զիս իր մօտը հրաւիրելու նշան կ'ընէ:

— Ի՞նչ կ'ըսեն, ինչի՞ շուրջ է այս միանուագ խօսակցութիւնը:

— Որ աշխարհը տարրեր է իրենց եւ ճամբու երկայնքին աշխատողներուն համար:

Լուռ է, բայց անպայման կը խօսի ինքնիրեն, ու շատ չանցած,

— Բաւական տեղ ճամբան հարթ է, ըսէք ձեր «մօրը», որ կրնայ կառք նստիլ:

Իր տեղը հարսիկիս տուաւ, ձիուն հետ գլուխ գլխի սկսաւ աւելի արագացնել քայլերը: Ընկերացայ իրեն: Արագվան շեղած էր դէպի ձախ, ու բլուրին ետեւ կորսուած, երկուստեք, մեր կոտրած ուսերէնով կը ջանայինք միտք փոխանակել, մեր քայլերը համբելու տաղտուկը վանելու միակ միջոցը:

Բնութեան զեղեցիութիւնները նկարագրող լեզուիս անբաւարարութիւնը չէր միայն որ զիս կը մղէր նիւթ փոխելու, որուն կը տրամագրուէր «նոր բարեկամս» (ըստ Վահանի եւ Հրաչի, որ ինքզինքնին լքուած կը դպային), ու այսպէս կը յայտնէր որ Գերմանացիներուն հետ լիակատար համաձայնութիւն կնքած էր Վրաց իշխանութիւնը, թէ «Նէմէց»ները իրենց հսկողութեան ներքեւ պիտի պահէին, մինչեւ վերջնական յաղթութեան օրը՝ երկաթուղիները, գըլխաւոր ճանապարհները, որոնցմէ էր Ռագվալիբական Կառուղին:

— Իսկ թուրք բանա՞կը:

— Ան Վրաստանի ներսերը որեւէ կայան պիտի չունենայ, միայն անցք:

— Ուրեմն մեր ճամբան գրաւուած է Նեմէցներէն:

— Վստահարար ոչ տակաւին, քանի որ Մցխէթի կայարանին մէջ դերման զօրք չէ տեսնուած ցարդ, եւ Տուշէթէն եկողները, ուր կը դիմենք, անտեղեակ են անոնց գոյութեան:

Ժամերը հեշտիւ սահեր են, ոչ մէկ յոգնութիւն կը զգամ անձնապէս, երբ «բարեկամս» կ'առաջարկէ հանդիստ տալ կարաւանին, ձիերը քակել, կերակրել, ջրել: Ընդարձակ բացատ մը կը տարածուի մեր առջեւ, Արագվայի աջ ափին:

— Չէ՛, չէ՛, մեղքը մի՛ առնէք, մարդուն երեսը միւռոն տեսած է:

Ձիերուն քակուիլն էր պատճառը այս անձկութեան: Վախ կար սրտերնուն մէջ անթեղուած:

Կապոցներնին գլուխնուն տակ կարծես դիակներ էին գետին փռուած, այնքան անկենդան, եթէ չըլլային կառքերէն վար թափուող փոքրիկներուն ձիչերը դէպի Արագվայի ցամբած հունի լճակներուն մէջ, ձիերուն խրխնջիւնին ընկերակցութեամբ:

Կարճ դադարէն յետոյ, Անան, որ օրհնութիւններով լեցուն պարկ մը անցուցած էր պարկեշտ կառապանի գլխուն, դարձեալ պիտի խռովէր, անէծքի տոպրակին բերանը բացած:

Արդարեւ կառք ու կարաւան բոներ էին իրենց դանդաղ գնացքին պոչը: Մենք ջահելներս, ժայռերու շուքին մէջէն կը ձայնէինք՝ շուտով անոնց հետեւելու հաւաստիք, երբ Վահան արար, որ միմիայն դաւաթ մը թէյ ըմպած էր, կտոր մը չոր հաց մէջը թաթխած, առանց այդ սակաւակերութեան պատճառը մեզի յայտնելու, տեղը կը մնար դամուած, ձեռքը որովայնին սեղմած:

— Վահա՛ն Աբար, ոտքի՛: «Գնում ենք»:

— Դուք դացէք: Հազիւ թէ կը զիջէր պատասխան տալու, ու մարմինը ծալած սկսաւ տրտնջալ:

— Վահա՛ն արար, ի՞նչ ունիս:

Բաւական ատենէ ի վեր «ոտքը քարշ կու տար», ու յաճախակի նստիլ-ելլելով կու դար կը միանար կարաւանին:

Ի՞նչ կրնար ըլլալ իր ունեցած խիթերուն պատճառը: Կախէթի դինի՞ն: Գիչերուան ընթացքին առած պա՞ղը: Մեզմէ ծածուկ տարբեր բան մը ուտելը չտեսանք:

Երրորդութեան կապերը վերահաստատուեցան: Վազեցի յայտնել հօրեղբորս ետ մնալու պարտաւորութիւնս, կառապանին եւս, անոր տալով պաշտպանի դեր, ու երբ առաջարկեցի կանխիկ վճարել մեր պարտքը, ազնուօրէն մերժեց:

Հօրեղբայրս քանի մը քայլ ետ դարձաւ հետս, «մօրս տրտունջի պատճառ կու տաս», ըսաւ, ու երբ առանձնացանք դրեթէ, ծոցէն հանեց իմ դրամէս մաս մը, երկարեց՝ սովորական խրատներով համեմուած, անխօս մարդուն համար մեծ զոհողութիւն:

Տղայարար, պարզապէս խօսակցութիւն ստեղծելու իբր նիւթ, Վահանը մխիթարելու, քաջալերելու խօսքերէն յղփացած,

ապահովաբար զինքը եւս, պատմելու ելայ թէ ի՞նչպէս վրացիք յաջողեր են դաշնակցիլ Գեորգիոյ հետ, եւ իրենց ճանապարհներուն ու սահմաններուն հսկողութիւնը անոնց յանձնել :

Ձգացի որ այս լուրը յայտնելու յարմար պահը չէր, ընկերներս ապշահար սկսան զիս զննել :

— Մինչեւ անոնք Տարեալ հասնին, մենք կիրճէն անցած կ'ըլլանք :

— Պապա՛մ, դուք ինծի մի՛ նայիք, գացէք ձեր գլխուն ճարը տեսէք :

Ես կ'առաջարկեմ հետեւեալը : Շարունակեցի քակել մտքիս շարադրանքը : Մեր ուսերուն կռթնած՝ վահանին հետ կը գիշերենք առաջին հանդիպած գիւղը : Անոր փորին ցաւը օդիով կը բժշկենք : Վազըն առաւօտ կը հեռանանք կառուղիէն, ու այնուհետեւ փոխանակ ցերեկները ճամբորդելու՝ գիշերները կը քալենք, այսինքն առաւօտեան ցուրտէն ալ փախուստ կու տանք եւ պաղառութենէ, մանաւանդ այդ ձեւով գերման զինուորի երես չենք տեսներ :

— Գոնեակ մը, օդի մը եթէ ըլլա՛ր... Հրաչ մօտեցաւ վահանին թեւը մտնելու, որ ստքի ելլելու փորձ կ'ընէր : Վա՛րսն էր որ անթիփիթի մի գեր կատարեց :

Այս անգամ ալ, մասնաւորապէս, ճամբայ ելած պահէս սկսեալ, Անային յանկերգներէն մին զիս կը զբաղեցնէր՝ «Աստուած մեզ մոռցեր է» : Բայց չէի համարձակեր անոր ձայնական բնօթ տալ, եւ իրաւունք ալ ունէի : Եթէ մեզ «մոռցած ըլլար» այս լեռներուն վրայ, կածաններուն մէջ թափառաշրջիկ, հետիոտն տառապող, քրտինքի մէջ ողորուած, Հրաչին հետ վահանով ծանրաբեռնուած, այն ատեն մեր ուսերուն վրայ ամառնային տաքերէն բորբոքուած հեղեղներ կը թափէր : Այսպէս անհամար դառանցազին մտածումներ, որոնց թելերը կը կտրատէին մեր ետեւէն արձակուած «խապարտա» կոչերը :

Կորսուինք, քաշուինք, հեռանանք, այդ է ըրածնիս :

Գժուար է վահան արարը քաշկոտել կառուղիէն դուրս խորտուբորտութիւններուն մէջջէն, ու յաճախ ձիերուն ոտնուկերէն շարտուած դուրրչիները կը շոյէին մեր վրդերը, երբ կը յաջողէինք կողմնակի ապաստան մը ընտրել :

Մեծկակ կառք մը, երկու ձիով, հայ ընտանիքով մը բեռնաւոր իր արադութիւնը նուազեցնելու վախէն բռնուած կառավարը մտրակ կը շաչեցնէր, մանաւանդ նշմարեր էր մեր չարչարալից երթը, անփոյթ կեցուածքը՝ ճամբու ճիշդ կեդրոնին վրայ : «Ազնուութիւն» ունեցաւ կանգ առնել, հարցուփորձին միացան ընկերացողներ, յանձն առին վահանը առնել ու գայն թողուլ յառաջիկայ շէնլիքին մէջ :

— Հրա՛ջ: Թեթեցած, շունչ առած, դարձայ իրեն: Իրա՞ւ է որ Աստուած մեզ մոռցեր է:

Թեւեր առած կը սուրանք դէպի նոր կայանը, որուն չէինք փափաքեր հասնիլ ո՛չ այդ օրը, ոչ ալ վաղը: Բայց, ափսո՞ս, արեւը արդէն փախուստ տուեր էր Արագվայի հովիտէն: Բլուր մը, իրաւ է, կառքը ծածկեց մեր տեսողութենէն, ու ժամ մը չանցած Վահանը գտանք աւելի ընդարձակ հովիտի մը ծառերուն տակ, ընտանեկան նոր մթնոլորտի մը մէջ, ժպտուն ու քաջալեր:

Ինքզինքը լաւ կը զգար, փորը տաքցած էր «ազգային դոնեակով», ուրախ էին զինքը հիւրընկալողներն եւս, ու ընդհանուր խանդաղատանքի մը պահէն ազդուած տանտիկիներ մեզ բարեւեց, յայտնեց մեզ թէյով պատուելու փափաքը, եթէ ջուր ունենար:

Ինչո՞ւ այսքան վաղ օթեւաններ են մտքերուն մէջն էի, երբ բարի տիկնոջ խօսքերը ինձ հասան: Խնդրեցի ջրաման մը, դոյլ մը, առնուազն երկու քիլոմեդր հեռուն քաշուած Արագվայէն ջուր բերելու համար, աչքով շատ մօտիկ, քարքարուտի մը մէջերէն, ամէն քայլափոխի յանդիմութեանս վրայ ցամամբ լեցուած, անխոհեմօրէն վրձնած որոշումիս բեռան տակ:

— Բայց, զաւա՛կս, դուն արդէն բաւականաչափ յոգնած ըլլալու ես, եւ այդ ջուրը...

— Տիկի՛ն, ատիկա յոգնութիւնս կ'անցընէ, պտոյտ մըն է, դա՛րով ջրի որակին, վստահ եղէք որ ամենամաքուրն է որեւէ քաղաքամէջի ջրերէն, նոյնիսկ Սոլովակի ջրէն:

Հրաջի հետ իրաւ դառն պտոյտ մը եղաւ, բայց վերադարձին սիրոց մը գտանք փոռած, վրան դաւաթներ, պնակներ, մէջը կարկանդակ, հաց, պանիր... եւ շաքար:

Սկսայ դանիլ անոնց վրայ յառած Վահանիմ աչքերը դիտելով, անոր ժպիտներէն՝ բովանդակ ուշքս ջարդուած ոտքերուս:

Մեր հիւրընկալներն էին, երկու տիկին, օրիորդ մը անչափահաս ու երկու մանչեր՝ դիմնազիւտի համազգեստով, բարեկա՞մ մը թէ՛ սպասաւոր, որոնց հետ Վահանի խօսակցութիւնները վերջ գըտան մեր վերադարձին, երբ բարեկամը արտորանքով քարիւղէ օձախը սկսաւ պատրաստել, (Primus)ը:

— Մարդը զինուա՞ծ է, փափսաց Վահան, որ կը շարունակէր ուշի ուշով գննել մարդիկ եւ ա՛յլ ինչ:

Միապաղաղ երեկոյ մը: Կրնայինք թերեւս քիչ մը ճամբայ եւս կտրել: Մեր ազգակիցները նոյնպէս կը մեկնէին Վլախիկավլագ, իրենց տարեկան արձակուրդէն իրաւ է քիչ մը առաջ, ընտանեկան յարկի տակ: Արչալոյսէն առաջ ձգեր էին Թիֆլիզը, առաջին դադարն է որ կ'առնէին՝ ձիերուն ինայելու համար, ու ճամբու երկայնքին որեւէ զինուորական միաւորի չէին հանդիպած:

Անսպասելի հիւրընկալութենէն կշտացած, զով շուքի մէջ զիս այցելող բարեւուկը փոխուած էր անուշ նինջի, երբ յիմար երազ մը կը ցնցէ զիս : Ո՞ւր եմ :

Վահան կ'ընդդիմանայ մեկնելու առաջարկիս : Տակաւին կազդուրուած չ'զգար ինքզինքը, խորհուրդ կու տայ տեղւոյն վրայ գիշերել :

Ամչկոտ, Հրաչ եւ ես յարմար դատեցինք բաւականաչափ հեռանալ կառքէն, անոնց մտերմութիւնը չխանդարելու դիտումով, հակառակ Վահանի տեսակէտին եւ մեծ տիկնոջ բողբոջին : «Իրենց համար մեր ներկայութիւնը ապահովութիւն էր» :

Կառքը համարեայ պարպուեցաւ հոն, անկողիները յարդարելու համար անոր չորս անիւներուն մէջ : Մէկ կողմը կառավարն ընտրեց՝ ծրարներուն միջեւ, միւս կողմը մենք, Վահան աղբարիկը մէջտեղնիս, որ պաղ չառնէ : Գլուխ ձեռքերուս մէջ ամփոփած կապոցիս կակուղ մասին վրայ գետեղելս միայն գիտեմ, արդար քունը առած էր զիս իր կազդուրող գրկին մէջ :

Կրնար օրեր տեւել, առանց Վահանի յամառ հրմշտուքներուն, շուրջս օրօրոցի վերածեր էր, ականջիս մէջ կը հոսեցնէր «Տայտէ, ելիր», «ատենն է», «ժամը չորսն» է : Ինչէ՞ն գիտէր :

— Մո՛ւս, մարդիկը չարթնան :

Երբ միւս կողմը դարձայ, այս անգամ Հրաչն էր քովս, ծունկի, ափը բերնիս, նոյն «սուս եղիր» մեղեդիով :

Իրաւ է, ժամը գիշերուան չորսն ըլլալու էր, ըստ բացօթեայ գիշերներու ջերմաչափային փորձառութենէն մնացած ժամացոյցին :

Սկզբնական զգուշաւոր, աւելի ճիշդ է ըսել դադապողի քայլերուն հետեւեցան ցրտի սարսուռը փարատող արագընթացք, վազք մը, որ նախորդ օրուան «մեռնող» Վահանը կը վարէր տիրաբար :

Եթէ մեր որոշումներուն մէջ էր գիշերային երթը, սակայն, քունը գլուխս, կօշիկներս դէշ կապած, սուրհանդակային այդ վազքը ինձ տարօրինակ կը թուէր, նոյնպէս պարբերաբար ճամբու բարձրութիւններէն օգտուելով ընկերներու կանպ առնելն ու ետեւ նետած ակնարկները :

— Ծօ՛, ո՞վ է ընկեր ետեւնուդ, չըսէ՞ք :

Նստայ, ուսերուս վրայ ծածանող շիճեղս փաթթելու ատենն էր, բաւական տաքուցեր էր զիս, եւ շտկելու ծամածռուող կօշիկներս :

— Համաձայն մեր ծրագրին, օրը լուսնալուսն, պէտք է ճամբէն հեռու արահետներն ընտրենք :

Արդարեւ կողմնացոյց անհրաժեշտ չէր, հովիտը կը լայնար ու կը նեղնար, անդադար վերելք, դետակը միշտ աջին, թէեւ ան ամա-



ուռան առթիւ յաճախ համր էր, երբեմն-երբեմն կը յայտնուէր լուսնի շողերուն աչք ընկելու ատեն, եւ մենք ալ իրեն:

Ինկանք քարակոյտերու մէջ: Հեռուէն կովկասեան Լեռնաշղթային դադաթները քերելով արեւը ինկեր էր անոնց մէջ: Յառաջապահներս քարերու մէջներէն արահետ փնտռելէն յոգնած, առաջին դադարի որոշումը տուին, պահուըտելու յարմար տեղ, ճամբէն բաւական վեր՝ անոր պտոյտներուն տիրապետող:

— Վահա՛ն արար, նայէ՛, շո՛ւտ, կառքդ կ'անցնի: Ինչո՞ւ մեզ այսքան վեր հանեցիր, կրնայիր օգտուիլ:

Պատասխանող չեղաւ: Անցան քանի մը կառքեր եւս, աւելի սրընթաց:

— Վախ չկայ, լաւ է այս քարբուկներէն դուրս «պրծինք»:

Ոտքի ենք, նախաձեռնութեամբ Վ.ին, որուն տկար մարմինէն բղխած հզօր կամքին ենք հլու:

Եթէ հաւկիթ կապած ըլլայինք մեր դուռիններուն վրայ, կը խաչէր, արեւը հովիտին վրայ կեդրոնացած, դանդուր, խիտ մազերուս արմատներուն ջրտուք կ'ընէր: Մեր բարձրութեան վրայ ծառի, թուփի հետք մ'իսկ չ'երեւնար: Կառուղին կ'անցնի հովիտին մէջ արուեստական թումբի մը վրայէն, շուքերնիս հագիւ ոտնաչափի երկայնութիւն ունի, ըսել է կէսօր է: Ափսո՛ս, գետը կրկին հեռացեր է մեզմէ, կը սպասենք Վահան վարժապետի ցուցմունքին, երբ բլուրի մը դարձին կը լսուի առուակի մը դով մրմունջը: Կը մագլցինք առուակն ի վեր, մարդկութենէ դուրս, թէեւ ամէն ինչ ամայի է մեր շուրջը, յաղագս անապակ ջրի:

Հրաչին հետ արգէն փոռեր ենք, Վահան պատուելիմ ոտքերով քարեր դէս ու դէն կը չպրտէ՝ անոնց թողած տեղւոյն վրայ կը քակէ բաւական ուռած կապոց մը:

— Հրամմեցէք պարոնայք, ազնի՛ւ հիւրեր, քիչս շատ սեպեցէք:

Հեղեղներէն տաշուած պսպղուն երեք խոշոր քարերուն վրայ կը ջարդէ, կը բրդէ, հաց, պանիր, «գալպաստի» շերտեր, ինչպէս նախորդ երեկոյ մեզ հիւրընկալող տիկինը:

— Աստուա՛ծ իմ, կը պոռամ զարմանահար, այս ի՞նչ է, եւ ուրտեղէ՞ն:

— Կե՛ր, կը պատմեմ:

Շ... որդիքը, նախորդ դիշերը ուշի-ուշով գններ են մեզ հիւրընկալողներուն ծրարները, ու իմ անուշ մրափիս ատեն, յարմար պահու մը, «կազմակերպեր» են անոնց անդի պաշարէն:

— Ո՛չ կրցայ ուտել, եւ ոչ ալ զգուանքս ծածկել:

Ի՞նչ պիտի ըլլար բռնելիք դիրքս սակայն, եթէ մերոնց հանդի-

պած չըլլայի, մեծ մայրիկս, նոյնպէս, գրեթէ գաղտնի, տոպրակիս մէջ մէկ-քանի կտոր խմորեղէն քշած չըլլար :

Այո՛, խոռով էի, ամբողջ յետ միջօրէին, անոնցմէ անջատ, գըլուխս առած կտրուկ արահետներէն կը վազէի գրեթէ, խօլ արշաւ մը, որուն վերջ տուի բաւական մեծկակ աւանի մը փոսպանի դրան առջեւ, ձեռքս ծոցիս մանէթներուն, որոնց ծալքերը քրտինքէս այնքան տափակցեր էին, ինձ վախ պատճառելու չափով՝ ուշքս թարմ հացի գլխիւնէ բուրումներուն :

Խնդրեցի ապա, գիշերը անցընելու ծածք մը : Միայնակութիւնս, երեւոյթս վախէ աւելի կարեկցութիւն պէտք է առթած ըլլային : Պատին կռթնած վառտէ սանդուխը ցոյց տուին, առաջին յարկ տանող բացութեան մը եզերքը տանող : Ծնորհակալութիւն յայտնելու վրայ էի, երբ մեր «Տերոսները» վրայ տուին՝ իրենցմէ ըլլալս յայտնաբերելու չափ մտերմութեամբ :

— Ասո՞նք ալ քեզի հետ պիտի ըլլան :

— Այո՛, մէկը շատ հիւանդ է, եւ այս գիշեր պէտք է որ դուրսը մնայ :

Այր ու կին ակնարկներով գիրար հարցուփորձելու տազնապէն դուրս քաշեցի՝ խնդրելով կաթ եւ գինի ճարելու տեղ մը : Իրենք ունէին նաեւ ազարակ եւ ըմպելիք, առաջարկս աւելի դիւր եկաւ, վրստահութեան նոր ազդակ մը :

Մեր աչքին առջեւ կթուած թարմ եւ փրփրոտ կաթին մէջ հացին պատառները նախ սկսան լողալ, կաթը դադրեցաւ հեղուկ ըլլալէ, ու ես միշտ ընկերներուս հանդէպ «քէն»ը մէջս՝ իրապէս յագեցած՝ սկսայ անկողնիս պատրաստութեան :

Խոտի ամբարանոց մըն էր մեր պանդոկը, ունեցանք նաեւ անոր կիսատ խուրձերէն օգտուելու շնորհը :

Ամբողջ կէս օր մը, ընկերներուս հետ խօսակցութեանց ի փոխան, մինակութիւնը կը վանէի՝ կանգ առնելով, քրտինք սրբելով, երկարատեւ շունչ քաշելով, եւ շուրջիս ամեհի լեռներն ու անոնց դազաթներէն թափթփող աւերակները գիտելով, հին օրերու ասպատակութեանց եւ ապրելու խորհրդանշաններ :

Այնքան յար եւ նման էին ծննդավայրիս տեսարաններուն, աւերակները ներառեալ, բացի սքանչելի լայն կառուղիէն, որ կըտորուկներէն մազլցած ու իջած պահերուս կը տարուէի երազել թէ հետեւեալ հեղեղատը վերջինն էր, ու պիտի նետուէի ինձի ծանօթ սըրբավայր մը, այգիի մը բոլորտիքը, աղբիւրի մը առջեւ, հարազատներուս գիրկը :

Այդ լեռներուն մէջ մտերմութեան անուշ հով մը կը բուրէր, փոսպանը, իր կիներ, մանչն ու անոր կատուն, հակառակ օտար լե-

դուով մեր փոխանակած բառերուն, հեշտալի մոռացութեան մը մէջ դրած էին զիս, ու հակառակ ճանապարհի յոգնութեան, այդ զեփիւռը զիս կը կազդուէր, ինչպէս գիշերուան գողտրիկ երազներս կակուզ ու տափակ յարդին մէջ:

Այն ցած գիները, զոր այդ բանուկ մեծ ճանապարհի հանգրուանին մէջ գտանք, ըստ երեւոյթին կարեւոր, ուրիշ հաճելի անակնկալ մըն էր: Ուստի որոշեցինք անվթար պահել մեր ունեցած պաշարը, եւ երկար ու հանգստաւէտ գիշերին յաջորդել տալ նոյնպէս գազջ կաթով նախաճաշ, որուն հետ բարի կինը, մի'այն վրացախօս, մեզի համար պատրաստեր էր թարմ հացի շերտեր՝ վրան մեղր:

Երկար չկրցինք վայելել այդ բախտաւոր երէկի գոհունակութիւնը: Միշտ առջեւնին ինկած, երբ պահ մը ետ դարձայ, հեռուն Վահանը կկզած էր քարի մը կողքին, գաւազանն ու տոպրակը մէկգլխ նետած:

— Վահա՛ն արար, գողցած հակիթներուդ կրտրտուի՞րը կ'ողբաս:

Քէնս մարեւու փորձ մը, որուն համար պիտի զղջայի:

Մեր հանդիստ անկողիններէն մեզ դուրս հրաւիրողները հաւերն եղան արդարեւ, մեր քովերը կակուզ բարձիկներու վրայ կտկտացող: Բայց իզուր իր մեղքը կ'առնէի: Վահան երկու ձեռքերը որովայնին վրայ ծանրորէն կը տքար: Այս էր պակաս:

Որքա՞ն ատեն անցաւ: Ես եւ Հրաչ Վահանի ցաւերէն աւելի մեծը ունէինք: Ի՞նչ միջոց գտնել: Տակաւին ո՞րքան կրնայինք սպասել որ Վահան ոտքի ելլէր, քայլ փոխէր՝ երբ արեւը մեր վրայէն պտըտելով կը հեզնէր մեզ:

Կարելի չէր գայն շարկել, շինելու օրօրոց շինած փորձեցինք ճամբայ իյնալ: Քայլեցինք բաւական տեղ, ո՞րքան: Ի հարկէ մեզի երկար կը թուէր: Իջանք կառուղիին եզերքը: Շատ չանցած հրաչք մը:

Դարձուածքի մը անկիւնին մօտ պպղած Վահան, յանկարծ կը ցատկէ իր վազքը դանդաղեցուցած կառքի մը ետին, ուր կարծես յատկապէս նստարան մը պատրաստեր էին իրեն համար: Շունչերնիս բռնած կը հետեւինք: Վահան կը կծկուի, ու դէմքը ճանապարհին՝ կը պառկի, կը պահուրտի ետին:

«Դարձեալ փայլեց... մեր չոր գլխին, ազատութեան դրօշակ»:

— Եւ ի՞նչ ազատութիւն: Քիչ մը նստինք, ծոմուկէն թերեւս բռնուեր են:

Հետզհետէ Արագվայի հովիտը կը փոխուէր ձորի, եւ կարծես մեզմէ կը հեռանար: Արեւը նոյնպէս: Քանի մը դարձդարձիկ, եւ ահա տարբեր ձորի մը, հեղեղատի պոկունքը հասեր ենք, դիմացնիս

պատի պէս լեռ մը, որուն կողերուն վրայ պտուտակաւոր գիծ մը կը շողշողայ արեւուն մէջ, ու գրեթէ հարթ կառուցիւնն վրայ մեր մտքէն բնաւ չի կրնար անցնիլ՝ որ մեր ճանապարհին շարունակութիւնն է հոն գծուած, եւ որուն ստորտը արդարեւ հետզհետէ կը պատկերանայ գիւղի կամ գիւղաքաղաքի պէս բան մը:

Այլեւս որոշ է, լեռ պիտի բարձրանանք, վարը, չէնքերուն մէջ, գաղթականներու ծանօթ խմբաւորումը: Ոչ իսկ անակնկալ մը:

Հոն են մերոնք, Ծովագ աշխարհի մնացորդները, իրենց գող-գոթայի ոտքերուն առջեւ: Մցխէթցի կառապանը պարկեշտութեամբ եւ լաւ վերաբերմունքով կատարեր էր իր յանձնառութիւնը, եւ Անայիս օրհնութիւններուն արժանացած:

— Եկած ճամբուդ գուրպան: Անանկ մէկը չե՞ս կրնար նորէն գտնել:

Դիմացնիս ցցուող ոլոր-մոլոր պտըտող ճամբուն երբ կը նայիմ, Անայիս հետ համաձայն եմ, իմ խելքս ալ կը թռի, ու կը հասկնամ թէ ի՛նչպէս կառապանը իր ձիուն անգամ կը մեղքնար հոն մղելու:

Մցխէթէն յետոյ անդադար բարձրացեր ենք, ու վաղուան առաջին հանգրուանը կը գտնուէր 2000 մեդր բարձրութեան վրայ: Առնուազն օրուան մը ճանապարհ, շալակաւոր, երախաներով բեռնաւորուած՝ գաղթական մեր կարաւանին համար,

— Ծօ՛, տղա՛յ, ի՞նչ կեցեր ես, կառք մը ճարէ:

— Գիտե՞ս ինչ գին կ'ուզեն, «տէտէխ գինը»: Նախամեծար է օր մը աւելի տառապիլ: Մեզ սպասող չկայ:

— Թող ուզածիդ պէս ըլլայ: Անան հանդարտեցաւ մէկէն, դտաւ իր աշխոյժը, ու լծուեցաւ գիշերելու պատրաստութեան, առանց մոռնալու իր յանկերդը:

— Երնէ՛կ մեծ հօրդ: Ե՞ս ինչու հոն չմեռայ: Այս ի՞նչ է մեր քաջածը:

Ընչագուրկ, օտար եւ հեռաւոր լեռներէն անդին նոր ապաստան փնտոող ընտանիքներ են, յարաբերաբար բազմանդամ, ինչպէս այդ պահուն մերինը, երկու թափառական կեանքի ընթացքին չէին դադրած անմիջական պէտքերու ծառայող իրեր հաւաքելէ, որոնց շատութիւնն ու ծանրութիւնը կը զգային գիմացը ցցուող լեռան ստորտը, երբ իրերու բաժանումն սկսաւ, եւ շալակներու կազմութիւնը:

Կը մեղքնայի հօրեղբօրս, որ իր կեանքին քրանաթոր օրերուն մէջն էր, եւ ինչպիսի լուռ համակերպութեամբ մը: Ուրիշներ կը պոռպոսային, կը տրտնջային ու կ'անիծէին: Իրենց այդ ելոյթներով ոչ ոքի բեռ կը թեթեւնար, սակայն այդ համատարած տառապանքի ճիգերուն մէջ մէկզմէկ միսթարելու տուեալներ կային:

Մինչդեռ հօրեղբորս լուռ թի՛ւնը, հոգի քամել կու տար: Անա-  
յիս կրած հոգերուն ամենէն ծանրը:

Կը դիտեմ հարսիկս: Կոնակին կապած վերմակի մը վրայ Վար-  
սենիկը շալկին, դիւղի վարժուհին, տան աշխատանքներէն, ուր  
մնաց դարի կամ դուրսի, փախուստ տալու խաղեր հիւսող, առջեւէն  
քալող իր ամուսնուն ոտքերուն ետեւէն անէծք կը թափէր:

Արահետներէն բարձրութիւն կտրելէ հեւասպառ, ճամբուն եզ-  
րին կը սպասեմ Անայիս, որ քովէս անցած ատեն կանգ կ'առնէր:

— Անա', շալակդ ինձի տուր մինչեւ այս դծին ծայրը:

— «Խատատ առնամ», քու բեռդ քի՞չ է: Մատղաշ օսկրներուդ  
մատաղ:

Քովս կը նստեցնեմ, թեւս մէջքին:

— Աստուած սրտիդ չափով տայ, ըսելդ հերիք եղաւ որ բեռս  
թեթեւնայ:

Իսկ ի՞մ բեռս, «մատղաշ օսկրներուս» ճնշող, նոյնպէս թեթեւ  
կու դար քովերէս մազլցող, ոտքերուս փաթթուող հօրեղբորս տղոց  
ոգորումին ի տես, անոնց ընկերակցութենէն քաջալեր, անոնց հըս-  
կողութեան ուշադիր:

Վերջապէս արեւամուտին լեռը տեղի կու տայ մեր ոգորումնե-  
րուն, ոլորֆներու անթիւ շարքին կը յաջորդէ աւելի թեթեւ վերելքով  
երկարածիք ուղի մը, որուն ծայրը նշմարուող ամհհի ժայռը հետըզ-  
հետէ կը փոխուի առանց պատուհանի հսկայ պահականոցի մը:

Կացինահար ծառերու եւ թփերու պէս կարաւանը կը ծռի ու կը  
փլչի հարթավայրի մը վրայ ցիրուցան հիւղակներուն միջեւ, որսերու  
պէս, որոնց գլխին կը թառին կառապաններ, իրենց առժամեայ վեր-  
ջին հանդրուանին համար:

Մերոնք տակաւին աչքէ հեռու ոլորաններուն մէջն են: Զիերու  
պէս յոգնութիւնն առնելու միջոցը թափառիլն է, նաեւ «մէկ ականջս»  
չուրջս տեղի ունեցող սակարկութիւններուն: Նոր ուրբիներու հա-  
զարներ կը թաւալին: Խե՛ղճ, խե՛ղճ հայութիւն: Ոմանք ճարահատ  
կ'ընդունին, ոմանք արցունք լեցուած աչքերով կը պապանձին:

Հրաչիմ հետ կը դիտենք բնութեան ալ տառապալից կեանքին  
պատկերները, առջեւնիս անդունդ մը բաց, ետեւնիս Կազպէկը գլուխ  
ցցած, ամէնուրեք խորշեր, խորշեր, փոքր տարածութեամբ սա-  
րահարթերու վրայ խորտուբորտութիւններ, հոն ալ հաւասարութիւն  
չկայ, բնութեան այդ խաղերուն մէջն ալ:

Բարձրաւանդակը, ուր կը գտնուինք, պարարտ լեզուի մը պէս  
ցցուեր էր երկու հովիտներու միջեւ, Արագլայի եւ ուրիշ հեղեղատի  
մը դարաւոր գրոհներուն անշուշտ իր կողերէն զոհեր տուած:

Կը յառաջանանք զէպի եկողները, մեծ մայրիկիս բեռը թեթեւցնելու: Անոր փէշերէն կախուած, լեզունին դուրս ինկած մեզ կ'ողջունեն Արտաշն ու Աշտը մանկական անհողութեամբ, ժպիտով:

Երբ մեր խումբը, վերջիններն ըլլալով Ստեփան եւ Վահան հօրեղբայրներս, կը թափուին գետին, արդէն բոլոր կառքերը վարձուած են:

— Մցիւէքցի կառապանը իրաւունք ունէր, հոս շատ կառք կայ, ըսաւ Վահան վարժապետ: Վարձեցի՞ք:

— Ամէնքն ալ վարձուած են: Մեզի յարմար չկար արդէն:

— Վա՛յ գլխուս: Հապա մե՞նք: Անան է: Քանի մը խօսքով համողող:

Կէս գիշերին յարմարը ներկայացաւ, խոշոր կառք մը, երեք ընտանիքի երեխաներուն, իրերուն եւ մեծ մօրս համար, ու հագիւ այդ բարի լուրը հաղորդեր էի՝ ահա զէպի մեզ կը յառաջանան մեր տոհմի անդամ Ալթուն հարսան իր երկու աղջիկներով՝ Ագապի եւ Արշալոյս, զորս մոռցած էի հաշուի առնել, եւ որոնց չէի հանդիպած արդէն նախորդ գիշերուան հանգրուանին մէջ: Կը մնար նախ գիրենք տեղաւորել, ըստ սարահարթի պատշաճութիւններուն, գիշերը յառաջացած ըլլալուն թելադրել որ լաւ պատսպարեն ինքզինքնին, եւ ջանան քնանալ:

Սակայն բանակատեղիին եռուզեռը բնաւ պիտի չդադրէր գիշերն ի բուն, նոր եկողներու, մեկնողներու եւ առաւօտեան մօտիկ ցուրտին պատճառաւ:

Մեծ մայրս նոյնպէս ի զուր փորձեր է քնանալ, մինչ ես, Արտաշէս եւ Աշոտ, շինելիս մէջ պլլուած, եւ վերմակի մը օգնութեամբ, բախտաւորեալներ էինք: Անան իր այլազան լաթերուն մէջ՝ տոպրակս գլխուն բարձ՝ մեր կողքին:

— Ծօ', տղա՛յ, զուրպան քրզի, հանեցի դուրս, առտուն մոռցայ տեղը դնել: Աստուած ինչո՞ւ հոգիս չառաւ, խելքս առաւ, եղայ թափառական:

Սկսաւ հեծկլտալ, ձայնը բարձրացուց որ Աստուած ալ լսէ, ամենուն ուշադրութիւնը մեր կողմը դարձաւ: Կառապանը, որ կ'աճապարէր, նոյնպէս մօտեցաւ՝ բան մը հասկնալու, մեծ մայրիկս կառք հանելու:

— Ես ի՞նչ գիտնամ, որ աչքերուդ լօսը կար այդ անիծած դրքին մէջ:

Գիշերը երբ տոպրակս ուզեց՝ նախագգացումէ մը մղուած նախ մերժելու ելայ:

— Վա՛յ իմ գլխուս, տոպրակ մ'անգամ չի կամենար:

Տուրի վախով, կասկածանքով, ու առտուն կանուխ դանոնք ճանապարհ դնելու ամբողջ հոգը վրաս՝ մոռցայ: Կառապանը օձիքէս բռնած կ'աճապարէր:

Տղոցը հետ դարձանք զիշերած մեր տեղերուն մէջ փնտռուքի:

Ինչքան քարեր շրջեցինք՝ անօգուտ: Թիֆլիզ հասնելէս չաբաթ մը շանցած՝ գեղեցիկ կազմով, կարծր կողքով տետրակ մը գներ էի, անոր կէսէն սկսած էի օրագրութիւնս նոյն օրը, առաջին էջերուն վերապահելով հայրենի օճախս լքելէն յետոյ ապրած կեանքիս նկարագրութիւնները, զորս աւարտելու վրայ էի:

— Դուրպան ըլլիմ, նորէն գրէ, տուն—տեղ կորսնցուցինք, քու կինդ ի՞նչ է անոնց քով, նորէն գրէ, Աստուծո՛վ էրկար կեանք կը խնդրեմ, նորէն կը գրես:

Անձնական առաջին կորուստս էր: Այդ պահէն վերջ զգացի թէ ո՛րքան իրաւացի էին մերոնց տրտունջներն ու անէծքները իրենց այլապէս մեծամեծ կորուստներուն ի տես, որ նաեւ իմս ալ էր:

Բաժանումի պահն է: Կրկնեցի ատենէ մը ի վեր յանկերդ դարձած խօսքս. «Դուք գացէք, ես ձեզի կը հասնիմ»: Տեսայ որ Անան կ'արտասուէ լուռ, ցատկեցի մօտը, գրկեցի, համբուրեցի զինքը, պնդեցի որ վշտացած չեմ ու նոր բաժանումս Ալթուն հարսան եւ իր երկու աղջիկները չլքելն էր՝ համոզուեցաւ:

Հրաչ եւ Վահան պատուելի սպասողական դիրքի մէջ են:

— Հրա՛չ, ըսի, աւելի մեծ ծառայութիւն մը կը մատուցանես թէ՛ ինձ, եւ թէ՛ միանգամայն քեզ, եթէ Վահանը առած կարաւանին մաս կազմես: Մէկէ աւելի զինքը քաշկոտող կ'ունենաս ի հարկին:

Ալթուն հարսան եւ իր աղջիկները ծննդավայր մնացած անդամներն էին հաշատուր Անդրէասեանի ընտանիքին: Իր Պոլսէն աքսորուած եւ սպանուած ըլլալուն լուրը պիտի իմանայինք յետագային, իսկ տան միակ մանչ զաւակը՝ Յովհաննէսը, մէկ—քանի տարի առաջ յաջողած էին Հիւս. Ամերիկա «փախցնել», առանց «ոտքը կապած» ըլլալու, այն է՝ ամուրի: Յովհաննէս Եղեռնը ապրած էր իր բախտակիցներուն հետ՝ վրէժ կուտակելով: Քաղաքական կուսակցութեան մը երդուեալներէն, տխուր բաժին մը ունեցեր էր Նիւ Եորքի Հայոց Եկեղեցւոյ մէջ, յետ պատարագի, Ղեւոնդ Արք. Դուրեանի ղաշունահարութեան մէջ, յանուն ազգային երկամեայ անկախութեան խորհրդանիշ Եռագոյնին, որուն վեհութիւնը, ինչպէս որեւէ զբօշակ, չէին կրցած արժէքաւորել, ախո՛ւս, ո՛չ միայն հակառակորդները, այլ անոր պաշտպանները նոյնպէս:

Այդ օր, Կովկասեան Լեռնաշղթայի մէկ անցքին մօտ, Յովհաննէսի մօրը եւ քոյրերուն զինքը փոխարինող ինձմէ ուրիշ մէկը չկար:

Ինչպէս պիտի համառօտէր Վահան պատուելին՝ «Ազգականաց տէր ու պաշտպան . . .» :

Բնականաբար Ալթուն հարսային «սուտ բերան» զիս ճամբու դնելը աւելորդ փորձեր էին, չէր ուզեր մեծ մօրս «չըլլային բարով» անէծքին արժանանալ :

Թեև Արշալոյսի ուսերուն վրայ, ուրախ-զուարթ ու բարձրաձայն բարի երթ մաղթեցի մերոնց, քովնտի խրախուսելով Ալթուն հարսան, որ գլուխը թեւերուն մէջ՝ իր «չար բախտը» կ'անիծէր :

— Ալթուն հարսա, մենք անոնցմէ շուտ վլատիկավկազ կը հասնինք :

Ծոնեցայ, քակեցի թեւերը, գլուխը վեր՝ բռնի ժպտիլ պարտադրեցի :

— Աստուած ձայնդ լսէ : Քանի դուն քովերնիս ես՝ ա՛լ հոգս չէ : Տերսիմ ալ փոքր պոյովդ դուն մեզի պաշտպան եղար, երբ այս աղջընները իրենց հարազատ հօրեղբօրմէն լքուած էին :

— Արիւն ալ կայ, արիւն ալ, գոչեց Ագապին, ու սիրտ առած վեր վատկեց, արդէն հարսնցու աղջիկ էր, ու գրկեց զիս, մինչ Արշալոյս, որ միշտ ձեռքս ամուր բռնած էր, կը հետեւէր մեծ քրոջը՝ մանկական խանդապատանքով :

— Եթէ օր մը մեր տուները երթանք, ա՛լ խաղերդ չեմ խանգարեր, ըսաւ, զիս վար քաշեց համբուրելու համար :

— Հոգ չէ, կրկին խանգարէ, կը խոստանամ այլեւս քեզ չծեծել : Չա՛ր քեզի :

Շուրջերնիս դարձեալ ամայի չէր, գիշերը ժամանողներ, գունդ-գունդ կկգած կը փորձէին իրենց սառած ոսկորները ծագող արեւուն տալ :

Ագապին ու մայրը պահականոցին մօտիկ տեղաւորելը խոհեմութիւն սեպեցի, որմէ յետոյ Արշալոյսին հետ սկսանք կորսուած տետրակիս փնտտութիւն : Աչքիս դպաւ ազարակի պէս շինութիւն մը՝ շուրջը կենդանիներ, ակնկալութենէս վեր յաջողութիւն մը. մածուն եւ պանիր, թարմ եւ անուշահոտ՝ նաեւ դնով մատչելի :

— Աստուած բռնած գործերուդ յաջողութիւն պարգեւէ, (Ալթուն հարսան փոխարիններ էր մեր Անան) ու մեզ այս տեղերէն ազատէ :

Օրէ օր փորձառութիւնը զիս կը հարստացնէր : Գիտէի որ նոյն երեկոյ կրկին կայանը կառքերով պիտի լեցուի, ու այն համոզումն ունէի որ փախչողներուս թիւը սակայն նուազելու վրայ էր :

— Կը տեսնես, ըսի, եւ շատ աժան պիտի ազատինք, հոգ մի ընէք :

Իմ հոգս աւելի ծանր կը թուէր ինձ : Փորձ ըրի պահականոցի



պետին հարցնելու կորուստի մասին, բնականաբար «ո՛չ» պատասխան ստացայ: Թագուն համոզումն ունէի որ տեսած եւ առած են, կամ մէկու մը կողմէ իրենց յանձնուած: Տետրակին մէջ իրենց կողմէ ընթեռնելին օրուան եւ տարիի թուականներն են, ու զայն կը պահեն կարեւոր ձեռագիր մը ձեռք անցուցած ըլլալու ակնկալութեամբ:

Արշալոյսին թեւիս դպած հպումները սկսան շատնալ, Ալքուն հարսան կապոցը քակեր ինձ կը սպասէ, օրերով միմիայն հաց եւ չորցած մոխիած խմորեղէններ կերեր էին, ուստի այդ օրուանը եղաւ կատարեալ խնճոյք մը: «Փառք քեզ Աստուած»ներուն յաջորդեց ականյայանի լաւատեսութիւն, երբ իմ կորովս սկսած էր փլչիլ կորուստիս վերջին ունայն փնտռուքէս յետոյ:

Նորեկներէն երկու երիտասարդ մեզ մօտ եկան տեղեկութիւններ առնելու, իրենք կառքի պէտք չունէին: Մեզի հաղորդեցին որ Մցլտէթի կայարանը գերման գինուորներու խումբ մը տեսեր են, նոյնպէս քաղաքի սրճարանը: Իսկ Տուշէթի մէջ քաղաքացիի հազուադէպ գերման բանակի յառաջապահներուն մասին լսեր են, բայց իրենք ոչ մէկ արդէլքի չեն հանդիպած:

Ասոնք եւ ուրիշներ շուտով ճամբայ ելան յաջորդ պահականոցին համար, աչքով տեսանելի դէպի լեռնանցք՝ «Խաչի Կիրճ» անուն:

Ինձ այնպէս թուեցաւ որ նո՛ր միայն կը չափեմ մեր Ագապիին դժբախտութիւնը: Անոր կաղութիւնը նո՛ր միայն աչքիս կը զարնէ:

Իրաւ է «աչքս բացուելէն» ի վեր այդպէս տեսած էի: Ինկած էր ընկուզենիի մը կատարէն, տեղւոյն «փորձառական» միջոցներով խնամուած, բայց վերջնապէս թերի կերպով: Այդ վիճակն էր պատճառը իր կէժու բնակորութեան, առհասարակ չէր սիրուած, բայց «իմ արիւնէս էր», իմ անունս կրող, մեր գերդաստանի տուներուն շարքին մէջ մէ՛կ տուն միայն կը բաժնէր մեզ, ինձի հանդէպ մեծ քրոջ վարուելակերպ ցոյց տուած էր միշտ, ու իմ կարգիս շարունակ պաշտպաներ էի գինքը չարախօսներուն դիմախօսելով:

— Նայէ՛, նայէ՛, մեր երթալիք ճամբուն վրայ փոշիի ամպեր կը բարձրանան: Թեւէս քաշողն էր Արշալոյսը:

— Հողը, գլխուս: Տաճկի զօրք չըլլայ:

— Ո՛չ, կը պատասխանեմ մեքենաբար, վաղը մեզ Տարեալի կիրճէն միւս կողմը անցընելիք կառքերն են:

Օրերու վարժութեամբ ճանապարհին ծանօթ, լեռնանցքէն յետոյ բաց դաշտի մը մէջ մրցումի ելած կառքեր են յիբաւի, որոնք ահա կը շարունին գինուորական շարքերով մեր բանակաւայրին մէջ, որ նախորդ օրուան պէս կը կենդանանայ:

Պէս-պէս լեզուներ խօսող կառապաններ են, կառքերուն անիւները կ'ամբրանան, ձիերը կը քակուին, ու կարճ պտոյտէ մը վերջ կը

կապուխն՝ վզերնուն խոշորկեկ տոպրակներով: Նայուածքնին մեր ցանցառ խումբին, անոնց տէրերը կը փութան պահականոց՝ զուարթ եւ այլազան կանչերով: Մէկ-քանին կը յառաջանան կառուղիին վըրայ՝ վիհին պոկունքը մինչեւ: Բացայայտ է որ կը հայցեն նոր յաճախորդներու վերելքին, միեւնոյն նպատակով, բայց տարբեր բաղձանքով կամացուկ մը կը հետեւիմ անոնց:

— Ո՞ւր կ'երթաս, կը պոռայ Ագապի, մեզ մինակ մի՛ ձգեր:

— Տեսնեմ վարերէն եկողները կ'երեւա՞ն: Իցիւ թէ ո՛չ:

Միածի կառքին տէրը, որ աչքիս զարնուած է, բարի երեւոյթ ունի:

Գինը կը հարցնեմ: Առասպելական է:

— Ի՞նչ կ'ուզէր, հարցուց Ալթուն հարսան:

— Պապայիս դինը, մեր ունեցածին տանապատիկը:

— «Ձոն»ը զլիսուս, այս ի՞նչ փորձանքի եկանք, ի՞նչ տըլլի մեր վիճակը:

— Հոգ մի՛ ընեք, վարէն եկող չկայ, անոնց քիթը վաղը չէ՛ միւս օր գետին կը կպի:

— Երանի քրդի: Ձեռքովդ դրածի պէս կը խօսիս:

Եթէ ճիշդ էր ըսած Ալթուն հարսա իրենց ունեցած գումարի մասին, արդարեւ իմինս ալ աւելցնելով, հազիւ մարդուն տուած գինին կէսը կը բռնէր: Անոր յայտնեցի մեր կարողութեան չափը, որ չնչին էր, ու այլեւս հարկ չտեսայ ուրիշ կառապանի դիմելու, այլ մերոնց հետ պահակատան կոնակը գիշերելու տեղ փնտոելու ելանք:

Ալթուն հարսան անդադար Աստուած կը հօլովէր:

— Հարսա, երբ փոքր էի, ինձի ամէնքդ ալ կ'արդելէիք Աստուած բերան առնել, մեզք կը գործես կ'ըսէիք: Հիմա դուն այդ մեղքը կը գործես, քանի որ Աստուած մեծ է, եւ մինչեւ այս լեռները հասցուց մեզ, նորէն կը պահէ, ինչո՞ւ հոգ կ'ընես, բան մը կ'ըլլի:

Ագ-ապլան սկսաւ թթուիլ: Մեծ քոյրերուն ապլա կ'ըսէինք, որով Ագապին եղած էր Ագ-ապլա:

— Բա՛ն մը, բա՛ն մը: Ալ ի՞նչ կ'ուզես որ ըլլի: Ինչ որ ուզեն պարտաւոր ենք յիճարել, ձեռքերնին ինկած ենք:

Պատմեցի թէ ի՞նչպէս Թիֆլիզէն մեկնելու ատեն համբերութիւնը դռնէ զլիս վարձատրած էր զբամափոխութեան տեսակէտով, ու համոզեցի որ քանի օրերը անցնին, կառքերուն դինը պիտի աժաննայ:

— Աստուած ձայնդ լսէ:

— Անպայման, ըսի, այս բարձր տեղերէն աւելի չուտ եւ լաւ կը լսէ, եւ իմ մէջս ալ անբացատրելիօրէն ծայր տուող տաղնապ մը ծածկելու միակ միջոցը սուտ քուն փորձելն էր:

Սակայն իրական քուն մը եղաւ, եւ երկար, Ալթուն հարսայի

տաքուկ ծածկոցներուն մէջ: Իր գլխաւոր ինչքը, որոնցմէ ոչ մէկ գընով բաժնուիլ չէր ուզած, անոնց ծանր բեռան տակ մազլցեր ու հասեր էին Տարեալի բերանը, եթէ փորերնին պարապ, դէթ կոնակնին տաք:

Կը վերյիշեմ իրենց հայրենի օճախը, մեր տան չափ մեծկակ, ուր մենք կը բնակէինք տասնըութ հոգի՝ հանդերձ սպասաւորով: Նոյն ծաւալին մէջ անոնք մնացեր էին երեք հոգիով: Մերինին թուով իրենց սենեակները, գէտնին բարձր հանգստանոցներն ունէին գորգածածկ բարձեր, ընդունելութեան սրահ մը՝ միշտ փակ, թանկագին գորգերով, ամբարները՝ կէս պարապ, ախոռները՝ գրեթէ ամալի:

Ու հիմա, այդ լեռներու կատարին, Ալթուն հարսաւ օրն ի բուն կը մտմտար իր երեք վերմակներուն վրայ, որպէսզի ինքն ու իր աղջիկները գէթ գիշերները չգողգղան:

Այս չէ՞ր միթէ պարազան բոլոր անոնց, որոնց հանդիպեր էի երկու տարուան մեր թափառումներու ընթացքին, տակաւին երեւոյթով շատ աւելի ողորմելի, գէթ արժանապատուութեան անկումի տեսակէտով անվթար: Ստէպ-ստէպ, այսպէս պատահական հանդիպումներու ատեն, երկու աղջիկներու բեռը վրան, ես միշտ հիացեր էի մեր հարսային արժանաւոր կեցուածքին վրայ, որ մեր ժողովուրդին առաքինութիւններուն գլխաւորն ջիղն է:

Նման խոհեր անհրաժեշտ էին՝ ինքզինքս յուսադբելու, զանգուածներէն բաժնուելով, հաւանական չար պատահարներու ընդառաջ վազելուս որոշումները արդարացնելու համար:

— Ալթուն հարսաւ, ձե՛ռքդ տուր պազնեմ, այս գիշերուան անկողինս մեր Հագարիի տան մահիճէս աւելի կակուղ էր: Իսկ դո՛ւն, լաւ քնացա՞ր:

— Ղուբպան քրդի, իմ տեղս եղողը քուն կ'ունենա՞ր:

— Անպայման կու գայ ան օր մը: Կ'երթանք-կը հասնինք Պոլիս՝ հաջատուր հօրեղբօրս մօտ, Օլլօն (Յովհաննէս) Ամերիկաներէն տալէր կը հոսեցնէ, Ագօն ու Արշին կը կարգենք: Ե՛ս կ'ըլլիմ «քամատան»:

Բայց Ագօն, որ յայտնօրէն գէշ քնացեր էր,

— Ծօ՛, մարդու վրայ խնդալու ատե՞նը դտար: Եթէ մարդ ես, կառք մը ճարէ, «պօ՛յդ» տեսնամ:

Իրապէս «բէյֆս» տեղն էր, արեւը աչքերուս եւ ուղեղիս մէջ:

— Սըչաս... Ադօ՛ Ապլա, չորս ձի՛՝ ոսկեղօծ թամբերով:

— Սըչաս, մըչաս, գիտցածդ քեզի պահէ, նայէ որ եկող գիշերը հոս չանցընենք:

— Հրամայական եղանակ, նե՛րկայ:

Գրկեցի գինքը, ու խելօքիկ մը ոտքի ցատկեցի ղէպի կառքերը :  
Նոյն պահուն «բարեկամ կառապանս» շարժման մէջ էր ղէպի ինձ :

— Բարեկամ, ըսի համոզուած շեշտով, պահանջած գինդ մեր  
ամբողջ ունեցածէն տասնապատիկ աւելի է : Նկուր ցոյց տամ : Քայ-  
լերս գինքը քաշեցին պահականոցի անպատուհան կողմը, շրջեցի բաձ-  
կոնս, ներսի գրպանին փակասեղը քակեցի, լաթի մէջ փաթթուած  
կապոց մը ղնել փորձեցի իր ձեռքը՝ մերժեց : Հանեցի հինգ հատ լայ-  
նածաւալ քսաննոց Նիկոլա :

— Ահա՛ մեր ունեցածը, չորսը քեզ, մէկը մեզի թող մնայ՝ սը-  
նունդի բաժին :

Մարդուն աչքերը փայլատակեցին, իր պահանջն էր 2000 ռուբ-  
լի՝ ժամանակաւոր կառավարութեան դրամաթուղթ :

Աչքը Նիկոլաներուն վրայ էր՝ հմայուած :

— Տես, խուզարկէ գիս, ուրիշ դրամ չունինք :

Պահանջեց ամէնը, կտրուկ մերժեցի :

— Ի՞նչ աղբէ ես հարցուցի :

— Օս եմ ըսաւ՝ քրիստոնեայ : Գիտէր մեր Հայ ըլլալը ան-  
շուշտ :

— Ի՞նչ լեզու կը խօսին Օսերը :

— Օսերէն, վրացերէն եւ ռուսերէն : Վլատիկավկազի մէջ նա-  
եւ հայերէն :

— Կառապաններուն մէջ տարբեր լեզու խօսողներ ալ կա՞ն, ո՛չ  
ռուսերէն :

— Այո՛ : Ինգուշներ, Ձէչէններ, Ձերֆէզներ : Անոնք մահմետա-  
կան են :

Ամէն կողմ արեւ : Բանակավայրը նոր ժամանողներ շեղան բա-  
րեբախտաբար : Քիչ մը տատանումէ վերջ կրկին պահանջեց 5 Նիկո-  
լա :

— Այն ատեն լաւ է հոս մնանք, քան թէ քիչ հեռու անօթի մեռ-  
նինք :

— Ո՛չ, հոն անօթի չէք մեռնիր : Վլատիկավկազի Հայերը շատ  
հարուստ են, եւ դացոց բոլոր Հայերը կը տեղաւորեն ու կը կերակ-  
րեն :

Լաւատես ըլլալու պարագայ մը, ու անտարբեր երեւոյթով,

— Ահա քեզի 40 ռուբլի՝ Նիկոլա է, կը տեսնե՞ս : Նոյնքան ալ  
կը ստանաս Վլատիկավկազի դրան առջեւ, եւ կը հաւատամ քրիստոնէի  
խօսքիդ, որ մեզ կէս ճամբան չես թողուր :

— Պատրաստուեցէ՛ք, շուտ մը ճամբայ ելլենք :

Պատը շրջելուս լայն ժպիտով նշան ըրի ղէպի կառքը :

— Ծօ՛, մեզ չխաբէ, շա՞տ սուղ առաւ :

— Ո՛չ, հարսա, կառքին մէջ կը պատմեմ, մեղ չի խաբեր, քեզի պէս քրիստոնեայ է, Օս է :

Երբ կը մեկնէր կառքը ճամբուն եզրը բերելու, յանձնարարեց որ եթէ հարցնող ըլլայ, մարդ գլուխ 500 կերենսքի ըսեմ :

Ուրեմն «լուռ մեծամասնութեան» պէս, Օսերը կը բաղձային ու կը հաւատային Նիկիոյալի վերադարձին : Վլատիկավկազ ապրած օրերուս շատ մը ուրիշ հաւաստիքներ ալ պիտի ունենայի, նոյնքան խոր, որքան ընդունայն :

Որեւէ նման սակարկութիւններէ յետոյ մարդ միշտ աննպաստ դուրս եկած ըլլալու մեղադրանքը կ'ուզէ ինքզինքին : Ու այժմ Ալքսան հարսան ալ անհամբեր է գիտնալու թէ ի՞նչ իւզի մէջ տապկուեր ենք :

— Քսանական ուրբի, ըսի ետեւ դառնալով :

Օսը, որուն կողքին նստեր եմ, ինքն ալ գլխով հետեւեր է ինձ, անշուշտ առանց բան հասկնալու, թէ եւ զղջացի ռուբլի բառը արտասանելու :

— Աֆէրի՛մ, գոչեց Ագօն : Այդ ի՞նչ աժան :

— Բայց նախկին կայսեր դրամով :

— Նո՛րէն աժան է :

Քիչ մը մեղմացաւ մտահոգութիւնս :

— Եթէ երկու օր ալ սպասէինք, ձրի պիտի ճամբորդէինք :

Սկսայ բարձրաձայն խնդուք մը, քովինս կը ժպտէր, Արշօն հետեւեցաւ, Ագօն լուռ, Ալթուն հարսան իր Աստծուն հետ՝ «Աստուած մարդուն դործին յաջողութիւն տայ», քիչ կը մնար զայն բարերար հռչակէր, ու այսպէս մեր խօսակցութիւնները տեղի տուին բացուող ահաւոր լեռներու տեսքէն ահաբեկ :

Օսը, ճամբուն ամէն ծամածոութիւններուն, ետեւ կը նայէր, բայց մեզի հետեւող չկար, ան ալ թերեւս ինքզինքը խաբուած կը նկատէր, եւ իր ընկերակիցներուն ձախողութեան մէջ մխիթարութիւն կը փնտռէր :

Յոյց տուաւ պատուար մը, կարծես երկու լեռներ իրարու կը պած, «հոն է «Տարեալի կիրճը», թէ եւ ոչ մէկ ճեղք չէր երեւնար :

— Մինչեւ այդ ահաւոր բարձրութենէ՞ն պիտի անցնինք, ըսի իրաւ միամտօրէն :

— Ո՛չ, ըսաւ քմծիծաղով, խաչ տնկուած քարակոյտէն անդին հետզհետէ կ'իջնենք, ու տակաւին աւելի վար, մինչեւ կ'իրճին բերանը, մինչեւ զայն դարերէ ի վեր ճեղքող Թերեֆ գետին եզերքը :

Լայն հովիտի մը կեդրոնէն կը սուրանք արդարեւ, հեռուն կ'երեւին քառակուսի հսկայ կոյտեր, ճամբուն երկու կողմերէն բաւա-

կան հեռու, ցիրուցան, պահականոցներ եւ բնակութեան շէնքեր են, նաեւ բերդի նմանող կառոյց մը:

— Կիրճը տակաւին երկու-երեք վերստ աւելի վար է, ըսաւ Օսը:

Քաղաք կոչուած տեղւոյն վրայ նոյն պատկերը հայ գաղթականութեան: Օսը այնքան կ'աճապարէր ու կը ձայնէր ճամբայ բանալ տալու համար, որ իմ ուշադրութեանս կէսը իր ընկերքին կ'երթար, ու անկարելի էր ճամբու եզերքներուն վրայ ծանօթ դէմքեր ճշդել:

Այո՛, այժմ դետի մը եզերքն ենք, արագահոս եւ աղմկարար, սակայն դիմացնիս պատ է, զայն քերելէ վերջ կառուղին մտած է ժայռի մէջ ծակուած գետնուղի մը, ուրկէ կ'անցնի անոր կողին մէջ փորուած երկար կիսակամարին մէջ՝ հեռուն կամուրջ մը:

— Լսեցի՞ր քիչ առաջ, հարսա, մեզի ալ «երանի սըւոնց» կը պոռային: Երէկ ո՞ր էինք, այսօր թագաւորներու պէս կը սուրանք:

— Տէրը անոնց ալ կ'ողորմի, ով գիտէ ի՞նչ «հալի» են խեղճերը:

— Զախին դետի քարքարուտ հունը, դիմացնիս կիսակամարը կը յանգի պատի, դէպի ձախ ցցուն բլրակ մը, երկու եզրերը միացնող կամուրջը: Մեր ընթացքը անպայման դանդաղ, կառուղիին լայնքը երկու ձի քով-քովի ընթանալու չափ:

Անցեր ենք կամուրջէն, գետի ձախ ափին նոյն ձեւով ժայռին մէջ փորուած մասին վրայ: Կամուրջին մէջտեղը, գլուխս ետ նետած երկինք կը փնտռեմ, հազիւ կապոյտ երիզի նմանող շերտ մը, զոր առանց արծիւներու մէկ ափէն միւսը զիրար խաչաձեւելու մարզանքներուն, պիտի չկրնայի զայն երկինքի մաս կազմող խաւ մը ըլլալուն համոզուիլ:

Ձրերը իրենց ամառնային հոսանուտին մէջ են թէեւ, սակայն աղմկալի: Որքան ահազդու ըլլալու են լիակատար հոսանուտի եղանակին:

Կիրճ մտած վայրկեանէն շուտ դուրս գալու անհամբերութիւն մը, վախ մը կը համակէ զիս, կառապանը կը նշմարէ անձկութիւնս ու կը ժպտի:

Շուտով տեսարանը կը փոխուի, լեռնային տեսարաններու վարժ, անծայրածիր հորիզոն մը կը բացուի մեր առջեւ, փոխուած է նաեւ պահակ զինուորներուն կերպարանքը, աւելի անհոգ, նուազ հըպարտ ու յոխորտ, տեղ-տեղ, հսկայ ապառաժներու վրայ պզգզած՝ դէնքերնին կռնակնուն:

Նոր ոյժ կ'առնեմ կառքէն ներս ակնարկ մը նետելու, ուրկէ մայր ու աղջիկներ ատեն-ատեն փորձեր են դուրս նետել հայեացքնին:

— Տարեալն ալ ետեննիս է, կ'ըսեմ, երկար շունչ կ'առնեմ :

Կառքը կանգ առնել կը ստիպուի, շարժական պատնէշի մը առջեւն ենք, ետեւը շուրջանակի կանգնած է ռուս համայնապար զօրքը : Կառքին մէջ նետուած հարեւանցի ակնարկներ, կառապանէն կը պահանջեն ինքնութեան թուղթ, «խարաչօ» մը կը հրահանգէ ձիերը մըտրակել տալու :

Անցեր ենք ուրեմն Կովկասեան Լեոնաշղթան, եւ Ռուս Յեղափոխութենէն յետոյ մանաւանդ երկու աշխարհներ բաժնող սահմանադժէն :

Թեթեւ երեւէջներով, կամրջակներու վրայէն կառքին վազքը կ'արագանայ անծայրածիր դաշտի մը ուղղութեամբ : Հորիզոնը մեր առջեւ որեւէ կերպարանք չունի : Մշուշի մէջ թաթխուած կանաչութիւններու կոյտը ցոյց տալով կառապանը, «Վլատիկավկա'դ» կը գոչէ, որ դեռ Օրջիֆիկիցէ չէր մկրտուած : Հեռու ենք սակայն, տասնեակ վերստերով :

— Ղուրպան, տղաս, ըսէ քիչ մը կամաց վազցնէ, ձիերուն ըլմեղք է, մեզ ըլ. օսկոր չմնաց, ջարդ ու փշուր եղաւ վրանիս :

Քաղաքի պարտէզներուն ցանկապատերէն պահակներ կը բուսնին :

— Գաղթականներ ենք, կը պոռամ, արիացած :

— Անցէք, կը ձայնեն միասնաբար :

— Քաղաքամէջը շատ հեռո՞ւ է :

— Լաւ, ձեզ կը տանիմ մինչեւ կեդրոն՝ Թերեֆի կամուրջը, հոն աւելի յարմար է վճարումը լրացնել, պատասխանեց Օսը : Պօլչեւիկ աչքերէն հեռու, մտածեցի :

Ուղեց տիրանալ հինգերորդ Նիկոլայիճ, այդ էր նպատակը :

— Շատ լաւ, բայց փոխարէնը 20 Կերենսքի տուր որ փորերնիս կշտացնենք :

ՎԵՐՋ Բ. ՀԱՏՈՐԻ

1. The first part of the document discusses the importance of maintaining accurate records of all transactions and activities. It emphasizes that proper record-keeping is essential for ensuring transparency and accountability in financial operations.

2. The second part of the document outlines the various methods and tools used for data collection and analysis. It highlights the need for consistent and reliable data sources to support informed decision-making.

3. The third part of the document focuses on the implementation of internal controls and risk management strategies. It stresses the importance of identifying potential risks and establishing robust controls to mitigate them.

4. The fourth part of the document addresses the role of technology in modern financial management. It discusses how digital tools and automation can enhance efficiency and accuracy in various financial processes.

5. The fifth part of the document concludes by summarizing the key findings and recommendations. It reiterates the importance of continuous monitoring and improvement in financial management practices.

2024-2025



# ԲՈՎ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

---

	<u>Էջ</u>
Նախաբան .....	3
Ծովի ֆարտեզ .....	5
Նախնեաց մասունքները լքելով .....	7
«Պոյդ» սիրեմ .....	56
Հայրենի ուղիներով (Մամախաթուն) .....	70
Ա՛յլ անակութիւն .....	92
Պետրոսի սկառտական նկարը .....	106
Վահան Թոթովենցի նկարը .....	111
Անուրջներու ոլորտին մէջ .....	136
Անդրանիկի նկարը .....	137
Կամաւորական խումբ մը, 1916, Երեւան .....	139
Ս. Էջմիածինի նկարը .....	140
Հայկական Բարձրաւանդակի ֆարտեզը .....	142-143
Բայց ահա առաջին աշակերտուհիս .....	158
Զուարճութիւն եւ ահագոյն պատահար մը .....	164
Գնա՛, մա՛րդ եղիք .....	170
Դարձեալ փլուզում .....	203
Նկար՝ Թիֆլիզ — Պետրոս, Վարդանոյշ եւ ես .....	256
Ռազմավիրական գանապարհին վրայ .....	269

## ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

### ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ

ա. – Հայ Սկաուտին Առաջնորդը, Փարիզ 1947

բ. – Վահան Զերազ Եւ Իր Երգն Հայաստանի, Պէյրուք 1977

գ. – Անդրանիկ, Պէյրուք 1982

դ. – Հագարիապատում, Բ. Հատոր, Պէյրուք 1984

### ԱՆՏԻՊ

ա. – Հագարիապատում, Ա. Հատոր

Գրաշարութեան ձեռնարկուած

27 Մարտ 1984ին

Տպագրութիւնը աւարտած՝

15 Յունիս 1984ին

Կ. ՏՕՆԻԿԵԱՆ ԵՒ ՈՐԳԻՔ

ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

Տպարանական բաժինի

Հայտըլպըրկ

54×72 սմ. մամուլին վրայ

400 տպաքանակով – 19 պրակ

Գիւմեյ հեղինակ-հրատարակիչին՝  
**VAZKEN ANDREASSIAN**  
7, Rue des Sables  
78220 Viroflay

---

FRANCE

Tél.: 024-48-41